


Մ. Կ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ՆԱՆՍԵՆԸ
ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԸ



9(47.325)

4-86



Մ. Վ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ՆԱՆՍԵՆԸ
ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԸ

2267

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1986



Արզումանյան Մ. Վ.

Ա. 866 Նանս'եր և Հայաստանը— Եր.: Հայաստան, 1986.— 9 թ.
նկ., 344 էջ:

Գրքում փաստական հարուստ նյութի ու բազմաթիվ նորահայտ փաստաթղթերի հիման վրա լուսարանված է աշխարհահռչակ բեհ-
ուսիտյզ ու զիտնական, ականավոր հասարակական գործիչ, սովե-
տական երկրի բարեկամ Ֆրիտյոֆ Նանսենի հումանիտական գոր-
ծունեությունը, նրա անձնվեր պայքարը հայ գաղթականների կեն-
սապայմանների թեթևացման ու հայրենադարձության համար:

Գիրքն առաջին անգամ լույս է աեսել 1977 թվականին, այժմ այն
վերահրատարակվում է մասնակի լրացումներով:

Նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար:

0505040000
Ա 701 (01) 86 62—86

ԳՄԴ 26.8ղ—63.3 (22) 7

© «Հայաստան» հրատարակչություն, 1977
© «Հայաստան» հրատարակչություն, 1986

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Նախօրոք լինիք որոշել հանգես գալ նանսենյան թեմայով:
Դա ստացվեց իրերի բերումով: Զբաղվելով հայ ժողովրդի պատ-
մության մի շարք հարցերով, մոտիկից ծանոթացանք Ֆրիտյոֆ
Նանսենի համապատասխան գործունեությանը և այն արտացո-
լեցինք մեր աշխատություններում («Հայաստան. 1914—1917»,
«Արհամիջրբից վերածնունդ»): Բայց, անկեղծորեն ասած, այնու-
հետև չկարողացանք կտրվել այդ թեմայից և մի ներքին հոգե-
կան պահանջ զգացվեց ամբողջացնելու այն: Չէ որ նանսենը
շատ գործ է կատարել հայ ժողովրդի համար, սատարել է նրա
արդար դատին, շատ շանքեր թափել հայ գաղթականների
գրուխյան բարեխաղաման ուղղությամբ, ոգեշնչվել նոր Հայաստա-
նով, որտեղ նա եղավ 1925 թվականին: Նանսենը մի ամբողջ
գիրք է նվիրել հայ ժողովրդի պատմությանը, նկարագրել նրա
ողբերգական ու հերոսական ուղին, բացահայտել հայ մշակույ-
թի տեղն ու դերը համաշխարհային բաղաբակրթության մեջ,
դատապարտել օտարերկրյա զավթիչների դաժան տիրապետու-
թյունն ու անլուր հալածանքները, մերկացրել արևմտյան կառա-
վարողների կեղծ խոստումներն ու նենգամիտ զավերը:

Ըստ ամենայնի բնկալելով նանսենի նվիրական գործունեու-
թյունը մեր ժողովրդի համար, ուղղակի համակվում ես պարտ-
քի խոր զգացումով: Կարծում ենք, զա պետք է արտահայտվի
նաև այդ գործունեության լուսաբանմամբ, որը, սակայն,
կապված է լուրջ դժվարությունների հաղթահարման հետ: Մաս-
նավորապես մեծ ջանքեր են պետք նանսենյան աշխարհացրիվ
նյութերի հավաքման համար: Զեռնամուխ լինելով այդ գործին,
աշխատեցինք ամենից առաջ մեր՝ սովետական արխիվներում,
որոնցում հայտնաբերեցինք բազմաթիվ նյութեր: Բայց

դրանով սահմանափակվելը թիչ կլինի, ուստի աշխատեցինք բուն նախնայան արխիվում, որը պահվում է Օսլոյի համալսարանի գրադարանում (այն նորվեգիայի համար ունի ազգային գրադարանի նշանակություն): Հայկ. ՄՍՀ Ա. Մյանսիկյանի անվան հանրապետական գրադարանի միջոցով հաջողվեց կապ հաստատել Օսլոյի համալսարանի գրադարանի հետ և գրականության փոխանակությամբ ստանալ որոշ նյութեր Հայաստանի վերաբերյալ: Այնուհետև պարզվեց, որ դեռ 1955 թվականին արտասահմանյան հայ գործիչների նախաձեռնությամբ նախնայան արխիվից հանվել են հայկական բազմաքանակ նյութերի պատճեններ և ուղարկվել Կահիրե՝ հրատարակության համար: Գրքախտաբար, նախատեսված ժողովածուն լույս չտեսավ, բայց այդ նյութերը 1974 թվականին առաքվեցին Երևան, որոնք և շարունակվել են մեր կողմից: Այդուհանդերձ, դարձյալ զգացվում էր լուրջ պակասություն, և որոնումները մեզ հասցրին նորվեգիա: Պարզվեց, որ նախնայան արխիվը շատ մեծ է և միայն Հայաստանի վերաբերյալ կա շուրջ 3000 գործ: Ծանոթացանք դրանց և կատարեցինք համապատասխան ընտրություն, որից հետո համեմատաբար հեշտացավ մեր հետագա աշխատանքը:

Զպետք է մոռանալ նաև այն, որ մեծ շափերի է հասնում «նախնայան» գրականությունը, մանավանդ արտասահմանյան լեզուներով, որտեղ որոշ շափով խոսվում է մեծ հումանիստի «հայնապատ գործունեության մասին»: Բայց դա կատարված է ոչ միայն խիստ հակիրճ ու կցկտուր ձևով, այլև հաճախ սխալ մեկնաբանություններով: Ինչ վերաբերում է այդ հարցի լուսարանմանը մեզ մոտ, ապա այն տեղ է գտել միայն որոշ հոդվածներում կամ առանձին գրքերի հատվածներում:

Մասսայական ընթերցողին ներկայացնելով այս մենագրությունը, հեռու ենք տվյալ թեման սպառված համարելու մտքից և գոհունակությամբ կրնդունենք բոլոր արժեքավոր գիտողություններն ու լրացումները: Համենայն դեպս, տվյալ դեպքում մենք կատարել ենք այն, ինչ կարողացել ենք և ինչը մեր հոգու պարտքն ենք համարել. «Dixi et salvavi animam meam — Ասացի և հոգիս փրկեցի», բայց արդյոք «փրկեցի», այսինքն՝ «դեռ ասացի» այն մեներ, ինչ պետք էր... Ձեք որ երախտիքն ավելի շատ է, քան հատուցումը, թեև նախնայան իր գործը կատարել է առանց որևէ ակնկալության:

ՎՈՒՍ ԱՌԱՋԻՆ

ԱԿԱՆԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆՆԸ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆ ՈՒ ՀՈՒՄԱՆԻՍՏԸ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԵՐԿՐԻ ԲԱՐԵԿԱՄԸ

Համաշխարհային քաղաքակրթություն համայնապատկերում շողշողում են այնպիսի հավերժող աստղեր, որոնք լույս են սփռում շրտ կողմը, ջերմացնում ու ոգեշնչում մարդկանց: Դրանցից էր նորվեգացի Ֆրիտյոֆ նախնայան, որը բացառիկ ներդաշնակությամբ զուգակցում էր մեծ գիտնականի, հասարակական գործչի ու հումանիստի լավագույն հատկանիշները: Խորապես արդարացի էր նրա հայրենակից ու անվանի բեհոախույզ Հարալդ Սվերդրուպը, որն ասում էր. «նախնայան մեծ էր որպես բեհոախույզ, ավելի մեծ որպես գիտնական և է՛լ ավելի մեծ որպես մարդ»¹: Դրանում հեշտ է համոզվել՝ ծանոթանալով նրա կյանքի ու գործի հիմնական գրվագներին:

□□□

Ֆրիտյոֆ նախնայան չէր սիրում նրանց, ովքեր գոռոզամտում էին իրենց «ազնվական» ծագմամբ: Նա ուղղակի ասում էր. «Մենք բոլորս նույն քանակի նախորդներ ունենք, անկախ այն բանից, գիտենք նրանց, թե ոչ»: Դրանով հանդերձ նախնայան չէր ժխտում լավագույն նախորդների բարի ավանդույթները, որոնք պետք է ծառանգել ու զարգացնել:

Նախնայանի տոհմը սև-

¹ Лив Нансен-Хейер, Гинга об отце, Ленинград, 1971, стр. 16.

բում է Դանիայից: Նրա հիմնադիրն է համարվում Հանս Նանսենը, որն աչքի է ընկնում իր խելամուռությամբ ու հաւատարմութեամբ: Նա XVII դարում ակտիվ դեր կատարեց Դանիայի անկախութեան համար մղված պայքարում և ընտրվեց Կոպենհագենի քաղաքագլուխ (բուրգոմիստր): Հանս Նանսենը միաժամանակ եղել է ճանապարհորդ, այցելել է Ռուսաստան, ուսումնասիրել է Արկտիկայի շրջերը: XVIII դարի կեսերին Նանսենները տեղափոխվում են Նորվեգիա և վարում լափավոր կյանք: Ֆրիտյոֆի հայրը՝ Բալդուր Նանսենը, սովորական ու համեստ փաստաբան էր, որն առաջին ամուսնությունից ունեցավ մի տղա, բայց նա հիվանդոտ էր և շուտ մահացավ: Բալդուրը երկրորդ անգամ ամուսնացավ Ադելաիդա Բյուրինգի հետ: Վերջինս ուներ արիստոկրատական ծագում, բայց դեռ վաղ շրջանից աչքի ընկավ համարձակ ազատամտությամբ և, հակառակ ծնողների կամքին, առաջին անգամ ամուսնացավ իր սիրածի՝ հացթուխի տղայի հետ, որից ունեցավ հինգ երեխա և երջանիկ ապրեց մինչև նրա մահը: Ամուսնությունից հետո Բալդուրն ու Ադելաիդան տեղափոխվում են վերջինիս Մտուրե-Ֆրյունե դաստակերտը, որը գտնվում էր Նորվեգիայի մայրաքաղաք Քրիստիանիայի (1925 թվականից կոչվեց Օսլո) արվարձանում: Այստեղ էլ 1861 թվականի հոկտեմբերի 10-ին ծնվում է Ֆրիտյոֆը, իսկ մեկ տարի հետո՝ եղբայր Ալեքսանդրը: Նանսենների ընտանիքը նյութապես ապահովված էր, բայց հեռու՝ շուտափություններից ու ավելորդություններից: Հայրը գուսպ էր ու խաղաղ, աշխատասեր ու բժախնդիր: Մայրը խելացի ու զարգացած, աշխույժ ու համարձակ կին էր, և զբաղվում էր սպորտով, մասնավորապես դահուկավազքով: Ֆրիտյոֆը ժառանգեց ծնողների լավագույն հատկանիշները, որոնք հետագայում շատ օգտակար եղան նրա բազմազան սիրանքների համար: Նա վաղ շրջանից տարվեց մարմնամարզությամբ, դահուկավազքով (մի քանի անգամ առաջնություն շահեց երկրի մերրցումներում), հաճախակի գնում էր որսի, ճանապարհորդում, ֆիզիկապես կոփում իրեն՝ նշանաբան ունենալով «Առողջ հոգին առողջ մարմնի մեջ» իմաստությունը:

Մտնելով դպրոց, Ֆրիտյոֆը հատկապես աչքի չէր ընկնում իր բնահանուր առաջադիմությամբ, բայց ակնառու էր նրա տարվելը բնական գիտություններով ու պատմությամբ: Նա 1880 թվա-

կանին, ավարտելով սեռական ուսումնարանը, ընդունվում է Քրիստիանիայի համալսարանի բնագիտական ֆակուլտետը: Ընտրելով կենդանաբանի մասնագիտությունը, նա գտնում էր, որ դրանով ավելի կմերվի բնությունը, ինչպես և իրոք եղավ: Ընթաց է, Նանսենը հետադառնում կարծես թե ախտաւում էր, թե ինչու չէ՞ դեռացել մաթեմատիկայի ու ֆիզիկայի ուղղությամբ, բայց հենց կենսաբանի մասնագիտությունը նրան դուրս բերեց մեծ գիտություն ճանապարհը:

Համալսարանում Նանսենը անմիջապես աչքի է ընկնում իր գիտելիքներով ու հետաքրքրասիրությամբ, և 1882 թվականին կենդանաբանության պրոֆեսոր Ռ. Կոլլեսը նրան առաջարկում է մասնակցել «Վիկինգ» զագանորսական նավի էքսպեդիցիային: Ինչ խոսք, նա սիրով համաձայնվում է և ավելի քան 4 ամիս նավարկում Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում, հասնում Գրենլանդիայի ափերը, նավակազմի հետ միասին հաղթահարում շատ դժվարություններ, բայց և դիտում ու նկարում է հրաշալի բնությունը, հավաքում բազմապիսի նյութեր՝ հատկապես կենդանական աշխարհի վերաբերյալ, համակվում մի շարք շտեմված հարցերի «զագանորսները» հայտնաբերման ուսմանտիկայով: Այդ մասին է վկայում Ֆ. Նանսենի օրագիրը, որը նա կազմում է ամենայն ջանասիրությամբ: Ահա, օրինակ, ինչ է գրել նա՝ նավի տարտակամածից հմայված դիտելով հյուսիսափայլը. «Դա սնց որ հեռավոր վիթխարի հրդեհի ցուրը լիներ: Բայց պետք է, որ ինքը՝ հրդեհը լիներ Ոգինների աշխարհում, շողքերը թափանցիկ սպիտակ էին»: Կարելի է ասել, որ այդ առաջին արկտիկական ճանապարհորդությամբ կանխորոշվեց Նանսենի, որպես մեծ բևեռայնույթի, ուղին: Այդ նավարկության արդյունքները նա նկարագրել է ծերություն ժամանակ՝ «Մովաշների և սպիտակ արջերի մեջ» գրքում (1924 թ.):

Վերադառնալով Նորվեգիա, Ֆ. Նանսենը աշխատանքի է անցնում (որպես պրեպարատոր-լաբորանտ) Բերգենի բնագիտական թանգարանում, որն, ի դեռ, նրան տալիս է նյութական ապահովություն. դրա կարիքը զգացվում է հատկապես մոր մահից (1877 թվականին) հետո, երբ հայրը, վաճառելով Մտուրե-Ֆրյունեի կավածքը, տեղափոխվում է Քրիստիանիա: Բայց Բերգենի թանգարանի դերը Ֆրիտյոֆի համար մեծ էր հատկապես գիտահետազոտական աշխատանքների ձեռնարկման ասպարե-

գում: Այնտեղ կային լայն հնարավորություններ և միաժամանակ խիստ զգացվում էր թանգարանի հիմնադիր, հայտնի կենդանաբան, բժիշկ ու հասարակական գործիչ Գ. Գանսելսենի բարերար ազդեցությունը: Շուտով՝ 1885 թվականին, հրատարակվում է կրիտասարգ գիտնական Ց. Նանսենի առաջին աշխատությունը («Նյութեր միզոստոմներին»՝ անատոմիայի ու հիստոլոգիայի մասին»), որի համար նա արժանանում է ոսկե մեծ մեդալի: Ապա նրա ուշագրությունը կենտրոնանում է ստորակարգ ողնաշարավորների կենտրոնական նյարդային սիստեմի վրա, որի խոր ուսումնասիրության համար Նանսենը որոշում է մեկնել Իտալիա, ուր այդ ուղղությամբ գիտահետազոտական աշխատանքնեց էր կատարում ականավոր հյուսվածքաբան, հետազայում նոբելյան մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր Կ. Գոլջին: Հակառակ բազմաթիվ թերահավատների Նանսենին հատկապես գրավեց Գոլջիի այն նորարարական մեթոդը, որով նյարդերի հետազոտման համար գունավորվում էին դրանք: Նանսենը փափագում էր ուսումնասիրել այդ մեթոդը Պավիայում՝ Գոլջիի ղեկավարությամբ: Բայց որտեղից հայթայթել Իտալիա մեկնելու միջոցները: Նանսենը շուներ այդպիսիք, իսկ Բերգենի թանգարանն էլ ի վիճակի չէր տրամադրելու Կարծես ստեղծվեց անկաննի վիճակ: Բայց Նանսենը գտավ ելքը. նա առաջարկեց իրեն պարզեցնել ոսկե մեծ մեդալը ձուլել բրոնզից, իսկ ոսկու արժեքի տարբերությունը օգտագործել Իտալիա մեկնելու համար: Այդ «հանգուզն» քայլը, որը դուր չեկավ շատերին, վկայում է գեռ երիտասարդ Նանսենի համեստության, նպատակասլացության ու հաստատակամության մասին, հատկանիշներ, որ գնալով ավելի խտացան ու իմաստավորվեցին: Եվ այդպես նա, իր իսկ «հնարամտությամբ», 1886 թվականին մեկնում է Իտալիա, ուսանում Գոլջիի մոտ և լինում նեպալոյի հայտնի կենսաբանական կայանում: Այստեղ աճում է նրա փորձարարական կարողությունը և ընդլայնվում գիտական մտահորիզոնը: Նանսենը, վերադառնալով Նորվեգիա, մեծ թափ է հաղորդում իր գիտահետազոտական աշխատանքներին և 1888 թվականին պաշտպանում դոկտորական դիսերտացիա: Քիչ էր մնացել, որ այն ձախողվի՝ հանդիպելով պահպանողականների գայրություն: Բայց տարիներ հետո այդ դիսերտացիան, նվիրված ստորակարգ ողնաշարավորների

կենտրոնական նյարդային համակարգությանը, ճանաչվեց որպես նրա կենդանաբանության կարևոր երկերից մեկը:

Քսանյութամյա Ց. Նանսենը հանդես էր գալիս որպես ձեռավորված և խոստումնալից գիտնական ու հասուն մարդ: Նրա գիտահասարակական դիմագծի կազմավորման վրա մեծ ազդեցություն թողեց իր երկրի պատմական զարգացումը, ժամանակի ղեմավարտական շարժումը, նորվեգական առաջավոր գրականությունն ու արվեստը: Զպետք է մոռանալ, որ Նորվեգիայի սոցիալ-բաղադրական զարգացման բնորոշ գծերից մեկը հանգիսացել է գյուղացիական դեմոկրատիայի ազդեցությունը, և այն հատկապես զգացվել է ազգային անկախության համար մղվող պայքարում: Ընտրվեցական գյուղացին, — գրել է Ց. էնգելսը 1890 թվականին, — երբեք ճագա չի եղել, և դա ամբողջ զարգացմանը... տվել է բուրբուլիին այլ ֆոն: Նորվեգական մանր բուրժուան ազատ գյուղացու որդին է, և դրա հետևանքով նա իսկական մարդ է»: Նրանք էին դառնում առաջավոր գրողների ստեղծագործությունների հերոսներ: Ց. էնգելսը, շարունակելով իր միտքը, նշել է. «Վերջին 20 տարում Նորվեգիան գրականության ասպարեզում այնպիսի վերելք է ապրել, որով այդ ժամանակաշրջանում չի կարող պարծենալ և ոչ մի երկիր, բացի Ռուսաստանից»²: Իրոք, հենց այդ ժամանակ էին գործում այնպիսի խոշոր դեմքեր, ինչպիսիք են գրողներ Հենրիկ Իբսենը, Բյորնստերնե Բյորնսոնը, կոմպոզիտոր Էդվարդ Գրիգը և ուրիշներ, որոնք դարձել էին իրենց երկրի ազատասեր ուժերի մտքերի տիրակալը: Ֆրիտյոֆ Նանսենը սուղվեց այդ բարերար մրթնոլորտի մեջ և շուտով ինքը դարձավ Նորվեգիայի մարտիկներից ու պարծանքներից մեկը: Նա ցուցաբերում է բազում ընդունակություններ, զբաղվում գիտությամբ ու արվեստով (հատկապես նկարչությամբ):

Հենց սկզբից Նանսենի համար բնորոշ են եղել սերը դեպի բնությունն ու խոլանքը դեպի նրա «առեղծվածները»: Ուստի, «Վիկինգի» էքսպեդիցիայից հետո նրան հանգիստ չէր տալիս Գրենլանդիան, այդ վիթխարի «արկտիկական Մահարան», որի հետազոտման սոսկ առաջին քայլերն էին արված: Եվ ահա նան-

¹ К. Марке и Ф. Энгельс, Сочинения, изд. 2-ое, т. 37, стр. 352—353.

² Նույն տեղը, էջ 353:

* Միոստոմներ — պարզիտ որդերի տեսակ:

սենը առաջ է բաշում համարձակ պլան. դահուկներով կտրել նրա սառցապատ հորիզոնը, անմարդաբնակ արևելյան ափից անցնել բնակեցված արևմտյան ափը: Այդ նորությունը, որը բացառում էր նահանջի ուղին, բխում էր նանսենի խորիմացությունից ու հաստատակամությունից և մարդկանց հոգեբանորեն հաղթական համարձակության նախապատրաստելու միտումից: Ընդհանրապես նանսենի համար հատկանշական դարձավ այդ գործելակերպը, որի մասին նա 1925 թվականին՝ դիմելով Շոտլանդիայի Սենտ-Էնդրյուս համալսարանի (որի լորդ-ռեկտորն էր ընտրվել ինքը) ուսանողներին, ասաց. «Նա մշտապես այն կարծիքին էմ եղել, որ այդքան գոված «նահանջի գիծը» միայն ծուղակ է այն մարդկանց համար, որոնք ձգտում են հասնել իրենց նպատակին: Վարվեցեք այնպես, ինչպես ես եմ խիզախել. ձեր ետևից այրեցեք նավերը, քանդեցեք կամուրջները: Միայն այդ դեպքում ձեզ և ձեր կողմնակիցների համար չի մնա այլ ելք, քան գնալ միայն դեպի առաջ: Գուց պետք է ճեղքեք անցքեր, այլ կերպ կհորձանվեք»¹: Հարկավ, խոսքը կույր համարձակության մասին չէ, այլ գիտական խիզախության, որը համակվում է կենարար ուժանտիկայով: Հենց այդ առումով էլ նանսենը ուժանտիկան համարում էր մարդու աստվածուհիներից մեկը, որը նրան մղում է դեպի խոր ճանաչողություն ու սխրանք:

Ֆ. Նանսենը իր պլանը մշակելու համար մանրամասն ուսումնասիրեց եղած գրականությունը և ուրիշների փորձը, խորհրդակցեց Գանիայի հայտնի ճանապարհորդ Հ. Ռինկի հետ, եղավ Ստոկհոլմում, հանդիպեց շվեդացի նշանավոր բևեռախույզ Ն. Նորդենշելդին, ծանոթացավ ռուս ականավոր կին պրոֆեսոր Սոֆյա Կովալևսկայայի հետ և արժանացավ նրա խրախուսանքին: 1888 թվականի հունվարին նանսենը «Նատյուրեն» («Բնություն») ամսագրում հրատարակեց իր պլանը և գիտությունների ակադեմիայի միջոցով նորվեգական կառավարությունից խնդրեց 5000 կրոն՝ գրենլանդական ճանապարհորդության համար: Սակայն նա ստացավ մերժում այն պատճառաբանությամբ, թե «նորվեգական կառավարությունը չի կարող մի այդպիսի խոշոր գումար տրամադրել ինչ-որ մասնավոր մարդու զվարճալի ճանապարհորդության համար»: Իհարկե, գործը բարդանում էր նաև նրանով, որ նանսենի առաջադրած պլանը թվում էր ան-

հույս, և նորվեգիայի երգիծական ժուռնալներից մեկը ավելց հետևյալ հայտարարությունը. «Ուշադրություն. այս տարվա հունիսին պրեպարատոր նանսենը կցուցադրի դահուկներով վազը ու ցատկումներ Գրենլանդիայի կենտրոնական մասում: Մշտական նստատեղիքը սառցաձեղքերում: Վերագարձի տոմսեր չեն պահանջվում»:

Չնայած այդ ամենին, նանսենը հետամտում է իր ընտրած ուղին, մանավանդ որ շուտով եկավ օգնությունը, բայց մասնավոր մարդուց. Գալլաքս, մինիստր և առևտրական Ալգուստին Համեյ, որը անտաքրբրվում էր նման ճանապարհորդություններով, նանսենին ուղարկեց պահանջվող գումարը: Հետո պարզվեց, որ արշավը երեք անգամ թանկ է, և այս անգամ ձեռք մեկնեց նորվեգական ուսանողական ընկերությունը՝ հավաքելով 10 հազար կրոն:

Դեկտրական դիսերտացիան պաշտպանելուց 4 օր հետո, 1888 թվականի մայիսի 2-ին, Ֆ. Նանսենը Օտտո Սվերդրուպի և այլ 4 ուղևորների հետ ճանապարհվեց դեպի Գրենլանդիա, որի արևելյան ափը նրանք հասան հունիսի 11-ին: Բայց դա դեռ ցամաքը չէր, այլ ափի մոտ գտնվող սառցակույտը: Արշավի մասնակիցներն այնուհետև շարժվում են նավակներով ու սառույցների վրայով, մինչև որ օգոստոսի կեսերին հասնում են նախատեսված կետը (Ումիվիկ ֆիրդը) և ապա 38 օրվա ընթացքում դահուկներով ու սահնակներով Գրենլանդիայի արևելյան ափից անցնում արևմտյան ափը, ընդ որում նրանք լինում են կղզու սառցադաշտի ամենաբարձր կետում (2716 մ): Դա մեծ սխրանք էր, որը մասնակիցներից պահանջեց հաղթահարել անասելի դժվարություններ և ցուցաբերել անհողողող կամք: Կտրելով այդ վիթխարի սառցադաշտը, նանսենի արշավախումբը հավաքեց արժեքավոր տվյալներ Գրենլանդիայի բնակլիմայական պայմանների, կազմության ու կենդանական աշխարհի մասին: Չըմուռնը նրանք մնացին Գոթհեբ բնակավայրում (Գրենլանդիայի արևմտյան ափին), ուր ապրում էին հիմնականում էսկիմոսներ (մասամբ նաև՝ դանիացիներ), և նանսենը մոտիկից ուսումնասիրեց նրանց կյանքը:

1889 թվականի մայիսին նանսենականները վերադարձան Նորվեգիա, որտեղ սպասում էին նրանց: Հայրենակիցները ջերմորեն դիմավորեցին նրանց և կազմակերպեցին հաղթահանող նանսենը ճանաչվեց որպես ազգային հերոս, քաջատեղյակ ու

¹ Лив Нансен-Хейер, Книга об отце, стр. 5:

քաջակորով նորվեգացի, որը խիզախ վիկինգների անցյալի ասքը միացնում է այսօրվա հետ: Հայտնի գիտնական ու հասարակական գործիչ Վ. Բոյոգերը նշեց, որ «Նանսենին երջանկություն է վիճակվել ամբողջ աշխարհին ցույց տալու այն ժողովրդի արիությունն ու անձնուրացությունը, որի շատ զավակներ անհետ կործանվել են բևեռային ծովերում»: Ականավոր թ. Բյորնսոնն ընդգծեց Նանսենի սխրագործության դերը նորվեգիայի ազատագրման գործում. «Մեզ այժմ պետք է ազատագրություն՝ ներքին, հոգևոր և արտաքին՝ Շվեդիայից: Ամեն մի սխրանք, նման Չերի, կարևոր ներդրում է այդ գործի մեջ: Այն ամբասանում է մեր ժողովրդի ինքնագիտակցությունն ու արիությունը և թուլացնում մեր հակառակորդների միասնությունը»¹:

Գրենլանդական արշավը Նանսենին բերեց միջազգային համբավ, նրա անունը դուրս եկավ իր հայրենիքի շրջանակներից և տարածվեց բազմաթիվ երկրներում: Նա, որպես անվանի գիտնական ու ճանապարհորդ, արժանացավ բարձր պարգևների: Մարդարանության և աշխարհագրության շվեդական ընկերությունը նրան տվեց «Վեգա» մեդալը (1889 թ.), իսկ Անգլիայի թագավորական աշխարհագրական ընկերությունը՝ «Վիկտորիա» մեդալը (1891 թ.)²: Նկատենք, որ այդ պարգևներին արժանանում են բացառիկ դեպքերում:

Ֆ. Նանսենի ճանապարհորդության արդյունքը եղան նրա երկու գրքերը՝ «Գահուկներով Գրենլանդիայի վրայով» (1890 թ.) և «էսկիմոսների կյանքը» (1891 թ.): Առաջինում Նանսենը մանրամասն նկարագրում է իր գլխավորած արշավախմբի երթուղին՝ բոլոր ելևէջներով և կատարում մի շարք գիտական հետեւություններ: Մասնավորապես նա ցույց է տալիս, որ Գրենլանդիան համատարած սառցապատ կղզի է, և հերքվում է մինչև այդ տարածված այն ենթադրությունը, թե իբր նրա խորքում գոյություն ունի սառույցներից ազատ տունդրա: Ընդհակառակն, այդ խորքը պատված է սառցի հաստ շերտով և այնքան ցուրտ, որ նույնիսկ ազդում է հյուսիսային կիսագնդի վրա: Գրենլանդիան Հյուսիսային Եվրոպայի ու Հյուսիսային Ամերիկայի վաղեմի սառցապատման մեծ ժամանակաշրջանի պատկերն է: Նկատենք, որ Նանսենն ամբողջ նյութը շարադրում է գեղագետի հմտու-

թյամբ, և նրա գիրքը կարգացվում է մեծ հետաքրքրությամբ: Այդպես են Նանսենի բոլոր աշխատությունները, որոնք վկայում են նրա գիտական խորության և մատուցման բարձր վարպետության մասին:

Գրենլանդական արշավը Նանսենին «հայտնագործեց» նաև որպես մեծ մարդասերի: Դրա պերճախոս վկայությունն է նրա վերաբերմունքը զեպի մարդիկ և հատկապես էսկիմոսները: Նա իր երկրորդ գրքում անհուն սիրով ու ջերմությամբ է խոսում նրանց մասին, նկարագրում էսկիմոսների կյանքը, սովորություններն ու բարքերը, արհեստագործությունը, երգերը, կրոնական հավատալիքները: Եվ այդ ամենը ոչ թե «երկրորդ ձեռքից», այլ սեփական դիտումներից ու ընկալումներից: Չէ որ Նանսենն ապրեց էսկիմոսների մեջ, հաճախ սնվում ու քնում էր նրանց հետ միասին, հմտորեն վարում կայակը (էսկիմոսների հատուկ նավակը), մասնակցում համատեղ ձկնորսությանը, որսորդությանը, արձագանքում տեղաբնակների ուրախությանն ու տրիսթությանը: Կարճ ժամանակում Նանսենը դարձավ նրանց սիրելին կամ, ինչպես իրենք էին ասում, «մեր սպիտակ էսկիմոսը»:

Ֆ. Նանսենի «էսկիմոսների կյանքը» գիրքը մի իսկական հիմն է այդ խիզախ ժողովրդի մասին: Նա էսկիմոսներին անվանում է «բնության քաջարի զավակներ», որոնք «գտնվում են մարդկության՝ բնության դեմ մղվող անդուլ ճակատամարտի առաջավոր դիրքերում»: Նրանք իրենց ապրուստը հայթայթում են ծանր, բայց սեփական աշխատանքով, աչքի են ընկնում ազնվությամբ, ընկերությամբ, բարեկամությամբ, փոխադարձ օգնությամբ, հյուրասիրությամբ, երբեք չեն հայհոյում (նրանց լեզվում այդպիսի բառեր չկան), որևէ մեկին պատժելը համարում են անարդիկային և այլն. «Գրենլանդացին,— շեշտել է Ֆ. Նանսենը,— ամենակարգին մարդն է, որպիսին երբևիցե ստեղծել է բնությունը»³:

Սակայն էսկիմոսների բնանահայտական կյանքն ավիրվել է եվրոպական գաղութարարների կողմից: Դատապարտելով վերջիններիս ճնշման ու կեղեքման քաղաքականությունը, Նանսենը գրել է, որ էսկիմոսները «արյուն են թափում մեր երկաթե կրկի տակ»: Եվրոպական միսիոներները և այլ գաղութարար-

¹ Лив Хансен-Хейер, Книга об отце, стр. 80.

² Նույն անգլ., էջ 151:

³ Фритъоф Хансен, Собрание сочинений, т. 1, Ленинград, 1937, стр. 260.

ներ «անբարոյականացրել են այդ նախնազարչան ժողովրդին»¹ իլել նրա առողջութունը, ազատութունը և ինքնուրույնութիւնը»։ Դա տանում է դեպի տեղարնակ ժողովրդի ոչնչացում. «Մեր քաղաքակրթութիւնը, մեր միսիաները, մեր ներմուծած ապրանքները առաջ բերին նրա նյութական դրութեան, բարոյականութեան ու հասարակական կարգի այնպիսի տխուր անկում, որ որը ժողովուրդը, թվում է, դատապարտված է կործանման»²։ Ո՞րն է ելքը...

Նանսենը կարծում է, որ մարդիկ պետք է իմանան որը ճշմարտութիւնը և բողոքեն «չարաշահումների դեմ», բոլորին (հատկապես ճնշողներին, գաղութարարներին) կոչեն գործնելու խղճով. «Մի՞թե մենք երբեք չենք բացելու աչքներս, որպեսզի տեսնենք, թե ինչ ենք անում: Մի՞թե մարդկութեան բոլոր իսկական բարեկամները, բեկոյից մինչև բեկո, չպետք է միահամուռ բողոք հայտնեն այդ բոլոր չարաշահումների դեմ, կամայականութեան և այլ հավատի ու քաղաքակրթութեան այլ աստիճանի տեղ մեր եղբայրակիցների հետ ունեցած խալտառակ վերաբերմունքի դեմ: Կգա ժամանակը, երբ սերունդները խստորեն կդատապարտեն մեզ»³: Անշուշտ, Նանսենի «գեղատոմսը» ուտուպիական է և թելադրված սոսկ ֆիլանտրոպիզմի գիրքերից: Նա չի տեսնում հասարակարգի փոփոխութեան անհրաժեշտութիւնը: Էսկիմոսները չեն կարող վերադառնալ իրենց վաղեմի «համայնական ապրելակերպին» և ոչ էլ խուսափել արդի քաղաքակրթութիւնից: Ամբողջ հարցն այն է, թե «ով է քաղաքակրթում» և «ինչ կարգերում են քաղաքակրթվում»: Եթե կապիտալիզմը բերում է ժողովուրդների հպատակեցում ու անէացում, ապա սոցիալիզմը տալիս է ազատութիւն ու բարգաւաճում, ինչպես, օրինակ, տեղի ունեցավ էսկիմոսների հետ Սովետական Միութիւնում (նրանք ապրում են հյուսիսային շրջաններում):

Գրանով հանդերձ Ֆ. Նանսենը ցուցաբերում է բացառիկ սեր դեպի մարդը, առավել ևս ճնշվածն ու կեղեքվածը: Ի դեպ, նա կարծես թե որոշ շփով զգացել է իր անօգնականութիւնը՝ դրանց (տվյալ դեպքում էսկիմոսների) աղատագրման գործում և Նույնիսկ իրեն անվանել «խեղճ երազող»: Համենայն դեպս, ճշմարտութիւնն ասելն էլ նա արդարացիորեն համարում է որո-

շակի միթիարութիւն, հույս ունենալով, որ դա կունենա բնորոշ բար հետևանքներ: Հենց այդ նպատակով էլ Նանսենը «այրող ցանկութեամբ» է դրել «էսկիմոսների կյանքը» գիրքը, որպեսզի «ամբողջ աշխարհին պատմի ճշմարտութիւնը» և «թեթևացնի իր խիղճը», ընդ որում նա համեստորեն նկատում է. «Իմ գրիչը, դժբախտաբար, շատ թույլ է, ես չեմ կարողացել արտահայտել այն, ինչ զգում եմ ավելի խոր, ես երբեք չեմ ցանկացել այնպես ուժեղ ունենալ գրողի տաղանդ: Ես շատ լավ գիտեմ, որ իմ խոսքը կլինի ձայն բարբառ հանապատի, նույնիսկ առանց լեռների, որոնք կարող են կրկնել այն: Իմ միակ հույսն է, մի քանիսի մոտ արթնացնել համակրանքի զգացում դեպի էսկիմոսները և վիշտ նրանց բախտի նկատմամբ»: Ինչ խոսք, Նանսենի ձայնը հասավ միլիոնավոր առաջավոր մարդկանց, հուզեց նրանց ու պայքարի կոչեց, բայց անդրգվելի մնացին շահագործողները:

Գոթհոբբը թողնելու պահին տխուր էին թե՛ էսկիմոսները և թե՛ Նանսենը: Նրանք շատ էին մտերմացել և այժմ դժվար էր բաժանվել: Էսկիմոսներից մեկը Նանսենին ասաց. «Այժմ դու վերադառնում ես քեզ մոտ՝ մեծ աշխարհը, որտեղից եկել ես: Գուայնտեղ կհանդիպես շատ մարդկանց, կտեսնես շատ նոր բան և շուտով կմոռանաս մեզ: Իսկ մենք քեզ երբեք չենք մոռանա»: Իրականում Նանսենը մշտապես մնաց հավատարիմ իր իսկ ստեղծած բարեկամութեան մեծ ուխտին, շարունակեց մտերմական հարաբերութիւնները էսկիմոսների հետ և ամեն առիթով պաշտպան էր կանգնում նրանց:

Ամբողջութեամբ վերցրած, երիտասարդ Նանսենի համար «էսկիմոսների կյանքը» գրքի հրատարակութիւնը քաղաքացիական խիզախութիւն էր, որն այնպես հաջողութեամբ շարունակեց նա հետագա տարիներին՝ փոքրաթիվ ժողովուրդների, այդ թվում հայերի, իրավունքների պաշտպանութեան մեծ պայքարում:

□□□

Գրեկանդական ճանապարհորդութիւնից հետո Նանսենն աշխատում էր Քրիստիանիայի համալսարանի կենդանաբանական

¹ Фритъоф Нансен, Собрание сочинений, т. 1, Ленинград, 1937, стр. 386.

² Նույն տեղը, էջ 391:

¹ Фритъоф Нансен, Собрание сочинений, т. 1, 1937, стр. 202.

կարինետում, մշակում իր հավաքած նյութերը և միաժամանակ մտածում նոր, ավելի մեծ պլանի մասին՝ մեկնել Հյուսիսային բևեռ և հետազոտել այն: Ընդհատ է, 1889 թվականի աշնանը նա ամուսնանում է, բայց դա բուրժուական չի խանգարում նախատեսված ծրագրի իրականացմանը: Ֆ. Նանսենի կինը դարձավ հայտնի երգչուհի և սպորտամենուհի Եվա Սարսը, որը նշանավոր կենդանաբան պրոֆեսոր Միքայել Սարսի աղջիկն էր: Նա օժտված էր շատ բարեմասնություններով և դարձավ ոգեշնչման աղբյուր ամուսնու համար: Ընդհանուր առմամբ դա երջանիկ զույգ էր և աչքի էր ընկնում կատարյալ ներդաշնակությամբ: Միաժամանակ Սարսերի կուլտուրական և դարգացած ընտանիքի միջոցով նանսենն անմիջականորեն շփվեց Նորվեգիայի առաջադեմ մարդկանց հետ, մոտ կանգնեց երկրի հասարակական կյանքին: Բնորոշ է նաև, որ այդ ժամանակ նանսենը խզեց իր կապերը եկեղեցու հետ՝ գտնելով, որ կրոնը ոչ մի կապ չունի գիտության հետ: Նա դարձավ աթեիստ և երբ հետագայում նրան առաջարկեցին դառնալ Նորվեգիայի թագավոր, հրաժարվեց, մանավանդ, որ ըստ սահմանադրության այդպիսին կարող է լինել հավատացյալ լյութերականը: Նանսենի «աստվածը» նրա մարդկային խիղճն էր, որով տողորված պայքարում էր արդարության համար:


Ամուսնությունից հետո նանսենի ընտանիքը տեղափոխվում է «Գոթհոր» առանձնատունը, որը կառուցվել էր Քրիստիանիայի մոտ գտնվող Լյուսակեր ծովածոցի շրջանում և նույնանուն գետի ափին: Ընթերցողը արդեն նկատեց, որ այստեղ օգտագործվել է էսկիմոսների գրեկանական բնակավայրի անունը, որը նշանակում է «Բարի հույս»: Ի դեպ, նոր շինության այդ անունը կնքեց Բյորնստերնե Բյորնսոնը, որը լիովին համահնչյուն էր նանսենի մտքին ու հոգուն: Ավելի ուշ, երբ նանսենի ընտանիքը մեծացավ, հյուրերն էլ շատացան, հարկ եղավ «Գոթհորից» ոչ հեռու, ետևն Լյուսակերի սոճիների մեջ կառուցել ավելի ընդարձակ շենք, որի աշտարակում տեղավորված էր նանսենի աշխատասենյակը: Նոր տունը բարեկամները (ավելի ճիշտ՝ Ֆ. Նանսենի քենակալ, գիմնազիայի ուսուցիչ էմիլ Նիկոլաուսենը) կոչեցին «Պուլճյոգդան», որը մասնակի փոփոխությամբ նշանակում է և՛ հասնել 86°14'-ին (1895 թվականին նանսենը հասավ Հյուսիսային այդ լայնությանը), և՛ վիսկի՝ զելտերյան (հանքային) ջուր, որը շատ էր ընդունված նանսենների ընտա-

նիքում: «Պուլճյոգդան» կանգնած է բլրի վրա և կարծես իր տիրոջ նման բաց ճակատով նայում է շրջապատին, քաղաքին ու ծովին, ամբողջ աշխարհին: Իդուր չէ, որ ասում են, թե մարդու տունը հենց ինքն է... Այնուհետև նանսենի բեղմնավոր գործունեությամբ Լյուսակերն ու Պուլճյոգդան դարձան նշանավոր, աշխարհի տարբեր երկրների ու մարդկանց հետ ունեցած նրա գրագրությունները հիմնականում ուղարկվում էին այդտեղից և ստացվում էին այդտեղ: Մեծ մտածողի երկերն էլ գրվել են այդ ընտանեկան օջախում:

Շատերը կարծում էին, որ ամուսնանալով, նանսենը մի կողմ կգնի Հյուսիսային բևեռ մեկնելու պլանը: Բայց ո՛չ, նա հետևողական էր իր ծրագրերում: Ավելին, պատմում են, որ նանսենը, ամուսնության առաջարկ անելով Եվային, անմիջապես ասել է. «Բայց ես պետք է մեկնեմ Հյուսիսային բևեռ»: Ի պատիվ սիրասուն ու խելացի կնոջ, պետք է ընդգծել, որ նա ոչ միայն երբեք չի զժգոհել նման (հարկադրական) բաժանումներից, այլև լիովին հասկացել է ամուսնուն և ամեն կերպ աջակցել նրան, որպես մի մարդու, որը կոչված էր շատ գործ կատարելու այս աշխարհում: Նանսենը սիրում և պաշտում էր կնոջը, ամեն ինչ կիսում նրա հետ: Իսկ երբ կորցրեց նրան (Եվան մահացավ անժամանակ՝ 1907 թվականին), նանսենը ապրեց կատարյալ ողբերգություն՝ անընդհատ կրկնելով. «Կյանքը սկսվել է Եվայից...»: Անհուն սիրո խորհրդավորություն ունի այն, որ ըստ Եվայի կամքի, մահից հետո նա դիակիզվում է, և նրա աճյունի մոխիրը նանսենը կա՛մ քամուն է տալիս իրենց կալվածքում, կա՛մ թաղում Պուլճյոգդայի վարդի թփի տակ (այդպես պատմում են, բայց հայտնի չէ, թե ո՞րն է ճիշտ): Լիվ նանսենը վկայում է. «Մայրս գերեզման չունի: Ո՛չ նա, ոչ էլ հայրս երբեք չեն ուղեցել գերեզմաններ ունենալ: Ոչ որ շգիտե, թե որտեղ է Եվայի աճյունի մոխիրը»:

Անզուգական կնոջ մահից հետո նանսենը իր օրագրում նշում է. «Ի՞նչ է պատահել, ես դեռ չեմ կարողանում հասկանալ. Օ՛, ինչպիսի անմտություն, ինչպիսի անհեթեթություն. բախտի պատահականությունը, առանց որևէ անհրաժեշտության, կուրորեն սրբեց տարավ, որպես չոր խոտի ցողուն, աշխարհի ամենահրաշալի արարածին: Եվ ինքն էլ չգիտի, թե ինչ է արել, և չկա մեկը, որին դրա համար պատասխանատվության կանխի: Մնացել է միայն դատարկություն ու թուլություն»:

2261



արեգակը, այլևս չի ծայրում կյանք պարզեղ ջահը... Ես ուզում եմ լինել այնտեղ, որտեղ նա է, որտեղ ամեն ինչ վերջանում է, ամեն ինչ վերանում, լրիվ ներվանայի լուսնյան մեջ»: Հետագայում էլ այդ վիշտը հանգիստ չի տալիս, և Նանսենը կատարում է բաղմամբիվ խորհրդածություններ: Ահա զրանցից մեկը. «Կան երկու կարգի կանայք և երկու կարգի սեր: Ոմանք, առավոտյան զարթնելով, մտածում են. այսօր ի՞նչ անեմ, որ նրան (ամուսնուն) լավ լինի: Այդպիսիները քիչ են, բայց պատահում են: Ուրիշները առավոտյան զարթնում են այն մտքով, թե այսօր ի՞նչ անեմ, որ ինձ համար ավելի լավ լինի, ինչպե՞ս դրա համար օգտագործեմ նրան (ամուսնուն): Այդպիսիները շատ են»: Կասկած չկա, որ Նանսենը իր կնոջը՝ «Եվա-Գորտիկին» (ինչպես սիրում էր անվանել նրան), համարում էր առաջին կարգի կին: Միբիլի կնոջ կորուստը Նանսենին դարձրեց ավելի նրբազգաց զեպի մարդը, նրա տանջանքները, որոնց վերացման համար պատրաստ էր անել ամեն ինչ*:

Շարունակենք հետևել զեպեերի ընթացքին: Հայտնի է, որ «Նյու Յորք հերալդ» թերթի հրատարակիչ Բեննետի ծախսերով ամերիկյան մի արշավախումբ՝ նավատորմի լեյտենանտ Ջորջ Դեն Լոնգիի գլխավորությամբ, 1879 թվականի հուլիսին «Ժաշետա» նավով Կուրս է գալիս Սան Ֆրանցիսկոյից և անցնում Բերինգյան նեղուցը, որպեսզի որոնի հյուսիսարևելյան երթևեկության ուղին: Բայց շուտով նավը սեղմվում է սառույցների մեջ և դրեյֆում զեպի հյուսիս-արևմուտք, ընդ որում հայտնաբերվում են ժանետա, Հենրիետա ու Բենետա կղզիները (հետո կոչվեցին Կեն Լոնգի արշիպելագ): 1881 թվականի հունիսի 13-ին նավը ջարդուիշուր է լինում սառույցների մեջ, իսկ անձնակազմը կարողանում է անցնել Նոր-Միքսիլյան կղզիները և այդտեղից՝ մայրցամաք, բայց շատերը (այդ թվում Դեն Լոնգը) ճանապարհին մեռնում են:

1884 թվականին մամուլում հաղորդվում է, որ «Ժանետայի» մնացորդները հասել են Գրենլանդիայի ափերը, և դրանով նորից հավաստվում է Լոմոնոսովի կարծիքը Կենտրոնական Արկտիկայում՝ Միքսիլի ափերից զեպի Գրենլանդական ծովը դրեյֆող սառույցների գլխավոր ուղղության (արևելքից արևմուտք) մասին: Նանսենը խորաթափանցությամբ կռահում է

տեղի ունեցածը և գե՛ն այն ժամանակ կանխադժում իր մտադրությունը՝ օգտագործել այդ հոսանքը և շարժվել դրեյֆող սառույցներով: «Այն սառույցը, — ասում էր Նանսենը, — որը սովորաբար խոչընդոտ էր համարվում բևեռ հասնելու ճանապարհին, իմ դաշնակիցը կդառնա: Այդ դրեյֆող սառույցներով ևս կշարժվեմ զեպի բևեռ և կհասնեմ նպատակիս»: Նկատենք, որ Նանսենի նախորդները փորձում էին Հյուսիսային բևեռ հասնել՝ շարժվելով հակառակ դրեյֆող սառույցների, որը սակայն նրանց ևս էր տանում: Հետագա տարիներին նա մշակում է Հյուսիսային բևեռ մեկնելու կոնկրետ պլան և 1890 թվականին այդ մասին զեկուցում Նորվեգիայի աշխարհագրական ընկերությանը: Նանսենի առաջարկը ստանում է հավանություն, իսկ նորվեգական կառավարությունը, ելնելով թե՛ նրա ժողովրդականությունից և թե՛ մտահոգված Արկտիկայի ուսումնասիրության առաջնությունը, իր վրա է վերցնում նոր արշավախմբի ծախսերը (մի մասն էլ կատարեցին մասնավոր մարդիկ): Շուտով Նանսենի մտահոգյամբը կառուցվում է էքսպեդիցիոն նավ, և դա առաջին զեպն էր, երբ արշավախումբը ստանում էր հատկապես իր նպատակի համար շինված նավ (կարճ կորպուսով և ձվաձև հատակով, որպեսզի սառույցների սեղմման զեպում վեր բարձրանա): Նավը կառուցվեց Նորվեգիայի հայտնի նավաշինարար Կոլին Արչերի ղեկավարությամբ:

Մանոթանալով Նանսենի Հյուսիսային բևեռ մեկնելու պլանի հետ, շատերը դա համարեցին «անմտություն» ու «ինքնասպանություն»: Այդպես էին կարծում, օրինակ, Անգլիայում: Մինչդեռ Ռուսաստանում առաջադեմ մտածողները (է. Տոլը, Ս. Մակարովը և ուրիշներ) տրամադրված էին լավատեսորեն և իրենց համերաշխությունն ու աջակցությունը խոստացան Նանսենին: Նրան ուղարկեցին բաղմամբիվ քարտեզներ ու տեղեկություններ հյուսիսային ծովերի ու բնակավայրերի մասին, նրա տրամադրության տակ դրին արշավի շներ ու պահեստներ (Նոր-Միքսիլյան կղզիներում):

Նանսենի արշավախմբի նախապատրաստությունն առաջ է գնում ամբողջ թափով: 1892 թվականի հոկտեմբերին ջրարկվում է կառուցված նավը: Նրա տախտակամածի վրա է բարձրանում Նանսենը՝ կնոջ հետ միասին. Եվան շամպայնի շիշը կոտրում է ֆորշտենի (նավի առաջացուկ) վրա և գոչում. «Քո անունն է «Ֆրամ» («Առաջ»)»: Հաջորդ տարվա հունվարին ծըն-

* Ֆ. Նանսենը երկրորդ անգամ ամուսնացավ 1919 թվականին՝ Զիգրուն Մունթեի հետ:

լում է նանսենի ավագ երեխան: Յնծությունն անսահման էր, մանավանդ որ Նվալի նախկին երկու ծննդաբերություններն անհաջող էին անցել: Պատահական չէ, որ Բ. Բյորնսոնը այդ ժամանակ լոնդոնում գտնվող Ֆ. Նանսենին ուղարկած իր ողջույնի հեռագրում նշեց. «Թանկագին նանսեն, մեկի թողարկումը նավի շինարարներից երջանիկ է մյուսից, մեկն ավելի թանկ է, քան մյուսը: Ներխուժում են ինձ մոտ և ցույց տալիս «Վերդենս Գանդը»*. Եվա նանսենն ունեցել է աղջիկ»: Դա կիվն էր (լիվ նորվեգերեն նշանակում է կյանք), որը մեծացավ ու դարձավ կրթված դավակ, մոր մահից հետո ջերմ հոգատարություններ շրջապատեց մյուս երեխաներին**, ամուսնացավ և ինքն ունեցավ երեխաներ, բայց միշտ էլ կապված մնաց հոր հետ, բաժանեց նրա ուրախությունն ու տխրությունը և վերջն էլ նրան տվեց մի նոր հավերժացում՝ «Հորս մասին» գրքով: Դա և՛ հուշադիրք է, և՛ գիտական հետազոտություն, ուր անպաճուճ լեզվով ու փաստական հարուստ նյութերով պատկերվում է Ֆ. Նանսենի կյանքն ու գործը, արտացոլված է նաև նրա հայանպատ դերը:

Նանսենի արշավախումբը (ընդամենը 13 հոգի, այդ թվում կապիտան Օտտո Սվերդրուպը) «Ֆրամով» նորվեգիայից մեկնում է 1893 թվականի հունիսին և կատարում 3-ամյա ճանապարհորդություն: «Ֆրամը» սկզբում շարժվում է արևմուտքից արևելք՝ Հյուսիսային սառույցյալ օվկիանոսի, ավելի ճիշտ՝ Նվրադիայի ափերով և 1893 թվականի սեպտեմբերին հասնում նոր-Սիբիրյան կղզիների հյուսիսարևմտյան մասը (Հյուսիսային լայնության 78°) և այնուհետև շարժվում դեպի հյուսիսարևմուտք՝ դրեյֆոդ սառույցների հետ (նավը կաշում խարքսիվում է սառույցներին): 1894 թվականին կատարում են օվկիանոսի հատակի չափումներ և հասնում 3850 մ խորություն, հայտնաբերում Ատլանտյան ջրերի տափ հոսանքներ: «Ֆրամը» շարժվում է առաջ, բայց միայն լողացող սառույցների ուղեկցությամբ. դրեյֆոդ նավով Հյուսիսի ուսումնասիրման մեթոդը նանսենին էր, բայց նա 1895 թվականի սկզբին նկատեց, որ

նավի ընթացքը դանդաղ է, և դրեյֆն էլ հակառակ նախատեսածին, կանցնի Հյուսիսային բևեռից բավականին հեռու՝ հարավով: Այդ ժամանակ նանսենը դիմում է նոր սխրանքի. 1895 թվականի մարտին, երբ «Ֆրամը» գտնվում էր Հյուսիսային լայնության 84°05' վրա, նախկին լիտենանտ Յալմար Յոհանսենի հետ միասին իջնում է նավից և 2 նավակով, 3 սահնակով ու 28 շներով շարժվում դեպի բևեռ: Արդյոք դա ինքնասպանություն՞ն էր, ինչպես կարող էր թվալ ումանց. ո՛չ, նանսենը լի էր հավատով դեպի հաջողությունը և հաստատակամ էր իր վճռի մեջ: «Ֆրամի» նավապետ Օտտո Սվերդրուպը, հրաժեշտ տալով նրան, ասաց.

— Նանսենը լի՞ մտածում վերագառնալուց հետո մեկնել Հարավային բևեռ:

— Այո, հենց այդպես:

— Այդ դեպքում ես հուսով եմ, որ կսպասես ինձ, — մրմրեջում է Սվերդրուպը՝ հիանալով նանսենի, իսկական նորվեգացու ամրակուռ բնավորությամբ, որով օժտված էր նաև ինքը*:

Նանսենը և Յոհանսենը՝ ուժերի գերազույն լարումով, երկու ամիս անընդհատ շարժվում են դեպի հյուսիս և հասնում 86°14' զուգահեռականին՝ սահմանելով ոսկորդ: Պարենի և այլ պարագաների պակասության պատճառով նրանք չեն հասնում Հյուսիսային բևեռ**, թեև մնում էր ընդամենը 400 կմ և, ինչպես հետո նկատել է Բյորնսոնը, դրա հաղթահարումը արդեն սոսկ ջրների հարց էր (նանսենն ասել է, որ եթե իրենք շատ շներ ունենային, անպայման կհասնեին բևեռ):

Նանսենը և Յոհանսենը շրջվում են դեպի հարավ-արևմուտք, 3 ամիս հետո հասնում Ֆրանց Իոսիֆի երկիրն ու այնտեղ ձմեռում (մամոակալած քարերից պատրաստած խրճիթում): Ընդհանուր առմամբ նրանք վարել են Ռոբինզոնի կյանք, 15 ամիս անցկացրել սառույցների վրա ու անմարդաբնակ կղզիներում և

* «Վերդենս Գանդը» — լրագիր, որը լույս էր տեսնում նորվեգիայում՝ 1864 թվականից:

** Ֆ. Նանսենն ունեցել է 5 երեխա՝ 2 աղջիկ — կիվ (1893—1959), Իրմեյին (1900 թ.) և 3 աղա — կորն (1897—1964), Օդդ (1901—1973), Օզմունդ (1903—1913):

* Ֆ. Նանսենը, իրոր, ունեցել է մտադրություն մեկնել նաև Հարավային բևեռ, բայց հետո մեծահոգությամբ այդ նպատակի համար «Ֆրամը» զիջել է Բ. Ամունդսենին, որի առթիվ վերջինս նրան հայտնել է խորին շնորհակալություն (տե՛ս Ռոբերտ Սևերնի Սևերный полюс. Руал Амундсен, Южний полюс. М., 1972, стр. 518).

** Հետագայում՝ 1909 թվականին, ամերիկացի ճանապարհորդ Ռոբերտ Պիրին՝ իր 5 ուղեկիցների հետ միասին, առաջինն է հասնում Հյուսիսային բևեռ:

Հաղթահարել աներևակայելի դժվարություններ, այդ թվում՝ սննդի հարցում: Նրանց համար մեծ անակնկալ էր հանդիպումն անգլիացի ճանապարհորդ Ֆրեդերիկ Ջեքսոնի արշավախմբի հետ Ֆրանց Իոսֆի երկրում: Դա տեղի ունեցավ բուրժուական պատահականորեն, երբ սևացած ու մազակալած, ցնցոտիներով մեջ կորած «վարենի» նանսներ հանկարծ տեսավ լավ հագնված ու սպիտակ մի եվրոպացու, որից նույնիսկ անուշահոտ օձառի բուրմունք էր գալիս: Նրանք ողջունի խոսքեր փոխանակեցին անգլերեն, և «Հյուրը» գոչեց.

— Արդյոք Դուք նանսներ չե՞ք:

— Այո, ես եմ նանսներ:

— Օ՛, Յուպիտեր իմ, որչափ ուրախ եմ Ձեզ տեսնելու համար... Շնորհավորում եմ ամբողջ սրտով: Դուք կատարել եք սքանչելի ճանապարհորդություն, և ես անչափ ուրախ եմ, որ առաջինը ես եմ Ձեզ ողջունում Ձեր վերադարձի առթիվ:

Այնուհետև նանսներ Յոհանսենի հետ միասին հյուրընկալվեց Ջեքսոնի խրճիթում և ապա նրա արշավախմբի «Վինդվորդ» նավով 1896 թվականի օգոստոսի 14-ին վերադարձավ Նորվեգիա, իսկ 20-ին այդտեղ հասավ նաև «Ֆրամը», որը մինչև այդ ժամանակ էր Շպիցբերգների կղզին:

Նանսներն ու նրա արշավախմբին կազմակերպվում է հաղթական դիմավորում և ընդունելություն: Ամենուրեք ցնծում էին ու փառաբանում մեծ արշավի մասնակիցներին, որոնք իր ժամանակի համար հասել էին մարդկային հնարավորության առավելագույնին: Նանսներ դիտվում էր որպես Նորվեգիայի ազգային դուցազն, որը փառք է բերում իր հայրենիքին: Նրա հաղթական արշավը ոչ միայն դիտական սխրանք էր, այլև պարար ազգային անկախության համար: Բնորոշ է, որ մայիսի 17-ին՝ Նորվեգիայի ազգային տոնի օրը, սառույցների մեջ լողացող «Ֆրամի» վրա միշտ բարձրացվել է միայն նորվեգական դրոշակ՝ առանց շվեդական էմբլեմի, իսկ նանսներ, Հյուսիսային բևեռից մտովի տեղափոխվելով Քրիստիանիա, նշել է. «Պատկերացնում եմ ինձ երեխաների երգերի ու մարդկային հոսքի մեջ, որն այժմ ընթանում է քաղաքի փողոցներով, ուրախություն է փայլում ամեն մեկի հայացքում... Օ՛, սրտիս

1 Տե՛ս Ֆրիտյոֆ նանսեն, «Ֆրամը» Բենտայն ծովում, հ. 2, Երևան, 1959, էջ 272—273:

համար ինչքա՛ն թանկ է ամեն ինչ այնտեղ և ինչքա՛ն զեղեցիկ»:

Ամբողջ երկիրը մեծաբուր մ էր իր հերոս-զավակներին և միաժամանակ հայտարարում միջոցների հավաքում՝ «նանսների ֆոնդի» համար, որը պիտի տրամադրվեր զիտահետազոտական աշխատանքներին:

Մեծացավ նանսների միջազգային հռչակը և, ինչպես գրել է ժամանակակիցներից մեկը, նրա «առաջ խոնարհվել էր Փարիզը, Բեռլինը զգաստ էր կանգնել, Պետերբուրգը տոնում էր, Լոնդոնը ծափահարում, Նյու Յորքը՝ փոթորկվում»:¹ Բոլոր երկրների առաջադեմ մարդիկ ջերմորեն ողջունեցին նանսների խիզախությունն ու իմաստությունը: Դրանց մեջ էին ուսուցիչական զիտակականները և ի թիվս որոնց՝ ուսուցիչական աշխարհագրական ընկերության ներկայացուցիչ է. Տոլը: Պատահական չէ, որ նանսներ Բերգենում կազմակերպված ճաշկերույթի ժամանակ շնորհակալություն հայտնեց նրանց և նշեց, որ իր արշավի հաջողությանը նպաստել են ուսուցիչական ծովագնացները՝ Գեմներ, Չելյուսկինը, Լապտեր և ուրիշներ, որոնք հատկապես հետազոտել են Սիբիրի ափերը: 1898 թվականին նանսներ ընտրվեց Պետերբուրգի զիտությունների ակադեմիայի պատվավոր անդամ: Ի դեպ, այդ թվականի գարնանն էր, որ Ֆ. Նանսներ կհեռջ հետ առաջին անգամ ժամանեց Պետերբուրգ, արժանացավ մեծ ընդունելության և Ստանիսլավի 1-ին աստիճանի շքանշանի ու աշխարհագրական ընկերության մեդալի: Նա սերտ կապեր հաստատեց ուսուցիչական զիտականներ Ս. Տյան-Շանի, Պ. Սեմյոնովի, է. Տոլի, ծովակալ Ս. Մակարովի և ուրիշների հետ, որոնք համատեղ քննարկեցին Հյուսիսի հետազոտման հարցը:

Նանսների արշավախմբի նպատակն էր ոչ այնքան Հյուսիսային բևեռի կենտրոնակետը հասնել, որքան բազմակողմանիություն ուսումնասիրել նրա ավազանը: Այդ մասին նա գրել է զեռարշավի նախօրյակին. «Մենք ճանապարհվում ենք ոչ թե նրա համար, որ գտնենք երկրագնդի առանցքի վերջավորությունը կազմող մաթեմատիկական կետը. այդ կետին հասնելը ինքնին քիչ արժեքավոր է, այլ որպեսզի դիտումներ կատարենք բևեռը շրջապատող՝ երկրագնդի շուտամասիրված ընդարձակ մասում: Այդ դիտումների դիտական հետաքրքրությունը չի նվազի այն բանից՝ արդյոք մեր ճանապարհն անցնո՞ւմ է բուն բևեռով, թե

նրանից որոշ հեռավորության վրա»¹։ Եթե նկատի ունենանք, որ այն ժամանակ Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի կենտրոնական մասի վերաբերյալ կային բավականին հակասական կարծիքներ (ոմանք գտնում էին, որ բևեռը բաց ծով է, մյուսները՝ ծանծաղուտ, իսկ Լերբորգները՝ ցամաք կամ կղզի), ապա ավելի է մեծանում դրված նպատակի կարևորությունը։ Նանսենի արշավախումբը հավաքեց միանգամայն արժեքավոր ու բազմապիսի նյութեր, որոնք մեծ դեր խաղացին բևեռագիտության հետագա զարգացման գործում։

Վերադառնալով Նորվեգիա, Նանսենն անմիջապես ձեռնամուխ է լինում իր արշավի արդյունքների գիտական մշակմանն ու ընդհանրացմանը։ 1897 թվականին լույս է տեսնում նրա «Ֆրամը» Բևեռային ծովում» հրաշալի գիրքը, որը հեղինակը նվիրել է իր կնոջը՝ Վերան, որ նավին անուն է տվել և ունեցել է արիություն՝ սպասելու։ Ավելի ուշ, 1900—1906 թվականներին 6 հատորով հրատարակվեցին արշավախմբի հավաքած նյութերը, որոնք հնարավորություն տվին կազմելու Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի այն շրջանի աշխարհագրական ու բնակչիմայական բնութագիրը, որտեղով անցել էր «Ֆրամը»²։ Նանսենն առաջին անգամ տվեց Կենտրոնական Արկտիկայի ռեալ պատկերը, նշելով, որ այդտեղ չկան ոչ սառույցներից ազատ ջրային լրիվ տարածություններ և ոչ էլ ցամաք, բացահայտեց արկտիկական ավազանի մեծ խորությունը և ստորջրյա տաք հոսանքների գոյությունը, հաստատեց Լոմոնոսովի միտքը՝ սառույցների գրեյֆի մասին, հայտնագործեց երկրադնդի օրվա

¹ Յրիտոֆ Նանսեն, «Ֆրամը» Բևեռային ծովում, հ. 1, Երևան, 1958, էջ 77։

² Հետազոտում այդ նույն նավով Հանապարհորդեցին Օ. Ավերդրուպը (1898—1902 թվականներին՝ Կոնստանտին Արկտիկա) և Ռ. Ամունդսենը (1900—1911 թվականներին՝ Անտարկտիդա)։ «Ֆրամը» Կոլումբոսի «Մանտա Մարիայի» նման դարձավ պատմական և այժմ վերածված է քանդարան-տաղավարի՝ Օսլո-Ֆիորդում (Բյուրգոյ թերակղզում)։ Նրա կողքին տաղավարում է գտնվում հուշակալը Տուր Հելլերդալի «Կոնտիկին», այսինքն՝ 9 կրպիտ գերաններից կազմված հասարակ լաստանավակը (նախնիների նման), որով 6 խիզախներ 1947 թվականին 101 օրվա բնթացքում կտրել անցել են Խաղաղ օվկիանոսը։ Ներկայումս Բյուրգոյի այդ թանգարանը («Ֆրամով» և «Կոնտիկիով») դարձել է «ուխաավար» հետազոտողների ու աշխարհի զբոսաշրջիկների համար։ Այն մենք այցելեցինք 1975 թվականին և ակննատես եղանք մարդկային անբնդհատ հոսքի...

շարժման ու բամու ազդեցությունը գրեյֆոդ սառույցների վրա և այլն։ Փաստորեն Նանսենը հայտնաբերեց Հյուսիսային սառուցյալ օվկիանոսը, որը մինչ այդ գիտեին սոսկ առաինյա մասերով։ Ակնհերև է այդ հայտնագործության խոշոր նշանակությունը գիտության և ընդհանրապես մարդկության համար։

Այդպիսով, Նանսենի գիտական հետաքրքրության առանցքն է գտնում օվկիանոսագիտությունը։ Այդ է պատճառը, որ նա, շնայած արկտիկական արշավից հետո նշանակվում է կենդանաբանության պրոֆեսոր Քրիստիանիայի համալսարանում, բայց իրականում զասավանդում է օվկիանոսագիտության դասընթացը և մշակում այդ առարկայի մեթոդոլոգիական հիմունքները, կադմակերպում տվյալ բնագավառի մասնագետների միջազգային համագործակցությունը։ Նրա առաջարկով ու ակտիվ մասնակցությամբ 1899 թվականին Կոպենհագենում հիմնվում է Մովերի ուսումնասիրության միջազգային խորհուրդ, որը միավորում էր 14 երկիր, իսկ 1902 թվականին Քրիստիանիայում հիմնվում է Կենտրոնական օվկիանոսագիտական լաբորատորիա՝ Նանսենի ղեկավարությամբ։ Մինչ այդ՝ 1900 թվականին նա «Միբայել Սարս» նավով մեկնում է Շպիցբերգեն և ուսումնասիրում ատլանտյան հոսանքները Սառուցյալ օվկիանոսում, իր տղայի հետ նյութեր հավաքում հյուսիսի հիդրոլոգիայի ու գեոմորֆոլոգիայի մասին, որոնց հիման վրա 1901 թվականին գրում է օվկիանոսագիտական աշխատությունը։

Ֆ. Նանսենը սոսկ գիտնական չէր, այլև հասարակական գործիչ։ Մասնավորապես նա երիտասարդ շրջանից ընդգրկվեց Նորվեգիայի անկախության համար մղվող շարժման մեջ։ Հայտնի է, որ տնտեսապես թույլ Նորվեգիան XIV դարում կախվածություն մեջ ընկավ Դանիայից, և դա շարունակվեց մինչև 1814 թվականը, երբ հականապոլեոնյան կռալիցիան այն հանձնեց Շվեդիային (վերջինիս՝ Նապոլեոն I-ի դեմ մղած պատերազմների մասնակցելու համար)։ Բայց նորվեգական ժողովուրդը դեմ էր այդ ունիային, և 1814 թվականի ապրիլին էյդսվոլում (Քրիստիանիայից 70 կմ) գումարվեց Հիմնադիր ժողով, որը և մայիսի 17-ին ընդունեց ազգային սահմանադրություն։ Այն բուրժուական էր, բայց, ինչպես նշել է Ֆ. Էնդելսը, ավելի դեմոկրատական, քան եվրոպական որևէ երկրի սահմանադրությունը¹։ Նկատենք, որ մայիսի 17-ն էլ Նորվեգիայի պատմու-

¹ Տե՛ս՝ К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 37, էջ 351։

թյան մեջ մտել է որպես աղգային տոնի օր: Բայց, շնայած էյրավորում Հիմնադիր ժողովը մեծամասնությամբ արտահայտվեց հօգուտ Նորվեգիայի լիակատար անկախության, Շվեդիան զավթեց իր «ավարը»: Նորվեգիայի ժողովուրդը շահշուտեց այդ վիճակի հետ, և նրա երկարատև ազատագրական պայքարը պսակվեց հաջողությամբ: 1905 թվականի հունիսի 7-ին վերջ տրվեց Շվեդիայի հետ ունիային, և Նորվեգիան ձեռք բերեց ինքնուրույն պետականություն: Դրանում խոշոր դեր կատարեց նաև Նանսենը, որն այնուհետև (1906—1908 թթ.) դարձավ անկախ Նորվեգիայի դեսպանը Անգլիայում: Նա շատ շանքեր գործադրեց բարձրացնելու իր երկրի միջազգային հեղինակությունը, և կոնգրեսում շվեդական ներկայացուցիչը հարկադրված էր խոստովանել, որ «Անգլիայում Նանսենի անունն ավելի ուժեղ է, քան ամբողջ Շվեդիայինը»: Միաժամանակ նա ձեռք բերեց դիվանագիտական աշխատանքի փորձ, որը Նանսենին շատ պետք եկավ հետագա տարիներին:

Այնուամենայնիվ, դիվանագիտությունը Նանսենի «խորթ զավակն էր», և նա շտապեց այն թողնել, մասնավորապես, երբ մահացավ կինը՝ Եվան: 1908 թվականին վերադառնալով Նորվեգիա, Նանսենը զբաղվեց Զրիստիանիայի համալսարանի օլեկիանոսագիտության պրոֆեսոր, սերտ կապեր հաստատում հայտնի գիտնականներ ու ճանապարհորդներ Բ. Հելլանդ-Հանսենի, Կ. Ռասմուսենի, Ռ. Սկոտի, Ռ. Ամունդսենի հետ, իր փորձիկ առաջատարնալով («Վեսլեմոյ») դիտումներ անում Նորվեգական ծովում ու Շպիցբերգների ամերին: Նա դեռ կոնգրեսում (դեսպանի պաշտոնում) սկսել էր մի մեծ աշխատանք, որը շարունակեց հետագա տարիներին և 1911 թվականին հրատարակեց «Հյուսիսի մառախուղներում» վերնագրով: Այդտեղ նա տալիս է Հյուսիսի հետազոտման պատմությունը՝ հնազույն ժամանակներից մինչև 1500 թվականը: Նանսենը նշում է, որ քանի դեռ մարդու ականջը լսում է ալիքների ծփանքը բաց ծովում, նրա աչքը դիտում է հյուսիսափայլը լուսկյաց ձյունապատ տարածությունների վրա, իսկ միտքը սլանում դեպի անձայրածիր տիեզերքի հեռավոր աստղերը, այնքան ժամանակ երազանքն անհայտության մասին մարդկային ոգուն կմղի առաջ ու վեր:

□□□

Ֆ. Նանսենը 1913 թվականին ճանապարհորդություն է կա-

տարում Ռուսաստանում: Առիթն այն էր, որ նա Ռուս-նորվեգական սիրբրյան բաժնետիրական ընկերության կողմից հրավիրվում է մասնակցելու մի արշավախմբի, որը պետք է ուսումնասիրեր ծովային հաղորդակցության ուղիները Կենտրոնական Սիրբրի հեռավարային ծովով: Նանսենը սիրով համաձայնվում է՝ ասելով. «Սառուցյալ օվկիանոսով նավարկելու հնարավորությունը, մինչև Ենիսեյ հասնելն ու նաև մինչև Հեռավոր արևելք ընկած Սիրբրը տեսնելը, շատ գրավիչ է: Ինձ հենց հանգստություն է պետք, և ես այն կանցկացնեմ այնտեղ շատ լավ, ուստի ուրախությամբ եմ տալիս իմ համաձայնությունը»:

Շուտով կազմվում է արշավախումբը, որը և 1913 թվականի օգոստոսին «Կորեկտ» ապրանքատար նավով դուրս է գալիս Նորվեգիայից, շարժվում հյուսիսային ջրերով ու հասնում Ենիսեյի գետաբերանը: Այդտեղ նավը կանգ է առնում և այնուհետև նրանք կատարով նավարկում են գետով մինչև Ենիսեյսկ, որից հետո պետք է գնային ցամաքով: Նանսենը և մյուսները դառնում են «Տեժյալներ» և ձիերով հասնում Կրասնոյարսկ, իսկ այնտեղից նստում են գնացք և երկաթուղով մեկնում Վլադիվոստոկ: Նորից վերադարձ ցամաքով (գարձյալ Սիրբրով) մինչև Պետերբուրգ: Այստեղ Նանսենը մտախիլից ծանոթանում է ռուս գիտնականներին, իմանում Գ. Սեդովի արշավախմբի մասին և մասնակցում նրան օգնություն ցույց տալու հարցի քննարկմանը: Անջնչելի տպավորություններով նա 1913 թվականի հոկտեմբերին վերադառնում է հայրենիք:

Այդ ճանապարհորդությունը խիստ արդյունավետ էր Նանսենի համար. նա իր ուղեկիցների հետ միասին հավաքում է շատ նյութեր: Դրանում մեծ ավանդ ունի Իոսիֆ Գրիգորի Լոռիս-Մելիքովը, որը ծննդով Քիֆլիսից էր (հայտնի Լոռիս-Մելիքովների ընտանիքից), գտնվում էր ռուսական պետական ծառայության մեջ և երկար ժամանակ Նորվեգիայում ռուսական դեսպանության քարտուղարն էր: Հենց այդտեղից էլ նա, որպես բազմակողմանիորեն զարգացած ու քաջատեղյակ մարդ, ռուս-նորվեգական համագործակցության պաշտոնական ներկայացուցիչ, հրավիրվում է մասնակցելու արշավախմբին: Նանսենը միանգամայն դոճ էր նրա ընկերակցությունից, կուլտուրական և կենսաբանական քննարկումներից, գործարար հատկանիշներից, այն հմտությունից, որ նա դրսևորում էր հատկապես Սիրբրի ժողո-

վորդների լեզուների ուսումնասիրության ասպարեզում: Գրված տանքով խոսելով նրա մասին, Նանսենը գրել է.

«Իոսիֆ Գրիգորի Լոռիս-Մելիքովը շատ տարիներ գրավել է Քրիստոնեիայում ուսական գեոպանութիան բարտուղարի պոստը: Նա ծագումով կովկասյան հայ էր, երկար ժամանակ անց է կացրել Գերմանիայում, սովորել գերմանական համալսարանում և, բացի ուսերեն ու գերմաներեն լեզուներից, շատ լավ տիրապետում էր նորվեգերենին, ֆրանսերենին ու անգլերենին: Նրա խնդիրն էր, ի միջի այլոց, նկատել ու գրանցել յուրակական, սամոյեդական ու ենիսեյան-օստյակական բարբառների առանձնահատկությունները, իսկ բացի դրանից, նա հասկանալի է, որպես նորվեգիայի և Ռուսաստանի միջև կապերի պահպանող անձ, անմիջականորեն շահագրգռված էր այդ արշավով, որի նպատակն էր առևտրական նոր ճանապարհի բացումը հյուսիսային նորվեգիայից դեպի ուսական մեծ պետության արևելյան ծայրամասի սիրտը: Մենք էլ դրա շնորհիվ հնարավորություն ունեցանք ճանապարհին հաճույք ստանալ միշտ միատեսակ սիրալիր, պատրաստակամ և անթերի հաղնված ջենտլմենից, անփոխարինելի հետաքրքիր զրուցակցից, որը հավասարաչափ պատրաստ է և՛ սրախոսել, և՛ ըստ արժանվույն գնահատել ուրիշի սրախոսությունը, իսկ այդ բոլորից բացի նաև հայրենասիրից, որն աներեր կերպով հավատում էր ուսական կառավարական սիստեմի գերազանցությունը¹: Անշուշտ, այլ բան էլ չէր կարելի սպասել բնածին արիստոկրատից, բայց դա չէր խանգարում, որ նա իր գիտելիքներով ու պրպտումներով օգտակար լիներ Նանսենին: Վերջինս այդ ճանապարհորդությանը նվիրված իր գրքում հաճախակի է հիշատակում նրա անունը և, ի թիվս ուրիշների, շնորհակալություն հայտնում «բազմապիսի աչակցության ու արժեքավոր հաղորդումների համար»²: Հավանաբար Բ. Լոռիս-Մելիքովն առաջին հայերից մեկն էր, որի հետ նա մոտիկից ծանոթացավ և հետագա տարիներին էլ պահպանեց նամակագրական կապ:

Ճանապարհորդությունը Սիբիրով իսկական հայտնություն էր Նանսենի համար: Նա, մոտիկից ծանոթանալով այդ լայնածա-

վալ ու մեծ հեռանկարներ ունեցող երկրին, նրա բազմալեզու բնակչությանը, տեսավ Հեռավոր արևելքը՝ իր գունագեղությունը: Վերադառնալով նորվեգիա, Նանսենը գրեց «Սիբիրով» աշխատությունը, որի ենթավերնագիրն է «Հյուսիսային մեծ ուղին՝ Եվրոպայից Կարայի ծովով Սիբիր»: Այն նորվեգերեն լույս տեսավ 1914 թվականին և ապա թարգմանվեց ուսերեն (1915 թվականին՝ «Դեպի ապագայի երկիրը» վերնագրով): Գրան օժանդակել է Բ. Լոռիս-Մելիքովը, որը Պետերբուրգում 1914 թվականին ստանալով Նանսենի գիրքը (հեղինակային օրինակը՝ նորվեգերեն) և նրա նկարը, ջերմ նամակ է գրում «թանկագին պրոֆեսորին», երանություն հիշում իրենց համատեղ ճանապարհորդությունը («այնքան հետաքրքիր, ուսանելի և բացառիկ հաճելի ամառը, որ ես բախտ ունեցա անցկացնել Ձեզ հետ») և մանրամասն հաղորդում անում գրքի ուսերեն հրատարակության հնարավորությունների մասին. «Եթե Դուք ուզում եք լրացուցիչ տեղեկություններ կամ եթե Ձեզ որևէ բան պետք է Պետերբուրգում, ես լիովին Ձեր տրամադրության տակ եմ», — եզրափակում է Լոռիս-Մելիքովը: Նանսենի աշխատությունը լույս տեսավ նաև գերմաներեն, անգլերեն ու այլ լեզուներով: Վ. Բ. Լենինը Յուլիխի գրագարանում անմիջապես ծանոթացավ այդ հետաքրքիր աշխատության հետ³:

Նանսենն իր գրքում մանրամասն ու պատկերավոր ձևով նկարագրում է իրենց արշավախմբի ուղին, հատկապես Սիբիրի բուսական ու կենդանական աշխարհը, նրա ժողովուրդների նիստուկացը: Նա խարազանում է ցարիզմի դադումային ճնշման քաղաքականությունը և գտնում, որ բոլոր ժողովուրդները պետք է լինեն իրավահավասար: Նանսենը շփվել է նաև աքսորյալ բազաթական բանտարկյալների (այդ թվում հայերի ու վրացիների) հետ, պատկերել նրանց անմխիթար վիճակը և շեշտել տեղական բնակչության բարյացակամ վերաբերմունքը իրենց նկատմամբ:

Նանսենը, արժեքավոր տեղեկություններ հաղորդելով Սիբիրի աշխարհագրական, ազգագրական ու տնտեսական պետության մասին, մեծ ապագա է կանխագուշակում այդ երկրամասի համար: Նա գտնում է, որ Սիբիրի բնական հարստություններն անսպառ են և դրանք օգտագործելու համար պետք է ստեղծել

¹ Фрильоф Хансен, В страну будущего, Магаданское книжное издательство, 1969, стр. 107.

² Նույն տեղը, էջ 6:

³ Տե՛ս Վ. Բ. Լենին, Երկրի լիակատար ժողովածու, հ. 28, էջ 831:

ըրային ու երկաթուղային ճանապարհների խիտ ցանց, այդ թվում լայնորեն օգտագործել Հյուսիսային ծովային ուղին: Նանսենը պարզապես սիրահարվեց «ապագայի երկրին», ինչպես նա դիպուկ կերպով անվանեց Սիրիը, և իր ճանապարհորդական նոթերի վերջին օրվա (1913 թվականի հոկտեմբերի 26) գրութայն մեջ նշեց. «Ակամայից ևս տխրում եմ այն մտքից, որ արդեն հրաժեշտ եմ տվել Սիրիի լայնարձակ խորհող անտառներին, նրա խիստ հանդիսավոր բնութայնը՝ պարզ ու վեհաշուք դժերով: Ես սիրեցի այդ վիթխարի երկիրը, որը, ինչպես ծովը, տարածվում է լայնորեն ու հեռուն, Ռուսից մինչև Խաղաղ օվկիանոս, իր լայնարձակ հարթություններով ու լեռներով, Սասուցյալ օվկիանոսի սառցապատ ավերակ, տունդրայի անդորր ազատությամբ և տայգայի խորհրդավոր թավտանքներով, ալիքաձև տափաստաններով, կապտավուն անտառածածկ լեռներով և այդ անսահման տարածություններում ցրված մարդկային խումբերով»¹:

Այդպիսի հուզիչ խոսքերով է ավարտվում Նանսենի գիրքը, որն իսկական ներքուղ է Սիրիի մասին. «Կգա ժամանակը, — գրել է նա, — երբ նա կարթնանա, ևրևան կգան թաքնված ուժերը, և մենք խոսք կլսենք Սիրիի մասին: Նա ունի իր ապագան: Դրանում ոչ մի կասկած չի կարող լինել»: Նանսենի կանխատեսումները լիովին իրականացան սովետական իշխանության պայմաններում: Նորվեգական հայտնի գիտնական Հարալդ Սվերդրուպի վկայությամբ, երբ 1920 թվականին Ֆ. Նանսենը լինում է Մոսկվայում, ի թիվս այլ հարցերի, մեծ զրույց է բացվում նաև Հյուսիսային ծովային ուղու յուրացման մասին: Վ. Ի. Լենինը հատուկ ուշադրություն է դարձնում այդ խնդրին և նշում, որ առաջին հերթին պետք է յուրացնել Ենիսևից արևմուտք ընկած հատվածը, որպեսզի դուրս բերվի Սիրիի հացը և ուղարկվի քաղցածներին: Նանսենն այդ խնդրի լուծումն արագացնելու համար երաշխավորում է իր ընկեր ու փորձված նավավար-ճանապարհորդ Օտտո Սվերդրուպի օգնությունը, որն արժանանում է Լենինի հավանությունը: Շուտով Օ. Սվերդրուպը ստանում է հրավեր և, որպես սովետական «կրասին» սառցահատի պետ, «1921 թվականին ղեկավարում նավերի անցումը Կարայի ծովով»²:

¹ Фриштоф Нансен, В страну будущего, стр. 279.

² Նույն տեղը, էջ 301:

1914 թվականի հուլիսի 19-ին սկսվեց առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմը: Եթե նրա առիթը Սաբաևոյի կրակոցն էր, ապա պատճառը իմպերիալիստական պետությունների հակասություններն էին: Պատերազմի հանցավորները բոլոր երկրների իմպերիալիստներն էին, բայց առավել ակտիվությամբ հանդես եկան գերմանական միլիտարիստները: Պայքար էր մղվում աշխարհի վերաբաժանման համար, նոր շուկաներ ու գաղութներ ձեռք բերելու համար: Պատերազմի մեջ ընդգրկվեցին 38 երկրներ՝ մեկուկես միլիարդ բնակչությամբ: Այն անհամար զոհեր ու զրկանքներ պատճառեց ժողովուրդներին: Բոլորովին անտանելի դարձավ հայ ժողովրդի վիճակը. նա հարկադարձար ներքաշվեց կործանարար պատերազմի հորձանուտը, իսկ գերմանա-թուրքական արշավանքները և ինկվիզիտիվները էլ կազմակերպեց հայերի գենոցիդը, որին զոհ գնաց մեկուկես միլիոն մարդ: Դա պատմության մեջ մեծագույն ոճիրներից մեկն էր, որի հանցավորները մնացին անպատիժ...

Պատերազմը տակնուվրա արեց աշխարհը: Մամուլը լի էր հաղորդագրություններով պատերազմական գործողությունների, կոտորածների ու ավերածությունների մասին: Դրանց իրազեկ գարձավ նաև շեղոք Նորվեգիան, որը միաժամանակ ապրեց անտեսական դժվարություններ: Ավելին, գերմանացիները տորպեդահարեցին նորվեգական մի շարք նավեր, և վիկինգների երկիրը սգաց իր զոհերին: Թեև շեղոք երկրում ողջամիտ մարդիկ չէին կարող անտարբեր լինել դեպի թալանչիական պատերազմն ու նրա արհավիրքները:

Նանսենը, կոահելով վերահաս պատերազմի վտանգը, դեռ 1913 թ. մայիսի 20-ին հանդես գալով Քրիստիանիայի 30-հազարանոց միտինգում, նշեց, որ շեղոքություն էլ պիտի պահպանել ակտիվ պաշտպանությամբ ու զենքի ուժով, այլ կերպ թշնամին կոտնահարի այն: Նա կոչ արեց շտարվել պատրանքներով և չկարծել, թե իբր պատերազմ չի լինի, առավել ևս այն չի շոշափի Նորվեգիան: Բնորոշ է, որ երբ Նորվեգիայի պրեմիեր մինիստր Գունար Կնուդսենը 1914 թվականի փետրվարին հայտարարեց, թե «քաղաքական երկինքն անամպ է», Նանսենը գա համարեց ավելորդ բարենոգություն և ասաց. «Մենք կանդանձ ենք հրաբխի եզրին, որը բուպե առ բուպե կարող է ժայթքել»:

Գրանից կուսմեն բուրբ, ժողովրդական լայն զանգվածները. «Պատկերացրեք, — ասում էր Նանսենը, — ինչ ապագա է սպասում նորվեգական բանվորին, եթե երկիրն ընկնի օտարերկրյա լծի տակ, եթե մենք կորցնենք ազատությունը և ինքնորոշման իրավունքը, երբ վերացվի խոսքի ազատությունը»¹:

Նանսենի կանխատեսումը ճիշտ դուրս եկավ: Բորբորվեց աշխարհավեր պատերազմը, և նրա հրեղեն լեզուները սկսեցին լափել մարդկանց: Նոր ուժով հնչեց Նանսենի հակապատերազմական խոսքը. «Փող իրավունքը, այլ ոչ թե կամայականությունը, իշխի ժողովուրդների վրա: Վա՛յ մեզ, եթե մենք դրա համար չգործադրենք բոլոր ջանքերը: Ամեն օր Եվրոպան մոտենում է վերջին, աղետալի սահմանին: Ամենուրեք ավերակներ են... Քանի դեռ ուշ չէ, պատերազմողներին ասենք. «Կանգնեցե՛ք»²:

1914 թվականի հոկտեմբերին Նանսենը Քրիստիանիայի համալսարանում դասախոսություն է կարդում «Փոքր ազգերի իրավունքների մասին» թեմայով: Նա դատապարտում է մեծ պետությունների բռնության քաղաքականությունը փոքրաթիվ ժողովուրդների նկատմամբ և շեշտում, որ «փոքր ազգերը մարդկությունը տալիս են մեծագույն արժեքներ... Կա մի բան, որն ավելի արժեքավոր է, քան նույնիսկ ինքը՝ կյանքը, — դա կուլտուրական ժառանգությունն է, որը մենք պետք է հասցնենք ապագա սերունդներին: Դա փոքր ազգերին տալիս է կյանքի իրավունք: Սև կլինի այն օրը, երբ երկրի երեսից կվերանան փոքր ազգերը: Բայց որտեղ կա իրավունք, այնտեղ կա պարտականություն: Ամեն մի փոքր պետություն պարտավոր է պահպանել իր մշակույթը և այդ ժառանգությունը հանձնել զալիք սերունդներին»³: Նանսենը, որպես իր երկրի մեծ հայրենասեր ու հասարակական գործիչ, 1915 թվականին ընտրվում է Նորվեգիայի պաշտպանության միության նախագահ և ծավալում ռազմատնտեսական լայն աշխատանք:

Հումանիզմով տոգորված Նանսենի համար մարդկանց բախտն իր բախտն էր: Ուստի, նա չէր կարող սահմանափակվել միայն սեփական հայրենիքով: Նանսենը մեծ ապրումներ ունե-

ցավ պատերազմի մղձավանջում գալարվող բոլոր ժողովուրդներին անլուր զրկանքների առթիվ. «Ո՛ր, ո՛ր, այդ սարսափներից չես կարող փախչել: Նրանք հանգիստ չեն թողնի: Անմտության մղձավանջ, և ոչ ոք ի վիճակի չէ դադարեցնելու այն: Ի՞նչի համար են նրանք պատերազմում: Իշխանության համար, միայն իշխանության համար...»: Նանսենն ամբողջ հոգով խարազանեց պատերազմն ու նրա ծանր հետևանքները: Էլ ինչի համար է մարդկության փառաբանված մշակույթը, եթե նա չի կարողանում «զուպել վայրի գազանին, չի փրկում բարբարոսությունից: Չէ որ դա նրա հիմնական խնդիրն է: Առանց դրա նա դատարկ կեղև է»: Անշուշտ, Նանսենի համար լիովին պարզ չեն զավթողական պատերազմը ծնող պատճառներն ու դրանց վերացման ուղիները, բայց դա չի խանգարում, որ նա պայքարի խաղաղության, ժողովուրդների անվտանգության ու բարեկամության համար:

Հայերի կոտորածի սրտակեղևը լուրերը ցնցեցին ամբողջ առաջագետ մարդկությունը: Մաքսիմ Գորկու, Վալերի Բրյուսովի, Անատոլ Զրանսի, Ռոմեն Ռոլանի, Ժակ դը Մորգանի, Զոզեֆ Մարկվարտի և ուրիշների հետ միասին բողոքի իր ձայնը բարձրացրեց նաև Ֆրիտյոֆ Նանսենը: Նա 1916 թվականին իր օրագրում նշեց, որ այս պատերազմը «խելահեղության մղձավանջ է»¹, իսկ ավելի ուշ գրեց, որ «թուրքական գազանությունները իրենց չափերով ու նողկալի դաժանությամբ գերազանցում են պատմությանը հայտնի բոլոր գազանությունները և հայ գողգոթան իր նմանը չունի պատմության մեջ»²: Նանսենը շեշտում էր, որ դրանում հանցավոր են նաև գերմանական կոտավարողները: Մարդկությունը չի կարող և չպետք է հաշտվի այդ ոճի ի հետ:

Պատերազմի տարիներին ծանրացավ նաև չեղոր նորվեգիայի տնտեսական դրությունը: Դա առավել ևս ակնհերև դարձավ, երբ 1917 թվականի ապրիլին ԱՄՆ-ը մտավ պատերազմի մեջ և վարեց էմբարգոյի քաղաքականությունը, որով կասեցվում էր ապրանքների արտահանումը: Մինչդեռ նորվեգիան հացահատիկ ստանում էր հիմնականում ԱՄՆ-ից: Պատերազմական թուհու-

¹ Лив Нансен-Хейер, Книга об отце, стр. 292.

² А. Таланов, Нансен, М., 1960, стр. 251.

³ Лив Нансен-Хейер, Книга об отце, стр. 295.

¹ Ludwig Nockher, Fridtjof Na nsen, Polarforscher und Helfer der Menschheit, Stuttgart, 1955, S. 174:

² Fridtjof Nansen, Betrogenes Volk, Leipzig, 1928, S. 313.

բոհի մէջ այդպիսի վիճակը բերում էր սովի ահալոր վստահ՝ իր կործանարար հետեանքներով: Հարկավոր էին շտապ միջոցառումներ: Բոլորի ուշադրությունը բեռովեց Յ. Նանսենի վրա, որը պետք է իր հեղինակությամբ ու հետևողականությամբ կը բաներ: Եվ, իբրև, նա արդարացրեց իր հայրենակիցների հույսերը: Նորվեգիայի կառավարական պատվիրակությունը Նանսենի գլխավորությամբ մեկնեց ԱՄՆ, վարեց երկարատև ու զժվարին բանակցություններ և կնքեց նպաստավոր առևտրական համաձայնագիր, որով կարգավորվեց պարենավորման գործը: Ինչպես վկայում են ժամանակակիցները, «ամերիկյան ներկայացուցիչները Նանսենին հասկացրին, որ առանց նրա համառության և բանակցությունների վարելու հմտության, Նորվեգիան չէր կարող ձեռք բերել այդպիսի շահավետ պայմանագիր»:

□□□

Վերջապես կանգ առավ պատերազմի արյունոտ մարտակառքը՝ իր ետևում թողնելով շտեմնված ավերածություններ, զոհեր, զրկանքներ ու տանջանքներ: Բավական է նշել, որ պատերազմական գործողությունների հետևանքով սպանվեց 10 միլիոն մարդ, վիրավորվեց ու խեղանդամ դարձավ 20 միլիոն, իսկ 10 միլիոն էլ մահացավ համաճարակներից ու քաղցից: Պատերազմող պետությունների ռազմական ծախսերը կազմեցին 208 միլիարդ ռուբլի, իսկ ավերածությունների արժեքը՝ 58 միլիարդ ռուբլի: Պատերազմի հետևանքն էր, որ «ժողովուրդներն ընկան գաղտնալից կախման, աղքատության, սովի, ավերածության և իրավազրկության վիճակի մեջ»:

Դա այն պատերազմն է, որը հենց սկզբից դատապարտեցին բուլշևիկները և պայքարեցին նրանից հեղափոխությամբ դուրս գալու համար: Իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու լենինյան լոզունգն իր փայլուն կիրառումը գտավ Ռուսաստանում, ուր մեկը մյուսի ետևից տապալվեցին ցարիզմն ու կապիտալիզմը և պատմության մեջ ստեղծվեց առաջին բանվորագյուղացիական պետությունը: Հոկտեմբերյան օրցիալիստական մեծ հեղափոխությունը մարդկության պատմության մեջ բացեց նոր դարադուրս՝ կապիտալիզմի կոր-

ծանման և կոմունիզմի հաղթանակի դարադուրս: Այդ հեղափոխությունը խոշոր ազդեցություն ունեցավ աշխարհի բոլոր ժողովուրդների ազատագրական պայքարի վրա:

Սովետական իշխանությունը ծնվեց Խաղաղության դեկրետով, որը պահանջում էր վերջ տալ պատերազմին և կնքել հաշտություն՝ առանց անբարիանների ու կոնտրիբուցիանների: Ընդհանրապես կոմունիստների միսիան է՝ մարդկության կյանքից բացառել պատերազմները և բոլոր վիճելի հարցերը լուծել բանակցությունների միջոցով, ժողովուրդների համար ապահովել կայուն խաղաղություն, համագործակցություն ու բարեկամություն:

Այսպիսով, միջազգային ասպարեզ եկավ մի նոր գործոն, որը գնալով աճեց ու հզորացավ և դարձավ համայն աշխարհի առաջադեմ մարդկության հույան ու ապավինը: Սակայն երկար ժամանակ սովետական երկիրը մնում էր միակ սոցիալիստական պետությունը, որն իմպերիալիստներն ընդունեցին առամների կրճտոցով և նրա նկատմամբ թշնամական քաղաքականություն:

Պատմության ուսանելի դասերը պահանջում էին նոր վերաբերմունք դեպի հասարակական կյանքը, ժողովուրդների կենսական հարցերի լուծումը: Յ. Նանսենի համար ավելի պարզ դարձավ, որ գնալով ուժեղանում է գիտության ու քաղաքականության կապը, որ ներկա պայմաններում առաջադեմ մտածողը չի կարող սահմանափակվել սեփական աշխատասենյակով կամ սոսկ գիտահետազոտական աշխատանք կատարելով, այլ պետք է դառնա նաև ակտիվ հասարակական գործիչ, բոլոր հնարավոր ձևերով ազգի ժողովուրդների բարօրության վրա:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո խիստ հրատապ էր խաղաղության պաշտպանության գործը: Բմպերիալիստական տերությունների կառավարողները, հավատարիմ շահագիտական քաղաքականությանը, փորձեցին իրենց ձեռքնել «խաղաղարարներ» և այդ նպատակի համար հատկապես օգտագործեցին Ազգերի լիգան: Նկատենք, որ վերջինիս ստեղծման դադափարը ծագել էր դեռ պատերազմի ժամանակ, երբ ահալորը զրկանքների ու զոհերի ազդեցության տակ լայն տարածում ստացան պացիֆիստական փրամագրությունները: Պատերազմի ավարտից հետո այդ գաղափարն օգտագործեցին հաղթող տերությունները՝ իրենց ողով «ձեռնու ու կարելու» Ազգերի լիգան: Ըստ

կանոնադրության (ընդունվեց 1919 թվականի փետրվարին), դա պետք է լիներ այնպիսի միջազգային կազմակերպություն, որը պայքարեր խաղաղության, ժողովուրդների անվտանգության ու համագործակցության համար, բայց իրականում դարձավ արևմտյան պետությունների (հատկապես Անգլիայի ու Ֆրանսիայի) իմպերիալիստական քաղաքականության գործիքը և միաժամանակ նրանց հակասությունների սրման օջախը. «Ազգերի լիգան,— ասել է Վ. Ի. Լենինը,— դաշինք է միայն թղթի վրա, իսկ իրականում դա գիշատիչ գաղանների մի խումբ է, որոնք միայն կոչում են իրար դեմ և իրար ամենևին չեն վստահում»¹:

Ֆ. Նանսենը նույնպես տարվել է Ազգերի լիգայով: Նա անկեղծորեն ուզում էր աշխարհը տեսնել խաղաղ, իսկ ժողովուրդներին՝ եղբայրացած: Դեռ 1899 թվականին Նանսենը Հաագայի միջազգային կոնֆերանսում ասաց. «Ծն միանգամայն հավատացած եմ նրանում, որ եթե բոլոր ազգերի բոլոր խելացի մտածող տղամարդիկ ու կանայք միավորվեն իրենց գործողություններում, ապա նրանք կստեղծեն այնպիսի անպարտելի միություն, որն ընդունակ կլինի վերացնելու հենց պատերազմի ոգին...»²:

Ֆ. Նանսենի հայացքները պատերազմների առաջացման ու բնույթի, խաղաղության հաստատման ու միջազգային համագործակցության վերաբերյալ դուրս չէին գալիս լիբերալ-բուրժուական պացիֆիզմի շրջանակներից: Հենց այդ դիրքերից էլ նա մտեսնում էր Ազգերի լիգային, ենթադրելով, թե վերջինս կարող է դառնալ խաղաղության օրգան: Բայց և այնպես, ճշմարտությունը պահանջում էր ասել, որ բոլոր դեպքերում Ֆ. Նանսենը անձնապես մնում էր որպես մեծ մարդասեր ու խաղաղասեր և ոչինչ չէր խնայում ժողովուրդների ապահովության համար: Օրյենկոտիվորեն նրա գործը ավելի արմատական էր և փաստերի ազդեցության տակ ինքն էլ անում էր որոշակի հետևություններ, այդ թվում Ազգերի լիգայի վերաբերյալ, մի կազմակերպություն, որի հետ սկզբում նա այնքան հույսեր էր կապում և որից վերջում նա արգարացիորեն հրաժարվեց: Դրանում հեշտ է համոզվել հետևելով այն դեպքերի ընթացքին, որոնք կապված են հատկապես Ռուսաստանի սովյալների օգնելու և հայ գաղթականության հարցի հետ:

Նախքան Ազգերի լիգայի ստեղծումը, նրա օդային պացիֆիստական դիրքերից պրոպագանդա էր մղվում եվրոպական երկրներում, այդ թվում՝ Նորվեգիայում: Այստեղ 1918 թվականի հոկտեմբերին ստեղծվեց «Ազգերի լիգային աջակցող կազմակերպություն», որի նախագահ ընտրվեց Ֆ. Նանսենը: Նրա գլխավորությամբ մշակվեց Ազգերի լիգայի գործունեության նորվեգական նախագիծ, որով այդ կազմակերպությունը պետք է լիներ համապարփակ (բոլոր երկրների մասնակցությամբ) և միջազգային իրավունքի նորմաներով հետևողականորեն պայքարեր խաղաղության համար. «Ներկայումս,— գրել է Ֆ. Նանսենը,— Լիգայի առաջին և ամենակարևոր խնդիրն այնպիսի պայմանների ստեղծումն է, որոնք ապահովեն խաղաղությունը Երկրի վրա և մեկընդմիջտ բացառեն նոր պատերազմի ու սպրած սարսափների կրկնության հնարավորությունը: Այլ խոսքերով, դա նշանակում է, որ միջազգային հարաբերություններում իշխող անարխիայի և առանձին ազգերի կամայականության փոխարեն աշխարհում պետք է ստեղծել նոր կարգ, որը հենվի միջազգային իրավունքի ու օրինականության վրա, այլ ոչ թե ուժի վրա: Բնական է, որ դրա համար բոլոր փառափափիք ժողովուրդները պետք է մտնեն Ազգերի լիգայի մեջ, միավորված ընդհանուր անկեղծ ցանկությամբ՝ աշխարհը վերակառուցել նոր ձևով: Հեշտ է հասկանալ, որ Ազգերի լիգայի նշանակությունը կդառնա ոչինչ, եթե որևէ մեծ ազգ դուրս մնա նրանից»: Նանսենն առաջարկում էր վերացնել պարտադիր զինվորական ծառայությունը, անցկացնել զինաթափում՝ միջազգային վերահսկողությամբ, բոլոր վիճելի հարցերը լուծել խաղաղ ճանապարհով: Միայն այդ ձևով կարելի է կանխել պատերազմը, որը, եթե ապագայում բորբոքվի, կլինի ավելի սարսափելի ու ավերիչ, քան զի ժամանակակից տեխնիկան ու գիտությունը ստեղծում են համընդհանուր կործանման ահավոր զենքեր. «Պատերազմ վարելու արդի մեթոդները նշանակում են մասսայական սպանություն բոլոր քաղաքացիներին՝ զինվորական ու քաղաքացիական, կանանց ու երեխաների, ծերերի ու իրենց ուժերի ծաղկման մեջ դառնալով մարդկանց, ոչ ոք չի խնայվի»¹: Միանգամայն ճիշտ կանխատեսում, որը հաստատվեց երկրորդ աշխարհամարտով և խիստ կարևոր նախազգուշացում է նաև այժմ:

¹ Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 41, էջ 170:

² Лив Нансен-Хейер, Книга об отце, стр. 328.

¹ Лив Нансен-Хейер, Книга об отце, стр. 330.

Յ. Նանսենը 1919 թվականի գարնանը մեկնեց Լոնդոն ու Փարիզ, որպեսզի լուսարանի և անցկացնի Ազգերի լիգայի գործունեության նորվեգական (փաստորեն իր) սկզբունքները: Բայց նա տեսավ, որ հաղթող տերություններն իրենց դիմն են տանում և Ազգերի լիգայից դուրս է մնում ոչ միայն Գերմանիան (որպես պարտված պետություն), այլև Ռուսաստանը (այնտեղ հաստատված քաղաքական նոր կարգի պատճառով): Անտեսված էին նաև շեղոք երկրները:

Այդ ամենը վրդովեցնում է Նանսենին, և նա պայքար է ծավալում իր սկզբունքների կենսագործման համար: Նրա ջանքերով շեղոք երկրներն իրավունք են ստանում մասնակցելու Ազգերի լիգայի աշխատանքներին: Ինքը՝ Նանսենը, դառնում է Նորվեգիայի ներկայացուցիչը և ապա նորվեգական պատվիրակության ղեկավարը Ազգերի լիգայում: Այդ պոստում, և ընդհանրապես, նա մեծ ջանքեր է գործադրում պաշտպանելու բոլոր և հատկապես փոքրամթիվ ժողովուրդների շահերը: Դրա պերճախոս հաստատումն է Նանսենի ջերմ հոգատարությունը նաև հայ ժողովրդի նկատմամբ:



Նանսենի քաղաքական դիմագծի բնութագրման համար շատ բնորոշ է նրա վերաբերմունքը գեպի նորաստեղծ սովետական պետությունը: Անշուշտ, նա կոմունիստ չէր և չէր էլ բաժանում կոմունիստական հաշացքները: Բայց Նանսենը վաղուց մեծ սիրով էր լցված գեպի ուս ժողովուրդը: Միաժամանակ նա գտնում էր, որ ամեն մի երկրի կարգը որոշում է իր ժողովուրդը և ոչ ոք իրավունք չունի դրսից իր կամքը թելադրել նրան: Ուստի, Նանսենը պահանջում էր վերջ տալ օտարերկրյա ռազմական ինտերվենցիային ու տնտեսական բռնկողային Սովետական Ռուսաստանի դեմ, շխառնվել նրա ներքին գործերին: Միակ ճիշտ ճինտերվենցիան» նա համարում էր նյութական ու բժշկական օգնությունը Ռուսաստանի սոված ու հիվանդ մարդկանց: Հենց այս ոգով էլ Նանսենը 1919 թվականի ապրիլի 3-ին նամակներ է ուղարկում Վիլսոնին, Կլեմանսոյին, Լոյդ Զորջին ու Յոլանդային: Նա շեշտում է, որ Ռուսաստանում ստեղծվել է պարենային ծանր վիճակ և շատերը մահանում են քաղցից ու հիվանդությունից: Մարդկությունը չի կարող անտարբեր մնալ դրա նկատմամբ

և պետք է կազմակերպել օգնություն քրացառապես հումանիտարական հիմքի վրա»: Նանսենն առաջարկում է ստեղծել հատուկ հանձնաժողով (շեղոք երկրների՝ Նորվեգիայի, Շվեդիայի, հնաբավոր է նաև Հունգարիայի, Դանիայի ու Շվեյցարիայի ներկայացուցիչներից), որը կզբաղվի Ռուսաստանին սննդամթերք ու դեղորայք մատակարարելու հարցով: Այնուհետև, նա վստահություն է հայտնում, որ սովետական կառավարությունը ոչ միայն չի առարկի դրա դեմ, այլև զգալիորեն կվճարի, մնում է, որ արևմտյան տերությունները արձագանքեն այդ «ոչ քաղաքական», «մարդասիրական» ձեռնարկմանը: Այստեղ Նանսենը կարծես թե զգալով, որ արևմտյան տերությունների կառավարողները անպայման կզիմեն քաղաքական առարկությունների, գրում է. «Ես լիովին գիտակցում եմ, որ շոշափվում են լուրջ քաղաքական պրոբլեմներ, և ես ուրախ ելլինի իմանալ, թե Գուր ինչպիսի պայմաններով հավանություն կտայիք նման ձեռնարկմանը, և նման հանձնաժողովը կարո՞ղ է արդյոք հույս ունենալ Ձեր կառավարության իրական աշակցությանը՝ փողով, նավերով և դեղորայքով»: Նանսենի երկյուղն արդարացալով, Ապրիլի 17-ին ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի ու Իտալիայի ղեկավարները պատասխանեցին, որ իբր չեն առարկում Նանսենի մարդասիրական նախաձեռնությանը, բայց գրան կաշակցեն միայն այն դեպքում, եթե Սովետական Ռուսաստանը ոչ միայն ֆինանսապես չրիվ հատուցի, այլև՝ ամենազլխավորը՝ զաղարեցնի պատերազմական գործողություններն ինտերվենտների ու սպիտակավարդիականների դեմ: Դա նշանակում էր անձնատուր լինել թշնամիներին, որոնք իրենք էին պատերազմ սկսել սովետական պետության դեմ:

Այդ ամենի մասին Յ. Նանսենն իրազեկ է պահում սովետական կառավարությանը և հենց նույն օրը՝ 1919 թվականի ապրիլի 17-ին, հատուկ նամակ գրում Վ. Ի. Լենինին, որը եզրափակվում է հետևյալ խոսքերով. «Ես ուրախ ելլինի մոտ ապագայում իմանալու Ձեր կարծիքը այս հարցի մասին: Ես կարող եմ ավելացնել, որ այն շեղոք կազմակերպությունը, որը ես առաջարկում եմ ստեղծել, պատրաստ է իր ծառայությունները մատուցելու առանց որևէ վարձատրման, բայց, անկասկած, օգնու-

1 Документы внешней политики СССР, т. 11, Москва, 1958, стр. 159.

թյան միջոցների ձևաբերման ու տեղափոխման ծախսերը պետք է հատուցվեն սովետական կառավարության կողմից»¹: Նանսենը իր նամակի հետ միասին կենիին է ուղարկում նաև արևմտյան տերությունների ղեկավարների պատասխանը:

Վերահիշյալի մասին ռադիոգիրք Մոսկվայում ստացվում է մայիսի 4-ին, և Վ. Ի. Լենինն անմիջապես զբաղվում է դրանով: Նա նույն օրը Գ. Չիչերինին հայտնում է, որ հարցը կրճատվելի է (Բ) և Կենտկոմի քաղաքականություն, բայց միաժամանակ պետք է նախապատրաստել պատասխանի նախագիծ: Արտգործոգովությանը կազմում է այն և ուղարկում Լենինին: Նա ծանոթանում է նախագիծին և մայիսի 6-ին հատուկ նամակ գրում Գ. Չիչերինին ու Մ. Կիտովինովին, որտեղ, ընդհանուր հավանություն տալով հանդերձ, անում է մի շարք դիտողություններ: Լենինը մասնավորապես խորհուրդ է տալիս տվյալ հարցում «ավելի մանրամասն զարգացնել (α) հումանիտար և (β) քաղաքական կողմի բաժանումը»: Այդ դիրքերից էլ պետք է լինել «խիստ սիրալիր՝ նանսենի նկատմամբ, խիստ հանդուգն՝ Վիլսոնի, Լյուդ Ջորջի և Կլեմանսոյի նկատմամբ. դա շատ օգտակար է, նրանց հետ միայն այդպես է պետք. ահա ճիշտ տոնը»: Նա նորից է ընդգծում, որ իմպերիալիստներին մերկացնելով հանդերձ ու Վճռականորեն մերժելով նրանց զավթողական պլանները, պետք է մարդասիրական գործի «համար ամեն տեսակի շնորհակալություն և սիրալիր խոսքեր անձամբ նանսենին», հայտնել նրան, որ «մենք նույնիսկ պատրաստ ենք եռակի թանկ վճարել և Ձեզ հանույրով կիսողները վերահսկողության համար, և Ձեզ կտանք ամեն տեսակի երաշխիք... նշանակեցե՛ք բանակցությունների տեղն ու ժամանակը»²: Ինչ վերաբերում է հաշտությանը, ապա դա պետք է իրականացվի արդարության սկզբունքով, ինտերվենտների ու սպիտակգլարդիականների կողմից պատերազմական գործողությունների դադարեցումով:

Հաշվի առնելով Լենինի դիտողությունները, ՌՍՖՍՀ արտաքին գործերի ժողովում Գ. Չիչերինը մայիսի 7-ին Ֆ. Նանսենին ուղարկում է պատասխան ռադիոգիրք: Այնտեղ սովետական կառավարության անունից նրան հայտնվում է «խորին շնորհակալություն» ռուս ժողովրդի հանդեպ ցուցաբերած ջերմ հոգատա-

րության համար. «Ռուսաստանի սովետական կառավարությունը շնորհակալությամբ է գնահատում Ձեր մարդկային ու կարեկցական վերաբերմունքը նրա զրկանքների նկատմամբ և հաշվի առնելով այն համընդհանուր հարգանքը, որով շրջապատված եք Գուք, հատկապես ուրախ կլինի բանակցությունների մեջ մտնել Ձեզ հետ՝ իրականացնելու օգնության Ձեր պլանը, որի զուտ մարդասիրական բնույթը Գուք ընդգծում եք: Զրկանքներ ապրող մարդկանց օգնելու մարդասիրական աշխատանքի այդ հիմքի վրա մենք ցանկանում ենք անել այն ամենը, ինչ ի վիճակի ենք, որպեսզի նպաստենք Ձեր նախագիծ կենսագործմանը»: Այնուհետև, սովետական կառավարությունը պատրաստակամությամբ է հայտնում հատուցել օգնության «բոլոր ծախսերը» և «չեզոք» հանձնաժողովին տալ նախատեսված հումանիտական պլանը կենսագործելու վերահսկողություն: Բայց փաստանք է հայտնվում, որ Նանսենի բարյացակամ մտադրությունները խեղաթյուրվել են արևմտյան տերությունների առաջ քաշած քաղաքական նկրտումներով, որոնց հետ չի կարող համաձայնվել սովետական կառավարությունը: Չէ որ ռազմական ինտերվենցիան սկսել են հենց նրանք, իմպերիալիստական պետությունները, որոնց միացել են Ռուսաստանի տապալված դասակարգերն ու այլ ռեակցիոն ուժեր և հրահրել նաև քաղաքացիական պատերազմ, կազմակերպել մասսայական սպանություններ, ավերածություններ ու կողոպուտ: Սովետական երկրի բանվորների ու դյուղացիների սրբազան պարտքն է պաշտպանել իրենց հայրենիքը, հակահարված տալ նրա արտաքին ու ներքին թշնամիներին: Ուրեմն, առաջինը հենց նրանք՝ այդ թշնամիները, պետք է դադարեցնեն պատերազմական գործողությունները, ազատ թողնեն սովետական երկիրը, որն այնքան կարիք ունի խաղաղ շինարարության: Սովետական կառավարությունը միայն այդ ձևով կարող է բանակցությունների մեջ մտնել՝ դադարեցնելու պատերազմական գործողությունները և բոլորովին չի համաձայնվի արևմտյան տերությունների առաջադրած քաղաքական պահանջին՝ բողոքարկված «մարդասիրական ձեռնարկման ձևով» և չի գնա որևէ այլ «գիջման, որը կվերաբերի մեր դրություն հիմնական պրոբլեմներին»: Վերջում Ֆ. Նանսենին հաղորդվում է. «Այնուամենայնիվ, նկատի ունենալով, որ Ձեր նախնական պլանը

¹ Документы внешней политики СССР, т. II, Москва, 1958, стр. 160.

² Վ. Ի. Լենին, Ելժ, հ. 50, էջ 354—355.

¹ Документы внешней политики СССР, т. II, стр. 155.

այդքան անհաշող կերպով խեղաթյուրվել է և դրա հետևանքով ստեղծված բարդ ու դժվար հարցերը պետք է սկզբում հիմնովին պարզաբանվեն, մենք Ձեզ կառաջարկեինք անհրաժեշտ քայլեր կատարել, որպեսզի մեր կառավարության պատվիրակներին հնարավորություն տրվի արտասահմանում հանդիպելու Ձեզ և Ձեր աշխատակիցների հետ ու քննարկելու այդ հարցերը, և մենք խնդրում ենք Ձեզ սիրալիր նշեք մեր պատվիրակների ու Ձեր հանձնաժողովի ղեկավար անձերի խոհրդակցության ժամանակն ու տեղը, ինչպես նաև այն երաշխիքները, որոնք կարող են տրվել մեր պատվիրակների ազատ երթևեկության համար Համաձայնության տերությունների ազդեցության տակ գտնվող երկրներով»¹:

Այդպիսով, սովետական կառավարությունը հստակություն է մտցնում քննարկվող հարցի մեջ. նա ուղջունում է նանսենի մարդասիրական նախաձեռնությունը և վճռականորեն մերժում իմպերիալիստական տերությունների ազդեցիվ ձգտումները: Վ. Ի. Լենինը նշել է, որ միայն այդ պայմաններով 1919 թվականի մայիսի 7-ին Ֆ. Նանսենին տրված պատասխանը կարող է զիտվել նաև որպես սովետական կառավարության հաշտության առաջարկ՝ Անտանտի պետություններին:

Ստանալով Գ. Չիչերինի ռազիոգրքը, Ֆ. Նանսենը նշում է, որ նրա բովանդակությունը կհաղորդվի Անտանտի պետություններին (այդպես էլ արվում է), բայց վերջիններս մերժում են սովետական առաջարկները. «Նանսենը գտնվում էր ընկճված վիճակում, բանի որ շահողվեց օգնություն կազմակերպել ռուսներին Դրա պատասխանատվությունը նա դրեց Արևմուտքի քաղաքագետների, հատկապես ֆրանսիացիների վրա: Նա պատրաստակամություն հայտնեց գնալ Մոսկվա՝ ռուսների հետ բանակցություններ վարելու: Բայց դա տեղի չունեցավ, քանի որ արևմտյան տերությունները համաձայն չէին»²:

Այդ դեռ բավական չէ, Արևմուտքի բուրժուական մամուլը տարածեց այն զրպարտությունը, թե իբր սովետական կողմն ընդհանրապես դեմ է նանսենի բարեգործական պլանին: Սովետական կառավարությունը մերկացնում է այդ կեղծիքը և նորից

շարադրում իր սրտակի տեսակետը: Այդպես, ՌՍՖՍՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը 1919 թվականի հունիսի 17-ին, դիմելով Անդլիայի, Ֆրանսիայի ու Իտալիայի բանվորական կազմակերպություններին, շեշտում է. «Բոլորովին կեղծիք է այն պնդումը, թե իբր սովետական կառավարությունը մերժել է նանսենի հանձնաժողովի առաջարկությունները որոշակի պայմաններով Սովետական Ռուսաստան պարեն ուղարկելու վերաբերյալ՝ համաձայնեցված Անտանտի կառավարությունների հետ: Սովետական կառավարությունը ոչ միայն չի մերժել այդ առաջարկությունները, այլև մայիսի 7-ի իր պատասխանում խնդրել է Ֆրիտյոֆ Նանսենին նշել պարեն ուղարկող հանձնաժողովի ներկայացուցիչների հետ մեր ներկայացուցիչների հանդիպելու տեղն ու թվականը: Միակ վերապահումը, որ կատարել է սովետական կառավարությունը, այն է, որ պատերազմական գործողությունների դադարեցման վերաբերյալ բանակցությունները կարող են տեղի ունենալ միայն նրանց հետ, ովքեր փաստորեն մղում են այդ պատերազմական գործողությունները, այսինքն՝ Անտանտի կառավարությունների կամ նրանց ներկայացուցիչների հետ»¹:

Նույնպիսի պատասխան տրվեց ԱՄՆ-ի կառավարությանը: Վերջինս, և հատկապես նրա պետական քարտուղարի օգնական Ֆիլիպսը, իրականությունը ներկայացնում էր ծուռ հայելու մեջ: ԱՄՆ-ում ՌՍՖՍՀ ներկայացուցիչ Լ. Մարտինսը հատուկ նամակով (1919 թվականի նոյեմբերի 5-ին) հերքեց այդ միտումը և մասնավորապես գրեց. «Պ-ն Ֆիլիպսի հայտարարությունը, թե այսպես կոչված նանսենի կոմիտեի միջոցով Ռուսաստանին պարեն մատակարարելու պլանն անհաշողության է մասնվել սովետական կառավարության դրած անշափ պայմանների պատճառով, բոլորովին խեղաթյուրում է փաստերը: Միացյալ Նահանգների սենատի հանձնաժողովում աված իր ցուցմունքներում պ. Բուլլիտը, որն ակտիվորեն մասնակցել է այդ բանակցություններին, անհաշողության պատասխանատվությունն ուղղակի բարդում է դաշնակիցների վրա»²:

Ու. Բուլլիտն ամերիկյան հայտնի զիվանդետ էր, որը 1918 թվականին նշանակվել էր ԱՄՆ-ի պատվիրակության կցորդ

¹ Документы внешней политики СССР, т. II, стр. 159.

² Tim Creve, Fridtjof Nansen. 1905—1930, Oslo, 1974, s. 143—144;

¹ Документы внешней политики СССР, т. II, стр. 212.

² Նույն տեղը, էջ 277:

(ատաշև) Փարիզի հաշտության կոնֆերանսում, իսկ 1919 թվականի փետրվար-մարտին հատուկ միսիայով ուղարկվել Սովետական Ռուսաստան: Դա մի ծամանակաշրջան էր, երբ երիտասարդ կարմիր բանակը տարել էր առաջին հաղթանակները ինտերվենտների ու սպիտակգզարգիականների դեմ և խառնել նրանց հաշիվները: Բուլլիտը ԱՄՆ-ի ու Անգլիայի անունից (նրա միսիան գաղտնի էր Ֆրանսիայից, որը դեմ էր բանակցություններին բուլշևիկներին հետ) պետք է պարզեր, թե սովետական կառավարությունը ինչ պայմաններով կարող է բանակցություններ սկսել Ռուսաստանում պատերազմական գործողությունները դադարեցնելու համար, ընդ որում ինքը Վիլսոնից ու Լյուդ Ջորջից հրահանգ ուներ ներկայացնելու հետևյալ պահանջները. 1) պատերազմական գործողությունների դադարեցում բոլոր ռազմաճակատներում, 2) բոլոր ղեկավար կառավարությունները մենում են իրենց գրաված տերիտորիաներում, 3) Սովետական Ռուսաստանի երկաթուղիների ու նավահանգիստների ենթակում նույն կանոններին, որպիսիք գործում են Եվրոպայում, 4) դաշնակից տերությունների հպատակների ազատ երթևեկություն Սովետական Ռուսաստանում, 5) երկու կողմից ամենատիա բոլոր քաղաքական բանտարկյալներին, 6) առևտրական կապերի վերականգնում Սովետական Ռուսաստանի հետ և վերջինիս սովետականության հարգում, դաշնակիցների կողմից ուղարկված նյութական օգնության հավասարաչափ բաշխում ռուս ժողովրդի բոլոր դասակարգերի միջև, 7) ռուսական նախկին պարտքերի հատուկ քննարկում (հաշտությունից հետո), 8) դաշնակիցների զորքերի դուրսբերում Ռուսաստանից՝ ռուսական բանակի զորացրումից հետո:

Սովետական կառավարությունը ծանոթացավ այդ պայմաններին: Վ. Ի. Լենինը անձամբ հանդիպում ունեցավ Բուլլիտի հետ և նրան հայտնեց, որ սովետական կողմն ընդունում է Անտանտի պահանջները՝ հետևյալ վերապահումներով. պարտքերը պետք է հավասարապես բաժանվեն նախկին ռուսական կայսրության բոլոր երկրների միջև և պետք է որպես դրանց մարում գիտել այն ոսկին, որ զավթել է շխտոտվակյան կորպուսը, ինչպես նաև այն, որ Բրեստի հաշտությամբ տրվել է Գերմանիային, որտեղից անցել է դաշնակիցներին. ամենազլխավորը, օտար զորքերը պետք է անհապաղ (և ոչ թե ռուսական բանակի զորացրումից հետո) դուրս բերվեն Ռուսաստանից, և դադարեց-

վի օտարերկրյա օգնությունը հակահեղափոխական կառավարություններին: Այս վերջին կետն ուներ սկզբունքային նշանակություն, քանի որ հակահեղափոխությունը պահպանվում էր իմպերիալիստների օգնությամբ, որի վերացմամբ հեշտությամբ կջախջախվեին ներքին թշնամիները:

Բուլլիտը հարկադրված էր հաշվի նստել ռեալ իրականության հետ և խոստովանել, որ «Լենինի հմայքը Ռուսաստանում մեծ է», որ այնտեղ առանց օտարերկրյա սվինների կարող է լինել «միայն սոցիալիստական կառավարություն», որ «Եվրոպայում ու ամբողջ աշխարհում չի կարող հաստատվել իսկական խաղաղություն, քանի դեռ հաշտություն չի կնքվել հեղափոխության հետ»: Այնուհետև, Բուլլիտի հետ ունեցած բանակցությունների միջոցով հաշտություն կնքելու համար 1919 թվականի մարտի 12-ին կազմվում է Անտանտի պետությունների պայմանների նախագիծը, որը պատրաստ էր ընդունել սովետական կառավարությունը¹:

Շուտով Բուլլիտը վերադառնում է Փարիզ և Վիլսոնին ու Լյուդ Ջորջին հաղորդում կատարվածի մասին: Գնդապետ է. Հաուզը (Վիլսոնի զլխավոր խորհրդատուն արտաքին գործերում) Բուլլիտին առաջարկում է կազմել քաղաքական ղեկավարացիայի նախագիծ, որն ընդունելի լինի նաև սովետական կառավարության կողմից, ընդ որում «Հաուզը հույս ուներ, որ և՛ Վիլսոնը, և՛ Լյուդ Ջորջը նույնպես հավանություն կտան այդպիսի ղեկավարացիային»²: Բայց վերջիններս շուտով կտրականապես փոխում են իրենց դիրքը, քանի որ 1919 թվականի գարնանը հարձակման է անցնում Կոլչակը և նրա հետ մեծ հույսեր են կապում արևմտյան տերությունները: Անտանտի կառավարությունները ոչ միայն չեն պատասխանում սովետական առաջարկներին, այլև Վիլսոնն արգելում է հրապարակել Բուլլիտի բերած նախագիծը, իսկ Լյուդ Ջորջը 1919 թվականի ապրիլի 19-ին պառլամենտում հայտարարում է, թե ինքը տեղյակ չէ Բուլլիտի միսիային ու առաջարկներին. «Դա, — ասել է Բուլլիտը, — հասարակական կարծիքի կեղծման առավել աղաղակող ղեպ էր, որպիսին ես գիտեմ իմ ամբողջ կյանքի ընթացքում»: Նա խիստ զայրանում է և խնդրում Վիլսոնին հրապարակախորհն մերկացնել Լյուդ

¹ ՏՃՊ Ծոկումենտի անեղի քոլիտի ԿՍՍՐ, Կ. 11, էջ 91—95:

² Իստորիա Դիպլոմատի, Կ. 111, Մ., 1965, սթ. 177.

Ջորջի ստահող հայտարարությունը, բայց ԱՄՆ-ի պրեզիդենտը զերազատում է լռել:

Նաղաթղթերը բացում է սովետական կառավարությունը, որ 1919 թվականի մայիսի 23-ին «Իզվեստիա» թերթում հրատարակում է Բուլլիտի հետ ձեռք բերված հաշտության առաջարկների նախագիծը: Ավելի ուշ՝ 1921 թվականի դեկտեմբերի 23-ին, սովետների համառուսաստանյան IX համագումարին տված զեկուցման մեջ Վ. Ի. Լենինը, մերկացնելով բուրժուական վարչակարգի ալյանդակությունները, Բուլլիտի միտիայի առթիվ ասել է. «Այդ հին աշխարհն ունի իր հին դիվանագիտությունը, որը չի կարողանում հավատալ, որ կարելի է խոսել պարզորոշ ու բացահայտ կերպով»: Այս շարունակելով, նա նշում է, որ այդ աշխարհը Սովետական Ռուսաստան ուղարկեց «Բուլլիտին»՝ առաջարկելով, որ մենք հաշտություն կնքենք Կոլչակի ու Գեներալի հետ, մեզ համար խիստ աննպաստ մի հաշտություն, և երբ մենք ասացինք, որ մենք այնքան ենք զնահատում Ռուսաստանում բանվորների ու զյուզացիների վաղուց արդեն թափված արյունը, որ, թեև հաշտությունը մեզ համար շահագրգռեց ձեռնբույժ, սակայն մենք պատրաստ ենք դրան, քանի որ համոզված ենք, որ Կոլչակն ու Գեներալները կքայքայվեն ներքուստ, երբ մենք այդ ասացինք պարզ կերպով, ասացինք՝ սակավ գործածելով դիվանագիտական նուրբ տոն, ապա այստեղ նրանք վճռեցին, որ մենք անպայման խարեբաներ պետք է լինենք: Եվ հենց որ մեզ հետ մի ընդհանուր սեղանի շուրջ բարյացակամաբար դրուցող Բուլլիտը իր հայրենիք վերադարձավ, նրան նախատինքով դիմավորեցին, ստիպեցին հրաժարական տալ... Իսկ հետևանքն այն եղավ, որ մենք, երբ այն ժամանակ մեզ համար վատթարագույն հաշտություն էինք առաջարկում, ստացանք մեզ համար ավելի լավ պայմաններով հաշտություն»:

Անշուշտ, այս ամենից չի կարելի եզրակացնել, թե իբր Բուլլիտը համակիր էր բոլշևիկներին. ճիշտ հակառակը, քանի որ նա թշնամությամբ էր լցված զեպի սովետական իշխանությունը և նույնիսկ կարծում էր, թե իր բռնած ուղին էլ կարողացնի նրա «կործանումը»: Անկախ դրանից, Բուլլիտի միտիայի պատմությունը մի ավելորդ անգամ ցույց է տալիս, որ սովետական կառավարությունը նոր քայլեր կատարեց (նույնիսկ իր համար անհ

նպաստ պայմաններով) քարելավելու իր հարաբերություններն արտաքին աշխարհի հետ, նպաստելու նաև Ֆ. Նանսենի առաջարկների իրագործմանը, ապա արևմտյան իմպերիալիստական տերությունները դիմեցին բոլոր հնարավոր միջոցների, այդ թվում «բարեկործանության» անվան շարաշահմանը, որպեսզի խեղդեն «բոլշևիկյան մանկանն օրորոցում»: Սակայն նրանց ճիգերն ապարդյուն անցան: Երիտասարդ պետությունը ջախջախիչ հարված հասցրեց մինչև ատամները զինված օտարերկրյա ինտերվենտներին ու ներքին հակահեղափոխականներին:

Այդ ամենը չէր կարող անհետանք անցնել նաև մեծ հումանիստ Ֆ. Նանսենի համար: Նրա արդարամիտ հասարակական գործունեությունը, կենարար բարեկործանությունն՝ առաջին իսկ օրից հանդիպեցին իմպերիալիստների դիմադրությանը, և նա դառը փորձով ու աստիճանաբար համոզվեց, թե որտեղ է թաքնված զմիպարությունների «գաղտնիքը»: Նանսենը վեր կանգնեց արևմտյան տերությունների կառավարողների նենգ հաշիվներից և սովետական կառավարության ու աշխարհի առաջադեմ հասարակական կարծիքի աջակցությամբ հասավ վիթխարի հաջողությունների:

□□□

Ֆ. Նանսենը շուրջ 10 տարի աշխատեց Ազգերի լիգայում ոչ միայն որպես Նորվեգիայի ներկայացուցիչ, այլև Ազգերի լիգայի գլխավոր կոմիսար զանազան միջազգային հարցերի գծով (առաջադեմների ու գաղթականների վերադարձման, սովյալների օգնելու և այլն): Նա մոտիկից տեսավ բուրժուական բազմազեղաների «խոհանոցը» և նրանց կեղծ ու գաղտնի դիվանագիտությանը հակադրեց իր ազնիվ ու բացահայտ գիծը: Նույնիսկ Ռոբերտ Սեսիլը, որն Անգլիայի ներկայացուցիչն էր Ազգերի լիգայում, բազմիցս նշել է, թե Նանսենը ինչպիսի համարձակությամբ էր հանդես գալիս ժնեում: Մեծ թե փոքր, բարդ թե «փափուկ» հարցերում նա մտցնում էր կատարյալ պարզություն և ամեն ինչ ասում բաց ճակատով, մի հանգամանք, որը դուր չէր գալիս հատկապես խոշոր պետությունների կառավարողներին: Մի հարցի կապակցությամբ, երբ Ռ. Սեսիլը՝ միացած Ֆ. Նանսենին, ասում է, որ համառելու զեպում մեր դեմ կհանենք Անգլիային ու Ֆրանսիային, նա աներկամորեն պատասխանում է. «Իհարկե, բայց ինչ կա որ»:

1 Վ. Ի. Լենին, ԵԺ, հ. 44, էջ 352—353:

Նանսենը խաղաղության ջերմ պաշտպան էր և հետևողականորեն պայքարում էր պատերազմի ու սպառազինության քաղաքականության դեմ: Նա շեշտում էր, որ «ինչպես մեծ, այնպես էլ փոքր երկրների կառավարությունները պետք է առանց տատանումների կանգնեն խաղաղության քաղաքականության ուղու վրա: Ոչ ոք չպետք է փորձի իրեն վերապահել... պատերազմ վարելու իրավունք»¹: Երբ 1923 թվականի օգոստոսին Մուսոլինիի իտալական նավատորմը զնգակոծեց հունական Կերկիրա (Կորֆու) կղզին, Նանսենը Ազգերի լիգայում վճռականորեն դատաւարանց այդ ազդեցիկ և բարբարոսությունը: Նա այնքան էր մոռնալիկ, որ ժնեի ռեստորաններից մեկում ճաշելիս զայրացած պահին խոստրեն պատվիրեց իտալական ոչինչ չվերցնելու: Մատուցեցին, այսպես ասած, «չեզոք» ուտելիք՝ հավի ճուտ: Այդ ժամանակ Նանսենը կատակով ասաց. «Իսկ կարելի՞ է հավատացած լինել, որ այս ճուտը գուրս չի եկել իտալական ձվից»: Սպասավորը, կարծես կոահելով, թե ինչումն է բանը, շեշտակիրորեն պատասխանեց՝ ո՛չ, այս ճուտը շվեյցարական հավի ձվից է: Այդ մասնակի փաստը, իհարկե, բոլորովին չի խոսում այն մասին, որ Նանսենը հախուռն բնավորության, շուտ հուզվող կամ անհավասարակշիռ մարդ էր: Բուլլոբլին նա վերին աստիճանի լրջմիտ ու խոհական էր, միշտ էլ կանգնած ծանրակշիռ մտածողի բարձունքին: Նրա ներկայությունը այս կամ այն հավաքին ու նիստին վեհություն էր ներշնչում և ավելի էր բարձրացնում մասնակիցների պատասխանատվությունը: Նանսենը հեռու էր արհեստական էֆեկտից, պնդված հոնտորությունից, բայց նրա ելույթները թողնում էին լավագույն տպավորություն, որովհետև համակված էին խոր մարդասիրությամբ, բանական էին ու սրտագին, անմիջական ու պարզ:

Նենց այդ դիրքերից Նանսենը դատապարտեց նաև գաղութային ու ազգային ճնշումը և, 1923 թվականին Ազգերի լիգայում, մասնավորապես, հարց դրեց լիովին վերացնել ստրկությունը, որի հետքերը դեռ կային աշխարհի խուլ անկյուններում: Նա պահանջում էր օգնել հետամնաց ժողովուրդներին, ինչպիսիք էին էսկիմոսները, բայց միաժամանակ հարգել նրանց բարբերք, երբեք չդիմել բռնության ու կամայականության:

Ակնբեր է, որ նման հարցերի առաջջաշումը հակադրվում էր իմպերիալիստական պետությունների շահերին, նրանց ազդեցիկ ձգտումներին: Պատահական չէ, որ նրանց շատ գործիչներ Նանսենին համարում էին «enfant terrible», այսինքն՝ «սոսկալի երեխա» կամ «փորձանք մարդ», մինչդեռ աշխարհի ժողովուրդների համար «մարդկության խիղճն էր» նա, որն օղնության մեռ էր մեկնում թշվառներին:



Առաջին աշխարհամարտի ծանր հետևանքներից մեկը մոտ կես միլիոն ռազմագերիներն էին, որոնք ցրված էին տարբեր երկրներում և գտնվում էին վատթարագույն վիճակում: Սովոր և հիվանդությունները հնձում էին նրանց: Հարկավոր էր շտապ օգնություն՝ պահպանելու նրանց գոյությունը և հատկապես վերագործնելու իրենց հայրենիքը: Այդպիսին էր ժողովուրդների ցանկությունն ու կամքը:

Ազգերի լիգան հարկադրված էր «տուրք տալ» այդ շարժմանը և 1920 թվականի մարտին քննարկեց տարբեր երկրներում գտնվող ռազմագերիների փոխանակման ու վերագործման հարցը: Որոշվեց այդ գործը հանձնարարել մի այնպիսի մարդու, որ ուներ համընդհանուր հեղինակություն և աջի էր քննելու մեծագույն տաղանդով ու եռանդով: Այդպիսին ճանաչվեց Ֆրիտյոֆ Նանսենը, որի առաջ, նույնիսկ Քերզոնի արտահայտությամբ, բացվում էին «բոլոր պետությունների մինիստրությունների ղեկավարը»: Դրանով Ազգերի լիգան ուզում էր ամբարանդել իր դիրքերը, բարձրացնել իր հեղինակությունը: Եվ ահա Ազգերի լիգայի ու միջազգային կարմիր խաչի հեռագրերը հասնում են Լյուսակեր՝ հաղորդելու Նանսենին, որ նա զբաղվի ռազմագերիների վերագործման գործով: Վաթսուամյա գիտնականն անակնկալի է գալիս և պատասխանում, որ ի վիճակի չէ, և որ կարելի է գտնել ավելի հարմար մարդկանց: Բայց Ազգերի լիգան զգում է, որ Նանսենն անփոխարինելի է և Լյուսակեր ուղարկում իր աշխատակից Ֆ. Նոել Բեյքերին²: Մի քանի հանդիպումներ և մանրամասն զրույցներ, մեծ մասամբ գիտության հարցերի շուրջը: Սակայն Նանսեն-դիտնականը «նահանջում է»

¹ Ֆիլիպ Նոել Բեյքեր (ծնվ. 1899 թ.) — անգլիացի քաղաքական գործիչ, լեյբորիստ, Ազգերի լիգայի խորհրդի բարտուղար, հետագայում լեյբորիստական կառավարությունների անդամ, 1946—1947 թվականներին՝ լեյբորիստական կուսակցության նախագահ:

¹ Лив Нансен-Хейер, Книга об отце, стр. 336.

Նանսեն-մարդու առաջ և զգալով, որ տանջված մարդկությունը իրեն է նայում, համաձայնություն է տալիս, որը նշանակում էր փաստորեն դադարեցնել իր համար շատ սիրելի գիտական աշխատանքը և ձեռնամուխ լինել ավելի սրբազան մարդկային գործի:

Յ. Նանսենը ժամանում է ժենև և անմիջապես գործի անցնում: Նա պաշտոնապես աշխատում էր որպես Ազգերի լիգայի գլխավոր կոմիսար, բայց մշտապես հանդիպում էր նրա անդամների՝ իմպերիալիստական պետությունների, դիմադրությունների: Վերջիններս ունեին նենգամիտ պլան. մի կողմից՝ օգտագործել Նանսենի միջազգային հեղինակությունը և ամբողջ աշխարհի առաջ խաղալ «մարդասիրություն», իսկ մյուս կողմից՝ նրան զարձնել գործիք իրենց քաղաքական կեղտոտ նպատակների համար: Սակայն Նանսենը վեր կանգնեց իմպերիալիստների դավերից, հակադրվեց դրանց և գործեց որպես մեծ հումանիստ: Հաղթահարելով բազմապիսի դժվարություններ, նա՝ իր աշխատակիցների հետ միասին, ծավալեց եռանդուն գործունեություն: Նանսենն անձամբ շրջագայեց բազմաթիվ երկրներ, հանդիպումներ ունեցավ կառավարական գործիչների հետ, հայթայթեց միջոցներ և ամեն ինչ տրամադրեց արդար գործի կատարմանը: Բնորոշ է, որ նա աշխատում էր անվճար և շրջագայությունների ժամանակ էլ կատարում անձնական նվազագույն ծախսեր (երթևեկում էր 3-րդ կարգի վաղոններով, կանոց առնում է ժանազին հյուրանոցներում և այլն):

Տասնութ ամսվա լարված ու եռանդուն աշխատանքի շնորհիվ հաջողությամբ է պահպանում Նանսենի միսիան, և հայրենիք են վերադառնում 27 ազգությունների մոտ 450 հազար ռազմազերիններ: Երիշտ էր ասում նույն Բեյքերը, որ «ամբողջ եվրոպական մայրցամաքում չկար մի երկիր, որտեղ մայրերն ու կանայք արջուճեքներն աչքերին՝ շնորհակալությամբ չհիշեին Նանսենի այդ սխրագործությունը»: Ինքը՝ Նանսենը, ելույթ ունենալով Ազգերի լիգայում ու խոսելով ռազմազերինների անտանելի գրություն մասին, մասնավորապես ասաց. «Ես կյանքում երբեք չեմ հանդիպել այդպիսի մեծ տանջանքների... Դրանք միայն պատերազմի անխուսափելի հետևանքներ են, մի պատերազմ, որը 1914 թվականից գլխավոր շրջեց աշխարհը... Գլխավորը, որին ինձ սովորեցրել է այդ աշխատանքը, այն համոզմունքն է, որ Ազգերի լիգայի հիմնական խնդիրն է՝ կանխել նման նոր

ազեղը, որը մարդկանց բերում է սարսափելի տանջանքներ»¹: Ավագ, որքան աչնիվ էր Նանսենի նպատակը, այնքան ապիկար շտնվեց Ազգերի լիգան, որը միայն ճանապարհ հարթեց նոր ու ավելի կործանարար պատերազմի համար...

Անշուշտ, ռազմազերինների վերադարձի հարցը կապված էր նաև սովետական պետության հետ թե՛ ընդունելու և թե՛ ճանապարհելու առումով: Տնտեսականի հետ միասին կային նաև քաղաքական դժվարություններ, որովհետև կապիտալիստական պետությունները և հատկապես մեծ տերությունները չէին ուզում ճանաչել Սովետական Ռուսաստանին, որը, բնականաբար, Ազգերի լիգայի անդամ չէր և արդարացիորեն չէր էլ ճանաչում նրան. «Ազգերի լիգան, — նշել է Վ. Ի. Լենինը, — այնքան է կրում իր վրա համաշխարհային պատերազմի ծնունդ լինելու բոլոր գծերը, այնքան է անխղիչորեն կապված վերսալի պայմանագրի հետ, այնքան է ամբողջապես համակված իրապես ազգերի իրավահավասարություն սահմանելու, ազգերի միջև խաղաղ համակեցության իրական շանսեր ստեղծելու նման որևէ բանի բացակայությամբ, որ, ինձ թվում է, մեր բացասական վերաբերմունքը Ազգերի լիգայի նկատմամբ հասկանալի է և հետագա մեկնաբանություններ չի պահանջում»²:

Նանսենն իր դիրքերից դեմ էր արևմտյան տերությունների քաղաքական անհանգուժողականությանն ու թշնամությունը Սովետական Ռուսաստանի նկատմամբ և խիստ դժգոհում էր, որ այդպիսի մեծ պետություն չի ներկայացրել Ազգերի լիգայում. էլ ինչ միջազգային կաղամակերպություն: Նա Ազգերի լիգայի առաջին իսկ նիստում ասաց. «Ես կուզենայի այստեղ տեսնել Ռուսաստանի ներկայացուցչին»³: Այդ հայտարարությունն ընդունվեց քար լուծյամբ և ապա մեկը տեղից գոռաց՝ «խայտառակություն», որով կշտամբում էր Նանսենին «Սովետներին համակրելու մեջ»: Փաստորեն այդ ժամանակից էլ նրան սկսեցին գիտել որպես «կարմիր»:

Ահա ինչպիսի ծանր մթնոլորտում էր աշխատում Նանսենը, որը, սակայն, աննահանջ շարունակեց իր մարդասիրական գործունեությունը: Ի զարմանք շատերի, նա գերադասեց անձամբ

1 Лив Нансен-Хейер, Книга об отце, стр. 347.

2 Վ. Ի. Լենին, ԵԺ, հ. 45, էջ 287—288.

3 Георгий Кублицкий, Фритгоф Нансен, М., 1961, стр. 317.

կայ հաստատել Մոսկվայի հետ, ուր և մեկնեց 1920 թվականի հուլիսին: Նա ընդունվեց արտաքին գործերի ժողովմատում, ուր Գ. Զիչերինը մաքուր անգլերենով հարցուփորձ արեց նրա անողջութիւնն ու ճանապարհորդութեան մասին: Իսկ երբ նանսներ, շնորհակալութիւն հայտնելով, ասաց, որ ինքը լիազորված է Ազգերի լիգայի կողմից ու պետք է... այստեղ ժողովուրդը ընդհատեց նրան:

— Ներեցեք, Ազգերի լիգան մեզ չի ճանաչում, և մենք էլ նրան չենք ճանաչում: Ես, դժբախտաբար, չեմ կարող Ձեր լիազորութիւնները բավարար համարել բանակցութիւններ վարելու համար:

Նանսներ ոտքի կանգնեց և կարծես նեղացած ասաց.

— Այդ դեպքում ես անմիջապէս մեկնում եմ: Հետեանքների համար ամբողջ պատասխանատւութիւնն ընկնում է ձեր կառավարութեան վրա:

Ոտքի կանգնեց նաև Զիչերինն ու պատասխանեց.

— Ետեքբարձր Ձեր վագոնին կտրվի երկու ժամ հետո¹:

Թվում էր ամեն ինչ վերջացավ: Բայց ոչ. Զիչերինն ու Նանսներ համաձայնվեցին վարել անձնական բանակցութիւններ, այսինքն՝ սովետական կառավարութիւնը նրան ընդունում է ոչ թէ որպէս Ազգերի լիգայի պաշտօնական ներկայացուցչի, այլ ինքնուրույն իրավական անձի (որն, անշուշտ, խոր հարգանքի նշան էր) և ապա պատրաստակամութիւն հայտնվեց լիակատար աջակցութիւն ցույց տալ նրա միտիայի կատարմանը: Մասնավորապէս համաձայնագիր կնքվեց, որով յուրաքանչյուր շաբաթ սովետական պետութեան արևմտյան սահմանագծին կմոտենան անվագն երկու գնացք նախկին ռազմագերիներով: Այդպէս էլ եղավ, և կարճ ժամանակամիջոցում Ռուսաստանից մեկնեց 154 հազար մարդ: Ինչ վերաբերում էր արտասահմանում գտնվող առևտրական ռազմագերիների վերադարձին, ապա զխաւոր դժվարութիւնն այն էր, որ Գերմանիայի ու նախկին Ավստրո-Հունգարիայի հետ Սովետական Ռուսաստանը չունէր դիվանագիտական հարաբերութիւններ, իսկ Լեհաստանն էլ պատերազմի մեջ էր մեր դեմ: Դժվար կացութիւնից դուրս գալու հիշքն այն եղավ, որ կոլկոլում կազմակերպվեց նանսների կողմից, ուր հանդիպում էին Ռուսաստանի, Գերմանիայի, Ավստ-

րիայի ու Լեհաստանի ներկայացուցիչները: Այդպէս կարգավորվեց գործը: Ընդհանուր արդյունքն այն եղավ, որ այդ և այլ երկրներից Ռուսաստան վերադարձան մոտ 160000 ռազմագերիներ, որոնց մեջ կային տարբեր ազգութիւնների մարդիկ, այդ թվում նաև հայեր: Ազգերի լիգային ներկայացրած իր գեկուցագրում նանսներ գոհունակութեամբ նշում է, որ սովետական պետութիւնը բարյացակամութեամբ ու բարեխղճութեամբ է կատարել իր առջև ծառայած խնդիրները:

Այդ ժամանակին է վերաբերում նանսների անձնական ծանոթութիւնը Մ. Գորկու հետ: Նրանք իրար գիտեին վաղուց, բայց ահա այժմ՝ 1920 թվականին Պետրոգրադում տեղի է ունենում նրանց առաջին հանդիպումը, որն այնուհետև վեր է ածվում մեծ բարեկամութեան: Նույն թվականի հուլիսի 6-ին Պետրոգրադի սովետի նիստում, որին մասնակցում է նաև Յ. Նանսներ, Մ. Գորկին իր ելույթում ասաց. «Շատ ուրախալի է, որ այնպիսի նշանավոր մարդիկ, ինչպիսին է Ֆրիտլոֆ Նանսներ, մեծ եռանդի տեր ու կյանքի փորձով կոլիված մարդիկ, ձգտում են դեպի մեզ: Նանսների նման մարդկանցից շատ բան կա սովորելու նրանց օրինակն ու նրանց եռանդը լավագույնն է ու մեծագույնը, ինչ կա մարդու մեջ: Եվ մենք պետք է ջերմորեն ողջունենք այնպիսի մարդու, ինչպիսին է Յ. Նանսներ: Թող նա նվրոպայում պատմի, որ ռուս բանվորների համար թանկ են ու մոտ Արևմուտքի մեծագույն մարդկանց անունները և նրանք գիտեն գնահատել նրանց եռանդը, նրանց սխրանքները, նրանց մտքերը»¹:

Նանսներ գոհունակութիւն հայտնեց և խոսեց իր միտիայի մասին, որի կատարման համար ստացավ Մ. Գորկու լիակատար աջակցութիւնը: Նա խոր հուզմունքով բաժանվեց նրանից և 1920 թվականի սեպտեմբերի 2-ին Լյուսակերից գրած նամակում խնդրեց Մ. Գորկուն՝ հետևել իր անողջութեանը, որն այնքան պետք է «ամբողջ աշխարհին» և Լիբե կցանկանա, թող մեկնի Նորվեգիա՝ հանգստանալու Պատասխան-նամակում Գորկին շնորհակալութիւն է հայտնում նանսների սրտաշարժ ու բարի վերաբերմունքի համար և զա համարում խիստ «արժեքավոր ու կարևոր ներկայումս, երբ կապերը մարդկանց միջև հեշտութեամբ

¹ ՏՎ՝ Георгий Клубацкий, Фрицгоф Нансен, էջ 317:

¹ «Петроградская правда», 7.7.20:

խղճում են և ամենուրեք առաջանում է թշնամություն, հաճախ անմիտ՝ դուրկ արգարացումից»¹:

Ահա ինչպես էին միմյանց խոր ըմբռնում համաշխարհային մասշտաբի երկու մեծություններ և իրենց բարերար գործունեությունը օգնում ու ջերմացնում միլիոնավոր մարդկանց:

Նանսենի համար շար հանգիստ, հաղիվ վերացրած մի դժվար գործ, նա ձեռնամուխ էր լինում ավելի ծանր պրոբլեմի: Այդպես, նա 1921 թվականին նշանակվեց Ազգերի լիգայի գլխավոր կոմիսար գաղթականների տեղավորման գործով: Նանսենը վիթխարի ջանքեր թափեց մոտ 2 միլիոն գաղթականների հայրենադարձության կազմակերպման համար: Դրանց մեջ էին հույներ, ռուսներ, հայեր և այլն: Հայտնի է, որ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Ռուսաստանից փախան շատ սպիտակգլարդիականներ, բայց թշնամական ազդեցության գոհ դարձան նաև հաղարավոր ռուս գյուղացի-կազակներ, որոնք փաստորեն բշվեցին արտասահման: Նրանք ուզում էին վերադառնալ իրենց հայրենի օջախները: Եվ նանսենն այդ ուղղությամբ շատ գործ կատարեց՝ ստանալով սովետական կառավարության աջակցությունը: Մեծ քանակությամբ կազակներ, գյուղացիներ վերադարձան և ստացան սովետական քաղաքացիության իրավունք: Սովետական կառավարությունը շնորհակալություն հայտնեց նանսենին՝ նրա ցույց տված օգնության համար «հայրենադարձության գործում»²:



Քաղաքացիական պատերազմում հաղթանակ տանելուց հետո սովետական ժողովուրդը դեռ նոր էր ձեռնամուխ եղել ժողովրդական տնտեսության վերականգնմանը, երբ 1921 թվականին ուժեղ երաշտ սկսվեց Պովոլժիեում, Հյուսիսային Կովկասում և Ուկրաինայում: Տարերային աղետը հասցրեց սովի, որն ընդգրկեց սովետական երկրի 30 նահանգներ՝ ավելի քան 30 միլիոն բնակչությամբ: Զգալիորեն տուժեցին նաև Աղբյուրիցանը, Հայաստանն ու Վրաստանը: Կուսակցությունը և կա-

ռավարությունը դիմեցին բոլոր հնարավոր միջոցներին՝ օգնելու բնակչությանը և բարելավելու ընդհանուր դրությունը: 1921 թվականի հուլիսի 18-ին համառուսաստանյան կենտրոնական կոմիտեի կազմվեց և եռանդուն գործունեություն ծավալեց Քաղցածներին օգնող կենտրոնական հանձնաժողովը՝ Մ. Ի. Կալինինի գլխավորությամբ: Միաժամանակ Վ. Ի. Լենինը 1921 թվականի օգոստոսի 2-ին հատուկ կոչով դիմեց միջազգային պրոլետարիատին՝ օգնության ձեռք մեկնելու սովետական հանրապետությանը: Նա մատնանշեց, որ սովը հետևանք է ոչ միայն Ռուսաստանի հետամնացության ու երաշտի, այլև 7-ամյա պատերազմի (սկզբում իմպերիալիստական, հետո քաղաքացիական), ինտերվենտների ու հակահեղափոխականների կործանարար արշավանքների ու դավադրությունների: Բոլոր երկրներին կապիտալիստները ցանկանում են խեղդել առաջին բանվորագյուղացիական պետությունը, նոր դավեր նյութել նրա դեմ և հեշտացնել իրենց պայքարը միջազգային հեղափոխական շարժման դեմ: Ուստի, «... պահանջվում է օգնություն: Բանվորների ու գյուղացիների սովետական հանրապետությունն սպասում է այդ օգնությունը աշխատավորությունից, արդյունաբերական բանվորներից և մանր հողագործներից»¹: Ընդհատ է, նրանք իրենք են ձնշվում ու կեղեքվում կապիտալի աշխարհում, բայց հենց «աշխատավոր ու շահագործվող մարդու բնազդով» պետք է հասկանան դրություն ծանրությունն ու կազմակերպեն ինտերնացիոնալ աջակցություն սովետական ժողովրդին, որն առաջինն է հարթում սոցիալիզմի ուղին:

Այդ կոչն ունեցավ լայն արձագանք ամբողջ աշխարհում: Կոմիտեի ներքին գործկոմի մասնակցությամբ ստեղծվեց «Սովյայններին օգնող միջազգային բանվորական կոմիտե» (Կլարա Ցեակին, Հանրի Բարբյուս, Մարտին Անդերսեն-Նեբսե և այլք), և լայն շարժում ծավալվեց բազմաթիվ երկրներում, որին մասնակցեցին Բեռնարդ Շոուն, Ալբերտ էյնշտեյնը, Անատոլ Ֆրանսը, Թեոգոր Դրալզերը և ուրիշներ:

Կարո՞ղ էր արդյոք Ֆրիտյոֆ Նանսենը ոչ միայն դուրս մնալ այդ մեծ մարդասիրական գործից, այլև չբայել նրա առաջին շարքերում: Իհարկե ո՛չ: Նա ռազմագերիների փոխանակության կազմակերպումից հետո հաղիվ էր հասել Լյուսակեր և, մի փոքր

¹ Переписка А. М. Горького с зарубежными литераторами. Архив А. М. Горького, т. VIII, М., 1960, стр. 292.

² Лив Нансен-Хейер, Книга об отце, стр. 13:

1 Վ. Ի. Լենին, ԵԼԺ, 5. 44, էջ 91:

հանգստանալուց հետո, ձեռնամուխ եղել Կենտրոնական Ասիա ճանապարհորդելու նախագծի կազմմանը, երբ ստացավ Ռուսաստանում բռնկած սովի լուրը: Նրա վրա ցնցող տպավորություն գործեց Մաքսիմ Գորկու մարդկություն լավագույն զավակներին ուղղված կոչը՝ կանխելու սովի աղետը, որն իր հետ կրեեր միլիոնավոր զոհեր: Միաժամանակ ստանում է իր մեծ բարեկամի անձնական նամակը օգնության հայցով: Նույն ժամանակ Մ. Ֆ. Անդրեևան (Մ. Գորկու կինը՝ նշանավոր արտիստուհին ու կոմունիստը) Ռուսաստանին օգնելու համար հանդես է գալիս զեկուցումներով սկանդինավյան և այլ երկրներում՝ «Ոչ թե ողորմություն տվեք, այլ օգնեցեք» կոչով: Նախևհնր հուզվում է, ալեկոծվում, բայց և գործում ամենայն հաստատակամությամբ: Նրա անմիջական ջանքերով նորվեգական կառավարությունը 1921 թվականի հուլիսին մի բանի հարյուր տոննա շորացրած ձուկ ուղարկեց Ռուսաստան: Ապա նա օգոստոսի 12-ին Ժնևից ստանում է միջազգային Կարմիր խաչի նախագահ Գուտտավ Աղորթ հեռագիրը՝ գլխավորելու Ռուսաստանի սովյալների օգնելու միջազգային կամպանիայի գործը: Հեռագիրը ձեռքին նախևհնր մտնում է իր ընկերոջը՝ էրիկ Վերենշելդին, և ասում. «Եթե այդ գործը վերցնեմ իմ ձեռքը, դա նշանակում է, որ ես պետք է հրաժարվեմ իմ սեփական աշխատանքից և այն ամենից, հանուն որի ապրում եմ»: Դրան Վերենշելդը պատասխանում է շատ զիպուկ. «Որքան ես քեզ զիտեմ, դու երբեք քեզ չես ների, եթե հրաժարվես այդ հանձնարարությունից»: Հարցը լուծվում է դրականորեն, և նախևհնր «այո» պատասխանը թույլ է ժնև, որտեղ օգոստոսի 15-ին Կարմիր խաչի միջազգային ու ազգային կազմակերպությունների ներկայացուցիչների կոնֆերանսում ստեղծվում է Ռուսաստանի սովյալներին օգնող միջազգային հանձնաժողով, և նրա գլխավոր լիազոր է նշանակվում մեծ հումանիստը:

Նախևհնր դեռ մինչ այդ կանխագուշակում էր, որ Ռուսաստանում սով կրորբորովի, եթե ժամանակին օգնություն չկազմակերպվի: Դրա համար էլ նա 1919 թվականին դիմեց մեծ պետություններին, բայց այդ միջնորդությունը, ինչպես տեսանք, մնաց անարդյունք: Հետո, անդրադառնալով այդ հարցին, նա-

սենը գրել է. «Ես կարծում եմ դա շատ ափսոսալի է: Ես հաշտացած եմ, որ եթե այդ բանակցությունները տային բարեկապատ արդյունքներ, ապա դրությունը եվրոպայում կլիներ բոլորովին այլ, քան այն, ինչ այժմ տեսնում ենք: Բյուկարայի վերացումը, բացառապես տնտեսական հիմքերի վրա հաղորդակցության նորոգումը Ռուսաստանի և արտասահմանի միջև այն ժամանակ, երբ Ռուսաստանում դեռևս կային հումքի բավականաչափ պաշարներ, վիթխարի ազդեցություն կունենար եվրոպական արտադրության ու սպառման հավասարակշռության վերականգնման վրա»: Նա գտնում էր, որ եվրոպան չի կարող առաջ գնալ առանց Ռուսաստանի և սովյալ ժամանակ պետք է վերջինիս անպայման օգնել:

Նախևհնր անմիջապես մեկնում է Ռուսաստան: Նա, հասնելով Ռիգա, հանդիպում է ՌՍՖՍՀ արտաքին գործերի ժողովի տեղակալ Մ. Լիտվինովի հետ և զրուցում առաջիկա անելիքների մասին: Լիտվինովը 1921 թվականի օգոստոսի 20-ին հեռագրում է Լենինին ու Չիչերինին՝ հայտնելով, որ «նախևհնր մեզ համար ամենաընդունելի միջնորդն է» և նա ուղում է «մեկնել Մոսկվա»: Անմիջապես կատարվում է նախևհնր ցանկությունը, և շուտով Մոսկվայում բանակցություններ են սկսվում նրա ու սովետական կառավարության միջև: Նախևհնր մանրամասն ծանոթանում է ստեղծված ծանր վիճակին: Մարդկանց քաղցից փրկելու համար պետք էր 4 միլիոն տոննա հացահատիկ, որի միայն կեսը կարող էր տալ Ռուսաստանը: Մնացածը հարկավոր էր գնել արտասահմանից, իսկ դրա համար պետք էր 250 միլիոն ֆրանկ. «Հարկավոր է գիմել Ազգերի լիգային, — որոշում է նախևհնր — նեղության պահին ժողովուրդները պետք է օգնեն միմյանց»¹:

1921 թվականի օգոստոսի 27-ին համաձայնագիր է կնքվում Ֆ. Նախևհնր ու Գ. Չիչերինի միջև², որի համաձայն Մոսկվայում պետք է ստեղծվի Ռուսաստանին միջազգային օգնության գործադիր կոմիտե: Նրա մեջ կմտնեն նախևհնր և սովետական իշխանության ներկայացուցիչները: Այդ կոմիտեն կստանա արտասահմանից եկող օգնությունը, և նրա վերահսկողությամբ էլ

1 Фриштоф Хансен, Россия и мир, М.—П., 1923, стр. 23.

2 ЦГАОР СССР, ф. 1064, оп. 6, ед. хр. 22, л. 108.

3 А. Таланов, Хансен, стр. 269.

4 ЦГАОР, ф. 1064, оп. 6, ед. хр. 31, лл. 99—100.

¹ М. Ф. Андреева, Переписка, воспоминания, статьи, документы, М., 1968, стр. 345.

կրաշխի այն: Սովետական օրգանները ցույց կտան լիակատար աշակցություն: Նույն օրը կնքվում է լրացուցիչ համաձայնագիր, որտեղ հանգամանորեն պարզարանվում են կրկու կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ընդ որում հատուկ (14-րդ) կետով նշվում է, որ Նանսենի աշխատակիցները Ռուսաստանում պետք է զբաղվեն բացառապես սովյալների օգնելու հարցով և ոչ թե «քաղաքական կամ առևտրական գործունեություններ»¹:

Այդ ամենը կատարվում էր Վ. Ի. Լենինի գիտությունները ու ղեկավարությունները: Ինչպես գրել է Գ. Չիչերինը, «նա շատ ջնքմ մասնակցություն ունեցավ... «ԱՐԱ»-ի՞ և Նանսենի հետ ունեցած բանակցություններին՝ սովյալներին օգնելու մասին»²: Այլ կերպ չէր կարող լինել, որովհետև, ինչպես նշել է Լ. Մարտենսը, «Ալազիմիր Իլլիչը խիստ ծանր ապրումներ ունեցավ մեր երիտասարդ հանրապետության ազատալի գրություն, արդյունաբերության քայքայվածության, Պովոլժիեում բռնկած սովի կապակցությամբ: Ամեն մի առաջարկություն, որը կապված էր սովետական հանրապետությանը օգնություն ցույց տալու հետ, ամենա-հուսալից պաշտպանությունն էր գտնում նրա մոտ»³: Առավել ևս, երբ նման գործի գլուխ էր կանգնում մի այնպիսի մարդ, ինչպիսին էր Ֆ. Նանսենը: Ազգերի լիզան, նրան նշանակելով իր գլխավոր կոմիսարը, անպայմանորեն հաշվի էր առնում այն, որ Նանսենը վայելում էր սովետական կրկրի վստահությունը: Պատահական չէ, որ երբ 1921 թվականի ամռանը Ֆ. Նանսենը դիմում է Գ. Չիչերինին՝ Պետրոգրադի բնակչությանը պարենամթերք մատակարարելու առաջարկով և խնդրում է թույլատրել կարմիր խաչի օտարերկրյա ներկայացուցչին մասնակցելու զբաղաշխմանը, գործերին իրազեկ Վ. Ի. Լենինը Ռկ(բ)Կ Կենտկոմի

քաղբյուրոյին գրում է. «Իմ կարծիքով, հարկավոր է համաձայնել ռուսաց բացառությամբ, ճշտորեն վերապահություն անելով այդ բացառության մասին: Խնդրում եմ անմիջապես ներառված անցկացնել քաղբյուրոյով»¹: Այո, բացառություն Նանսենի համար, որի մասին սովետական գրող Ս. Գանգուլովը գրել է. «Այդ խստագետ ու բարի մարդը մի տեսակ բարի ծառայությունների համաշխարհային գրասենյակ էր, յուրահատուկ միջնորդ, որի ազնվությունը երբեք կասկածի տակ չի առնվել»²: Սովետական կառավարությունը ստեղծեց բոլոր պայմանները Նանսենի մարդասիրական գործունեության ծավալման համար: Բնորոշ է, որ նրան աշխատասենյակ հատկացվեց Կրեմլում, ուր գտնվում էր սովետական կառավարությունը, իսկ նրա միսին էլ օգտվում էր դիվանագիտական բոլոր արտոնություններով:

Համաձայնագրերը ստորագրելուց և անհրաժեշտ աշխատանք կատարելուց հետո, Նանսենը շտապեց արտասահման միջոցներ հայթայթելու համար: Դեռ ճանապարհին նա տվեց բազմաթիվ հեռագրեր՝ բոլորի՞ն, բոլորի՞ն կոչ անելով օգնության ձեռք մեկնել. «Դեռ երբեք, — գրել է նա, — համաշխարհային պատմության մեջ մարդիկ այդքան խիստ կարիք չեն ունեցել օգնության: Թանկ է ամեն մի ռուպլին»: Մինչդեռ կապիտալիստական երկրների ղեկավարները շրջանները կատաղությամբ ընդունեցին նրա բարյացակամ վերաբերմունքը դեպի բոլշևիկների կրկրը: Դա բոլորովին էլ չընկճեց նրան և երբ անգլիական «Դեյլի բրոնիկլ» լրագրի թղթակիցը դժկամությամբ հարցրեց, թե Նանսենը ինչպե՞ս է վերաբերվում սովետական կառավարությանը և եվրոպային «սպառնացող կարմիր վտանգին», նա «վստահությամբ հայտնեց, որ ներկայումս Ռուսաստանի համար հնարավոր չէ որևէ այլ կառավարություն, բացի սովետականից, որ Լենինը հանդիսանում է ականավոր անձնավորություն, և որ Ռուսաստանում ոչ մի նախապատրաստական աշխատանք չի կատարվում պատերազմի համար»³:

Փնև, 1921 թվականի սեպտեմբերի 9. Նանսենը հանդես է գալիս Ազգերի լիգայում և համարձակորեն ազդարարում. «Լավ է, որ Ազգերի լիգան իր աշխատանքն սկսել է ցերեկային լույսի

¹ Документы внешней политики СССР, т. IV, стр. 297;
² Г. В. Чичерин, Статьи и речи, М., 1961, стр. 284.
³ ԱՐԱ—Օգնության ամերիկյան վարչություն (ARA—American Relief Administration), որն ստեղծվել էր 1919 թվականին (2. Հուլիսի գլխավորությամբ) տալիս համաշխարհային պատերազմի ժամանակ սուսած եվրոպական երկրներին նյութական օգնություն ցույց տալու համար, բայց ավելի շատ զբաղվում էր բազմաթիվ գործունեությամբ: 1921 թվականի օգոստոսին սովետական կառավարությունը պայմանագիր կնքեց ԱՐԱ-ի հետ՝ սովյալներին օգնելու նպատակով, բայց շուտով դադարեցվեց այն՝ ԱՐԱ-ի հակասովետական գործունեության պատճառով:

³ Воспоминания о В. И. Ленине, т. 3, М., 1961, стр. 348.

¹ Վ. Ի. Լենին, ԵՊ, հ. 53, էջ 20—21;
² Савва Дангулов, Пятнадцать дорог на Эгль, М., 1975, стр. 296.
³ Георгий Кублицкий, Фриштоф Хансен, стр. 321.

տակ: Պարզութունից վախեցող գաղտնի դիվանագիտութեան մեթոդները բերում են ծանր հետևանքներ: Փաստերին նայենք բաց աչքերով: Ամբողջ մարդկութեան և Եվրոպայի ապագայի շահերի համար պետք է անհետաձգելիորեն օգնել Ռուսաստանին: Եվ այստեղ խոսքը ոչ թե նվիրատվությունների մասին է, այլ փոխառութեան մասին: Ռուսաստանը երաշխավորում է իր պարտքի հատուցումը¹: Այնուհետև, նա մեկ առ մեկ հերքում է այն զրպարտությունները, թե իբր սովետական իշխանությունը չի կատարի վերցրած պարտավորությունները, ստացված օգնությունը չի բաժանի քաղցածներին և այլն: Այդուհանդերձ, բուրժուական կառավարությունները հրաժարվեցին վարկեր կամ փոխառություն տրամադրելուց, գտնելով, որ դա կուժեղացնի բուլշևիզմը: Նրանք գերադասում էին ամբողջ ժողովրդի կործանում, քան որևէ նպաստ սովետական երկրին: Այս հարցում հատուկ պնդանքներ կատարություն էր ցուցաբերում նենգամիտ Ալբրոնը, որն առիթ տվեց հռչակավոր Բեռնարդ Շոուին ասելու, թե բրիտանական կառավարության հրաժարումը օգնելու քաղցած երկրներին «Անգլիային դնում է քաղաքակրթությունից դուրս»²:

Նանսենի պարտությունը սահման չկար, և նա, մերկացնելով բուրժուական շայտկներին, այդ «մարդակերպ սատանաներին», ասաց. «Եթե, իբրք, որևէ մեկը մտադրություն ունի ստիպելու, որպեսզի այս ձմռանը սովից մահանան 20 միլիոն մարդիկ, այն հաշվով, որ տեսնեն քաղաքական սիստեմի փոփոխություն Ռուսաստանում, ինքն այդպիսի նախագիծը համարում է հրեշավոր»³: Մի փոքր ուշ նանսենը, նորից անդրադառնալով այդ հարցին, նշեց, որ Ազգերի լիգան, արևմտյան պետությունները չուղեցին օգնել ռուս ժողովրդին, երբ ունեին նյութական ու տրանսպորտի լիակատար հնարավորություններ. «Կանադայում այժմ այնպիսի լավ բերք է, որ նա կարող էր երեք անգամ ավելի հացահատիկ առանձնացնել, քան պետք էր կանխելու ահավոր սովը Ռուսաստանում: ԱՄՆ-ում ցորենը փտում է ֆերմերների մոտ, որոնք չեն կարողանում հացահատիկի ավելցուկների գնորդներ գտնել: Արգենտինայում կուտակվել է այնպիսի քա-

նակութիամբ եգիպտացորեն, որ այն չեն կարողանում տեղավորել և արդեն սկսել են նրանով շոգեմեքենաներ տաքացնել: Եվ՝ բողոքայի ու Ամերիկայի բոլոր նավահանգիստներում կանգնած են ամբողջ նավատորմիղներ: Մենք չենք իմանում, թե ինչ բարձնեք դրանց, իսկ մեր կողքին՝ Արևելքում, քաղցում են միլիոնավոր մարդիկ»¹: Նա միաժամանակ ուղղակի նշում է, որ «Ազգերի լիգան... չի արդարացնում իր կոչումը»²:

Մինչդեռ Ազգերի լիգան, ըստ իր բնույթի, կատաղած նաև նրանից, որ իր զլխավոր կոմիսարը դարձել է «կարմիր կոմիսար», շրնդառաջեց նանսենի առաջարկներին: Ավելին, կալիֆոռնիայի ստանական աշխարհում հրահրվեց կեղծիքի ու լուտանքի կատաղի կամպանիա նրա դեմ: Սակայն անհողողոյ էր մեծ մարդասերը և, հակահարված տալով բուրժուական զրպարտություններին, շարունակեց իր գործունեությունը. «Ես գիտեմ ինչու է կեղծարվում այդ դիվանագետները, — ասաց նանսենը: — Նրանք վախենում են, որ իմ գործունեությունը կամրացնի սովետական իշխանությունը: Լավ, առանց Ազգերի լիգայի էլ չուրա կզնանք»: Այդպիսով, ըստ էության Պովլոժինի սովյալնեբրին օգնելու հարցը նանսենի համար դարձավ առաջին մեծ փորձարարը՝ ստուգելու, թե ինչ է Ազգերի լիգան և ում շահերն է նա պաշտպանում: Երկրորդ ու վերջնական քննությունը նա տեսավ հայ դաշականների խնդրում, որին կանգրադառնանք առանձին:

Հուլիսը կտրելով Ազգերի լիգայից ու մեծ տերությունների կառավարություններից և դատապարտելով նրանց նենգամիտ պլանները, նանսենը ծավալեց լայն շարժում՝ օգնություն սատանալու հասարակական կազմակերպություններից ու մասնավոր մարդկանցից. «Ես մտադրություն չունեի, — ասաց Յ. Նանսենը դեռ 1921 թվականի սեպտեմբերին, — դիմելու մասնավոր բարեգործության: Ես հարց բարձրացրի կառավարությունների առաջ: Նրանք խուլ մնացին այդ կոչի հանդեպ: Հենց այս պահին 20—30 միլիոն մարդկանց սովամահություն է սպասում: Եթե երկու ամսից հետո այդ օգնությունը չհասնի, նրանց բախտը վճռված է: Բայց կառավարությունները հրաժարվեցին վարկ տալուց: Ես չեմ հավատում, որ դա ճիշտ է: Ես չեմ հավատում, որ դա խելամուռություն է: Ես կարող եմ միայն մի բան ասել՝ դա

¹ А. Таланов, Нансен, стр. 270.

² «Известия», 4.4.1922:

³ Н. Л. Рубинштейн, Внешняя политика советского государства в 1921—1925 годах, М., 1953, стр. 122:

¹ Fridtjof Nansen, Eventyr lyst. Artikler og taler, Oslo, 1962, s. 179.

² Նայն տեղը, էջ 182:

ճակատագրական սխալ է: Այսպես ուրեմն, մենք հարկադրված ենք դիմելու մասնավոր բարեգործության: Մենք կանենք այն ամենը, ինչ հնարավոր է»: Բայց այստեղ էլ նա հանդիպեց մեծ դժվարությունների և մասնավորապես պայքարեց իմպերիալիստական ու սպիտակգլարդիական ուսուցիչի դեմ: Այդ առթիվ նախաներ ասել է. «Մենք ինչ-որ առասպելական գումարներ շնք խնդրում: Մենք խնդրում ենք, որ Եվրոպայի բոլոր կառավարությունները միասին տրամադրեն 5 միլիոն ֆունտ ստեռլինգ: Դա երկու անգամ քիչ է ժամանակակից մի ռազմանավի արժեքից: Բայց կառավարությունները համաձայն չեն... Այդպիսով, օգնության համար մենք կարող ենք հույս դնել միայն սեփական նախաձեռնության և մասնավոր մարդկանց պատրաստակամության վրա: Բայց այստեղ էլ մենք հանդիպում ենք խոչընդոտների: Մեզ ամեն քայլափոխում հետապնդում է կեղծ մամուլը, որը տարածում է սուտ լուրեր և փորձում ամեն կերպ խանգարել մեր աշխատանքը: Մեզ դիմադրում են ռուսական ազդեցիկ կամիրանները, որոնց համար իրենց հայրենակիցների տառապանքները և այն մեծ կարիքը, որ ունի իրենց հայրենիքը, ավելի քիչ նշանակություն ունեն, քան պայքարը Ռուսաստանի այժմյան կառավարությունը տապալելու համար: Այնուամենայնիվ, մեր թշնամիներին չհաջողվեց արգելակել մեզ կազմակերպելու օգնության մեծ ակցիա»¹: Նախաներ իր նամակներից մեկում, գատապարտելով ռուսական սպիտակ վտարանդիների թունոտ ստեղծությունը սովետական կարգերի նկատմամբ, գրում է. «Ես նորից ու նորից հայտարարում եմ, որ օգնության իմ գործում ես քաղաքագետ չեմ, ո՛չ բոլշևիկ եմ և ո՛չ էլ հակաբոլշևիկ: Ես միայն ձգտում եմ փրկել մարդկանց կյանքը...»²:

Մարզ չի կարող կյանքից ու պատմությունից դուրս մնալ և իր վերաբերմունքը շրջաբերել առավել սուր հարցերի նկատմամբ: Նախաներ, այցելելով Ռուսաստան և մասնավորապես լիտեղով մերձվողյան շրջաններում, ականատես եղավ քաղցածների սովամահության դեպքերի, սրտաճմլիկ տեսարանների, երբ մարդիկ սնվում էին դարմանով, ապուր եփում ձիու ոսկորների ալյուրով, երբ երեխաները աղիտղորմ բացականչում էին՝ «հա՛ց, հա՛ց, հա՛ց...»: Վերադառնալով Եվրոպա, նախաներ ամբողջ

սովով հնչեցրեց իր մարդասիրական ձայնը՝ արագորեն օգնելու առաջադրանքներին: Նա 1921 թ. նոյեմբերի 12-ին ժնևում հատուկ ճառ արտասանեց, որը հրատարակվեց առանձին բրոշյուրով («An das Gewissen der Völker»): Դա դիմում էր աշխարհի ժողովուրդների խղճին՝ անհապաղ օգնության ձեռք մեկնելու Ռուսաստանի սովյալներին: Հաջորդ տարին ժնևում նախաների առաջարկով լույս տեսավ նույնաթիվ մի ժողովածու («Für unsere kleinen russischen Brüder»), որին մասնակցում էին Եվրոպայի ականավոր գրողներ ու գիտնականներ (Անատոլ Զրանս, Հանրի Բարբյուս, Ալբերտ էյնշտեյն, Բեռնարդ Կելլերման, Հենրիխ Մանն և ուրիշներ): Այդտեղ շեշտը դրվում էր հատկապես սովահար երեխաներին փրկելու վրա:

Նախաների և մյուս առաջադեմ գործիչների համատեղ ելույթներն ազդեցիկ էին ու մոբիլիզացնող: 1922 թվականին Բեռլինում դերմաներեն հրատարակվեց «Ռուսաստանը և աշխարհը» փոքրիկ ժողովածուն 14 նկարներով, որոնք պատկերում են սովահարության ահալոր տեսարանները: Գրքից ստացված եկամուտները արվեստի սովյալների ֆոնդին: Այդ ժողովածուում զետեղված էին նախաների «Մերձավորի նկատմամբ սիրո վերածնունդը» ծավալուն ակնարկ-կոչը, Գերհարդ Հաուպտմանի առաջարկը և Մ. Գորկու «Եթե Եվրոպան ուշքի չգա...» եզրափակող հոդվածը:

Նախաներ բացահայտում է պատերազմների ծանր հետևանքները և հատկապես անդրադառնում Ռուսաստանում բորբոքված սովին, որը տանջամահ էր անում բազմահազար մարդկանց. «Այսօր Ռուսաստանում միլիոնավոր մարդիկ պայքարում են մահվան դեմ: Եվ ինչպիսի մահվան: Պատերազմում դա հաճախ լարված նյարդային պայքար է և վերջը մի գնդակ, արագ կրակոց: Մինչդեռ այստեղ քաղց է ու ցուրտ, անողորմ տանջանք՝ շաքաթ առ շաքաթ, օր առ օր, ժամ առ ժամ»³: Նա նշում է, որ կենդին կառավարությունը կատարում է առավելագույնը՝ օգնելու մարդկանց, բայց սովյալ պահին Ռուսաստանի միջոցները քիչ են և պահանջվում է համընդհանուր աջակցություն. «Այո՛, մերձավորին սիրելը միակ հնարավոր ռեալ փառակազմությունն է», — բացականչում է նախաներ: Նա դիմում է ժողովուրդներին՝

¹ «Дело трудящихся всего мира», М., 1957, стр. 230.

² Յ. Նախաների արխիվ (Օսլոյի համալսարանի գրադարանում), Ms. fol. 1938, R5E. Այսուհետև գրքում բերվող բազմաթիվ քաղվածքները, որոնց աղբյուրները տողատակում չեն նշված, վերցված են այդ արխիվից:

³ Russland und die Welt von Fridtjof Nansen, Gerhart Hauptman, Maxim Gorki, 1922, S. 12:

ցուցաբերելու կարեկցանք ու հոգատարություն դեպի տառապ-
յալները, Ռուսաստանի սովահար մարզիկ:

Բնորոշ է, որ Նանսենի հոգվածում խոսվում է նաև հայ ժո-
ղովրդի մասին: Նա ցույց է տալիս, որ վերջին պատերազմում
հայերը ենթարկվեցին անլուր զրկանքների ու դաժան կոտորա-
ծի, այժմ էլ նրանց գաղթականները բարձր են տալիս իրենց գո-
յությունը կապիտալի երկրներում՝ առանց ստանալու այն «ազ-
գային օջախը», որը խոստացել են արևմտյան տերությունները՝
կառավարողները¹:

Մ. Գորկին իր հոգվածում շեշտում է, որ «Ֆրիտյոֆ Նանսե-
նը՝ այդ ազնվաբարո, մարդկային սիրով լի գործուն ու հրաբոր-
բոր սիրտը, մեր առաջ բացել է իրականության սարսափելի
պատկերը, բայց և այնպես, այդ իրականությունն ինքնին ավելի
սարսափելի է»²: Հանճարեղ գրողը կոչ է անում ազնիվ մարդ-
կանց՝ լսելու և հետևելու Նանսենին, աջակցելու նրա հումանիս-
տական գործունեության ծավալմանը: Ընդհանրապես նա Նան-
սենի գերը բարձր է գնահատում ոչ միայն Ռուսաստանի սով-
յալներին նյութական աջակցություն ցույց տալու համար, այլև
որ նա «հումանիզմի ոգին է հաստատում Եվրոպայում»³:

Առաջաբանում Գ. Հաուպտմանը նշում է, որ Նանսենը լի է
ազնվությունով ու բարությունով, մարդկանց օգնելու պատրաստ-
կամությամբ և այդ ամենը վառ կերպով դրսևորվում է նաև նրա
փաստագրական կոչ-ակնարկում՝ «Ռուսաստանը և
աշխարհը» ժողովածուում. «Այս էջերից հնչում է մի ձայն, որը
պետք է լսել: Այդ ձայնի հանդեպ ականջ փակելը համազոր է
մարդկայնության ինքնասպանության»⁴, — ազդարարում է Գ.
Հաուպտմանը:

Մեծ հումանիստների սրտանմուտիկ ձայնը լավից և բարի մար-
դիկ գործվալից արձագանքեցին գրան: Այդ մասին Գ. Հաուպտ-
մանը նորից հիշեց, երբ 1945 թվականի աշնանը Գերմա-
նիայում նրան այցելեցին Իոհաննես Բեխերը և սովետական մի
խումբ գիտնորական լրագրողներ: Ութսուներեքամյա գրողը խոր
ապրումներով ասաց. «Դա վեր է իմ սպասելիքներից... Նա հուզ-

ված եմ և զգացված ինձ ցույց տրված պատվից: Նա շնոր-
հակալ եմ նոր, հաղթական Ռուսաստանին: Նրա մարդիկ առա-
ջինն են այցելել ինձ՝ իմ միայնակության այս խառն ու ծանր
օրերին»: Ապա նա զրուցակիցներին է հանձնում մի գիրք կար-
միր կազմով: Դա «Ռուսաստանը և աշխարհը» ժողովածուն էր,
որի առթիվ նա ասաց. «Այդ գրքով մենք պատասխանեցինք
Մաքսիմ Գորկու կոչին ամբողջ աշխարհի գիտնականներին ու
գրողներին՝ օգնելու երիտասարդ Սովետական Հանրապետու-
թյանը... Այն ժամանակվա պայմաններում հավաքվեց բավա-
կանին ծանրակշիռ գումար. մենք գնեցինք ղեկորայք և նավով
ուղարկեցինք հեղափոխական Ռուսաստան»¹:

Ամբողջությամբ վերցրած, Նանսենի եռանդուն ջանքերը
տվին բարերար արդյունքներ: Նրա մարդասիրական կոչը լայն
արձագանք գտավ բազմաթիվ երկրներում, և աշխատավորներն
ու մյուս առաջադեմ մարդիկ աջակցեցին նրա կազմակերպած
օգնության ֆոնդին: Շուտով Ռուսաստանն սկսեց ստանալ պա-
րեն, ղեկորայք, հագուստ և այլն:

Այդպիսով, հակառակ ռեակցիայի դավերին, Նանսենյան
մարդասիրական գործը լայն տարածում ստացավ: Իմպերիա-
լիստների նյութած «Նանսենի դեմ» կամպանիային հակադրվեց
«Նանսենի օգտին» ժողովրդական շարժումը, որոնց ջրբաժան
գիծը դարձավ նրանց վերաբերմունքը դեպի բանվորագյուղա-
ցիական պետությունը: Վ. Ի. Լենինը, անդրադառնալով այդ
հարցին, գրել է. «Մենք կշահենք, մեր կողմը կգրավենք
«ՐԿՕ-նանսենյան» տարրերին և վերջ կտանք հականանսենա-
կանների խաղին»²:

Նանսենը արժանացավ սովետական կառավարության և
մարդկանց ջերմ համակրանքին ու սիրուն: Կուսակցության Կենտ-
կոմի օրգան «Պրավդան» բարձր գնահատեց նրա ծառայություն-
ները և ընդգծեց, որ Նանսենն ու նրա նման հումանիստ մար-
դիկ, կոմունիստներ շինելով հանդերձ, «սկսում են արհամար-
հանքով նայել այն մարդակերական քաղաքականությանը, որ
վարում են Անտանտի քաղաքագետները»³:

Սովետների համառուսաստանյան IX համագումարը,

1 «Нева» № 6, 1956, стр. 172.

2 Վ. Ի. Լենին, ԵԺ, հ. 53, էջ 212:

3 «Правда», 4.10.21.

5— Նանսենը և Հայաստանը

1 Russland und die Welt von Fridtjof Nansen, Gerhart Hauptman, Maxim Gorki, Berlin, 1922.

2 Նույն տեղը, էջ 27:

3 Летопись жизни и творчества А. М. Горького, т. 3, М., 1959, стр. 256.

4 Russland und die welt ... s. 5.

Վ. Ի. Լենինի շերտ հավանությանը, 1921 թվականի դեկտեմբերի 25-ին հատուկ ուղերձով դիմեց Զրիտյոֆ Նանսենին և միլիոնավոր աշխատավորների անունից խորին շնորհակալություն հայտնեց մեծ հումանիտարին, որը ջանք չի խնայել օգնելու Պովոլժիեի սովյալներին. «Ռուս ժողովուրդը իր հիշողության մեջ կպահի մեծ գիտնական-հետազոտող ու քաղաքացի Ֆ. Նանսենի անունը, որը հերոսաբար ուղի է հարթել մեռյալ Հյուսիսի հավերժական սառույցների միջով, բայց անզոր եղավ հաղթահարելու կապիտալիստական երկրների կառավարող դասակարգերի անսահման դաժանությունը, շահասիրությունը և անհոգությունը»¹։ Բացի համապետարի ուղերձ-պատվոգրից, Մոսկվայի սովետը Նանսենին ընտրում է իր պատվավոր զեպուտատ։ Սովետական պետության օտարերկրյա բարեկամների մեջ նա առաջինն էր, որ արժանացավ այդպիսի մեծ պատվի։

Սովետական երկրում Նանսենը վաչելում էր լայն ժողովրդագրականություն և ճանաչվում որպես իսկական բարեկամ։ Նրա բազմաթիվ հանդիպումները սովետական մարդկանց հետ միշտ էլ սրտատուչ էին ու ոգևորող։ Գրանցից մեկը տեղի ունեցավ 1923 թվականի հունվարին Խարկովի օպերային թատրոնում, և երբ նրա ռեժիսորը հայտարարեց, որ «մենք ապրում ենք հանդիսավոր պահ. մեծ մարդ, հումանիստ Զրիտյոֆ Նանսենը այսօր երևելոյան մեղ հետ է», դահլիճը պարզապես դղրդաց ծափահարությունների փոթորկից։ Հաջորդ օրը նա այցելեց իր անվան մանկատունը, ուր դաստիարակվում էին 85 նախկին հյուծված որբեր, որոնք այժմ լիովին կազդուրվել էին և ջերմ սիրով ընդունեցին ազնվարար Նանսենին։ Երեխաներից մեկը կարդաց նրան նվիրած իր սրտարուխ և անպաճույճ բանաստեղծությունը.

Ողջույն քիչ, մեծ Նանսեն,
 Բարեկամներից քո փոքրիկ,
 Զմուռնաս, մեծ Նանսեն,
 Երեխաներին ուրախ, երջանիկ։

Այդ բողբոջուն զեռահասները զգում էին, որ իրենց երջանկության ստեղծման գործում արժանի բաժին ունի նաև սիրելի «պապիկը»։ Բայց ոչ միայն երեխաները, այլև՝ մեծերը։ Յուրա-

¹ Документы внешней политики СССР, т. IV, стр. 594.

Զույգերի շրթից բխում էր շնորհակալության խոսք։ Եվ այդպես ամենուրեք, ուր եղել է Նանսենը։ Գերմանացի ակնաժողոր գրող էմիլ Լյուդվիգը իր «Եվրոպայի առաջնորդները» գրքում, խոսելով նրա՝ Ռուսաստանում զանվելու մասին, գրել է. «Քե այնտեղ Նանսենը ինչ նշանակություն ուներ ժողովրդի համար, ևս տեսա հետագայում ստորին Պովոլժիեում՝ մի գեղջկուհու հայացքի մեջ։ Երբ ևս Նանսենի ճանապարհորդությունից երեք տարի հետո շոգենավի վրա տվի նրա անունը, ծեր կինը խաշակներից և, աչքերը լայն բացելով, հարցրեց, արդյոք՝ գիտե՞մ ևս նրան։ Հետո ձեռքը կպցրեց կրծքիս՝ ասես թե ցանկանալով օրհնանք հաղորդել իր փրկարարին»։

Անշուշտ, Ռուսաստանում սովը հաղթահարվեց կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության ձեռնարկած եռանդուն միջոցառումների շնորհիվ երկրի ներքին դրության բարելավմամբ։ Բայց այդ գործում զգալի էր նաև արտասահմանյան հասարակական կազմակերպությունների օգնությունը, որով ստացվեց մոտ 27 միլիոն փութ պարենամթերք (ցորեն, ալյուր, եգիպտացորեն և այլն)²։ Վ. Ի. Լենինը 1922 թվականին նշեց, որ այդ աջակցությունը «նշանակալից շափով օգնեց Սովետական Ռուսաստանին դիմանալու անցյալ տարվա սովի ծանր օրերին և հաղթահարելու այն»³։

Ռուսաստանի սովյալներին օգնող նանսենյան միսիան գործեց 1921 թվականի սեպտեմբերից մինչև 1923 թվականի օգոստոսը և սովամահությունից փրկեց 6,4 միլիոն երեխաների ու 400 հազար մեծահասակների։ Օգնության ձեռք էին մեկնել բազմաթիվ երկրների ժողովուրդներ։ Նանսենի ջանքերով էր և նրա հպարտությունը, որ իր հայրենիքը՝ Նորվեգիան, համեմատաբար փոքրաթիվ բնակչությամբ «բոլորից շատ էր տվել Ռուսաստանում սովի դեմ պայքարելու համար»⁴։

Զնայած դրան, Նանսենը համեստաբար էր գնահատում իր ծառայությունները։ Նա, օրինակ, այդպես արտահայտվեց 1923 թվականի փետրվարի 1-ին Մոսկվայում իր պատվին կազմակերպված բանկետում։ Վերջինս բացեց սովետական կառավա-

¹ Emil Ludwig, Führer Europas, Amsterdam, 1934, S. 38.

² Տե՛ս «III сессия ВЦИК, IX созыва», Бюллетень № 1, стр. 3.

³ Վ. Ի. Լենին, ՆԺՏ, հ. 45, էջ 91.

⁴ Лив Хансен-Хейер, Книга об отце, стр. 361.

րության ներկայացուցիչ (Ռուսաստանի սովյալներին օգնող միջազգային կազմակերպություններում), հին բոլշևիկ կարլ Իվանովիչ Լանդերը նա բազմակողմանիորեն բնութագրեց նանսենին և հատկապես ընդգծեց նրա հումանիստական գործունեությունը. «Նանսենը սովյալներին օգնելու գործին մոտեցավ ոչ թե այնպես, ինչպես հարուստը կվարվեր աղքատի նկատմամբ, այլ որպես մի գործնական մարդ, որը ձգտում է ամենից առաջ արագորեն ու լայնորեն բավարարել քաղցածների պահանջները»: Հետո ելույթ ունեցան հանդիսավոր ճաշկերույթի մյուս մասնակիցները և բոլորն էլ դրվատեցին մեծ քաղաքացու բարի գործերը՝ շեշտելով, որ այդ «լուսավոր մարդու» անունը հայտնի է մեր երկրի բոլոր անկյուններում, և սովետական բանվորն ու գյուղացին «երբևր շին մոռանա նրան»: Վերջում հանդես եկավ նանսենը և, շնորհակալություն հայտնելով հանդերձ, համեստարար ասաց, որ «իր կազմակերպությունը այնքան բան չի արել, որքան ինքը կցանկանար»: Ապա նա նշեց. «Ես ամենաջերմ զգացումով պիտի հիշեմ այն օրերը, որ անց եմ կացրել Ռուսաստանում: Ես երբևր շեմ մոռանա Ռուսաստանն ու նրա մարդկանց»: Փետրվարի 2-ին նանսենը մեկնեց Մոսկվայից՝ ասելով. «Ես ուրախ եմ աշխատելու ռուս ժողովրդի հետ, քանզի ես զգում եմ փոխադարձ վստահություն: Ես հավատում եմ Ռուսաստանի մեծ ապագային... Իմ ցանկություններն եմ հայտնում ռուս մեծ ժողովրդի ամենալավագույն ապագայի առթիվ, մի ժողովուրդ, որը հանդիսանում է մեծագույն նշանակության գործոն ապագայի Եվրոպայի համար»¹:

Նանսենը խորապես զոհ էր սովետական կառավարության ջերմ վերաբերմունքից, նրա գործիչների համերաշխ աշխատանքից: Դա արտահայտվեց նաև նրա՝ 1923 թվականի փետրվարի 7-ին Լանդերին գրած նամակում. «Վերազառնալով Բեռլին այն ուղևորությունից հետո, որ հենց նոր եմ կատարել Մոսկվա, իմ մեծ երախտագիտությունն եմ հայտնում Ձեզ՝ քաղաքավարությանը ու սիրալիրությանը լի այն ընդունելության համար, որ Դուք հարմար եք գտել ցույց տալ ինձ: Ես ուզում եմ Ձեզ հայտնել, թե ինչքան եմ Ձեզ պարտական այն մշտական ջանքերի համար, որ Դուք ցուցաբերել եք այդքան ամիսների ընթացքում,

ազգնազի հեշտացնեք մեր օգնությունը Ձեր երկրին»¹: Թե՛ իր պատասխան-նամակում և թե՛ հետագայում գրած հիշողություններում Կ. Լանդերը ամենայն ուժով է շեշտում Ֆ. Նանսենի փթիարի ծառայությունները և անձնական հմայքը. «1922—23 թվականներին ես աշխատում էի շատ կողմերով բացառիկ այդ մարդու հետ, որը մեր անկեղծ բարեկամն էր և այդ ծանր օրերին մեզ մոտ եկավ առաջինը, եկավ բաց սրտով և լի ցանկությանը՝ իսկականից օգնելու մեզ... Նրա բոլոր գործերում, մտադրություններում ու ելույթներում առկա է բացառիկ անկեղծություն, ազնվություն և ողջամտություն»²:

Բարձր գնահատելով Ֆրիտյոֆ Նանսենի մարդասիրական գործունեությունը, ՍՍՀՄ Ժողկոմխորհը 1923 թվականի հուլիսին նրան հղեց շնորհակալական ուղերձ, որտեղ ասված է.

«Ժողովրդական կոմիսարների խորհուրդը հայտարարում է.

Երբ ՌՍՖՍՀ լայնատարած մարզերը, տանջված ինտերվենցիայից ու բրևկազմից, ապրում էին սովի անասելի արհավիրքներ, եվրոպական կառավարությունների մեծամասնությունը դրսևորում էր լիակատար անտարբերություն զեպի սովետական հանրապետությունների միխնալոր քաղցող գյուղացիների առապանքները: Եվ երբ նոր կազմակերպված Աղզերի լիպան նույնպես հարկ չհամարեց օգնել սովետական հանրապետությունների սովյալներին, ընդ որում պետք էր նաև պայքար մղել այդ օգնության հակառակորդների դեմ, դոկտոր Նանսենի ստեղծած կազմակերպությունը հավաստի կործանումից փրկեց անհամար մասսաների և թեթևացրեց անբերրիությանը տառապող շատ շրջանների քնակչության տանջանքները սովից:

Դ-ը նանսենի ցույց տված շոյլ օգնությունը սովետական հանրապետությունների սովյալներին երբեք չի ջնջվի սովետական միութենական հանրապետությունների քնակչության հիշողությունից: Այժմ, երբ այդ օգնությունն ավարտվում է, քանի որ անցել է սովի առաջացնող ճգնաժամը, ժողովրդական կոմիսարների խորհուրդը իր պարտքն է համարում պատանապես իր խոր երախտագիտությունը հայտնել դ-ր Նանսենին, նրա օգնականներին և նրա կազմակերպության բոլոր անդամներին:

Մոսկվա, Կրեմլ, 1923 թվականի հուլիսի 10»³:

Ֆ. Նանսենը մշտապես դարձավ սովետական երկրի մեծ բարեկամը և ակտիվ կապեր հաստատեց բազմաթիվ գործիչների ու մարդկանց հետ, որոնք բացառիկ ջերմությամբ էին խոսում նրա մասին: Ահա, օրինակ, ինչ է գրել Գ. Չիչերինը 1925 թվականի

¹ «Литературная газета», 10.10.61.

² «Московская правда», 8.10.61.

³ «Известия», 11.7.23.

¹ «Известия», 3.2.23.

Հանվարի 9-ին. «Իմ թանկագին զոկտոր նանսեն, ևս շատ շնորհակալ եմ Ձեզ՝ Ձեր բարի զգացմունքների և այն նկարի համար, որ Դուք այնպիսի սիրով ուղարկել եք ինձ: Խնդրում եմ նոր տարվա առթիվ ընդունեք իմ լավագույն ցանկությունները և իմ նկարը, որպես մեր համատեղ աշխատանքի հիշատակ»: Պատասխանելով, նանսենը գրեմ շնորհակալություն է հայտնում»¹ Ձիշերինին և նշում, որ նրա նկարը «միշտ կհիշեցնի մեր մտերմական փոխհարաբերությունների ու այն աշխատանքի մասին, որ ևս կատարել եմ Ձեզ հետ միասին և Ձեր սիրալիր օգնությամբ... Ես հպարտ եմ նրանով, որ Դուք Ռուսաստանում մեր կատարած աշխատանքը համարում եք օգտակար»²:

Այդպես էր ամենուրեք սովետական երկրում, ուր մարդիկ, սկզբնական շրջանում ծանր դրություն մեջ գտնվելով հանդերձ, ուրիշների, այդ թվում օտարերկրյա բարեկամների, հետ կիսում էին իրենց ուրախությունները և նույնիսկ մի կտոր հացը: Դրա մասին է վկայում նաև զանիացի հայտնի գրող Մարտին Անգերսեն-Նեքսեն, որը 1922 թվականին այցելեց Ռուսաստան և իր տպավորությունների մասին գրեց. «Մասաիկ կարիքի ու զրրկանքների պայմաններում ռուս մարդիկ իրենց այնպես էին պահում, որ կարծես տիրում էին աշխարհի բոլոր հարստություններին, և առանց տատանման հացի վերջին կտորը կիսում էին ամեն մեկի հետ, ով գրա կարիքն ուներ»³:

□□□

1922 թվականի դեկտեմբերին Ֆ. նանսենն արժանացավ խաղաղության նոբելյան մրցանակի Իրոք, վիթխարի էին մարդկությանը մատուցած նրա ծառայությունները, որոնց մեջ էին մտնում ռազմագերիների ու դաղթականների վերադարձը, օգնությունը Ռուսաստանի սովյալների, փոխըմբռնման ու խաղաղության հաստատումը ժողովուրդների միջև: Գումարը բավականին մեծ էր (122 հազար կրոն), քանի որ նախորդ տարում մրցանակ չէր շնորհվել: Ինչ խոսք, Ֆ. նանսենը գո՞չ էր իբրևի այդպիսի վիճակից, իհարկե, ոչ միայն նրանից, որ այժմ ինքը

կարող է ցանկացած ձևով տնօրինել նման մեծ գումար. «Այդպիսի շապտությունը հորս ուղղակի ցնցեց», — գրել է կիվ նանսենը: Նա լցվեց ավելի մեծ պատասխանատվությամբ և գտավ, որ այդ գումարը պետք է նորից ծառայի տանջված մարդկությանը: Յուցարբերելով անձնական օրինակ, նա իր նոբելյան մրցանակի գումարը տրամադրեց գաղթականների ու այլ կարիքավորների հոգսերին: Այդ ժամանակ զանիացի հրատարակիչ Քր. էրկսենը կարծես թե փոխհատուցման համար նանսենին նվեր ուղարկեց նույնքան գումար, բայց վերջինս դա ևս մտցրեց իր օգնության ֆոնդի մեջ:

Նանսենն այդ ընդհանուր գումարի մի մասը տրամադրեց Մովետական Միությունում երկու օրինակելի գյուղատնտեսական կայաններ ստեղծելուն (սրբախիթ շուտով երեան հկան Պովոլժինում և Ռկրաինայում. հետագայում դրանց հիման վրա կազմակերպվեց 2 խոշոր սովխոզ, որոնցից մեկը կոչվեց նանսենի անունով), մյուս մասը՝ հունական գաղթականներին, իսկ մնացածը մտցրեց բանկ՝ որևէ այլ երկրի գաղթականների շուտափույթ օգնության համար (նրա մահից հետո մնացորդն անցավ Աշխատանքի միջազգային բյուրոյին):

Նորից աղմուկ և աղաղակ բուրժուական երկրների ոհակցիտն շրջաններում. «Մարսափելի է, որ նանսենն օգնում է բուշերիկներին», «Նույնիսկ ինքն է դարձել բուշերիկ», «Կոմիտեերենի գաղտնի գործակալ», «Քանի ուշ չէ, նա պետք է լավ մտածի ու ևս կանգնի վտանգավոր ուղուց» և այլն: Սակայն զրպարտությունների հեղեղը չի ազդում անկոտրում նանսենի վրա, և նա հաստատակամորեն շարունակում է իր մարդասիրական գործը: Նա արդեն լավ գիտեր բուրժուական աշխարհի կառավարողներին ու բազարագետներին, որոնք «պայքարում են իշխանության համար» և կազմում «անպտուղ ցեղ»: Հենցն այդ դիրքերից էլ նրանք զեմ էին Ռուսաստանի քաղցածներին օգնություն կազմակերպելուն: Անդրադատնալով այդ հարցին, նանսենը նոբելյան մրցանակն ստանալու պահին ասաց. «Այստեղ մեղավոր են քաղաքագետները: Նրանք ներկայացուցիչներն են հաստակող ինքնազոհության, որը չի ուղում ճանաչել այլախոհներ, և այժմ նրանք մեծ վտանգ են ներկայացնում Սվրոպայի համար: Նրանք մեզ անվանում են երազողներ, բարեհոգիներ, սենտիմենտալ իդեալիստներ միայն նրա համար, որ մենք հավատում ենք բարուն: Ինչ արած, թող մենք լինենք գյուրահավատներ, բայց, ըստ

¹ Fridtjof Nansen. Brev, IV, Oslo, 1966, s. 207.

² М. Андерсен-Нексе, Собрание сочинений, т. 10, М., 1954, стр. 300; также сборник «Глазами друзей», Лениздат, 1959, стр. 196.

իս, դա այնքան էլ վտանգավոր չէ: Սակայն նրանք, որոնք համառ կերպով ծածկվում են իրենց քաղաքական ծրագրերով և դրանցով ցանկապատվում տառապող մարդկությունից, միլիոնավոր քաղցած, մեռնող մարդկանցից, ահա ուլբեր են կործանում Եվրոպան... Այժմ, քան երբեք, տառապող մարդկություններ այնպիսի թախիծով չի սպասում խաղաղության լրաբերին, մարդասիրության նախագուշակին, որը բարձրացնում է սպիտակ դրոշը, որի վրա ռուսահայ հուրհրան տառերով գրված է՝ աշխատանք: Մեզանից յուրաքանչյուրը կարող է աշխատավոր դառնալ նրա ջանակով, որը հաղթականորեն կզնա աշխարհով մեկ և նրա վրա կաճեցնի նոր սերունդ: Նանսենը խոր հավատով ազդարարում է, որ մարդկության «միակ վերկությունը բոլոր ժողովուրդների համագործակցության մեջ է»: Առանց դրա խաղաղությունը կվտանգվի, վրա կհասնի մի նոր ու համավոր պատերազմ, որը կբերի «ամբողջ ժողովուրդների կործանում»:

Նանսենի այս մարգարեական խոսքերը նոր ուժով են հրնշում այժմ և ժողովուրդներին մղում դեպի ակտիվ պայքարի՝ հանուն խաղաղության, բարեկամության ու համագործակցության:

Նանսենի ծառայությունների համաշխարհային ճանաչման յուրահատուկ խորհրդանիշ էր նրա որդու՝ Օդդի, նվերը. դա նրա ձեռքով գծված մի նկար է, որը Օդդը 1924 թվականին՝ «ծննդյան տոնի» առթիվ նվիրել է հորը: Այնտեղ պատկերված է Նանսենի գրասեղանը՝ թաղված անհամար թղթերի մեջ. վերևում վառվում է մոմը և նրա լույսն ընկնում է այդ թղթերի միջից բարձրացող մի կլոր «առարկայի» վրա, որը հիշեցնում է գլորուսի կեսը, բայց ըստ էության դա Նանսենի ճաղատ գլուխն է: Նկարի շրջա կողմը Օդդը գրել է.

Քո մոմը լուսավորում է աշխատասեղանը,
եվ այն տեսնում է ամբողջ մոլորակը:

Ֆ. Նանսենը միշտ էլ խորին հարգանքով է վերաբերվել դեպի Ռուսաստանն ու ռուս ժողովուրդը: Այն աճեց ու վերածվեց իսկական բարեկամության սովետական իշխանության պայմաններում: Դրա մի նոր ու վառ արտահայտությունն էր նրա «Ռուս-

աստանը և աշխարհը» աշխատությունը, որը սկզբում հոդվածաշարի ձևով լույս տեսավ 1922 թվականին ֆրանսիական «L'Information» թերթում և այս 1923 թվականին առանձին գրքով հրատարակվեց ռուսերեն: Նույն տարում կայացրում Քրոկհատուզի հրատարակությամբ լույս տեսավ այդ գրքի գերմաներեն տարբերակը՝ «Ռուսաստանը և խաղաղությունը» վերնագրով:

Ամենից առաջ պետք է նշել, որ ի հակադրություն բուրժուական զրպարտությունների, Նանսենը օրյեկտիվորեն պատմում է իր տեսածն ու լսածը: Նա ուղղակի շեշտում է, որ «Ռուսաստանի իրադարձությունների լուսաբանումը արևմտյան մամուլի մեծ մասի կողմից շատ հեռու է ճշմարտությունից, իսկ առավել վատն այն է, որ չի ցուցաբերվում նվազագույն ցանկություն՝ հասկանալու ճշմարտությունը»: Նանսենը վճռականորեն դատապարտում է այդ թշնամական վարվելակերպը. «Մի՞թե բարոյական իրավունք կա բացասաբար գրելու մի այնպիսի երկրի մասին, ինչպիսին է նոր Ռուսաստանը, որտեղ ժողովուրդը ոչ հեռավոր անցյալում զրկված էր ամեն մի քաղաքական իրավունքից»:

Այնուհետև մեծ հումանիտար անաշտ կերպով պատմում է իր տպավորությունները, որոնք ստացել էր Սովետական Ռուսաստան կատարած այցելությունից, Մ. Կալինինի, Գ. Չիլերիների, Ֆ. Չերժինսկու, Ա. Լոնաչարսկու և ուրիշների հետ ունեցած հանդիպումներից, նկարագրում երկրի տնտեսական ու կուլտուրական դրությունը, կատարում հետաքրքիր խորհրդածություններ:

Նանսենը ցույց է տալիս, որ «Ռուսաստանը համաշխարհային առաջընթացի հաստատուն գործոն է և ունի հոգևոր ու նյութական մեծ նշանակություն»: Նա սերտորեն կապված է Եվրոպայի ու ամբողջ աշխարհի հետ: Ուստի, չի կարելի նրան բոլորովին կամ շեղորացնել. «Հետևապես ավելի կամ պակաս հեռատես մարդը չի կարող մտածել, որ կարելի է Ռուսաստանը կտրել Եվրոպայից և նրան թողնել ինքն իրեն այնպես, որ դա վճռականորեն շագրի ամբողջ Եվրոպայի օրգանիզմի բարեկեցության ու ապագայի վրա»:

1 Fridtjof Nansen, Rußland und der Friede, Leipzig, F. A. Brockhaus, 1923, S. 47.

2 Фрицьоф Нансен, Россия и мир, Госиздат, М.-П., 1923, стр. 15.

և վրոպակիան տնտեսության անողջացման համար պետք է շուտափույթ վերականգնել Ռուսաստանի էկոնոմիկան և առևտրական կապեր հաստատել նրա հետ: Նա նշում է, որ հենց այդպես են մտածում նաև սովետական ղեկավարները: «Այն դրույցներին, որ ունեցել եմ... սովետական շատ գործիչներին հետ, ես ստացել եմ որոշակի տպավորություն, որ Ռուսաստանի վերականգնման և արտասահմանի հետ նորմալ ապրանքափոխանակության վերսկսման հարցը առաջնակարգ տեղ է զբաղում ապագայի վերաբերյալ նրանց հայացքներում»¹:

Մինչդեռ արևմտյան տերությունների կառավարողները վարում են «սանիտարական կորդոնի», տնտեսական բլոկադայի քաղաքականություն և զրանով վնաս հասցնում նաև իրենց երկրներին: Կասկածից վեր է, որ նրանք առաջնորդվում են քաղաքական մոտիվներով, մահացու թշնամությամբ դեպի բանվորագյուղացիական պետությունը: Նանսենը, կոմունիստ չլինելով հանդերձ, մերժում է նման դիրքորոշումը և գտնում, որ ամեն մի երկրի հասարակական կարգը որոշում է նրա ժողովուրդը: Այդպես են վարվել նաև Ռուսաստանի ժողովուրդները, որոնք հեղափոխության միջոցով տապալեցին իրենց համար անտանելի կարգերը և հաստատեցին սովետական իշխանություն: «Որքան ես խորն եմ մտածում Ռուսաստանի դրության մասին հեղափոխության նախօրյակին, — գրել է Ֆ. Նանսենը, — այնքան ամբանում է իմ հավատը, որ շափավոր ու սահմանադրական կառավարության հաստատումը հոգեբանորեն անհնար էր: Ռեակցիոն ցարիզմից այլքը պետք է հասնել մինչև կոմունիզմ ու պրոլետարիատի ղեկավարությամբ»²: Նա ցույց է տալիս, որ ցարիզմի ժամանակ ռեպրեսիվներ չունեին որ մի քաղաքական իրավունք» և զգուշանում էր լիակատար տգիտության ու ծայրահեղ կարիքի մեջ», «հին ունեցիկները դաժան գործողություններն ու քաղաքական հետապնդումները սովորական երևույթ էին», մինչդեռ բոլշևիկները վերացրին զրանք և երկրի կառավարումը հանձնեցին սովետներին, որոնք «կազմված են աշխատանքի տարբեր կատեգորիայի ներկայացուցիչներից»:

Այնուհետև, խարազանելով թշնամական դրպարությունները բոլշևիկների հասցեին, նանսենը նշում է, որ նրանք իրենց

ժառանգակերպի ու ապրելակերպի գլխավոր սկզբունքն են դարձրել աշխատանքը, վերացրել դասային ու ժառանգական արտոնությունները: Չէ որ «անարդարացի է, երբ ոմանք չեն աշխատում և ապրում են հասարակության հաշվին, ինչպես պարագիտներ, իսկ մյուսները հարկադրված են կատարել ուժից վեր աշխատանք»: Նանսենը համակրանքով է վերաբերվում գեպի աշխատանքային ընդհանուր պարհակությունը սովետական երկրում, այդ թվում նախկին արիստոկրատ կանանց աշխատեցնելը: Չէ որ կյանքը կառուցվում է աշխատանքի վրա, բոլոր նյութական ու հոգեոր բարիքները ձեռք են բերվում աշխատանքի միջոցով և ոչ մեկը չպետք է անմաս մնա այդ կենսարար պրոցեսից: Ամփոփելով իր մտքերը սովետական կարգերի վերաբերյալ, նանսենը գրում է. «Ընդհանուր ամամբ պետք է ընդունել, որ բոլշևիկների կողմից 1917 թվականին պրոպագանդայից զազափարները հանգեցին զրական արդյունքների. հին բանակի լիկվիդացման, սոցիալական հիերարխիայի վերացման և այլն»¹:

Բոլշևիզմի ակնառու նվաճումներից է այն, որ Ռուսաստանը դուրս եկավ ավերիչ պատերազմներից ու ձեռնամուխ եղավ խաղաղ շինարարության: Հարկավոր էր վերականգնել քայքայված տնտեսությունը, բնակչությանն ապահովել առաջին անհրաժեշտության մթերքներով ու ապրանքներով: Գա ծանր գործ էր և պահանջում էր ուժերի գերազույն լարում: Սովետական կառավարությունը դիմեց խելացի ու վճռական գործողությունների, այդ թվում տապալված շահագործողների ունեղրկման, որի առթիվ թշնամիները մեծ ազմուկ բարձրացրին: Նանսենը գրում է. «Արտասահմանում ամբողջ ժամանակ խոսում են կարմիր բանակի կողմից կատարված սեկվիզիցիաների մասին... բայց խիստ մոռանում են կողոպուտի ու տնորի այն սիստեմի մասին, որը մտցվում էր ռուսական գյուղերում Գենիկինի, Կոլչակի և Վրանգելի բանդաների կողմից»²: Այստեղ պետք է շեշտել նաև օտարերկրյա ռազմական ինտերվենցիայի պատճառած զոհերն ու զրկանքները:

Այնուամենայնիվ, կոմունիստները, սովետական ժողովուրդները ընկճվեցին և դիմեցին աշխատանքային սխրագործության: Նրանք, հակառակ իմպերիալիստական պետությունների

1 Ф. Нансен, Россия и мир, стр. 17.
2 Նույն տեղը, էջ 31:

1 Ф. Нансен, Россия и мир, стр. 36.
2 Նույն տեղը, էջ 77:

թշնամական քաղաքականության, Ռուսաստանը ոտքի կանգնեցրին և վերականգնեցին ժողովրդական տնտեսությունը: Ինչպես նկատում է Նանսենը, դրան նպաստեց նէպը, որը հմտորեն կիրառեցին բոլշևիկները: Անպայմանորեն խրախուսելի էր նաև հին մասնագետների օգտագործումը, որի վրա հատուկ ուշադրություն դարձրեց Լենինը: Գրանցից Նանսենը հիշատակում է, օրինակ, Ն. Կուտլերին, որը նախկին ցարական ֆինանսական գործիչ էր, ապա կաղետ, իսկ այժմ իր լոյալություն շնորհիվ դարձել էր սովետական բանկի էմիսիոն բաժնի պետը:

Անժխտելի են նոր Ռուսաստանի նվաճումները ոչ միայն տնտեսության, այլև մշակույթի ասպարեզում: Նանսենը նշում է, որ Ռուսաստանը թեև նախկինում էլ «աշխարհին տվել է մեծ գիտնականներ ու հանճարեղ գրողներ, բայց կոպիտ ու կասկածամիտ ինքնակալությունը խանգարում էր երկրի մտավոր կյանքի ազատ զարգացմանը»: Սովետական իշխանությունը վերջ տվեց այդ խայտառակ վիճակին և «զաստիարակության ասպարեզում նույնպես, ինչպես տնտեսության կազմակերպման ասպարեզում, հեղափոխությունը նշանավորեց լիակատար հեղաշրջում»: Նանսենը խոսում է բնագնացի ու պարտադիր կրթության, դպրոցների, կուլտուր-լուսավորական ու գիտահետազոտական հիմնարկների ստեղծման մասին, ժողովրդական զանգվածների կուլտուրական խանդավառության մասին. «Ռուս մեծ ժողովրդի անկեղծ բարեկամները կարող են միայն ցանկալ, որ այժմ սովետական դպրոցներում մարքսիստական տեսությամբ դաստիարակվող սերունդը իր ուժերը լավագույն ձևերով կիրառի գործնական աշխատանքում, քանի որ, վերջ ի վերջո, միակ արժանի սոցիալական ու տնտեսական կազմակերպությունն այն է, որը ծնվում է փորձով ու ամենօրյա աշխատանքով»¹:

Նանսենը հիացած էր երիտասարդ սովետական պետության հաջողություններով արվեստի բնագավառում: Նա, մասնավորապես այցելելով Մոսկվայի մի քանի թատերական ներկայացումներ, ասաց. «Նա եկել եմ, որ օգնեմ Ռուսաստանին, բայց տեսնում եմ, որ թատրոնի ասպարեզում Ռուսաստանը կարող է մեզ օգնել»²:

Ակներև էր նաև սովետական երկրի ձգտումը արտասահմանի հետ գիտակուլտուրական կապեր հաստատելու գործում: Նանսենը դրական է համարում սովետական կառավարության ջանքերն իր ուսանողների մի մասին արտասահման ուսուցման ուղարկելը, առանց քաշվելու ուրիշ երկրների գիտատեխնիկական նվաճումներն օգտագործելը: Սովետական իշխանությունը միշտ էլ հոգ է տանում գիտության զարգացման նկատմամբ: Ահա ինչ է ասում Նանսենն այդ մասին. «Անարդարացի կլինի շքեղանք, որ բոլշևիկյան հեղափոխությունը, նույնիսկ ամենակրիտիկական շրջանում, համեմատաբար ավելի շափավոր էր գիտության մարդկանց նկատմամբ, քան մյուս հեղափոխությունները: Նրբանք... կանոնավոր կերպով ստանում էին պետական օրապահակներ»: Իրոք, սովետական կառավարությունը մեր երկրի ծանր պայմաններում հոգատարությամբ շրջապատեց այնպիսի գիտնականների, ինչպիսիք էին Պավլովը, Տիմիրյազևը, Զիլիկովսկին և շատ ուրիշներ: Նանսենը հիշատակում է Մ. Գորկու գլխավորած կոմիտեն, որը Լենինի ցուցումով նյութական օգնություն էր ցույց տալիս մտավորականներին:

Ամփոփելով իր մտքերը, Նանսենը պատկերավոր ձևով գրում է. «Ռուսաստանը գտնվում է առողջացող հիվանդի վիճակում, որի կյանքը դեռ նոր միայն վերականգնվում է. հենց որ վնասված օրգանները բուժվեն և սկսեն գործել, արյան արագ շրջանառությունը կվերականգնվի»¹: Նա շեշտում է, որ Ռուսաստանը լայնածավալ երկիր է, բնական մեծ հարստություններով, աշխատասեր ու տաղանդավոր մարդկանցով: Նրա լիակատար կազդուրումը և զարգացումը պետք են համաշխարհային հավասարակշռության ու առաջընթացի համար: Այստեղից էլ բոլոր երկրների տնտեսական ու կուլտուրական համագործակցության անհրաժեշտությունը: Կյանքը հաստատեց այդ կանխատեսումը, և կապիտալիստական երկրները հարկադրված եղան տնտեսական ու դիվանագիտական կապերի մեջ մտնել բանվորագյուղացիական պետության հետ: Այդ առթիվ Վ. Ի. Լենինը դեռ 1921 թվականի դեկտեմբերին ասել է. «Մենք գիտենք, որ մեզ բլոկադայի ենթարկողների տնտեսական դրությունը խոցելի դուրս եկավ: Կա ավելի մեծ ուժ, քան թշնամի կառավարություններից կամ դասակարգերից ամեն մեկի ցանկությունը, կամքն ու վճիռը, այդ

¹ Փ. Իանսեն, Россия и мир, стр. 131.

² Э. Мидлин, Необыкновенные собеседники. Книга воспоминаний, М., 1968, стр. 212.

¹ Փ. Իանսեն, Россия и мир, стр. 50—51.

ուժը ընդհանուր տնտեսական համաշխարհային հարաբերություններն են, որոնք նրանց ստիպում են թեևակոխել մեզ հետ հարաբերությունների այդ ուղին»¹:

Նանսենի գրքում կան նաև անընդունելի կամ վիճելի տեղեր, բայց նրա առանցքը կազմում են դեպի Ռուսաստանն ու ռուս մեծ ժողովուրդը տածած խոր հավատն ու վառ լավատեսությունը: Նա գտնում է, որ միանգամայն օրինական է «իրերի բնական ընթացքը» Ռուսաստանում, ընդ որում՝ ռուս ժողովուրդը ցուցաբերեց բացառիկ հաստատակամություն թե՛ հեղափոխության ժամանակ և թե՛ նրանից հետո՝ հաղթահարելով բաղձապիսի դժվարություններ և բռնելով փայլուն գալիքի ուղի: «Կարելի է կասկածել Արևմտյան Եվրոպայի և արևմտասեփոփայական մշակույթի ապագա հնարավորությունների վրա, բայց հազիվ թե կասկած լինի, որ ռուս ժողովրդին սպասում է մեծ ապագա և մեծ միսիա Եվրոպայի ու աշխարհի կյանքում... Ինձ համար լիովին հավանական է, որ երբ ոչ հեռավոր ապագայում Եվրոպային կզա նյութական փրկություն, ապա դա կկատարի ոչ միայն Ռուսաստանը, բայց հենց այնտեղից կզա նաև հոգևոր նորոգումը: Ուստի, ինձ թվում է, որ հենց այժմ Արևմտյան Եվրոպայի համար խիստ կենսական է հատուկ ուշադրություն դարձնել ռուս ժողովրդին և մեծ Ռուսաստանում արագությունը փոփոխվող պայմաններին»²:

Կատարյալ մարգարեություն... Նանսենը մարդկային խոր ընկալողով ու հոգով զգում էր մեծ վերափոխումների արգասավոր հեքը: Գրա պերճախոս վկայությունն է նրա շերտ վերաբերմունքը դեպի Վ. Ի. Լենինը: 1922 թվականի փետրվարին Նանսենը Լենինի մասին գրել է. «Ես, դժբախտաբար, անձնապես նրան չեմ հանդիպել, բայց նրա գործերից կարելի է եղբայրացի, որ նա բոլոր դեպքերում այնպիսի մարդ է, որը հաշվի է նստում իրականության հետ»³: Ապա Նանսենը թվարկում է Լենինի այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են պարզությունը, մարդկայնությունը, իմաստնությունը, սկզբունքայնությունը, վճռականությունը: Նա իր վիշտը հայտնեց Լենինի մահվան առթիվ՝ 1924 թվականի հունվարի 24-ին հեռագրելով Գ. Չիչերինին. «Խնդրում եմ հայտնել ռուսական կառավարությանը իմ

խոր ցավակցությունը սուս ժողովրդի անփոխարինելի կորստի՝ ականավոր առաջնորդի մահվան առթիվ»¹: Նանսենը «հատուկ հրավերք էր ստացել մասնակցելու Լենինի թաղմանը 1924 թվականին, բայց նա չկարողացավ գալ: Նրա փոխարեն եկավ իր աեղակալը՝ Հերմոլդ Լանունգը, որը գնում էր Լենինի դագաղի հետևից...»²: Հետաքրքիր է նաև Նանսենի ինտերվյուն «Arbeiderbladet» լրագրի թղթակցին: Նա ասում էր, որ «Լենինի մահը մեծագույն կորուստ էր» և «շատ զժվար է նրան փոխարինող գտնել»: այդ «խելոք ու տաղանդավոր մարդը» ապրում էր «համեստ ու զուսպ կերպով, անձնապես անշահասեր էր և ուներ ամենամեծ ազդեցությունը»: «Նրա կյանքը անձնագրություն էր»:

Հետագայում էլ Նանսենը տարբեր առիթներով իր հիացմունքն է արտահայտել Լենինի վերաբերյալ: Այսպես, նա 1928 թվականի ապրիլին Օսլոյում լսելով հայտնի երաժիշտ (զաշնակահար) Իսալ Գորբովիչին, որը նվագեց Բեթհովենի «Պաթետիկականը» ու «Ապասիոնատը», ստացավ մեծ բավականություն և նրան նվիրեց իր նկարը շերտ մակագրությունը. «Հիացմունքով և շնորհակալությամբ այն անմոռաց ժամերի համար, որ Ձեր երաժշտությունը ինձ տարավ լավագույն աշխարհ»³: Ինքը՝ Գորբովիչը ուղղակի գերված էր լեզենդար և այնքան պարզ ու հմայիչ Նանսենով, որին անվանում է «լուսամիտ, հիասքանչ մարդ, ուժեղ և վստահ իր գործի ճշմարտության մեջ...»:

Նանսենի հոգին ավելի պարարտացավ, երբ Գորբովիչից իմացավ, թե ինչպես Վ. Ի. Լենինը՝ Մ. Գորկու հետ միասին 1920 թվականին Մոսկվայում լսել ու գերվել են հանճարեղ կոմպոզիտորի վերոհիշյալ ստեղծագործություններով իր կատարմամբ: Հիշենք Լենինի խոսքերը. «Ոչինչ չգիտեմ ավելի լավ «Ապասիոնատից», պատրաստ եմ այն լսել ամեն օր: Զարմանահարաշ, աստվածային երաժշտություն է: Ես միշտ էլ հպարտությամբ, գուցե միամտորեն, մտածում եմ, թե մարդիկ ինչ հրաշք-

1 Վ. Ի. Լենին, ԵԺԺ, հ. 44, էջ 360.

2 Fridtjof Nansen, Rußland und der Friede, S. 6, 8.

3 Russland und die Welt, S. 15.

1 Fridtjof Nansen, Brev, IV, Oslo, 1966, s. 258.

2 E. Danielsen, Norge-Sovjetunion. Norges utenrikspolitikk overfor Sovjetunion 1917—1940, Oslo, 1964, s. 134.

3 М. Добровейн, Страницы жизни Исаия Добровейна, М., 1972, стр. 97.

ներ են գործել»¹։ Իսկ Գործովեյին վաղիմիբ հլիչը անվանել է Отличновейн, Прелестновейн, Чудесновейн. Նանսներ նոր ուժով զգայ Անինի հոգու բազմերանգ հարստութունն ու վեհութունը...

□□□

Չնայած նանսներ վերջին տասնամյակում միբճվել էր հասարակական կյանքի մեջ և բազիս բուն իմաստով դարձել մարդկության ծառան, բայց նա երբեք չկտրվեց իր սիրած գիտությունից և փափագում էր նորագույն տեխնիկայի (հասկապես դիրիժաբլի կամ օդանավի) օգնությամբ մեկնել Հյուսիսային բևեռ, սառույցի վրա կազմակերպել դրնյֆող գիտական կայան ու զբաղվել Արկտիկայի մանրամասն հետազոտությամբ։ Գեռ 1924 թվականին նանսնի նախաձեռնությամբ ու զեկավարությամբ ստեղծվեց Արկտիկայի ուսումնասիրման (օդանավի օգնությամբ) միջազգային ընկերություն («Ակրոարկտիկ»), որն զբաղվեց Հյուսիսային բևեռ մեկնող արշավի նախապատրաստությամբ։ Գրա իրականացման համար նանսներ գործարար կապերի մեջ էր սովետական գիտնականների հետ և մասնավորապես աշխույժ նամակագրություն ուներ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Ա. Կարալինսկու հետ։ Նա ստացավ հատուկ հրավեր մասնակցելու ԳԱ 200-ամյակի տոնակատարությունը, որը տեղի ունեցավ 1925 թվականի սեպտեմբերին։ Օսլոյում, ՏԱՍՍ-ի թղթակցի հետ ունեցած զրույցում, նանսներ ափսոսանքով նշեց, որ ժնև մեկնելու կապակցությամբ (Ազգերի լիգայում պետք է բննարկվելին կարևոր հարցեր՝ իր մասնակցությամբ) չի կարող մասնակցել այդ հորեյանին, բայց իր սրտատուչ ողջույնն է հղում և հաջողություններ ցանկանում։ Նա նշեց, որ «ակադեմիայի նշանակությունը վիթխարի է համաշխարհային գիտության համար» և մասնավորապես ինքը նրանից ստացել է մեծ ու շնորհակալ օգնություն՝ իր հյուսիսային արշավների ժամանակ։ Այժմ ակադեմիայի գործունեության հնարավորություններն ավելի են մեծացել, քանի որ «Միության գիտական կյանքն առողջ է, ուժեղ և ազդեցիկ։ Վերականգնված ակադեմիայի բնտրած ուղին բացում է նոր դարագլուխ գիտական աշխարհում... Լայնածավալ ու բազմերանգ

Միությունը, որն իր սահմանների մեջ ընդգրկում է բազմաթիվ ժողովուրդների, տալիս է գիտական որոնումների անսահման հնարավորություններ, որոնք շնև կարող վճռական նշանակություն չունենալ ամբողջ մարդկության համար»¹։ Սովետական գիտնականներն իրենց գոհունակությունն ու համերաշխությունն արտահայտեցին նանսներին։

Մշտական հոգսերով ծանրաբեռնված նանսներ հետևողականորեն նախապատրաստվում է արդիական գիտական արշավ կազմակերպել դեպի Հյուսիսային բևեռ։ Գրա համար նրա նախագահությամբ տեղի ունեցավ միջազգային երկու խորհրդակցություն Բեռլինում (1926 թ.) ու Լենինգրադում (1928 թ.) և արդեն նախատեսված էր 1929 թվականին մեկնել։ Միաժամանակ նանսներ խմբագրում էր «Արկտիկա» ժուռնալը և մտահոգվում արշավախմբի համար միջոցներ հայթայթելու գործով (այդ նպատակով նա դասախոսությունների մեկնեց Կանադա ու ԱՄՆ)։

Նանսներ հույս ուներ նաև, որ նորից կայցելի Սովետական Հայաստան և որքան կուրախանար նա՝ տեսնելով, թե ինչպես հայ ժողովուրդը սեփական երկրում ապրում է տնտեսական ու կուլտուրական աննախընթաց վերելք, իսկական վերածնունդ՝ իր գիրկն առնելով աշխարհացրիվ գաղթականներին։

Դժբախտաբար, նանսներ ֆիզիկապես ի վիճակի չեղավ կատարելու իր իղձերը։ Նա մահացավ 1930 թվականի մայիսի 13-ին՝ սգի մատնելով առաջադեմ մարդկությանը։ Ինչ արած, հզոր արծիվներն էլ են փակում աչքները, բայց նրանց տիեզերական թռիչք խոր ակոս է թողնում անձայրածիր երկնակամարում։ Նանսներ թաղվեց Նորվեգիայի ազդային տոնի օրը՝ մայիսի 17-ին, իր տան բակում, թխկենու տակ, և նրա համեստ գերեզմանաքարը ևս յուրովի հուշում է աշխարհի բոլոր այցելուներին, թե ինչպես պետք է ապրել ու խիզախել։ Զրիտյոֆ նանսներ պատմությանը հայտնի այն հազվագյուտ աշխարհահռչակ գիտնականներից էր, որը վճռականորեն դուրս եկավ իր մասնագիտության շրջանակներից, անմիջապես որոնե սուզվեց միլիոնավոր տանջված մարդկանց հոգսերի մեջ և դարձավ մեծ մտածողի ու հումանիստի մարմնավորման տիպար։

Մարդկության բարի հանձար Զրիտյոֆ նանսներ հաջողության ուղեկիցն է...

¹ М. Горький, Собрание сочинений в 30-и томах, т. 17, стр. 39.

¹ «Известия», 6. 9. 25.

ԱՌԱՋԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ

ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տրիտոյֆ նանսենը, որպէս կրթված մարդ, հանրագիտակ ու հումանիտ, վաղուց գիտեր հայ ժողովրդին, ծանոթ էր նրա եղբրական ու հերոսական պատմությանը և մշտապես ու ամբողջ հոգով պաշտպանեց նրան: Բազմախորհուրդ էն նանսենի խոսքերը. «Ինձ դժվար է հավատալ, որ որեւէ մեկը կարող է ծանոթանալ այդ նշանավոր ժողովրդի պատմությանը, առանց խորապէս ցնցվելու նրա մեծ ողբերգութունից»¹: Առավել ևս դա անհերելի կլինէր ժամանակակիցների ու ականատեսների համար:

Ստացվեց այնպէս, որ շատերի հետ միասին նանսենը հայ ժողովրդի կյանքին իրազեկ դարձավ ոչ միայն բազմապիսի գրականության միջոցով, այլև իրական զեպերի ազդեցության տակ, զեպեր, որոնք սրտակեղեք էին ու դայրացուցիչ: Խոսքը թուրքական հայասպան ոճրագործութունների մասին է, որոնք ուժեղացան հատկապէս 19-րդ դարի վերջերից, այսինքն՝ այն ժամանակաշրջանից, երբ յայնուրէն ծավալվեց նանսենի գիտական ու հասարակական գործունեությունը: Մի այդպիսի նրբազգաց մարդասիր ոչ միայն չէր կարող անտարբեր մնալ Օսմանյան կայսրութունում տեղի ունեցող աներևակայելի վայրագությունների հանդեպ, այլև վճռականորեն դատապարտեց

թուրքական «ղուումը»: Իրա կատաղի կիրառողն էր սուլթան Աբդուլ Համիդ 2-րդը, որին նանսենը համարեց «արյունարբու հրեշ, որը հաճույք էր զգում հազարավոր հայեր ոչնչացնելով»²: Նա 1894—96 թվականներին կազմակերպեց հայերի մասսայական կոտորածներ, որոնց զոհ գնաց 300 հազար մարդ: Համառարած ջարդեր եղան Կ.Պոլսում, Տրապիզոնում, Վանում, էրզրոնում, Սեբաստիայում, Խարբերդում և այլուր: Այդ ահավոր եղեռնի մասին նանսենը գրել է. «Սուլթանն ազդանշան տվեց, և հայկական բոլոր քաղաքների ու գյուղերի վրա ամպեր կուտակվեցին: Չինված խաժամուժ ամբոխը՝ ոստիկանության առաջնորդութեամբ, բրդերը՝ սուլթանի համիդեական հեծյալ զորամասերի հետ միասին, և թուրքերը հարձակվեցին անդն հայերի վրա: Կանոնավոր բանակը կարգ էր պահպանում, որպէսզի «աշխատանքն» առաջ գնար անշեղորեն և միջամտում էր այն դեպքում, երբ հայերը փորձում էին պաշտպանվել իրենց թաղամասերում. նրանց ուղղակի հարվածում էին հրանոթներից: Սուլթանի կազմակերպած ավազակախմբերը «աշխատում էին» դոհացուցիչ կերպով և հայերի արյունը հոսում էր գետի նման»²:

Թուրքական բռնակալության կողմից կազմակերպված այդ սպանդն առաջ բերեց աշխարհի ժողովուրդների ու առաջադեմ մարդկության դատապարտող բողոքը: Բայց եվրոպական տերութունները, հակառակ իրենց խոստումներին՝ օգնելու «բրիտանոնյա եղբայրներին», ոչինչ չարին հայերի դրությունը բարելավելու համար: Այդ առթիվ նանսենը մասնավորապէս գրել է. «Եվրոպայից հայերի սրտառու շատ բարեկամներ օգնութուն ուղարկեցին՝ նրանց կարիքները մեղմացնելու համար, բայց եվրոպական կառավարութունները զգալի ոչինչ չարեցին»³: Առավել արգահատելի էր իմպերիալիստական Գերմանիան, որը դարձավ սուլթանական Թուրքիայի հովանավորը և անմիջապէս ու ակտիվորեն աջակցեց հայկական կոտորածներին: Իդուր չէ, որ Վիլհելմ 2-րդը 1898 թվականին բարեկամաբար այցելեց Կ. Պոլիս, սեղմեց Աբդուլ Համիդի «արյունաթափ» ձեռքը և ողջազուրկեց նրա հետ: Իրար գտել էին երկու մարդակեր հրեշները...

1 Fr. Nansen, Betrogenes Volk, S. 297.
 2 Նույն տեղը.
 3 Նույն տեղը, էջ 298:

1 Fr. Nansen, Betrogenes Volk, F. O. Brockhaus/Leipzig, 1928, S. 7.

Բուրբահայատակ ժողովուրդների և հատկապես հայերի գյուղացիները բոլորովին շփոթվեց նաև սուլթան Աբդուլ Համիդի գահընկեցությունից հետո, երբ գինվորական վերնախավային հեղաշրջումով իշխանության գլուխ անցավ նոր զարգացող Թուրքական բուրժուազիան կամ «երիտթուրքերի» ռազմատենչ շտաբի ստանկան կուսակցությունը, որի պարագլուխներն ուսանել էին հատկապես Գերմանիայում և սովորել մարդասպանության նորագույն մեթոդները. «Հայերի ճնշումը երիտթուրքերի կողմից, — գրել է Ֆ. Նանսենը, — տարբերվում է Աբդուլ Համիդի ու հին կառավարության հալածանքներից նրանով, որ այն կատարվում էր խնամքով մշակված մեթոդիկ պլանով և այդ պատճառով ավելի վտանգավոր էր: Չէ որ այդ պարտնեկներից շատերը ունեին եվրոպական դաստիարակություն: Կան շատ փաստաթղթեր, որոնք ապացուցում են, թե ինչպես ղեկ համաշխարհային պատերազմի բռնկումից առաջ որոշված էր «նվազեցնել» բրիտանյա հայ ժողովրդին»¹:

Այդպիսին էր դաժան իրականությունը: Երիտթուրքերի իշխանության ծնունդը նշանավորվեց 30 հազար հայերի ոչնչացմամբ Ադանայում, իսկ առաջին աշխարհամարտի ժամանակ տեղի ունեցավ պատմության մեջ մինչ այդ չտեսնված գենոցիդ, արևմտահայության արտաքսում ու բնաջնջում, որին զոհ գնաց մեկուկես միլիոն մարդ: Դա գերմանա-թուրքական գինակցության նախօրոք կազմած հրեշավոր ծրագիրն էր, որն իրականացվեց սադիստական կատաղությամբ և, ինչպես նշել է Նանսենը, «իր նմանը չունի պատմության մեջ: Կիլիկիայի, Անատոլիայի ու Միջագետքի բոլոր գյուղերից ու բաղաձիներից հայերը քշվեցին մահվան երթերի: Պլանաշափորեն դատարկվում էին շրջանները մեկը մյուսի ետևից՝ անկախ նրանից, մոտ էին պատերազմական ռազմաբեմին, թե հարյուրավոր կիլոմետր հեռու էին նրանից: Վերջապես, կարելի էր հիմնովին վերացնել այն ամենը, ինչը կարող էր հային ղեկ կյանք տալ...»²: Ահա ինչպիսին էր Թուրքական կառավարողների նշանաբանը. կոտորած, ավերածություն, կողոպուտ, գաղանթություններ:

Ֆ. Նանսենը ցույց է տվել, որ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայերի մասսայական բնաջնջումը իր

մասշտաբներով ու դաժանությամբ գերազանցում էր մինչ այդ տեղի ունեցած բոլոր կոտորածները: Այդպես են արտահայտվել նաև բազմաթիվ անաչառ հետազոտողներ ու մտածողներ: Ֆրանսիացի ակադեմիկոս Գրոդ Հանրի Բարբյուսը ասել է. «Եթե բաժանես առանձին զրկագների այն ողբերգությունները, որ ապրել է մարդկությունը իր գոյության ամբողջ ընթացքում, դրանցից ամենասարսափելին, անշուշտ, հայ ժողովրդի մարտիրոսությունն է»¹: Ակնհերև է, որքան մեծ է ոճիրը, այնքան արգահատելի է հանցավորը:

Թուրքական բռնակալների նպատակն էր իսպառ բնաջնջել ողջ հայությունը, բայց ի դերև եղավ այդ զառանցանքը: Նույնիսկ առաջին աշխարհամարտի դաժան մղձավանջում հայ ժողովուրդը մղեց անձնվեր գոյամարտ, կատարեց հերոսական «խրանքներ վանում ու Շատախում, Շապին-Կարահիսարում ու Մուսա լեռան վրա: Նա ապրեց մահվան սարսափ, բայց շխտեարժեց անարգ ոսոխի առաջ, ցրվեց աշխարհով մեկ, բայց շրկվեց սուրբ հայրենիքից, հասավ փրկության եզրը և նորից բողոքեց սովետական ավետյաց երկրում:

Վերջապես ավարտվեց առաջին համաշխարհային պատերազմը, և հաղթական «զաշնակիցները» նստեցին հաշտության կլոր սեղանի շուրջը: Թվում էր, նրանք չէին մոռանա իրենց «փոքր զաշնակիցին», ինչպես կոչում էին Հայաստանը պատերազմի ժամանակ, երբ Անտանտի շահերի համար պետք էր քամել հայերի հյութերն ու նույնիսկ զոհել նրանց: Բայց ոչ, իմպերիալիստները հավատարիմ էին իրենց փողի քսակին. մավրը կատարել էր իր գործը, մավրը պետք է հեռանար ձիշտ է, 1920 թվականի օգոստոսի 10-ին կնքվեց Սևրի պայմանագիրը զաշնակիցների և Թուրքիայի միջև, որով ճանաչվում էր էրզրումի, Վանի, Բիթլիսի ու Տրապիզոնի վիլայիթներից կազմված ինքնուրույն հայկական պետության ստեղծման գաղափարը, բայց զա մնաց սոսկ թղթի վրա:

Նանսենը փաստերի ուժով մերկացնում է մեծ տերությունների դիվանագիտական խաղերը հայկական հարցի շուրջը, երբ նրանք ամեն առիթով օգտագործում էին այն, որպեսզի, սոսկ ճնշում գործադրելով Թուրքիայի կամ միմյանց վրա, ապահովեն իրենց շահերն ու դիրքերը: Այստեղ էլ նրանց շատ որոշակի գործելակերպը՝ խոսքով ձևանալ բարերար, հանդես գալ մարդ-

¹ Fr. Nansen, Betrogenes Volk, S. 306.

² Նույն տեղը, էջ 313:

կայնության անունից, նույնիսկ բազմապիսի խոստումներ տալ, իսկ գործով՝ կատարել հակառակը, հոսեցնել անմեղ մարդկանց ու ժողովուրդների արյունը, հարստանալ ու հզորանալ նրանց կյանքի գնով: Հենց այդպես վարվեցին նրանք նաև հայ ժողովրդի հետ, պատերազմի ժամանակ նրան օգտագործեցին որպես թնդանոթի միս, փաստորեն նպաստեցին հայասպանության թուրքական ծրագրի կենսագործմանը, իսկ հետո էլ բոլորովին «թաղեցին» հայկական հարցը, անգամ նվազագույն օգնություն չույց չտվին հայ գաղթականներին, որոնք, զրկված իրենց հայրենական օջախներից, ցրվել էին աշխարհով մեկ:

Այդպիսին է ընդհանրապես կապիտալիզմի բնույթը, և նրա ողջ պատմությունը զրկված է հրով ու սրով, արյունալից պատերազմներով, կոզոպուտով, ավերումով: Գա առավել ևս ակներխ է դառնում իմպերիալիզմի դարաշրջանում, երբ ուժեղանում է ռեակցիան հասարակական կյանքի բոլոր բնագավառներում, երբ վտանգի է ենթարկվում նույնիսկ ամբողջ ժողովուրդների գոյությունը: Առաջին աշխարհամարտը իմպերիալիզմի ծնունդն էր և անհամար զոհեր ու զրկանքներ պատճառեց մարդկությանը: Անկախությունից զրկված փոքրամիջ հայ ժողովուրդը հարկազրաբար ներքաշվեց պատերազմի հորձանուտը և տուժեց համեմատաբար բոլորից շատ: Առաջագեծ մարդկանց հետ միասին նանսներ նշավակեց այդ ոճիրն ու նրա հանցավորներին:



Կիովին սահմանադատվելով իմպերիալիստական պետությունների նենգամիտ հաշիվներից, Ֆ. նանսներ ամենայն անկեղծությամբ ու բարյացակամությամբ նվիրվեց հայ գաղթականության դրուժյան բարելավման գործին: Այդ առթիվ Կիվ նանսեն-Հոյերը արդարացիորեն գրել է. «նանսենը բիզմից օգնել է գաղթականներին, բայց նրա վրա ամենածանր տպավորությունը թողել է հայերի ողբերգությունը: Այդ խիզախ, տաղանդավոր, բարձր կուլտուրայի տեր փոքր ժողովուրդն իր ողջ պատմության ընթացքում, սկսած հնագույն ժամանակներից, տառապել է պատերազմներից ու ամեն կարգի արհավիրքներից, իսկ մեր ժամանակներում նրան բաժին է ընկել մեծագույն դժբախտություն, և նրա ճակատագիրը գասավորվել է անհեթեթ

գործով: Եվ այստեղ քիչ մեղք չի ընկնում Եվրոպայի վրա: ոչ մի փորձ չկատարվեց փոխելու որևէ բան, մինչև որ թուրքերը սկսեցին ամբողջ հայ ժողովրդի սլանաչափ ոչնչացումը: Իսկ հետո, երբ կենդանի մնացածները փորձեցին կարգավորել իրենց կյանքը, ղեկավար քաղաքական գործիչները ցույց տվին, որ մոռացել են այդ ժողովրդի գոյության մասին: Հայրս մինչև իր վերջին օրերին չէր կարող մոռանալ այն հիասթափությունը, որ պատճառեց նրան Ազգերի լիգայի անդամությունը»¹:

Հայ ժողովրդի պաշտպանության համար նանսենն օգտագործեց իր խոր գիտելիքներն ու անհողողղ կամքը, համաշխարհային հեղինակությունն ու պաշտոնական դիրքը: Միաժամանակ նա արտասահմանում շփվեց հայ գործիչների և օտարերկրացի հայասերների հետ ու ձգտեց կազմակերպված հունի մեջ մտցնել հայ դատի սատարումը, մասնավորապես օգնությունը հայ գաղթականներին: Երբ 1920 թվականի հուլիսին ժնկում կազմավորվեց Հայասերների միջպագային լիգան (մարդասիրական կազմակերպություն), Եվրոպայի ու Ամերիկայի մի շարք երկրների առաջագեծ հասարակայնության ներկայացուցիչների հետ միասին նրա մեջ մտավ նաև Ֆ. նանսենն ու ակտիվորեն մասնակցեց նրա հայանպաստ գործունեությանը:

Նանսենն ավելի մեծ հույսեր էր կապում Ազգերի լիգայի հետ: Եվ ահա 1920 թվականի աշնանը, երբ Ազգերի լիգայի առաջին նստաշրջանում բնարկվում էր Հայաստանի հարցը, նա ասաց. «նախքան մենք այստեղ կվիճենք սահմանների հարցի շուրջը, պետք է հայ ժողովրդին փրկել ոչնչացումից, որպեսզի մարդ մնա այդ երկրում բնակվելու համար... Ամեն մի օրն էլ խիստ կարևոր նշանակություն ունի: Կարող է պատահել այնպես, որ մինչև մենք այստեղ վիճում ենք, այնտեղ կկոտորվի հայ ժողովուրդը»²: Այո, այս խոսքերն ասվում էին այն ժամանակ, երբ քննալականները հարձակվել էին Հայաստանի վրա և մահ էին սփռում շորս կողմը: Սակայն Անտանտի պետությունները ոչինչ չարին օգնելու իրենց «փոքր դաշնակցին», և դա հասկանալի է, քանի որ նրանք ղեկավարվում էին միայն իրենց շահերով և արդեն հակասովետական կոմբինացիաների մեջ էին թուրքիայի հետ: Նման իրավիճակում Ազգերի լիգան գերադասեց խուսաճակել և, մասնավորապես, ասել մի բան, բայց կատարել

¹ Пис. Хансен-Хейер, Книга об отце, стр. 404—405.
² „Société des Nations“, I Actes. I Ass., 1920, Plén., p. 192:

մի այլ բան: Այդպես, Ազգերի լիգայի ասամբլեան դեռ 1920 թվականի սեպտեմբերին խորհրդի ուղարկությունը հրավիրեց Հայաստանի ծանր դրության վրա՝ պահանջելով իր ճշմարիտ մասնը ներկայացնել առաջարկներ, որոնք կկանխեն հայ ազգի գոյությունը սպառնացող իրական վտանգը և կայուն ու մշտական վիճակ կստեղծեն այդ երկրում: Հետագա քննարկման ժամանակ ասամբլեան, լսելով Ռոբերտ Սեսիլի, Վիլիամսի, Բրանտի և Գի, Նանսենի ու այլոց ելույթները, 1920 թվականի նոյեմբերի 22-ին միաձայն ընդունում է հետևյալ բանաձևը. «Ասամբլեան, ցանկանալով համագործակցել խորհրդի հետ, հնարավոր կարճ ժամանակամիջոցում վերջ դնելու համար սահմոկեցուցիչ հայկական ողբերգությունը, հրավիրում է խորհրդին համաձայնություն գալ կառավարությունների հետ այն առումով, որպեսզի մեկ տերություն հանձնարարվի անհրաժեշտ միջոցների ձեռքբերումը՝ վերջ դնելու թշնամական գործողություններին Հայաստանի և քեմալականների միջև, ապա հանձնարարել վեց հոգուց կազմված մի հանձնաժողովի՝ քննարկելու միջոցառումները, եթե այդպիսիք կան, որպեսզի դադարեցվեն թշնամական գործողությունները Հայաստանի ու քեմալականների միջև և ղեկուցել ներկա ասամբլեային»¹:

Դժվար չէ տեսնել, որ այս բանաձևը մանվածապատ է ու թափանցիկ, ոչ ոքի ոչինչ չպարտավորեցնող, իսկ այն, ինչ «կոնկրետ է» թվում, փաստորեն համակված է անորոշությամբ ու չկատարելու մտայնությամբ: Հարց է առաջանում, եթե արևմտյան տերություններն ուզում էին զսպել քեմալականներին, հապա ինչու՞ այդ խնդրի կատարումը հանձնարարում էին միայն մեկին կամ 6 հոգուց կազմվելիք հանձնաժողովի, հնարավոր միջոցառումները դնում էին հարցականի տակ («եթե այդպիսիք կան»): Պարզ է, նրանց հետաքրքրում էր միայն սեփական շահը, բորբոքել թուրք-հայկական պատերազմ և այն վերա-

ձել թուրք-ոսուական մեծ պատերազմի, ընդդեմ սովետական պետության օգտագործել թե՛ քեմալականներին և թե՛ դաշնակցականներին, ընդ որում, քանի որ վերջիններն արդեն խաղից դուրս էին գալիս, պետք էր սիրաշահել հատկապես առաջիններին: Ուստի, Ազգերի լիգայի բանաձևը Հայաստանի մասին իրականում դարձավ սոսկ թղենու տերև՝ քողարկելու արևմտյան տերությունների նենգամիտ պլանները: Այստեղից էլ Ազգերի լիգայի հետագա գործողությունների ձևականությունը, հրավերը իր անգամ-երկրների ու ԱՄՆ-ի կառավարություններին՝ դառնալու «խաղաղարար» միջնորդ Հայաստանի ու քեմալականների միջև, պրեզիդենտ Վիլսոնի և Իսպանիայի ու Բրազիլիայի կառավարությունների «համաձայնությունն» այդ հրավերքին, որը, սակայն, ոչ մի արդյունք չտվեց, իրենց իսկ արտահայտությամբ, «քեմալականների վերաբերմունքի պատճառով»:

Անշուշտ, այդ ամենի հետ ոչ մի առնչություն չունեի Ֆ. Նանսենի բուն մտադրությունը՝ իսկական օգնություն ցույց տալ կոտորվող հայ ժողովրդին: Բայց ամբողջ դժբախտությունն այն էր, որ գործերի տնօրինողը ոչ թե նա էր, այլ իմպերիալիստական «կոնցերտը» և պահանջվում էր խորապես բմբռնել այդ: Ազգերի լիգան հետագայում էլ բազմիցս զբաղվեց Հայաստանով ու հայկական հարցով, բայց դարձյալ ապարդյուն, լավագույն դեպքում ընդունվեցին այսպես կոչված «կարեկցական» ու «սփոփանքի» բանաձևեր: Մինչդեռ Նանսենն ուզում էր հավատալ Ազգերի լիգայի գաղափարին և նույնիսկ նրա միջոցով օգտակար լինել հայ ժողովրդին, իսկ երբ դա չստացվեց, նա լցվեց խոր դաշրությունով դեպի «աշխարհի տերերը», վեր կանգնեց նրանց քաղաքական ու տնտեսական հաշվեհատությունից և շարունակեց իր հայանպաստ գործունեությունը:

Ազգերի լիգայի ասամբլեան 1920 թվականի նոյեմբերի 18-ին խորհրդին է հանձնարարում «Հայաստանի ապագայի ապահովության խնդիրը»: Հասկանալի է, որ խոսքը դաշնակցական Հայաստանի մասին էր: Բայց ահա նոյեմբերի 29-ին Հայաստանը դարձավ սովետական՝ առաջ բերելով իմպերիալիստական պետությունների կատաղի թշնամությունը: Նրանց, քեմալական թուրքիայի ու մենչևիկյան Վրաստանի օգնությամբ, տապալված դաշնակները 1921 թվականի փետրվարին կազմակերպեցին խռովություն՝ Հայաստանում կործանելու սովետական իշխանությունը և վերահաստատելու իրենց արյունոտ սեփմբը:

¹ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Երևան, 1972, էջ 733:

Ազգերի լիգայի կանոնադրության համաձայն, նրա հիմնական օրգաններն էին ասամբլեան, խորհուրդը և քարտուղարությունը, ընդ որում առաջին երկուսը՝ բաղադրված էին (բացառությամբ պրոցեսուրային հարցերի առթիվ) պետք է ընդգրկվեին միաձայն: Ազգերի լիգային կից գործում էին (ավտոմատ կազմակերպությունների իրավունքով) Աշխատանքի միջազգային բյուրոն, Միջազգային արդարադատության մշտական պալատը և այլն:

Ազգերի լիգայի խորհուրդը փետրվարի 25-ին պահանջեց քարտուղարությունից՝ «հետևել ղեկավարի ընթացքին Հայաստանում, որպեսզի հնարավորություն ընձեռվի... նոր որոշումներ ընդունելու»։ Հայտնի է, սակայն, որ այդ արկածախնդրությունը հիմնովին ձախողվեց։ Դրանից հետո արևմտյան տերությունները ավելի համերաշխվեցին Քուրթիայի հետ։ Դաշնակիցների գերադույն խորհուրդը պաշտոնապես ճանաչեց «Սերի պայմանագրի հնարավոր վերանայումը» և Քուրթահայաստանի արևելյան վիլայեթներից ինքնուրույն հայկական պետություն ստեղծելու փոխարեն առաջարկեց հայերի համար սոսկ «ազգային օջախ» ստեղծելու Առաջնորդվելով զբանով, Ազգերի լիգայի երկրորդ նստաշրջանում՝ 1921 թվականի սեպտեմբերի 21-ին, ասամբլեան ընդունեց նոր բանաձև, որով արձանագրեց Սերի պայմանագրի վերանայման անխուսափելիությունը և գտավ անհրաժեշտ, որ Քուրթիայի հետ կնքվելիք նոր պայմանագրում հաշվի առնելի «Հայաստանի ապագան», մասնավորապես «հայերի համար ապահովվի ազգային օջախ՝ ամբողջովին անկախ թուրքական կառավարումից»¹։ Ինչպես վկայում է Ֆ. Նանսենը, Ազգերի լիգայի երրորդ նստաշրջանը՝ 1922 թվականի սեպտեմբերին, նորից հաստատեց այդ գաղափարը, իսկ Շվեյցարիայի պրեզիդենտ Զ. Մոտտան հայտարարեց. «Հայկական հարցը վերջնականապես լուծելը առանց շափազանցության խայտառակություն է մարդկային քաղաքակրթության համար»²։ Այնուամենայնիվ, Ազգերի լիգան ընդունեց բավականին դժույժ բանաձև՝ հույս հայտնելով, որ «Քուրթիայի հետ ունեցած հաշտության բանակցություններում չի անտեսվի հայերի համար ազգային օջախ ստեղծելու անհրաժեշտությունը։ Ասամբլեան կոչ է անում խորհրդին՝ դրա համար ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները»³։

Չնայած հայկական հարցը բավականին խուզվեց, թվում է դժև «ազգային օջախ» վրա կայնդին «զաշնակիցները»։ Բայց ոչ. նրանք փաստորեն ոչինչ չարին և սին «կարևորական» խոսքերից այն կողմ շանցան։ Ավելին, նրանց թույլտվության պայ-

մաններում հայերը նորից ջարդվեցին 1922 թվականի հունիս-թուրքական պատերազմի ժամանակ։ Ինչպես գրում է Լիվ Նանսեն-Հոլերը, «Զմյուռնիայում և թուրքերի գրաված մյուս վայրերում անխափր ոչնչացվում էին ոչ միայն հույները, այլև հայերը։ Հույն և հայ երեխաներին պոկում էին իրենց մայրերի ձեռքերից ու սպանում նրանց աչքերի առջև»։ Մի այլ առիթով նույն հեղինակը գրում է. «Վրա հասավ ողբերգության վերջին գործողությունը։ 1922 թվականին, երբ Քեմալ փաշայի օրոք Փոքր Ասիայից արտաքսվեցին հույները, փախստականների հեղինակները, որը հաշվվում է մի քանի միլիարդ... Հայերը բշտվեցին Անատոլիայից, իսկ Եվրոպան հանգիստ նայում էր դրան»⁴։

Բուրովին այլ դիրք բռնեց Ֆ. Նանսենը, որը 1922 թվականի սեպտեմբերին Փնևում Ազգերի լիգային կոչ արեց փրկարար օգնության ձեռք մեկնել աղետալներին և ապա ինքը Ֆ. Նոել Բեյքերի հետ միասին մեկնեց Կ. Պոլիս, ուր խոնված էին գաղթականական զանգվածները և մասսայաբար մահանում էին բազմից ու հիվանդություններից։ Նա կազմակերպեց պարենային ու բժշկական օգնություն և միաժամանակ համապատասխան լիազորություններով (հունական կառավարության և Անգլիայի ու Ֆրանսիայի համաձայնությամբ) հաղորդակցվեց թուրքական իշխանությունների հետ՝ կարգավորելու թե՛ ուղեմագերիների և թե՛ գաղթականների գործերը. «Ավելի շատ նա ուզում էր բանակցություններ վարել հենց իր՝ Քեմալ փաշայի հետ և իր ծառայություններն առաջարկեց մեկնելու Անկարա ու հանդիպելու նրա հետ։ Բայց թուրքական կառավարության ղեկավարը պատասխանեց մերժումով»⁵։ Այնուամենայնիվ, Նանսենն առաջարկեց հետագա արշունահղությունից խուսափելու համար կատարել բնակչության փոխանակություն. հույները Անատոլիայից և Արևելյան Երազիայից կմեկնեն Հունաստան, իսկ թուրքերը՝ Հունաստանից Քուրթիա։ Քեմալը իր պատասխան-հեռագրում խորամանկորեն մանևրում է, որպեսզի հույները (և ոչ միայն) հեռանան (այդ թվում Կ. Պոլիսից), իսկ թուրքերը մնան Հունաստանում (հատկապես Արևմտյան Թրակիայում)։ Իհարկե, Նանսենը դրա հետ չհամաձայնվեց, և նրա առաջարկը հետագա

1 Հայաստանը միջազգային ղիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, էջ 751։

2 André N. Mandelstam, Das armenische Problem im Lichte des Völker- und Menschenrechts, Berlin, 1931, S. 83։

3 Fr. Nansen, Betrogenes Volk, S. 330։

4 Лив Нансен-Хейер, Книга об отце, стр. 379, 406.

5 Tim Greve, Fridtjof Nansen, 1905—1930, s. 191։

քննարկման գրվեց Լուզանի կոնֆերանսում, ուր և ստացավ կոմպրոմիսային լուծում:

Այդ ժամանակ Նանսենը զբաղվեց նաև հայերի վիճակով և ցույց տվեց հնարավոր աջակցություն տանջահար գաղթականներին: Երբ նա 1922 թվականի հոկտեմբերի 4-ին ժամանեց Կ. Պոլիս, հայկական թերթերը հաղորդագրություններ տպագրեցին նրա մարդասիրական առաքելության մասին՝ միաժամանակ զետեղելով Նանսենի նկարը: Ապա Չավեն պատրիարքը պրոֆ. Ա. Տեր-Հակոբյանի հետ միասին այցելեց Նանսենին և օգնություն խնդրեց հայ աղետյալների ծանր վիճակը թեթևացնելու համար: Նանսենը խոր հուզմունքով ունկնդրեց նրանց և հայտնեց, որ ինքը շուտով գնալու է Չիչուստիա, ուր դրությունը դժոխային է, և ինչպես այնտեղ, այնպես էլ մնացած վայրերում կօգնի նաև հայ գաղթականներին. «Տոբթ. Նանսեն հայտնած է, թե ինք զանազան տեղեր օգնության մասնաճյուղեր պիտի բանա, կենտրոն ունենալով Պոլիսը»: Մի այլ առիթով Նանսենի քարտուղարը հայտարարեց. «Տոբթ. Նանսենի առաքելությունը բացարձակապես մարդասիրական է: Ան հավասարապես պիտի օգնե հույն, հայ, թուրք և բոլոր ազգի աղետյալներուն... Տոբթորին առանձին հոգն է ուտեստ ճարել և բոլոր կարելի միջոցներով պիտի աշխատի նախ և առաջ պարենավորել աղետյալները»¹: Նանսենին մասնավորապես խիստ հուզում էր Արևելյան Թրակիայում մնացած 10 հազար հայ փախստականների վիճակը, քանի որ այդ շրջանը պետք է անցներ Թուրքիային և ստեղծվում էր ներանց բնաջնջման ուսկ վտանգ: Այդ ժամանակ Նանսենի օգնական զբ Մոթելիլը (Ժնևում) հաղորդում է, որ «տոբթ. Նանսեն կտեղեկացնե, թե խիստ ստիպողական և արագ միջոցներ պետք է ձեռք առնել փրկելու այս բաղձությունը»²:

Չնայած հնարավորությունների ու միջոցների սղությունը, Նանսենը զգալի գործ կատարեց, բայց նա ինքը գոհ չէր արվածի չափից: Մատթեոս Արամ Գալինտերը վերհիշում է, թե

¹ «Ճակատամարտ», 10. 10. 22:

² Վաճան Փափազյան, Իմ հուշերը, հ. 3, Գահիրե, 1957, էջ 133: Բնորոշ է, որ հուշերի հեղինակը՝ գաղչեակցական տիրահոլակ գործիչը, հիշատակելով այդ փաստը, ըստ էության փորձում է ամենակերպ նսնամացնել Նանսենի գործունեությունը և շեշտել, որ իր կուսակցությունը «բողոքեց՝ Նանսենի մարդասիրական ձեռնարկները եկատել իրեն մաս մեր բազաքական պահանջներուն» (էջ 132):

Ինչպես 1922 թվականի նոյեմբերին՝ Պոլսից Աթենք մեկնող շոգենավում, հանդիպել ու բազմիցս զրուցել է Նանսենի հետ, որը շատ էր մտահոգված հայերի վիճակով. «Դժվար էր երևակայել մեկը, որ ավելի հուսահատ և տխուր ըլլար, երբ խոսակցությունը հայերի մասին էր... Իր խորունկ կապույտ աչքերուն մեջ վիշտ կկարդայվեր, երբ կպատմեր իր տեսածները, իր կատարած ջանքերն ու դիմումները հայերու համար: Հանկարծ ըսավ ինձ. «Չենք գիտեր, քե ինչ պիտի րենեմ հայերու մասին...», տեսակ մը հուսահատ պոռթկումով և բողոքով մը»¹:

Այդուհանդերձ, Նանսենը շուտահաստվեց, այլ հետևողականորեն շարունակեց իր մարդասիրական գործը և ամեն կերպ օժանդակեց հայ գաղթականների դրության բարելավմանը: Դա արտահայտվեց նաև Հունաստանում կազմակերպված օգնության կետերով, նանսենյան ծերանոցներով և այլն: Միաժամանակ նա, Աթենքից մեկնելուց առաջ, կոչով դիմեց ամբողջ աշխարհին՝ օգնելու հույն և հայ գաղթականներին, որոնք այնքան շատ էին հավաքվել Հունաստանում. «Անոնք ծայրահեղ կերպով պետք ունին ամեն բանի՝ ուտելիք, հագուստ և բնակարան»: Գրությունն առավել ևս սրվում էր այն պատճառով, որ գաղթականական զանգվածները հիմնականում կանայք էին, երեխաներ ու ծերեր. «Զրկված աշխատող ձեռքերն, փախստականներու մեծ մասը չպիտի կրնա ինքզինքը հոգալ աշխատանքի միջոցով: Փանի մը հազար հայեր արդեն Պոլիս հասած են, իսկ 18000-ի մոտ որբեր Հունաստան հասնելու վրա են: Կլավի, թե ասոնք առաջին բարավաններն են»: Ուրեմն, հարկավոր է կազմակերպել արտաքին օգնություն: Նանսենն ընդգծում է, որ «բաղաբազիրթ աշխարհի բոլոր ազգերուն համար կենսական նշանակություն ունի այս հարցը»²:

Այդպիսով, թեև Նանսենի այս միսիան կազմակերպվել էր հիմնականում հույն գաղթականներին օգնելու նպատակով, բայց ըստ էության այն տարածվեց նաև հայ փախստականների վրա: Այդ մեծ մարդասերը, շրջադայելով բազմաթիվ վայրեր, տեսավ թուրքերի կազմակերպած ահավոր կոտորածների ու ավերածությունների ծանր հետևանքները, գաղթականների հոծ խմբեր, անխոր թշվառություն, քաղց, հիվանդություն, տանջալից մահեր

¹ «Երբեր», 8. 2. 62:

² «Ճակատամարտ», 21. 11. 22:

և այլն՝ նանսներ 1922 թվականի հոկտեմբերի 28-ին 4. Պոլսից շվեյցարացի դիվանագետ Կ. Սուլցերին գրած նամակում նշում է, որ ինքը եղել է Թրակիայում՝ Ռոդոստոյում, Ադրիանապոլսում, և ամենուրեք տեսել «թուրքերից փախչող ժողովրդի. ամեն մի հույն ու հայ գտնում էր անհրաժեշտ՝ օր առօր փախչել սեփական տնից ու թողնել իր ունեցվածքը, բանի դեռ չի հասել թուրքական ժանդարմերիան»¹: Մի քիչ ավելի ուշ՝ նոյեմբերի 6-ին, նանսներ Աթենքից լորդ Քերզոնին հաղորդում է, որ թուրքական իշխանությունները հույներին ու հայերին մասսայաբար արտաքսում են Փոքր Ասիայից²: Վերջապես, նա դեկտեմբերի 21-ին մի այլ նամակում դայրույթով նշում է, որ բեմալականները ձգտում են հույներին ու հայերին հեռացնել նաև Կ. Պոլսից, բայց ինքը «թուրքերի հետ ունեցած բանակցություններում» վճռականորեն մերժել է այդ հանցավոր պլանը³:

Ա. Խրիստենսենը, նկարագրելով մեծ նորվեգացու այդ ժամանակվա գործունեությունը, գրել է. «Նանսները Հունաստանում ու Թուրքիայում աշխատելու ժամանակ հանդիպեց շատ հայ գաղթականների և դա սկիզբ դարձավ, որ նա զբաղվի հայկական հարցով ամբողջությամբ: Հայերի ողբերգական պատմությունը նրա վրա թողեց խոր տպավորություն...»⁴: Պետք է ասել, որ նանսների մոտ այդ «սկիզբը» ավելի շուտ է ծագել, բայց ճիշտ է նաև, որ իզմիրյան աղետի ու թուրքական այլ վայրագությունների ցնցող ազդեցությունը խոշոր դեր է կատարել այդ գործում:

Նանսները հանդես էր գալիս հայ դատի պաշտպանությամբ՝ նա Լոզանի կոնֆերանսում հանդիպումներ ունեցավ թուրքական գործիչների հետ և առաջարկեց «Ասիական Թուրքիայի շրջանակներում մի մարդ տրամադրել, ուր կհավաքվին ինչպես փախչողական հայերը, այնպես էլ Անատոլիայում մնացածները: Դրանով կվերացվեն ապագա բախումները հայ և թուրք ժողովուրդների միջև»: Այնուհետև նա հաղորդում է, որ թուրքերը կարծես թե այդ առաջարկը լսեցին «բաղաբավարությամբ» և նույնիսկ համարեցին «հետաքրքիր», բայց վերջում պնդեցին իրենց հնարած մեղադրանքը. «Լավ կլիներ, որ հայերը մնային

իրենց տեղերում, ուր գտնվում էին, հենց Անատոլիայում. Թուրքերի և հայերի բախումների վտանգը չէր լինի, նրանք բավական լավ էին միմյանց հետ, բանի դեռ հայերը չէին հրահրվել եվրոպացիների կողմից»¹:

Այստեղ ամեն ինչ շրջված է գլխիվայր. նախ՝ թուրքերը չեն ուզում խոստովանել, որ հայերը վաղնջական ժամանակներից ապրել են ոչ թե սոսկ Անատոլիայում, այլ իրենց հայրենիքում՝ Հայաստանում, երկրորդ՝ նրանք վարել են խաղաղ աշխատանքային կյանք և հենց թուրք կառավարողները, կեղեքիչներն են խախտել այն, բռնացել նրանց վրա, որի պատճառով հայ ժողովուրդը առանց որևէ արտաքին միջամտության մղել է նաև ազատագրական պայքար ու իր հայացքն ուղղել դեպի Ռուսաստան, արգարացիորեն ռուս ժողովրդի օգնության հետ կապել իր փրկությունը: Ահա թե ինչը դուր չի եկել թուրքական բռնակալությանը, որը մինչև այժմ էլ փորձում է դանազան պատրվակներով («եվրոպական միջամտություն» և այլն) արգարացնել իր ջարդարարական քաղաքականությունը: Բայց ստի ոտքերը կարճ են, մտխաթր տոպրակում չես թաքցնի:

Այնուամենայնիվ, «դաշնակիցների» համաձայնությամբ Լոզանի կոնֆերանսը հաղթանակ բերեց Թուրքիային: 1923 թվականի հուլիսի 24-ին կնքված պայմանագրում ոչ մի խոսք հայկական հարցի ու հայերի մասին, կարծես նրանք աշխարհում գոյություն էլ չեն ունեցել. «Այդպիսի անփառունակ վախճան ունեցան,— գրել է Չ. Նանսներ,— արևմտակերպական տերությունների և Ամերիկայի երկչոտ փորձերը, նրանց՝ հայ ժողովրդին բազմիցս տված խոստումները ազատության ու անկախության մասին, երբ պետք էր, որ նա մասնակցեր պատերազմին Անտանտի կազմում»²: Մինչդեռ հայ ազգայնականները, հատկապես դաշնակցականները, շարունակում էին հուսակայան ընտրել Արևմուտքը, «խնդրել ու աղաչել», որպեսզի մեծ տերությունների կառավարողները լուծեն հայկական հարցը...

Իմպերիալիստների համար գոյություն ունի միայն մեկ չափանիշ՝ մերկ շահը, որին և ենթարկում են ամեն ինչ՝ առանց ամենափոքր ուշադրություն դարձնելու սոսկ «խնդրանքներին ու ազալանքներին»: Նրանք այդպես վարվեցին նաև հայկական

¹ Fridtjof Nansen, Brev, IV, s. 164.

² Տե՛ս նույն տեղը, էջ 169:

³ Նույն տեղը, էջ 182:

⁴ A. R. Christensen, Fridtjof Nansen, 1961, p. 26.

¹ Fr. Nansen, Betrogenes Volk, S. 26—27.

² Նույն տեղը, էջ 331:

հարցի հետ, որի փակումով օգուտ էին բաղում Քուրբիայից, իսկ ինչ վերաբերում է հայերին, ապա իմպերիալիստների՝ համար «գրանք մի չնչին, արհամարհելի միավոր են: Ինչ Հայաստան, ինչ պաշտոնաթուղթուն հայ գաղթականության և այլն, բոնեք դատարկ հնչյուններ են...»¹:

Գրա համեմատ էլ Լոզանի կոնֆերանսից հետո արևմտյան պետությունները մոռացության տվին հայկական հարցը: Գիշառիչ իմպերիալիստները նրանից բամել էին, ինչ հնարավոր էր, բայց միաժամանակ «հեռատեսորեն» չէին ուղում հրաժարվել հրեանց դրա մասին խոսելուց: Ուստի, նրանք հայկական հարցի ուրվականը հանձնեցին Ազգերի լիգային, որպեսզի նախ ցույց տան, որ իբր ամբողջ աշխարհի առաջ շարունակում են «պաշտպանել» հայ դատը, և երկրորդ՝ որը և գլխավորն է, ժամանակ առ ժամանակ պատե՞ առիթով ու զանազան ձևերով դարձյալ օգտագործեն իրենց նպատակների համար: Այդպես, նրանք Ազգերի լիգայի միջոցով մեկ-մեկ անդրադարձան հայ գաղթականների վիճակին, որպեսզի իրենց մեղքը գցեն ուրիշների վրա, վարկաբեկեն հատկապես Սովետական Միության ու նրա ազգային քաղաքականությունը:

Ազգերի լիգայի միջազգային սեկցիաների խորհրդակցությունը 1924 թվականի հուլիսի 2-ին ընդունեց հետևյալ երեսուպաշտական բանաձևը.

«Ա. Յավով կհաստատեն, թե հակառակ Ազգերու Գաշնակցության հաջորդական և միացյալ բանաձևերուն, հայկական խնդիրը, հեռու Լոզանի դաշնագրով կարգադրված ըլալն, կմնա, ընդհակառակը, բաց և տակավին կսպասե լուծման:

Բ. Կմաղթն, որ հայկական խնդիրը գրվի Ազգերու Գաշնակցության համար Ընկերակցությանց Միության օրագրին մեջ, և տրվի արդարության և ժողովուրդներու իրավունքին համաձայն լուծում մը:

Գ. Կպահանջվի հանրային կարծիքեն, ինչպես նաև բոլոր կառավարություններեն աջակցիլ և մղում տալ հաղարավոր գաղթականներու և հարյուր հազար որբերու անհրաժեշտ օգնության գործին»²:

Այս բանաձևը վկայում է, որ ոչ միայն, իբրք, Լոզանի կոնֆերանսը շրջանցեց հայկական հարցը, այլև այն, որ այժմ վազուցույն դեպքում խոսք կարող էր լինել սուկ հայ գաղթականության մասին, ընդ որում նրա վիճակի տնօրինումն էլ պետք է ըլի իմպերիալիստական պետությունների շահերից: Բնորոշ է, որ թեև բանաձևում կոչ է արվում բոլոր կառավարություններին կաղմակերպել անհրաժեշտ օգնություն, բայց ըստ էության Ազգերի լիգան հարվածն ուղղում է սովետական պետության դեմ՝ պահանջելով, որ նա Կովկասում տեղավորի հայ գաղթականներին, և որպես այդ հարցի միջնորդ առաջադրում է Ֆրիտլոֆ Նանսենի թեկնածությունը. «Հինգերորդ հանձնաժողովը առաջարկում է Ընդհանուր ժողովին՝ հանձնարարել զոկտոր Նանսենին ուսումնասիրելու Կովկասում հայ գաղթականների տեղավորման հնարավորությունները և այդ նպատակով բարձր կոմիսարի տրամադրության տակ է դնում 50000 ֆրանկ գումար: Հինգերորդ հանձնաժողովը Ընդհանուր ժողովին առաջարկում է նաև հետևյալը. սպասելով հայկական ազգային օջախի հաստատման, պետք է հայ գաղթականներին ցույց տալ ամեն հնարավոր աջակցություն, որպեսզի նրանք պահպանեն ու պաշտպանեն իրենց ազգային գոյությունը»³:

Անշուշտ, սովետական կառավարությունը կողմ էր մեծ հուսմանիստ Ֆ. Նանսենի միսիային, մանավանդ որ նրա գլխավոր նախաձեռնողը հենց ինքը՝ Նանսենն էր, բայց նա վճռականորեն զեմ էր իմպերիալիստական պետությունների շահադիտական միջամտություններին: Նրանց հանցանքով կոտորվեց ու սփյուռքվեց արևմտահայությունը: Դա կատարվեց Քուրբիայի կողմից՝ արևմտյան իմպերիալիզմի հովանավորությամբ. ուստի, հանցավորները պետք է ոչ միայն քավելին իրենց մեղքը, այլև պատժվելին ու հատուցելին: Նրանք պետք է հոգ տանեն հայ գաղթականներին վերադարձնելու իրենց հայրենիքը՝ Արևմտյան Հայաստան, վերջինիս վերապահելով ինքնորոշման իրավունք: Բայց, հասկանալի է, որ այդ երբեք չէր կարելի սպասել իմպերիալիստներից: Ինչ վերաբերում է սովետական պետությանը, ապա նա զեն է նետում բուրժուական, թշնամական ամեն մի գրպարտություն իր հասցեին, վճռականորեն մերժում է ամեն մի միջամտություն իր գործերին և, կլնելով իր բանվորաշխու-

¹ Ալեքսանդր Մյասնիկյան, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 385:

² Ալ. Մարտալի (Ա. Մյասնիկյան), Կուսակցությունները գաղութահայության մեջ, Թիֆլիս, 1924, էջ 37—38:

³ P. M. Бланк, Лига наций, Берлин, 1924, стр. 82.

դացիական բնույթից անկաշառ օգնության ձևեր է մեկնում արևմտահայության բեկորներին, կազմակերպում նրանց հայրենագարծություն ու ապահով կյանք սոցիալիզմի մեծ երկրում:

□□□

Առաջին համաշխարհային պատերազմի ծանր հետևանքներից մեկը գաղթականության հոծ դանդախներն էին, որոնք օգնության խիստ կարիք ունեին: Գրանց թիվը «հասնում էր 3 միլիոնի»¹: Ընդհանուր գաղթականության զգալի մասը կազմում էին հայ փախստականները, որոնք մահից մազապուրծ, բայց վտարված իրենց հայրենի հողից, մի կերպ ապաստանել էին զանազան երկրներում և փաստորեն քարշ էին տալիս իրենց խղճով գոյությունը: Գնալով աստիճանաբար բարելավվեց Անդրկովկաս և Ռուսաստան եկած հայ գաղթականների վիճակը, մտնալանդ սովետական կարգեր հաստատվելուց հետո, երբ նրանք դարձան բանվորագյուղացիական պետության լիիրավ քաղաքացիներ և ակտիվորեն ընդգրկվեցին տնտեսական ու կուլտուրական շինարարության մեջ: Բոլորովին այլ էր կապիտալիստական աշխարհում, ուր գաղթականներն ընդհանրապես, իսկ արևմտահայերը մասնավորապես գտնվում էին տնտեսական անապահովության ու քաղաքական իրավազրկության մեջ: Նըրանք հայրենագործներ էին և շունեին որևէ պետության քաղաքացիության իրավունք, իրենց հպատակությունը հաստատող համապատասխան փաստաթղթեր, սեփական օջախները վերագանալու արտոնություն ու հնարավորություն: Անօթևան ու թշվառ գաղթականները մեծ մասամբ գործազուրկ էին կամ օդտազործվում էին ամենածանր աշխատանքներում, գտնվում էին մշտական զեզերումների մեջ և մասսայաբար մահանում սովից, հիվանդություններից ու աներևակալելի տառապանքներից:

Արտասահմանյան երկրներում բազմաքանակ փախստականներ և հատկապես արևմտահայերը բռնադատիչների հանցանքով փաստորեն դարձել էին ապատրիդներ, այսինքն՝ այնպիսի հայրենագործներ, որոնք կորցրել էին (ավելի ճիշտ՝ որոնցից խլել էին) քաղաքացիության իրավունքը սեփական երկրում

և շունեին այդպիսին որևէ այլ պետության մեջ: Նման իրավիճակը կապիտալիստական աշխարհում, ուր տիրում է սամբրը մարդու համար գայլ է» գիշատիչ օրենքը, գաղթականների դրությունը դարձնում էր դժոխային: Հարկավոր էր շտապ օգնություն և առաջին հերթին գաղթականներին ապահովել համապատասխան անձնական վկայականներով, որպիսիք չէր ուզում տալ բուրժուական ոչ մի կառավարություն: Գորդյան հանգույցը նաևսներ լուծեց յուրովի՝ սեփական գրչի հարվածով: Այդ առթիվ նրա ժամանակակիցներից մեկը, ակնարկելով տառապալալ գաղթականներին, գրել է. «Ոչ մի տերություն իր պաշտպանության տակ չէր վերցնում այդ դժբախտներին: Բայց մի՞թե նաևսներն ինքը տերություն չէր: Նա ուներ միլիոնավոր հպատակներ: Նա, ինչպես և ամեն մի պետություն, անձնագրեր էր տալիս: Շատ ժողովուրդների կառավարությունների մոտ նա ուներ դեսպաններ, որոնք վարում էին նրա քաղաքականությունը և պաշտպանում նրա խնամարկյալներին: Նրա խնամարկյալները ցրված էին ամբողջ աշխարհով մեկ. նրանք գտնվում են Եվրոպայում, Կանադայում, Բրազիլիայում, Պաղեստինում, Մոնղոլիայում, Ավստրալիայում: Նաևսների պետության մեջ տեղ կար բոլորի համար՝ հույների, հայերի և հրեաների, կաթոլիկների, պրովոտստանտների (ուղղափառների) և մուսուլմանների, գյուղացիների, բանվորների և պրոֆեսորների, հաշմանդամների, ծերերի, կանանց ու երեխաների համար, պատերազմի անհամար ու բոլոր զոհերի համար»¹:

Նաևսների մարդկային մեծ հոգածության շրջագծի մեջ առնվեցին նաև հայ գաղթականները: Նա դեռ 1922 թվականի սկզբին գրել է. «Իժբախտ հայեր... Փնևի ժողովներում ընդունվել են հանդիսավոր բանաձևեր այն մասին, որ հայերին տրվի հայրենիք: Բայց եթե շուտով չկազմակերպվի իսկական օգնություն, ապա այլևս ժողովուրդ չի մնա, որպեսզի վայելի այդ հայրենիքը»²:

Նաևսների համար պարզ էր, որ աշխարհացրիվ գաղթականների կենտրոնացումը իրենց հայրենիքներում դժվար ու բարդ գործ է: Ուստի, անհրաժեշտ էր դիմել կոնկրետ միջոցառումներ

¹ А. Центкович и Ч. Центкович, Кем же ты станешь Фрктюф? Ленинград, 1967, стр. 261—262.

² Russland und die Welt, S. 11—12.

¹ Paul Frings, Das internationale Flüchtlingsproblem 1919 — 1930, Frankfurt am Main, 1951, S. 21.

րի արտասահմանում նրանց դրուժյունը գոնե տանելի դարձնելու համար, միաժամանակ կազմակերպելով հայրենադարձություն: Նրա առաջին հոգսերից մեկն էր գաղթականներին համապատասխան փաստաթղթերով ապահովելը, որը նրանց կտար ինչ-որ «բաղաբացիության իրավունք» այս կամ այն երկրում: Դրա համար նանսենի նախաձեռնությամբ 1922 թվականի հունիսին ժնևում հրավիրվեց հատուկ կոնֆերանս, որին մասնակցեցին այն երկրների ներկայացուցիչները, ուր գաղթականներ կային: Վերջիններիս համար նա առաջարկեց սահմանել անձնական վկայական, որն ընդունվեց և պատմության մեջ մտավ «նանսենյան անձնագիր» անունով: Դա բոլորովին նոր երևույթ էր մարդկության երկարաձիգ տարեգրության մեջ, անձնագրի նոր տեսակ, որի մեջ այս կամ այն երկրի պետական գերբի փոխարեն փակցված էր զրոշմանիշ՝ նանսենի նկարով և «Société des Nations» («Ազգերի լիգա») գրություններ: Այդ վկայականը տրվում էր գաղթականին երկու լեզվով (այն երկրի, որտեղ ապրում էր, և ֆրանսերեն՝ որպես միջազգային լեզու): Ստացողները դառնում են «նանսենականներ», որոնց իրավականությունն ընդունեցին 52 երկրների կառավարություններ և այդպես շարունակվեց երկար ժամանակ...

Նանսենյան անձնագիրը կարելի էր ձեռք բերել 5 ֆրանկ մուծելով, ընդ որում պետք էր ամեն տարի այն վերանորոգել: Դա բերում էր որոշակի եկամուտ, որը նանսենյան հանձնաժողովն օգտագործում էր առավել վատթար վիճակում գտնվող գաղթականներին օգնելու համար:

Բացի դրանից, Աշխատանքի միջազգային բյուրոյին կից ստեղծվեց գաղթականներին աշխատանքով ապահովելու մարմին, որն իր մասնաճյուղերն ուներ տարբեր երկրներում: Հատուկ լիազորներ հաստատում էին գաղթականների փաստաթղթերը և օգնում նրանց աշխատանքի տեղափոխվելու ինչ խոսք, դրանք պահանջում էին միջոցներ, և նանսենն անձամբ տրամադրեց 3000 ֆունտ՝ «չբռնառու ֆոնդ» ստեղծելու համար:

Այդ միջոցառումները տարածվեցին նաև հայ գաղթականներին վրա: Արևմտահայ ազգային պատվիրակությունը 1922 թվականին դիմում է Ազգերի լիգային փաստաթղթերից զուրկ հայ փախտականներին ապահովելու «նանսենյան անձնագրերով»: Այս հարցում էլ է սկսվում բաշխուկը: Այնուամենայնիվ, այն լուծվում է, մանավանդ որ արևմտյան տերություններն արդեն

«մոռացել էին» իրենց տված «հայանպաստ» մեծ խոստումները և այժմ հարմար առիթով դեմ չէին մի փոքր «մխիթարել» տանջված «փոքր դաշնակցին», բայց ավելի ճիշտ՝ «օրինականացնել» էժան բանվորական ուժի տարերային ստացումը, մի ուժ, որի կարիքն այնքան մեծ էր պատերազմից հետո: Ազգերի լիգայի խորհուրդը, բնարկելով այդ հարցը և փաստորեն ճանաչելով հայկական դատում կատարված մեծ նահանջը, 1923 թվականի սեպտեմբերի 25-ին նշում է, որ «Լոզանի բոնֆերանսին ի վեր հայոց խնդիրը իր բնույթը բոլորովին փոխած է: Քաղաքակաշենն ելած և զուտ մարդասիրական հողի վրա դրված է: Այլևս կապ չունի ան Թուրքիա բնակող հայերուն հետ, այլ հայոց խնդիր ըսելով պետք է հասկնալ հարցը այն գաղթականներուն, որոնք Թուրքիային դուրս կգտնվին և որոնց վիճակը կարելի չէ, որ անտարբեր թողու որևէ զգայուն սիրտ: Ասոր վրա պետք է ավելցնել, որ դաշնակից պետությունները, որոնք հանձնառություններ ունեին հայ ժողովրդի հանդեպ, բարոյապես պարտավոր են այսօր զբաղվելու հայ գաղթականներուն վիճակով»¹:

Ամենից առաջ անհրաժեշտ էր արևմտահայ գաղթականներին ապահովել «անձնագրերով»: Զե որ նրանք, այլ ժողովուրդների գաղթականների համեմատությամբ, գտնվում էին վատթարագույն իրավական վիճակում, համարվում էին զլխովին «հայրենագուրկներ» և փաստորեն օրենքից դուրս, քանի որ Թուրքական կառավարությունը նրանց թշել էր պապինական հողերից և բոլորովին չէր ճանաչում նրանց նույնիսկ պետական հպատակության իրավունքը, իսկ ապաստանյալ երկրներում էլ գեռ չունեին նոր քաղաքացիության իրավունք: Ուստի, նրանք ավելի շատ կարիք ունեին «նանսենյան անձնագրերի»: Այդ հարցը կոնկրետ ձևով լուծելու համար արևմտահայ ազգային պատվիրակությունը՝ Գ. Նորատունկյանի ղրխավորությամբ, մեկնում է ժնև և դիմում Ազգերի լիգային: Պատվիրակության հաջորդամար, «ստիպողական էր ինքնության թուղթեր տալ 320000 հայ գաղթականներուն», որոնք գտնվում էին խիստ անապահով վիճակում Միջագետքում, Սիրիայում, Պաղեստինում, Հունաստանում, Կիպրոսում, Բուլղարիայում, Ֆրանսիայում և այլ երկրներում²:

1 «Վերջին լուր», 8. 10. 23:

2 Տե՛ս «Նոր արշալույս», 3. 7. 25:

Ազգերի լիգայի խորհուրդը 1923 թվականի սեպտեմբերի 25-ին և 28-ին մանրամասն ըննարկում է այդ հարցը, և նանսենին իր ելույթում ամեն կերպ հիմնավորում է հայ գաղթականներին օգնելու, նրանց անձնագրերով ապահովելու անհրաժեշտությունը. «Չէ որ Ազգերի լիգան մեծ պարտավորություններ է վերցրել հայերի հանդեպ», ուստի, տվյալ «հարցը չպետք է դժվարություններ առաջացնի» և «խորհուրդը պետք է ղլխավոր կոմիտարին օժտի անհրաժեշտ իշխանություններ՝ զբաղվելու հայ գաղթականներով ու նրանց ապահովելու անձնագրերով»¹: Խորհուրդը որոշում է «խնդրել տարթ. նանսենին, որ հաճի ուսումնասիրել, թե ինչ միջոցներով կարելի է ձեռք բերել հարկ եղած կարգադրությունները, որպեսզի... անցագրիները տրվին հայ գաղթականներին»²:

Հայ ազգային պատվիրակությունը խորհրդում բարձրացրեց նաև 50000 հայ գաղթականներին Հայաստան (Սարգարապատի դաշտ) տեղափոխելու հարցը, բայց այդ ոգով կոնկրետ որոշում չընդունվեց: Պատվիրակության նախագահ Գ. Նորատունկյանը 1923 թվականի հոկտեմբերի 5-ին նշում է, որ Ազգերի լիգան կատարել է «մեր խնդրանքը» և որոշումներ ընդունել հայ գաղթականների իրավական դրույթյան ու 50000 հոգու Հայաստան (Սարգարապատի դաշտ) ուղարկելու մասին. լիգան «որոշեց տարթ. նանսենի քոմիթեին հանձնել, որ զբաղվի հայ գաղթականներու անցագրի հարցով, այն է Թուրքիային տարազրյալ ամեն հայուն անցագիր տալ հանուն Ազգերու ընկերության, ինչպես հաջողությամբ ըրած էր ան անցյալ տարի ուս գաղթականներուն համար: Իսկ հայ գաղթականներու մեկ կարևոր մասը վերջապես տեղափոխելու և անոնց մշտական աշխատանք ապահովելու նպատակով կոշ մը բեկ 54 պետությանց, որոնք անդամ են Ազգերու ընկերության»³:

Պետք է նշել, որ հակառակ հայ ազգայինների դուրահավատության, «գաշնակիցները» ըստ էության չզբաղվեցին հայ գաղթականների վիճակի բարելավմամբ, բայց շառաղիցիներանց էլ «նանսենյան անձնագրեր» տալու դեմ: Վերջինս ապահովվեց նանսենի եռանդուն ջանքերով: Նա 1923 թվականի հոկ-

տեմբերի 10-ին Թ. Ջոնսոնին (աշխատում էր Ժնևում՝ գաղթականների գծով) գրում է. «Նա Խորհրդին հավաստիացրի մեր պատրաստակամությունը հայ փախստականներին ապահովելու նույնպիսի վկայականներով, ինչպիսիք տրվել են ուս փախստականներին: Նա կարծում էմ, մեզ պետք է այդ մասին գրել հենց այն երկրների կառավարություններին, որտեղ կան հայ փախստականներ՝ նրանց անձի վկայագրեր տալու համար»¹: նանսենը գտնում էր, որ այդ միջոցառումը կրարելավի հայ գաղթականների դրույթյունը արտասահմանյան երկրներում և ապա պայմաններ կստեղծվեն նրանց հայրենադարձության համար: Նույն Ջոնսոնին 1924 թվականի հունվարի 21-ին ուղղած նամակում նա նշում է, որ «ինքը անկեղծորեն հավատացած է անձնական վկայագրերի ապահովման մեջ» և ոգևորված է Ֆրանսիայում ու Իտալիայում հայերի ծավալած հանգանկությամբ, որպեսզի փող հավաքեն «կուվկասում 50000 գաղթականների տեղափոխելու համար»²:

Վերջապես, Ազգերի լիգայի խորհուրդը 1924 թվականի հունիսի 12-ի որոշմամբ հաստատում է «նանսենի նախաձեռնությունը՝ ինքնուրույն վկայագրեր տալու հայ գաղթականներին» և դիմում է Ազգերի լիգայի անդամ-պետություններին ու ամյուս շահագրգռված կառավարություններին՝ զրականորեն լուծելու այդ հարցը և եթե նրանք գտնում են անհրաժեշտ, հնարավոր է այդ հարցի շուրջ հրավիրել հատուկ կոնֆերանս: Սեպտեմբերի 9-ին նանսենը գեկուցում է, որ բազմաթիվ պետություններ իրենց համաձայնությունն են տվել հայ գաղթականներին ապահովելու «ինքնուրույն վկայագրերով», ուստի և հարկ չկա լրացուցիչ «կոնֆերանս գումարել»³:

Նախատեսվում էր «նանսենյան անձնագրեր» տալ բոլոր հայրենազուրկ հայ գաղթականներին, ընդ որում, խիստ կարիքավորները պետք է ստանային ձրի: Բայց այս հարցում էլ առկա էր խզում բուրժուական պետությունների կառավարողների խոսքի ու գործի միջև: Նախ՝ նրանք փաստորեն հայ գաղթականներին «նանսենյան անձնագրեր» ղժվար էին տալիս, երկրորդ՝ ստացողները ավելի շուտ ունեին սոսկ «մշակ» լինելու իրավունք և

¹ „Société des Nations“, Journal officiel, № 11, p. 1327:

² «Ապագա», 6. 10. 23:

³ Հալկ. ՍՍՀ ՊՊԿԱ, ֆ. 412, գ. 1475, թ. 1:

¹ Fridtjof Nansen, Brev, IV, s. 247.

² Նույն տեղը, էջ 257:

³ „Société des Nations“, Journal officiel, No. 10, p. 1467:

հեռացված էին սովյալ երկրի կյանքին ակտիվորեն մասնակցելուց, երրորդ՝ բուրժուական իշխանությունները ցանկացած ժամանակ կարող էին հաշվի չնստել այդ «անձնագրերի» հետ կամ հարուցել հազար ու մի խոչընդոտ: Այդպես, Ֆրանսիայի ներքին գործերի մինիստրությունը, վկայակոչելով կոմունիստական գաղափարների ազդեցությունը օտարերկրացի բանվորների վրա, հայերին հեռացնում էր քաղաքներից: Մասնավորապես Լիոնի ոստիկանապետը «Գուբ քաղաքի մեջ ապրելիք մարդեր չեք», — ըսելով, ճամբու դրած է անձնագրի համար իրեն դիմող հայերը: Ներքին նախարարությունը հրամայած է Քեմպ Օտտոյի գաղթականները ներքին զավառները փոխադրել և սպառնացած է արտաքսել անաստները¹: Գործը հասավ այնտեղ, որ արտաքսում էին ոչ միայն ընչազուրկ բանվորներին, այլև սեփականություն ունեցող հայերին. «Այս ամենն պարզ կերևա, որ հայ գաղթական մը կրնա արգելվիլ իր սեփականություն մեջ ապրելն ոչ միայն կոմունիստ ըլլալուն, այլ նաև իր ցեղակցին կոմունիստ ըլլալուն համար: Ասիկա կրկնապես անարդար կարգադրություն մըն է, որուն դեմ սակայն բողոքելու համար չենք վայելիք ոչ մեկ օրենքի պաշտպանությունը», — գրում էր հայ ռամկավարների օրգան «Ապագան»: Այդպիսի իրավիճակի դեմ բողոքեց նույնիսկ ոչ կոմունիստ Օգյուստ Գովենը (Ֆրանսիացի ժուռնալիստ): Բայց կառավարությունն «իր էշն էր քշում» և նոր գովարություններ հարուցելու համար «օտարերկրացիներու ինքնության թղթերու տուրքը 68-են մեկանց 375 ֆրանկի բարձրացուց»²: Այդպես էր հայ գաղթականների վիճակը նաև այլ երկրներում, այդ թվում Հունաստանում: Կորնթոսում գտնվող հայ գաղթականներին օգնող մարմնի տնօրեն անդլուհի Ա. Մ. Պրկսը, որը 40 տարի աշխատել էր հայերի մեջ (34 տարի՝ Կ. Պոլսում, 6 տարի՝ Հունաստանում) և տեսել նրանց տառապանքները, 1929 թ. օգոստոսի 7-ին նամակ է գրում Ֆ. Նանսենին և հայտնում հունական իշխանությունների կամայականությունների մասին՝ հայ գաղթականների «նանսենյան անձնագրերի» վերաբերյալ: Նա նշում է, որ ինքը մի հայ աշխատակցուհու հետ մեկնել է Անգլիա, բայց վերադարձին չեն ուզում ճանաչել նրա «նանսենյան անձնագիրը» և թույլ տալ «Հունաստան»

տան մտնելու: Կինը չէր կրնար օդին մեջ կախված մնալ, չէր կրնար ծովը նետվել, չէր կրնար Անգլիա վերադառնալ, Ֆրանսիա կամ Իտալիա երթալ: Ոչ ոք կուզեր զայն, այն մեր Առաքելություն մոտ կաշխատեր Հունաստանի մեջ»¹: Բարեգործուհին բերում է նաև այլ օրինակներ ու խնդրում նանսենին՝ օգնելու խեղճ հայերին: Օգոստոսի 24-ին նա շնորհակալությամբ է պատասխանում Պրկսին և դառնությամբ նշում. «Գիտեմ թե շատ զովարություններ կան անձնագրերուն և վիզաներուն համար ոչ միայն Հունաստանի, այլև այլ երկրների մեջ: Մենք կրնենք ինչ որ կրնանք՝ օգնելու համար գաղթականներուն»²:

Ուրեմն, չնայած ընդհանուր առմամբ «նանսենյան անձնագրերը» զգալիորեն թեթևացրին գաղթականները. դրությունը, բայց և այնպես «նանսենականներին» կապիտալի երկրներում չէին համարում լիիրավ քաղաքացիներ և, ինչպես պատմում են ականատեսները, նրանք «մշտապես իրենց զգում էին ժանտախտով վարակվածի կամ բորոտի վիճակում, որից բոլոր հանդիպողները մի կողմ էին քաշվում»³: Այստեղից հասկանալի է, որ «նանսենականների» մեծ մասը ապրում էր հայրենիք վերադառնալու և իսկական անձնագիր ստանալու նվիրական ձգտումով:

Անշուշտ, գաղթականների այդ վիճակի համար բոլորովին մեղք չունեն Ֆ. Նանսենը: Ընդհակառակը, նա ամեն ինչ արեց նրանց դրությունը թեթևացնելու համար: Դրան էր ծառայում նաև «նանսենյան անձնագիրը», որից օգտվեցին բազմահազար հայ գաղթականներ աշխարհի տարբեր երկրներում:



Արտասահմանում թե Ռուսաստանում նանսենի գործունեությունը լայն ընդգրկումներ ուներ: Նա ձգտում էր օգնություն ձեռք մեկնել բոլոր կարիքավորներին, այդ թվում հայ տառապալաններին: Բացի այն, որ նա ընդհանուր առմամբ ծանոթ էր հայ ժողովրդի եղերական պատմությանը և քաջատեղյակ պատերազմի սոսկալի հետևանքներին, ղեռ արտասահմանում բազմաթիվ

1 Ավետիս Ցափունյան, Նանսեն և հայ գաղթականության հայրենագործության հարցը, բոտ անտիպ փաստաթղթերու, Գահիրե, 1983, էջ 79:

2 Նույն տեղը, էջ 81:

3 Բ. Н. Александровский, Из пережитого в чужих краях, М., 1969, стр. 157.

1 «Ապագա», 19. 6. 25:
2 «Ապագա», 14. 8. 25:

առիթմեր ունեցալ շփվելու հայ գործիչների հետ և ավելի մտա-
կից իմանալու բուն իրավիճակը: Այդպես, Հայ ազգային պատ-
վիրակության անգամ Արշակ Սաֆրաստյանը, 1920 թվականին
մասնակցելով Ազգերի լիգայի առաջին նստաշրջանին, շփվեց
Նանսենի հետ և նրան պատմեց Հայաստանի ու հայ ժողովրդի
ծանր դրության մասին: Այնուհետև, 1921 թվականի ամռանը
նույն Սաֆրաստյանը անգլիական բարեգործական ընկերության
կողմից ուղարկված անձանց կազմում լինում է Կովկասում ու
Հայաստանում՝ քաղցածներին օգնություն կազմակերպելու նպա-
տակով: Վերադառնալով նա ներկայացնում է համապատասխան
զեկուցագիր և նշում սովետական իշխանության օրգանների
և ուսնդուն ջանքերը՝ դրությունը բարելավելու համար:

Նա ժնկում կիսվում է նաև Ֆ. Նանսենի հետ և վերջինիս
խնդրանքով 1921 թվականի սեպտեմբերի 10-ին նրան ներկա-
յացնում մանրամասն բացատրագիր, որտեղ հատկապես խոսում
է Հայաստան ու Վրաստան կատարած իր շրջագայությունների
մասին: Ա. Սաֆրաստյանը պատմում է, որ այնտեղ կան շատ հայ
որբեր ու զաղթականներ և դեռևս զգացվում է մթերքների ու
ապրանքների պակասություն: Բայց ճշմարտությունը պահան-
ջում է ասել, որ «Վրաստանի ու Հայաստանի սովետական պաշ-
տոնյաներն անկեղծորեն ձգտում են իրենց ժողովուրդներին
փրկել սովից»: Բացի ներքին միջոցների հայթայթումից, նրանք
կողմ են նաև արտաքին օգնությանը, ուստի և «մեր խումբը սո-
վետական սոցիալիստական հանրապետությունների պաշտոնա-
կան անձանց կողմից գիմավորվեց ամենայն քաղաքավարու-
թյամբ ու մեզ հետ գործակցելու ոգով»¹: Սաֆրաստյանը միա-
ժամանակ ընդգծում է, որ արտասահմանից ստացվող օգնու-
թյունն ամբողջովին ու շատ կանոնավոր կերպով տրվում է որ-
բերին և այլ կարիքավորներին:

Իր խոսքը մասնավորելով Հայաստանի մասին, Ա. Սաֆ-
րաստյանը նկարագրում է թուրքական ավերածությունների ու
կողոպուտի դժոխային պատկերը, այն անհամար զոհերն ու
զրկանքները, որ կրեց հայ ժողովուրդը՝ սովթանական ու քեմա-
լական վայրի զավթիչներից ու ջարդարարներից: Այդուհանգերձ,
նա նորից բարձրանում է, մեջքն ուղղում ու շննացնում իր եր-
կիրը. «Նա երբեք չեմ հանդիպել մի ժողովրդի, որ այդքան արագ

ապաքինվի. եթե նա միայն 12 ամսվա խաղաղություն ունենա,
ազատ լինի օտարերկրյա սազմական ներխուժումից և հնարա-
վորություն ունենա հնձել ու դոնն մի բերք վերցնել իր համար,
ապա դրանից հետո նա արտաքին աշխարհից ոչ մի շնորհ չի
խնդրի, բացի տևական խաղաղության հավաստիացումից»²:

Ֆ. Նանսենին օգնում էին նաև այն օտարերկրացիների հա-
զորգումները, որոնք լինում էին Հայաստանում և վերադարձին
օբյեկտիվորեն պատմում ճշմարտությունը: Այսպես, 1921 թվա-
կանի սեպտեմբերին Փնևի հավաքներից մեկում Նանսենը գոհու-
նակությամբ լսեց Մերձավոր արևելք նպաստամատույցի ընդ-
հանուր բարաուղար Չարլզ Վիքրիին, որը նոր էր վերադարձել
Հայաստանից: Նա, չթաքցնելով եղած դժվարությունները, միա-
ժամանակ ասաց. «Ներկա հայ կառավարությունը ամեն միջոց
գործ կրնի փրկելու հայ ժողովուրդը հիվանդությունների և սովի,
և ուրիշ ոչ մեկ կառավարություն ավելի լավ պիտի կրնար ընել
ներկա հանգամանքներու մեջ, քան ներկա հայ սովետական կա-
ռավարությունը»³: Այնուհետև լրագրային հաղորդագրության
մեջ ասված է. «Ճաշին նախագահող աշխարհահռչակ տոբթ.
Նանսենը ներկաներու խորունկ հուզումը հայտնեց հայ ժողո-
վրդի ներկա վիճակին հանդես և մր. Վիքրիին ըրավ հարցում-
ներ որոշ խնդիրներու մասին»: Լինելով Մոսկվայում, Նանսենը
Ռուսաստանի քաղաքացիներին օգնելու հետ միասին ավելի
մոտիկից է զբաղվում հայ զաղթականներին աջակցելու հարցով
և համապատասխան ցուցումներ տալիս իր աշխատակիցներին:

1921 թվականի դեկտեմբերի 28-ին Երևան ժամանեց Լոնդո-
նի՝ Հայ զաղթականների կամ լորդ-մերի (քաղաքապետի) ֆոնդ
անունով բարեգործական ընկերության՝ պատվիրակությունը,
որի մեջ էին մտնում Ռուսաստանին օգնող նանսենյան կոմիտեի
անդամ միստեր Է. Բաքստոնը, Է. Հարդորտը և Ա. Սաֆրաստ-
յանը: Բաքստոնը հայտարարեց, որ իրենց «միակ նպատակն է

¹ Հայկ. ՍՍՀ ՊՊԿԱ, ֆ. 412, դ. 859, թ. 8:

² «Ապագա», 17. 9. 21:

* Armenian Refugees (Lord Mayors) Fund քաղաքապետական ըն-
կերությունը ստեղծվել է 1916 թվականին և իր մասնակցորեն ուներ տար-
բեր երկրներում: Այդ ընկերության միջոցները հայթայթվում էին հասարա-
կական կարգով ու մասնավոր մարդկանց հանգանակություններով և տրամա-
դրվում զաղթականների խնամքին, որբանոցների ու հիվանդանոցների բաց-
մանը (Կ. Պոլսում, Երևանում և այլուր):

³ Հայկ. ՍՍՀ ՊՊԿԱ, ֆ. 412, դ. 859, թ. 2:

օգնություն հասցնել քաղցածներին ու կարիք ունեցողներին», ընդ որում իրենք համոզվել են, որ արտասահմանից ուղարկված օգնությունը տեղ է հասնում, հակառակ հակասովետական լուրերի, թե իբր այն «բռնազրավում է խորհրդային իշխանությունը»:

Ա. Սաֆրաստյանը իր հերթին նշեց, որ «Ամերիկայի ու Եվրոպայի հայ գաղութները սրտանց միացած են խորհրդային իշխանության, հատկապես խորհրդային իշխանությունը խաղաղություն բերեց Հայաստանին: Հայ գաղութները պատրաստ են օգնության հասնել ամեն հնարավոր միջոցներով, երբ Հայաստանից ճշգրիտ տեղեկություններ ստանան: Ես իմ պարտքն եմ համարում վերագրանալուս պես տեղեկություններ տալ և շտապեցնել օգնության առարկումը»:

Սովետական Հայաստանի կառավարության գիտությունքայն այդ պատվիրակությունը մոտիկից ծանոթացավ երկրի վիճակին, հատկապես գաղթականների դրությունը: Պատվիրակությունը Եվրոպա վերադարձավ Թուրքիայով և մասնավորապես Կ. Պոլսում տեսավ հայ գաղթականների ծանր վիճակը: Այդտեղից Հարոլդ Բարստոնը 1922 թվականի փետրվարի 7-ին ու 14-ին հեռագրեց Ժնև Նանսենին՝ նրան իրազեկ գարձնելով ստեղծված դրությունը (այդ թվում Անդրկովկասում) և խնդրելով արագացնել հնարավոր օգնության կազմակերպումը կարիքավորներին: Նույն նպատակով Բարստոնը ուղարկում է նաև նամակ ու ղեկուցագրեր, որպիսիք ստանալով՝ Նանսենը գոհունակություն է հայտնում մանրամասն հաղորդագրությունների համար և նշում, որ թեև այժմ ինքը զլխովին զբաղված է «ուսական սովի» հաղթահարմամբ, բայց կաշխատի օգնություն կազմակերպել նաև հայ կարիքավորներին:

1922 թվականի մարտի 1-ին Մոսկվայում նախնական համաձայնություն կայացավ մի կողմից՝ Հայկ. ՍՍՀ կառավարության լիազոր-ներկայացուցիչ Ս. Մ. Տեր-Գաբրիելյանի և մյուս կողմից՝ Ֆ. Նանսենի ներկայացուցիչ, Ռուսաստանին միջազգային օգնության մարմնի գործադիր կոմիտեի անդամ Զոն Գորվինի միջև: Այն համապատասխանում էր Ֆ. Նանսենի և ՌՍՖՍՀ-ի արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինի միջև 1921

թվականի օգոստոսի 27-ին և դեկտեմբերի 10-ին կնքված համաձայնագրերին, որոնցով նախատեսվեց նանսենյան ծանրոցներ ուղարկել Ռուսաստանի քաղցածներին: Այժմ ենթադրվում էր այդ նպաստը տարածել նաև Հայաստանի սովյալների վրա¹:

Նանսենյան մարդասիրական գործով դանիացի իրավաբան Հերմոլդ Լաննունգը 1923 թվականին լինում է Հայաստանում հատկապես ժողովրդական կրթության ասպարեզում աշխատողներին օգնելու համար: Ի ղեկ, այդ մասին նա նորից վերհիշեց 1971 թվականի հոկտեմբերին, երբ «Դանիա—ՍՍՀՄ» բնակչության նախագահ, արվեստարան Ալան Ֆրիդբերգայի հետ միասին կրկին ժամանեց Հայաստան. «Երևանում եղել եմ 1923 թվականին և բավական լավ եմ հիշում այն անմխիթար վիճակը, որ տիրում էր այստեղ: Ես այդ օրերին Ֆ. Նանսենի զլխավորած բարեգործական առաքելության գծով եղա Երևանում և Թիֆլիսում՝ օգնելու մտավորականությանը և ուսանողությանը, որոնք նույնպես անմխիթար վիճակում էին: Այժմ ես բարեբախտություն ունեցա նորից այցելել ձեր հինավուրց երկիրը: Ես հրաշքների չեմ հավատում, սակայն անկեղծությամբ հայանում եմ, որ այն, ինչ տեսա, զերազանցեց իմ բոլոր սպասումները: Մտքովս երբևէ չէր անցնի, որ կոտորածից ազատված մի բուռ ազգ փոքր տարածության վրա կկարողանա ստեղծել բարձր մակարդակի արդյունաբերություն, գիտություն: Հին Երևանի տեղը դուք կառուցել եք նորը, ժամանակակիցը, տասնյակ գործարաններով: Նույնիսկ ծիծաղելի է փորձել հինն ու նորը դնել համեմատության մեջ»²:

Նանսենը հիացած է, որ Սովետական Հայաստանը իր գոյության հենց սկզբից կազմակերպեց հայ գաղթականության հայրենադարձություն, ընդ որում ներգաղթողները դառնում էին լիիրավ քաղաքացիներ և ակտիվորեն ընդգրկվում անտեսական ու կուլտուրական շինարարության մեջ: Նրա վրա խիստ բարերար ազդեցություն գործեց Լուսանի կոնֆերանսում սովետական պատվիրակության վերաբերմունքը ղեկի հայկական հարցն ու հայ գաղթականությունը: Հայտնի է, որ այդ առթիվ պատվիրակության ղեկավար, արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինը անձամբ հանդիպումներ ունեցավ Միջազգային հայասիրական լիգայի ու արևմտահայության ներկայացուցիչների հետ և շարա-

¹ Հայկ. ՍՍՀ ՀՀՍԵ ՊԿԱ, ֆ. 114, ց. 2, գ. 5, թ. 78:

¹ ՏԿՍ Հայկ. ՍՍՀ ՀՀՍԵ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 46, թ. 31:

² «Հայրենիքի ձայն», 3. 11. 71:

դրեց սովետական կառավարության տեսակետը, 1923 թվականի հունվարի 26-ին Հայաստանի լիգայի նախագահ Էդուարդ Նեվիլին գրած նամակում Գ. Չիչերինը նշեց. «Այն հետաքրքիր զրույցում, որ ունեցա Ձեզ հետ և Հայաստանի լիգայի՝ Ձեզ ուղեկցող պատվիրակների հետ, ես առիթ ունեցա արձանագրելու, որ Լոզանի կոնֆերանսում Ռուսաստանը, Ռեյրախիան և Վրաստանը հետաքրված են հայկական հարցի քննարկումից, շնայած նրան, որ միայն նրանց մասնակցությունը կարող էր գործունե կերպով օգնել այդ հարցի բարեհար լուծմանը»¹: Իրոք, Անտանտի պետությունների հանցանքով սովետական պատվիրակությունը մասնակցեց միայն սեծովյան նեղուցների սեծիմի հարցի քննարկմանը: Այնուամենայնիվ, ինչպես տեսնում ենք, սովետական պատվիրակությունը օգտագործեց հարմար առիթը և արտահայտվեց հայկական հարցի վերաբերյալ: Միաժամանակ Չիչերինն ընդգծեց, որ սովետական երկիրը կարող է ընդունել ճշմարտության շարժումը հայ գաղթականները: Վերջում նա խնդրում է Նեվիլից նամակի բովանդակությունը հաղորդել շահագրգռված շրջաններին: Գրան հունվարի 27-ին հետևում է սովետական միացյալ պատվիրակության նույնատիպ հուշագիրը Լոզանի կոնֆերանսի նախագահությանը: Գ. Չիչերինը Լոզանում ընդունել է նաև արևմտահայության ներկայացուցիչ, Ազգային պատվիրակության ղեկավար Գ. Նորատունկյանին և վերադառնալով հավաստիացրել, որ սովետական պետությունը պատրաստ է հայ գաղթականներին բնակության հողամաս տրամադրել:

Ակնհերև է, որ այդ ամենը յուրահատուկ բողոք էր հայկական հարցում արևմտյան տերությունների նենգամիտ քաղաքականության դեմ. «Անտանտի տերությունները և ամենից առաջ Անգլիան, «հայկական հարցը» մտցնելով Լոզանի կոնֆերանսի օրակարգի մեջ, այն օգտագործում էին Ռուրթիայի վրա ճնշում գործադրելու նպատակով: Նրանք չէին ձգտում այդ հարցը լուծելու հայ ժողովրդի շահերի օգտին: Միակ կառավարությունը... որն անկեղծորեն ձգտում էր հայկական հարցի լուծման, սովետական կառավարությունն էր»²:

Թե՛ Գ. Չիչերինի նամակն ու զրույցները և թե՛ սովետական պատվիրակության հուշագիր-հայտարարությունը գոհունակու-

թյամբ ընդունեցին Հայաստանի միջազգային լիգայի ներկայացուցիչները և թիրևեց շնորհակալությունը հայտնած են Սովետներու այդ մարդասիրական նախաձեռնության համար՝ որով հայոց ապաստարան մը կընծայվեր»: Նույնպես վարվեցին փոյուրահայերը և մասնավորապես «Չիչերինի առաջարկը երախտագիտությանը ընդունված է Հայ պատվիրակության կողմէ: Պ-ն Նորատունկյանը ըսավ... թե պատվիրակությունը լուրջ աշխատության պիտի լծվի այդ առաջարկին ազգային բազմաբնի համեմատ օգտվելու համար»¹:

Հայոց ցավերով ապրող նանսներ հատուկ գոհունակություն հայտնեց Գ. Չիչերինին և 1923 թվականի փետրվարի 10-ին նրան գրած նամակում խնդրեց ամեն կերպ արագացնել հայ գաղթականների տեղափոխումն ու տեղավորումը: Փետրվարի 25-ին պատասխանելով «Թանկագին պարոն նանսներին», Չիչերինը գրեց. «Շատ շնորհակալ եմ հայկական հարցի վերաբերյալ Ձեր շատ բարի նամակի համար... Ես շատ ուրախ կլինեմ հարմար առիթով հանդիպելու Ձեզ՝ կարծիքներ փոխանակելու այդ խնդրի շուրջը»: Միաժամանակ Չիչերինը հաղորդում է, որ կատարվում է համապատասխան նախապատրաստական աշխատանք և անհրաժեշտ է առաջիկայում ճշտել ներգաղթողների քանակը ու նրանց տեղափոխման համար տրվելիք օգնության շափը:

Ամբողջությամբ վերցրած, Լոզանի կոնֆերանսի ժամանակ սովետական պատվիրակության վերաբերմունքը ոչ միայն ոգեշնչեց արտասահմանյան հայանպաստ գործիչներին, այլև վճռական բարերար ազդեցություն ունեցավ սփյուռքահայության վրա: Ահա թե ինչու «Պրավդան», ելնելով կարևոր տեղաշարժերից, գրեց. «Մեր պատվիրակության հայտարարությունը շատ համակիր արձագանք գտավ ողջ հայ էմիգրացիայի մեջ և բեկում առաջացրեց Սովետական Ռուսաստանի նկատմամբ... Արտասահմանյան հայ էմիգրացիոն կենտրոնները դիմեցին սովետական կառավարությանը՝ հայ փախստականների ներգաղթի վերաբերյալ և ստեղծել են ներգաղթի ու գումարների ժողովման հատուկ հանձնաժողովներ»²:

Ակնհերև է, որ երիտասարդ Սովետական Հայաստանը հայրե-

¹ Документы внешней политики СССР, т. VI, стр. 165—166.

² Նույն տեղը, էջ 610:

¹ «Վերջին լուր», 5. 2. 23:

² Правда, 12.9.23.

նադարձութիւնը կազմակերպում էր մեծ զոհողութիւնների գնով և հատկապես ՌՍՖՍՄ-ի օգնութեամբ: Նա պատրաստ էր ավելին անելու, եթէ շատ միջոցներ լինեին: Ուստի, զարմանալի չէ, որ Հայկ. ՍՍՀ Ժողկոմխորհը, միութենական կառավարութեան գիտութեամբ, հնարավոր համարեց օգտագործելու նաև արտասահմանյան կապիտալը, հատկապես հայ բարեգործական ընկերութիւնների նպաստը, ինչպես նաև մասնավոր կապիտալիստներից փոխառութիւնն ու վարկերը:

1923 թվականի մարտի 5—17-ը կիսում կազմակերպվեց միջազգային տրադիցիոն զարնանային (12-րդ) տոնավաճառ, որին մասնակցեց նաև Սովետական Հայաստանը: Նրա արտադրանքը (պղինձ, ծխախոտ, խմիչքներ, ոսկերչական ու ասեղնագործական իրեր և այլն) աշխույժ հետաքրքրություն առաջ բերեց այցելուների և հատկապես ֆրանսահայերի մեջ, որոնք ասում էին. «Մեր հայրենիքին մեջ ունինք ուրեմն ծաղկած փորձիկ ճարտարարվեստներ, որոնք պետք է քաջալերել, քանի որ նախնական նյութերը և օժանդակ ուժերը բնութեան կողմն ձրիապես մատակարարված են: Հուսանք, որ մեր հայրենասիրութիւնը այդ օժանդակ ուժերուն մեջն ամենեն զորավորն ու ազդեցիկը դառնա»¹:

Ցուցահանդեսի կապակցութեամբ կիսն էր մեկնել Սովետական Հայաստանի կառավարութեան ներկայացուցիչ Ա. Փիրալովը, որը լինում է նաև Փարիզում և 1923 թվականի հունիսի 2-ին Հայկ. ՍՍՀ Ժողկոմխորհին ներկայացրած զեկուցագրում նշում. «Փարիզի հայ հասարակայնութեան... տարբեր խավերում ես տեսա սեր դեպի հարազատ ժողովուրդը և անկեղծ բնական ձրգատում՝ լինել օգտակար ու աշխատել նրա այժմյան կառավարութեան հետ»²: Այնուհետև նա շեշտում է, որ այդպիսի տրամադրութիւն կա արտասահմանյան բոլոր հայ զաղթօջախներում, քանի որ աշխատավորներն իրենց սեփական փորձով համոզվել են արևմտյան տերութիւնների խարդախ ու նենգամիտ քաղաքականութեան մեջ և իրենց իղձերը կապում են Սովետական Հայաստանի հետ. «Այդպիսի պայմաններում բոլոր կողմերից թշուղ հայ գյուղացիների համար մի խաղաղ անկյուն ստեղծելու ողջ հույսը դրվում է Հայկ. ՍՍՀ-ի վրա: Հայրենասիրաբար տրա-

մադրված շատ մարդիկ խոր հույսով ու ապավինութեամբ են նայում Սովետական Հայաստան երկրին, հետաքրքրվում են այն ամենով, ինչ կատարվում է այնտեղ և տեսնում ամուր, մշտական ու կենդանի կապ հաստատել նրա հետ»³:

Ա. Փիրալովը բարյացակամ հանդիպումներ ունեցավ Ազգային (արևմտահայութեան) պատվիրակութեան հետ, որի մեջ էին մտնում Գ. Նորատունկյանը (նախագահ, փոխարինել էր Պողոս Նուրարին), Ե. Կարիկյանը, Աղաթոն-բեյը (Հայկական բարեգործական ընկերութեան Փարիզի բաժանմունքի նախագահը), գրող Զարեկ Եսայանը և ուրիշներ: Ֆրանսիայում սովետական ղեկավարութեան առաջին քարտուղար Ա. Փիրումյանը (Փիրումովը) 1924 թվականի մայիսի 26-ին Ալ. Մյասնիկյանին գրում է, որ ինքը ևս հանդիպում է ունեցել հայկական շրջանների և, մասնավորապես, Ազգային պատվիրակութեան հետ, որը «պատրաստ է իրեն դնելու Հայաստանի Ժողկոմխորհի տրամադրութեան տակ»⁴: Նա գոհունակութեամբ է արտահայտվում նաև Պողոս Նուրար փառայի մասին և նշում, որ նրա զխաւորած եզրկատական բարեգործական ընկերութիւնը պատրաստվում է իր հաշվին Հայաստան ուղարկել 250 որբերի, Հայաստանում սոսոգելու 10—12 հազար ղեկատին հող (շուտով այդտեղ կգա նրանց ինձնները), 300000 ֆրանկ տրամադրելու Հայաստանի Ժողկոմխորհին, ընդ որում 50000 ֆրանկը տվել է ինքը՝ Պողոս Նուրարը և դա «ավելի շուտ քաղաքական վստահութեան ակտ է... Այժմ կարող եմ նշել, որ ինքը՝ փառան և նրա շրջապատը լիովին լոյալ կաշխատեն Հայաստանի համար, միայն հարկավոր է նրանց հետ ունենալ մշտական կապ ու մղում»⁵:

Գ. Նորատունկյանը դեռ 1923 թ. սեպտեմբերի 14-ին Հայկ. ՍՍՀ Ժողկոմխորհի նախագահ Լուկաշինին ուղարկած նամակում ամենից առաջ շնորհակալութիւն է հայտնում, որ իրենք նույնպես հրաւիրված են հոկտեմբերին Երևանում կայանալիք Հայաստանի օգնութեան կոմիտեների 3-րդ համաժողովին և իբրև Փարիզի հայ Կարմիր խաչի ներկայացուցիչ կմեկնի Եսայի Կարիկյանը: Այնուհետև նա հաղորդում է, որ արդեն ծանոթացել են Հայաստանի վերաշինութեան ծրագրին և ուղում են օժան-

¹ «Ապագա», 31. 3. 23:

² Հայկ. ՍՍՀ ՀՅԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, դ. 245, թ. 77:

³ Հայկ. ՍՍՀ ՀՅԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, դ. 245, թ. 76:

⁴ Նույն տեղը, դ. 268, թ. 271:

⁵ Նույն տեղը, թ. 270:

8— Նամակներ և Հայաստանը

դակել դրա իրականացմանն ու հայ գաղթականների տեղափոխմանը: Հատկապես ակնարկելով Սարգսրապատի դաշտի ոռոգման խնդիրը, նա գրում է. «Մտածեցինք, որ Ձեզ շատ ընդունելի պիտի ըլլար, եթե արտաքին լուրջ ու կարևոր դրամական օժանդակություն մը ապահովվեր անոր փութանակի իրականացման համար, մանավանդ որ գործը մեծաքանակ գումարի մը կկարոտի»¹: Նորատունկյանը գրում է, որ իրենք առաջարկել են այդ գործի («արտաքին օժանդակության») «իրականացումը հանձնել կամ նանսների հանձնախմբին, որ արդեն Ռուսիո մեծ և զնահատելի ծառայություններ մատուցած է, և կամ Ամերիկյան նպաստամատուցին, որ տեղվոյ վրա համեստ շրջանակի մը մեջ, կկատարե նմանօրինակ ձեռնարկ մը հօգուտ մեր որբերուն»²: Ձեր կարգադրությամբ ու համաձայնությամբ»³: Իհարկե, անհիմն էր հավասարության նշան դնել այդ երկու մարմինների միջև:

Վերջում Գ. Նորատունկյանը Հայաստանի կառավարությունից խնդրում է վերոհիշյալի մասին հայտնել իր կարծիքը. «Ելնդրեմ, որ բարեհաճելիք Ձեր թելադրություններն ու փափաքը հեռագրել մեզ»³:

Հայ ազգային պատվիրակության նախագահը հատուկ նամակ է ուղարկում նաև Մոսկվա՝ ՍՍՀՄ արտաքին գործերի ժողովումի տեղակալ Լ. Կարախանի անունով, ուր հաղորդվում է, որ արտասահմանում հաշտությանը է գնում գումարների ժողովումը և ժողովումը 150 հազար հայ գաղթականներ հույս ունեն վերադառնալու Հայրենիք»⁴: Այնուհետև նա սհայ է միգրացիայի անունից շնորհակալություն է հայտնում սովետական կառավարությանը Հայաստանում կատարվող ոռոգման աշխատանքների համար, որոնք ավելացնում են ցանքատարածությունները և հնարավորություն տալիս այնտեղ տեղավորելու ու ապրուստ գտնելու բազմաքանակ հայ գաղթականների»⁴: Գ. Նորատունկյանի նամակը քննարկվում է սովետական վերագասօրհաններում և Աշխատանքի ու պաշտպանության խորհրդին կից արդյունաբերական ու հողագործական ներդրողի հանձնա-

ժողովի նախագահ Վ. Ա. Սմոլյանինովը, 1923 թվականի սեպտեմբերի 4-ին բարյացակամորեն պատասխանելով նրան հայտնում է, որ սովետական պետությունը հենց այժմ կարող է հող տրամադրել 50000 հայ գաղթականների, որոնց տեղափոխման ու տեղավորման ծախսերի վերաբերյալ հարկ կլինի մանրամասն խոսել: Ուստի, նա այդ նպատակով Մոսկվա է հրավիրում հայ Ազգային պատվիրակության ներկայացուցչին. «Այն զեպրում,— գրում է Վ. Սմոլյանինովը Գ. Նորատունկյանին,— եթե իմ առաջարկությունը ոչ մի առարկության շահնդիպի Ձեր կողմից, ես երախտապարտ կլինեի, եթե դուք ինձ հեռագրեիր այն անձի անունը, որը կարող է բանակցությունների մեջ մտնել Մոսկվայում, որպես Ձեր ներկայացուցիչը, որպեսզի ես կարողանամ անմիջապես տալ անհրաժեշտ հրահանգ՝ այդ անձին Ռուսաստան մեկնելու վիզա ուղարկելու համար»:

Ազգային պատվիրակությունը գոհունակությամբ է ընդունում այդ լուրը և բանակցությունների համար ներկայացուցիչ նշանակում: Այդ մասին Գ. Նորատունկյանը նամակում հայտնում է Վ. Սմոլյանինովին, որը 1924 թվականի հունվարի 30-ին նրան պատասխանում է. «Պարոն նախագահ, մեծ հաճույքով ստացա Ձեր՝ 1923 թվականի նոյեմբերի 15-ի նամակը, որը ինձ հասավ Մոսկվայում՝ 1924 թվականի հունվարի 6-ին: Հաստատ հույս ունեմ, որ... մենք կհասնենք գործնական արդյունքների Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունում փախստական հայերի տեղավորման համար»⁵:

1923 թվականի աշնանը Հայաստան է գալիս Ե. Կարիկյանը, որը մոտիկից ծանոթանում է հանրապետության միճակին, տրնտեսության ու մշակույթի զարգացման հեռանկարներին, առանձնապես հողաշինարարական պլաններին ու աշխատանքներին, ուսումնասիրում հայ գաղթականների տեղավորման հնարավորությունները: Նա հանդիպումներ ունեցավ Հայկ. ՍՍՀ և Անդրֆեդերացիայի կառավարական գործիչների հետ և ամենուրեք զգաց ջերմ հոգատարություն դեպի հայ ժողովուրդն ու նրա առաջիկա դավակները: Վերադառնալով Փարիզ, Ե. Կարիկյանը 1924 թվականի հունվարի 20-ին Հայ ազգային պատվիրակության նախագահությանը ներկայացնում է հատուկ զեկուցագիր և

1 Հայկ. ՍՍՀ 2206 ՊԿԱ, ֆ. 113, գ. 100, ք. 61.

2 Եույն տեղը, ք. 62:

3 Եույն տեղը, ք. 63:

4 Правда, 12.9.23.

1 АВП СССР, фонд Референтура НКВД по Закавказью, оп. 8, ед. хр. I, п. 10, л. 2.

դակել դրա իրականացմանն ու հայ գաղթականների տեղափոխմանը: Հատկապես ակնարկելով Մարզարապատի դաշտի ոռոգման խնդիրը, նա գրում է. «Մտածեցի՞նք, որ Ձեզ շատ ընդունելի պիտի ըլլար, եթե արտաքին լուրջ ու կարևոր դրամական օժանդակություն մը ապահովվեր անոր փութանակի իրականացման համար, մանավանդ որ գործը մեծաքանակ գումարի մը կկարոտի»¹: Նորատունկյանը գրում է, որ իրենք առաջարկել են այդ գործի («արտաքին օժանդակության») «իրականացումը հանձնել կամ նանսեների հանձնախմբին, որ արդեն Ռուսոն մեծ և զնահատելի ծառայություններ մատուցած է, և կամ Ամերիկյան նպաստամատույցին, որ տեղվոյ վրա համեստ շրջանակի մը մեջ, կկատարե նմանօրինակ ձեռնարկ մը հօգուտ մեր որբերուն՝ Ձեր կարգադրությամբ ու համաձայնությամբ»²: Իհարկե, անհիմն էր հավասարության նշան դնել այդ երկու մարմինների միջև:

Վերջում Գ. Նորատունկյանը Հայաստանի կառավարությունից խնդրում է վերոհիշյալի մասին հայտնել իր կարծիքը. «Ելնդրեմ, որ բարևհաճելիք Ձեր թելադրություններն ու փափաքը հեռագրել մեզ»³:

Հայ ազգային պատվիրակության նախագահը հատուկ նամակ է ուղարկում նաև Մոսկվա՝ ՄՍՀՄ արտաքին գործերի ժողկոմի տեղակալ Լ. Կարախանի անունով, ուր հաղորդվում է, որ արտասահմանում հաջողությամբ է զննում գումարների ժողովումը և «մոտ ապագայում մոտ 150 հազար հայ գաղթականներ հույս ունեն վերադառնալու Հայրենիք»։ Այնուհետև նա «հայ էմիգրացիայի անունից շնորհակալություն է հայտնում սովետական կառավարությանը Հայաստանում կատարվող ոռոգման աշխատանքների համար, որոնք ավելացնում են ցանքատարածությունները և հնարավորություն տալիս այնտեղ տեղավորելու ու ապրուստ գտնելու բազմաքանակ հայ գաղթականների»⁴: Գ. Նորատունկյանի նամակը քննարկվում է սովետական վերադասօրհաններում և Աշխատանքի ու պաշտպանության խորհրդին կից արդյունաբերական ու հողագործական ներգաղթի հանձնա-

ժողովի նախագահ Վ. Ա. Սմոլյանինովը, 1923 թվականի սեպտեմբերի 4-ին բարյացակամորեն պատասխանելով նրան հայտնում է, որ սովետական պետությունը հենց այժմ կարող է հող տրամադրել 50000 հայ գաղթականների, որոնց տեղափոխման ու տեղավորման ծախսերի վերաբերյալ հարկ կլինի մանրամասն խոսել: Ուստի, նա այդ նպատակով Մոսկվա է հրավիրում հայ Ազգային պատվիրակության ներկայացուցչին. «Այն զեպքում, — գրում է Վ. Սմոլյանինովը Գ. Նորատունկյանին, — եթե իմ առաջարկությունը ոչ մի առարկության շանդիպի Ձեր կողմից, ես երախտապարտ կլինեի, եթե դուք ինձ հեռագրեիք այն անձի անունը, որը կարող է բանակցությունների մեջ մասնել Մոսկվայում, որպես Ձեր ներկայացուցիչը, որպեսզի ես կարողանամ անմիջապես տալ անհրաժեշտ հրահանգ՝ այդ անձին Ռուսաստան մեկնելու վիզա ուղարկելու համար»:

Ազգային պատվիրակությունը գոհունակությամբ է ընդունում այդ լուրը և բանակցությունների համար ներկայացուցիչ նշանակում: Այդ մասին Գ. Նորատունկյանը նամակում հայտնում է Վ. Սմոլյանինովին, որը 1924 թվականի հունվարի 30-ին նրան պատասխանում է. «Պարոն նախագահ, մեծ հաճույքով ստացա Ձեր՝ 1923 թվականի նոյեմբերի 15-ի նամակը, որը ինձ հասավ Մոսկվայում՝ 1924 թվականի հունվարի 6-ին: Հաստատ հույս ունեմ, որ... մենք կհասնենք գործնական արգյունքների Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունում փախստական հայերի տեղավորման համար»⁵:

1923 թվականի աշնանը Հայաստան է գալիս Ս. Կարիկյանը, որը մոտիկից ծանոթանում է հանրապետության վիճակին, տրեստեսության ու մշակույթի զարգացման հեռանկարներին, առանձնապես հողաշինարարական պլաններին ու աշխատանքներին, ուսումնասիրում հայ գաղթականների տեղավորման հնարավորությունները: Նա հանդիպումներ ունեցավ Հայկ. ՄՍՀ և Անդրֆեդերացիայի կառավարական գործիչների հետ և ամենուրեք զգաց ջերմ հոգատարություն զեպի հայ ժողովուրդն ու նրա տարագիր զավակները: Վերադառնալով Փարիզ, Ս. Կարիկյանը 1924 թվականի հունվարի 20-ին Հայ ազգային պատվիրակության նախագահությանը ներկայացնում է հատուկ զեկուցագիր և

¹ Հայկ. ՄՍՀ 2207 ՊԿԱ, ֆ. 113, ց. 100, ք. 61.

² Նույն տեղը, ք. 62.

³ Նույն տեղը, ք. 63.

⁴ Правда, 12.9.23.

⁵ АВП СССР, фонд Репертура НКВД по Закавказью, оп. 8, ед. хр. 1, п. 10, л. 2.

ապա իր տպավորություններն ամփոփում «Խորհրդային Հայաստանի ճարտարվեստը» գրքույկում, որը լույս տեսավ նույն թվականին:

Ե. Կարիկյանն ամենից առաջ իր խոր գոհունակությունն է հայտնում Սովետական Հայաստանում ծավալված աշխատանքային եռուզեռի առթիվ, որի հետևանքով կարճ ժամանակում վերացվել է սովը և մարդիկ ապահով-կերտում են իրենց նոր կյանքը: Նա հատկապես նշում էր, որ երկրի «բոլոր վարիչները ուշիմ, ծանրախոհ, գործունյա ու հայրենասեր անձինք են: Ոչ միայն մեզմե զեպի հոն ապաստանած 300000 զաղթականներուն հող և ապրելու հնարավորություն տված են (արդեն այսօր ամենքն ալ իրենք դիրենք կպահեն), այլև մտահոգված են մեր ցեղին թափառական բնկորներուն անողոր բախտով¹: Այնուհետև նա մանրամասն նկարագրում է Հայաստանի հարստությունները, արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացման նախադրյալները, հողերի ոռոգման ու ճահիճների շտրայման պլանները և նշում, որ առաջիկայում կարելի է այնտեղ տեղափոխել 50 հազար զաղթականների: Գրա համար կպահանջվի 5 միլիոն դոլար: Սովետական Հայաստանի կառավարությունը արդեն սկսել է փրկարար հայրենադարձություն՝ առանց որևէ արտաքին օգնության, բայց Ե. Կարիկյանը շնչոտում է, որ այդ գործում իր ներդրումը պետք է ունենա նաև սփյուռքահայությունը: Նա ցույց է տալիս, որ «Ե. կառավարությունը ոչ միայն մեկ, այլ ամեն ուղղությամբ կմտածե, Հայաստանի հարբստությանց աղբյուրները կրանա մեր ժողովուրդին առջև, աշխատանքով ապրելու և պատվավոր կյանք մը ստեղծելու համար»²:

Գնալով ուժեղանում է սփյուռքահայության ձգտումը զեպի Սովետական Հայաստան, և 1924 թվականի մայիսի 24-ին «Պրավդան» հաղորդում է. «Արտասահմանյան հայ գաղութների կողմից զբսևորվում է ավելի աճող հետաքրքրություն Սովետական Հայաստանի նկատմամբ: Շարժում է սկսվել հօգուտ այն հայերի տեղափոխման Հայաստան, որոնք փախել են համաշխարհային պատերազմի ժամանակ: Չրանսիական կառա-

վարությունը Ազգերի լիգային տրամադրել է 335000 ֆրանկ՝ 5000 փախստական հայերի Հայաստան տեղափոխելու ֆոնդն ստեղծելու համար: Հայկական բարեգործական ընկերությունը ձեռնամուխ է եղել Երևանի շրջանում 10000 դեսյատին հողերի ոռոգմանը: Կարմիր խաչի ընկերությունը Բուխարեստում գեղորայք է ուղարկում Երևան: Շարունակվում են նվիրատվությունները Հայաստանին օգնելու ֆոնդին՝ այդ գումարները Սովետական Հայաստանին տրամադրելու պարտավորությամբ»:

Նման իրավիճակը խիստ անհանգստացնում է դաշնակցությունը, որը, վտարված Հայաստանից, ծվարել էր արտասահմանում՝ իմպերիալիստների փեղերի տակ և իր գոյության «կռվան» էր դարձրել սփյուռքահայությունը, որպեսզի և՛ միջոցներ գտնվի, և՛ զբաղվի քաղաքական շանտաժով: Պատահական չէ, որ նախկին դաշնակցական կառավարության լուսավորության մինիստր Նիկոլ Աղբալյանը 1924 թվականի մայիսին Եգիպտոսում արտասանած ճառում ոչ միայն լուսանք թափեց Սովետական Հայաստանի հասցեին, այլև այն միտքն արտահայտեց, թե «մենք կարող ենք հայկական պետություն ստեղծել առանց տերիտորիայի, հարկավոր է միայն եռանդուն կաշի գործին: Մենք կարող ենք հայ գաղթականներին նախապատրաստել այն պահի համար, երբ հայրենիքը կաղատագրվի բոլշևիկյան բարբարոսներից»³:

Վտարանգի դաշնակցությունը դեմ էր ոչ միայն հայրենադարձությանը զեպի Սովետական Հայաստան, այլև հայ գաղթականներին նույնիսկ «նանսենյան անձնագրեր» տալուն, քանի որ նա հավակնում էր արտասահմանում «ներկայանալ կառավարական» (նախկին վարչապետության) ֆունկցիաներով և «հայկական անձնագրեր» տալու պայտինի իրավունքով, որն իր հետ բերում էր նաև եկամուտներ (գաղթականներին պլուկելով): Հատկապես հոխորտում էր նախկին «վարչապետ» Ալ. Խատիսյանը, որը խստորեն բողոքարկեց «նանսենյան անձնագրերի» դեմ:

Ահա ինչպիսին էր ազգության գաշնակցությունը, որն ավելի և ավելի էր փարվում իմպերիալիզմին և փորձում արևմտյան տերությունների ու զանազան «հայրենասիրական» մարմինների օգնությամբ իր համար «ազգային ռեպուտացիա» ստեղծել:

¹ Ե. Կարիկյան, Խորհրդային Հայաստանի ճարտարվեստը, Փարիզ, 1924, էջ 15:

² Նույն տեղը, էջ 5:

³ Правда, 7. 09. 24.

վարկաբեկելով սովետական կարգերը: Հենց այդպիսի նպատակ էր հետապնդում 1924 թվականի սեպտեմբերի 1-ին ժնեում հրավիրված այսպես կոչված «համահայկական համագումարը»: Փաստորեն դա դաշնակցական խառնածողով էր, որը, ծածանելով հայ գաղթականության «ապահովման» գործը, ձգտում էր մի կողմից՝ իր համար ապրուստի միջոցների հայթայթել (հայ գաղթականների անդամավճարներով, իմպերիալիստների «նպաստներով»), իսկ մյուս կողմից՝ զրպարտել բոլշևիզմը: Մոսկվայում ԱՄՖՍՀ-ի լիազոր-ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրիելյանը «Պրավդայի» թղթակցի հետ ունեցած գրույցում ընդգծեց, որ «համահայկական համագումարի» հրավիրման փորձը բոս էություն ձևավորվեց և նորից բացահայտվեց դաշնակցության ու նրա հովանավորների քաղաքական սնանկությունը, բանզի սփյուռքահայ աշխատավորությունն իր հույսերը կապում է բարգավաճող Սովետական Հայաստանի հետ (տե՛ս «Պրավդայի» 1924 թվականի № 203-ը): Իր հերթին ՀԿ(Բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Հովհաննիսյանը Երևանում՝ գյուղկոուպերացիայի համագումարում արտասանած ճառում, մերկացրեց վտարանդի դաշնակցականների գառանցական սլոյանը՝ ստեղծելու «էքստերիտորիալ Հայաստան», «կեղծ պետություն» և ապա հարձակվելու Սովետական Հայաստանի վրա: Անշուշտ, դա կատարվում էր արևմտյան իմպերիալիստների ներշնչմամբ, բայց թե՛ տերերի և թե՛ ծառաների անհույս ճիգերը դատապարտված էին տապալման: Սովետական Հայաստանի աշխատավորներն ասում էին. «Թող նրանք իմանան, որ եթե երբևիցե նրանք համարձակվեն կրկնելու մենշևիկյան-բանդիտական արկածախնդրությունը, ապա մենք նրանց կտանք արժանի պատասխան, մենք նրանց ցույց կտանք, որ Սովետական Հայաստանը ստեղծում ու պաշտպանում են լայն աշխատավորական մասսաները»¹:

Ինչ վերաբերում է հայ աշխատավոր գաղթականությանը, ապա սովետական երկիրը իր դռները լայնորեն բացում է նրա առաջ և ապահովում բանվորագյուղացիական պետության նոր քաղաքացիների ստեղծագործ կյանքը:

¹ «Правда», № 9. 24. Այստեղ ակնարկված «մենշևիկյան-բանդիտական արկածախնդրությունը» 1924 թվականի սեպտեմբերի վրաստանում հրահարված հակասովետական խռովությունն էր, որն անմիջապես լիկվիդացվեց:



Նանսենն ընդհանուր առմամբ ծանոթ էր վերոհիշյալ իրադարձություններին և հայ գաղթականության վիճակին, բայց երբ Ազգերի լիգայի խորհուրդը 1924 թվականին դիմեց նրան՝ որպես գլխավոր կոմիսարի, զբաղվելու այդ հարցով, նա, հաշվի առնելով գործի զմեղությունն ու պատասխանատվությունը, սկզբում հրաժարվեց: Նանսենը համաձայնվեց, երբ հրավերը կրկնվեց և հավաստվեց, որ կգործի Աշխատանքի միջազգային բյուրոյի հետ միասին, կստանա աշակցություն Ազգերի լիգայից¹: Այդպիսով, նանսենի նախնական «հրաժարումը» չպետք է գիտել որպես չկամության արդյունք. ավելի շուտ դա դարձավ պրոշակի քայլ՝ ամրապնդելու նրա դիրքերն ու պարտավորեցնելու դիմողներին, և որքան էլ վերջիններս հաշվենկատորեն ու տոսկ «մի բան անելու» նկատառում ունենային, որը պարզ կդառնա հետագա շարադրանքից, այնուամենայնիվ, երկրորդ անգամ նանսենը ոչ միայն համաձայնվեց, այլև զխոսվին սուղվեց այդ գործի մեջ, ցուցաբերեց վիթխարի կամք ու հաստատակամություն՝ այն մինչև վերջ հասցնելու համար:

Արտասահմանում հայ գործիչները իրենց հերթին շփվում էին Ֆ. Նանսենի ու նրա աշխատակիցների հետ, նրանց ծանոթացնում իրենց պլաններին և խնդրում աշակցություն գրանց իրականացման համար: 1924 թվականի ապրիլի 4-ին Ազգերի լիգայի նանսենյան միսիային է ուղարկվում Ե. Կարիկյանի զեկուցագիրը Սարգարապատի դաշտի ռոտգման հնարավորության մասին, ուր մասնավորապես նշվում է. «Եթե ջուրն ապահովվի, ես շատ քիչ հող գիտեմ ասոր շափ բարերար, շատ լավ բամբակի հասույթ կարելի է ստանալ, բրինձ, ցորեն, գարի և ամեն տեսակ բանջարեղեն, բացի գետնախնձորեն ու կաղամբեն, շատ լավ եկամտոտ կուտան... Երևանի խաղողը նշանավոր է, պատեղազմեն առաջ մեծ քանակությամբ զոնյակ կշինվեր հոն»²:

Ազգերի լիգան և մասնավորապես հայ գաղթականների տեղավորման հետ: Հայաստան է գալիս Ռուսաստանում Ֆ. Նանսենի ներկայացուցիչ Զոն Գորվինը: Մինչ ատ նա Մոսկվայում, սո-

¹ Fr. Nansen, Betrogenes Volk, S. 5.
² Հայկ. ՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 235, թ. 22:

փետեան կառավարութեան գիտութեամբ, ԱՄՖՍՀ մշտական ներկայացուցչութիւնից 1924 թվականի հուլիսի 24-ին ստանում է հատուկ վկայական, որտեղ գրված է. «Նա դ-ր Նանսենի անուանից մեկնում է Հայաստան—Երևան՝ հայ գաղթականների գործով: Ներկայացուցչութիւնը խնդրում է բոլոր համապատասխան հիմնարկներին ու անձանց բաղ. Ջոն Գորվիլին ցույց տալ ամեն տեսակի աջակցութիւն նրա խնդիրների կատարման համար»: Արդևն օգոստոսին Գորվիլը Երևանում էր, ուր մտտիկից ծանոթացավ նանսենյան ծրագրով հայ գաղթականութեան տեղափոխման հնարավորութեան հետ: Նա հողժողկոմ Ա. Սրզնկյանին գրած նամակում նշում է, որ իրեն հետաքրքրում են, թե գաղթականներին ի՞նչ հողեր են տրամադրվելու, ինչքա՞ն ծախս պետք է կատարվի և որո՞նք են դրա հատուցման երաշխիքները: Մասնավորելով իր խոսքը Սարգարապատի դաշտի ոռոգման մասին, նա վկայակոչում է ինժեներ Զավալիշինի պլանը և ցանկանում իմանալ, թե ի՞նչ վերաբերմունք ցույց կտա Թուրքիան Արաքսի ու Արփաշախի ջրերի օգտագործման հարցում: Այս նա հաղորդում էր, որ նախնական տվյալներով ոռոգման գործն իրականացնելու համար պետք է 6 միլիոն ուրբի (չհաշված գաղթականների տեղավորման ծախսերը), որը կարելի է ձեռք բերել արտասահմանյան փոխառութեամբ: Բայց դրա համար պետք է երաշխիք. «Արտասահմանից այդպիսի փոխառութիւն ստանալու առավել նպատակահարմար և հավանական եղանակը,— գրել է Ջ. Գորվիլը,— իմ կարծիքով նրա ակցեպտըն է ՍՍՀՄ պետբանկի կողմից: Ես շատ կցանկանայի իմանալ հայկական կառավարութեան կարծիքը՝ այդպիսի առաջարկի վերաբերյալ և արդյոք նա պատրաստ է պաշտպանել այն»¹: Գորվիլին տրվում են համապատասխան տեղեկութիւններ ու պատասխաններ իրեն հետաքրքրող հարցերի մասին և մասնավորապես Սովետական Հայաստանի կառավարութիւնն ընդգծում է իր սլատրաստակամութիւնը տալու անհրաժեշտ արտոնութիւններ՝ հայ գաղթականութեան տեղավորման համար:

Սովետական Հայաստանի կառավարութիւնը դեմ չէր նաև արտաքին փոխառութեանը, առավել ևս օգնութեանը, եթե այն տրվում էր առանց քաղաքական նենգամիտ պլանների ու վաշխառուական պայմանների: Այդ առթիվ Ալ. Մյասնիկյանը 1924

թվականի հոկտեմբերի 8-ին Երևանի կուսակցական, արհմիութենական ու կոմերիտական կազմակերպութիւնների միացյալ ժողովում ասաց. «Եթե հայ բուրժուան ուզում է մեզ օգնել, թող օգնի: Մենք կընդունենք այդ օգնութիւնը նույնպես, ինչպես Մակդոնալդի ու Անգլիայի օգնութիւնը: Մենք չենք խանգարի գրան»¹: Բայց պետք է հիշել, որ բուրժուաները ձրի ոչինչ չեն տալիս և միշտ էլ, նույնիսկ «օգնութեան» անպան տակ, հետամտում են իրենց քաղաքական ու տնտեսական շահերը: Նրանց կատարածունքն են դաշնակցականները, որոնք արտասահմանում աղմկում են հայկական հարցի մասին, վկայակոչում հայ գաղթականների ծանր վիճակը, բայց դեմ են նրանց վերադարձին Սովետական Հայաստան, որովհետև այդ դեպքում նրանք կզբրկվեն «ժողովրդից», նրա անունով «քաղաքական գործունեութիւն» վարելու «բարոյական իրավունքից», նրա հաշվին դանազան գումարներ (հանգանակութիւններ, նվիրատվութիւններ և այլն) գլլելու հնարավորութիւնից, պարզ ասած՝ ապրելու միջոցից: Նրանք օգնութիւն են ստանում արևմտյան տերութիւններից, որպեսզի ալիլի ակտիվորեն գործեն սովետական իշխանութեան դեմ. «Եմբոպան,— ասում էր Ալ. Մյասնիկյանը,— գաշնակներին միջոցներ է խոստանում, որպեսզի նրանք դուրս գան մեր դեմ»: Պատահական չէ, որ Ռուբեն փաշան ժնկի մի խանածողովում նույնիսկ հայտարարել է. «Ժամանակն է ապստամբութիւն բարձրացնել Հայաստանում: Ես ձեզ խոստանում եմ տասն օրում կործանել սովետական իշխանութիւնը»: Ահա ուր է հասնում գաշնակցականների սնայարծ ավանտյուրիզմը: Նրանք ոչինչ չմոռացան և ոչինչ չսովորեցին...

1924 թվականի հոկտեմբերին, երբ Մոսկվայում տեղի ունեցավ ՍՍՀՄ Կենտգործկոմի երկրորդ նստաշրջանը, ուր քննարկվեց նաև միջազգային դրութեան հարցը (ղեկուցեց արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինը), Հայաստանից ելույթ ունեցավ Աս. Մոսկվանը (Ազգութիւնների խորհրդի անդամ): Նա նշեց, որ վերջերս արևմտյան տերութիւնները և հատկապես անգլոֆրանսիական իմպերիալիստներն ակտիվացրել են իրենց «գործունեութիւնը» հայ գաղթականութեան հարցում: Նրանք, Վրաստանում խռովութեան կազմակերպմանը զուգընթաց, Ազգերի լի-

¹ Հայկ. ՍՍՀ ՀՀՍԵ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 327, թ. 18.

¹ Правда, 9. 10. 24.

գալու՝ աղմկեցին հայ գաղթականների տեղավորման մասին և միաժամանակ փորձեցին ժնկում կազմակերպել հայաֆիլ կազմակերպությունների համագումար: Աս. Մոսվյանը շեշտում է, որ արևմտյան պետություններն արդեն 50 տարի անընդհատ օգտագործում են հայկական հարցը՝ իրենց շահագրգռական նպատակների համար: Այժմ նույն դիրքերից և հատկապես «Սովետական Միության դեմ պայքարելու նկատառումներով» հղորվում են հայ գաղթականության հարցը, այն դարձնելով «մի գրոշ, որի տակ նրանք դանակ են սրում ընդդեմ հայ ժողովրդի խաղաղ կյանքի ու աշխատանքի, բայց հայ ժողովուրդը, դաս առած պատմության դաժան փորձից, չի գնա իմպերիալիստների ետևից, չի գնա նրանց հավատարիմ գործակալ-դաշնակների ետևից, քանի որ միայն Հայաստանի 1920 րվականի սովետականացումից հետո է, որ նա ձեռք է բերել ազատություն, ձեռք է բերել խաղաղ աշխատանք և այժմ չի հավատում արևմտակալապական կապիտալիստների և ոչ մի հայասիրական խոստման»¹: Այնուհետև Աս. Մոսվյանը ցույց է տալիս, որ սովետական կառավարությունը ցուցաբերում է ջերմ հոգատարություն դեպի հայ գաղթականությունը և առանց որևէ արտաքին օգնության կատարում է «ամեն հնարավորը՝ դրա լուծման համար»: Նույն միտքն ասաց Հայկ. ՍՍՀ Ժողկոմխորհի նախագահ Լուկաշինը 1924 թվականի դեկտեմբերի 28-ին՝ Հայաստանի ուսուցիչների 1-ին համագումարում. «Հնարավորության սահմաններում Հայաստանի սովետական կառավարությունը կանի ամեն ինչ թեթևաբանությամբ գաղթականների վիճակը»²:

Դաշնակներն ամեն կերպ արգելակում են հայ գաղթականների մեկնումը Սովետական Հայաստան: Նրանք այդպես են վարվում նաև Կ. Պոլսում՝ «տարածելով պրովոկացիոն լուրեր այն մասին, թե իբր Սովետական Հայաստանում նրանք չեն ունենա ո՛չ տուն, ո՛չ հաց»: Նույնն էին պնդում թուրքական ռեակցիոներները, հատկապես առաջին պլան մղելով քաղաքական շինծու փաստարկներ այն մասին, թե իբր սովետական կառավարության բարյալակամ վերաբերմունքը դեպի սփյուռքահայերի ներգաղթը ոչ թե մարդասիրություն է, այլ որոշակի նկատառում՝ Անդրկովկասից դուրս մղելու «թուրքական տարրը»: Այս-

պես, Պոլսում հրատարակվող «Վազըթ» լրագիրը «Ռուսներ և հայեր» հոդվածում ուղղակի գրում է. «Ռուսիո մեջ հետապնդած քաղաքականությունն է այդ տեղերու մաս մը թուրք տարրը քանի հեռացնելով, անոնց տեղը զետեղել այն տեսակ տարրեր, որ կրնան թշնամի ըլլալ թուրքերուն»: Ուրեմն, եզրակացնում է թերթը, սովետական կառավարության ընձեռած դյուրությունը «բոլշևիկ Հայաստանը դուրսեն գալիք հայերով, որոնց թիվը 200000 կենթադրվի, գորացվելուն մեջ ապագային վերաբերող քաղաքական մտածումներ կան»¹: Կատարյալ հերյուրանք, որ կարող է ծագել թուրք շովինիստի քառակուսի գլխում: Զէ որ նա ամեն ինչ իր արշինով է չափում և չի ուզում հասկանալ, որ սովետական երկրում բոլոր ժողովուրդներն ապրում են եզրայրական ընտանիքում:

Հակառակ ամեն կարգի թշնամական զրպարտությունների, հայ գաղթականները ճիշտ հասկացան իրենց փրկության ուղին և մեկնեցին մայր հայրենիք, ուր «սովետական կառավարությունը նրանց ցույց տվեց ամենալայն օգնություն»: Այդ զգացին և տեսան իրենք՝ ներգաղթողները, որոնք ասում էին. «Այժմ մենք տեսնում ենք, որ մենք լավ արեցինք, գալով հայրենիք: Մենք ուզում ենք խաղաղ աշխատել և մեր կյանքը կառուցել նորացված Հայաստանում»²: Այդպես էին մտածում ու գործում բոլոր հայրենադարձները:

□□□

Ռուսաստանում դոկտոր Ֆ. Նանսենի ներկայացուցչության անդամ Զ. Գորվինի ուղևորությունը դեպի Հայաստան պետք է զիտել որպես առաջին գործնական քայլ՝ տեղում ծանոթանալու իրերի վիճակին: Արդյունքների մասին նա 1924 թ. սեպտեմբերի 3-ին ղեկուցադրեց և ուղարկում Ազգերի լիգայի գաղթականական հանձնաժողովի պատասխանատու Թ. Ֆ. Զոնսոնին, որտեղ խոսվում է հայ գաղթականների տեղափոխման դժվարությունների մասին և հատկապես նշում, թե «Մարդաբալատի ժրագիրը իրականացնել կարելի է շատ մեծ ծախսով: Միաժամանակ հաղորդվում է, որ Անդրկովկասի կառավարությունը մտա-

¹ Правда, 21. 10. 24.

² Правда, 30. 12. 24.

¹ «Նոր արշալույս», 25. 10. 25:

² Правда, 6. 9. 25.

հողված է Հունաստանի հայ գաղթականների ծանր վիճակով և խնդիր է դնում հեշտացնել նրանց ներգաղթը Սովետական Հաստատան՝ փոխարենը օգնելով Անդրկովկասում գտնվող հույների արտագաղթմանը Հունաստան: Ուրեմն, հարկ է, որ «հույն ու հայ գաղթականների հարցը» քննարկվի «երկու կառավարությունների միջև»¹:

Ե. Կարիկյանը ծանոթանում է այդ զեկուցագրին և պատասխան նամակով (Ազգերի լիգային) կատարում է մի շարք դիտողություններ: Դրանք հիմնականում վերաբերում են Գորվիինի զեկուցագրի տխնիկական կողմին և հատկապես այն միտումին, թե իբր շատ զովար է հողերի յուրացումը: Ե. Կարիկյանը նշում է, որ Զ. Գորվիինն անբավարար է ուսումնասիրել տեղանքը, շփոթում է հողամասերը և միաժամանակ անհիմն կերպով մեղադրում է Հայաստանի կառավարությանը, թե իբր նա իր պլաններում անտեսել է թուրքական կողմի համաձայնությունը. «Երավ է,— դրել է Ե. Կարիկյանը,— որ անցյալ հոկտեմբերին թուրքերը բողոքեցին Փոքր Սարդարապատի ծրագրի դեմ, բայց Չիչերինը շատ իրավացի պատասխանեց, թե Արաքսը կրավե թե՛ մեկուն և թե՛ մյուսին, և ավելացածն ալ, Ադրբեջանի հողերը կտրելով, կերթա Կասպից ծով՝ կթափվի: Թուրքերու բողոքը լուր խափանողական էր և ոչ թե պետքեն մղված»²: Իրոք, 1923 թվականի օգոստոսի 21-ին Մոսկվայում թուրքական դեսպան Մուխթար բեյն այդ հարցի առթիվ հուշագիր ներկայացրեց ՍՍՀՄ արտգործոցին Գ. Չիչերինին, ուր ասվում էր, թե Հայաստանի կառավարության կողմից Կարա-կալայի (Ղարա-ղալայի) շրջանում Արաքսից ջրանցք է փորվում դեպի Սարդարապատ, որը բացասարար կանդրադանա Իզդիրի շրջանի թուրքական բնակչության ջրասպասարկման վրա: Գ. Չիչերինը սեպտեմբերի 28-ի պատասխանում նշում է, որ անհանգստանալու ոչ մի հիմք չկա, քանի որ Արաքսը ջրառատ է և «այդ ջրանցքի փորումը ոչ մի կերպ անբարենպաստ ազդեցություն չի ունենա շրջանի թուրքական բնակչության շահերի վրա»³: Սովետական կողմը միաժամանակ համաձայնվում է կազմելու խառն հանձնաժողով այդ հարցն ուսումնասիրելու համար: Նույն ժամանակ

«Պրավդայի» թղթակիցը զրույց է ունենում Մոսկվայում Անդր-Ֆեդերացիայի ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրիելյանի հետ, որը մասնավորապես ասում է, թե Հայաստանը ոռոգման ծավալմամբ կարող է վերականգնել ու զարգացնել իր անտեսությունը և անհրաժեշտ հողեր առանձնացնել գաղթականների համար. «Միայն ոռոգման միջոցով կարելի է Հայաստանի մերկ դաշտերը դարձնել ծաղկուն դաշտեր՝ հերկված աշխատասեր հայ հողագործի կողմից»: Ուստի, պետք է օգտագործել բոլոր ջրային ռեսուրսները, այդ թվում Արաքսը, ընդ որում «ջրանցքը նրանից չի կարող այնքան շատ քանակությամբ ջուր վերցնել, որ ազդի Իզդիրի հովտի վրա: Այդ վայրերի թուրքական բնակչությունը կարող է լիովին վստահ լինել, որ ջրանցքի փորումով նրանց շահերը չեն խախտվի»¹:

Ե. Կարիկյանն արգարացիորեն շեշտում է Հայաստանի կառավարության միջխարի ջանքերը յուրացնելու խոսպան հողերը: Նա կազմել է մեծ պլան և «այսօր, եթե հայ կառավարությունն այդ ծրագիրը գործադրության շղթավ, պատճառը դրամի պակասությունն է և ոչ այլ ինչ»: Համենայն դեպս, արդեն բավականաչափ գործ կատարված է, իսկ ապագան ավելի խոստումնալից է. «Կմնա միայն կարգավ ձեռնարկել անոնց ավելի դուրինն սկսելով և հետզհետե դեպի բազմաձայն երթալով»²:

Նշելով նրանից, որ սովետական կառավարությունը պատրաստակամություն հայտնեց ընդունելու հայ գաղթականների և ինքն արդեն իրականացնում էր հայրենադարձությունը, Ազգերի լիգայի խորհուրդը փորձեց «մարդասեր» երեւալ և 1923 թվականի սեպտեմբերին որոշեց կազմակերպել Հունաստանում, Բալկաններում և այլուր ապաստանած, բայց ծանր դրության մեջ գտնվող 50 հազար արևմտահայ փախստականների տեղափոխություն Կովկաս, ավելի ճիշտ՝ Սովետական Հայաստան: Միաժամանակ կոչ արվեց լիգայի 50 անդամ-պետություններին ֆինանսական օգնություն ցույց տալ այդ խնդրի լուծմանը: Բայց դրանք՝ այդ պետությունները և հատկապես մեծ տերություններն ըստ էության ցուցարբեցին անտարբերություն և լավագույն դեպքում խոսեցին սոսկ այսպես կոչված բարեգործական հանգանակությունների հնարավորության մասին: Այդպես, Ֆրան-

¹ Ավ. Յափուեյան, նշ. աշխ., էջ 34:

² Հայկ. ՍՍՀ 2207 ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 235, ք. 25:

³ Правда, 14. 10. 23.

¹ Правда, 17. 10. 23.

² Հայկ. ՍՍՀ 2207 ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 235, ք. 27:

սիայի, Իտալիայի, Բելգիայի և այլոց կառավարությունները «թուլաբարեցին» իրենց երկրներում ստեղծելու Ազգային կոմիտեներ՝ նվիրատվություններ ժողովելու համար, իսկ Անգլիայում էլ նույն նպատակով հիմնվեց Հայկական կամ Վերջին ֆոնդը»։ Կարճ ասած՝ պետական ոչ մի պարտավորություն, իսկ նաև հասարակությունն ուզում է կամավոր օգնություն ցույց տալ, ապա թող անի։ Կարծես թե դրա համար պետք էր «կառավարական թուլություն»...

Այնուամենայնիվ, Ազգերի լիգան ստեղծեց հատուկ հանձնաժողով, որն զբաղվեց հայկական փոխառության հարցով։ Վերջինս զուտ բերելու համար առանձնապես պետք էր մեծ տերությունների նախաձեռնությունը։ Մինչդեռ նրանք լուրջ էին։ Կարծես մի փոքր շարժվեց ֆրանսիական կառավարությունը և նույնիսկ որոշ գումար առաջարկեց։ Բայց փաստորեն դա էլ ի դերև ելավ, երբ Անգլիան վճռականորեն հրաժարվեց որևէ աջակցությունից, թեև Ազգերի լիգայի գլխավոր քարտուղարը 1924 թվականի մարտի 24-ին հատուկ նամակով դիմել էր բրիտանական կառավարությանը՝ հնարավոր օգնություն ցույց տալու բղկոված հայության բեկորներին։

Անգլիական կառավարության դիրքի բնութագրման համար որոշակի հետաքրքրություն է ներկայացնում պահպանողականների և լիբերալների պարագլուխներ Ստենլի Բուլդոյնի ու Հերբերտ Ասքվիթի 1924 թվականի սեպտեմբերյան դիմումը պրեմիեր մինիստր Ռամզեյ Մակդոնալդին (լեյբորիստ)։ Նրանք, գտնվելով օպոզիցիայի մեջ առաջին լեյբորիստական կառավարության դեմ և ձգտելով իշխանության, լիովին օգտագործեցին նաև հայկական հարցն ու հայ գաղթականության խնդիրը, որպեսզի իրենք բարեգործներ ձևանան, բայց երբ հաղթանակ տարան պատրամենտական ընտրություններում և կառավարման դեկրեթը վերցրին իրենց ձեռքը, վարեցին նույն և նույնիսկ ավելի վատթար գիծ։ Ֆ. Նանսենն իր գրքում («Հայաստանում») մերկացնում է այդ խարդախ ու նենգ քաղաքականությունը, անարգանքի սյունին գամում իմպերիալիստական կառավարողներին։ Որպեսզի ընթերցողի համար լիովին պարզ լինի հարցի էությունը, հարկ ենք համարում ավելի մանրամասն տալ դրա պատմությունը։

Ասքվիթն ու Բուլդոյնը իրենց դիմումի մեջ գտնում են անհրաժեշտ, որպեսզի անգլիական կառավարությունն «էական օգնություն ցույց տա» Ազգերի լիգայի առաջարկի կենսագործմանը՝ հայ գաղթականների տեղափոխմանը Հայաստան։ Ավելին, նրանք «բազմակողմանիորեն հիմնավորում են» այդպիսի օգնության անհրաժեշտությունը և մասնավորապես բերում հետևյալ պատճառները.

1) «Ազատության խոստումներով հայերը պատերազմի ժամանակ ներգրավվել են դաշնակիցների պաշտպանության գործին և հանուն այդ շահերի խիստ տառապել»։ Այս թեղը հիմնավորելու համար դիմում, հեղինակները բերում են մի շարք փաստեր և հատկապես լրորք Զ. Բրաչսի 1916 թվականի հրատարակած կապույտ դիրքը («Հայերի դրությունը Յամանյան կայսրությունում»), որտեղ մերկացվում են թուրքական կառավարության ոճրագործությունները հայերի նկատմամբ, բացահայտվում վերջիններիս տառապանքներն ու կորուստները, Ասքվիթն ու Բուլդոյնը նշում են, որ այդ դիրքը «լայնորեն օգտագործվել է դաշնակցային պրոպագանդայի համար» և «ուժեղ կերպով ազդել է հայ հասարակական կարծիքի վրա»։ Այնուհետև նրանք վկայակոչում են Անգլիայի արտաքին գործերի պետական քարտուղարի օգնականի 1918 թվականի հոկտեմբերի 3-ի նամակը վիլհելմ Բրաչսին, որտեղ ասված է, թե ինչպես պետք էր սխտեմատիկաբար չարդել են հայերին, պատերազմի ժամանակ ամենադաժան կերպով ոչնչացրել արևմտահայության երկու երրորդին (ավելի քան 700000 մարդու)։ Չնայած դրան, հայերը զուտ չեն խոնարհել, այլ կազմակերպել են կամավորական ջոկատներ, որոնք հերոս Անդրանիկի գլխավորությամբ անձնուրաց մարտեր են մղել Կովկասյան ռազմականաում, իսկ 1917 թվականից հետո էլ «հինգ ամիս կասեցրել թուրքերի հարձակումը և այդպիսով կարևոր ծառայություն մատուցել բրիտանական բանակին Միջագետքում»։ Ընդհանուր առմամբ, «ավելի քան 200000 հայ զինվորներ են զոհվել դաշնակցային գործի համար»։

2) «Պատերազմի ժամանակ և զինադադարից հետո դաշնակցային տերությունների ու դրանց միացած երկրների պետական գործիչները բազմիցս խոստումներ են ավել՝ իրականացնել հայ

1 Տե՛ս Հայկ. ՍՍՀ 2206 ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, դ. 238, թ. 23:

1 Հայկ. ՍՍՀ 2206 ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, դ. 238, թ. 94:

ազգի ազատությունն ու անկախությունը»¹: Որպես դրա ազատ-
ցույցներ հիշատակվում են Անգլիայի պրեմիեր մինիստր Ասքվիթ-
թի ու Լոյդ Ջորջի 1916 թվականի նոյեմբերի 9-ի և 1918 թվա-
կանի հունվարի 5-ի, ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնի 1918 թվա-
կանի հունվարի 8-ի, Ֆրանսիայի պրեմիեր մինիստր Կլե-
մանսոյի 1918 թվականի հուլիսի 23-ի, Անգլիայի արտաքին գոր-
ծերի մինիստր Քերզոնի 1923 թվականի մարտի 11-ի ելույթնե-
րը, ինչպես նաև Սերի պայմանագիրը (որը դարձավ «թղթի
կտոր»), Ազգերի լիգայի 1921 թվականի սեպտեմբերի որոշումը՝
«Տնայկական ազգային օջախի» ստեղծման մասին, մի «օջախ»,
որը պետք է լիներ «թուրքական իշխանությունից բոլորովին
անկախ», մինչդեռ այն կոչանում մերժվեց նույնիսկ «թուրքա-
կան իշխանության շրջանակներում»: Ասքվիթն ու Բոլդուինը
նշում են, որ այնտեղ չլորդ Քերզոնը, վկայակոչելով հայկական
հարցը, որպես համաշխարհային խոշոր խայտառակություննե-
րից մեկը, դաշնակիցների անունից առաջարկեց հայերի համար
ազգային օջախ ստեղծել: Թուրքերը հրաժարվեցին քննարկել այդ
նախագիծը և հարցը հանվեց»: Իսկ ինչո՞ւ դաշնակիցները հա-
մաձայնվեցին թուրքերի հետ... այստեղ անգլիական գործիչները
գերազատում են լսել:

3) «Մեծ Բրիտանիան մասամբ պատասխանատու է բուրժա-
հայերի վերջնական ցրման համար՝ Չմյուռեիայի 1922 թվակա-
նի ջարդերից հետո»²: Այստեղ նշվում է, որ հույների պատե-
րազմը Թուրքիայի դեմ, որը վերջացավ քրիստոնեական փոքրա-
մասնությունների կոտորածով ու արտաքսումով Փոքր Ասիայից,
սկսվել է ու մղվել «բրիտանական կառավարության ուղղակի
հովանավորությամբ»:

4) «Հինգ միլիոն բուրժական լիբան, որը բուրժական կա-
ռավարությունը 1916 թվականին ավանդ է դրել Բեդլինում և
զինադարարից հետո նվաճվել է դաշնակիցների կողմից, մեծ
մասամբ (գուցե ամբողջովին) հայկական փողեր էին»: Բանը
ներանում է, որ արևմտահայերի 1915 թվականի կոտորածից ու
արտաքսումից հետո նրանց բանկային հաշիվները (ընթացիկ և
ավանդները) բռնագրավեց թուրքական կառավարությունը և

¹ Հայկ. ՍՍՀ ՀՀՍԵ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 238, ք. 95:

² Նույն տեղը, ք. 96:

ազգից 5 միլիոն ֆունտ ստեռլինգ ուղարկեց Բեդլինի բանկը՝
նոր էմիսիայի (արժեթղթերի բացթողման) համար:

5) «Գաղթականների այժմյան դուրքությունը անկայուն է ու
բարոյալիչ և հանդիսանում է կշտամբանք արևմտյան տերու-
թյուններին»¹: Արևմտահայերի բեկորները ցրված են աշխար-
հում մեկ և հատկապես Մերձավոր ու Միջին արևելքում, Հունաս-
տանում (ավելի քան 115 հազար), Բուլղարիայում (25 հազար)
և այլուր: Նրանք գտնվում են իրավական ու նյութական ծանր
վիճակում և խնդրում են շուտափույթ օգնություն՝ ապրելու մըը-
աական տերիտորիայում և ունենալու քաղաքացիական ստա-
տուս: Ասքվիթն ու Բոլդուինը հիշատակում են հունական պատ-
վիրակի 1924 թվականի հունիսի 12-ի ելույթը Ժնևում՝ Ազգերի
լիգայի խորհրդի նիստում, երբ նա ասաց, թե Հունաստանն ի
վիճակի չէ պահելու հայ գաղթականներին և նրանց պետք է
շտապ էվակուացնել (հունական կառավարությունը տեղափոխ-
ման համար կարող է տալ մինչև 60000 ֆունտ ստեռլինգ):
Միաժամանակ նրանք նշում են, որ «թուրքերը հաստատ որոշել
են ազատվել բոլոր քրիստոնյաներից»:

Ո՞րն է ելքը: Պատասխանելով այդ հարցին, Ասքվիթն ու Բոլ-
դուինը գրում են. «Մենք մեծ ավստասնորով ընդունում ենք, որ
ներկայումս հնարավոր չէ իրականացնել մեր տված խոստում-
ները հայերին, քանի որ այդ խոստումները պահանջում են քա-
ղաքական ու տերիտորիալ փոփոխություններ, որպիսիք մենք
այժմ ի վիճակի չենք անցկացնել, բայց մենք ունենք այլ եղա-
նակ կատարելու մեր պարտավորությունները և թեթևացնելու
թուրքահայերի ցրված մնացորդների դաժան ճակատագիրը: Նը-
րանց բնակեցման ամենահարմար տերիտորիան, անկասկած,
Ռուսահայաստանն է: Տեղական կառավարությունն ընդառաջ է
գնում դրան»²: Այստեղ Ասքվիթն ու Բոլդուինը հարկ են հա-
մարում շեշտելու, որ ոչ միայն Ազգերի լիգան արդեն կազմել է
50000 հայ գաղթականների տեղափոխման նախագիծ, այլև «հայ
պառաջնորդները նվրոպայում իրենց հերթին համամիտ են այդ
նախագծին»:

Վերջում Ասքվիթն ու Բոլդուինը նշում են, որ «ներկայումս
արդեն պատրաստ է» հայ գաղթականների վերաբնակեցման

¹ Հայկ. ՍՍՀ ՀՀՍԵ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 238, ք. 97:

² Նույն տեղը, ք. 98:

համապատասխան նախագիծ ու նախահաշիվ՝ մոտ մեկ միլիոն ֆունտ ստեռլինգ գումարով: Մնում է հայթայթել այդ գումարը Բայց ինչպե՞ս Այստեղ նրանք ոչ մի ռադիկալ միջոց չեն առաջադրում և գերադասում են թվարկել մի քանի բարեգործական ձևոնարկումներ, այն, որ հանգանակությունների համար Ֆրանսիայում ստեղծվել է ազգային կոմիտե՝ Սելվեսի (արտաքին գործերի սենատական հանձնաժողովի նախագահ) գլխավորությամբ, Իտալիայում՝ սենատոր Լուծաթիի գլխավորությամբ, նույնպիսի կոմիտե՝ Բելգիայում, Անգլիայում՝ Լորդ-մերի ֆոնդը (կառավարությունը չի մասնակցում), ընդ որում այնտեղի հայ հարուստները խոստացել են տալ 14 000 ֆունտ ստեռլինգ (մի մասն արդեն մուծել են):

Վերջում Ասքվիթին ու Բոլդուինը չեն զլանում գրելու, որ իրենց կարծիքով «Մեծ Բրիտանիայի պարտքն է Էական օգնություն ցույց տալ այդ նախագծի իրագործմանը», մանավանդ որ դա շշուկի քաղաքական աստառ» և միաժամանակ կլինի «չիրականացված խոստումների բարոյական հատուցում», «հայերի նկատմամբ դաշնակիցների պատասխանատվության վերջնական լիկվիդացման միջոց»¹: Իսկ ինչպիսի՞ն պիտի լինի այդ «էական օգնությունը» բրիտանական կառավարության կողմից... Այդ հարցին Ասքվիթին ու Բոլդուինը պատասխանում են իրենց դիմումին 1924 թվականի սեպտեմբերի 26-ին կցած լրացուցիչ պատճենով: Այնտեղ նշվում է, որ խոսք չի կարող լինել վերահիշյալ 5 միլիոն թուրքական լիրայի մասին, քանի որ դաշնակիցների 1923 թվականի նոյեմբերի 23-ի համաձայնությամբ այն պետք է բաժանվի Թուրքիայի նկատմամբ հավակնություններ ունեցող դաշնակից երկրներին միջև. «Հայերն իրավունք չունեն իրենց վնասների համար հատուցում պահանջել այդ գումարից»²: Իրականում դա «հատուցում» չէր կարող լինել, քանի որ հայերից գջլած գումար էր և այն ինքնըստինքյան պիտի վերադարձվեր նրանց, մինչդեռ «դաշնակիցները» գերազասեցին հաիշտակել արդեն պատրաստի «ավարը»: Այդպես էին մտածում նաև Ասքվիթին ու Բոլդուինը: Հայերի նկատմամբ ունեցած «պարտքի» միակ զգացումն այն էր, որ նրանք անգլիական կառավարությանն առաջարկեցին որոշ գումար տրամադրել «Հայկական (Լորդ-մերի) ֆոնդին»: Ի դեպ, դա էլ չեղավ:

Ահա ինչպես էին «դաշնակիցները» հիմնովին կողոպտում հայ ժողովրդին, նրանց արյան գնով ֆունտ ստեռլինգներ, ֆրանկներ ու դոլարներ զիջում:

Յ. Նանսենը, խոսելով Ասքվիթիի ու Բոլդուինի՝ լեյբորիսական կառավարությանն ուղղած նամակի մասին, գրել է. «Հագիվ թե կարելի է կասկածել, որ Ռամզեյ Մակդոնալդն ու բանվորական լեյբորիստական] կուսակցությունը բավականությամբ կարծագանքեին այդ կոչին: Բայց Մակդոնալդը տապալվեց, և պահպանողականները Բոլդուինի գլխավորությամբ անցան իշխանության գլուխ: Հավանաբար այդպես պետք է լիներ Ուրեմն, դա կարող էր կատարվել այժմ: Սակայն Բոլդուինի կառավարությունը մերժեց որևէ բան անել հօգուտ հայ ժողովրդի կամ դաղթականների, որոնք օգնություն ստանալու «բարոյական իրավունք» ունեին: Մարդ շվարած հարցնում է. արդյոք դա իսկական պլան էր, դրանք բոլորն իսկապես միայն դատարկ խոսքեր էին, դատարկ խոսքեր՝ առանց լուրջ հիմքի»¹:

Այո, Ասքվիթիի և Բոլդուինի «հայանպաստ» կոչը կատարյալ կեղծիք էր, փարիսեցիություն՝ թելադրված պառլամենտական պայքարի տրամաբանությամբ, «նպատակն է արդարացնում միջոցը» սկզբունքի կիրառումով: Դա, ինչպես նշել է նաև Յ. Նանսենը, անմիջապես հաստատվեց պահպանողական կառավարության գործերով: Հենց Բոլդուինի կառավարության ներկայացուցիչն էր, որ 1924 թվականի սեպտեմբերին Ազգերի լիգայում մերժեց հայ գաղթականությանը Հայաստան տեղափոխելու համար փոխառություն տրամադրելու առաջարկը: Հինգ միլիոն ֆունտ ստեռլինգ հայկական գումարի մասին էլ ոչ մի խոսք: Նկատենք, որ երբ 1925 թվականի հոկտեմբերին Մոսկվայից Երևան ժամանեց անգլիական պառլամենտական (բանվորական) պատվիրակությունը՝ Ռ. Ուոլհեդի գլխավորությամբ, հանդիպում ունեցավ Հայաստանի Կենտրոնական մասին: Նա մերկացնելով արևմտյան տերությունների նենգամիտ քաղաքականությունը, ասաց. «Արտասահմանյան բանկերում գտնվում է 5 միլիոն ֆունտ ստեռլինգ, որը պատկանում է

¹ Հայկ. ՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, դ. 238, ք. 98:

² Նույն տեղը, ք. 99:

¹ Fr. Nansen, Betrogenes Volk, S. 333.

հայերին, բայց բռնագրավվել է նրանցից: Ընտրական կամպա- նիայի ժամանակ Բոլզուինը և Ասքվիթը հայտարարեցին, որ այդ գումարից օգնություն ցույց կտան հայերին, բայց մտնելով կա- ոավարություն մեջ... փոխեցին իրենց դիրքը»¹: Ուղիներ ևս վերդովմունքով է խոսում «անգլիական իմպերիալիստներին» մա- սին և նշում, որ նրանք մերժեցին նանսենյան ծրագիրը (հայ գաղթականների տեղավորման առթիվ), քանի որ «հայ աշխա- տավորությունը մտել է ՍՍՀՄ-ի մեջ», իսկ իրենք տարիներ շա- րունակ միայն շարաշահել են հայկական հարցը, «իրենց շահե- րի համար օգտագործել հայ ժողովրդի տառապանքները»:

Բանվորական պատվիրակությունը խոստացավ անգլիական պառլամենտում հարց բարձրացնել՝ վերոհիշյալ «գումարի մա- սին», բայց իրականում ոչինչ չստացվեց: Պնդաճակատ պաճ- պանողականների կառավարությունը գնալով ավելի խստացրեց իր վերաբերմունքը դեպի հայերը, և նրա ֆինանսների մինիստր Ու. Չերչիլը 1927 թվականին նույնիսկ հայտարարեց, թե Հա- յաստանն առաջին աշխարհամարտի ժամանակից ու նրանից հետո հսկայական պարտք ունի (18 758 000 դոլար) դաշնակից- ներին²: Այստեղ հատկապես ակնարկվում էր Անգլիայի տրա- մադրած գեները դաշնակիցներին՝ նրանց օրապակաս իշխանու- թյունն ամբապնդելու համար: Իսկ որ Անգլիան ու մյուս իմպե- րիալիստական տերությունները պատերազմի ժամանակ զոհա- սեղանին էին դրել հայ ժողովրդին, 1918—20 թվականներին էլ օկուպացրել ու կողոպտել Անդրկովկասը, այդ մասին Չերչիլն ու Կոմպ. դերադասում էին ընել կամ իրականությունը ներկայաց- նել ծուռ հայելու մեջ: Սովետական իշխանության առաջին տա- րիներին Անդրկովկասում կազմվեց հատուկ հանձնաժողով, որի հաշվումներով օտարերկրյա ինտերվենցիայի վնասը երկրա- մասին հասնում էր 200 148 847 ուրբու և դրանից միայն Անգ- լիային բաժին էր ընկնում 120 170 662 ուրբլի³:

Ահա ինչպիսին էր Անգլիայի պաշտպանողական կառավարու- թյան վերաբերմունքը դեպի հայ ժողովուրդը: Ավելորդ էր պատ- րանք տաժել նաև լեյբորիստական կառավարության նկատմամբ,

քանզի նա էլ, եթե անգամ չպարտվեր 1924 թվականին, կվարվեր նույն կերպ: Չէ որ 1929 թվականին լեյբորիստները նորից հաղ- թանակ տարան և կազմեցին իրենց երկրորդ կառավարությունը՝ նույն Մակդոնալդի գլխավորությամբ, բայց դարձյալ ոչինչ չա- րեցին հայ գաղթականությանն օգնելու համար: Եվ դա այն ժա- մանակ, երբ Մակդոնալդն էլ էր «հայանպաստ» խոսքեր ասում և նույնիսկ իրեն համարում «հայասեր»¹: Ով չի շարաշահել այդ «նահատակային» անունը...

Ամփոփելով կարող ենք ասել, որ Ֆ. Նանսենն իր հասարա- կական գործունեության սկզբից սատար եղավ հայ ժողովրդին և ձգտեց բոլոր հնարավոր ձևերով թեթևացնել նրա տարաբախտ վիճակը: Նա մերկացրեց թուրքական բռնակալների կործանա- բար քաղաքականությունը և արևմտյան պետությունների նեն- զամիտ դավերը հայ ժողովրդի նկատմամբ:

¹ Правда, 4. 10. 25.

² Տե՛ս «Տեղեկատու» (204-ի կենտրոնական վարչության օրգան), 1928 թ., № 1, էջ 23:

³ Տե՛ս Правда, 28. 09. 24.

¹ Տե՛ս «Նոր արշալույս», 9. 3. 24:

ՆԱԿԱՍԵՆԻ ՄԻՍԵԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Կոմունիստական կուսակցու-
թյունը և սովետական կառավա-
րութիւնը լիովին պաշտպանեցին
ու աջակցեցին Յ. Նանսենի մար-
դասիրական գործունեութեանը,
որն ուղղված էր հայ գաղթակա-
նութեան դրութեան բարելավմանը
Նանսենի անմիջական նպա-
տակն էր աջակցել թշվառութեան
մեջ գտնվող հայ գաղթականնե-
րի տեղափոխմանը Սովետական
Հայաստան՝ օգնելով վերջինիս
խոսքան հողերի յուրացմանը
(անջրջի հողերի ուղղմամբ ու
ճահիճների շտրացմամբ): Ազգերի
լիգան, այդ մասին լսելով Նան-
սենի հաղորդումը, 1924 թվա-
կանի սեպտեմբերի 25-ին որոշեց
կազմել նրա գլխավորութեամբ
հատուկ հանձնաժողով, որը տե-
ղում, այսինքն՝ Հայաստանում,
կուսումնասիրի տվյալ հարցը և
քննարկման կնիքակազմի իր
եղրակացութիւնները: Դա, ի-
հարկե, կատարվում է Նանսենի
համաձայնութեամբ, և նա էլ
գտնում է, որ ինքը պետք է ան-
պայման լինի Հայաստանում:
Նախ՝ դրանով բարձրանում էր
հանձնաժողովի միջազգային հե-
ղինակութիւնը և միաժամանակ
մեծահամարով մարդասերի միջո-
ցով ընդունելի դառնում սովե-
տական կառավարութեան հա-
մար, երկրորդ՝ Նանսենը շէր կա-
րող բավարարվել հարցի միայն
տեխնիկական կողմով, այսինքն՝
հայ գաղթականների տեղա-
վորման վայրերի զննմամբ,

այլև պետք է մտտիկից շփվեր հայ ժողովրդի հետ, հնարավոր-
բին շափ խոր ուսումնասիրեր նրա պատմութիւնը և լիովին հա-
զորդակից ու օգտակար դառնար նրա հոգսերին: Ահա ինչպիսի
ձգումներով էր համակված մեծ մարդասերը, որը, շնայած իր
պատկանելի հասակին (64 տարեկան), գերազասեց անձամբ
մեկնել Հայաստան և ամեն ինչ տեսնել սեփական աչքերով:
Նանսենը 1924 թվականի հոկտեմբերի 14-ին Լ. Սուլցբերին (շվեյ-
ցարացի գործիչ) գրում է, որ իրեն մնում է լինել Մոսկվայում ու
կովկասում՝ «հայ գաղթականների տեղափոխման հնարավորու-
թեան հարցով»: Մի այլ նամակում ուղղված Թ. Ջոնսոնին
(1924 թվականի ապրիլի 14-ին) նա շեշտում է. «Ես շատ կափ-
սոսայի, եթե իմ որևէ մեղքով կամ անհոգութեամբ որևէ շափով
տուժեր հայկական հարցը Դուք գիտեք, թե ես ինչքան շատ եմ
ցավում այդ առթիվ»²:

Ակնհերև է, որ Նանսենյան հանձնաժողովը կարող էր Հայաս-
տան ժամանել սովետական կառավարութեան համաձայնու-
թեամբ: Մ. Լիտվինովը 1925 թվականի մարտի 7-ին Գ. Չիչերի-
նին գրում է, որ «Ալբեր Թոման* Ազգերի լիգայի աշխատանքի
բյուրոյի և Նանսենի անունից գրավոր խնդրում է Կրասինի** մի-
ջոցով պատասխան տալ էքսպերտների հանձնաժողով ուղար-
կելու մասին այն վայրերը, որոնք մեր կողմից պիտի հատկաց-
վեն հայ գաղթականներին»: Դա անհրաժեշտ է նաև այն առու-
մով, որպեսզի հայ կազմակերպութիւններն արտասահմանում
դրամ ժողովելիս ունենան ճիշտ ինֆորմացիա գաղթականների
տեղափոխման օվայրերի ու պայմանների մասին»³:

Միաժամանակ Նանսենը անձամբ է գրառվում այդ հարցով
և հասնում դրական արդյունքներին: Նա դեռ փետրվարի 3-ին
Լյուսակերից նամակ է գրում Մոսկվա՝ «Եր սիրելի Չիչերինին» և
հանգամանորեն բացատրվում տեղի ունեցածի ու կատարելիքի
մասին: Նանսենը հաղորդում է, որ սովետական կառավարու-

¹ Fridtjof Nansen, Brev, IV, s. 278.
² Նույն տեղը, էջ 301:
³ АВП СССР. Ф. Референтура НКВД по Закавказью, оп. 8, ел.
хр. I, п. 10, л. 1:
* Ալբեր Թոման (1878—1932) ֆրանսիացի քաղաքական գործիչ, ու-
ցիալ-ռեֆորմիստ 1919—32 թվականներին Ազգերի լիգային կից Աշխատանքի
միջազգային բյուրոյի ղեկավար:
** Լ. Բ. Կրասին (1870—1926)— հին հեղափոխական, կուսակցական և
պետական ակադեմիկոս գործիչ, 1924—25 թվականներին սովետական կառավա-
րութեան լիազոր-ներկայացուցիչը Գրանսիայում և Անգլիայում:

թյան պաշտոնական քաղաքականությունը հայ գաղթականների հայրենադարձության վերաբերյալ լայն ընդունելություն է գտել սփյուռքահայության մեջ և ամենուրեք տեղի են ունենում մասսայական ժողովներ, հայթայթվում են միջոցներ: Համենայն դեպս, անհրաժեշտ է լուրջ նյութական օգնություն՝ մոտ 50000 գաղթականների տեղափոխման ու տեղավորման համար, որի առթիվ կազմվում է նախնական պլան, և Սովետական Հայաստանի կառավարությունը համաձայն է տրամադրել Սարգարապատի դաշտը: Ազգերի լիգան այդ գործը կազմակերպելու համար դիմել է իրեն և նախատեսվում է մի փոքր հանձնաժողովով մեկնել Սովետական Հայաստան, որի «պարտականությունը կլինի տեղում ուսումնասիրել ոչ միայն գաղթականներին տեղավորելու գործնական հնարավորությունները, այլև ալդպիսի տեղավորման արժեքի որոշումը»: Այնուհետև նանսենը գրում է. «Ինձ խնդրեցին լրիվ հաշվետվություն պատրաստել տվյալ պլանի վերաբերյալ որոշում ընդունելու համար, և ես համարձակվում եմ հուսալ Ձեր կառավարության հետ անկեղծ համագործակցության վրա, որպես աջակցություն իմ գործի կատարման համար... Քանի որ ցանկալի է, որպեսզի առաջարկվող հանձնաժողովին իր գործն սկսի գարնանը, ևս շնորհակալ կլինեմ հավաստիանալու, որ Ձեր կառավարությունը ոչ միայն հնարավորին շափ կաջակցի, այլև նրան կտա իր խորհրդատուն»:

Նանսենը չէր սխալվում: Սովետական կառավարությունը գրականորեն է վերաբերվում նրա առաջարկին, և այդ առթիվ նանսենը գրում է. «Մոսկվա՝ սովետական կառավարության արտաքին գործերի ժողովրդական կոմիսար պարոն Ջիչերինին ուղարկած նամակում մենք խնդրել էինք հանձնաժողովին թույլատրել մեկնելու Երևան և սկսելու անհրաժեշտ հետազոտություններ Հայաստանում: Պատասխանը շատ ընդառաջող էր, բայց դրվեց երկու նախապայման. մենք չպետք է մեկնեինք որպես Ազգերի լիգայի ներկայացուցիչներ, որին սովետական կառավարությունը չի ճանաչել, և այնուհետև մեր հետազոտությունները պիտի տանեինք հայկական կառավարության կողմից նշանակված կոմիտեի փոխգործողությամբ: Մենք ընդունեցինք այդ պայմանները»¹:

ՌԿ(Բ)Կ Կենտկոմը 1925 թվականի մարտի 26-ին հատուկ

քննարկման է ենթարկում «Հայ գաղթականների մասին» հարցը և որոշում «չառարկել օտարերկրյա հատուկ հանձնաժողովի գալուստը տեղանքի նախնական զննման համար», բայց «այդ հանձնաժողովը պետք է աշխատի Հայկ. ՍՍՀ կառավարության կողմից նույն նպատակի համար ստեղծված հանձնաժողովի հետ միասին»¹:

Սովետական կողմը պատրաստ էր ամեն կերպ օգնելու նանսենի մարդասիրական նպատակների իրականացմանը, իսկ նրա կատարած վերապահումները բխում էին բանվորադպրոցական պետության արտաքին ու ներքին արդարամիտ քաղաքականությունից և բացառապես վերաբերում էին բանակցությունները վարելու ճիշտ եղանակի ընտրությանը: Իսկապես, սույնտական կառավարությունը ինչպես կարող էր գործ ունենալ Ազգերի լիգայի հետ, եթե այն դարձել էր իմպերիալիստական տերությունների գործիքը և Սովետների նկատմամբ թշնամանքի հրահրման օջախ: Ինչ վերաբերում է երկրորդ վերապահմանը, ապա այն լիովին համապատասխանում էր կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականությանը, որի համաձայն սովետական հանրապետությունները սովերեն էին և նրանցից որեէ մեկում ցանկացած օտարերկրյա պատվիրակություն կարող էր գործել միայն տեղական կառավարության համաձայնությամբ: Այդպիսին էր նաև Սովետական Հայաստանը, որն, ի դեպ, դեռ 1921 թվականից կազմակերպել էր տարազիր հայերի հայրենադարձություն և կուտակել բավականին փորձ, իսկ նրա կառավարությանը կից գործում էր գաղթականական գործերի հանձնաժողով (նախագահ՝ Ա. Մուսվաթյան):

Ֆ. Նանսենը ճիշտ հասկացավ իրերի տրամաբանությունը, այն, որ սովետական վերապահումները ունեն պրոցեդուրային բնույթ և բոլորովին չեն հակադրվում նրա մարդասիրական նպատակին: Ուստի, նա միանգամայն լավատեսորեն ձևափոխեց իր միախալի կատարմանը՝ հաստատ համոզված լինելով, որ սովետական իշխանության կողմից կզտնի լիակատար աջակցություն:

Հիրավի, սովետական կառավարությունն ստեղծում է բոլոր դուրությունները, և Ֆ. Նանսենը 1925 թվականի ապրիլի 7-ին Հ. Բաքատունին գրած նամակում գոհունակությամբ նշում է. «Ես

¹ Fr. Nansen, Betrogenes Volk, S. 6.

¹ Հայկ. ՍՍՀ ՀՆՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 4, գ. 264, ք. 200:

հնուադիր ստացա ուսական կառավարությունից այն մասին, որ Հայաստան մեկնող միսիայի համար վիզաները կտրվեն Փարիզի ուսական ղեկավարությունից: Այդպիսով բոլոր դժվարությունները վերացվում են: Ուստի, անկեղծորեն հուսով եմ, որ կարող ենք գործը սկսել... Ես, իհարկե, հուսով եմ, որ կզլխավորեմ այդ միսիան: Այդպես էլ լինում է: Շուտով Յ. Նանսենի նախագահությամբ կազմվում է հանձնաժողով, որի մեջ մտան հիմնականում մասնագետներ. գյուղատնտես Ժ. Կարլը (ֆրանսիացի), ջրաշինարար ինժեներներ Չ. Դուպուիսը (անգլիացի) և Պիո լո Սավիոն (իտալացի), ինչպես նաև նորվեգացի կապիտան Վ. Քվիսլինգը*, որը հանձնաժողովի քարտուղարն էր:

Նանսենը Հայաստան մեկնելու նախապատրաստական աշխատանքը տանում էր սովետական մարմինների ու գործիչների գիտություններ ու աջակցություն: Դրանց մեջ էր նորվեգիայում սովետական ղեկավար Ա. Մ. Կոլոնտայը**, որի հետ հաճախակի հանդիպում էր Նանսենը և գործարար ու բարեկամական կապեր պահպանում նրա հետ: Նա 1925 թվականի մայիսի 8-ին գրում է. «Թանկագին տիկին Կոլոնտայ, ինձ թվում է, որ ես արդեն Ձեզ ասել եմ, որ մենք պատրաստվում ենք միսիա ուղարկելու ուսական Հայաստան՝ այնտեղ հայ տարագիրներ վերաբնակեցնելու հնարավորությունը պարզելու նպատակով: Պարոն Զիլերին ինձ հաղորդել է, որ այդ միսիան կընդունվի և նրա անդամների վիզաները կարելի է ստանալ Փարիզի ուսական ղեկավարությունում... Փարիզում ուսական ղեկավարությունը ծանուցվել է այդ մասին, բայց բանի որ Փարիզ մեկնելու համար

ինձից կխլեր նախատեսվածից մի բանի օր ավելի, ես շատ շնորհակալ կլինեի, եթե վիզաներ ստանալու համար հնարավոր լիներ պայմանավորվել այստեղ... Այժմ ես չեմ կարող ասել, թե ինչքան կտևի այդ էքսպեդիցիան, բայց մտադրություն կա այն սկսել հաջորդ շաբաթ, և ես Հայաստանում կմնամ հնարավորին շափ կարճ ժամանակ, իհարկե, մինչև որ մեր աշխատանքն ավարտվի: Մենք պետք է աշխատակցներ հայկական կառավարության հետ... Խնդրում եմ, ներեցեք ինձ, որ ես Ձեզ անհանգրստացնում եմ այդպիսի առիթով, բայց բանի որ ես շատ քիչ ժամանակ ունեմ, վիզաներ ստանալը Օսլոյում ինձ համար կլինի մեծ օգնություն»: Նանսենն ստանում է անհրաժեշտ աջակցություն սովետական մարմիններից և պատրաստվում մեկնելու:

Միջուրահայ առաջադեմ շրջանները ոգևորված էին Նանսենի միսիայով: Հայկական բարեգործական ընդհանուր միությունը քարտուղար Լեոն Բաղալյանը 1925 թ. մայիսի 22-ին նրան գրում է. «Մեծ գոհունակությամբ մըն է, որ տեղեկացանք, թե որոշած եք Հայաստան երթալ՝ հոն ուսումնասիրելու համար կարելիություններն ու ծրագրերը մեր գաղթականներին որոշ թիվ մը, մասնավորապես Հունաստանիները, հոն տեղավորելու համար... Այն հաստատ համոզումը ունինք, թե Ձեր ճամփորդությունը մեր ժողովրդին համար պիտի ունենա երջանկազույն արդյունքներ, և Ձեր անունն ընդմիշտ առնչված պիտի մնա մարդասիրական և արդարության մեծագույն գործին հետ»:

Բնորոշ է, որ Նանսենը իր հանձնաժողովի հետ միասին Հայաստան է մեկնում Միջերկրական ու Սև ծովերով, որպեսզի անպայմանորեն լինի Հունաստանում ու Թուրքիայում, ուր, Նանսենին հասած տեղեկությունների հիման վրա, հայ գաղթականները գտնվում էին ամենավատթար պայմաններում: Հարկավոր էր անմիջականորեն շփվել նրանց հետ և իմանալ նրանց խոհերը Սովետական Հայաստան մեկնելու առթիվ: Մյուս կողմից՝ նման ճանապարհորդությունը Նանսենին ու նրա հանձնաժողովին հնարավորություն կտար ավելի մտտիկից իրազեկ գառնալու հայոց եղևնի «հետևանքներին»:

Նանսենը և նրա ուղեկիցները սկզբում շարժվում են ցամաքով. Եվեյցարիայից Ալպերի վրայով անցնում են Իտալիա, լի-

* Վ. Քվիսլինգը 1918 թվականին Լոնդոն է նորվեգիայի գիմնորական կցորդ Պետրոգրադում, իսկ 1922—23 թվականներին՝ Պոդոլսկիի սուլթանների օգնող միջազգային հանձնաժողովի անգամ: Երկար ժամանակ նա թարգմանի է Ենանսենյան գործի անվան տակ, իսկ հետագայում դարձել նորվեգական ֆաշիստների պարագլուխ և Հիտլերի դրածու: 1945 թվականին ղեկավարվել է որպես ժողովրդի զավանսն ու զահին:

** Կոլոնտայ Ա. Մ. (1872—1952) — պրոֆեսորնայ հեղափոխական, 1915 թվականից կոմունիստական կուսակցության անդամ, 1917 թվականին ՌՍԳԲԿ(բ) VI համագումարում ընտրվում է Կենտկոմի անդամ: Հոկտեմբերյան հեղափոխություն ակտիվ մասնակից և սովետական պետական գործիչ (պետական խնամատարության ժողովում): Ականավոր դիմանազետ և առաջին կին ղեկավարն աշխատում (աշխատել է նորվեգիայում, Մեքսիկայում, Եվեյցարիայում): Բաղմամբիվ աշխատությունների հեղինակ, մեծ էրուդիցիայի ու կուլտուրայի տեր, գիտեք մի շարք օտար լեզուներ:

1 Ավետիս Յափուցյան, Նանսեն և հայ գաղթականության հայրենադարձության հարցը. քա անտիպ փաստաթղթերու, Կահիրե, 1983, էջ 232:

ևում վեհետիկում, ապա հասնում Տրիեստ, ուր 1925 թվականի հունիսի 4-ին նստում են իտալական «Սեմիրամիս» («Շամիրամ») նավը (որի անունը նույնպես Հայաստան էր հիշեցնում) և, կտրելով Ադրիատիկ ծովը, մտնում է Միջերկրական ծով: Այստեղ նանսենն իրեն հատուկ պատկերավորությամբ պատմում է. «Մենք շարունակում ենք նավել: Խաղաղ է երեկոն, տարածությունը՝ լայն ու հեռածիզ, առկայծում են բյուրավոր աստղեր, լուսինն իր խորունկ փայլն է սփռել Միջերկրականի վրա: Այն հազարավոր տարիների ընթացքում եղել է հնագույն ժողովուրդների «միակ ծովը»՝ շրջապատված բնակեցված աշխարհով: Նրա ափերին առաջացել են բազաբակրթություններ ու համաշխարհային կայսրություններ և նորից անհետացել: Իսկ մենք հենց այս նույն ծովի վրայով գնում ենք դեպի արևելք՝ հնարավորին չափ օգնելու մի փոքրաթիվ ժողովրդի, որը բազմիցս տեղի ունեցած փոփոխությունների ընթացքին այս մեծ կայսրությունների ընդհարումներից ավելի շատ է տուժել իր գոյամարտում»¹:

Միջերկրական ծովի հետ առնչվել են արևելյան շատ ժողովուրդներ, այդ թվում նաև հայերը, որոնց մասին գործվածքով է խոսում Ֆ. Նանսենը: Այնուհետև նա, հավանաբար իրենց նավի անվան առիթով, պատմում է Արա Գեղեցիկի ու Շամիրամի առասպելը և ընդդժում, որ նրանում հիշատակվող դեպքերը տեղի են ունեցել «Հայաստանում կամ Ուրարտուում»²:

Հասնելով Հունաստանի ափերը, նանսենը նշում է, որ թուրքական բռնակալության մագիլները բանտել էին նաև այդ երկիրը, ուր, բանաստեղծի (Բայրոնի) խոսքերով ապա՞, բացի արևից մարել էր ամեն ինչ: Սակայն հույները մղել են անձնազոհ ազատագրական պայքար, որին զորավիզ է եղել Ռուսաստանը: Արդյունքը. այնտեղ «վերջ է տրվել թուրքական բռնակալությանը»: Ահա և Աթենքը՝ իր Ակրոպոլիսով, որը «հույն ժողովրդի մեծության հուղիչ խորհրդանիշն է»:

Նանսենը հատուկ ուշադրություն է դարձնում Հունաստան լցված մեկուկես միլիոն հույն գաղթականներին, որոնք մի կերպ փրկվել էին քեմալականների 1922 թվականին կազմակերպած ջարդերից հատկապես Փոքր Ասիայում: Դրանց հետ էին նաև հայերը, որոնցից բառասունհինգ հազար գաղթականներ օթևա-

նել էին Հունաստանում: Նրանց գրությունն ավելի ծանր էր, և այդ ժամանակ 11 հազար հոգի անմիջապես ցանկություն հայտնեցին մեկնելու Սովետական Հայաստան: Անդրադառնալով առաջին աշխարհամարտի արհավիրքներին ու հետևանքներին, նանսենը գրել է. «Մենք ապրեցինք արագություններով իրար հաջորդող երկու զարհուրելի դեպքեր. այստեղ մի ամբողջ փախստական ժողովրդի վերաբնակեցում ու տեղավորում, և Անատոլիայում հայ ժողովրդի արտաքսում թուրքերի ձեռքով ու մեկ միլիոն մարդկանց կոտորած»¹:

Ինչպես արդեն նշել ենք, 1922 թվականի աշնանը (հունասթուրքական պատերազմից հետո) նանսենը, որպես Ազգերի լիգայի գլխավոր կոմիսար, գալիս է Կ. Պոլիս՝ ուսումնասիրելու գաղթականներին (հատկապես հույն) օգնելու հնարավորությունները: Այժմ՝ 1925 թվականի հունիսի 8-ին, նա նորից է ժամանում Պոլիս՝ հայ գաղթականներին օգնելու միտնալով: Այնտեղ հրատարակվող «Մարմարա» լրագիրն այդ մասին հատուկ հաղորդագրություն է տպագրում նանսենի նկարով: Նույն լրագրի խմբագրի հետ ունեցած զրույցում նանսենը ասում է, որ «ճամբա ելնելն առաջ հայ գաղթականներու մասին տեղեկություններ հավաքեցի արտասահմանյան հայկական կազմակերպություններին», որն, անշուշտ, «գլուխացնում է մեր գործը»: Այդ տեղեկությունների հավաստիությունը հաստատվում է Հունաստանում և Թուրքիայում գտնվող գաղթականների ծանր վիճակով, որի ակնատեսը դարձան իր հանձնաժողովի անդամները: Ուստի, «պիտի աշխատինք կարելի եղածին չափ շուտով ավարտել մեր գործը, իրենց անստույգ վիճակին, օր առաջ ադատելու համար հազարավոր գաղթականները»: Նանսենը նշում է, որ նրանց տեղափոխման հարցով իրենք մեկնում են Սովետական Հայաստան, ուր բանակցություններ կվարեն հայկական կառավարության հետ և կզենեն գաղթականների բնակեցման վայրերը: Խմբագրի այն հարցին, թե ով պետք է հոգա գաղթականների տեղափոխման ծախսերը, նանսենը պատասխանում է. «Այդ մասին բան մը չեմ կրնար ըսել: Ազգերու զաշնակցությունը բնականաբար որոշում մը պիտի տա»²:

4. Պոլսում նանսենը մոտիկից շփվում է հայկական շրջան-

¹ Fr. Nansen, Betrogenes Volk, S. 14.

² Նույն տեղը, էջ 15:

¹ Fr. Nansen, Betrogenes Volk, S. 25

² «Մարմարա», 9. 6. 25:

ների հետ, հարցուփորձ անում գաղթականներին և անմիջապես նորեն զգում նրանց ձգտումը՝ օր առաջ մեկնելու Սովետական Հայաստան: Այլ կերպ էլ չէր կարող լինել, որովհետև ինչպես հին, այնպես էլ «նոր» Թուրքիայում, հայերը գտնվում էին զժոխսային կացության մեջ: Պետական անվանի գործիչ Դ. Շահվերդյանը*, որը ներգաղթի գործով 1924 թվականի հուլիսին գտնվում էր Կ. Պոլսում, ՌԿ(Բ)Կ Անդրերկրկոմի քարտուղար Ա. Մյասնիկյանին և Սովետական Հայաստանի կառավարությանը գրել է. «Գաղտնի կարգադրության համաձայն այնպիսի անտանկի դրություն է ստեղծվել Անատոլիայում, որ հայերը մնալ իրենց տեղերը չեն կարողանում, հեռանում են թողնելով ամեն ինչ, այնքան, որ պատվեն այն ծանր պայմաններից, որոնց ներքո ապրում են: Հեռանալիս տաճիկ իշխանությունը անցագրերի վրա գրում է՝ երկրի (Տաճկաստանի) սահմանից հեռանալու պայմանով»¹:

Կ. Պոլիսն արգեն լի էր այդպիսի բռնադատված հայերով ու այլ գաղթականներով, որոնք իրենց փրկությունը տեսնում էին Սովետական Հայաստանում: Համակված այդ իղձով, նրանք ջերմությամբ էին վերաբերվում իրենց կարեկցող ու օգնող Նանսենին: Նրանց հանդիպումները և՛ սրտակեղևք էին, և՛ սրբտառու: Նանսենը խորապես համոզվում է, որ հայ գաղթականները ձգտում են գնալ Սովետական Հայաստան: Նա հունիսի 9-ին նրանց մասին գրած նոթերում նշում է. «Կոստանդնուպոլիս գանվող բոլոր գաղթականներն ալ կուզեն Հայաստան երթալ»²:

Նանսենը մեծ հուզմունքով է պատմում Կ. Պոլսից մեկնելու պահը. «Հունիսի 10, շորեքշաբթի, կեսօրից հետո մենք ֆրանսիական նավով պիտի շարունակենք ճանապարհը Սև ծովով: Հայերի պատվիրակությունը հրաժեշտի պահին նավ բերեց սրանչևի ծաղիկներով լի մի կողով: Այդպիսի սրտառու շնորհակալությունը ճնշում է, երբ ուրիշ չես արել, որպեսզի արժա-

* Գանվերդյան Գանիկ (Դանուշ) Ալեքսանդրի (1882—1941) — ակադեմիկոս հնդափոսական, կոմունիստական կուսակցության անդամ 1902 թ., սովետական իշխանության հաստատումից հետո պետական ու զինվորական աշխատանք էր կատարում:

¹ «Բաներ Հայաստանի արխիվների», № 1, 1974, էջ 34:

² Ա. Ֆափունյան, նշ. աշխ. էջ 52:

նի լինես դրան. ի պատասխան կարելի է միայն բարություն չաղթել, բայց չես իմանում, թե ինչքանի էս ի վիճակի»¹:

Գուրս գալով Պոլսից, Ֆ. Նանսենը և մյուսները նավեցին Բոսֆորի նեղուցով, որի գեղեցիկ ափերին բարձրանում էին հուն և հայ ճարտարապետների կողմից կառուցված շքեղ դղձակները: Թուրք կառավարողները ժողովուրդների արյան գնով զրախտային կյանք էին վարում:

«Թագյե» նավը շարժվում էր դեպի Բաթում, և Նանսենն ու նրա ուղեկիցները Սև ծովի հարավային ափերում լինում են մի շարք քաղաքներում (Չոնգուզակ, Սամսուն, Տրապիզոն): Նրանք նկատում են, որ դրանք, հույների ու հայերի հեռացումից հետո, անկում են ապրում, բնդ որում թուրքական իշխանությունները խուսափում էին արտասահմանցիներին երկրի ներսը թողնել... Ստեղծվում է որոշակի հակադրություն՝ Անատոլիայի բնակչի մայական բարենպաստ պայմանների և թուրքական բռնակալական ուժի միջև, որը դարեր շարունակ խեղդել է ամեն մի առաջադիմություն, կաշկանդել տնտեսության ու մշակույթի զարգացումը: Հեղելը նկատել է, որ «հունիական կլիման, իհարկե, շատ է նպաստել Համերոսի պոեմի նրբագեղությունը, բայց միայն կլիման չի կարող համերոսներ ծնել և միշտ չէ, որ ծնում է նրանց. թուրքերի տիրապետության տակ ոչ մի երդիչ հանգես չի եկել»²:



Ահա և Բաթումը՝ ողողված լույսերով ու շքեղատված կանաչ բլուրներով: 1925 թվականի հունիսի 14-ի առավոտյան ժամանելով նավահանգիստ, Նանսենը զոհոնակություններ նշում է. «Մենք կանգնած ենք Սովետական Հանրապետությունների Միության դարպասների առջև»³: ՄԱՀՄ արտաքին գործերի կոմիտեի անդամները, Անդրֆեդերացիայի, Աջարստանի ներկայացուցիչները ջերմորեն ողջունում են մեծապատիվ հյուրերին և կազմակերպում կառավարական ընդունելություն, որը խոր տպավորություն թողեց Նանսենի վրա. «Դա կովկասյան հանրաժանոթ

¹ Fr. Nansen, Betrogenes Volk, S. 38.

² Герель, Соч., т. VIII, М.—Л., 1935, стр. 76.

³ Fr. Nansen, Betrogenes Volk, S. 53.

հյուրասիրութիւնն էր, որն առաջին անգամ կճաշակեինք մենք»¹։ Ճառախոսները դրվատեցին Ֆրիտլոֆ Նանսենի գործունեութիւնը և ընդգծեցին, որ նա «ՍՍՀՄ-ի հին բարեկամն է և անձնվեր ու եռանդուն կերպով օգնել է նրան՝ ժողովրդական աղետի ծանր տարիներին, երբ ամբողջ բուրժուական աշխարհը անհամբերութեամբ սպասում էր սովետական երկրի կործանման և անտարբեր նայում էր, թե ինչպես են սովից մեռնում միլիոնավոր մարդիկ»։ Պատասխան խոսքով հանդես է գալիս Նանսենը և շեշտում, որ ինքը մեծ ուրախութեամբ է այցելում Սովետական Միութիւն, այս անգամ նրա գեղեցիկ մասերից մեկը՝ Անդրկովկաս, և «համակված նրան հնարավոր օգնութիւն ցույց տալու անկեղծ ցանկութեամբ։ Ինքը բոլոր ջանքերը կգործադրի, որպէսզի իր հետագա աշխատանքը հնարավորին շափ տա մեծ արդյունքներ և կատարվի Անդրկովկասի կառավարութեան լիակատար համաձայնութեամբ»²։ Այնուհետև, Նանսենը Անդրկովկասի հեռագրական գործակալութեան թղթակցի հետ ունեցած զրույցում հաղորդում է, որ իր գլխավորած «հանձնաժողովը մեկնում է Սովետական Հայաստան, որպէսզի պարզի հայ գաղթականներին օգնելու հնարավոր ձևերը՝ նրանց արտասահմանից հայրենիք վերադառնալու գործում։ Հանձնաժողովը կպարզի բամբակամշակութեան ու ոռոգման զարգացման հնարավորութիւնը, որը կարող է ապահովել վերադարձող փախստականներին զոյւթիւնը։ Հանձնաժողովը Սովետական Հայաստանում կմնա երեք շաբաթ։ Ենթադրվում է վերադառնալ Մոսկվայով»³։

Նանսենը ծանոթանում է քաղաքին և ստանում լավագույն տպավորություն, իսկ հետագայում, անդրադառնալով Բաթումի պատմութեանը, նշել է, որ եթե թուրքական դարավոր տիրապետութեան ընթացքում քաղաքն ապրում էր կատարյալ անկում, ապա ուսաների օրոք՝ ընդամենը 40 տարում, այն փոխակերպվեց «եվրոպական տիպի քաղաք-նավահանգստի»⁴։

Բաթումում Նանսենը հյուրընկալվում է նաև «նիրբ իսթ Ռիլիֆի» կենտրոնի մեջ։ Նա դրականորեն է արտահայտվում ամերիկյան այդ հաստատութեան հայանպաստ գործունեութեան

առթիվ, հայ որբերի տեղավորման ու սնման ասպարեզում՝ թե՛ Փոքր Ասիայում և թե՛ Անդրկովկասում (Թիֆլիսում և Լենինականում գործում էին նրա մասնաճյուղերը)։ Ամերիկացի ներկայացուցիչները պատրաստակամութիւն են հայտնում աջակցելու Նանսենի միսիային։ Նույնպիսի ցանկութիւն է հայտնում անգլուհի Գոյնն, որը Հայաստան էր մեկնել «Լորդ-մեյրս ֆոն-զի» գծով։ Նա «խանդավառութեամբ էր խոսում Հայաստանի մասին, խոր համակրանք ուներ ընդունակ ու աշխատասեր հայ ժողովրդի նկատմամբ, որն ապրել է անասելի ծանր ժամանակներ»⁵։

Հունիսի 14-ի երեկոյան Ֆ. Նանսենը իր հանձնաժողովով, գնացքով Բաթումից մեկնում է Թիֆլիս։ Նրանց ուղեկցում էր անդրկովկասյան կառավարութեան ներկայացուցիչ Նարիման Տեր-Ղազարյանը։ Շարժվելով Վրաստանով, Նանսենը տեսնում, իսկ հետագայում նկարագրում է նրա մի շարք վայրերը, համեմտում պատմական տեղեկութիւններով (Ոսկե գեղմի մասին և այլն), խոսում հայ ու վրաց ժողովուրդների դարավոր բարեկամութեան մասին, օտար թշնամիների դեմ նրանց մղած համատեղ պայքարի, բաղաբական, տնտեսական ու կուլտուրական համագործակցութեան մասին։

Նանսենը Վրաստանի, ինչպես նաև ամբողջ Անդրկովկասի, միացումը Ռուսաստանին համարում է առաջադիմական իրադարձութիւն, քանի որ այդ ժամանակից երկիրն «ազատվեց մահմեդական վտանգից» և ձեռք բերեց տնտեսական ու կուլտուրական զարգացման հնարավորութիւն։ Սովետական իշխանութեան հաստատմամբ ստեղծվեց Անդրկովկասի և Ռուսաստանի սերտ դաշինք, որը դարձավ երկրամասի ժողովուրդների ապահովման ու առաջադիմութեան առհավատչյանը⁶։

Հունիսի 15-ին Ֆ. Նանսենը իր հանձնաժողովով հասնում է Թիֆլիս, ուր կազմակերպվում է ջերմ ընդունելութիւն։ ԱՍՖՍՀ կենտրոնականի նախագահ Ս. Խանոյանը և ժողովուրդի նախագահ Մ. Օրախելաշվիլին բարի գալուստ են մաղթում հյուրերին և հաջողութեան ցանկանում նրանց միսիային, որի իրականացմանը անպայմանորեն կաջակցեն սովետական օրգանները, Անդրֆեդերացիայի կառավարութեան նիստին՝ Նանսենը

¹ Fr. Nansen, Betrogenes Volk, S. 57.

² «Заря Востока», 16. 6. 25.

³ Правда, 16. 6. 25.

⁴ Fr. Nansen, Betrogenes Volk, S. 58.

⁵ Fr. Nansen, Betrogenes Volk, S. 61.

⁶ Նույն տեղը, էջ 105, 109։

հաղորդում է անում իրենց այցի նպատակի մասին, որից հետո տեղի է ունենում մանրամասն զրույց և, ինչպես ինքն է նշում, քարտեզի վրա «քննեցինք այն վայրերը, ուր կարող էին տեղավորվել հայ զաղթականները»¹։ Քացի Հայաստանից, խոսվեց նաև Աղբրեջանի ու Վրաստանի մասին, ուր կարող էին հանգրվանել տարազիր հայերը։ Ընդհանրապես Անդրֆեդերացիայի «կառավարության ներկայացուցիչները խոստացան նանսենի տրամադրության տակ զենել նրան անհրաժեշտ բոլոր պատասխաններն ու նյութերը»²։ Ի դեպ, երբ նանսենին հայտնեցին, որ երկրամասում արդեն ծավալվել է ոտոզման մեծ աշխատանք՝ համաձայն կենինի հայտնի նամակի (Կովկասի կոմունիստներին), նա իսկույն հետաքրքրվեց զրանով. «Նանսենը խնդրեց իրեն տրամադրել այդ հիանալի փաստաթղթի պատճենը և ստանալով այն, խնամքով զրեց պիչակի ներսի գրպանը»³։ Նանսենը չէր կարող չզգալ, որ իր առաքելության նպատակը սերտորեն աղբրավում է կենինի հողվածում առաջադրված խնդիրների կատարման հետ։

1925 թվականի հունիսի 16-ի երկկույան ժամը 7-ին Ֆ. Նանսենը իր հանձնաժողովով Թիֆլիսից գնացքով մեկնում է Հայաստան։ Գիշերը համարյա աննկատելի անցնում են գեղեցիկ կոտին՝ անտառապատ լեռներով ու ձորերով, իսկ հաջորդ օրն առավոտյան երևում է հայկական սարահարթը՝ Արազածի գագաթներով. «Ծրկիրը լերկ է, առանց ծառերի, ոչ մի տեղ կանաչ չկա, ոչ մի տեղ անտառապատ բլուր։ Այս շոր, գեղընորակ հո՞ղն է, որ պետք է մշակվեր գաղթականների համար։ Լուսամուտիս առջև բացված տեսարանը ոգևորիչ տպավորություն չէր թողնում»⁴. — զրել է Ֆ. Նանսենը։ Հետո ավելի մոտիկից ծանոնոթանալով Հայաստանի պատմությանը, նա ցույց տվեց, որ երկրի նման վիճակն ստեղծվել է ոչ այնքան բնակչության պայմանների փոփոխության, որքան ավերիչ պատերազմների հետևանքով։ Չէ որ նախկինում Հայաստանը հիմնականում եղել է անտառապատ, ունեցել է զարգացած երկրագործություն,

ոտոզման սիստեմ և այլն։ Քայց զրանք հաճախակի ավերվել են օտար նվաճողների ու բարբարոսների կողմից։ Այդ առթիվ նանսենը զրել է. «Ամենուրեք այս երկրում մարդ տեսնում է, թե պատերազմն ինչ արմատական փոփոխություններ է մտցրել նրա տարածքում, մանավանդ կրք այն մղվել է կատաղի դաժանությամբ, ինչպիսին տեղի է ունեցել աշխարհի այս մասում։ Կոլտուրապես անպտուղ մոնղոլական, թուրքական և այլ հորջաններ հարձակվել են քաղաքների ու գյուղերի վրա, սրատել են աղամարդկանց, մոխրացրել տները և իրենց հետ տարել իրերը, կենդանիներին ու կանանց։ Նրանք իրենց հետևից թողնում էին ավերակ քաղաքներ ու գյուղեր, իսկ կոտորածից փրկվածները ի վիճակի չէին կազմելու այնպիսի հավաքականություն, որը կարողանար վերականգնել ջրանցքները և ամբողջ ոտոզման սիստեմը, առավել ևս, որ հաղթողները նրանց երկար ժամանակ ճնշում էին, իսկ իրենք ոչ մի աշխատանք չէին ուղում կատարել։ Հաղթողների գոյությունն ավելի ծանրանում էր այն պատճառով, որ նրանք ենթարկվում էին ավազակային հարձակումների թափառական վայրի ցեղերի կողմից, որոնց նկատմամբ նրանք թույլ էին։ Ի վերջո այդպիսի վայրերը բոլորովին ամայանում էին և երկիրը աստիճանաբար դառնում էր անապատ... Ոչ թե կլիմայական փոփոխությունները, այլ պատերազմներն են մեծ հեղաբեկումներ մտցրել և երկիրը շորացրել»¹։

Այդպիսի իրավիճակում ավելի է մեծանում մարդու համակրանքը գեպի հալածված ու աշխատասեր ժողովուրդը։ Ֆ. Նանսենը զրանում առավել ևս համոզվեց, երբ ոտք զրեց հայկական հողին ու շփվեց նրա բնակիչների հետ։ Հունիսի 17-ի առավոտյան հյուրերը հասան կենինական, որտեղ կազմակերպվեց սրտառուլ դիմավորում։ Հայաստանի կառավարության անունից նրանց ջերմորեն ողջունեց Ժողկոմխորհի նախագահի տեղակալ ու հողժողկոմ Ար. Երզնկյանը։ Նա նշեց, որ սովետական մարդիկ «լավ ծանոթ են նանսենի գործունեությանը, հատկապես Ռուսաստանում սովի դեմ մղած պայքարում, նանսենը հանդիսանում է ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամը»։ Պատասխան խոսքով հանդես եկավ Ֆ. Նանսենը և ասաց, որ «ինքն ուրախ է Հայաստանում գտնվելու և Արարատյան դաշտավայրում հայ ժողովրդի հետ հանդիպելու համար, մի ժողովուրդ, որի անց-

¹ Fr. Nansen, Betrogenes Volk, S. 70.

² Правда, 16. 6. 25.

³ Ник. Вержбицкий, Записки старого журналиста, М., 1961, стр. 237.

⁴ Fr. Nansen, Betrogenes Volk, S. 110.

¹ Fr. Nansen, Betrogenes Volk, S. 128—129.

յալն ու պատերազմի ժամանակ ունեցած ծանր փորձություններն իրեն լավ հայտնի են: Նանսենը գոհունակությամբ հայտնեց այն առթիվ, որ հայ ժողովուրդը վերականգնում է իր մշակույթն ու տնտեսությունը¹:

Նկատենք, որ Ար. Երզնկյանը հենց սկզբից դուր եկավ Ֆ. Նանսենին: Նա հետազայում գրեց, որ Երզնկյանը «բարձրահասակ, նիհարավուն, վեհաշուք մարդ էր, հայի տիպար՝ իրեն բնորոշ ու խելացի գեմքով» և «անմիջապես թողեց բարեկիրթ մարդու տպավորություն: Ժողովրդական կոմիսարը պետք է ուղեկցեր մեզ Երևան: Դրանից հետո մենք պետք է միասին երկար աշխատեինք»²: Ար. Երզնկյանը անմիջականորեն դիմավորում է Սովետական Հայաստանի այն պատվիրակությանը, որը բանակցություններ է վարում նանսենյան հանձնաժողովի հետ:

Բնորոշ է, որ երբ Լենինականում նանսենին հայտնում են, թե մի քանի օրից հետո բացվելու է Շիրակի ջրանցքը, նա ուրախությամբ ասում է. «Անպայման ներկա կլինեմ»: Այդպես էլ վարվում է:

Լենինական ժամանելու օրը «Խորհրդային Հայաստան» թերթը լույս տեսավ «Նանսենի հանձնաժողովը Հայաստանում» առաջնորդող հոդվածով, ուր բնութագրվում է մեծագույն գիտնականն ու հումանիստը և ազդարարվում. «Համաշխարհային հռչակ վայելող Ֆրիտյոֆ Նանսենի անունը ծանոթ է նաև Հայաստանի աշխատավորությանը... Մենք ողջունում ենք Ֆրիտյոֆ Նանսենի և նրա հանձնաժողովի գալուստը Հայաստան... Մենք վստահ ենք ամենահարգելի Ֆրիտյոֆ Նանսենի ցանկությանը հայ գաղթականների տեղափոխության և տեղավորման բավարար լուծումը գտնելու համար»³: Այնուհետև մատնանշվում է, որ հայ ժողովուրդը դառն փորձով համոզվել է բուրժուական Եվրոպայի շահագիտական քաղաքականության մեջ, որին բազմիցս դժարերգիվ են նրա կենսական շահերը. այժմ էլ նա լավատես չէ դեպի այդ Եվրոպան՝ հայ գաղթականներին օգնելու հարցում, սակայն դա չի խանգարի, որ Սովետական Հայաս-

տենի կառավարությունը լիակատար աշակցություն ցույց տա Նանսենի հանձնաժողովին՝ նրա մարդասիրական միտքայի կարման համար:

Միաժամանակ լույս տեսավ պրոֆեսոր Հ. Բեդելյանի* «Ֆրիտյոֆ Նանսեն (նրա Հայաստան գալու առթիվ)» հոդվածաշարը («տնս Խորհրդային Հայաստան», 1925 թ., № № 136, 137), ուր արվում է ականավոր բևեռախույզի ճանապարհորդությունների պատկերը, ընդգծվում նանսենի սերը դեպի բնությունը և բացահայտվում նրա գիտական խիզախումների նշանակությունը:

Գնացքով Երևան մեկնելիս Նանսենն ակնդետ նայում էր Ախուրյանի մյուս ափը, ուր հուլիսի հողերը մնացել էին անմշակ, իսկ երբևմնի շքնաղ Անին՝ Բագրատունիների ժողովրդոստանը, ավերված էր բարբարոս գավթիչների կողմից. «Յածր մակարդակի ցեղերը, որոնք միայն կողոպտել ու ավերել գիտեն, բաց ոչ երբեք կառուցել, այստեղ ոչնչացրել են մարդկային կյանքն ու գործը»: Չնայած դրան, Անիի ավերակներն անգամ այսօր էլ հիշեցնում են հնամենի «բարձր մշակույթի կոթողները», որոնք «հանդիսանում են ինքնատիպ հուշարձանների ճարտարապետության պատմության մեջ»¹:

Շուտով երևում է Սարգարապատի դաշտը, ավելի ճիշտ՝ այն ժամանակվա անհրապույր անապատը, որի մասին նախնական տեղեկություններ ունեն նանսենը և ենթադրվում էր այն դարձնել ոռոգելի ու տրամադրել հայ գաղթականներին: Դրա հետ միասին հրաշալի տեսարան՝ շրջակայքի վրա իշխում է բիբլիական ու առինքնող Մասիսը: Այդ առթիվ «Ջարյա վոստոկա» լրագրի թղթակից Ն. Վերթբիցկին, որը հյուրերի հետ էր, գրել է. «Արարածն իր գլխին էր քաշել վարդագույն ամպերից կազմված գլխարկը, իսկ նրա ձեռքն կնճիռներով հոսում էր հալված ոսկին... Բոլորն էլ կպել էին պատուհաններին և հմայված էին հսկայով,

* Հովակիմ Ղազարի Բեդելյան (1874—1940) — հայտնի բուսաբան ու դասախոս: Ավարակ է Մոսկվայի Պետրոզևկու (հետագայում Տիբրյազի) անվան) գյուղատնտեսական ակադեմիան և կատարելագործվել արտասահմանում, 1904 թվականին Փարիզում պաշտպանել դոկտորական դիսերտացիա: Վերադառնալով զբաղվել է դասախոսական աշխատանքով Թուրքիայի տարբեր վայրերում, իսկ 1923 թվականին հրավիրվել է Երևանի պետական համալսարան, որպես բուսաբանության ամբիոնի վարիչ: Գրել է բազմաթիվ գիտական աշխատություններ: Տիրապետում էր մի շարք օտար լեզուների:

¹ Fr. Nansen, Betrogenes Volk, S. 113—114.

¹ Правда, 19. 6. 25.

² Fr. Nansen, Betrogenes Volk, S. 111.

³ «Խորհրդային Հայաստան», 17. 6. 25:

որը խոչանում էր Թափանցիկ հեռվում, որպես հզոր տեսիլք»¹։ Բայց ահա մեկը՝ ահաճ շիկակարմիր Քվիլինգը, անհանգստացած հարցնում է.

«— Ի՞նչ իրավունքով Հայաստանի հանրապետության գերբի վրա նկարված է Արարատը։ Չէ որ այդ լեռը գտնվում է Քուրբիայի սահմաններում։

Նանսենը դրան պատասխանում է.

— Իսկ այդտեղ ի՞նչ սարսափելի բան կա։ Չէ որ մենք դեմ չենք, որ թուրքերն իրենց գերբի վրա նկարում են կիսալուսին, թեև, ինչպես հայտնի է, նա լուսավորում է ամբողջ աշխարհը»։ Իսկ և իսկ շիշերինյան պատասխան, որ իր ժամանակին տրվել էր մի թուրք դիվանագետի նման հարցմունքին։ Նկատենք, որ նանսենը Քվիլինգին դիտողություն արեց դեռ Բաթումում, երբ նա, թերթելով Լոնդոնում 1924 թվականին հրատարակված «Անգրիկովկասյան ուղեցույցը», ջարդված ուսերենով դիմեց վերաբերյալուն. «Արդյոք բարի չե՞ք լինի լրացնել մի բաճի տեղեկություններ...» Այդ ժամանակ, — հիշում է թղթակիցը, — մեզ մոռեցավ նանսենը, ունկնդրեց թե ինչի մասին ենք խոսում և հանկարծ արագ շարժումով վերցրեց ուղեցույցը, փակեց այն ու սաց. այդ ինչի՞ համար է, կապիտան, ինչո՞ւ նաչել ծոռ արտացոլմանը, երբ մեր առջև է օրիգինալը»։

Շատ ծանր է նանսենի վիթխարի մեծության կողքին տեսնել գաճաճ ու ճիզվիտ Քվիլինգին, որը, սակայն, այն ժամանակ ճարպկորեն դիմակավորվում էր։ Մյուս կողմից՝ նա սոսկ մի «պառուտակ էր» և նանսենյան գործերում չէր կարող եղանակ ստեղծել, մասնավանդ սովետական երկրում։ Նրա ամեն մի հնարավոր ստնձգություն կանխվում էր նաև նանսենի կողմից։

Ի հակադրություն քվիլինգյան աղտեղություններին ու շարժառնություններին, նանսենը օբյեկտիվորեն հիմնավորում էր հայ ժողովրդի պատմական իրավունքներն իր հայրենիքի վերաբերյալ ու մասնավորապես շեշտում, որ Մասիսը հանդիսանում է «հայ ժողովրդի պատմության կենտրոնը»²։ Նա ցույց է տալիս, որ Հայաստանը կապված է մարդկության հնամենի ավանդությունների հետ և, մասնավորապես, ակնարկելով Նոյի առասպելը, գրում է, որ այն «դարձավ մարդկային ցեղի երկ-

քորդ Հա՛ լենիքը»։ Բայց դրա հետ միասին Հայաստանը դարևր շարունակ եղել է կովախնձոր մեծ պետությունների ձեռքին, և նրա վրայով անցել են մահաբեր ու ավերիչ մորթիկներ՝ նյութված բազմաթիվ բռնակալների ու վայրի հորդանների կողմից։ Ինչպիսի ուժ և կենսունակություն էր պետք դիմանալու այդ ահեղ փորձություններին... Նանսենի այս մտքերն իրենց հաստատումն են գտնում նաև նորագույն հետազոտություններում։ Այդպես, Լոնդոնի համալսարանի պրոֆեսոր, կովկասագետ Գ. Մ. Լանգը 1970 թվականին հրատարակեց «Հայաստանը քաղաքակրթության օրրան» գիրքը, որտեղ մասնավորապես ասված է. «Միայն հայերը, ինչպես և նրանց հարևան վրացիները, ձեռք բերին ազգային ու կուլտուրական այնպիսի միասնություն, որը նրանց հնարավորություն տվեց դարերի ընթացքում դիմակայելու օտարերկրյա տիրապետությանը։ Այդ միասնությունը՝ հիմնված լեզվի, քաղաքակրթության և կրոնական հավատալիքների վրա, կամքի անսովոր ամրության ու խիզախության աշակցության մեջ, նպաստեց ապրելու մի ժողովրդի, որին հետապնդում էին աշխարհի երեսից իսպառ ոչնչացնելու նպատակով»¹։

Հոնիսի 17-ի ցերեկը գնացքը ժամանեց Երևանի կայարան, ուր կազմակերպվեց սրտառուլ դիմավորում։ Հայկ. ՄՍՀ Ժողկոմխորհի նախագահի տեղակալ Աս. Մռավյանը «նանսենի հանձնաժողովին ողջունեց Հայաստանի կառավարության անունից»²։ Դիմավորողների մեջ էր նաև Ֆլորա Վարդանյանը*, որը, ինչպես նշել է նանսենը, «մեծագույն նվիրվածությամբ էր աշխատում գաղթականների համար Հայաստանում»։ Մեկնելով կայարանից, նանսենի հանձնաժողովն անմիջապես ընդունվում է ՀՍՍՀ Ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինի և Կենտրոնական կոմիտեի նախագահ Ս. Համբարձումյանի կողմից, տեղի է ունենում մտքերի փոխանակություն, ընդ որում նանսենը հայտնում է, որ

¹ D. M. Lang, Armenia Cradle of Civilization, London, 1970, p. 39.

² «Заря Востока», 19. 6. 25.

* Վարդանյան Ֆլորա Սեփակի (1881—1942) — հեղափոխական, կոմունիստական կուսակցության անդամ 1917 թ., Անգրիկովկասում սովետական իշխանության հաստատման ակտիվ մասնակից, Վրաստանի կոմկուսի Քիֆիսի կոմիտեի ագիտացիայի ու պրոպագանդայի բաժնի վարիչ, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի կինբաժնի վարիչ։ Մեծ գեր է կատարել անազատության կրիստների խնամքի կազմակերպման ու գաղթականներին օգնելու գործում։ Տիրապետել է անգլերենին։

¹ «Заря Востока», 20. 6. 25.

² Fr. Nansen, Betrogenes Volk, S. 114.

«եկեղեցի է դադարեցնել տեղափոխության խնդրի հնարավորությունները պարզելու, եթե կառավարությունը հող տրամադրելու լինի: Գաղթականների տեղափոխության և տեղավորման հետ կապված ծախսերը կհոգացվեն արտասահմանից»: Սովետական Հայաստանի կառավարությունը բարյացակամությամբ ընդունեց այդ հաղորդագրությունը և պատրաստակամություն հայտնեց տրամադրելու հող և հնարավոր ամեն ինչ՝ հայ գաղթականներին տեղավորելու համար: Միաժամանակ նշեց, որ նանսենի հանձնաժողովին «կտրվի լայն հնարավորություն՝ տեղնուտեղը ծանոթանալու այն բոլոր ստղծվելիք հողամասերի հետ, որոնց վրա կարելի է տեղավորել գաղթականներին», ընդ որում «այդ հողամասերի վերաբերմամբ արդեն իսկ կան պատրաստի ծրագրեր, որոնք կտրամադրվեն մանրամասն ծանոթանալու համար»¹:

Այնուհետև պայմանավորվածություն է ձևեր բերվում երեկոյան սկսել պաշտոնական բանակցությունները: Մինչ այդ հյուրերը հանդատանում են ու ծանոթանում քաղաքին, ընդ որում նրանք նկատում են, որ թշվառություն չկա և մարդիկ լավ կեցվածք ունեն: Գաղթականների է թվում, քանի որ հայ ժողովուրդը շատ զրկանքներ է տեսել, հատկապես առաջին աշխարհամարտում և մոտ 400 հազար գաղթականներ էին ապաստանել Արևելյան Հայաստանում. «Գուցե ոչ մի երկիր այնքան չի տառապել այդ պատերազմում, որքան Հայաստանը, բայց հինգ տարիների հմուտ և հոսանողն աշխատանքն էպակս բարելավել է դրությունը»²:

□□□

Սովետական Հայաստանի կառավարությունը միանգամայն բարյացակամ վերաբերմունք է ցույց տալիս Ֆ. Նանսենի միսիային և փոխադարձ վստահության միջոցով տեղի են ունենում գործարար խորհրդակցություններ՝ ՀՍՍՀ ժողկոմխորհին կից գաղթականական հանձնաժողովի ու նանսենյան հանձնաժողովի միջև:

Առաջին նիստը կայացավ 1925 թվականի հունիսի 17-ին՝ ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ա. Մուսվաթյանի ղեկավարությամբ: Մասնակցում էին նաև հողժողովում Ար. Սրզնկյանը,

մասնագետներ, իսկ թարգմանչի դեր էր կատարում ինժեներ Ք. Գուրգենյանը*, որը տիրապետում էր գերմաներենին, անգլերենին ու ֆրանսերենին: Շուտով նա դարձավ նանսենի չափազանց «բարեկամներից» մեկը:

Բացելով խորհրդակցությունը, Ա. Մուսվաթյանը հաղորդեց, որ ցանկալի է իմանալ, թե Ֆ. Նանսենի գլխավորած հանձնաժողովին ի՞նչ հարցեր են հետաքրքրում: Պատասխանեց նանսենը և հանգամանորեն խոսեց աշխարհասփյուռ հայ գաղթականների ծանր վիճակի ու նրանց օգնելու անհրաժեշտության մասին: Հատկապես նա նշեց, որ Հունաստանում կան 45 հազար գաղթականներ, որոնցից «11000 հոգի մեծ ցանկություն ունեն Հայաստան գալու», ընդ որում դրանցից 9 հազարի (հիմնականում հողագործներ ու արհեստավորներ) «դրությունը շատ աննախանձելի է»: Պոլսում հավաքվել են 5000 գաղթականներ և «բոլորն էլ ցանկանում են գալ Հայաստան», բայց առաջին հերթին պետք է բերել 800 հոգու, որոնց վիճակը խիստ վատթար է: Նույնպիսի ցանկություն ունեն Հյուսիսային Սիրիայում գտնվող 50 հազար հայ գաղթականները, որոնց կացությունը ծանր է. այդպիսի քանակություն ընդունելու համար նանսենն այն կարծիքն է հայտնում, որ «Արաքսի և Ախուրյանի մոտ գտնված հողերից որոշ կտոր միացվի Հայաստանին», մասնավորապես որ նախատեսվում էր Հյուսիսային Սիրիան հանձնել Քուրդիստանին: Ինչ վերաբերում է իր հանձնաժողովին, ապա նրա անմիջական նպատակն է փոխադարձ համաձայնությամբ Սովետական Հայաստանում հարմար վայր գտնել և օգնել առավել կարիքավոր հայ գաղթականներին տեղափոխվելու այստեղ: Նանսենը հաղորդում է, որ արտասահմանում Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցով արդեն խոսք է բացվել Սարգսրապատի դաշտի օգտագործման հնարավորության մասին:

Այնուհետև Ֆ. Նանսենը նշում է, որ եթե հաջողվի կազմել մի գործնական ծրագիր, ապա դրա իրականացման համար կա-

* Գուրգենյան Գրիգոր Զեանգիրի (1872—1937) — ծնվել է Բաքվում, ավարտել Ցյուրիխի համալսարանի քիմիայի ֆակուլտետը և որպես ինժեներ աշխատել արտասահմանում ու Ռուսաստանում: 1920 թվականին տեղափոխվում է Հայաստան, դասավանդում Երևանի պետական համալսարանում և աշխատում Հայկ. ՍՍՀ պետպլանում որպես ունիտերի քիմիայի գծով: Ակտիվորեն մասնակցել է հանրապետությունում քիմիական արդյունաբերության ստեղծմանը:

1 «Միջազգային Հայաստան», 19. 6. 25:

2 Fr. Nansen, Betrogenes Volk, S. 132:

րելի է որոշակի գումար ժողովել Ֆրանսիայում և Անգլիայում գործող բարեգործական ընկերությունների միջոցով. «Ես կարող եմ իմ կողմից ավելացնել և այն, — ասում է Նանսենը, — որ արտասահմանում մեծ համակրանքով են վերաբերվում թե՛ դեպի Հայաստանը և թե՛ դեպի գաղթականությունը. այդ հանգամանքը հնարավորություն կտա առանց մեծ դժվարությունների իրականացնել ծրագիրը»¹:

Այդ ժամանակ Ա. Մուսվյանը հարցնում է. «Արդյոք եվրոպական կառավարություններից որե՛ք մեկը պաշտոնական հայտարարություն արե՞լ է այդ ծախսերը վերցնելու մասին, թե պետք է հուսալ միմիայն բարեգործական մարտիներին վրա»: Ֆ. Նանսենը պատասխանում է, որ «բացի բարեգործական ընկերություններից, հույս կա ստանալ օգնություն նաև կառավարություններից, բայց դրանցից ոչ մեկը պաշտոնապես չի հայտարարել այդ մասին»²: Նա միաժամանակ նշում է, որ այդ հարցով նրանց պաշտոնական առաջարկություններ չեն արված, քանի որ դեռ չունենք որոշակի ծրագիր, որպիսին կազմելուց հետո կդիմենք: Այնուամենայնիվ, Նանսենը հայտնում է, որ հունական կառավարությունը խոստացել է բարոյական ու դրամական աջակցություն, անգլիական, ֆրանսիական ու իտալական կառավարություններն էլ «համակրանքով են վերաբերվում այդ խնդրին» և նրանց գիտությունը են իր հանձնաժողովի մեջ գործում համապատասխան մարդիկ, թեև նրանք չեն համարվում «պաշտոնական ներկայացուցիչներ»:

Հողժողովում Ար. Երզնկյանի այն հարցին, թե Նանսենյան հանձնաժողովը պետք է դրազվի միայն Մարդարապատի՞ դաշտի ոռոգման հարցով, պատասխան է արվում, որ կարող են առաջ քաշվել նաև ուրիշ պլաններ. «Այժմ մենք եկել ենք, — ասում է Ֆ. Նանսենը, — որպեսզի Հայաստանի կառավարության ներկայացուցիչների հետ միասին մշակենք գաղթականությանը տեղավորելու մեր գործնական ծրագիրը: Եթե, բացի Մարդարապատից, կան ուրիշ նպատակահարմար ծրագրեր, մենք պատրաստ ենք ծանոթանալ ու քննել»³:

Հայկ. ՍՍՀ Ժողովի Խորհրդի կից գաղթականական հանձնաժողովը հայտնում է, որ հանրապետությունում կան 100000

գեայատին անջրդի հողեր, որոնք կարող են ոռոգվել ու օգտագործվել: Բայց ավելի նպատակահարմար է Մարդարապատի գաշտը (43000 դեսյատին), որը, սակայն, չի բացառում նաև մյուս զանգվածների օգտագործումը:

Գրանից հետո ճարտարապետ Օհանյանը հաղորդում է Մարդարապատի ոռոգման ցանցի կառուցման մասին, ինչպես նաև նշում 3 այլ հողամասերի (30000 դեսյատին, 16000 դեսյատին, 11000 դեսյատին) ոռոգման հնարավորությունը: Որոշ հարցուհորձից հետո որոշվում է ներկայացնել համապատասխան նախագծեր և հանգամանորեն ուսումնասիրել դրանք թե՛ փաստաթղթերով և թե՛ տեղանքում: Նիստի վերջում Ֆ. Նանսենը շնորհակալական խոսք է ասում սրտառուլ վերաբերմունքի համար և հույս հայտնում, որ «մեր համատեղ աշխատանքն արդյունավետ կլինի հայ գաղթականների համար»¹:

Հաջորդ օրը՝ հունիսի 18-ին, նանսենյան հանձնաժողովը ՄՍՀ Ժողովի Խորհրդի ներկայացուցիչ Լ. Գուրգերյանի (ներքին գործերի ժողովում), ակադեմիկոս Ա. Քամանյանի, ջրային տնտեսության վարիչ Մ. Շաղունցի, ինժեներներ Լովանյանի, Մանուչարյանի և այլոց ուղեկցությամբ ավտոմեքենաներով մեկնեց Մարդարապատի (այժմ՝ Հոկտեմբերյանի) շրջան: Նրանք եղան Հոկտեմբերյանի բամբակազտիչ գործարանում և գոհունակությամբ արտահայտվեցին նրա մասին: Այնուհետև շարժվեցին դեպի սովետա-թուրքական սահմանագիծը, դիտեցին Արաբսի ափերը, եղան Մարդարայում ու հայկական այլ գյուղերում, ծանոթացան նրանց բնակիչների նիստուկացիներին Միամամանակ նկատեցին «շատ գյուղեր, որոնք բարուբանդ էին արվել թուրքերի կողմից՝ նրանց վերջին արշավանքի ժամանակ՝ 1920 թվականին և մնացել էին միայն ավերակներ: Տխուր էք տեսնել, թե ինչպես այս տեղանքը հնազույն շրջանից մինչև նոր ժամանակները շատ անգամ ավերվել է ու այլանդակվել: Պատերազմ, միշտ միայն պատերազմ»²:

Այնուհետև հյուրերն այցելեցին Հայաստանի հնազույն մարաղաքներից մեկի՝ Արմավիրի ավերակները, որի շուրջը տարածվում էին բամբակի դաշտերը: Այնտեղ աշխատում էին, և մի երիտասարդ գեղեցիկ կին բաղաբավարությամբ բամբակենու

¹ Հայկ. ՍՍՀ ԼՂՍԵ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 335, ք. 1:

² Նույն տեղը, ք. 2:

³ Նույն տեղը, ք. 3:

¹ Հայկ. ՍՍՀ, ԼՂՍԵ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 335, ք. 5:

² Fr. Nansen, Betrogenes Volk, S. 139:

կրկոն հանձնեց նանսենին, որի առթիվ նա գրել է. «Դա, ըստ երկրի սովորության, բարի գալուստի մաղթանք էր՝ այնքան բնական, պարզ ու հուզիչ: Ես երկար պահեցի այդ քնքուշ բամբակենին»:

Ահա և Սարգարապատի շոր ու փշոտ տափաստանը, որը ոտոզելու դեպքում կարելի էր դարձնել բերրի ու ծաղկող: Չէ որ հիմա էլ նրա վրա երևում են կանաչ բնակավայրեր, ուր հայ գյուղացիները «քարից հաց են քամում»: Հյուրերը մտնում են Մոլլա-Բայազետ (այժմ՝ Բամբակաշատ) հայկական գյուղը, որի բնակիչները նրանց դիմավորում են աղ ու հացով, կաթով ու պտուղներով: Հյուրերը նկատում են, որ մարդիկ հիմնականում ուրբախ են, բայց ինչ-որ բան ճնշում է նրանց: Նրանք հարցմունք են անում դրա մասին և պարզում, որ թուրքերն այստեղ էլ են մահվան խրախճանք կազմակերպել, 3500 բնակչից գազանաբար սպանել են 2000 հոգու՝ շինայելով նաև մանուկներին ու ծերերին, կողոպտել ու ավերել ամեն ինչ: Ֆ. Նանսենը, ընդհանրացնելով նման դեպքերը, գրել է. «Այսպիսին է հայ ժողովրդի պատմությունը: Այս լայն աշխարհում կա՞ ևս մի ժողովուրդ, որն անընդհատ ենթարկված լինի նման դաժան տառապանքների: Բայց կա՞ արդյոք մի այլ ժողովուրդ, որը պատմության մեջ ցուցաբերած լինի այդպիսի ամուր, կենսահաստատ ուժ՝ բախտի բոլոր դաժան փոփոխությունների մեջ»:

Նույն օրը երեկոյան հյուրերը վերադառնում են Երևան և հրավիրվում ճաշկերույթի քաղաքի ամառային զրոսայգում, ուր նրանք ոչ միայն վաչելում են հայկական համեղ կերակուրներ ու մրգեր, այլև լսում հայկական երաժշտություն, որի համար նանսենն անձամբ շնորհակալություն է հայտնում երգչախմբի ղեկավար Կ. Շահնազարյանին: Հետագայում նա իր ճանապարհորդական նոթերում գրել է, որ «ուտելիքը և հայկական գինին լավն են, իսկ մրգերի մասին խոսք չի կարող լինել: Այդ ժամանակ սկսել էր հասնել ծիրանը: Ինքը՝ Հայաստանը ծիրանի հայրենիքն է, ուր ծիրանն այնքան մեծ է ու հյութալի, որպիսին ևս ոչ մի տեղ չեմ տեսել»:

1925 թվականի հունիսի 19-ի առավոտյան նանսենի հանձնաժողովը գնում է ՀՍՍՀ Ժողովուրդի հերթական խորհրդակ-

ցաթյան: Այստեղ նանսենին է մոտենում այդ ժամանակ Երևանում տեղի ունեցող ուսուցիչների հանրապետական համագումարի պատվիրակությունը, որի ղեկավարը (Կ. Մելիք-Յահնջանյեք, հետագայում Հայկ. ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս) գերմաներեն ողջունում է ու հաղորդում, թե նանսենն ընտրվել է համագումարի պատվավոր նախագահ. «նանսենն ասաց, որ շատ ղզացված է արտառուչ հանդիպումից, որ ինքը ղեռ մանկությունից երազել է լինել Հայաստանում՝ քաղաքակրթության այդ օրրանում և այժմ, տեսնելով Հայաստանի հին մշակույթի հիանալի հուշարձանները և բնակչության աշխատանքային ու ստեղծագործական ծափեր, վերջնականապես համոզվել է, որ հայ ժողովուրդը այժմյան պայմաններում ամուր կանգնած է իր վերածննդի ուղու վրա: Նա խոստացավ իրենից կախված ամեն ինչ անել, որպեսզի օգնի հայրենիք վերադառնալու արտասահմանում տառապող հայ գաղթականներին»:

Այնուհետև տեղի ունեցավ ՀՍՍՀ Ժողովուրդի կից դադարականական և նանսենյան հանձնաժողովների 2-րդ միացյալ նիստը՝ հողժողով Ար. Երզնկյանի նախագահությամբ: Այստեղ ծանոթանում են հայ մասնագետների կազմած մի շարք նախագծերին, որոնք վերաբերում էին ոտոզման օբյեկտներին, այդ թվում Սարգարապատի ջրանցքի կառուցմանը: Հարց ու պատասխանի միջոցով պարզարանվում են մի շարք տեխնիկական խնդիրներ, ապա նանսենականները հետաքրքրվում են Սուրմալուի շրջանով, որպեսզի հատկապես ճշտեն ջրաբաշխման հնարավորությունը: Հաղորդվում է, որ այնտեղ լավ հողեր կան, բայց այժմ՝ հայ բնակչության կոտորածից ու արտաքսումից հետո (վերացվել են 12 հայ գյուղերը), քիչ են զբաղվում երկրագործությամբ. բոլոր դեպքերում ջուրը միշտ կհերիքի, եթե թուրքական կառավարությունն առաջ չբաշխի «քաղաքական մոմենտը»:

Հետաքրքիր է նաև Ֆ. Նանսենի ու Ար. Երզնկյանի հետևյալ երկխոսությունը.

Նանսեն.— Ես համոզված եմ, որ այնտեղ (Սուրմալուի շրջանում) շատ աղատ հողեր կան, որոնք կարելի է գաղթականությանը հատկացնել:

Երզնկյան.— Ոչ միայն այնտեղ, այլև մինչև Երզնկա. Բիթ-

¹ Fr. Nansen, Betrogenes Volk, S. 144.

² Նույն տեղը, էջ 152:

¹ «Заря Востока», 19. 6. 25.

լիս շափազանց շատ հողեր կան, որտեղ ազգաբնակչությանը համաշխարհային պատերազմի միջոցին փրկացրել են:

Նանսեն — Կարսից զեպի արևելք գտնվող հողերը պետք է շատ լավ հողերից լինեն:

Երզնկյան — Այնտեղի հողերի մի մասը ալպիական կուլտուրայի համար անփոխարինելի են, բացի այդ կան նաև հացահատիկի մշակութային համար պիտանի հողեր, որից հետո գալիս է Ալաշկերտի հովիտը, որը հացի շահմարան է կոչվում¹:

Նիստից հետո հյուրերը ծանոթացան Երևանի մի բանի տեսարժան վայրերին: Մասնավորապես նրանք այցելեցին Հայաստանի պատմության թանգարան, ուր տեսան շատ հետաքրքիր առարկաներ ու իրեր, հնագիտական պեղումների արդյունքներ, այդ թվում մարդկային կմախքներ ու դանդեր, որոնք հետազայում նանսենն օգտագործեց հայերի մասին գրած իր աշխատության մեջ:

Գրանից հետո հյուրերին առաջնորդեցին Երևանի պետական համալսարան, ուր կազմակերպվեց ջերմ ընդունելություն: Գերմաներեն ողջույնի խոսքեր ասացին համալսարանի ռեկտոր Հակոբ Հովհաննիսյանը և պրոռեկտոր Հ. Գյուլիբեխյանը: Ուրախալի անակնկալ էր պրոֆեսոր Հ. Քեղեյանի ելույթը նորվեգներին: Շուտով նանսենի և, նրա իսկ խոսքերով ասած, այդ «համակրեցի մադդու» միջև ստեղծվում է անկեղծ բարեկամություն: Նանսենը եղավ համալսարանի լսարաններում ու լաբորատորիաներում, պրազարանում ու կարինետներում: Նա տեսավ, որ պայմանները համեմատաբար սուղ են, բայց կատարվում է հնարավոր ամեն ինչ գրությունն անշեղորեն բարելավելու համար:

Այնուհետև համալսարանի այգում կազմակերպվում է բարեկամական խնջույք, որն անցնում է ջերմ ու գործարար մթնոլորտում: Ապա Ֆ. Նանսենին հանդիսավորությունը շնորհվում է Երևանի պետական համալսարանի պատվավոր դոկտորի ու գիտությունների պատվավոր անդամի կոչում: Նա խոր շնորհակալություն է հայտնում և հատկապես նշում, որ «ինքը շափազանց զգացավ՝ է և աշխատելու է ամեն կերպ օգտակար լինել համալսարանին... Չորս տարվա ընթացքում Հայաստանի կառավարությունը կարողացել է ստեղծել իր բարձրություն վրա կանգ-

նած մի համալսարան, որը ներկայումս խոշոր աշխատանք է կատարում երկրի կուլտուրայի բարձրացման համար... Համալսարանն արդացություն է ամբողջ խորհրդային Հայաստանում կատարվող շինարար աշխատանքի»¹:

Նորվեգիա վերադառնալուց հետո նանսենը շարունակում է կապ պահպանել Երևանի համալսարանի հետ և, մասնավորապես, ստանալով իրեն տրված կոչման դիպլոմը, 1926 թ. մարտի 27-ին Օսլոյից Երևան՝ համալսարանի ռեկտորի անունով ուղարկած հեռագրում նորից «ամենաանկեղծ շնորհակալությունն է հայտնում» և հավաստիացնում, որ հայ մշակույթի այդ մեծ օջախն այցելելու հիշատակը վառ է մնում իր սրբատում. «Իմ հույսն է, միշտ կարողանալ նորից վերադառնալ: Սա խնդրում եմ Ձեզ նաև համոզված լինել, որ եթե մի որևէ կերպ ի վիճակի լինեմ աջակցել Ձեր համալսարանին, դա անպայման ինձ կտա մեծ բավականություն: Անկեղծորեն հուսալով՝ Ձեր Ֆրիտյոֆ Նանսեն»²:

Համալսարան այցելույց հետո հյուրերը մեկնեցին Զանգիֆ ափը և դիտեցին Երևանի բերդը, որի առումը նշանավորեց Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, և հայ ժողովրդի բախտը մեկընդմիջտ կապվեց ռուս ժողովրդի հետ:

Հունիսի 20-ին, նանսենի հանձնախումբը շարունակում է հետազոտել Սարգարապատի դաշտը, մտտենում՝ է Արաբիև և քննարկում ջրանցք կառուցելու հնարավոր տարբերակները: Ներանք դիտում են Սուրմալուի սարահարթը, որը «մի ժամանակ ծածկված է եղել խաղողի այգիներով, պարտեզներով ու արտերով, իսկ այժմ վեր է ածվել մերկ դաշտավայրի»³:

Երեկոյան նրանք գալիս են կայարան (Հոկտեմբերյան), որպեսզի գնացքով մեկնեն Լենինական: Բայց պարզվում է, որ նրանց հատուկ վագոնը պետք է գնացքին կցվի բավականին ուշ: Ուստի, նրանք գիշերվա մեծ մասն անց են կացնում այդտեղ, ընդ որում նանսենը գերազասում է լինել ոչ թե շոգ կուպեում, այլ աստղալից երկնքի տակ՝ չոր բրեզենտի վրա, «փափուկ» քարը դիտի տակ: Այդտեղ էլ նա խորհում է աշխարհի գործերի մասին, հիշում իր սիրելի Արկտիկան և միաժամանակ

¹ Հայկ. ՍՍՀ ՀՀՍԵ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 335, թ. 9.

¹ «Խորհրդային Հայաստան», 21. 6. 25:


² Հայկ. ՍՍՀ ՀՀՍԵ ՊԿԱ, ֆ. 20, ց. 1, գ. 59, թ. 88:

³ «Заря Востока», 28. 6. 25.


հիանում էկզոտիկ ու երաժշտական հարավով՝ ասելով. «Ամեն-
նուրեք լավ է»:

Հունիսի 21-ին Նանսենը իր ուղեկիցներով արդեն Լենինա-
կանում էր, ուր նույնպես զգում են նոր կյանքի շունչը, բայց և
տեսնում պատերազմի ու զավթիչների ավերածությունների
հետքերը, մի բան, որ նկատեց նաև Ա. Լունաչարսկին, երբ
1924 թվականին այցելեց Լենինական: Ի դեպ, նա գրել է. «Միտոս
ճմլվում է այն արտասովոր նմանությունից, որ ունի Լենինակա-
նը Պոմպեյի հետ», միայն այն տարբերությամբ, որ վերջինս
ենթարկվել էր բնական աղետի, իսկ առաջինը՝ թուրքական.
«Ամենասարսափելի փորձությունը պատահեց այդ քաղաքին,
երբ... թուրքերը զազանաբար թափվեցին Լենինականի վրա:
Ժամանակ առ ժամանակ նայելով այդ ավերակներին իսկապես
որ թվում է, թե ավերողները նպատակ էին դրել քարը քարի վրա
չթողնել՝ այդ խոսքի բառացի իմաստով: Եթե նրանք այդպիսի
զայրույթով էին անձնատուր լինում անշունչ բաների կործան-
ման նպատակներին, հասկանալի է, որ ոչ պակաս զայրույթով
էին անձնատուր լինում ազգաբնակչությանը կոտորելու նպա-
տակին»¹: Իրոք որ թուրքական զավթիչները մասսայաբար ու
սադիստական դաժանությամբ հոշոտում էին մարդկանց, մի մա-
սին էլ գերեզմարում ու քշում իրենց երկիրը որպես ստրուկների:
Այդ մասին է վկայում նաև այն «աղերսալից խնդրագիրը», որ
Լենինականում մի խումբ հայ ողբացող մայրեր ներկայացրին
Ֆ. Նանսենին. այնտեղ նշվում է, որ միայն 1920 թվականին
թուրքերը գերեզմարել են 12000 հոգու, որոնք կամ տանջամահ
են արված, կամ «դատապարտված են դանակոծման, սուլամա-
հուբյան ու թշվառության»: Այնուհետև նրանք գրում են. «Մենք՝
տանջված մայրերս, արցունքներն աչքներիս խնդրում ենք Ձեր
օգնության ձեռքը մեկնել և ազատել մեր դժբախտներին», եթե,
իհարկե, նրանք զեռ կենդանի են: Մեծ հուամանիտար խորապես
հուզվում է և խոստանում կատարել հնարավորը:

Ի հակադրություն այդ ոճրալից ողբերգության, Նանսենը
Լենինականում ևս ականատես է լինում սովետական արգասա-
վոր շինարարության ու մասնավորապես հունիսի 21-ին մաս-
նակցում Շիրակի ջրանցքի բացմանը, որը վերածվեց համաժո-
ղովրդական տոնախմբության: Այնտեղ էին Անդրֆեդերացիայի



Պուշկոգրա—Նանսենի տունը Լյուսակերում (Օսլո)



Ֆ. Նանսենը իր աշխատասենյակում

¹ «Խորհրդային Հայաստան», 10. 9. 24:

Սովետական պետական գործիչներ, որոնց հետ բանակցել է Յ. Նանսենը
 հայ գաղթականների հարցի շուրջը



Գ. Վ. Չիլեբին



Մ. Մ. Լիտվինով



Ա. Ս. Կոլոնտայ



Ս. Մ. Խանոյան



Մ. Գ. Օրախեիլաշվիլի




Ս. Լ. Լոկաշին



Մ. Ս. Համբարձումյան



Նախնական հանձնաժողովը Երևանում՝ հոլմոցիում Ա. Հ. Երզնկյանի օգնությամբ, 1918 թ.



Ս. Նախնիք և Ա. Հ. Մաղվանը



Նանսենյան հանձնաժողովը Սարգարապատի դաշտում




Շիրակի ջրանցքի բացումը, որին մասնակցեց Ֆ. Նանսենը:



Ֆ. Նանսենը հայկական գյուղում







Ֆ. Նանսները Հենինականի որբանոցում



Ս. Գ. Փիրումյան



Ֆրիտլոֆ Նանսները, Լիվ Նանսներ (Հոլերը) և Ռուալ Ամունդսենը

February 25th 1923

Dear Mr. Hoover,

I thank you very much for your very kind letter of Feb. 10th about the Armenian question. It is now in a preliminary stage and we are still in the dark as to the number of immigrants, the help from outside which will be given, and the forms of organization which will be needed. America will probably play a large part. When the question will be more ripe I will be very glad to enter with you according to the circumstances into an exchange of views upon this subject.

I have the honor to remain

Yours sincerely

John T. Johnson

ՀԱՆՐԱՔԱՅԻ ՖՐԻՏՅՈՒՖ ԼԱՆՍԵՆԸ
 ՔԻՉԵՐԻՆԻ ՄԵԿԵՆԻՆԻ ՎԵՐՏԵԿՈՂ-Ի ԻՄԲԵՐԴԱԻԻՊՈՒՆԸ
 ԵՆԵՆԵՆԻ ԻՆՏԵՂԵՐԱԿՈՆՏԱԿՏԻ

Wenn es mir nur gegönnt wärd, wärd ich
 Ihnen wirklich rechtlich für Armenien zu
 tun! Ich bin bereit mit der grössten Möglich-
 keit und dem tüchtigsten arbeitskräftigen
 Volk. Möge diese schöne Land und
 sein Volk, das so viel gelitten hat, eine
 friedliche und glückliche Zukunft
 gewinnen

Frithjof Johnson

St. Petersburg 4 Juli 1925.

Շատ ուրախ եմ լինում, յեթե իմ կարողանում վառելիք ոգով
 կար զարմ կատարել Հայաստանի համար, վազն սծախած է մեծ հոգև
 բախտաբայաններով յեկ ունի մի առաջինի աշխատանքի ժողովուրդ
 Յանսենի, վազ այդ զեղեցիկ յեղիքն ու ժողովուրդը, վազն այնքան
 դժբախտաբայաններ է սեռել. վայելի իողաղ ու յերջանիկ ապագա
 Քիչերին, 4 Հուլիս 1925 թ.
 Ֆրիտյոֆ Լանսեն

Ֆ. Լանսենի ինքնագիրը «Մարտակոչ» թերթին

FRIDTJOF NANSEN
 (LYSARUS med)
 Mahatma, Kala
 9th July 1925

Government of Armenia
 Sir Mr. President.

Before having the honour of Commission I wish to express to you and to your Government my most sincere thanks for the excellent hospitality and good kindness which you have shown my associates and myself during our visit to your beautiful country. Through the great facilities you have granted us, our stay in Armenia has been very pleasant indeed and interesting in every respect. We have had an excellent opportunity of seeing your country and of studying its great possibilities and we leave it with the desire that we may have an opportunity of adding our little share towards its development, and thus help to create a happy and prosperous future for the Armenian people. Believe me Sir Mr. President, Armenia and the Armenian people will always have a true friend in
 Yours sincerely
 F. Nansen

I also wish to use this opportunity to express my warm thanks for the beautiful commission which I received in the time and which will always remain as a memorable one to me. I received it in Paris 1925.


Ֆ. Նանսենի 1925 թ. Հուլիսի 9-ի շնորհակալական նամակը
 ՀՍՍՀ կառավարությանը



Ֆ. Նանսենի գրքերի անվանաթերթերը՝ «Ռուսաստանը և աշխարհը», «Հայաստանը և Մերձավոր արևելքը» (մակագրությամբ Ս. Լուկաշինին), «Երկրագնդի մոտակայքը» (մակագրությամբ Ա. Երզնկյանին)



Յ. Նանսենի գծանկարները
Մ Ս. Սարյանի, 1925 թ.



Յ. Նանսենի «Ֆրամը» Բևեռային ծովում» գրքի հայերեն
հրատարակության անվանաթերթը:



Գրքի հեղինակը Օսլոյում՝ Ֆ. Նանսենի հուշարձանի մոտ (1975 թ.)

Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի ղեկավար գործիչները, որոնք ողջույնի ճառեր արտասանեցին և ընդգծեցին նորակառույցի տնտեսական կարևոր նշանակությունը: Ջրանցքի փականի մեխանիկական բարձրացմանը Մ. Ցխակայայի, Ս. Խանոյանի, Ա. Հովհաննիսյանի, Ս. Համբարձումյանի, Ս. Լուկաշինի, Ֆ. Մախարաձեի, Հ. Սուլթանովի, Աս. Մռավյանի և ուրիշների հետ միասին մասնակցեց նաև Ֆ. Նանսենը և ապա ելույթ ունեցավ: Նա մեծ հուզմունքով «ափսոսաց, որ շփոթի հայոց լեզուն, որպեսզի արտահայտի իրեն համակող ուրախության զգացումը՝ տեսնելով, թե ինչպես հայ ժողովուրդը հաղթահարում է իր ծաղկման ճանապարհի վրա եղած դժվարությունները»¹: Այդ օրվա մի այլ լրագրային հաղորդագրության մեջ ասված է. «Բազմությունն օվացիաներով է դիմավորում Ֆ. Նանսենին, որը բարձրանում է ամբիոն և ասում. «Ես ինձ բախտավոր եմ զգում, որ ներկա եմ այսօրվա մեծ հանդեսին: Հայ ժողովուրդն ամենից շատ է տառապել համաշխարհային պատերազմից: Այն բազմաթիվ ավերածությունների հետքերը, որ նկատելի են ձեր երկրում, ապացույց են դրան: Սակայն հայ ժողովրդի ջանասիրությունը և եռանդն այժմյան խաղաղ պայմաններում մեծ գործեր կարող են կատարել. ես հավատացած եմ, որ այս ջրանցքին պիտի հետևեն ուրիշ ջրանցքներ և շինարարության ուրիշ օրինակներ: Կեցցե՛ հայ ժողովուրդը, կեցցե՛ Շիրկանալը»²:

Բոլորը ցնծում էին, դրանց մեջ նաև Նանսենը, որը միաժամանակ հաճախակի չխկացնում էր «կողակը» (լուսանկարում էր): Ավելին, երբ ջուրը հոսեց ջրանցքով, շատերի հետ միասին Նանսենը ևս խիստ ոգևորվեց և այնտեղ նստեց իր լայնեզր գլխարկը: Նա նշել է, որ «դա մեծ օր էր, քանզի ավարտվել էր մի այնպիսի գործ, որը երջանկություն կպարզներ հազարավոր նոր օջախների... Բոլոր աշխատանքները՝ անբարտակը, թունելը և ջրանցքը, թողնում էին լավ տպավորություն, և գիտակ Դուպիուսը իր հերթին կարծիք հայտնեց, որ այս գործը խնամքով ուսումնասիրված է, խելացիորեն պլանավորված ու կատարված»³:

¹ Правда, № 140, 23. 6. 25.

² «Խորհրդային Հայաստան», 24. 6. 25:

³ Fr. Nansen, Betrogenes Volk, S. 169—170.

Վերագտնալով քաղաք, հյուրընկալվում են ընդհանուր ճաշարանում, ուր տիրում էր մեծ աշխուժություն և նվազախումբն էլ կատարում էր հայկական, ռուսական, բրգական ու թուրքական եղանակները Անդրագոտնալով թուրքական երգերին, Ֆ. Նանսենը գրել է. «Ես զարմացած էի, թե ինչպես այստեղ նվազում են իրենց կատաղի թշնամու երաժշտությունը, բայց անբունազբուսիկ ծափահարությունները ցույց էին տալիս, որ նրանք լսում էին սիրով: Ինձ հավատացնում էին, որ այլևս՝ հենց սովետական սիստեմի հաստատումից հետո, ասելություն չկա ժողովուրդների միջև. «Այժմ մենք բոլորս եղբայրներ ենք»,— ասում էին մարդիկ ինձ»¹: Հյուրերի համար զարմանալի էր նաև այն, որ ճաշկերույթը կազմակերպված էր դեմոկրատաբար, այսինքն՝ դրան ղեկավարների հետ միասին մասնակցում էին նաև շարքային մարդիկ ու ազատորեն արտահայտում իրենց կարծիքը: Ծաշկերույթն ուղեկցվում էր երաժշտությամբ և հատկապես թովիչ էին զուսան Շերամի երգերը, որոնց տպավորության տակ Նանսենը բացականչեց. «Օ՛, հիասքանչ է»:

Շիրակի ջրանցքի բացման առթիվ հունիսի 21-ի երեկոյան Լենինականում կազմակերպվեց հանդիսավոր նիստ, որն անցավ քաղաքական մեծ վերելքի պայմաններում: Հուլիս էր Լենինականի գավառի մի նախագահ Արսեն Եսայանի* ելույթը, որը թեև չհասկացավ Նանսենը, բայց զգաց, որ ճառախոսը լավ հոնատոր է, և նրա մոտ հայոց լեզուն հնչում էր որպես յուրահատուկ երաժշտություն: Եվ ահա, նիստի նախագահ Ս. Համբարձումյանը ձայնը տալիս է Ֆ. Նանսենին, որը գոհունակությամբ է ելույթ ունենում (զերմաներեն, որը թարգմանվում էր) և մասնավորապես ասում. «Հայ ժողովրդի տարեգրության մեջ սկսվում է նոր դարաշրջան... Այս գործը [ջրանցք], որից ստացանք հրաշալի

¹ Fr. Nansen, Betrogenes Volk, S. 171.

* Արսեն Սեդրակի Եսայան (1898—1938)— ծնվել է Տրպիզոնում, ավարտել Քիֆլիսի ներսիսյան դպրոցը, 1917 թվականի մարտին մտել կոմունիստական կուսակցության շարքերը, ակտիվորեն մասնակցել Անդրկովկասի հեղափոխական շարժումներին և սովետական իշխանության հաստատմանը Հյուսիսային Կովկասում, Ղրիմում, Հայաստանում ու Վրաստանում, 1922—27 թթ. եղել Ալեքսանդրի գավառի մի նախագահ և խոշոր գեր կատարել Շիրակային կառուցման գործում: Ավելի ուշ զորձել է ՀՍՍՀ Ժողովուրդի նախագահի տեղակալ, ԱՍՖՍՀ-ի լիազոր-ներկայացուցիչ մոսկովյում, 204-ի նախագահ և այլն:

տպավորություն, կատարված է ուժեղ ու խելոք ժողովրդի կողմից, որը համեստ միջոցներով, բայց նպատակասլաց կերպով, երկար տարիների տանջանքներից, զրկանքներից, պատերազմի արհավիրքներից ու ավերածություններից հետո, պատրաստ է կառուցելու իր երջանիկ ապագան: Մեր տեսածներից համոզվել ենք, որ եթե վերջապես այդ ընդունակ ու նպատակասլաց ժողովուրդը խաղաղ կյանքով ապրի, ապա արագությամբ կօգտագործի իր երկրի շատ հարուստ հնարավորությունները և կստեղծի հայրենական նոր օջախներ հազարավոր ու հազարավոր բնատավոր ընտանիքների համար: Ամբողջ քաղաքակիրթ աշխարհի համակրանքն է վայելում Հայաստանի ձեռներեցությունը՝ ստեղծելու մի աղգալին օջախ-ապրելավայր, եթե ոչ բոլոր հայերի համար, ապա այնպիսի օջախ, որին հեռվում գտնվող ամեն մի հայ համարի իր իսկական հայրենիքը»¹:

Դրանից հետո նախագահը մի նոր հարգալից մեծարման խոսք է ասում Նանսենի հասցեին: Այդ երեկո Նանսենը մոտիկից ծանոթանում է ջրանցքի գլխավոր ինժեներ Հովսեփ Տեր-Աստվածատրյանի հետ և նրան համարում «շատ համակրելի ու խելացի մարդ», որի մասնագիտական ղեկավարությամբ գլուխ է բերվել մի այդպիսի բարդ գործ: Նրա տեղակալն էր ռուս ինժեներ Ա. Յակիմովը, որի հետ հանդիպելը կատարյալ անակնկալ էր Նանսենի համար, որովհետև առաջին անգամ նրան տեսել էր 1913 թվականին՝ սիրիական ճանապարհորդության ժամանակ, երբ նա աշխատում էր երկաթուղագծի կառուցման վրա, իսկ այժմ ռուս մասնագետն իր ավանդն էր մոծում Շիրակի ջրանցքի շինարարության գործում: Ակնհերև էր սովետական ժողովուրդների բարեկամության մի նոր դրսևորումը:

Ամբողջությամբ վերցրած Շիրակի ջրանցքը մեծ տպավորություն է թողնում Նանսենի վրա և ավելի հաստատուն դարձնում նրա հավատը Հայաստանում իր միսիայի հետ կապված՝ հողերի ոռոգման լիակատար հնարավորության նկատմամբ. «Քանի որ մենք Հայաստան էինք եկել ուսումնասիրելու արհեստական ոռոգման ու պարարտացման հնարավորությունները, մեզ հանդիպում էր արհեստաբանները, որոնք արհեստաբան էր ականատես լինել նոր ջրանցքի բացմանը և տեսնել այդ տիպի մի մեծ գործի կատարումը»²:

¹ Fr. Nansen, Betrogenes Volk, S. 172—173.

² Նույն տեղը, էջ 173—174:

Շիրակի ջրանցքի բացման հանդիսությունը մասնակցում էր նաև «Նիբր իսթ Ռիլիֆի» ներկայացուցիչ Յարոնյ (եկե էր Ռիլիֆիսից), իսկ հունիսի 22—23-ին Ֆ. Նանսենը այդ հաստատության կենսականի մասնաճյուղի տնօրին Բիլի հրավերով շրջագայում է ամերիկյան որբանոցներն ու արհեստանոցները, ուր ապրում, սովորում ու աշխատում էին 11000 անշտահասներ: Վերադառնալով Եվրոպա, նա գրեց, որ ինքը «Հայաստանում տեսավ աշխարհում որբ երեխաների ամենամեծ հավաքը» և «իր այցի երջանիկ պահերից մեկն էր նստել փրկված հայ երեխաների հետ ու միասին ճաշակել որբի սնունդը՝ ապուրն ու հացը»: Ահա ինչպես է սովետական կառավարությունն օգտագործում բոլոր հնարավորությունները երեխաներին ոտքի կանգնեցնելու համար, և այդ առթիվ Նանսենն իր գոհունակությունն է հայտնում: Նա շատ է հուզվում նաև երեխաների ջերմ վերաբերմունքից, և մասնավորապես կույրերի բաժնում (արհեստանոցում) «որպես հիշատակ տվին երկու խոզանակ՝ մեկը հագուստի, իսկ մյուսը՝ դլխի մազերի, որոնք ես այն ժամանակից մինչև հիմա մշտապես օգտագործում եմ»¹, — գրել է Նանսենը 1927 թվականին:

Ֆ. Նանսենը այցելում է կենսականի նորաստեղծ տեքստիլ ֆաբրիկան, ուր կազմակերպվում է ջերմ ընդունելություն և ինքն էլ հանդես է գալիս շնորհակալական խոսքով ու բարի մաղթանքներով: Նա շրջագայում է արտադրամասերը և գոհունակությամբ արձանագրում բանվոր-բանվորուհիների ոգեշունչ աշխատանքը: Նանսենին տրվում են ֆաբրիկայի արտադրանքի նմուշներ, որոնք նա տանում է տուն՝ նորվեգիա Հյուսիսային շրջանում էլ զգացին նոր կյանքի շունչը, տեսան ազատ ու խաղաղ հայ ժողովրդի ստեղծագործական աշխատանքի պտուղները:

Հունիսի 24-ի առավոտյան նրանք՝ իրենց «մշտական բարեկամ» Նարիման Տեր-Ղազարյանի ուղեկցությամբ, կենսականից մեկնում են Երևան՝ Հայաստանի հյուսիսային շրջաններով: Եղան Լոռիում, ջերմ հանդիպում ունեցան Ստեփանավանի երկրագործական դպրոցի սաների հետ, մտան Ղարաբաղիսա (Կիրովական) և ապա մեկնեցին գեղատեսիլ Դիլիջան, ուր այցելեցին հանրապետական առողջարանը և տեսան հիվանդների նկատմամբ ցուցաբերվող պետական հոգատարությունը:

Դիլիջանում գիշերելուց հետո հյուրերը բռնում են Սևանի ուղին՝ անցնելով հայկական և ռուսական գյուղերի միջով, երբեմն էլ բարձրագիր վայրերում տեսնելով աղբրեջանական անասնապահների վրաններ: Շուտով երևում է Սևանա լիճը, որի յուրահատուկ գեղեցկությամբ հմայվում է Նանսենը և խորհում նրան երիզող անտառազուրկ բլուրների մասին: Հյուրերը մեծ բավականությամբ են ճաշակում «արքայական» թարմ իշխանը, կամ, ինչպես Նանսենն է նկատել, հայերի «խնջուլքի սեղանի զարդը»: Այնուհետև նրանք շարժվում են դեպի Երևան, ուր հաջորդ օրը ականատես են լինում անակնկալի՝ ջրհեղեղի, և Նանսենը, հյուրանոցում դիմելով իր աշխատակիցներին, կատակում է. «Արդյոք տարօրինակ չէ՞, որ մենք այստեղ նստած մտածում են այն մասին, թե ինչպես ջուր բերենք, իսկ այդ ժամանակ նա ինքն է առատությամբ գալիս մեր դուռը»¹:



1925 թվականի հունիսի 26-ին տեղի է ունենում Հայկ. ՍՍՀ գաղթականական հանձնաժողովի և նանսենյան հանձնաժողովի նոր հանդիպում՝ Աս. Մուսվյանի նախագահությամբ: Ֆ. Նանսենը հաղորդում է, որ Սարդարապատի ոռոգման ծրագիրը կարևոր է և իրագործելի, բայց այն կապված է մեծ ծախսերի հետ, որպիսիք իրենք չեն կարող հայթայթել, ուստի, իր հանձնաժողովը խնդրում է կազմել ուրիշ հողերի յուրացման ծրագիր, որն ավելի էժան նստի: Այդպիսի հողեր կային Երևանի շուրջը և կարելի էր դրանք ոռոգել Զանգվի ու այլ ջրերով:

Սովետական Հայաստանի կառավարությունը նախապատվությունը տալիս էր Սարդարապատի դաշտի ոռոգմանը, բայց բոլորովին էլ շտապեց նոր հարցադրմանը և հունիսի 27-ին Նանսենի հանձնաժողովը հայ մասնագետների ուղեկցությամբ մեկնեց շրջագայության: Նրանք եղան Քանաբեռում, Գառնիում, Գվինում, Զանգվի ափերին, Ղուբրում, Սևջրի (Կարա-սու) շրջանում և այլուր: Ի դեպ, հյուրերը նկատեցին, թե ինչպես սովետական իշխանությունը վիթխարի աշխատանք է տանում ճահիճները շորացնելու և տենդախտի (մալարիայի) դեմ պայքարելու համար, Երևանում ստեղծվել էր տրոպիկական հիվան-

¹ Fr. Nansen, Betrogenes Volk, S. 177.

¹ Fr. Nansen, Betrogenes Volk, S. 199.

գությունների ինստիտուտ, բացվել էին մի շարք հիվանդանոցներ ու դեղատներ և այլն:

Նույն օրը վերագտնալով Երևան, Երևանի քաղաքի թանգարանում հյուրերը բազմաթիվ մասնակիցների հետ միասին լսեցին պրոֆ. Լ. Բեդեկյանի դասախոսությունը՝ նվիրված Նորվեգիային. «Համակրելի հոետորը,— գրել է Ֆ. Նանսենը,— ավելց էրևիր ու ժողովրդի վառ նկարագրությունը: Դասչիճը լեփլեցուն էր և լուսապատկերներով զեկուցումը ընդունվեց մեծ խանդավառությամբ»¹:

Հունիսի 28-ին հյուրերը այցելեցին էջմիածին, ժանոթացան նրա ճարտարապետական հուշարձաններին և ընդունվեցին կաթողիկոսի կողմից: Նրանք հատկապես մեծ տպավորություն ստացան Մատենադարանի ձեռագրերից՝ իրենց գեղեցիկ մանրանկարներով, և թանգարանի հավաքածուներից: Այդ առթիվ Նանսենը ասել է, որ «ինքը և իր հանձնաժողովի անդամներն իրենց շատ բախտավոր են համարում՝ լինելով հայերի կուլտուրական հին կենտրոնում, հայտնելով միաժամանակ, որ ինքը և իր հանձնաժողովի անդամները անելու են այն բոլորը, ինչ հնարավոր է, որպեսզի Հայաստանի կուլտուրան ծաղկի ու բարգավաճի»²: Նանսենին, ի հիշատակ նրա այցելության, տրվում են պատկերազարդ գրքույկներ, հին դրամներ և այլ իրեր: Ինքը և նրա հանձնաժողովի անդամները ստորագրում են Մատենադարանի այցելուների մատյանում: Հետագայում՝ 1947 թվականին, Մատենադարան է այցելում (բայց արդեն Երևանում և շատ հարստացած արխիվային ֆոնդերով) նորվեգա-սովետական բարեկամության ընկերության պատվիրակությունը, որը, ասես շարունակելով Նանսենյան ավանդույթն ու էստաֆետը, թողնում է հետևյալ գրառումը. «Նորվեգական կուլտուրական պատվիրակությունը, հավաքված կուլտուրայի օրրանի մոտ, իր անսահման հիացմունքն է արտահայտում այն ամենի համար, ինչ որ տեսավ այստեղ»:

Ֆ. Նանսենն այն միտքն է հայտնել, որ դարերի դաժան փորձությունների ժամանակ հայ եկեղեցին դրական դեր է կատարել ազգահավաքման ու ազգապահպանության գործում: Դա արտահայտվել է նաև հայ մշակույթի, այդ թվում ճարտարապե-

տություն զարգացման ասպարեզում: Նա առանձնապես հիացած էր մայր տաճարի ու Հռիփսիմեի եկեղեցու կառուցվածքով, ներքանց՝ ըստանկյան վրա բարձրացող գմբեթներով. «Պետք է հիշել,— գրել է Ֆ. Նանսենը,— որ Հայաստանն առաջին երկիրն էր, ուր բրիտանոսությունն ընդունվեց որպես պետական կրոն, այդպիսով այն ժամանակ չկար բրիտանական եկեղեցաշինության ձևերի փոխառման հնարավորություն, և հայերն ու վրացիները մաքառելով աստիճանաբար ստեղծեցին իրենց սեփական ոճը»³: Այնուհետև Նանսենը լինում է տրոպիկական կայանում, որն ստեղծվել էր իր ուղարկած «միջոցներով. կայանի զեղատունը կոչվում էր նրա անունով»²:

Հյուրերը՝ լի վառ տպավորություններով, վերադառնում են Երևան և շարունակում իրենց գործունեությունը: Հունիսի 29-ին Նանսենի հանձնաժողովի անդամները հանդիպում են հողժողով Ար. Երզնկյանի ու այլ գործիչների հետ և ներկայացնում իրենց առաջարկները՝ կազմելու Ղոբրի, Սևջրի ու Զանգիբասարի հողերի ոռոգման ծրագիր, որը կիրականացվի հիմնականում փոխառության միջոցով:

Հունիսի 30-ին հյուրերը այցելում են Երևանի հիդրոէլեկտրակայանը, որը եղակի կառույց էր և թողնում է մեծ տպավորություն: Ֆ. Նանսենը նկատում է, որ Զանգվի խոր կիրճում կարծես թե հանդիպում են հայ ժողովրդի անցյալն ու ապագան, նեղ արահետներն ու տեխնիկական խոշոր օբյեկտը, որի լուստ ճառագայթները հասնում են հեռուները... Վերադարձին նրանք լինում են «Արարատ» գինու գործարանում և գոհունակությամբ համտես անում հայոց խմիչքները. «Բոլորն էլ լավն էին... կարմիր գինին... խերեսը... մադերան... պորտվինյը... Վերջում տվին մուսկատ. ես շէի խմել այդպիսի սքանչելի գինի»³,— գրել է Ֆ. Նանսենը: Նույն օրը Երևանի հյուրերի պատվին կառավարական ճաշկերույթ կազմակերպվեց Զանգվի ափին, որն անցավ բարեկամական ջերմ մթնոլորտում:

1925 թվականի հուլիսի 1-ին տեղի է ունենում Հայկ. ՍՍՀ Ժողովախորհրդի կից գաղթականական և նանսենյան հանձնաժողովների 3-րդ միացյալ նիստը, որը զեկավարում է Ժողով-

¹ Fr. Nansen, Betrogenes Volk, S. 220—221.

² Правда, 1. 7. 25.

³ Fr. Nansen, Betrogenes Volk, S. 229.

¹ Fr. Nansen, Betrogenes Volk, S. 207.

² «Նորհրդային Հայաստան», 22. 6. 25.

խորհի նախագահ Ս. Համբարձումյանը: Մասնակցում էր նաև Աս. Մոսվյանը, որի այն հարցին, թե Ֆ. Նանսենի գլխավորած հանձնաժողովը վերջնականապես ո՞ր ծրագրի վրա է կանգ առնում, նա պատասխանեց, որ իրենք նպատակահարմար են գտնում սկսել Աբուհայաթի (Ղոնրի), Սևջրի և Զանգիբասարի հողերի յուրացումը՝ ընդամենը 33000 դեսյատին, որտեղ կարելի է տեղափոխել 25—30 հազար գաղթականներ. «Թվում է ինձ, որ դրանով մենք լուծած կլինենք արտասահմանում գտնվող հայ գաղթականների ամենասուր կարիքները: Այս ծրագիրը իրականացնելուց հետո հավանական է մենք կանցնենք ավելի մեծ ու թանկարժեք ծրագրերի»¹: Նանսենը գտնում է, որ պետք է առաջին հերթին բերել այն 15000 գաղթականներին (10 հազարը՝ Հունաստանից և 5 հազարը՝ Կ. Պոլսից), որոնք գտնվում են առավել վատ պայմաններում:

Ետո կարևոր էր միջոցների հայթայթման հարցը, որովհետև պահանջվում էր բավականաչափ գումար՝ 9 միլիոն ուրվի: Նանսենը նշում է, որ այն ձևով բերելու համար կա 3 ուղի.

1) Հանդանակություն՝ բարեգործական ընկերությունների միջոցով, որի արդյունքը չի կարող մեծ լինել և հավաքված գումարը հնարավոր կլինի գործադրել գաղթականության տեղավորման հետ կապված աշխատանքների վրա»:

2) Վարկ կամ նպաստ՝ եվրոպական պետություններից, որը «նմանապես պետք է համարել դժվար իրագործելի» և «նս ու հանձնաժողովի մյուս անդամները մեծ հույս չունենք դրա վրա»: Նանսենը դա բացատրում է այդ պետությունների «ներկա տնտեսական անձկությամբ», գործազրկությամբ և այլն, բայց, իհարկե, հիմնականը դրանց շփոթությունն էր, իրենց համար անշահութաբերությունը:

3) Փոխառություն՝ եվրոպական բանկերից, որը Ֆ. Նանսենը համարում է հնարավոր, հատկապես ելնելով հունական գաղթականներին օգնելու փորձից, մի պահ «մոռանալով», որ խոսքը մի դեպքում վերաբերում էր բուրժուական Հունաստանին, իսկ մյուս դեպքում՝ Սովետական Հայաստանին (նկատենք, որ դա որոշող հաղամանք էր և վճռական նշանակություն ունեցավ դեպքերի հետագա ընթացքի վրա): Համենայն դեպս, Նանսենը գտնում էր, որ նախ՝ հույս կա հայ գաղթականների համար օգ-

¹ Հայկ. ՍՍՀ 22ՄԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 335, թ. 285:

տագործել եվրոպական բանկերում պահվող այն գումարը, որը թուրքական կառավարությունը գոփել էր հայերից առաջին աշխարհամարտի ժամանակ և 1916 թվականին ավանդ դրել Բեռլինի բանկում, իսկ պատերազմից հետո գրավել էին դաշնակիցները (Անգլիան): Նկատենք, որ թուրքական կառավարությունը, հայերին կոտորելուց ու արտաքսելուց հետո, ցանկանում էր ետ ստանալ այդ գումարը՝ իր նպատակների համար, իսկ դաշնակիցներն էլ չէին ուզում ոչ ոքի տալ, քանի որ այն համարում էին ավար և ոչ մի տոկոս չէին վճարում: Երկրորդ՝ Նանսենը նշում է, որ փոխառությունը պետք է վերցվի եվրոպական (գլխավորապես անգլիական) բանկերից, համեմատաբար երկար ժամկետով (15—20 տարով), ոչ պակաս, քան 10 տոկոսով (դրամատերերն ավելի քիչ չէին համաձայնվի), հրաշխավորված Սովետական Հայաստանի կառավարության կամ, եթե պետք է «նույնիսկ ՍՍՀՄ կառավարության կողմից», ընդ որում հարկ կլինի հսկողություն սահմանել փոխառության իրացման վրա. «Ես ոչ մի բան չեմ կասկածում, — ասել է Ֆ. Նանսենը, — որ Հայաստանի կառավարությունը բաց թողնված գումարները ուրիշ նպատակների չի գործադրի, բայց քանի որ մենք գործ ունենք դրամատերերի հետ, պետք է հաշվի առնենք նաև նրանց հոգեբանությունը»¹: Այստեղ նա միաժամանակ նշում է, որ դրամատերերը կցանկանան Հայաստանում ունենալ 3 հոգուց կազմված մի մարմին, բայց ինքը կարծում է, որ «բավական է ունենալ վերահսկողության համար միայն մեկ մարդ»:

Այնուհետև Ֆ. Նանսենը գտնում է, որ գաղթականների տեղափոխությունը հեշտացնելու համար չպետք է նրանցից մաքս վերցնել պետական սահմաններն անցնելիս, ընդ որում մինչև սովետական սահմանագիծը նրանց տեղափոխության ծախսերը կհոգան բարեգործական հիմնարկները, իսկ սովետական տերիտորիայում կլինի ձրի, գաղթականները հողը կստանան ձրի, 3 տարի ազատ կլինեն հարկերից, 1—2 տարի՝ զինվորական ծառայությունից:

Այս բոլոր հարցերը Նանսենն առաջ է քաշում քննարկման կարգով և ըստ էության արժանանում Հայաստանի կառավարության հավանությանը: Նիստի ժամանակ Ս. Համբարձումյանն ասում է, որ «Հայաստանի կառավարությունը իր անվիճելի իրա-

¹ Հայկ. ՍՍՀ 22ՄԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 335, թ. 30:

վունքն է համարում օգտվելու այն գումարներից, որոնք թողնված են Անատոլիայից գաղթած հայերի կողմից և պետք է ծառայեն գաղթականների տեղավորման նպատակների համար»¹։ Նա հույս է հայտնում, որ «գոկտ. նանսենի հասարակական կշիռը կարող է մեծ դեր խաղալ այդ հարցի գրական լուծման խընդրում»։ Ինչ վերաբերում է բուն փոխառությունը, ապա դա սկզբբունքորեն ընդունելի է համարվում, միայն պետք է համաձայնեցվի ՍՍՀՄ կառավարության հետ։ Ս. Համբարձումյանը գրտնում է, որ «քաղաքական կոնտրոլի մասին խոսելն անգամ մենք անթույլատրելի ենք համարում։ Մայրահեղ դեպքում հնարավոր ենք համարում թույլատրել տնտեսական և տեխնիկական կոնտրոլ»²։ Ստացվող փոխառությունը բացառապես կօգտագործվի «իր ուղղակի նպատակների համար», և դրա «ամենալավ ապացույցը մեր Շիրակի և մյուս ջրանցքներն են, որոնք կառուցելու համար մենք, եթե կարելի է այսպես ասել, միջոցներ գտել ենք՝ մեր մասից կտրելով»³։ Սովետական երկրում ընդհանրապես հողը ձրի է տրվում աշխատավորին. դա կկատարվի նաև գաղթականների վերաբերյալ՝ պահպանելով նաև նախատեսվող մյուս արտոնությունները։

Նիստն ավարտվում է փոխադարձ բմբնոզություն միջոցառում, և Ս. Համբարձումյանը նշում է. «Վերջացնելով մեր խոսակցությունը ես անհրաժեշտ եմ համարում ասել, որ, ինչպես դուք նկատած կլինեք, գաղթականության ընդունելության գործում մեր կողմից ոչ մի խոչընդոտ չկա և հարցը մի քիչ ուշանում է բացառապես միջոցների սղության պատճառով։

Իոկտ. նանսեն — Մենք տեսնում ենք, որ դուք գաղթական եղբայրների համար անում եք ավելին, քան կարող եք։ Ցանկանում ենք, որպեսզի ձեր գաղթական եղբայրները շուտով միանան ձեզ։ Ենթահակությունը Հայաստանի կառավարությանը։

Ինկ. Համբարձումյան — Ընդունեցեք շնորհակալություն նաև հայ ժողովրդի ու այն գաղթականների կողմից, որոնց համար դուք այդքան ջանք եք թափում։ Ես հավատացած եմ, որ գոկտ. նանսենը հյուսիսային ժողովուրդներին հատուկ համառությամբ

կհաղթահարի այն բոլոր դժվարությունները, որ այդ գործում կառաջանան»¹։

Ըստ էության գրանուվ ավարտվում են երկու կողմերի կոնսուլտացիոն-բանակցությունները բոլոր սկզբունքային հարցերի շուրջը։ Ծիրտ է, հուլիսի 2-ին տեղի է ունենում գաղթականական ու նանսենյան հանձնաժողովների 4-րդ (վերջին) նիստը՝ Աս. Մոսկվայի նախագահությամբ, բայց այն փաստորեն կրում էր տեխնիկական-ինֆորմացիոն բնույթ։ Մինչ այդ նանսենի հանձնաժողովը ծանոթացել էր հայ մասնագետների կազմած մի շարք նախագծերին (Սարդարապատի ու այլ հողերի ոռոգման վերաբերյալ) և այժմ հավանություն է տալիս դրանց։ Ֆ. Նանսենը մասնավորապես ասաց, որ «իր կարծիքով մեր բոլոր նախագծերը պետք է իրագործել, որովհետև այդպիսով մեր հողային ֆոնդը կավելացվի. եթե ինձ ուղարկեն Հայաստան այդ գործի համար, ես կասեի, որ բոլոր ծրագրերը պետք է իրագործել», սկսելով հեշտից ու էժանագինից (Ղուեր, Սևջուր, Զանգիբասար) և ապա անցնելով ավելի մեծերին (Սրադարապատին)²։ Այնուհետև պայմանավորվում են, որ երկու կողմերը համաձայնեցված կերպով կկազմեն ավելի մանրամասն նախագծեր ու նախահաշիվներ և միշտ միմյանց իրազեկ կպահան իրենց մտադրությունների ու անելիքների մասին, կփոխանակեն զեկուցագրեր ու այլ գրագրություններ։

Կատարված աշխատանքի արդյունքների հիման վրա Ֆ. Նանսենը իր գլխավորած հանձնաժողովի անունից 1925 թվականի հուլիսի 1-ին ներկայացնում է պլան-հուշագիր՝ հայ գաղթականության հարցի վերաբերյալ, որը նպատակահարմար ենք գրտնում բերել ամբողջովին։

«Հետևյալում ես աշխատել եմ ձեռնարկել մեր այսօրվա խոսակցության»³ զառնանքան կետերը, որոնց վերաբերմամբ մեր կարծիքով գոյություն ունի կատարյալ համաձայնություն Հայաստանի կառավարության և մեր հանձնաժողովի միջև։

Հանձնաժողովը քննել է Հայաստանի կառավարության կող-

¹ Հայկ. ՍՍՀ ԸՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 335, թ. 35։

² Նույն տեղը, թ. 36։

³ Խոսքը Հայկ. ՍՍՀ ժողովուրդի նախագահ Ս. Համբարձումյանի նախագահությամբ 1925 թվականի հուլիսի 1-ին տեղի ունեցած միացյալ նիստի մասին է, որին մասնակցում էին գաղթականական և նանսենյան հանձնաժողովները։

¹ Հայկ. ՍՍՀ ԸՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 335, թ. 32։

² Նույն տեղը, թ. 33։

³ Նույն տեղը, թ. 34։

մից առաջագրված նոր ուսողումների և չորացումների դանազան նախագծերը Արարատյան հարթավայրում և հանգել է այն եզրակացության, որ այդ բոլոր նախագծերն իրագործելի են և ընդհանուր առմամբ հնարավոր:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ հայ գաղթականության խնդրի ամբողջական լուծման համար անհրաժեշտ կլինեն իրագործել այդ բոլոր նախագծերը և բացի այդ, զարգացնել Հայաստանի արդյունաբերական հնարավորությունները: Մեր հայեցակետն է, որ անհրաժեշտ խոշոր գումարները գտնելու ամենահարմար ուղին կլինի փոխառության միջոցով:

Սակայն ի նկատի առնելով բոլոր նախագծերի միաժամանակյա ֆինանսավորման հնարավոր գծավորությունները, մեր կարծիքով խելացի կլինեն սահմանափակել մեր աշխատանքները, առաջին հերթին գտնելու բավականաչափ դրամագույն ներքոհիշյալ հողերի չորացման և ոռոգման նախագծերի իրագործման համար:

Մարգարապատի դաշտի նախագծի վերաբերյալ մեր հանձնաժողովն այն կարծիքին է, որ նրա իրագործման համար պահանջվող մեծ ծախսերի և ժամանակի պատճառով այդ նախագիծը այնքան հարմար չէ, որքան մյուսները, մտցնելու մեր ծրագրի մեջ առաջին հերթին, եթե միայն դրամ ձեռք բերելը ավելի հեշտ լինի, քան կարելի է սպասել:

Հողամասերը, որոնցով մենք մտադիր ենք զբաղվել, առաջին հերթին հետևյալներն են.

Արևմտյան և արևելյան ղոներ	19.000 դև.
Մնչրի ճահիճներ	10.000 »
Ջանգիրասար	4.000 »
Ընդամենը՝	33.000 դև.

Այդ հողամասերի չորացման և ոռոգման ծախսերը նախահաշվված են մոտավորապես.

Ղոներ	2.000.000 ուրլի
Մնչրի ճահիճներ	1.500.000 »
Ջանգիրասար	600.000 »
Այս գումարին պետք է ավելացնել ընտանեկան ծախսերի համար	900.000 »
Ընդամենը՝	5.000.000 ուրլի

Հիշյալ հողամասերի վրա կարող են տեղավորվել 20—25000 հոգի, որոնք գերադասելիորեն պիտի լինեն նոր գաղթականներ, քվեով ոչ պակաս 15000 հոգի:

Գաղթականներին հողի վրա տեղավորելու համար տներ, գործիքներ, անասուններ, սերմացու և այլն նրանց տրամադրելու համար պիտի ունենալ չուրաքանչյուր անձի համար մոտավորապես 200 ուրլի կամ 15000 հոգու համար 3000000 ուրլի, որով ամբողջական գումարը կլինի 8 միլիոն ուրլի:

Կարելի է հուսալ, որ հիշյալ երեք միլիոն ուրլու շոշափելի մասը կարելի կլինի գտնել նվիրատվություններով, որով փոխառության գումարը համապատասխան կերպով կպակասի:

Վերև հիշված 8 միլիոն ուրլու մեջ չի մտնում տեղափոխության ծախսը մինչև խորհրդային սահմանը: Այդ ծախսերը ևս հույս ունեմ ծածկելու հատուկ աղբյուրներից: շահագրգռված կառավարությունների օգնությամբ:

Փոխառությունը պիտի ապահովված լինի Հայաստանի կառավարության և դուցե խորհրդային Միության կառավարության կողմից:

Տոկոսը պիտի լինի հնարավորին շափ ցածր: Ամորտիզացիայի ժամկետը ոչ պակաս քան 10 տարի կամ գերադասելիորեն 15—20 տարի:

Փոխառությունը պիտի գործածվի բացառապես հիշյալ նպատակներով և, եթե անհրաժեշտ համարվի, կարելի է, որ խնդրվի Հայաստանի կառավարությանը՝ համաձայնվելու մեկ կամ ավելի ներկայացուցիչների նշանակմանը, որոնք պիտի համոզվեն, որ դրամը ծախսվում է համապատասխան կերպով:

Բացի այդ, գաղթականներին պիտի տրվեն հետևյալ արտոնությունները.

1. Որքան հնարավոր է ոռոգման և չորացման աշխատանքների համար պահանջվող ոչ որակյալ բանվորները պիտի լինեն գաղթականներից:

2. Գաղթականների դուրքը պիտի ազատ լինի մաքսից:

3. Գաղթականները պիտի ձրի տեղափոխվեն խորհրդային սահմանից:

4. Հողերի հատկացումը պիտի լինի ձրի, երկրի օրենքների հիման վրա, ինչպես մեզ տեղեկացրել են:

5. Ազատում հարկերից հողի վրա հաստատվելուց հետո առաջին երեք տարիների ընթացքում, բացառությամբ փոխա-

ուովյան տոկոսը և ամորտիզացիան ծածկելու համար նշանակված տուրքերը:

6. Աշատում մի կամ երկու տարվա ընթացքում այնպիսի ղինվորական ծառայությունից, որ կխանգարի նրանց՝ իրենց հողերը մշակելու¹:

Ինչպես արդեն նշել ենք, այդ առաջարկներն ընդունվեցին, և ինքը՝ Ֆ. Նանսենը, գոհունակությամբ հավաստել է, որ հայկական կառավարությունը հավանություն է տվել դրանց, մնում էր անհրաժեշտ միջոցներ հայթայթել ու իրականացնել նախատեսվող պլանները: Նկատենք միայն, որ եթե Ֆ. Նանսենի՝ 1925 թվականի հուլիսի 1-ի հուշագիր-պլանում ընդհանուր գումարը հասնում էր 8 միլիոն ռուբլու (5 միլիոնը ոռոգման և 3 միլիոնը գաղթականների տեղավորման համար), ապա մի քիչ ուշ՝ նույն թվականի հուլիսի 28-ին, նրա՝ Ազգերի լիգային ներկայացրած վեկուցագրում հիշատակվում է 9 միլիոն ռուբլի (6 միլիոնը ոռոգման և 3 միլիոնը գաղթականների տեղավորման համար), որը հաստատվում է նաև 1927 թվականին հրատարակված նրա գրքի տվյալներով²: Անշուշտ, դա արդյունք էր կատարված նոր ճշգրիտ հաշվարկումների: Ղուերի յուրացման համար սկզբում նախատեսված էր 2 միլիոն ռուբլի, իսկ հետո դարձվեց 3 միլիոն ռուբլի: Ահա այդ 9 միլիոն ռուբլին է (1000000 ֆունտ ստեռլինգ), որ պետք է ձեռք բերվեր փոխառության կարգով:

Իր աշխատանքների ավարտին Ֆ. Նանսենն ընտրվում է Հայաստանի օգնության կոմիտեի «մշտական պատվավոր անդամ», որին ի պատասխան նա «խոստանում է ամեն կերպ աջակցել ՀՕԿ-ին»³:

Ֆ. Նանսենը Հայաստանում ձեռք է բերում նաև անձնական բարեկամներ: Նա կարճ ժամանակամիջոցում ծանոթանում է բազմաթիվ մարդկանց հետ և ըստ էության մտերմանում շատերին: Դրանց մեջ կային պետական գործիչներ, գիտնականներ, արվեստագետներ և այլն: Սրտառուչ էին, օրինակ, Ֆ. Նանսենի ու Ար. Երզնկյանի հարաբերությունները: Մեծ նորվեգացի հյուրընկալվեց Երզնկյանների ընտանիքում, որը բացառիկ ոգևորություն պատճառեց հատկապես երեխաներին: Ի դեպ՝ այդ

մասին կեն Արամայիսի Երզնկյանը պատմում է. «Մի օր հայրս տուն մտավ ու հայտարարեց, որ եթե աշքներս փակենք, հետո բացենք, ապա կտեսնենք «Ֆրամի» լեզենդար նավապետին: Հայրս սիրում էր կատակներ անել, անգամ երբ հոգնած էր: Սակայն նա ասաց, որ չի կատակում: Եվ քիչ հետո դուռն մեջ երևաց ճերմակին տվող, բայց ամբակազմ մի մարդ ու ներկայացավ մորս իբրև Ֆրիտյոֆ Նանսեն: Ես զեռ ուշքի չլեկած, Նանսենը, հայրս և էլի ուրիշներ սկսեցին զրույցել: «Ֆրամի» արկածները կարգացած լինելով, մտովի պատկերացրել էի թե՛ այդ նավը, թե՛ նրա տիրոջը: Եվ չէի կարողանում հաշտվել ու հավատալ, թե հենց ինքը՝ Նանսենն է նստած մեր տանը: Զարմանում էի, տեսնելով, թե նա ինչ սովորական մարդ է և նույնիսկ ահա թե խմում մեր ինքնաճեղից... Այսպես ծանոթացա էս պատանեկության հերոսի հետ: Ու այդ օրվանից իմ երեսկայությունը, «Ֆրամի» նշանավոր երթուղին լքելով, ճեմել սկսեց նանսենյան բնաշխարհում»⁴:

Ար. Երզնկյանի ուղեկցությամբ Ֆ. Նանսենն այցելում է Մարտիրոս Սարյանի արվեստանոցը, ուր նա հաճույքով է դիտում ականավոր նկարչի արևաշող գործերը: Ապա զրույց է բացվում հայ ժողովրդի ճակատագրի ու նրա տարազիր զավակների մասին, զավակներ, որոնք աստիճանաբար դալիս են մայր հայրենիք՝ Սովետական Հայաստան: Մ. Սարյանը իր անկեղծ շնորհակալությունն է հայտնում Նանսենին՝ նրա հայանպաստ գործունեության համար, այն բանի համար, որ նա համարձակորեն հանդես է դալիս «իր հողերից թշված բազմաշարքար հայ ժողովրդի պաշտպանությամբ»: Այդ հանդիպումը հուղիչ էր ու տպավորիչ, և Մ. Սարյանը դա հավերժացրեց Ֆ. Նանսենի երկու դիմանկարով, որոնք պահվում են նրա թանգարանում (Էրեվանում): Միաժամանակ նկարիչը հետագայում ամեն թե՛ղամ ակնածանքով էր հիշում աշխարհի մեծ բազաբացու: Նա, մասնավորապես անդրադառնալով Նանսենի ու Երզնկյանի մտերմությունը, գրել է. «Նրանք երկուսն էլ բարձրահասակ էին ու եռանդուն: Մեկը հյուսիսի տիպիկ ներկայացուցիչ, բաց գույնի, արգեն ալեհեր և վարմանալի բարի աչքերով: Մյուսը տիպիկ հա-

¹ Հայկ. ՍՍՀ ՀՀՕՏ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 335, թ. 6-7:

² Sk' n Fr. Nansen, Betrogenes Volk, S. 224:

³ Правда, 4.7.25; «Խորհրդային Հայաստան», 4. 7. 25:

⁴ Կեն Երզնկյան, Ճամփորդություն, որ սկսվել է պատանեկան օրերից... Տե՛ս «Սովետական արվեստ» № 8, 1962 թ., էջ 44: Կ. Երզնկյանի բազմաթիվ լինել Ֆրիտյոֆ Նանսենի հայրենիքում, կատարվում է 1962 թվականին:

բաժնի, խիստ թխահեր՝ մորուքով և արտահայտիչ աչքերով, որոնք բարուֆյուն էին ճառագում: Ինչ-որ ընդհանրություն կար նրանց միջև»¹:

□□□

Մտտենում է հրաժեշտի ժամանակը: Գեո Հուլիսի 1-ի երեկոյան քաղաքային թատրոնի շենքում կազմակերպվում է հանդիսավոր երեկույթ, որն սկսվում է համերգով: Սկզբում նվագում են Գրիգի, ապա Սպենդիարյանի թովիչ երաժշտությունը (կատարողների մեջ էր թավջութակահար էլիստ Այվազյանը), որն ընկալվում էր մեծ ոգևորությամբ. «Ինձ ասացին,— գրել է Ֆ. Նանսենը,— որ Գրիգը հատկապես մեծ հարգանք ունի Հայաստանում և որ նրա ու հայկական երաժշտության միջև կա որոշակի հարազատություն: Դա ինձ համար ևս հասկանալի դարձավ հայկական երաժշտական գործերը լսելուց հետո: Ապա տղամարդկանց խումբը կատարեց ժողովրդական պարեր, որոնց հաստատուն ուրիշը և վայելուչ ճկունությունը հիացմունք պատճառեցին մեզ: Կովկասյան կրակոտ պարերի մեջ դրսևորվում է այդ ժողովրդի կենսական ուժը»²:

Ճոխ համերգից հետո տրվեց ընթրիք, որին մասնակցում էին կառավարության անդամներ, գիտնականներ, արվեստագետներ և այլ աչքի ընկնող մարդիկ: Արտասանվեցին բարեկամական ճառեր և կատարվեցին բազմաթիվ ժողովրդական երգեր՝ նվագախմբի նվագակցությամբ: Անկեղծ ուրախություն էր թևածում դահլիճում. «Ինձ չէր թողնում այն միտքը,— վերհիշել է Նանսենը,— որ այս ժողովուրդը, նրա համարյա ամեն մի անդամը դեռ մի քանի տարի առաջ ինչպիսի արյունոտ սարսափներ է ապրել: Իմ մեջ դեռ երկար ժամանակ կմնա հայկական երգերի ձայնը: Ես մտածում եմ իմ բարեկամ Գուրգենյանի խոսքերի վրա: Երբ այն երեկո հնչեց այդ երգերից մեկը, նա ասաց. «Գուրգենյանը՞ էր, որ մի ժողովուրդ, որի հոգու մեջ հնչում են այսպիսի երգ ու երաժշտություն, կարող է երբևիցե մահանալ: Ես նրան համարում եմ արդարացի»³:

Հայկ. ՍՍՀ Ժողովուրդի նախագահի տեղակալ Ա. Մուսախանյանը մեծարման խոսք է ասում Ֆ. Նանսենի հասցեին և շեշտում, որ նրա գլխավորած հանձնաժողովի հետ միասին կատարվել է արդյունավետ աշխատանք, մնում է իրականացնել նախատեսված պլանը և եթե դա չկատարվի, ապա դրանում «մեղք չեն ունենա ո՛չ հայկական կառավարությունը և ո՛չ էլ ղոկտոր Նանսենը»:

Ճաշկերույթին ելույթ է ունենում Չ. Գուպուխը և նշում, որ հակառակ իրենց սպասածներին, Հայաստանը գտան ոչ թե ավերակների մեջ, այլ վերածնունդի պրոցեսում, ուր դրսևորվում է «հայ ժողովրդի հարուստ ստեղծագործական տաղանդը: Վերագառնալով Եվրոպա մենք կանենք ամեն հնարավորը հանձնաժողովի վրա դրված միսիայի կատարման համար»: Ապա հուլիչ և լավատեսական ճառ է արտասանում Նանսենը, շնորհակալություն հայտնում կառավարությանը, որն աշխատելու բոլոր պայմաններն ստեղծեց, ընդ որում «չի եղել և ոչ մի անխորժություն»: Նա ոգևորված էր հայ ժողովրդի նոր կյանքով և համոզված ավելի պայծառ գալիքով: Նանսենն առաջարկում է «Հայաստանի ապագայի կենացը» և հույս հայտնում, որ նորից «կվերադառնան այստեղ», իսկ արտասահմանում ամեն կերպ կաշխատի օգնել վերջ տալու «100000 հայ գաղթականների տառապանքներին»¹:

Ավարտելով նախատեսված աշխատանքը, Նանսենը պետք է մեկնեի Մոսկվա, իսկ հանձնաժողովի մնացած անդամները՝ Քաթում ու Կ. Պոլսի վրայով Եվրոպա²: Նախքան մեկնելը, Հայաստանի հեռագրական գործակալության աշխատակցի հետ ունեցած զրույցում Նանսենն ասաց. «Ես տեսա Խորհրդային Հայաստանի ստեղծագործական ուժը և կատարվող շինարարական խոշոր աշխատանքները: Հայաստանն ու հայ ժողովուրդը շատ են տուժել վերջին տասնյակ տարիների ընթացքում, սակայն ես միանգամայն համոզվեցի, որ Խորհրդային Հայաստանը, ապրելով խաղաղ պայմաններում, կարող է լիովին դարձանել իր վերքերը և վերականգնել իր տնտեսությունը»: Ապա անդադրադադարով իր միսիային, Նանսենը նշեց. «Խորհրդային Հայաստանի կառավարությունը ամեն կերպ ընդառաջ գնաց մեղ,

¹ М. Сарьян, Незабываемые встречи, см. газету «Коммунист» № 110, 13 мая 1969 года.

² Fr. Nansen, Betrogenes Volk, S. 230.

³ Նույն տեղը, էջ 231:

¹ «Заря Востока», 4. 7. 25.

² «Заря» Правда, 4. 7. 25.

տալով ամեն հնարավորություն ու աջակցություն հաջողությամբ կատարելու մեր ուսումնասիրությունները: Նույնպիսի բարյացակամ վերաբերմունք ցուցահանեց Խորհրդային Հայաստանի կառավարությունը գաղթականների տեղավորման խնդրի շուրջը...»¹ Ինչ վերաբերում է նախատեսված հողերի յուրացմանը և գաղթականների տեղավորմանը, այդ առթիվ նանսենն ասաց. «Եվրոպա վերադառնալիս ես անմիջապես աշխատելու եմ այդ հոգամասերի ոռոգման նյութական հնարավորություններ ստեղծել: Ես իմ հանձնաժողովի անդամների կողմից հայտնում եմ, որ մենք պիտի անենք, ինչ որ հնարավոր է, հասնելու համար մեր միսիայի բարեհաջող վախճանին. եթե որևէ դեպքում չկարողանանք իրականացնել այն նպատակը, որի համար եկել ենք, դրա մեղքը ո՛չ մեր հանձնաժողովին է լինելու, ոչ էլ Խորհրդային կառավարությանը»: Վերջում, նորից շնորհակալություն հայտնելով Սովետական Հայաստանի կառավարության ցույց տված ջերմ ընդունելության համար, նա ասաց. «Ես հուսով եմ, որ դարձյալ կլինեմ Հայաստանում»¹: Դա ման մահը խանգարեց դրան...

Վրա է հասնում հրաժեշտի պահը. 1925 թվականի հուլիսի 2-ի երեկոյան խիստ բազմամարդ էր Երևանի երկաթուղային կայարանը: Այստեղ էին Հայաստանի կառավարության մի շարք անդամներ, գիտական հասարակայնության ու աշխատավորության ներկայացուցիչներ: Նրանք եկել էին բարի ճանապարհ մաղթելու մեծ հումանիտին ու հայ ժողովրդի լավագույն բարեկամին: Սրտաուռ խոսքեր, նոր հուշանվերներ և մտերմական ձեռքսեղմումներ... Ֆ. Նանսենն ուրախ էր և հուզված, նա լի էր անմոռաց տպավորություններով և վառ հույսերով... Նա հարազատորեն հրաժեշտ է տալիս բոլորին...

Ահա և գնացքը, որը դանդաղորեն շարժվում է ծով աչքերի լույսի տակ: Ֆ. Նանսենը վերջին անգամ նայում է Երևանին, Արարատյան դաշտավայրին ու վեհ Մասիսին, վերհիշում հայ ժողովրդի դառն անցյալը և ուրախանում նրա նոր այգաբացով. «Մեր հտետում անհետանում էին Երևանը, Զանգվի հովիտը, գեղեցիկ այգիները: Հարավում անամպ կանգնած էր Արարատը իր ամբողջ բարձրությամբ, և նրա լայն ձյունապատ գագաթը շողշողում էր մայր մտնող արևի լույսի տակ: Դա ամբողջ երկի-

բը համակող առաջին վեհ պատկերն էր, երբ մենք ժամանեցինք այնտեղ, այժմ՝ երբ մեկնում ենք, վերջինը Արարատն է հրաժեշտ տալիս: Հրաժեշտին նա հանել էր իր հզոր ամպե գլխարկը... Մեր աչքերի առաջ անվերջ շարքերով կանցնեին անցյալի պատկերներն այն ժողովրդի, որն ունեցել է հարափոփոխ ճակատագիր և հենց սկզբից ապրել է այստեղ՝ Արարատի ու Արագածի շուրջ տակ:

Որքան կոիվ, որքան կարիք, որքան անվերջ տառապանք ու թշվառություն, հարված հարվածի ետևից և որքան քիչ հաղթական երջանկություն:

Հավանաբար, մարդը տառապանքով կրյուրեղանա, երբ նա բավականաչափ ամրակուռ է, որ տանի այդ: Բայց այս լայն աշխարհում կա՞ ևս մի ժողովուրդ, որն այդքան տառապած լինեի ու այնուամենայնիվ չկործանվեր: Ինչի՞ համար: Նրա համար, որ ի վերջո լքեն ու դավաճանեն նրանք, որոնք հանուն բարձր արդարության իրենց հավատարմության ու սրբազան խոսքն են ասել:

Դուք՝ բազաբազեռներ, դուք՝ պետական մարդիկ, հանգիստ թողեք բարձրագույն բառերը, որպեսզի մարդկանցից չկորզվեք նրանց հավատի վերջին կայծը, որ չնայած ամեն ինչին, ժողովրդի պատմության մեջ ինչ-որ սրբազան բան կա:

Սիրալիք ու մտածկոտ ժպտում էր լուսինը պատուհանի միջով. արդարությունն էս որոնում դու, հեզ մարդկային արարած, որտե՞ղ ես դու ուզում գտնել այն»¹:

Այսպիսի խոհերով է թողնում Հայաստանը մեծ մարդասերը՝ ըստ էության դատապարտելով հայ ժողովրդի նկատմամբ կատարված ոճրագործությունները և մտահոգվելով նրանով, թե ինչ վերաբերմունք ցույց կտան արևմտյան տերություններն իր ծրագրին: Մինչ այդ նա պետք է լիներ Մոսկվայում, ուր անկասկած կստանար լիակատար պաշտպանություն ու աջակցություն:

Հուլիսի 3-ին Ֆ. Նանսենը հասավ Թիֆլիս և ունեցավ նոր հանդիպումներ ԱՍՖՍՂ-ի ղեկավարների հետ: Մասնավորապես նա տեսակցեց ԱՍՖՍՂ Ժողովմխորհի նախագահի տեղակալ Լուկաչիևի հետ և Ա. Երզնկյանի ներկայությամբ զոհունակությամբ հաղորդում արեց կատարված աշխատանքի ու կազմված նախա-

¹ «Խորհրդային Հայաստան», 4. 7. 25:

¹ Fr. Nansen, Betrogenes Volk, S. 231—232.

գծերի մասին. «Ընկ. Լուկաշինը իր կողմից ասաց, որ Անդրկովկասի կառավարությունը պատրաստ է ամեն կերպ աջակցել այդ նախագծերի իրականացմանը»¹:

Ց. Նանսենը՝ միանգամայն զոհ ձեռքբերված արդյունքներից, հուլիսի 4-ին, մեկնելուց առաջ, «Մարտակոչ» թերթի խմբագրությունը հանձնեց հետևյալ ձևով գիրքը. «Շատ ուրախ կլինեմ, եթե իրոք կարողանամ որևէ օգտակար գործ կատարել Հայաստանի համար, որն օժտված է մեծ հնարավորություններով և ունի մի առափնի, աշխատունակ ժողովուրդ: Ցանկալի է, որ այդ գեղեցիկ երկիրն ու ժողովուրդը, որն այնքան դժբախտություններ է տեսել, վայելի խաղաղ ու երջանիկ ապագա»²:

Նույն օրը Ց. Նանսենը թիֆլիսից նամակ է ուղարկում Ժնև՝ Լ. Սուլցերին և հաղորդում, որ «Հայաստանը հետաքրքիր երկիր է իր լեռներով, հարթավայրերով ու հովիտներով», որոնց վրա «այն կողմը» բարձրանում է սեպ Արարատը և նրա վեհ գագաթները տեսանելի են բոլոր վայրերից. «Հրաշալի երկիր, որը կարիք ունի միայն մի բանի՝ ջրի, որպեսզի դառնա Եդեմ»: Նա նշում է, որ Արարատյան մեծ դաշտավայրում, ուր ջուր կա, մարդիկ ստեղծել են փարթամ այգիներ և աճեցնում են հիանալի խաղող, անուշահամ մրգեր, բամբակ, ծխախոտ: Մնացած անապատային մասերը ևս կդառնան կատարյալ բերրի, եթե ջուր բերվի, որպիսին կա մոտակայքում:

Նանսենը հատուկ ջերմությամբ է խոսում հայ աշխատավորի մասին, որը, հաղթահարելով բազմապիսի դժվարություններ, սովետական իշխանության մի քանի տարում բարելավել է իր վիճակը, հասել լուրջ հաջողությունների. «Այդ մարդիկ դեռ աղքատ են, բայց նրանք կատարում են այն ամենը, ինչ կարող են և իրոք արժանի են գովասանքի՝ վերջին տարիներին ձեռք բերածի համար»: Այդ մարդիկ սիրով են ընդունում իրենց հայրենակից-գաղթականներին, որոնք վայելում են պետության հոգատարությունն ու հովանավորությունը: Նանսենը հայտնում է, որ նոր գաղթականների համար նախատեսված են հատուկ հողեր և մնում է ձեռք բերել դրանց յուրացման համար նախատեսվելիք գումարը. «Ողջ անապատը կարող է մշակվել, եթե ջուր բերվի, իսկ ջուր կա: Եվ դա պետք է կատարվի»³:

¹ Правда, 7. 7. 25.

² «Մարտակոչ», 9. 7. 25.

³ Fridtjof Nansen, Brev, IV, s. 307.

Ահա ինչպիսի հավատով էր լցված Նանսենը դեպի կատարվելիք գործը և որպիսի եռանդով էր նա ձգտում լավատեսությունը համակել նաև ուրիշներին: Նրան ոգեշնչեց հատկապես սովետական մարմինների պատրաստակամությունը՝ ամեն ինչ անել հայ գաղթականների հայրենադարձության համար, այդ թվում նանսենյան պլանների կատարման համար:

Շնորհակալության խոր զգացումով Նանսենը 1925 թվականի հուլիսի 5-ին Ռազմավիրական ճանապարհով Թիֆլիսից մեկնում է Վլադիկավկազ (այժմ Օրջոնիկիձե), որպեսզի Գաղստանի կառավարության հրավերով այցելի Մախաչկալա՝ Հասնելով այդտեղ, նա շնորհակալական նամակներ է ուղարկում Անդրկովկասի ու Հայաստանի կառավարություններին: Մասնավորապես ՀՍՍՀ Ժողովուրդի նախագահին՝ 1925 թվականի հուլիսի 9-ին անդերևն գրած նամակում ասված է.

«Թանկագին պարոն նախագահ.

Նախքան Կովկասի սահմանները թողնելը, ես ցանկանում եմ հայտնել Ձեզ և Ձեր կառավարությանն իմ ամենաանկեղծ շնորհակալությունը այն հիանալի ընդունելության ու բարեկամական վերաբերմունքի համար, որ Գուր ցույց տվի իմ ընկերներին ու ինձ՝ Ձեր գեղեցիկ երկիրը կատարած մեր այցելության ժամանակ: Մեզ ընձեռած մեծ հարմարությունների շնորհիվ Հայաստանում մեր գտնվելը, իրոք, դարձավ ամեն կողմից հաճելի ու հետաքրքիր: Մենք շատ լավ առիթներ ունեցանք դիտելու Ձեր երկիրը և ուսումնասիրելու նրա մեծ հնարավորությունները և հեռանում ենք մի ցանկությամբ՝ հնարավորություն ունենալ մտցնելու մեր լուման այդ երկրի զարգացման գործում և այդպիսով աջակցելու հայ ժողովրդի համար երջանիկ ու լավ հեռանկար ունեցող ապագայի ստեղծմանը:

Հավատացեք ինձ, թանկագին պարոն նախագահ, որ Հայաստանը և հայ ժողովուրդը հանձին ինձ կունենան հավատարիմ բարեկամ:

Ես նաև ցանկանում եմ օգտագործել այս առիթը՝ արտահայտելու իմ ամենաջերմ շնորհակալությունն այն գեղեցիկ հուշանվերների համար, որ ստացա գնացքում և որոնք միշտ ինձ

¹ Տե՛ս Правда, 7. 7. 25.

կհիշեցնեն 1925 թվականի հունիսին Հայաստան կատարած իմ այցելության բարի հուշերը¹։

Սովետական Հայաստանի կառավարությունը Ֆ. Նանսենի հանձնաժողովի հետ ունեցած խորհրդակցությունների և ընդհանրապես այդ ուղղությամբ կատարված աշխատանքի մասին զեկուցում է ՍՍՀՄ կենտրոնական ղեկավար մարմիններին։ Մասնավորապես ՆՍՍՀ Ժողկոմխորհի նախագահ Ս. Համբարձումյանը ՍՍՀՄ արտաքին գործերի ժողկոմատ է ուղարկում մանրամասն հաղորդում՝ Ֆ. Նանսենի պլան-հուշագրի հետ միասին և զեպ՝ Ս. Համբարձումյանը նշում է, որ «Միութենական կառավարության անդամների հետ բանակցելու նպատակով Մոսկվա է մեկնել Նանսենը՝ հատուկ նշանակություն տալով ընկ. Չիչերինի հետ բանակցությանը Եվրոպայում իր միսիայի հաջողության համար»²։

Նախքան Մոսկվա մեկնելը Նանսենը, Դադստանում մի քանի օր լինելուց հետո, Մախաչկալայից նավով (Կասպից ծովով) մեկնում է Աստրախան և ապա շրջագայում Վոլգայով ու 1925 թվականի հուլիսի 16-ին հասնում Սարատով։ Նորից այցելելով Պովոլժիե, նա սեփական աչքերով տեսնում է, թե ինչպես նախկին քաղցից միայն հիշողություն է մնացել և անշեղորեն բարեկեցիկ է դառնում սովետական մարդկանց կյանքը։ Այդ ուղևորության արդյունքը դարձավ Նանսենի «Կովկասով ղեպի Վոլգա» աշխատությունը, որը լույս տեսավ 1930 թվականին (նորվեգերեն)։ Դա նրա վերջին գիրքն էր։

Այնուհետև Ֆ. Նանսենը զնայքով մեկնում է Մոսկվա, ուր հանդիպումներ է ունենում ՍՍՀՄ արտագործողում Գ. Չիչերինի, հոգժողկոմի տեղակալ Ե. Սվիրեզևի և սովետական այլ ղեկավար գործիչների հետ։ Ամենուրեք նրան ընդունում են ջերմությամբ և խրախուսում մեծ քաղաքացու մարդասիրական գործը։ Մասնավորապես հավաստիացվում է, որ ՍՍՀՄ պետական բանկը Հայաստանի համար կերաշխավորի օտարերկրյա

¹ ՆՍՍՀ ԶՅՈՒՄ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 292, թ. 38; Ֆ. Նանսենի այս նամակի մեծ մասը (առանց վերջին պարբերության) ժամանակին լույս է տեսել մամուլում («Մարտակոչ», № 171, 1925 թ., «Հրավիրակ» № 2, 1925 թ. և այլն), իսկ լրիվ (մի փոքր այլ թարգմանությամբ) հրատարակել է Գ. Ա. Իվանյանը «Պատմաբանասիրական հանդես» 1970 թ. № 1-ում։

² Նույն տեղը, թ. 69։

փոխառություն, եթե այն տրվի բարյացակամության գիրքերից ու առանց որևէ բաղաժանան միջամտության։

Ամփոփելով Նանսենի Հայաստան կատարած ուղևորության արդյունքները, պետք է նշել, որ դրանք, ինչպես կանխատեսվում էր, զուրս եկան հայ զաղթականների տեղավորման վայրերի գնման նեղ շրջանակներից և վերածվեցին հայ ժողովրդի կյանքին ու պատմությանը մոտիկից ծանոթանալու անհրաժեշտության։ Անկասկած, Նանսենը հենց սկզբից ունեցել է այդպիսի մտազրույցներ, ուստի և անմիջականորեն զլխավորել է Հայաստան մեկնող հանձնաժողովը։ Միանգամայն ճիշտ է գերմանացի գրող-հետազոտող Վ. Չոնթագը, որը Նանսենի միսիայի մասին գրել է. «Նանսենը նկատի ուներ իր խնդրի ոչ միայն տեխնիկական կողմը, նա ձգտում էր իմանալ փորձությունների ենթարկված այդ ժողովրդի էությունը՝ նրա արվեստի գործերից ու ավերակներից, նրա առօրյա կյանքից, և այդ լեռնային երկրի հակասական բնությունից։ Ոչնչացված մշակույթի ավերակներից, շորացած այգիների մամուլությունից Նանսենի աչքերի առաջ հառնեց այս փոքր, բարձրաձիթ ժողովրդի ահավոր ողբերգությունը, մի ժողովուրդ, որը համարյա փշրվեց փոշիացավ ազահ մեծ տերությունների միջև»։ Նանսենը խորապես զգաց, ապրեց ու ձուլվեց հայ ժողովրդին և նրան նվիրեց իր վերջին պրոպեմադիկ գիրքը, որին կանգրադանանք առանձին։

¹ Wolfgang Sonntag, Fridtjof Nansen. Ein Held des Friedens, Weimar, 1957, S. 457.

ՊԱՅՅԱՐ ԱԶԳԵՐԻ
ԼԻԳԱՅՈՒՄ

Քաջալերված սովետական կառավարության պաշտպանության մեջ, Ֆ. Նանսենը վերադարձավ Արևմտյան Եվրոպա և ծավալեց լայն կամպանիա, մի կողմից՝ պրոպագանդելով սովետական իշխանության նվաճումները ու հայ ժողովրդի վերածնունդը, իսկ մյուս կողմից՝ արտասահմանում գտնվող հայ գաղթականներին մայր հայրենիք վերադարձնելու անհրաժեշտությունը: Նա հանդիպումներ ունեցավ նաև հայ գործիչների հետ՝ պատմելով իր վառ տպավորությունները Սովետական Հայաստանի մասին: Այսպես, Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ Պողոս Նուրարին ասաց. «Ձեր ժողովուրդը, հազիվ դուրս գալով համաշխարհային պատմության մեջ շտեմելած աղետից, ծառեր է տնկում, ջրանցքներ ու էլեկտրակայաններ կառուցում: Ձեր ժողովուրդը՝ իր հաղարամյա պատմությամբ ու մշակույթով, իր անօրինակ խիզախությամբ և անսովոր եռանդով ու աշխատասիրությամբ կվերակենդանանա և իր երկիրը կկառուցի»¹:

Նանսենը մեկնեց Ժնև և 1925 թվականի հուլիսի 28-ին Ազգերի լիգային ներկայացրեց հատուկ զեկուցագիր՝ հայ գաղթականների տեղավորման խընդրի մասին: Այնտեղ խոսվում է նրա գլխավորած հանձնաժողո-

վի կատարած աշխատանքի մասին և ընդգծվում, որ սովետական երկրում ամենուրեք ջերմությամբ են ընդունել նրան և ցուցաբերել լիակատար պատրաստակամություն առաջադրված պլաններն իրագործելու համար: Ֆ. Նանսենը նշում է, որ «հայ ղեկավարները... շատ են ցանկանում, որ իրենց հայրենակիցները Հայաստան վերադառնան» և ինքն էլ գտնում է, որ «Հայկական հանրապետությունը... պետք է դիտել որպես գոյություն ունեցող միակ օջախը, ուր ցրված հայերը կարող են հաստատվել»²: Ձէ որ այդ «երկիրը զարգանում է հաստատ կերպով, մի կառավարության միջոցով, որը կայուն է: Գրությունը խաղաղ է ներսում և սահմանի վրա, ազգաբնակչությունը արդյունաբերող է և աշխատասեր, հողերը արգավանդ են, երկիրն ունի ջրային ռեսուրսներ և հանքային հարստություններ: Բայց մյուս կողմից, երկիրը մեծ չափերով ավերվել է արշավանքներից, կոտորածներից և անցյալի քաղաքացիական կռիվներից: Ներկայումս երկիրն ավելի ազգաբնակչություն ունի, քան նրա այժմյան կացությունը նրան կարող է թույլատրել: Նա նեղվում է կապիտալի մեծ պակասից և մասնավորապես նրա բերրի հողերը չեն կարող բավարար չափով օգտագործվել առանց որոշ մասերի ոռոգման ու շորացման»²:

Ֆ. Նանսենը նշում է, որ ընայած այդ գծավորություններին Սովետական Հայաստանը իր գոյության սկզբից ծավալել է տնտեսական ու կուլտուրական շինարարություն և ոչ միայն բարելավել այնտեղ գտնվող շուրջ 400000 գաղթականության վիճակը, այլև կազմակերպել հայրենադարձություն, ընդունել ու տեղավորել 14000 տարագիրների: Այդ պրոցեսը շարունակվում է, բայց արտասահմանում գտնվող հայ գաղթականների թիվը շատ մեծ է, նրանց հայրենիք վերադառնալու ցանկությունը՝ անսահման և անհրաժեշտ է, որ հայերին բազմիցս խոստումներ տված արևմտյան տերությունները ևս աջակցեն այդ գործին՝ գոնե փոխառություններ տրամադրելու ձևով:

Ֆ. Նանսենը ցույց է տալիս, որ «հայ գաղթականների պրոբլեմը վերջնականապես լուծելու համար անհրաժեշտ կլինի ոռոգման և շորացման մեծ ծրագրեր իրագործել, ինչպես նաև դարգացնել Հայաստանի արդյունաբերական հնարավորությունները»:

¹ Հայկ. ՍՍՀ 2206 ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 374, ք. 66:

² Նույն տեղը, ք. 69:

րը¹: Նա նշում է, որ հայկական կառավարությունը գործում է հենց այդ ուղղությամբ և իր հանձնաժողովին է ներկայացրել ոռոգման մի շարք նախագծեր, որոնք «բոլորն էլ իրագործելի են», բայց կոնկրետ, անմիջական (առաջիկա 2—3 տարում) օգնության համար իրենք ընտրել են Երևանի արևելյան և արևմտյան Ղոնրի, Սևջրի և Ջանգիրասարի հողերը՝ ընդամենը 33000 զեսյատին, ուր կարելի է տեղավորել 25000 մարդ, ընդ որում համաձայնություն է կայացվել առաջին հերթին բերել այն 15 հազար գաղթականներին (Հունաստանից ու Թուրքիայից), որոնք գտնվում են ծայրահեղ ծանր վիճակում: Այդ վայրերի անջրգի հողերը ոռոգելու և ճահիճները շորացնելու համար պահանջվում է 6 միլիոն ռուբլի, որին պետք է գումարել ևս 3 միլիոն ռուբլի՝ 15000 գաղթականներին տեղավորելու, նրանց համար տներ շինելու, գործիքներ, անասուններ, սերմացու և այլն տրամադրելու համար:

Միջոցներ հայթայթելու հիմնական ուղին փոխառությունն էր. «Իմ կարծիքով,— գրել է Ֆ. Նանսենը,— անհրաժեշտ գումարը ձեռք բերելու լավագույն միջոցն է փոխառություն անել՝ հույն գաղթականների փոխառության նման պայմաններով», ընդ որում «հայ կառավարությունը տրամադրված է ընդունելու և երաշխավորելու 9 միլիոն ռուբլու այդ փոխառությունը, որ պիտի հատկացվի բացառապես վերև հիշված նպատակներին: Կառավարությունը ցանկանում է, որ տոկոսը որքան կարելի է շահավոր լինի և մոծելու ժամանակամիջոցը 10 տարուց պակաս չլինի, ավելի շուտ՝ լինի 15—20 տարի»²: Ապա Նանսենը թվարկում է այն արտոնությունները, որոնք սովետական կառավարությունը կտա գաղթականներին (առանց մաքսի ու ձրի տեղափոխություն, ձրի հող ստանալ և երեք տարի հարկերից ազատվել, մեկ-երկու տարի զինվորական ծառայությունից ազատվել և այլն): Մյուս կողմից, վկայակոչելով իր հանձնաժողովի անգամ Կարլի հաշվարկումները, Նանսենը ցույց է տալիս, որ հողերի յուրացումը արագությամբ կհատուցի ծախսերն ու փոխառությունը:

Ֆ. Նանսենը իր զեկուցագրի վերջում, հիշեցնելով արևմտյան տերությունների հայանպաստ խոստումները, «այն հա-

մակրական վերաբերմունքը, որ շահագրգռված պետություններն ունեն հայերի պաշտպանության հանդեպ», հույս է հայտնում, որ «այդ երկրներն ամենաջերմ պաշտպանություն ցույց կտան այստեղ ձևակերպված առաջարկներին, որոնք նպատակ ունեն գեթ մասնավոր շահով իրականացնել նրանց կողմից արտահայտված ցանկությունը, այսինքն՝ այն, որ կազմակերպվի հայկական ազգային օջախ: Մնում է քննել, թե ինչ միջոցներով կարելի է ստանալ այս առաջարկների իրագործման համար անհրաժեշտ փոխառությունը: Ես ինձ հիմք եմ տալիս հույսալ, թե շահագրգռված պետությունները վերահիշյալ պատճառներով հնարավոր կգտնեն իրենց պատրաստակամությունը տալու վերև ցուցադրված նախագծին»¹:

Նկատենք, որ բացի Ֆ. Նանսենի ընդհանուր զեկուցագրից, Ազգերի լիգային են ներկայացվում նաև նրա հանձնաժողովի անդամներ Ժ. Կարլի, Չ. Գուպուիսի և Պիո Լո Սավիոյի մասնագիտական զեկուցագրերը, որոնց մեջ մանրամասն շարադրված են երկրի բնակչիմայական պայմանները, յուրացվելիք հողերի վրա կատարվելիք աշխատանքների հարցերը և այլն: Նրանք բուլոն էլ շեշտում են, որ եթե Սարդարապատի դաշտի յուրացումը «գծվարին, մեծ ծախս պահանջող և խիզախ ձեռնարկություն է մի շրջանում, որ այժմ չոր անապատ է»², ապա համեմատաբար հեշտ է շահագործել Ղոնրը, Սևջրի ու Ջանգիրասարի հողերը: Նշենք, որ, իրոք, Սարդարապատի դաշտի ոռոգումը գծվար գործ էր, բայց սովետական իշխանությունն այն լիովին իրականացրեց և «չոր անապատը» վերածեց «կանաչ մրգաստանի»:

Բնորոշ է, որ Նանսենը դեռ այն ժամանակ չի սահմանափակվում զեկուցագիր ներկայացնելով Ազգերի լիգային: Նա միաժամանակ մեծ աշխատանք է ծավալում հայ գաղթականության տեղափոխման հարցի շուրջը եվրոպայում հասարակական լայն կարծիք ստեղծելու համար: Այդ նպատակով նա ունենում է հրատարակային ելույթներ, տալիս ինտերվյուներ, տպագրում հոդվածներ և այլն: Մասնավորապես նորվեգական մամուլը («Tidens Tegn», «Morgenbladet» և այլն) մանրամասն լուսարանում է Նանսենի Հայաստան կատարած ուղևորության

¹ Հայկ. ՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 374, թ. 70:

² Նույն տեղը, թ. 72:

¹ Հայկ. ՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 374, թ. 77:

² Նույն տեղը, թ. 43:

արգյունքները: 1925 թ. օգոստոսի 8-ին «Tidens Tegn» թերթում լույս է տեսնում Նանսենի «Հայ ժողովուրդը» ծավալուն հոդվածը (Մասիսի, նանսենյան հանձնաժողովի և հայ գյուղացիների նկարներով), որտեղ նա բարձրացնում է իրեն հուշող կարևոր հարցեր: Նանսենը պատմական ակնարկի ձևով բնութագրում է հայ ժողովրդին որպես աշխարհի հնագույն «նշանավոր ժողովուրդներից մեկի», որն ստեղծել է բարձրակարգ ազգային մշակույթ և հարստացրել մարդկային քաղաքակրթությունը: Սակայն նա շատ է տառապել օտարերկրյա զավթիչներից և հատկապես «թուրքերից, որոնք ձգտել են նրան ոչնչացնել»: Եվրոպական պետությունները բաղմիցս խոստացել են «օգնել» իրենց «քրիստոնյա եղբորը», բայց իրականում ոչինչ չեն արել և «հայ ժողովրդի արյունահեղությունը փորձել են կանգնեցնել թղթի հեղեղով»: Դա պարզապես նշանակում է խաբել, որը շարունակվել է տարիներ ու տասնամյակներ: Այդ ժողովուրդն իր փրկությունը գտավ սովետական իշխանության մեջ, և Նանսենը ցույց է տալիս, թե ինչպես է ձեռք բերվել «խսկական ազգային օջախ», որը գնալով կազդուրվում է և իր գոները բացել է սփյուռքահայերի առաջ: Սակայն պայմանները դեռ սուղ են և անհրաժեշտ է, որ գոնե այժմ արևմտյան տերությունները ցուցաբերեն բարյացակամություն ու փոխառություն տրամադրեն հայ գաղթականների տեղավորման համար. «Մի՞թե եվրոպան չի արթնանա, մի՞թե արևմտյան երկրները կասեն՝ ոչ», — երկմտելով եզրափակում է իր հոդվածը Նանսենը:

Նմանատիպ հոդվածներ լույս են տեսնում նաև այլ երկրների մամուլում: Այսպես, ավստրիական «Neue Freie Presse» լրագրում 1925 թվականի օգոստոսի 12-ին լույս է տեսնում Ֆ. Նանսենի «Հայաստանի տառապալալ պատմությունը» հոդվածը, որտեղ նա ոչ միայն նկարագրում է իր ստացած տպավորությունները շենացող հայոց օրրանի մասին, այլև եվրոպական հասարակությանը հիշեցնում ահավոր եղեռնի սարսափները, երբ «մեծ պատերազմի ժամանակ ու դրանից հետո հայ ժողովուրդը ենթարկվեց նոր շարժերի, որոնց մեջ թուրքերը ոչ մի շափ չտեսան»: Դա կատարվեց արևմտյան տերությունների թողտվության պայմաններում: Ուստի, Նանսենը գրում է. «Եվրոպան, որ մեծ անիրավություններ գործեց այս ժողովրդի հանդեպ, մասամբ քաված կլինի իր մեղքերը, եթե այսօր օգնության

ձեռք մեկնի՝ Հայաստանին տրամադրելով փոխառության գումար, որն աննշան կլինի եվրոպայի համար»:

Նման գործելակերպով Նանսենը ձգտում էր մոբիլիզացնել եվրոպայի առաջադեմ ուժերին, հույս ունենալով, որ դրանք բարերար ազդեցություն կունենան թե՛ արևմտյան տերությունների և թե՛ Ազգերի լիգայի վրա: Իրոք, նա հասավ որոշակի հաջողությունների դեմոկրատական զանգվածների ու առաջադեմ գործիչների մարդասիրական նախաձեռնության բարձրացման իմաստով, բայց եվրոպական կառավարողները նորից ցույց տվին իրենց շահադիտական մագիլները: Հենց այդ մասին է վկայում նանսենյան նախագծի երկարատև ու անպտուղ բննարկումը Ազգերի լիգայի լաբիրինթոսում:

1925 թվականի սեպտեմբերի 10-ին Ֆ. Նանսենը ժնևում ղեկուցում է Ազգերի լիգային կից Աշխատանքի միջազգային բյուրոյի գաղթականական բաժանմունքի խորհրդակցական կոմիտեում, որի նիստերին մասնակցեցին նաև արտասահմանում գտնվող հայկական հասարակական կազմակերպությունների, Հայաստանի միջազգային լիգայի ու այլ հայանպաստ մարմինների ներկայացուցիչները:

Նանսենն ասաց, որ Հայաստանում կատարվում են ուղղման մեծ աշխատանքներ և հատկապես պետք է չուրացվի Սարդաբադատի դաշտը: Վերջինիս նախագիծը կազմված է, բայց բանի որ նրա իրականացումը պահանջում է ավելի մեծ ծախսեր և դա կտևի 6 տարի, իսկ հայ գաղթականների մի մասին պետք է շտապ տեղափոխել Հայաստան, ուստի, իր գլխավորած հանձնաժողովը վերցրել է ավելի մատչելի ծրագիր՝ 9 միլիոն ուրլի (մեկ միլիոն ֆունտ ստեռլինգ) գումարով. «Այդ մեկ միլիոն ոսկին կարելի է փոխ տալ հայ կառավարությանը, որն ամեն երաշխավորություն կներկայացնի: Եթե Ազգերու ընկերությունը իր հովանավորության տակ առնե այս գործը, գյուրին է հրապարակի վրա գտնել այս գումարը: Ֆինանսական և ամեն տեսակետով առողջ գործ մըն է աս, և ամեն ապահովություն կներկայացնեն բաժնետերերուն համար»¹:

Բոլորն էլ հավանություն տվին նանսենյան նախագծին և խոստացան աջակցել դրա իրականացմանը: Հայ գաղթականների կենտրոնական հանձնաժողովի ընդհանուր քարտուղար Լ.

¹ «Ապագա», 19. 9. 25:

Բաշայանն ամենից առաջ շնորհակալություն հայտնեց Նանսենին ու նրա աշխատակիցներին՝ կատարված մեծ աշխատանքի համար. «Ինք [Նանսենը] Հայաստան գնաց իր նմաններուն տառապանքին համար տածած ջերմ համակրանքն և անիրավացի դժբախտությանց հանդեպ իր արգարության խորին զգացումն մզված ու անկից կվերագոռնա՝ լի հավատքով մեր ժողովրդին ապագային համար և բոլոր ուժովը մեզ օգնելու հաստատ որոշումով»¹: Այնուհետև նա նշեց, որ հայ գաղթականներն ուղում են դնալ «միայն Հայաստան» և ապրել «իրենց նախահայրերու հողին վրա»: Հայ կաղմակերպություններն ամեն կերպ օգնում են նրանց և մինչև այժմ նրանց մուծած գումարը հասել է 260 միլիոն ֆրանկի, ընդ որում դրանից 35 միլիոնը տվել է Հայկական բարեգործական ընդհանուր միությունը: Ինչ խոսք, որ պետք է այդ գործը շարունակել և մասնավորապես օգնել նանսենյան պլանի կատարմանը. «Գրեթե չկա աշխատող հայ մը, որ չօգնե իր ավելի դժբախտ ազգականներուն: Այսուհանդերձ, ցույց տալու համար, թե որքան սրտանց փարած ենք տոբթ, նանսենի ձեռնարկին և թե որքան կցանկանք անոր հաջողություն, կրնամ ձեռք հավաստել, թե հայերը պատրաստ են զգալի շահով մասնակցելու կատարվելիք փոխառության»:

ՀԲԸՄ անունից հանդես եկավ Գ. Մինապյանը և շեշտեց, որ «մինչև հիմա շատ ծրագրեր են հորինվեցան հայ ժողովրդին համար և թղթի վրա մնացին, միշտ հուսախար եղանք: Բայց այս անգամ, եթե գործը ամուր և դրական հիմքերու վրա դրվի Ազգերու ընկերության հովանավորությամբ, և միայն այդ պարագային, ևս ձեռք հավաստիք կուտամ, թե հայերը հոժար են փոխառության մեկ տասներորդը իրենց վրա վերցնելու: Այդ ժամանակ ժպիտ շողաց տոբթ. նանսենի ամբողջ դեմքին վրա: Կզգար, թե այս հայտարարությունը ինչ մեծ զորավիզ մը պիտի բլար իրեն՝ ի զուխ հանելու համար իր ձեռնարկը»²:

Հայաստանի օգնության կոմիտեի կողմից արտահայտվեց Մ. Պապաջանյանը և «իր հավանությունը հայտնեց ամբողջ ծրագրին»: Նա միաժամանակ գտավ անհրաժեշտ, որ այս գործին օժանդակեն նաև օտարերկրյա հայանպաստ կաղմակերպությունները: Վերջիններս ղեկավարնում էին՝ պատճառաբանելով,

թե նյութական միջոցները բիշ են: Այդպես, Ա. Կրաֆտ-Բոնարը՝ հայասեր շվեյցարացիների անունից ասաց. «Ոչ թե չենք ուզեր, այլ չենք կրնար: Գիտե՞ք, թե մենք ինչ դժվարություններով կպահպանենք մեր մարդասիրական գործը, զոր չենք կրնար երեսի վրա թողնել: Պետք չէ մոռնալ, որ գաղթականներու սահմանափակ թվի մը փոխադրությունը հայկական կարիքներու մեկ մասին միայն դարման կտանի: Անցնելով գործի ընդհանուր տեսակետին, տր. նանսենի վրա պարտք կդնեմ, որ իր ծրագրերը ջատագովե Ազգերու ընկերության մոտ ոչ թե իբր մարդասիրական գործ մը, այլ իբր արգարության պահանջ մը, իբր մասնակի հատուցում մը հայ անիրավված ժողովրդին»:

Նկատենք, որ նիստին մասնակցում էր նաև նախկին դաշնակցական կառավարության վարչապետ Ալ. Խատիսյանը, որը ժողովականների ընդհանուր ոգևորության պայմաններում շվարցարացավ առարկել նանսենյան պլանի դեմ և նույնիսկ ասաց. «Մենք ալ մեր բոլոր ուժով պիտի աշխատենք ներկա ծրագրին իրագործման»: Յրանսխալում Սովետական Միության գեսպանության քարտուղար Սիմոն Փիրումյանը իր ղեկուցագրում նշել է, որ «հարկադրված էր այդ ոգով արտահայտվել նաև Հայաստանի կառավարության նախկին նախագահը»¹: Ավելին, նանսենի պատվին կաղմակերպված մի ճաշկերույթի ժամանակ նա նույնիսկ հավաստիացրեց, որ Սովետական Հայաստանի կառավարությունը «ժողովրդական է», «բնկապես երկրի առաջ պատասխանատու կառավարություն» և նրա հետ կարելի է հաստատ գործ սկսել: Բայց, ինչպես երևում է, նրա համար դրանք սոսկ բերանից թուրքած սին խոսքեր էին, որովհետև նախ՝ դաշնակցականները ոչ թե օժանդակեցին, այլ խոչընդոտներ հարուցեցին նանսենյան ծրագրի իրագործմանը և դրա ակտիվ կաղմակերպիչներից մեկը Ալ. Խատիսյանն էր: Նա էր, որ վրացական մենշևիկների հետ միասին դիմեց Փարիզի այսպես կոչված «Մարզու և քաղաքացու իրավունքների ընկերությանը», որպեսզի միջնորդի Ազգերի լիգայի առաջ՝ «թույլ շտալու համար տրեսակական որևէ օգնություն չ. Միություն, ցորչափ այս վերջինը չի ճանչցած Վրաստանի և Հայաստանի ինքնորոշման իրավունքը»²: Հասկանալի է, որ այդ շինծու պատրվակի տակ՝ ձո-

1 «Ապագա», 26. 9. 25:

2 «Ապագա», 19. 9. 25:

1 Հայկ ՍՍՀ ՀՀՍԵ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 264, թ. 204:

2 «Ապագա», 6. 3. 26:

դոպրած դաշնակցական շեֆը երբեմնի վարչապետությունն էր տենչում. ծիտը երազում կորեկ կտեսնի: Երկրորդ, ինքը՝ Խատիսյանը, դեռ այն ժամանակ անմիջապես մամուլում հանդես եկավ իր նախկին ասածի («ժողովրդական կառավարության» մասին) հերքումով, և այդ առթիվ Փարիզում հրատարակվող «Երևան» լրագիրը նշեց. «Պ. Խատիսյանը ճշակտոր կըլլա հերքելու իր կյանքին մեջ արտասանած մեկ խելացի խոսքը»¹:

Նիստի վերջում նանսներ զգացված ճառ ասաց և մասնավորապես նշեց. «Մենք կուզենք հայերը փոխադրել Հայաստան և ոչ այլուր: Իմ բերած ծրագիրս գործին սկզբնավորությունն է, եթե անհկա հաջողի, կարգը պիտի գա Սարգարապատին, որ 43000 դեպատին պիտի տրամադրե: Հայերը պիտի երթան հետզհետե իրենց երկիրը, մինչև թերևս 200000 հոգի: Եվրոպա և Ամերիկա պետք է աջակցեն այս գործին և ատով մասամբ հատուցանեն իրենց պարտքը հայ ազգին հանդեպ: Արդեն մեկ քանի ամերիկացիներ ինձի ըսին, թե դրամ պիտի դնեն այս գործին մեջ: Հայաստան այսօր լավ և կարող ձեռքերու մեջ է, որոնք շորս տարվա մեջ կիրպարանափոխ քրած են երկիրը: Օգնենք իրենց: Հայերը շատ խելացի և բանիրուն ժողովուրդ են և կարող են լիուլի օգտվել իրենց ընձեռված օժանդակությունն: Ժամանակ է, որ Եվրոպան իր պարտքը կատարե հայերուն հանդեպ, եթե ոչ հավիտենական ամոթ մը պիտի մնա իր ճակատին: Վերջացնելով ըսեմ, թե ես համոզված եմ, որ պիտի հաջողինք և այս ձեռնարկին մեջ, և լավագույն հանձնարարությունն է ըսել, թե հայերը, որ գործի մարդիկ են, պիտի աջակցին անոր»²: Նկատենք, որ, հակառակ դաշնակցության ճիգերին, արտասահմանյան հայ հասարակական աչքի ընկնող կազմակերպությունները (Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, Հայաստանի օգնության կոմիտեի բաժանմունքները, Հայ գաղթականական ընդհանրապես աջակցեցին նանսների գործին: Այդպես վարվեց նաև Պողոս Նուբարը, որը սերտ կապերի մեջ էր նանսների հետ և 1925 թվականի աշնանը ժեհուում հանդիպելով նրան, ասաց, «Թե ինքը և իր ընտանիքը 20000 ստեղծվող պիտի մասնակցին կնքվելիք փոխառություն»³: Բացի դրանից,

նա զգալի գումարներ տրամադրեց ներգաղթողների գործի կազմակերպմանը, Երևանի մոտ Նուբարաշենի (այժմ Սովետաշեն) կառուցմանը, որը օրգանապես առնչվում է նանսնյան ձեռնարկման հետ: Եթե հաշվի առնենք, որ Պողոս Նուբարը նաև Սովետական Հայաստանին համակիր ՀԲԸՄ նախագահն էր, ապա ավելի պարզ կդառնա նրա բարերար վերաբերմունքը: Բայց բոլոր հայ հարուստները չէ, որ բռնեցին այդ ուղին...

Առավել ևս գովելի է, որ արտասահմանյան հայ առաջադիմական կազմակերպությունների ու գործիչների աջակցությունը նանսնյան ծրագրին զուգակցվում է նրանց դեպի Սովետական Հայաստանը՝ որպես մայր հայրենիքն ունեցած ջերմ վերաբերմունքի հետ: Արդարև, նրանք իրենց ավանդն ունեն նանսնին հայ ժողովրդի պատմության հետ մոտիկից ծանոթացնելու մեջ, նրա հայանվեր գործունեության ծավալմանը նպաստելու մեջ: Այնպես որ, նախքան մեծ մարդասերը կմեկնեն Հայաստան, նա արդեն որոշակի պատկերացում ուներ նրա մասին: Բնորոշ է, որ դեռ 1925 թվականի մայիսի 22-ին Հայ գաղթականների կենտրոնական հանձնաժողովի ընդհանուր քարտուղար Լ. Բաշալյանը Փարիզից հատուկ նամակ է գրում Ֆ. Նանսնին և նրան ցանկանում ողջիթ դեպի Սովետական Հայաստան, ուր «կառավարությունը պատրաստվում է ձեր տրամադրության տակ դնել անհրաժեշտ միջոցներ ուսումնասիրելու ոչ միայն մեծ ծրագիրը Սարգարապատի, այլև երկրի բոլոր կարելիություններն ընդունելու ներս փոքր ի շատե մեծ թիվ գաղթականներու»: Ապա նա սփյուռքահայության անունից նշում է. «Մեր կոմիտեի և մեր ազգային բոլոր կազմակերպությունների ամենաթանկագին իղձն է, որ իրականանա Ձեր այդ որոշումը»¹:

Արտասահմանյան հայ առաջադիմական կազմակերպությունները գոհ էին Հայաստանում նանսնի միսիայի արդյունքներից և այժմ աջակցում էին իրականացնելու առաջադրված խնդիրները: Այդ աջակցությունը արտահայտվում է թե՛ բարոյապես և թե՛ նյութապես:

Եզիպտահայ հողագետ-ճարտարագետ Երվանդ Աղաթոնը, մոտիկից ծանոթանալով նանսնյան պլանին, ոչ միայն հավանություն է տալիս նրա մարդասիրական կողմին, այլև մանրամասնորեն (գիտական հաշվարկումներով) հիմնավորում այդ

¹ «Երևան», 15. 10. 25:

² «Երևան», 19. 9. 25:

³ «Ապագա», 3. 10. 25:

¹ «Պայքար» (Բոստոն), 3. 5. 55:

սյանի իրականացման շահութաբերությունը փոխառություն տվողների համար. «Այս գործառնությունը սքանչելի գործարք մըն է գրամատերերուն համար. հատկացված գրամագլուխը կմարի 12 տարիեն»¹: Ե. Աղաթոնն այդ ոգով կազմում է հատուկ ղեկուցագիր ու սեպտեմբերի 12-ին ներկայացնում Ազգերի լիգա: Նույն օրը լսվում է Ֆ. Նանսենի ղեկուցումը Ազգերի լիգայի սլենար նիստում: Նա ամենից առաջ ուշադրություն է հրավիրում «փոքրամասնությունների պաշտպանության հարցի» վրա և նշում, որ դա ինքնաբավ խնդիր չէ, այլ ունի միջազգային նշանակություն. «Ես միշտ եղել եմ նրանցից մեկը, որոնք հավատում են, որ փոքրամասնության պրոբլեմների խաղաղ լուծումը կենսական նշանակություն ունի Եվրոպայի բարօրության ու առաջադիմության տեսակետից և միայն պաշտպանության սիստեմի ղգույշ, հարատև ու քաջասիրտ զարգացմամբ է, որ սուր պրոբլեմները կարող են լուծվել»²:

Գրանից հետո Նանսենն անցնում է հայ գաղթականների տեղավորման հարցին: Նա հաղորդում է, որ իր գլխավորած հանձնաժողովի առաջին խնդիրն էր կովկասում գտնել մի հարմար վայր, ուր կարող էին ապահով ապրել հայ գաղթականները: Մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդպիսին կարող է լինել Սովետական Հայաստանը. «Մենք,— ասում է Ֆ. Նանսենը,— քննեցինք բոլոր հնարավորությունները և եկանք այն եզրակացության, միաձայն և մեր ճշտության մասին առանց որևէ կասկածի, որ միակ վայրը, ուր այժմ Եվրոպայում թափառող գաղթականների մի մեծ մասը, շեշտում եմ, մի մեծ մասը կարող է տեղավորվել՝ դա Երևանի հայ հանրապետությունն է: Եթե ժողովը մի րոպե անդրադառնա խնդրին, ևս կարծում եմ, որ պետք է համաձայնի, որ մենք ճիշտ ենք: Ուրիշ ի՞նչ վայր կարելի է գտնել գաղթականների մի մեծ մասի համար: Հարցրեք մի որևէ կառավարության, թե կարո՞ղ է վերցնել գաղթականների մի մեծ ու նոր մաս»: Մյուս կողմից, շատ կարևոր է հաշվի առնել հենց իրենց՝ հայ գաղթականների իղձերը. չէ որ նրանք «ցանկանում են գնալ Հայաստան և ոչ մի ուրիշ տեղ: Նրանք ցանկանում են գնալ և կառուցել իրենց ազգային հայրենիքը (տունը)»³:

1 Ավ. Յափուճյան, ԵՊ. աշխ., էջ 66:

2 Հայկ. ՍՍՀ ՀՀՍԵ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, դ. 530, թ. 6:

3 Նույն տեղը, թ. 7:

Ֆ. Նանսենը բացառիկ ուժով ընդգծում է Սովետական Հայաստանի կառավարության միանգամայն հարազատ ու հոգատար վերաբերմունքը գաղթականության տեղափոխման նկատմամբ, նրա բարյացակամությունը դեպի իր գլխավորած հանձնաժողովի մարդասիրական գործը: Նա չի թաքցնում, որ եթե մինչև Հայաստան մեկնելը իրենց մոտ կային որոշ տարակուսանքներ («արդյոք որևէ գործնական բան կարելի՞ է անել»), ապա այնտեղ լինելուց հետո դրանք լիովին փարատվեցին, և իրենք եկան այն հաստատ համոզման, որ սովետական իշխանությունը ծավալում է եռանդուն տնտեսական ու կուլտուրական շինարարություն և պատրաստ է ամեն ինչ անել՝ փրկելու ու ապահովելու տարաբախտ հայ գաղթականներին. «Մենք հեռացանք միաձայն համոզվելով այն փաստին, որ այնտեղ բացվում է հույժ կարևոր, նոր տնտեսական հանդգնություն ուղղման և շորացման գործի համար, որը միջոցներ պիտի ընձևեի ոչ միայն գաղթականների համար, որոնք արդեն Հայաստանի հողի վրա էին, այլև այն մեծ մասի համար, որը դեռևս թափառում է աշխարհի երեսին»¹:

Հայաստանի կառավարության աջակցությամբ է, որ Նանսենի հանձնաժողովը հանգամանորեն ղննում է տեղանքը, ծանոթանում բնակչությանը, ուսումնասիրում հայ մասնագետների ներկայացրած մի շարք նախագծեր, որոնք աչքի էին ընկնում գիտական մշակվածությամբ ու հիմնավորվածությամբ: Նանսենը հայտնում է, որ իրենք կազմել են համեմատաբար քիչ ծախսեր պահանջող պլան, որը ֆինանսավորելու ղեպքում կարելի է կենսագործել 2—3 տարում, այսինքն՝ յուրացնել 33—34 հազար ղեսյատին հող, ուր կտեղավորվեն 25—30 հազար գաղթականներ, Հանձնաժողովի անդամ-մասնագետները լիովին հաստատում են գրա հնարավորությունը, որի մասին են վկայում Հայաստանում արդեն կատարված գյուղատնտեսական մեծ աշխատանքները (չբանցքների բացումը, ճահիճների չորացումը և այլն): Պահանջվում է միայն արտասահմանյան փոխառություն, որը կներառվի Սովետական Միության ու Սովետական Հայաստանի կառավարությունների կողմից և անպայմանորեն ժամանակի ընթացքում կմարվի այն: Վկայակոչելով իրենց կազմած նախագիծը, Ֆ. Նանսենն ասում է. «Ահա մի սխեմա,

1 Հայկ. ՍՍՀ ՀՀՍԵ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, դ. 530, թ. 8:

որը անտեսապես առողջ է, ֆինանսապես՝ զործնական և քաղաքականորեն՝ ցանկալի»¹։

Նանսենը հիշեցնում է հայ ժողովրդի տառապանքները, նրա թափած արյունը դաշնակիցների համար, և վերջիններիս բազմաթիվ, բայց անկատար խոստումները։ Նա ուղղակի նշում է, որ արդի պատմության մեջ ոչ մի ժողովուրդ այնքան զրկանքներ չի կրել, որքան հայերը և ոչ որի հետ այնքան վատ շին վարվել, ինչքան նրանց հետ Հայ ժողովուրդը իր փրկությունը գտավ միայն սովետական իշխանության մեջ, և «Երևանի հանրապետությունը իրական Հայաստան է», ունի իր ազգային նկարագիրը, օժտված է ինքնուրույն պետականությամբ, իսկ նրա կառավարությունն էլ «բերել է խաղաղություն, կարգ ու կանոն և որոշ շափով բարգավաճում մի երկրում, ուր 3—4 տարի առաջ տիրում էր քաոս, թշվառություն ու սով»²։ Այդպիսով, ստեղծվել է իսկական «հայկական ազգային օջախ», նախկինում հյուժված և անէացող ժողովուրդը ոտքի է կանգնել, կազդուրվել և հմտությամբ բարեկարգում է իր հայրենիքը, «վերջին երեք տարիներում հրաշքներ է գործել՝ զարգացնելով դեռևս մի քանի տարի առաջ թշվառության մեջ գտնվող երկիրը, այն ժամանակ, երբ ամեն օր սալերը մեռած երեխաներ և շափահասներ էին հավաքում քաղաքների փողոցներից»³։ Այդտեղ է, որ կարող են ու պետք է հանգրվանեն նրա աշխարհասփյուռ զավակները։ Ուստի, Նանսենը կոչ է անում աջակցել այդ «օջախի» բարգավաճմանը. «Տարեցտարի մենք ազգային օջախի համար խոստումներ ենք արել, տարեցտարի մենք ընդունել ենք լքված և վատ վերաբերմունքի արժանացած մի ժողովրդի արդարադատությունը ապահովելու մեր կառավարությունների խոստումները և տարեցտարի մի երկար մարտիրոսության դանդաղ պատմության ականատես ենք հանդիսացել՝ մեր շուրթերի վրա ունենալով համակրանքի խոսքեր։ Ահա բացվում է մեր առաջ գործելու պատեհություն»։ Դա մեծ պետությունների համար փաստորեն մի փոքր փոխադրություն է, որը, սակայն, դուրս բերելու դեպքում «ամօրած կլինենք անհամար զաղթականների տառապանքը։ Մենք պիտի օգնենք կառուցելու և հզորացնելու վեր-

ջին տարիների մեջ գոյություն ունեցող միակ հաստատուն տեղական հայկական պետությունը»¹։

Ֆ. Նանսենը շեշտում է, որ ամեն ինչ պետք է անել ժողովուրդների խաղաղության ու բարեկեցության համար և ոչ թե պատերազմների ու կոտորածների համար։ Նա նշում է, որ հենց վերջերս եվրոպական տերություններից մեկը (Անգլիայի մասին է խոսքը) ջրարկել է մի մարտանավ, որն արժե 7 միլիոն ֆունտ ստեռլինգ, մինչդեռ հայ գաղթականների տեղափոխման համար տվյալ դեպքում պահանջվում է մեկ միլիոն ֆունտ ստեռլինգ. «Ես կոչ եմ անում նստաշրջանին չկորցնել այս պատեհությունը։ Մեր օրերում շատ հաճախ մոռացվում է հայկական ողբերգությունը կամ նրա վրայից անցնում են ինչ-որ անտարբեր ոճբական ժեստով»²։ Նանսենը իր խոսքը մասնավորապես ուղղում է Անգլիայի, Ֆրանսիայի ու Իտալիայի կառավարություններին, որոնք «իրենց դերն են խաղացել հայ ժողովրդի ողբերգության մեջ։ Այժմ ես խնդրում եմ նրանց մի անգամ ևս ձեռք առնել և ստեղծել անցյալի ձախողանքի ավերակների վրա մի պայծառ ապագա՝ ոտնահարված մի ազգի համար։ Ես դիմում եմ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի ու Իտալիայի պատգամավորություններին և ասում, որ Հայաստան անունը այստեղ և ուրիշ տեղ հաճախ եղել է ձեր ժողովուրդների սրտերում, որ հայերի մնացորդներն ահա նայում են ձեզ օդնության համար և աղերսում եմ ձեզ, որ նրանք իզուր չնայեն»³։

Հոգու ճիշ, խոր արդարամտություն և ալեկոծող հուզմունք, ճշմարտացի պահանջ և աղերսալից ակնկալություն, որը, պատրանք չի նկատվում հանդերձ, խիղճ շարժելու միտում ունեւր։ Նանսենը չէր ուզում հուսախար լինել և ձգտում էր ամեն կերպ հասնել իր նպատակին։ Նա հենց սկզբից նշեւ, որ իր առաջարկած «սխեման» նման է հունականին (հուն զաղթականներին օգնելու իմաստով), բայց «նվազ կշեռքով» (չէ որ հուն զաղթականներին օգնելու համար տրամադրվեց 240 միլիոն մարկ), ուստի և իր կարծիքով՝ ալելի հեշտ իրագործելի։ «Զեմ վարանում ասելու, որ այսօրվա իմ առաջարկությունը շատ ալելի հուսալից է ամեն տեսակետից, քան այն առաջարկը, որ ես կարող էի անել 1922

1 Հայկ. ՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 530, թ. 15։

2 Նույն տեղը, թ. 14։

3 Նույն տեղը, թ. 16։

1 Հայկ. ՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 530, թ. 15—16։

2 Նույն տեղը, թ. 20։

3 Նույն տեղը, թ. 21։

Բլվին Ի նպաստ Հունաստանի գաղթականներին Ես իմ մտքում տարակույս չունեմ, որ ժողովիդ իմ առաջարկելիք սխեմայի զրծվարությունները, լինեն դրանք անտեսական, ֆինանսական կամ ավելացնում եմ՝ քաղաքական, շատ ավելի նվազ են, քան այն զծվարությունները, որոնց պետք է դիմադրավելին հունական կառավարությունը, խորհուրդը և ֆինանսական հանձնաժողովը»¹։

Ակնհերև է նանսենի սխալը հատկապես հարցի «քաղաքական» կողմի տեսակետից, այսինքն՝ այն, որ Հունաստանը բուրժուական էր, իսկ Հայաստանը՝ սովետական, որը և դարձավ շափանիչ արևմտյան տերությունների վերաբերմունքի համար։ Մինչդեռ մեծ հումանիտար կարծում էր, որ դա չի ունենա կարևոր նշանակություն, ենթադրելով, թե թշվառ գաղթականներին, ինչպես հիվանդին, օգնելը ամենուրեք մարդասիրական գործ է, մանավանդ որ հայ գաղթականության դառը ճակատագրի համար պատասխանատու էին նաև արևմտյան տերությունները։ Այդ դիրքից նա և՛ պահանջում էր, և՛ խնդրում, դիմում բոլոր հնարավոր միջոցներին՝ միայն թե արդար գործը տեղից շարժվի։ Նրա աղերսանքը պայմանավորված էր նաև նրանով, որ արդեն նախնական զրույցների ժամանակ որոշ մարդկանց կողմից հանդիպել էր դիմադրության և Ազգերի լիգայի պլենար նիստում ունեցած զեկուցման սկզբում էլ ազդարարեց. «Ժողովի մի քանի անդամները արդեն հայտնել են ինձ իրենց դարմանքը, որ ես ձեր առաջ հանդես եմ գալիս այն սխեմայով, որը նրանք համարում են անգործնական, եթե ոչ ֆանտաստիկական»²։ Հանուն վեհ ու արդար գործի, նանսենը իր ելույթի վերջում դիմեց նաև աղեսանքի, որպեսզի շարժի «մեծերի» գույթը իրենց զոհերի նկատմամբ... Բայց, ավազ, անդրավելի էին իմպերիալիստների շռուգունեան սրտերը, որոնք բարբախում էին դուարների ու ստեղծվելների ուժով, որոնք փոխառություն տրամադրելով նույնիսկ բուրժուական Հունաստանին, հետամտում էին բացառապես տրեսական ու քաղաքական շահեր։ Դա առավել ևս պետք է արտահայտվեր սովետական երկրի նկատմամբ, որի դեմ վարում էին թշնամական զիծ։ Նրանք կատաղում էին, որ Ազգերի լիգայի բարձր կոմիսար Ֆ. Նանսենը զովում էր սովետները, զրվատում նրանց ժողովրդական քաղաքականությունը։ Այդ առթիվ Ս. Փի-

¹ Հայկ. ՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 530, թ. 5։

² Նույն տեղը, թ. 4։

բումյանը դեռ 1925 թվականի սեպտեմբերի 27-ին՝ Փարիզից Անդրերկրկոմին և ՀՍՍՀ Ժողկոմխորհին ուղարկած նամակում գրում է. «Իր բոլոր ճառերում դ-ր Նանսենը մեծ զովասանքով է խոսում Սովետական Հայաստանի կառավարության մասին, որպես լիակատար վստահության արժանի, ընդունակ և եռանդուն կառավարության, արտահայտում է իր զարմանքը նրա եռանդի ու գործնականության վրա»¹։ Նման վերաբերմունքը միայն ուժեղացնում էր արևմտյան տերությունների կառավարողների հակակրանքը իրենց իսկ նշանակած ժբարձր կոմիսարի» նկատմամբ, իսկ նա, եթե նույնիսկ կոչերին «կարմիր կոմիսար», հաստատ էր իր ընտրած ուղուն և վեր էր կանգնում իմպերիալիստների նենգ հաշիվներից ու պլաններից։

Լսելով Ֆ. Նանսենի զեկուցումը, Ազգերի լիգայի պլենար նիստը այն ընդունեց սուսկ ի դիտություն և սեպտեմբերի 15-ին միաձայն որոշեց՝ զլիսավոր կոմիսարի առաջարկությունը հանձնել 5-րդ հանձնաժողովի («Հումանիտական») քննությանը։ Հաջորդ օրը Հայաստանի միջազգային լիգան Ժնևի հյուրանոցներից մեկում նանսենի պատվին կազմակերպեց հատուկ ճաշկերույթ, որին հրավիրված էր Ազգերի լիգայի ասամրլիայի նախագահ Ռ. Դանդուրան։ Ըստ էության այդ հավաքը կազմակերպվել էր հայանպաստ մթնոլորտ ստեղծելու համար, և պատահական չէ, որ «Ժուռնալ դը Ժնևը» գրեց. «Իրականին մեջ ատիկա հուղիչ, սրտապնդող և միանգամայն օգտակար ու գործնական ցույց մը եղավ։ Հացկերույթին պատրվակն էր ողջունել տոթթ. նանսենը և իր աշխատակիցները՝ իրենց Հայաստանի միսիոնեն դարձին, բայց, իրոք, ասիկա խորհրդակցական ժողով մը եղավ, ուր զորպես ի հայտ եկավ բոլոր սրտի տեր մարդոց ամոթը հանդես մեծ կառավարությանց անտարբերությունը ազգի մը համար, որը իբր դաշնակից ճանաչված է Համաձայնության կողմե»²։ Ելույթներ ունեցան նանսենը, Բրուկերը (Բելգիայից), Զիրատուն (Իտալիայից), Մանդելշտամը, Բաշալյանը, Ալբեր Թոման, Դանդուրան։

Սեպտեմբերի 17-ին 5-րդ հանձնաժողովն ունեցավ իր առաջին նիստը, որին նախագահում էր Նորվեգիայի առաջին պատվիրակ Մուլինքելը։ Մասնակցում էին Անգլիայի ներկայացուցիչ

¹ Հայկ. ՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 264, թ. 205։

² «Ապագա», 26. 9. 25։

դրուհի Աթուրը, Ֆրանսիայի ներկայացուցիչ Պամար և ուրիշները Քննարկվեցին հիմնականում տեխնիկական հարցեր (հայ գաղթականների տեղավորման վերաբերյալ), որոնց մասին բացատրություններ տվին Նանսենը, Կարլն ու Բաշալյանը: Նույն հանձնաժողովի սեպտեմբերի 18-ի նիստը քննարկեց առավելապես հարցի բազմազան կողմը և «տոթք» նանսեն իր ճառերուն ամենեն ազդուն թերևս այս անգամ էր, որ խոսեցավ, ի վեր հանելով նվբոպայի բոլոր պարտավորությունները հանդեպ հայերուն»: Նա նորից հանդես եկավ իր հանձնաժողովի նախագծի հիմնավորմամբ և մեծ պետությունների կողմից փոխառություն ստանալու առաջարկով, ընդ որում այս անգամ նա խնդր է դնում հայերին վերադարձնել այն 5 միլիոն ֆունտ ստեռլինգը (կամ գոնե նրա մի մասը), որը Թուրքիան գլխի էր նրանցից ու պահ տվել Բեռլինի բանկին, իսկ պատերազմից հետո անցել էր դաշնակիցներին: Ի դեպ՝ նմանատիպ մի փաստի մասին Նանսենը խոսեց նաև Ազգերի լիգայի պլենար նիստում (1925 թվականի սեպտեմբերի 12-ին): Նա հիշեցրեց, որ արևմտյան տերությունները բնագրավել են հայերի նաև այն ավանդները (դեպոզիտները), որոնք զբրվել են եվրոպական բանկերը մինչև 1922 թվականի ջարդերը Զմյուռնիայում և այժմ չեն կարողանում ետ ստանալ: Դրա դեմ հայերը արգարացիորեն բողոքում են, և Նանսենը հույս է հայտնում, որ գոնե դատարանով կամ մի այլ կերպ «իրավացի լուծվի այդ կարևոր հարցը»:

Նանսենն այն կարծիքին էր, որ եթե այդ գումարները վերադարձվեին իրենց տերերին՝ հայ գաղթականներին, ապա նրանք լիովին կտեղափոխվեին Սովետական Հայաստան և նույնիսկ փոխառության կարիք չէր լինի: Այդ առիթով Պողոս Նուբարը 1925 թվականի սեպտեմբերի 29-ին հատուկ նամակ գրեց Ֆ. Նանսենին, որտեղ Բարեգործականի ու իր անունից հայտնեց «երաժամագիտություն այն ուժի ու ճարտասանության համար, որոնցով դուք ստանձնած եք հայերիս պաշտպանությունը: Ամենահամոզիչ փաստերով Դուք շատ տեղին հիշեցրել եք մեծ պետություններին պարտավորությունը, — մասնավորապես Բուրժուիների և Ասքվիթի նամակում ուղղված անցյալ տարի Մակդոնալդին, — և ցույց տվիք, թե Ձեր ծրագրերը հենվում է այնպիսի լուրջ հիմքերի վրա, որ կարելի է իրականացնել առանց երաշխավորության պետությունների, եթե վերջիններս տրամադիր չեն

տալու՝ հակառակ իրենց որոշումին»¹: Սակայն պնդաճակատ արևմտյան կառավարողները տեղից չշարժվեցին և որսածը բաց չթողին: Պատահական չէ, որ նախօրոք զգալով այդ, Նանսենը գերադասում էր «բացել միջազգային մարդասիրական փոխառություն»²:

Նշենք, որ այդ ժամանակ ժնեում էր նաև հայ անվանի աշխարհագետ Զ. Խանզատյանը (հրավիրված էր Ազգերի լիգայի նստաշրջանին որպես Մոսուլի գործի գիտակ), որը Ֆ. Նանսենին նվիրեց իր կազմած «Թուրքիայի տնտեսական աշխարհագրություն» առլասի մեկ օրինակը և սեպտեմբերի 30-ին ստացավ հետևյալ նամակը. «Միրելի պարոն, ներկայիս կուզամ շնորհակալությունս հայտնելու Թուրքիո տնտեսական աշխարհագրության Զեր հիանալի առլասին օրինակին, զոր ինձ զրկելու բարություն ունեցած էիք: Պետք չունիմ ըսելու, թե որքան կզնահատեմ Ձեր ազնվությունը և որքան հիացած եմ այդ առլասին սքանչելի երկասիրություն վրա»³:

Հանձնաժողովի նիստում ելույթ ունեցավ նաև տեխնիկական էքսպերտ Զարյո Դուպուիսը, որը հատկապես մասնագիտական գիրքերից հիմնավորեց առաջադրված նախագիծը և նրա իրականացման կարևորությունը հայ գաղթականության համար: Նույն ողով հանդես եկավ Աշխատանքի միջազգային բյուրոյի նախագահ Ալբեր Թոման, որը, ինչպես հաղորդում է Ս. Փիրումյանը, հայտնեց, թե բյուրոյի կարծիքով «Հայաստանի սովետական կառավարությունը իրոք ժողովրդական կառավարություն է, որի երաշխավորությունը կարելի է լիովին վստահել»⁴: Նա նշում էր, որ փոխառության հարցը կարող է հեշտությամբ լուծվել, եթե այն երաշխավորեն մեծ պետությունները կամ դանվի Ազգերի լիգայի հովանավորության տակ: Մինչդեռ բյուրոյին հակադիր գիրքերից խոսեց խորվաթական բուրժուական գործիչ Ստեփան Ռադիչը. նա դեմ էր նանսենյան նախագծին, գտնելով, որ «ոչ մի Հայկական հանրապետություն գոյություն չունի... Ռադիչի հայտարարությունը շատ ծանր տպավորություն թողեց ինչպես նանսենի, այնպես էլ մյուս մասնակիցների վրա»⁵:

1 «Պայթար», 1. 5. 55:

2 «Պայթար», 3. 5. 55:

3 «Ապագա», 24. 10. 25:

4 Հայկ. ՍՍՀ ՀՀՍՀ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 264, թ. 206:

5 Նույն տեղը, թ. 207:

1 Հայկ. ՍՍՀ ՀՀՍՀ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 530, թ. 6:

Հինգերորդ հանձնաժողովի քննարկումն էլ հանդես եկավ նրան, որ որոշվեց առաջադրված հարցի մանրամասն ուսումնասիրումը հանձնարարել Պ հոգուց կազմված ենթահանձնաժողովին: Այստեղ ծավալվում է ավելի մեծ գրույց և առավել հստակություն է երեւում զանազան պետությունների վերաբերմունքը: Այդպես, ենթահանձնաժողովի նախագահ, Անգլիայի պատվիրակ ղրսուհի Աթոլը, նախ վկայակոչելով Բուրդուինի ու Ասքլիթի նախկին դիմումը Մակդոնալդին՝ հայկական փողերի մասին, «Կիստի իր պետին կողմն ճանաչված հայկական իրավունքն այդ դումարի վրա, այն միամիտ պատճառով, թե պ. Պոլտուին այն ժամանակ, երբ բարձրացրեք է այդ հարցը, սոսկական անհատ էր»¹: Երկրորդ, նա ուղղակի «իր կառավարության անունից հայտարարեց, որ նա չի կարող ո՛չ փոխառություն տալ և ո՛չ էլ երաշխավորել այն որևէ սովետական հանրապետության համար»: Իրոք, դա ոչ թե սոսկ լեզի Աթոլի անձնական կարծիքն էր, այլև անգլիական կառավարության պաշտոնական տեսակետը, մի կառավարություն, որի ֆինանսների մինիստր Ուինստոն Չերչիլը նախագծի վերաբերյալ հեռագրել էր, թե «Մեծ Բրիտանիան չի կարող պաշտպանել այդ առաջարկությունը»: Իր վճարները-Հոյերը, անդրադառնալով Չերչիլի այդ վարքագծին, գրել է. «Այդպիսով, նա սեպ խրեց ամբողջ գործի մեջ»²: Ինքը՝ Ֆ. Նանսենը, 1925 թվականի սեպտեմբերի 20-ին Լ. Սուլցբերին գրած նամակում նշում է, որ ժնկում «առավտից մինչև երեկո պայքար է ու պայքար: Ես այժմ պայքարում եմ հայերի համար փոխառություն ձեռք բերելու: Հանդիպում եմ մեծ դիմադրության, հատկապես Անգլիայի կողմից... Մեծ Բրիտանիան դիմադրում է ամեն ինչ»³: Նկատենք, որ բրիտանական կառավարության ղկամությունը մերկացրեց նաև 1925 թվականի աշնանը Սրևան ժամանած անգլիական պառլամենտի բանվորական խմբի ներկայացուցիչ Ուոլհեդը, որը Սովետական Հայաստանի ղեկավարներին ուղղակի ասաց. «Գլադատունը և նրա հետևորդները ժամանակին ձեր ժողովրդին բանաձևվեցով և սին խոստումներով են կերակրել: Նույնիսկ տոբթ. նանսենի անմեղ ծրագիրը, որ միայն երկու միլիոն էր պահանջում

հայ գաղթականների համար, մերժվեց բրիտանական կառավարության կողմից»¹:

Անգլիական կառավարության դիրքը ոգեշնչեց նրա պարունյորներին: Ֆրանսիայի ներկայացուցիչ Պամսն ասաց, որ իր կառավարությունը կարող է փոխառության երաշխիք տալ, եթե Անգլիան էլ երաշխավորի: Իտալական պատվիրակը նույնը կրկնեց, այն էլ հայերի ու նանսենի հետ ունեցած մասնավոր զրույցի ժամանակ: Ենթահանձնաժողովի մնացած անդամները նանսենյան նախագծին համակրանքով էին վերաբերվում: Ֆ. Նանսենը նշում է, որ անգլիական կառավարության անհաշտ վերաբերմունքը «անսպասելի էր իր համար», բայց դա արդեն փաստ էր և ըստ էության նույն դիրքին էին նաև Ֆրանսիան ու Իտալիան:

Ֆ. Նանսենը խստորեն վշտացավ ու զայրացավ: Նա Ռոբերտ Սեսիլին (Անգլիայի ներկայացուցիչն Ազգերի լիգայում) ասաց. «Սատանան տանի ձեր անխիղճ կառավարությունը: Բոլոր կառավարություններն անխիղճ են»: Դրանով հանդերձ նանսենը համակված էր լավատեսությամբ դեպի հայ ժողովուրդը և, ժնկում մանրամասն զրույցելով Արշակ Սաֆրաստյանի հետ, նշեց. «Թվում է, արևմտյան տերությունների կառավարությունները... կմերժեն գաղթականներին օգնել: Երբեքից ձակատագիրը նրանց կպատժի: Իսկ ձեր ժողովուրդը կվերածնվի և կնվաճի իր իսկական ազգային իրավունքները: Չկասկածեք դրանում»²:

Արևմտյան տերությունները, ձախողելով նանսենյան ծրագիրը, միաժամանակ տարածում էին ստահոգ լուրեր, որ պակսի իրենց մեղքը բարգեն ուրիշների վրա և հատկապես վարկաբեկ են սովետական իշխանությունը: Ըստ էության այդպիսի նպատակ էր հետապնդում Ռադիչի թունոտ հույսը, որն այնուհետև իր և ուրիշների կողմից համեմվեց նոր զրպատություններով: Դրանցից մեկի մասին հաղորդում է «Ապագա» թերթը. «Մոսկվային սեպտ. 24 թիվ հեռագիր մը կորականապես կհերքե Ռադիչի հայտարարության վրա ժնկի մեջ տարածված այն լուրը, որուն համաձայն, իբրև թե Չիչերին հայտարարած ըլլա, թե նանսենը լրտեսության մեջ կպարպի Հայաստանի մեջ և թե ի դեպ հաստատության դայն պիտի արտաքսեն Հայաստանն: Հեռագիրը կհայտնե, որ եթե

¹ «Երևան», 4. 10. 25:

² Лив Нансен-Хейер, Книга об отце, стр. 409.

³ Fridtjof Nansen, Brev, IV, s. 311—312.

¹ «Երևան», 22. 10. 25:

² Лив Нансен-Хейер, Книга об отце, стр. 410.

Ռատիշը ըրած է այդ հատարարութիւնը, ան ուրիշ նպատակ չէ ունեցած, եթէ ոչ խանգարել Հայաստանի ոռոգումի և հետեւաբար գաղթականներ ընդունելու ծրագիրը»¹։

Նանսներ, ջերմորեն ընդունված սովետական ղեկավարների, այդ թվում Գ. Զիչերինի կողմից, դատապարտեց այդ թշնամական բանասարկութիւնները և շարունակեց իր գործը։ Նա՝ Ալբեր Թոմասի, դը Բրուկերի և Ազգերի լիգայի ֆինանսական քարտուղարութիւն ղեկավար Արթուր Սոլտերի հետ միասին, Փարիզում մասնավոր տեսակցութիւն է ունենում սովետական լիազոր-ներկայացուցչութիւն քարտուղար Ս. Փիրումյանի հետ, որպէսզի պարզեն, թե «Հայաստանի կառավարութիւնը փոխառութիւն ապահովման ինչ միջոցներ կարող է առաջարկել՝ առանց անգլիական երաշխիքի փոխառութիւնը բավարար չափով իրացնելու համար»։ Ս. Փիրումյանը գրում է, որ իր զրուցակիցները հասկացնել տվին, թե արդո՞ք Հայաստանի կառավարութիւնը չի՞ համաձայնի երաշխիքներ տալ մշտական պարտավորութիւնների ու գերավանքի ձևով, որին ինքը վճռականորեն բացասական պատասխան տվեց, գտնելով, որ դա «անհամատեղելի է հանրապետութիւն արժանապատիւթիւն հետ»։ Այդ ժամանակ Ա. Թոմաս և Ֆ. Նանսներ հարց բարձրացրին, որ այնուամենայնիվ պետք է գտնել մի այնպիսի հարմար ձև, որն ապահովեր փոխառութիւնը և ընդունելի լիներ նաև անգլիական կառավարութիւն համար։ Նրանք գտնում էին, որ այդպիսին կարող է լինել մի ինքնավար (ավտոնոմ) մարմնի կազմակերպումը, որը մի կողմից՝ Հայաստանի կառավարութիւն հետ կնքած պայմանագրով կըստանան հողերի յուրացման ու գաղթականների տեղավորման գործը, իսկ մյուս կողմից՝ կկապվեր եվրոպական ֆինանսական շրջանների հետ փոխառութիւն ստանալու համար. «Իմ զրուցակիցները, — գրել է Ս. Փիրումյանը, — ըստ երևույթին, ենթադրում էին, որ այդ ավտոնոմ կազմակերպութիւնը կարող է ստանալ այն երաշխիքը, որպիսին Անգլիան չհամաձայնեց տալ անմիջապէս հայկական կառավարութիւն փոխառութիւնը, այսինքն, ինչպէս ասում էր Նանսներ, դա կլինէր մարդասիրական բնույթի յուրահատուկ կոնցեսիա, նախօրոք սահմանափակված շահութիւնով (փոխառութիւն տոկոսի չափով) կոնցեսիա, որը կըողարկեր հայկա-

կան կառավարութիւնը տրվող փոխառութիւնը»¹։ Նրանք խիստ մտահոգված էին տվյալ դեպքում գտնել հարցի գոնէ կոմպրոմիսային մի լուծում, որպէսզի ժամանակ շահին՝ սպասելով բարենպաստ իրադրութիւն, այլ կերպ «անգլիական դիմադրութիւնը կարող էր բուրբուղին խեղդել գործը»։

1925 թվականի սեպտեմբերի 23-ին կայացավ ենթահանձնաժողովի վերջին նիստը, որը որոշում ընդունեց վերոհիշյալ տրամադրութիւն ոգով։ Նախատեսվեց, որ Ազգերի լիգայի խորհուրդը կնշանակի 5 կոմիսարներ, որոնք բանակցութիւնների մեջ կըմտնեն թե՛ հայկական կառավարութիւն և թե՛ մյուս պետութիւնների հետ, կմշակվի ավտոնոմ կազմակերպութիւն ստատուսը, որը նրան լիազորութիւններ կտա կնքելու կոնցեսիա և բաց թողնելու փոխառութիւնը։ Նանսներ գտնում էր, որ այդ բանաձևը բավականին լայն է (կոնցեսիա և փոխառութիւն), որը նրան (ենթադրվում էր, որ Նանսներ կլինէր այդ ավտոնոմ կազմակերպութիւն նախագահը) կտար մանևրելու հնարավորութիւններ Հայաստանի կառավարութիւն հետ ունեցած բանակցութիւններում, որ այսպէս թե այնպէս փոխառութիւն գործը գլուխ կգա, որ դա (այդ փոքրիկ փոխառութիւնը) «փորձնական ու առաջին քայլն է» հետագայում Սովետական Միութիւնը տրամադրելու ավելի մեծ փոխառութիւն։

Դրանից հետո հայ գաղթականութիւն հարցը նորից տեղափոխվում է Ազգերի լիգայի 5-րդ հանձնաժողով, որի սեպտեմբերի 26-ի նիստում տեղի է ունենում մի նոր մանրամասն քննարկում։ Զեկուցում է Բելգիայի ներկայացուցիչ դը Բրուկերը, որը հավանութիւն է տալիս նանսեյան նախագծին և բազմակողմանիորեն հիմնավորում նրա իրականացման հնարավորութիւնն ու անհրաժեշտութիւնը։ Նա հիշեցնում է դաշնակիցների բազմաթիվ խոստումները հայերին և շեշտում, որ նրանց փոխառութիւն տրամադրելը ոչ միայն մարդասիրական գործ է, այլև «պատիվ խընդիր», ընդ որում այդ փոխառութիւնը լրիվ կերաշխաւորվի ինչպէս Հայաստանի կառավարութիւն, այնպէս էլ սովետական միութեանական բանկի կողմից։ Յուրացվող հողերն էլ միանգամայն եկամտաբեր են և արագութիւն կհատուցեն ծախսերը։ Զէ որ Սովետական Հայաստանում արդեն կատարվել են նմանատիպ աշխատանքներ, որոնք տվել են իրենց լավագույն արդունքները։

¹ «Ապագա», 10. 10. 25.

¹ Հայկ. ՍՍՀ ՀՀՍԵ ՊԿԱ, ֆ. 113, ց. 8, գ. 264, ք. 206.

Ուրեմն, պետք է համարձակորեն առաջ տանել «Նանսենի կողմից այնքան հիանալիորեն սկսած գործը», իսկ եթե Ազգերի լիգան այդ գործի նկատմամբ մնա «անտարբեր ու թշնամի», ապա դա «Լիգայի համար կլինի սև օր»¹։

Դարձյալ լավատեսությունը է համակված Ֆ. Նանսենի ճառը։ Նա նշում է, որ բարի ցանկություն դեպքում կարելի է առաջարկված «սխեման» կատարել և անօթևան հայ զաղթականներին տեղավորել իրենց փափագած հայրենիքում. «Երևանի հանրապետությունը միակ հողամասն է,— ասում է նա,— ուր մենք կարող կլինենք ազգային օջախ կառուցել հայ ժողովրդի համար։ Դա կլինի իսկական հայկական օջախ»։ Անդրադառնալով կազմված նախագծին՝ նանսենն ասում է. «Են հաստատապես համոզված եմ, որ այս սխեման գլուխ կգա և որ դա մեծ հաջողություն կլինի։ Դա լինելու է, բայց անհրաժեշտ է, որ Լիգան իր մեծ աջակցությունը հանդես բերի»²։

Հունաստանի պատվիրակ Պապան լիովին համամիտ էր դեկոմունիստներին և իր կառավարության աջակցությունը խոստացավ հայ զաղթականների տեղափոխման գործին։ Բարյացակամությամբ է խոսում Ավստրալիայի պատգամավոր տիկին Մակինոնին, որն սկզբում անդրադառնում է հայերի և հատկապես կանանց ու երեխաների խիստ ծանր վիճակին, նշում, որ դարեր շարունակ «Տալիբը ապրել են թշվառության, խոշտանգումի, տառապանքի ու խժժումի անհրաժեշտ մի այնպիսի վիճակում, որ լսելն անգամ կարող է մեր արյունը սառնեցնել»³։ Մարդկությունը չի կարող անտարբեր մնալ հայերի նկատմամբ, որոնք, չնայած բոլոր զրկանքներին, դիմացելուն են և ընդունակ Ավստրալիայում էլ կազմակերպվել է հանգանակություն ու տրամադրվել հայ որբերի խնամքին Անթիլիասում։ Տիկին Մակինոնին խոսում է այն սրտաճմբիկ փաստի մասին, թե ինչպես երկար ժամանակ քաղցած ու հյուսված երեխաները որբանոց ընկնելուց հետո գիշերները իրենց բարձիկներին տակ դնում էին մի կտոր հաց, վախենալով, որ գուցե հաջորդ օրը ոչինչ չլինի, ընդ որում «այս սովորությունից նրանց պոկելը ամիսներ խլեց»։ Նա դրվատում է Նանսենի սկսած գործը և զրտնում, որ պետք է անպայման օգնել նավաբնկություն և նիսարկված

ժողովրդի բեկորներին, նրանց փոխադրելու Հայաստան՝ այդ «ապահով ազգային օջախը»։

Ելույթներ են ունենում նաև Անգլիայի, Ֆրանսիայի ու Իտալիայի ներկայացուցիչները, որոնք, սակայն, բավարարվում են ընդհանուր հայտարարություններ անելով, հայերի նկատմամբ կարեկցանքի խոսքեր ասելով, ընդ որում զբսուհի Աթուր գերագասում է հայ զաղթականներին տեղավորել Հարավային Ամերիկայի երկրներում, ուր նրա կարծիքով Ազգերի լիգան պետք է իր գործակալները նշանակի։ Արտաոոց էր նաև Հուլանդիայի պատվիրակ Ֆրանսուայի ելույթը։ Նա նշեց, որ թե՛ Նանսենի նախագիծը և թե՛ զբ Բրուկերի ճառը «քաղաքական բնույթ ունեն, ուստի և պետք է քննարկվեն 6-րդ՝ քաղաքական հանձնաժողովում, որի պատճառով էլ Հուլանդիան ձեռնպահ է մնում քվեարկությունից»¹։

Չնայած այդ ամենին, 5-րդ հանձնաժողովը միաձայն բանաձև է ընդունում, որով ընդհանուր առմամբ հավանություն է տրվում նանսենյան առաջարկին և որոշվում է կազմել 5 հոգուց բաղկացած հանձնախումբ՝ նանսենյան նախագծի տեխնիկական կողմը նորից ուսումնասիրելու և փոխառություն հարցով Սովետական Հայաստանի ու եվրոպական պետությունների կառավարությունների, ինչպես նաև մասնավոր ընկերությունների հետ բանակցելու համար։

Այդ ըստ էություն դեռևս ոչինչ չխոստացող որոշումն առաջ է բերում վտարանդի սպիտակգլարգիականների և այլ թշնամիների կատաղությունը։ Այդպես, կադետ Ն. Ի. Աստրովը (Մոսկվայի նախկին քաղաքագրույթը) շանթ ու որոտ էր թափում և զայրացած նշում, որ հանձնաժողովի բանաձևը հանդիսանում է «փոխառության միջազգային հանձնարարական Սովետներին»։

Ս. Փիրումյանը, ամփոփելով հայ զաղթականության հարցի շուրջը ծավալված երկարատև քննարկումները, արդարացիորեն գրել է. «Բոլոր խճողակցությունները, վիճաբանություններն ու ճառերը՝ կապված այդ հարցի հետ, օբյեկտիվորեն մեծ դեր խաղացին սովետական հանրապետությունների կյանքի բոլոր բնագավառներում կայունության, կազմակերպման ու վիթխարի նվաճումների, ինչպես նաև մեր ազգային ծրագրի գրական պրոպագանդման գործում։ Սովետական իշխանության այնպիսի հակառակորդների, ինչպիսիք են Ալբեր Թոմայի և զբ Բրուկերի

1 Հայկ. ՍՍՀ 22ՄԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, դ. 530, ք. 45։

2 Նույն տեղը, ք. 46, 48։

3 Նույն տեղը, ք. 51։

1 Հայկ. ՍՍՀ 22ՄԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, դ. 530, ք. 55։

հայտարարությունը, որ Հայաստանի սովետական կառավարությունը իսկական ժողովրդական կառավարություն է, որ նա լուծել է վիթխարի կազմակերպական խնդիր և արժանի է վստահության, մեծ տպավորություն թողեց Ազգերի լիգայի կուլուարներում: Ռուսական և վրացական էմիգրանտ հակահեղափոխական գործիչները, որոնք հայտնվել էին կիզայի ժողովին, շքմել էին այդ պրոպագանդայից հօգուտ Սովետական Հայաստանի ու նրա կառավարության և բոլոր հայկական համայնքների դրական վերաբերմունքից սովետական իշխանության նկատմամբ և նույնիսկ փորձեր կատարեցին նվազեցնելու մեր բարոյական հաղթանակի արդյունավետությունը՝ հարձակումներ գործելով դր նանսենի և սովետական հանրապետությունների դեմ¹:

Ի հակադրություն այդ ամբաստանությունների, Ֆ. Նանսենը հետևողականորեն շարունակում է իր գիծը, ընդ որում սերտ կապեր հաստատելով սովետական ներկայացուցչության և հատկապես Ս. Փիրումյանի հետ: Այդ մասին է վկայում նաև նրա 1925 թվականի սեպտեմբերի 16-ի նամակը շվեյցարական պետական գործիչ Զ. Մոտային, որտեղ խնդրում է նրան՝ թույլատրել Ս. Փիրումյանին գալու Ժնև՝ «խորհրդակցելու ինձ և իմ կոլեգաների հետ Երևանի հանրապետությունում գաղթականների հաստատման հարցի շուրջը... Ես ձեզ երախտապարտ կլինեմ, եթե Գուբկարողանաք ինձ օգնել այս փոքրիկ հարցում, քանի որ հայերի համար գործի առաջընթացը կարող է կախված լինել պ-ն Փիրումովի հետ մեր ունենալիք բանակցություններից»:

Նանսենը միաժամանակ անձնական կապի մեջ էր Ս. Փիրումյանի հետ: Եւ 1925 թվականի սեպտեմբերի 29-ին Ժնևից երկու նամակ է գրում Փարիզ՝ Ս. Փիրումյանին, որոնցից առաջինում հաղորդում է, թե նրա մեկնելուց (Ժնևից) հետո 5-րդ հանձնաժողովի բանաձևը հաստատվեց Ազգերի լիգայի ասամբլեայի կողմից, իսկ կիզայի խորհուրդն էլ իրեն նշանակել է նախատեսվող կոմիսարների կազմում: Այժմ ինքը զբաղված է հանձնաժողովի կազմի լրացմամբ: Նա նշում է, որ կոմիսարները հավանաբար իրենց առաջին նիստը կունենան հոկտեմբերի 19-ին՝ Ժնևում կամ Փարիզում (վերջինս նախընտրելի է), որոնց «գլխավոր ջանքերը, անշուշտ, կլինեն անմիջապես բանակցություններ սկսել համաձայնության գլխավոր գծերի վերաբերյալ հայկական կառավարության և արեստների միջև: Այս բանակցությունների համար հնարավոր է, որ կոմիսարները կցանկանան անձնապես Ձեզ հետ տեսակցել և հույս ունեն, որ Գուբ պաշտոնական արտոնություն կունենանք նրանց հետ խոսելու Ձեր կառավարության անունից, անշուշտ, եթե Գուբ գտնում եք դա օգտակար և անհրաժեշտ»:

Նանսենը կոմիսարների հետ բանակցությունները հեշտացնելու համար Փիրումյանին խորհուրդ է տալիս նախօրոք կապվել էլիստ Ֆելիկսի հետ, որը հայկական փոխառության հանձնաժողովի քարտուղարն էր: Երկրորդ նամակում խնդրվում է այդ ամենի մասին իրազեկ պահել Հայաստանի կառավարությունը և հայտնել, որ նախատեսվում է Հայաստան ուղարկել մի ինժեներ (Ֆրանսիացի կամ անգլիացի), որպեսզի փոխառության շուրջը վարվեն անմիջական բանակցություններ և վերջնականապես նախապատրաստվի ոտոզման նախագիծը. «Ես չեմ կասկածում, — գրում է Ֆ. Նանսենը, — որ կառավարությունը ճշտությամբ կհասկանա այդ ինժեների աշխատակցության կարևորությունը, որի զեկուցագրերը վստահություն կենրնընեն կոմիսարներին ու պարտք տվողներին Փարիզում, լոնդոնում և այլուր»²: Գործի արագացման համար նա խնդրում է նաև, որ Հայաստանի կառավարությունն անհրաժեշտ նախապատրաստական աշխատանք տանի մինչև այդ ինժեների մեկնումը: Նշենք, որ այդ նամակները գրված են սիրով և ամեն անգամ վերջանում են հուզիչ խոսքերով. «Հավատացեք, պարոն Փիրումով, իմ սրտազեղ զգացումներին»: Սովետական ներկայացուցիչը նույնպիսի ջերմությամբ ու խոր հարգանքով է վերաբերվում նրան: Այսպես, Փիրումյանը 1925 թվականի հոկտեմբերի 3-ին պատասխանում է, որ ինքը ստացել է նրա երկու նամակները, զրանց մասին անմիջապես հաղորդել Հայաստանի կառավարությանը և միաժամանակ դրել Ֆելիկսին՝ հանդիպելու համար. «Ընդունեցեք, թանկագին ղեկավար նանսեն, իմ մեծագույն հարգանացս հավաստիքը», — եզրափակում է նա:

Ս. Փիրումյանը հալ գաղթականության հարցի քննարկման արդյունքների մասին մշտապես իրազեկ է պահում Անդրերկրում մին ու Սովետական Հայաստանի կառավարությանը և մասնավորապես 1925 թվականի հոկտեմբերի 5-ին հաղորդում Ֆ. Նանսենի

¹ Հայկ. ՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 264, թ. 207:

¹ Հայկ. ՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 238, թ. 120:

² Նույն տեղը, թ. 122:

խնդրանքը՝ ավելացնելով, որ մշակված նյութերը պետք է մինչև նույնմեթոդի վերջը ուղարկել Փարիզ, քանի որ Ազգերի լիգայի ֆինանսական կոմիտեն պետք է նիստ գումարի գեկտեմբերի 2-ին, իսկ խորհուրդը՝ 9-ին, «որտեղ պետք է աշխատանքների պլանը վերջնականապես հավանություն ստանա»։ Նա խնդրում է նաև իբևն կամ մեկ ուրիշի պաշտոնապես տալ համապատասխան լիազորություններ՝ բանակցություններ վարելու համար։ Վերջում Փիրումյանը նշում է, որ Նանսենը զշատ լավատեսորեն է նայում այդ փոխառությունն ստանալու հնարավորությանը, այն հաշվով, որ դարնանից սկսեն աշխատել։ Բայց դրա համար նա գտնում է միանգամայն անհրաժեշտ, որպեսզի ինչպես տեխնիկական պլանը, այնպես էլ ֆինանսական բանակցությունները ավարտվեն մինչև դեկտեմբերը, որովհետև, եթե բաց թողնվի Ազգերի լիգայի այս նստաշրջանը, ապա գործն անշարժ կմնա մինչև մյուս նստաշրջանը։ Անձամբ ես գործին նայում եմ ավելի պեսիմիստորեն, բայց և այնպես, ինչպես գրել եմ, գտնում եմ, որ փոխառություն ստանալու որոշ շնաներ կան և պետք է նախնական աշխատանք կատարել՝ Նանսենի համաձայնությամբ, որպեսզի նրան լիակատար հնարավորություն տրվի օգտագործելու ամեն ինչ՝ գործի գրական ավարտման համար»¹։

Ֆ. Նանսենը իր հերթին կատարում է ամեն ինչ, որպեսզի ձեռնարկվելիք միջոցառումները համաձայնեցվեն սովետական կառավարության հետ։ Մասնավորապես, նա ժնեից կյուսակեր վերադառնալիս Բեռլինում հանգիպում է ՍՍՀՄ արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինին և հաղորդում, որ Ազգերի լիգայի խորհուրդն ու ընդհանուր ժողովը միաձայն հավանություն են տվել Հայաստանին փոխառություն տալու իր առաջարկին։ Նախատեսվում է, որ ռոտզման աշխատանքները կկատարի կամ հայկական կառավարությունը և կամ նա կտրամադրի կոնցեսիայով, Վերեն՝ Նանսենին, երկրորդ դուր չի գալիս», — գրել է Գ. Չիչերինը 1925 թվականի հոկտեմբերի 2-ին Բեռլինից ՍՍՀՄ Ժողկոմխորհին և արտաքին գործերի ժողկոմատին ուղարկած նամակում։ Այդտեղ էլ նշվում է, որ փոխառություն ստանալու համար անհրաժեշտ է տեղությունների երաշխիքը. «Ֆրանսիան համաձայն է, բայց ոչ առանց Անգլիայի, իսկ Անգլիան այժմ մերժում է, բայց կարող է դեռ վերամտածել։ Առանց այդպիսի

երաշխիքի փոխառությունը շատ թանկ կնստի, բանկիրներն այնպես կքեթթեն, որ ոչինչ անել հնարավոր չի լինի»¹։ Նանսենը խնդրում է, որ Մոսկվան և Երևանն արագությամբ պատրաստեն իրենց կոնկրետ պլանները, որովհետև հավանաբար հոկտեմբերի 19-ին Փարիզում կհրավիրվի նախապատրաստական կոմիտեի (5 հոգուց կազմված հանձնաժողովի) առաջին նիստը, իսկ դեկտեմբերին նյութերը պետք է ներկայացվեն Ազգերի լիգայի խորհրդին։

Ստանալով Գ. Չիչերինի նամակը, նրա տեղակալ Մ. Լիտվինովը հոկտեմբերի 3-ին նամակ է գրում Հայաստանի Կ(Բ)Կ կենտկոմին ու Ժողկոմխորհին, որպեսզի Նանսենի համար որքան կարելի է արագ պատրաստեն համապատասխան նյութեր՝ գաղթականների վերաբնակեցման և ռոտզման աշխատանքների վերաբերյալ²։

Միաժամանակ Ֆ. Նանսենը 1925 թվականի հոկտեմբերի 14-ին Օսլոյից հեռագրում է Հայաստանի կառավարությանը, որպեսզի նրա «ներկայացուցիչը ամենամեծ հնարավոր իրավասություններով և կատարյալ ինֆորմացիայով գա մեր կոմիտեի առաջին ժողովին Փարիզում, որը կայանալու է Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, հավանաբար նաև Գերմանիայի ու Իտալիայի ներկայացուցիչների մասնակցությամբ։ Մտադրություն կա ժողովը հրավիրել հոկտեմբերի 19-ին, բայց կարելի կլինի մի քանի օր հետաձգել, եթե Ձեր ներկայացուցիչը կարող է հասնել»³։ Հաջորդ օրը (հոկտեմբերի 15-ին) Նանսենը նոր հեռագիր է տալիս և հաղորդում, որ «հայկական փոխառության կոմիտեն Փարիզում կգումարվի 20-ին», իսկ հոկտեմբերի 23-ին դարձյալ Օսլոյից հեռագրում է Հայկ. ՍՍՀ Ժողկոմխորհին կից գաղթականական կոմիտեին, որ Փարիզի ժողովը կկայանա հոկտեմբերի 30-ին և «հաջողությամբ համար համարում եմ ստիպողաբար կարևոր, որ Դուք ներկայացուցիչ ուղարկեք»⁴։

Հայաստանի կառավարությունը նախապատրաստում է անհրաժեշտ նյութերը և Անգլերկրկոմի հավանությամբ իր ներկայացուցիչն է նշանակում Ս. Փիրումյանին, որի մասին Ս. Համ-

1 Հայկ. ՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, դ. 264, թ. 203:

2 Նույն տեղը, դ. 292, թ. 41:

3 Նույն տեղը, թ. 54:

4 Նույն տեղը, թթ. 50, 55:

1 Հայկ. ՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, դ. 264, թ. 204:

բարձումյանը հեռագրում է Տ. Նանսենին¹։ Միաժամանակ Անդրերկրկոմի առաջին քարտուղար Գ. Օրբոնիկիձեն հեռագրում է Փարիզ՝ Ս. Փիրումյանին, որպեսզի նա պաշտոնապես Հայաստանի Ժողկոմխորհի անունից բանակցություններ վարի նանսենյան կոմիտեի հետ, ընդ որում «մերժի կոնցեսիան, ընդունի փոխառությունը Հայաստանի կառավարությանը, եթե պայմանները բարենպաստ են և փոխառության համար Միուսենական կառավարության պարտադիր թուլությունները»²։

Ստանալով անհրաժեշտ լիազորություններ, Ս. Փիրումյանն ավելի է ակտիվացնում իր գործունեությունը։ Գեո հոկտեմբերի 7-ին և ապա 15-ին Փարիզում սովետական ղեկավարները նրան այցելում է հայկական փոխառության հանձնաժողովի քարտուղար է. Ֆելիկսը և հաղորդում, որ շուտով կհամաձայնեցնեն կոմիտեին³ քննարկելու Հայաստանին տրվելիք փոխառության ֆինանսական կողմը, ընդ որում նրանց կհետաքրքրի Հայաստանի Ժողկոմխորհի իրավազորության հարցը (փոխառություն կնքելու համար), ի՞նչ պայմաններով նա կընդունի փոխառությունը և ի՞նչ երաշխիքներ կտա, արդյոք հնարավոր է Միուսենական պետքանկի երաշխիքը։ Ֆելիկսը խնդրում է, որ Ս. Փիրումյանը պատրաստ լինի պատասխանելու այդ հարցերին։ Նա ընդունում է այդ առաջարկը և միաժամանակ հայտնում, որ Հայաստանի Ժողկոմխորհը ոչ մի փոխառության չի համաձայնի, եթե նրան պարտադրեն այնպիսի երաշխիքներ, որոնք «անհամատեղելի են հանրապետության արժանապատվության հետ»։ Ուստի, պետք է որոշակի սահման ունենան կոմիտեի անդամների լիազորությունները, որի առթիվ Ֆելիկսն ասում է, թե «իր կարծիքով կոմիտեի անդամների ֆունկցիան կլինի այն, որ նրանք մի կողմից՝ բանակցություններ վարեն ֆինանսիստների հետ՝ փող ստանալու և Հայաստանին փոխառություն տալու լավագույն պայմաններ ստեղծելու համար, իսկ մյուս կողմից՝ մշակեն անհրաժեշտ համաձայնագիր Հայաստանի Ժողկոմխորհի հետ»³։ Դրանից հետո է. Ֆելիկսը հանդիպում է ունենում հայկական բարեգործականի, 204-ի և գաղթականական կոմիտեի ներկայացուցիչների հետ «մասնավորապես կայանալիք փոխառության մեջ հայերու մասնակցության մասին»։

¹ Հայկ. ՍՍՀ ՀՄԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, դ. 292, թ. 47։

² Նույն տեղը, թ. 46։

³ Նույն տեղը, թ. 52։

Հաստատությանց ներկայացուցիչները կրկնած են այն հավատարիքը, թե գործը հաստատուն հիմքերի վրա դրված պարագային հայերը կստանան զործի մեկ տասներորդ բաժինը»¹։

Վերջապես նշանակվում են նախատեսված կոմիտեի անդամները, որոնք կազմում են 5 հոգուց բաղկացած հանձնաժողով։ Նրա մեջ մտան Նորվեգիայից՝ ղոկտոր Տ. Նանսենը, Ֆրանսիայից՝ սենատոր Ժ. Պամսը (որն իր երկրի ներկայացուցիչներից մեկն էր Ազգերի լիգայում), Անգլիայից՝ ռոզգման ինժեներ լիբերալ Մ. Մակդոնալդը, Իտալիայից՝ կոմենդատոր (տնային կառավարիչ) Պոման, որին հիվանդության պատճառով սկզբում փոխարինեց Ե. Պետրելին (Փարիզում իտալական պետքանկի աշխատող) և ապա սինյոր Կոնտի Ռոսինին (Իտալիայի ֆինանսների մինիստրության նախկին ընդհանուր քարտուղար), Գերմանիայից՝ Գ. Բերկմանը (բանկիր, ֆինանսների մինիստրության ղեկավար գործիչներից)։

1925 թվականի հոկտեմբերի 29-ին է. Ֆելիկսը Փարիզում նորից է տեսակցում Ս. Փիրումյանի հետ և հայտնում, որ վաղը տեղի կունենա հանձնաժողովի նիստ և դրան հրավիրվում է նաև ինքը։ Իրոք, հոկտեմբերի 30-ի երեկոյան Ս. Փիրումյանի մասնակցությամբ բացվում է Ազգերի լիգայի հատուկ հանձնաժողովի նիստը, որին ներկա էին նրա անդամներ Տ. Նանսենը, Ժ. Պամսը, Մ. Մակդոնալդը, Ե. Պետրելին, Գ. Բերկմանը, ինչպես նաև Աշխատանքի միջազգային բյուրոյի նախագահ Ալբեր Թոման, Ազգերի լիգայի քարտուղարության ֆինանսական սեկցիայի վարիչ Արթուր Սոլտերին, նույն սեկցիայի այլ աշխատակիցներ և թարգմանիչներ։

Նախագահող Պամսը ճառ է արտասանում, որի հիմնական նպատակն էր պարզել, թե փոխառության համար Հայաստանի կառավարությունը ի՞նչ ունի երաշխիքներ կարող է տալ։ Նա անձամբ այն կարծիքին էր, որ նախ՝ Հայաստանին տրամադրվելիք միջոցները պետք է գտնվեն հենց հանձնաժողովի կամ Ազգերի լիգայի որևէ այլ օրգանի ձեռքում ու հսկողության տակ, և երկրորդ՝ Հայաստանում ռոզգման ենթակա հողը պետք է դառնա գրավ (կոնցեսիա), ինչպես նաև տրվեն այլ հատուկ երաշխիքներ։ Այնուհետև ձայնը տրվում է Ս. Փիրումյանին՝ պարզելու Սովետական Հայաստանի կառավարության տեսակետը։ Նա աներկմիտ ձևով հայտարարում է, որ Հայաստանի կառավարությունը նան-

¹ «Ապագա», 31. 10. 25։

սենի նախագիծը դիտում է որպես մարզասիրական գործ և կարող է բնդունել միայն նորմալ փոխառություն, այն էլ արտոնյալ պայմաններում: Ինչ մնում է հոգը գրավ դնելուն կամ կոնցեսիային, ապա դրանց մասին խոսք անգամ լինել չի կարող և այդ ոգով շարունակել վեճը բոլորովին ապարզուն կլինի:

Ս. Փիրումյանի այդ կարուկ հայտարարությունը շատերի համար անսպասելի էր և հանձնաժողովում առաջ եկավ որոշ իրարանցում: Պամսը ջղայնացած ասաց. «Այդ դեպքում էլ ինչո՞ւմն է Աղզերի լիգայի կամ իրենց հանձնաժողովի դերը»: Սովետական ներկայացուցիչը պատասխանեց, որ սովյալ դեպքում այդ հարցերը իր կոմպետենցիայից դուրս են: Դրությունը շտկելու համար ելույթ ունեցավ Ֆ. Նանսենը, որն ասաց, թե Հայաստանի կառավարությունն իրեն հավաստել է ռոտզվոզ հողերի եկամուտն օգտագործել փոխառության մարման համար և միաժամանակ ինքն այն տավորությունն է ստացել, որ երաշխիքներ կարող են տալ նաև Միութենական կառավարությունն ու պետքանկը. «Երեւմանում բոլորովին խոսք չի եղել այդ փոխառության ապահովման համար ինչ-որ հատուկ գրավներ ստեղծելու մասին, և ինքը ենթադրում է, որ հանձնաժողովը պետք է այժմ քննարկի այն միջոցառումները, որոնք ավելի նպաստավոր կզարձենն այդ փոխառության պայմանները»¹:

Այնուամենայնիվ, խորհրդակցության մյուս մասնակիցները ևս կանգնած էին Պամսի տեսակետի վրա: Ա. Քոման նույնիսկ հիշեցրեց, որ Աղզերի լիգայի ֆինանսիստներից մեկը ժնկում ասել է, թե իբր հողերի եկամտաբերությունը նույնիսկ չի ծածկի փոխառության 6 տոկոսը: Ուստի, անհրաժեշտ է «հատուկ երաշխիք՝ գրավի կամ կոնցեսիայի ձևով»: Այստեղ Քոման նկատում է, որ «այդպիսի երաշխիքները, իհարկե, կարող են կասկած առաջ բերել դրանց և հանրապետության ստվերներության անհամատեղելիության վերաբերյալ, բայց այդպես կպահանջեն վարկատուները»²: Նա նաև ցանկություն է հայտնում իմանալու Հայաստանի բյուջեի վիճակը, պետքանկի հզորության աստիճանը արտասահմանում: Պետրելին, պաշտպանելով հատուկ երաշխիքների տալու գաղափարը, գտնում էր, որ այդպիսիք կարելի է ստանալ ոչ թե պետքանկի, այլ կառավարության կողմից, ընդ որում

¹ Հայկ. ՍՍՀ ՀՆՍԵ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 356, Բ. 136:

² Նույն տեղը, Բ. 137:

«Հայկական կառավարության լեռնում» պետք է կանգնած լինի մոսկովյան կառավարությունը»: Դրանց միացան նաև Բերկմանն ու Մակդոնալդը, որն ի դեպ ասաց, թե Հայաստանի կառավարությունը կարող է երաշխիքի համար գրավ դնել նաև խմիչքներն ու ծխախոտը, իսկ շհերիքելու դեպքում պատասխանատու պիտի լինի իր ամբողջ բյուջեով:

Ֆ. Նանսենը ելույթ է ունենում երկրորդ անգամ, որպեսզի վիճարանությունը «հեռացնի անցանկալի ուղղություններից»: Նա մասնավորապես Ս. Փիրումյանին հայտնում է, որ դեռ առավել տյան հանձնաժողովը նիստ է ունեցել և որոշել ամենից առաջ ավարտել հողերի ռոտզման ու շորացման մանրամասն պլանի մշակումը և ինքը հույս ունի, որ Հայաստանի կառավարությունը կկատարի այդ, մանավանդ որ նա, անկախ ամեն ինչից, ինքն ուզում է իրականացնել այն: Բայց հանձնաժողովի հենց այդ նիստում որոշվել է նաև Հայաստան ուղարկել մի ինժեներին՝ հայ մասնագետներին հետ աշխատակցելու համար, իսկ դա կրարծրացների գործի միջազգային հեղինակությունն ու վարկատուների վրստահությունը: Եղրափակելով Նանսենն ասում է, որ «փոխառության պայմանների մասին վերջնականապես հարկ կլինի խոսել մանրամասն նախագիծ մշակելուց հետո և որ այժմ ամենազխատավորը՝ դա նախագծի պատրաստման արագացումն է, որով կկատարվի գործի տեխնիկական մասը և որը կհեշտացնի նախագծի ֆինանսական կողմի պարզեցումը»¹:

Նիստի վերջում նորից հանդես եկավ Ս. Փիրումյանը և հանգամանորեն բննադատեց ու հերքեց ելույթ ունեցողներին, ցույց տալով, որ «ներանց պահանջները անիրագործելի են» ոչ միայն քաղաքական նկատառումներով, հանրապետության սովերենություն տեսակետից, այլ և ֆինանսական, բանի որ Հայաստանի բյուջեն լիույի բավական է փոխառությունը մարելու համար, ուստի և ոչ մի հատուկ երաշխիքի կամ գրավի մասին խոսք լինել չի կարող: Նա կրկին պնդեց, որ փոխառությունը պետք է լինի սովորական ու արտոնյալ պայմաններով, այլապես ոչինչ դուրս չի գա: Ս. Փիրումյանը միաժամանակ խնդիր դրեց, որ հանձնաժողովն իր պահանջները ձևակերպի գրավոր: Դրանից հետո «հանձնաժողովի նախագահն ու անդամները հայտարարեցին, որ նրանք

¹ Հայկ. ՍՍՀ ՀՆՍԵ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 356, Բ. 138:

օգտակար են համարում շարունակել դիսկուսիան և որ բացառված չէ հեռանալ այդ դիրքից, եթե իրենք ավելի մոտիկից իմանան հայկական բյուջեի ընդհանուր կառուցվածքը»¹։

Հանձնաժողովի հոկտեմբերի 31-ի առավոտյան նիստին Ս. Փիրումյանը ներկայանում է սովետական դեսպանության ֆինանսական էքսպերտ կյուբիմովի հետ միասին, որը մանրամասն հաղորդում է անում ՍՍՀՄ և նրա մեջ մտնող հանրապետությունների ֆինանսաբյուջետային միջոցների բարեկարգ վիճակի մասին։ Չնայած դրան, հետո հանդես է գալիս Պամսը և ասում, որ «իր կարծիքով փոխառության համար երաշխիք պետք է որոնել Միութենական բյուջեում, քանի որ հայկական բյուջեն զեֆիցիտ ունի»։ Դրան Ս. Փիրումյանը պատասխանում է, որ «հայկական բյուջեն բալանսավորվում է առանց որևէ զեֆիցիտի», միանգամայն առողջ է և անշեղորեն աճում է, ուստի և «փոխառությունը կարիք չունի ոչ մի հատուկ երաշխիքի»։ Այդ ժամանակ Պամսը կարծես թե հրաժարվում է գրավների ու կոնցեսիաների գաղափարից, բայց փաստորեն առաջ է քաշում նույնատիպ միտք։ Հայկական բյուջեի եկամուտների բաժնում մտցնել հատուկ հոգված (թեկուզ խմիչքներից ստացված եկամուտները), որով պետք է մարվի փոխառությունը։ Երբ Ս. Փիրումյանը հարցրեց, թե ինչպիսի հսկողություն պետք է իրականացվի դրա վրա, Պամսը սկզբում ծամծմեց, բայց վերջում ասաց. «Անպայման միջազգային վերահսկողություն՝ հատուկ հանձնաժողովի միջոցով, որը կարիքի դեպքում և եթե դրա անհրաժեշտությունը լինի, կարող է նույնիսկ «իր ձեռքը դնել» այդ եկամուտների վրա»²։ Ս. Փիրումյանը նորից վճռական հակահարված տվեց և նշեց, որ Պամսի առաջարկի մեջ փաստորեն ոչ մի նորություն չկա և այդ «միջադաշին վերահսկողությունը» ոչ այլ ինչ է, եթե ոչ «հին պահանջի վարիացիան», որի հետ ոչ մի դեպքում չի համաձայնի սովետական կառավարությունը։ Նկատի ունենալով, որ Պամսի առաջարկը տանում էր դեպի փոխառության ձախողում և դրա մեղքն արևմտյան տերություններն անպայմանորեն կձգտեին զցել սովետների վրա, որպեսզի «արդարանան» արևմուտքի հասարակական կարծիքի ու հայ զաղթականների առաջ, Ս. Փիրումյանը պահանջեց. «Եթե Պամսի հայտարարությունը հանձնաժողովի կարծիքն

¹ Հայկ. ՍՍՀ 22ՄԵ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 356, թ. 139։

² Նույն տեղը, թ. 140։

է, պարտադիր է, որ այն ներկայացվի գրավոր ձևով»։ Նա մեխեց նաև Պետրելուն, որն ասաց, թե բոլոր փոխառություններն էլ արվում են այդ ձևով. «Ես պատասխանեցի,— գրել է Ս. Փիրումյանը,— որ ինձ հայտնի չէ, թե ինչ պայմաններով է փոխառություններ կնքում Խտալիան, բայց ոչ հին սուսաստանյան կառավարությունը և ոչ էլ առավել ևս սովետականը այդպիսի պայմաններ չգիտեն»¹։

Հանձնաժողովում նորից իրարանցում սկսվեց, Պամսը և ուրիշներ գնացին հարևան սենյակը, իսկ Մակդոնալդը Ս. Փիրումյանին մեղմաբար ասաց, թե իրենք բոլորովին էլ չեն ուզում որևէ արտաքին վերահսկողություն, այլ սոսկ նպատակ ունեն ապահովել հայկական բյուջեից որևէ մասհանում՝ փոխառության մարման համար, իսկ դրա «վերահսկողությունը կիրականացնի ինքը՝ հայկական կառավարությունը»։ Փիրումյանը խնդրեց, որ այդ առաջարկը ևս ձևակերպվի գրավոր։ Վերադարձած Պամսն առաջարկեց ընտրել ենթահանձնաժողով, որը կբաղդատի եղած կարծիքները և գրավոր ձևով կներկայացնի համաձայնեցված եզրակացություն, այն հաշվով, որպեսզի շնորհվենք դատարկ ձեռքերով»։

Արագությունը նախապատրաստվում է այն և գրավոր ներկայացվում հանձնաժողովի նույն օրվա երեկոյան նիստին, որին, սակայն, չէին մասնակցում Պամսը, Պետրելին և Ա. Թոման։ Բայց նրանք գործուն դեր էին կատարել նոր առաջարկների ձևակերպման մեջ, միաժամանակ գերադասելով հեռու մնալ դրանց հրապարակային քննարկումից։ Այդ նիստը բացվեց Ֆ. Նանսենի նախագահությամբ, և նա էլ ցանկություն հայտնեց, որ կարծիքների փոխանակությունը լինի ավելի ինտիմ։ Այսպես Ֆ. Նանսենը Ս. Փիրումյանին հայտնեց ենթահանձնաժողովի մշակած հետևյալ 4 կետերը. 1) Արդյոք հայկական կառավարությունը պատրաստ է մի քանի որոշակի եկամուտներ հատկացնել փոխառության մարմանը։ 2) Արդյոք նա համաձայն է, որ առանց Ազգերի լիգայի ավտոնոմ կազմակերպության թույլատվության չիջեցնի այդ եկամուտների հարկադրման շափը, քանի զեռ դրանք ունեն հատուկ նշանակում (փոխառության մարման համար)։ 3) Արդյոք նա համաձայն է, որ գանձվող եկամուտներն անմիջապես մտցվեն բանկ կամ մի կազմակերպություն, որն անկախ է կա-

¹ Հայկ. ՍՍՀ 22ՄԵ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 356, թ. 141։

առավարութիւնից: 4) Արդո՞ր Հայաստանի կառավարութիւնը պատրաստ է ավելացնելու հատուկ նշանակման եկամուտների քանակը, եթէ դրանք չհերիքեն, և կարո՞ղ է փոխառութիւն մարման համար օգտագործել պետական ընդհանուր ֆոնդերը:

Ս. Փիրումյանն անմիջապէս պատասխանեց, որ ինքն այդ ամենի մասին իրազեկ կ'պահի իր կառավարութեանը, բայց անձամբ այն կարծիքին է, որ «այդ հարցերը հեռու չեն այն առաջարկներէ, որոնք արվել են նախորդ նիստերում և, հակառակ Մակդոնալդի հայտարարութեան, երկրորդ հարցը կրում է կառավարութեան արտաքին գործոնով ճնշելու բոլոր հետքերը և նրա ձեակերպումը շարունակում է ինձ համոզել, որ հանձնաժողովը չի հրաժարվել հատուկ երաշխիքների և նույնիսկ արտաքին ներգործութեան գաղափարից»¹:

Այդ ժամանակ հանձնաժողովի անդամներն սկսեցին «համոզել» Ս. Փիրումյանին, որ դա կատարվում է ոչ այնքան իրենց համար, որքան վարկատուների, քանի որ ներկա պայմաններում շատ դժվար է առանց հատուկ երաշխիքների փոխառութիւն վերցնել, այն էլ մի այնպիսի հեռավոր հանրապետութեան համար, ինչպիսին է Հայաստանը: Բերկմանն էլ հիշեցրեց, որ Գերմանիան «Հայաստանից փոքր չէ» և այնուամենայնիվ պարտավորութիւններ է վերցրել Դաուեսի պլանով, որը շատ ավելի ծանր է: Հասկանալի է, որ նախ՝ այդ «փաստարկները» հարցի էութիւնը չէին փոխում, և երկրորդ, ինչպէս նշեց Ս. Փիրումյանը, Հայաստանի ու նրան տրվելիք փոխառութեան հետ Գերմանիայի ու Դաուեսի պլանի անալոգիան բոլորովին անհիմն է, որովհետև Գերմանիան պատերազմող պետութիւն է եղել և պարտվելուց հետո վճարել էր ռեպարացիաներ, ընդ որում Դաուեսի պլանը, ինչքան էլ ծանր լիներ, պետք է նպաստեր նրա ռազմարդուներակա պոտենցիալի վերականգնմանն ընդդէմ Սովետական Միութեան, մինչդեռ Հայաստանը պատերազմի, իմպերիալիստական պետութիւնների, այդ թվում արևմտյան տերութիւնների, զոհերից մեկն է, նրա ժողովուրդը կոտորվել է կամ ցրվել աշխարհով մեկ և միայն սովետական կառավարութիւնն է, որ առանց որևէ մեկի օգնութեան դիմելու, անում է ամեն ինչ հայ ժողովրդի դրութիւնը բարելավելու համար, հայ գաղթականներին հայրենիք վերադարձնելու համար: Այժմ Ծ. Նանսենի նախաձեռնութեամբ Ազգե-

րի լիգան փորձում է ինչ-որ «մարդասիրական գործ» կատարել, և, հետևապէս, Հայաստանին տրվող փոխառութիւնն էլ պետք է լինի ոչ միայն սովորական, այլև արտոնյալ պայմաններով, մանավանդ որ սովետական կառավարութիւնը լրիվ երաշխավորում է նրա մարումը և դրա համար ունի բոլոր հնարավորութիւնները. «Հայաստանի ֆինանսական դրութիւնը,— ասաց Ս. Փիրումյանը,— և նրա ֆինանսական կապերը Միութեան հետ կասկածներ չեն հարուցում նրա վարկունակութեան վերաբերյալ... Հատուկ երաշխիքներ, ինչ ձևով էլ դրանք արտահայտվեն, անհամատեղելի են հանրապետութեան արժանապատվութեան հետ և այդ պահանջները չունեն ոչ մի տնտեսական ու ֆինանսական հիմք»¹: Այս սովետական ներկայացուցիչը հարցնում է, թէ արդո՞ք վերոհիշյալ առաջարկները պետք է դիտել որպէս հանձնաժողովի վերջին խոսք, որպէսզի ինքը համապատասխան հաղորդում անի իր կառավարութեանը:

Հանձնաժողովի անդամները նորից են սակարկում և փորձում համոզել Ս. Փիրումյանին, որ իրենք հեռու են որևէ բան փաթաթելու Սովետական Հայաստանին, նսեմացնելու նրա արժանապատվութիւնը և միայն հաշվի են առնում, որ վարկատուներն այդպէս կ'պահանջեն, ուստի, պետք է զալ այնպիսի համաձայնութեան, որն «ընդունելի լինի և՛ հայկական կառավարութեան համար, և՛ վարկատուների համար»: Սակայն Ս. Փիրումյանը մնաց անդրդվիկ և վարեց միանգամայն ուղղամիտ գիծ. «Ես պատասխանեցի,— նշել է նա իր զեկուցագրում,— որ Հայաստանի ու Միութեան ֆինանսական հզորութեան պատկերի առաջ ծիծաղելի է խոսել ինչ-որ երաշխիքների մասին՝ մի քանի տասնյակ հազար ռուբլու գումարի պարտավորութիւնների համար»²: Այս շարունակելով, Ս. Փիրումյանը գրում է, որ նիստը վերջանալուց հետո Ազգերի լիգայի ֆինանսական քարտուղարութեան աստիճանավորներից մեկը (սեզլուհի) հանդիպում է իր թարգմանին և «կոնֆիդենցիալ» կերպով ասում, որ ենթահանձնաժողովում մեծ մարտ է եղել, ընդ որում նանսենը, Բերկմանը և Մակդոնալդը «մեր բարեկամներն են և անպայմանորեն ուզում են այդ գործը զլուխ բերել, և շատ ափսոս, որ Փիրումովը երկու օրվա ընթացքում ոչ մի զիջում չկատարեց իր ելակետից, այն ժամա-

¹ Հայկ. ՍՍՀ ՀՀՍԵ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, դ. 356, թ. 43:

² Նույն տեղը, թ. 44:

նակ, երբ հանձնաժողովը հեռացավ կոնցեսիաների, գրավների, արտաքին վերահսկողության պահանջներից մինչև այն զուտ ձևակերպական պահանջները, որոնք ձևակերպվել են»։ Հետո նույն թարգմանին է մոտենում Նանսենի հանձնաժողովի քարտուղարը և դարձյալ «կոնֆիրմացիա»՝ ձևով հաղորդում, որ «ես չտապեմ այդ շորս հարցերի մասին հարցում անելիս կառավարությանը»¹։

Հանձնաժողովի վերջին նիստը տեղի է ունենում նոյեմբերի 1-ին՝ Դրան Ս. Փիրումյանը չի մասնակցել, բայց իրազեկ է դարձել նիստի արդյունքներին։ Որոշվել է. 1) ինչպես հայկական կառավարությանը թույլատրել Հայաստան մեկնել անգլիացի ինժեներ Քինդերին՝ թե՛ բանակցությունների և թե՛ հողերի յուրացման պլան ու նախահաշիվ կազմելու համար. «Նանսենը խնդրել է նախազգուշացնել, որ նա ինքն է պնդել ուղարկելու հենց այդ ինժեներին, որովհետև նրա մասնակցությունը պլանի մշակմանը եվրոպացիների համար անհրաժեշտ հեղինակություն կտա և այդ ժամանակ ոչ ոք չի կարող նրան կասկածել՝ վկայակոչելով հայ մասնագետների անժանոթությունը տեխնիկական պատրաստականության հետ, քանի որ անգլիացին պիտի ուղարկվի պլանի պատրաստման մասնակիցներից մեկի կողմից»²։ 2) Բանակցությունների մեջ մտնել Ֆրանսիայի, Անգլիայի, Գերմանիայի, Իտալիայի, Հոլանդիայի և Բելգիայի կառավարությունների հետ՝ փոխառություններ արձայնաբեր ստանալու, ինչպես նաև բանկերի հետ՝ փոխառությունը տեղավորելու համար։ Նանսենը ասել է, որ ինքը, հավանաբար, կմեկնի Լոնդոն հենց այդ հարցով։ 3) Հանձնաժողովը մնում է այն համոզման, որ եթե կառավարությունները համաձայնվեն փոխառություն արձայնաբերել, ապա անպայման հայկական կառավարությունից կպահանջեն հատուկ երաշխիքներ (ենթահանձնաժողովի 4 կետերի ոգով), ուստի անհրաժեշտ է, որ Ս. Փիրումյանը կապվի այդ կառավարությունների հետ և ունենա Հայաստանի կառավարության պատրաստի պատասխանները։

Վերջում Ֆ. Նանսենը խնդրել է ամեն կերպ արագացնել տեխնիկական մանրամասն նախագծի կազմումը, որը հնարավորություն կտար հեշտացնելու հարցի ֆինանսական կողմի լուծումը։ Պետք էր շտապել, քանի որ հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի

պիտի ունենար դեկտեմբերի 9-ին՝ Աղզերի լիզայի նստաշրջանի հետ միասին։

Նշենք, որ հանձնաժողովն իր նիստում լսեց նաև արտասահմանում գտնվող հայ բարեգործական ընկերությունների պատվիրակությանը, որը նորից պատրաստակամություն հայտնեց հնարավորին չափ օժանդակել հայ գաղթականներին Հայաստան տեղափոխելու գործին¹։

1925 թվականի նոյեմբերի 2-ին Ս. Փիրումյանը հանձնաժողովի աշխատանքների մասին զեկուցագիր է ուղարկում ՌԿ(Բ)Կ Անդրերկրկոմիտեին և Հայաստանի Ժողկոմխորհին։ Այնտեղ նա նշում է, թե ինչպես հանձնաժողովը սովետական արդարամիտ գծի ճնշման տակ նահանջ է կատարել իր նախկին դիրքերից (իրային գրավներ, հատուկ երաշխիքներ և միջազգային ֆինանսական վերահսկողություն) և ներկայացրել նոր առաջարկներ, որոնք թեև դարձյալ «անբնորոշելի են մեզ համար», բայց վկայում են նրա զիջողականության միտումի մասին. «Հաշվի առնելով այդ, ես կարծում եմ, որ կարելի է հասնել հետագա զիջումների, մասնավորապես 2-րդ և 4-րդ հարցերի վերացման, որից հետո ըստ էության կմնա միայն այն պահանջը, որպեսզի հայկական բյուջեի եկամտի մասում նշվի եկամուտների հատուկ աղբյուր փոխառության մարման համար։ Ընդ որում այդ դեպքում նման աղբյուրը ոչ ոքի կողմից չի վերահսկվում, ընտրվում է հենց կառավարության կողմից, իսկ մարման անհրաժեշտ գումարը մտցվում է Հայաստանի բանկերից մեկը՝ ամեն տարվա վերջին»²։ Ս. Փիրումյանը խնդրում է տեղում քննարկել այդ հարցը և արդյունքի մասին իրազեկ պահել իրեն, տալ որոշակի հրահանգ։ Նա նաև գտնում է անհրաժեշտ, որ թույլատրվի Հայաստան մեկնելու Քինդերին, որը պնդում է ինքը՝ Նանսենը. «Ես կարծում եմ, որ այդպիսի թույլտվություն անպայման պետք է տալ, քանի որ Նանսենը լիովին իրավացի է, որ այդ ինժեների մասնակցությունը նախագծի հակառակորդների համար անհնարին կդարձնի վարկաբեկելու նախագիծը՝ տեխնիկական տեսակետից, իսկ մյուս կողմից՝ դրա մասնակցությունն աշխատանքին Նանսենին և հանձնաժողովին այնքան շուտ կընդգրկի այդ գործի ռեալիզացիայի մեջ, որ նրանց, հետո առանց մեծ խայտառակության եվրոպայի հասարակական կարծիքի առաջ, չի հաջողվի խուսա-

¹ Հայկ. ՍՍՀ 22ՄԾ ՊԿԱ, հ. 113, ց. 3, գ. 356, թ. 144

² Նույն տեղը, թ. 145։

¹ Հայկ. ՍՍՀ 22ՄԾ ՊԿԱ, հ. 113, ց. 3, գ. 264, թ. 162։

² Նույն տեղը, գ. 296, թ. 56։

փել իրենց իսկ պատրաստած նախագծի իրագործումից»։ Շարունակելով, Ս. Փիրումյանը հատկապես ընդգծում է Ֆ. Նանսենի դերը, այն, որ նա «անպայմանորեն ու ազնվորեն լավ է տրամադրված մեր նկատմամբ» և որ «մենք հնարավորին չափ պետք է աջակցենք Նանսենին, հանձնաժողովում թեթևացնենք նրա աշխատանքը»¹։

Նշենք, որ Ֆ. Նանսենը, թեև խիստ վրդովված էր արևմտյան տերությունների վերաբերմունքից, բայց և չէր կորցնում հույսը։ Նա 1925 թվականի նոյեմբերի 7-ին կյուսակերից գրում է Ջոն Գորվիլին։ «Ես հենց նոր եմ վերադարձել հայերին փոխառություն տալու կոմիտեի Փարիզում կայացած նիստից։ Իսկապես դա ծանր գործ է, բայց չեմ կարող հրաժարվել հաջողության հույսից։ Հիմնական դժվարությունը հարուցում է բրիտանական կառավարությունը։ Ուրիշ կառավարություններ համաձայն են երաշխավորել փոխառությանը, եթե բրիտանական կառավարությունը միանա դրան։ Ես հույս ունեմ, որ վերջ ի վերջո այդպես էլ կլինի, քանի որ դա փոխառություն է ոչ թե սովետական հանրապետությունների ամբապնդման համար, այլ միայն հատուկ նրապատակի համար, որի առաջ, իմ կարծիքով, մեծ պարտավորություններ ունի Արևմտյան Եվրոպան»²։ Իրականում այդ հույսերը չարդարացան, որը, սակայն, բոլորովին չի նսեմացնում Նանսենի անկեղծ նվիրվածությունը հայ դատին, նրա մշտական ջանադրությունը՝ հայ գաղթականների դրության բարելավմանը։

Ելնելով դրանից և ցուցաբերելով միանգամայն բարյացակամ վերաբերմունք, սովետական կառավարությունն ընդառաջում է հանձնաժողովի օրոշմանն ու Նանսենի խնդրքին և 1925 թվականի դեկտեմբերի 16-ին Երևան է ժամանում ինժեներ Ուլիյամ Մակինտոշը (փոխարինել էր Քինդերին)։ Նա Հայաստանում մնում է մի քանի ամիս և աշխատում գործարար միջնորդում։

Շատ կարևոր էր հնարավոր փոխառության հատուցման երաշխիքի հարցը։ Այն լուծվեց համապետական մասշտաբով և ՍՍՀՄ արտաքին գործերի ժողկոմի տեղակալ Մ. Կիտվինովն ուղղակի ասաց, որ ենթադրվող փոխառության դիմաց կտրվի սովետական պետքանկի երաշխիքը. «Գաղթականների տեղավորման համար Հայկ. ՍՍՀ կառավարության կողմից միջազգային փոխա-

ռաթյուն կնքելու դեպքում ՍՍՀՄ պետական բանկը (պետբանկը) իր վրա է վերցնում այդ փոխառության (տոկոսների ու մարման) լիակատար սպասարկումն ու երաշխիքը»³։ Գրա հիման վրա Երևանում Նանսենի ներկայացուցչին որոշակիորեն հաղորդվում է, որ՝

1. Հայաստանի կառավարությունը ստացել է ՍՍՀՄ կառավարության համաձայնությունը Հայկ. ՍՍՀ կառավարության անունից կնքելու փոխառության պայմանագիրը։

2. Հայաստանի կառավարությունը հնարավոր չի համարում ապահովել փոխառությունը որևէ նյութական երաշխիքով՝ թե՛ գրավի ձևով և թե՛ ռոտզման ու շրջացման ենթակա հողերից ստացվելիք պետական մուտքով, և որ ընդհանրապես նա չի կարող թույլ տալ հանրապետության բյուջետային ինքնուրույնության սահմանափակում։

3. ՍՍՀՄ պետական բանկի տված երաշխիքը միանգամայն լրիվ և հաստատ կերպով ապահովում է փոխառության պայմանագիրը։

Վերջում նշվում է. «Միաժամանակ հարկ ենք համարում հիշեցնել, որ Հայաստանի կառավարությունը թե՛ այժմ և թե՛ պ. Նանսենի հետ ունեցած բանակցությունների ընթացքում հնարավոր չի դառնում հատկապես ապահովել փոխառությունը ռոտզված հողերից ստացվելիք մուտքով, այլ միայն մատնանշել է հողերի բարձր շահավետությունը, որպիսի հանգամանքը պետք է ներշնչի փոխատուներին համոզմունք, որ փոխտված գումարը ժամանակին և ճշտորեն կմարվի»⁴։

Մակինտոշը հայ մասնագետների հետ մասնակցում է նախատեսվող հողերի յուրացման դիտատեսխնիկական պլանի կազմմանը, ինչպես նաև զբաղվում գաղթականների տեղավորման կոնկրետ հարցերով, այդ թվում ֆինանսական։ Նման խնդրանքով նա դիմում է Սովետական Հայաստանի կառավարությանը, որից 1926 թ. ապրիլի 23-ին ստանում է հետևյալ պատասխանը. «Վերկայակոչելով սույն ամսի 17-ի Ձեր հարցմունքը, հաղորդում ենք, որ համաձայն ղոկտոր Նանսենի հետ վարած բանակցությունների ամեն մի գաղթականի տեղավորման համար բավական կլինի միջին հաշվով 250-ական ռուբլի կամ հինգ հոգուց բաղկացած

¹ Հայկ. ՍՍՀ ՀՆՄՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 296, թ. 55;
² Fridtjof Nansen, Brev, s. 314.

³ Հայկ. ՍՍՀ ՀՆՄՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 238, թ. 265;
⁴ Նույն տեղը, գ. 204, թ. 153:

ընտանիքի համար 1250 ուրլի, ելնելով հետեյալ նկատառումներէրից:

1) որ հասարակ ընակարան կառուցելու համար կբալի 800 ուրլի,

2) մնացած 450 ուրլին գաղթական ընտանիքը-կօգտագործի նախնական ինվենտար ձեռք բերելու և իր գոյութեան համար,

3) աշխատունակ գաղթականները կաշխատեն և ապրուստի միջոցներ կհայթաթեն ու շորացման օրէկտներ կառուցելիս,

4) գաղթականների վերջնական տեղավորումից հետո Հայաստանի գյուղատնտեսական բանկը նրանց կտա երկարամյա վարկեր՝ նոր ինվենտար ձեռք բերելու համար, ինչպէս դա արվում է Հայաստան եկած գաղթականների վերաբերմամբ»:

Մակինտոշը իրեն հետաքրքրող բոլոր հարցերի վերաբերյալ ստանում է սպառիչ պատասխաններ և ապրիլի վերջերին մեկնում արտասահման, նա Ազգերի լիգային ներկայացնում է լավատեսական ղեկուցագիր և Ա. Սրգենկյանին էլ նամակ գրում, որ իրենք ամեն կերպ կաջակցեն նանսենին և նա «անկասկած կանի բոլոր հնարավորը՝ անհրաժեշտ գումարը հավաքելու և նախատեսված պլանները կատարելու համար»¹:

Այդպիսով, սովետական օրգանները կատարում են ամեն ինչ, որպէսզի նանսենի միսիան հաջողութեամբ պսակվի: 1926 թվականի սկզբին «Պրավդայի» և Անդրկովկասի մամուլի աշխատակիցների հետ ունեցած հարցազրույցում Ս. Տեր-Գաբրիելյանը (ԱՍՏՍՀ-ի լիազոր-ներկայացուցիչ Մոսկվայում) նշել է, որ սովետական կառավարությունը մի կողմից շարունակում է սեփական միջոցներով հայ գաղթականների հայրենադարձությունը, մեծացնում է ուղղման սիստեմի ընդլայնման համար կատարվող ծախսերը (այդ նպատակի համար ընթացիկ տարում միութենական կառավարությունը Հայաստանին բաց է թողնում 1600000 ուրլի), իսկ մյուս կողմից՝ աջակցում նանսենի մարդասիրական գործի իրականացմանը: Ս. Տեր-Գաբրիելյանը շեշտում է, որ ակտիվորեն է գործում ինքը՝ նանսենը, որին «մենք իհարկե, շնորհակալ ենք»²: Նորից անգրագատնալով այդ հարցին, նա մի այլ աղբիւրով ասել է. «Մն ոչ մի բոպե չեմ կասկածել, որ Սովետական Միության փորձված բարեկամ Յրիտյոֆ նանսենը և նրա

մերձավորագույն աշխատակիցները, որոնք եղել են Հայաստանում և մինչև այժմ գտնվում են այնտեղ, իրենց կողմից բոլոր ջանքերը կթափեն հօգուտ արտասահմանում գտնվող հայ աշխատավոր գաղթականական մասսաների շահերի»¹:

Սովետական կողմը շարունակում է բարյացակամորեն պաշտպանել նանսենի ծրագիրը և ամեն կերպ օժանդակել նրա իրականացմանը: Բայց ըստ էութեան թշնամաբար են գործում արեւմտյան տերութիւնները և զանգան ձեռքով փայտ խրում անիվի մեջ: Մասնավորապես, արդեն այդ ժամանակ լուրեր տարածվեցին, թե նրանք չեն կարող 12 տոկոսից ցածր փոխառություն տրամադրել: Դա կատարյալ վաշխառություն էր, որի հիմքում ընկած էին ավելի շուտ քաղաքական նկատառումներ:

□□□

Ստացված ղեկուցագրի հիման վրա Ազգերի լիգայի հատուկ հանձնաժողովը (հայ գաղթականության տեղավորման) կատարում է նոր քննարկումներ: 1926 թվականի մարտի 19-ին Փարիզում տեղի է ունենում այդ հանձնաժողովի նիստը, որին մասնակցում էին Ժ. Պամսը (նախագահ), Ֆ. Նանսենը, Մ. Մակդոնալդը, մեկական ներկայացուցիչներ Խալիսայից ու Գերմանիայից (դ-ը Մայեր), Ազգերի լիգայի մի քանի տեխնիկական աշխատակիցներ: Նիստին հրավիրված էր ու մասնակցեց նաև Ս. Փիրումյանը:

Նախագահող Պամսը հանդես եկավ հաղորդումով և նշեց, որ ստացվել է հանձնաժողովի կողմից Հայաստան ուղարկված էքսպերտների ղեկուցագիրը: Այն «լիովին հաստատում է նանսենյան նախագծերի իրագործման տեխնիկական հնարավորությունը», նախագծեր, որոնց համաձայն կարելի է ուղղել 37450 դեպյատին լավագույն հողեր: Դրանց յուրացման բոլոր աշխատանքների, ինչպէս նաև այնտեղ հայ գաղթականներ փոխադրելու առաջին շրջանում նրանց նյութապես ապահովելու համար պահանջվում է «ընդամենը 15 միլիոն ուրլի, այսինքն՝ 5 միլիոնով ավելի նախնական ենթադրածից»²: Այդ գումարը պետք է ձեռք բերվի փոխառությամբ, որը կարող էր տալ Ազգերի լիգայի մեջ մտնող որևէ տերություն: Սակայն, ինչպէս նկատում է Պամսը, դա չի ստաց-

¹ Հայկ. ՍՍՀ ՀՆՍԵ ՊԿԱ, ֆ. 123, ց. 14, գ. 27, թ. 7:

² Правда, 22. 1. 26.

¹ Правда, 19.2.26.

² Հայկ. ՍՍՀ ՀՆՍԵ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 806, թ. 45:

վում, քանի որ Անգլիան հրաժարվեց և նրան հետևեցին Ֆրանսիան ու մյուս պետությունները. «Այժմ,— ասաց Պամսը,— հանձնաժողովը հնարավոր է գտնում այդ փոխառության երաշխավորություն ստանալ Ազգերի լիգայից՝ առանց արևմտյան տերությունների երաշխիքի ու այնպիսի պայմաններով, որոնք բոլորովին չեն խախտում Սովետական Հայկական հանրապետության սուվերենությունը»¹:

Ս. Փիրումյանն այդ հազորագրությունն ընդունեց գոհունակությամբ և խնդրեց պ. Պամսին՝ նրա հայտարարությունը իրեն հանձնել գրավոր ձևով, որը և կատարվեց: Նիստից հետո նա անձնական զրույց է ունենում Պամսի հետ, որն «իրեն երաշխավորեց որպես ֆրանս-սովետական մերձեցման մեծ կողմնակից և պատրաստ այդ ուղղությամբ լիովին օգտակար լինելու մեջ»: Այնուհետև սենատոր Պամսի մոտ տեղի ունեցավ նախաճաշ, որի ընթացքում ինժեներ Մ. Մակդոնալդը Ս. Փիրումյանին ասաց, թե «Հայաստանում գտնվող ինժեներ Մակինտոչից ստացված հազորագրումները կասկած չեն թողնում հայ ինժեներների բարձր տեխնիկական պատրաստակալության մեջ ու ռուզման նախագծերի անպայման իրագործելիության մեջ և որ այժմ պետք է միայն դռնել փոխառության բավարար պայմաններ ու այն ժամանակ գործը կհասցվի մինչև բարեհաջող վախճանի»²: Միաժամանակ նա ցանկություն հայտնեց, որ սովետական կողմը որքան կարելի է արագ ներկայացնի փոխառության իր պայմանները (ժամկետը, տեղոսները և այլն):

Նախաճաշին մասնակցում էր դ-ր Նանսենը, որն իր բացասական կարծիքն արտահայտեց Ազգերի լիգայի վերջին նստաշրջանի մասին: Այդ առթիվ Ս. Փիրումյանը գրել է. «Նրա կարծիքով այդ նստաշրջանը խայտառակ հաստատումն է այն փաստի, որ տերությունները նորից վերադարձել են գաղտնի դիվանագիտության, փոխադարձ խարդավանքների ու սեպարատ ագրեսիվ համաձայնությունների սիստեմին, որը նա համարում է կիզայի ձախողում: Հիշատակելով նաև այն, որ Բրադլիիան իր համառություն մեջ միայնակ չէր և հրահրվում էր «ինչ-որ մեծ տերության կողմից», նա հավատացած էր, որ գալիք նստաշրջանին, այսինքն՝ սեպտեմբերին իրագործությունը կլինի ավելի վատ և որ ինքը շատ

տխուր է նայում կիզայի ապագային: Սեղանի մասնակիցներից ոչ-ոք նույնիսկ փորձ չարեց հերքել Նանսենի եզրակացությունները»³:

Ս. Փիրումյանը 1926 թվականի մարտի 29-ին զեկուցագիր ուղարկեց Հայաստանի ժողովրդի հանրապետության և այն եզրափակեց հետևյալ խոսքերով. «Հանձնաժողովի վերջին առաջարկությունը քայլ է դեպ առաջ մինչ այդ մեզ արած առաջարկությունների համեմատությամբ, քանի որ լիովին հանված է իրային գրավների և հանրապետության սուվերենության հետ անհամատեղելի երաշխիքների հարցը: Ինչքանով էս տպավորություն ստացա առանձին զրույցներից, հանձնաժողովը կբավարարի պետքանկի առևտրական երաշխիքներով և փոխառության ընդհանուր ապրուբացիայով Միութենական կառավարության կողմից»²:

Իրականում այդպես շտաղվեց: Արևմտյան տերությունների անմիջական թելադրանքով Ազգերի լիգայի հայ գաղթականների տեղավորման հանձնաժողովը Պամսի նախագահությամբ փոխառություն տալու համար նոր պահանջներ ներկայացրեց: Մասնավորապես, նա դեռ 1926 թվականի մարտի 26-ին հուշագիր է ուղարկում Ֆրանսիայում Սովետական Միության ղեկավարությանը և նշում, որ նանսենյան ծրագիրը, թեև տեխնիկապես հիմնավորված է ու իրագործելի, բայց նրա ռեզոնանսային ելևմտական պայմաններուն մասին հանձնաժողովս դժբախտաբար ի վիճակի չէ դրական հանձնարարություններ ներկայացնելու: Խորհրդային պետական գրամատան երաշխավորությունը միայն բավարար չերևիր հարկավոր փոխառությունը ձեռք բերելու համար: Արդարև, ի նկատի եղած փոխառությունը տալու տրամադիր գրամատերերը պիտի ուզեին ստանալ ապահովություններ, որոնք երաշխավորեին տեղոսներու տարեկանը և գրամագլխին հատուցումը տարվե-տարի: Եթե այս երաշխավորությունը չապահովվի կառավարություններու կողմեն այն երկրներուն, որոնք կը հագրվին Հայկական խնդրով, Հայաստան ինքը կամ Խորհրդային Միությունը պետք է տան այդ ապահովությունները»³:

Այդպիսով, հանձնաժողովը չի բավարարվում «սովետական պետական բանկի պաշտոնական երաշխավորությամբ և պահանջում է լրացուցիչ պարտավորություններ: Դրան Փարիզում սովե-

¹ Հայկ. ՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 296, թ. 46:
² Նույն տեղը, թ. 47:

¹ Հայկ. ՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 296, թ. 47:
² Նույն տեղը:
³ «Ապագա», 19. 6. 26:

ուական ղեկավարությունից ապրիլի 26-ին պատասխանում են, որ ՍՍՀՄ կառավարությունը համաձայն է նանսենյան ծրագրին և «իր հավանությունը կուտա այս նպատակով հրապարակ հանվելիք փոխառություն մը և կերաշխավորե անոր գլխավճարին և տարեկան տոկոսներուն վճարումը ևորհրդային Հանրապետություններու Միության կառավարության պետական զրամատան կողմի: Փոխառության մանրամասնությունները, անոր գլխավճարին և տոկոսներուն վճարումը և այլ պայմանները շահակից կողմերու համաձայնությամբ պիտի որոշվին»¹:

Չնայած այսպիսի հստակ ու պաշտոնական բավարար պատասխանին, Պամսը շարունակում է պնդել իր նախկին դիմումը և այդ մասին անմիջապես՝ ապրիլի 27-ին իրազեկ է պահում սովետական ղեկավարությանը, հատկապես շեշտելով այն մոմենտը, որ իրենք փափագ ունեն գիտենալու, «թե տոկոսներում և զրամագլխին տարեվճարը երաշխավորել հանձն առնող հաստատությունը փոխառու երկրներու մեջ ի՞նչ ունի համապատասխան իր հանձնառություններուն»: Դա նշանակում էր ոչ միայն շահավատալ սովետական պաշտոնական հավաստիացումներին, այլև փորձել միջամտել նրա ներքին գործերին: Փարիզում սովետական ղեկավարը հարկադրված է լինում մայիսի 11-ին կրկնել իր պատասխանը՝ ավելացնելով. «Սույն տարեվճարներու համար (տոկոսի և զըլխավճարի) հարկ եղած գումարները պիտի արձանագրվին ևորհր. Հայաստանի հանրապետական բյուջեի մեջ և այսպես պիտի դառնվին նաև ևորհր. Միության պետական բյուջեի մեջ»:

Թվում է, ամեն ինչ պարզ էր ու զոհացուցիչ: Բայց այդպես չէին մտածում արևմտյան իմպերիալիստներն ու նրանց գործակատարները: Պամսի հանձնաժողովին պատրվակ էր պետք ձախողելու փոխառությունը և այն հնարեցին: Դրանից հետո այդ մարմինն իր ֆունկցիան սպառած համարեց և հայերին «միթթարած» լինելու համար ավելացրեց, թե նրանց հարուստները պետք է օգնության ձեռք մեկնեն իրենց զաղթականներին. «Ան կթելադրե ուրեմն այս միջոցը իբր բնական, արդար և արագ միջոց մը»²: Ինչպիսի՞ կարեկցական վերաբերմունք... Եթե հայ հարուստները պիտի օգնեին իրենց զաղթականներին, էլ ինչո՞ւ էին դիմում

Ազգերի լիգային, ինչո՞ւ էր վերջինս բաղձաթիվ հանձնաժողովներ ստեղծում ու քննարկումներ կատարում:

Հասկանալի է, որ այդ ամենը սոսկ յուրահատուկ խաղ էր և զրա հետևում թաքնված էին իմպերիալիստների քաղաքական նկատառումներն ու տնտեսական շահերը: Նրանք լցված էին հակառակուսիական թույնով և չէին ուզում փոխառություն տրամադրել, այն էլ բարենպաստ պայմաններով: Պատահական չէ, որ այդ ժամանակ նրանք հայտարարեցին, որ իրենք 12 տոկոսից ցածր փոխառություն չեն տրամադրի: Այդպես էր սովետական երկրի վերաբերմամբ, մինչդեռ կապիտալիստական պետությունները միմյանց նկատմամբ բավարարվում էին նաև ցածր (նույնիսկ 1—2) տոկոսներով: ՍՍՀՄ Կենտգործկոմի անդամ Ս. Տեր-Գաբրիելյանը, 1926 թվականի մայիսի 31-ին Մոսկվայում ընդունելով հայ հասարակական գործիչ Ա. Սաֆրաստյանին, ասաց, որ այդ «վաշխառական սակը» ունի քաղաքական աստառ և «միջազգային փոխառության մեջ ցարդ շտեմնված այդքան բարձր տոկոսի մը պահանջը լոկ պատրվակ մըն է գործը վիժեցնելու»³:

Այդպես էլ վարվեց Ազգերի լիգան, բայց միաժամանակ շարունակեց քաշքշուկը: Շուտով հայ զաղթականության տեղափոխման հարցը քննարկվում է Ազգերի լիգայի խորհրդում. այնտեղ ընդունված բանաձևով «խորհուրդը հավանություն է տալիս նանսենյան նախագծին և այն հանձնում ֆինանսական կոմիտեին»²: Ազգերի լիգայի ֆինանսական կոմիտեն կարծես թե «բաղձակողմանիորեն ուսումնասիրում է» հարցը և նույնիսկ «ընդունում նախագծի իրագործման կարևորությունը», նրա տեխնիկական հիմնավորվածությունը, բայց «ափսոսում է», որ ֆինանսական տեսակետից «ներկա պայմաններում նախագիծը չի կարող իրականացվել»: Ֆինանսական կոմիտեի բանաձևը բավականին ընդարձակ է, որտեղ ոչ միայն իր, այլև Ազգերի լիգայի խորհրդի անունից շեշտվում է, թե նրանք իրենց վրա «չեն վերցնում ոչ մի օրինական կամ բարոյական պատասխանատվություն փոխառության ապահովման համար, հաշվի առնելով ֆաղափական պայմանները (ընդգծումը մերն է:— Մ. Ա.), որոնցից որոշակիորեն պետք է կախված լինի նաև այդ ապահովման արժեքը»³: Ահա

1 «Ապագա», 26. 6. 26:

2 «Ապագա», 19. 6. 26:

1 «Ապագա», 12. 6. 26:

2 Հայկ. ՍՍՀ ՀՆՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 296, թ. 119:

3 Նույն տեղը, գ. 456, թ. 49:

թև որն էր հարցի էությունը՝ ֆազաֆական պայմանները, որոնցից էլնելով ո՛չ արևմտյան տերությունները և ո՛չ էլ նրանց կամակատար Ազգերի լիգան շեն ուզում երաշխավորել՝ Սովետական Հայաստանին (միենույն է թե Սովետական Միությանը) փոխառություն տալու համար: Պատահական չէ, որ Ալ. Խատիսյանը հորթի հրճվանքով է արձանագրել Ազգերի լիգայի ֆինանսական հանձնաժողովի նախագահի զրույցն իր հետ, երբ նա ուղղակի ասել է. «Եթե Հայաստանի մեջ իշխանության գլուխ կեցած ըլլար ոչ խորհրդային իշխանությունը, պահանջված գումարը կհայրայրվե մեկ օրվա մեջ»¹:

Պատկերը լիովին պարզ է, և մեկնաբանությունները՝ ավելորդ: Միայն պետք է ավելացնել, որ Ազգերի լիգայի ֆինանսական կոմիտեն իր հերթին մանևրում է: Նա ստեղծված «ծանր գրությունից» դուրս գալու համար կարծես թե փորձում է ինչ-որ էլք որոնել. «Եթե մասնավոր մարդիկ կամ կազմակերպություններ շահագրգռություն կցուցաբերեն նախագծի իրագործման համար», ասենք, կտրամագրեն փոխառություն կամ նվիրատվություն, կկատարեն հանգանակություն և Ազգերի լիգայից կխնդրեն, որ խորհուրդը իրազեկ մարդիկ նշանակի Պրամի ծախսումը հսկելու համար», ապա այդ խնդիրը կհարգվի: Ինչպիսի՞ զոհաբերություն... Նախ՝ որտեղից կհայտնվեն այդպիսի «մարդասեր» մասնավորներ, և երկրորդ՝ եթե անգամ գտնվեն, ապա նրանք հավանաբար կարիք չեն ունենա Ազգերի լիգայի միջամտության ու հսկողության: Իհարկե, որոշ հանգանակություն կարելի էր անցկացնել, և կգտնվեին մարդիկ, որոնք կկատարեին զոհաբերություններ, նվիրատվություններ, բայց առավել ևս դրանք Ազգերի լիգայի հսկողության կարիքը չէին ունենա: Համենայն դեպս, իմպերիալիստական տերություններին այդպիսի հանգանակությունը պետք էր որպես թզենու տերև, որպեսզի ինչ-որ մարդասիրության անվան տակ քողարկեն իրենց ագրեսիվ մերկությունը: Հենց այդպիսի նպատակներ էր հետապնդում բրիտանական պատվիրակության բանաձևը Մերձավոր արևելքին օգնող կազմակերպությունների՝ Ժնևում 1926 թվականի սեպտեմբերի 14-ին կայացած համագումարում, Այնտեղ նշվում է, որ Անգլիան չի կարող օգնել նանսենյան ծրագրի իրականացմանը, բայց Ֆրան-

¹ Ալ. Խատիսյան, Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը, Պեյրուս, 1968, էջ 415:

սիայի հետ միասին հանգանակություններով կաշակցի Միրիայում գտնվող հայ գաղթականներին, որպեսզի նրանք տեղում ընդունակ դառնան պահպանելու իրենց. «Հաշվի առնելով բրիտանական հասարակության հատուկ շահը Միրիայում գտնվող 100000 հայերի նկատմամբ, կազմել ֆրանս-բրիտանական կոմիտե՝ անհրաժեշտ ֆոնդեր հավաքելու ու ծախսելու համար»²: Այստեղ էլ կեղծ-բարեգործության անվան տակ անց էր կացվում նույն իմպերիալիստական շահագրգռական գիծը: Արևմտյան պետությունների համար հայ գաղթականներին Միրիայում պահելու մտայնությունը՝ նրանց «օգնություն» անվան տակ հետապնդում էր այնտեղ «հավատարիմ հենարան» և Սովետական Հայաստանին հակակշիռ ստեղծելու նպատակ, ձիշտ է նկատել Ար. Սաֆրաստյանը, որ այդ Պրամանը՝ ոչ միայն իսկական ապահովություն չի տալիս հայ գաղթականներին, այլև «ծրագրված է փոխարինելու ու դատապարտելու Նանսենի փոխառության ծրագիրը»³: Ինքը՝ Նանսենը, այդ առթիվ գրել է. «Սուրիական ծրագիրը չեմ նկատել, որպես բան մը, որ կրնա այս տեսակի որևէ հարցի վերջնական լուծում տալ, մինչ կխորհիմ, թե երկվանյան ծրագիրը, եթե գործադրվի, ավելի ևս պիտի զարգանա»³: Իհարկե, Նանսենը դեմ չէր, որ կազմակերպվի օգնություն նաև Միրիայում գտնվող հայ գաղթականներին, բայց հարցի արմատական լուծում էր համարում «երևանյան ծրագիրը»:

Հասկանալի է, որ ֆինանսական կոմիտեն գործում էր Ազգերի լիգայի ղեկավարների թելադրանքով և պատահական չէ, որ նրա որոշումն էլ 1926 թվականի հունիսի 17-ին հաստատվեց: Ազգերի լիգայի նիստը, որը ղեկավարում էր է. Բենեշը, կայացրեց մի որոշում, որի համաձայն խորհուրդը կընդունի.

«1. Թե մշակված ոռոգման և ղետեղման ծրագիրը թեքնիկապես կարելի է.

2. Թե ոռոգվելիք հողերուն արդյունաբերությունը կբավել ծրագրված փոխառության տոկոսներու և գլխավճարի վճարումին.

3. Թե ազգաժողովը քաղաքական պատճառներով չէր կրնար իր պատասխանատվության ներքե փոխառությունը հրապարակ

¹ Հայկ. ՍՍՀ ՀՀՍՇ ՊԿՄ, ֆ. 113, ց. 3, դ. 456, թ. 50:

² «Երևան», 2. 3. 27:

³ Ալ. Յափուճյան, եշ. աշխ., էջ 201:

հանել (ինչպես ըբաժ էր Ավստրիո, Հունգարիո, Հունաստանի և Բուլղարիո)։

4. թե մասնավոր ազգություններ կարելի ըլլար հայթայթել հարկավոր եղած դրամագլուխը նվերով կամ փոխառութեամբ, շահագրգռվող կողմերն պահանջ դրված պարագային, ազգաժողովը կրնար ձեռնհաս անձնավորություններ նշանակել հսկելու համար հանձնառութեանց ճշգրիտ գործադրութեան»¹։

Ընթերցողի համար ամեն ինչ պարզ է և հատկապես Յ-րդ կետը՝ Բաղաճակաճ Եկատառումը։ Այն ժամանակ դա պարզ էր նաև Յ. Նանսենի համար, որը 1926 թվականի սեպտեմբերին հուլիս, բայց ըստ էութեան խարաղանդ ճառ արտասանեց Ազգերի լիգայի նստաշրջանում, Մասնավորապես նա շեշտեց, որ ով «թեկուզ փոքր շափով գիտի հայ ժողովրդի ու նրա դժբախտությունների պատմությունը, ում մոտ մնացել է հավատի թեկուզ մի փոքր բեկոր բանականութեան ու արդարամտութեան նկատմամբ համաշխարհային պատմութեան մեջ», նա չի կարող անտարբեր մնալ դեպի այդ ժողովրդի տառապանքներն ու նրան տրված խոստումները։ Սակայն նորից լուրջուն Ազգերի լիգայի տնօրենների մոտ։ Այդ առթիվ Փարիզում հրատարակվող «Ապագա» լրագիրը նշել է, որ Նանսենը «վերջին անգամ հուլիս կոչ մը ուղղեց քաղաքական աշխարհի ներկայացուցիչներուն։ Բայց նրանք նորեն անզրգովի մնացին իրենց ըմբռնումներուն և նախորդման մեջ»։ Ապա լրագիրն ավելացնում է, որ Հայաստանի փոխառութեան հարցը «առաջին օրին քաղաքական գունավորում ստացավ» և «ողջակիզվող հայ գաղթականը քավութեան նոխազ կդառնա քաղաքական հակամարտութեանց»։ Առանձնապես հանցավոր էր Անգլիան, որին հետևեցին մյուսները. «Ազգաժողովին ղեկը իրենց ձեռքին մեջ պահողները ասկէ առաջ և մասնավորապես ժողովին գարնան նստաշրջանին ճշտած էին իրենց վերաբերումը դեպի այդ հարցը։ Անգլիա շատեց որոշած էր իբր վրեժի թիրախ ծառայեցնել Հայաստանի փոխառութեան հարցը բարոյապես վարկաբեկելու նպատակով և. Միութեանը հաշիւ հայ ժողովրդին... Սակայն Անգլիա մինակ չէր իր տեսակետներուն մեջ։ Ազգաժողովին ամբողջ կազմը միեւնույն ուղղութեան ունի և. Միութեան վերաբերմամբ»։ Բայց սովետական պետութեանը հաստատակամ է իր ժողովրդական քաղաքակա-

նութեան մեջ և մերկացնում է իմպերիալիստների դավերը։ Նա միաժամանակ օգնություն է կազմակերպում հայ գաղթականութեանը. «Այսպես, — գրում է «Ապագան», — ինչ որ շուրջն էր Ազգերու ընկերութեանը և. Միութեան մաս կազմող Հայաստանին, Ազգերու խորհրդային միութեանը պետք է ընէ իր մեկ անդամին»։ Ընդ տ այդպէս...

Ս. Փիրումյանն այդ ամենի մասին 1926 թվականի հոկտեմբերի 8-ին զեկուցագիր է ուղարկում Անդրերկրկոմի ու Հայաստանի Ժողկոմխորհին և նշում, որ «ֆինանսական կոմիտեի բանաձևը ոչ մի կասկած չի թողնում՝ որ փոխառութեանը կմերժվի, և որ նման իրաւիճակում պետք է կամպանիա սկսել՝ այն սրելով Անգլիայի դեմ և ազդարարել (քանի որ միեւնույն է այդ ոտոզման նախագիծը մենք պետք է իրագործենք), որ սովետական կառավարութեանը (միութեանական) իր վրա է վերցնում նախագիծի աստիճանական կենսագործումը, արեւտահայերին առաջարկելով գտնել միայն այն 3 միլիոն ռուբլին, որը պետք է միայն գաղթականների տեղափոխման ու տնտեսավարման համար։ Այդ դեպքում մենք կունենանք ամբողջ հայ հասարակութեան համակրանքը և կվատացնենք Անգլիայի ու Ֆրանսիայի դրութեանը, հատկապես Սիրիայում, որտեղ նրանք, զգալով այդ, արդեն իրենց համար հող են պատրաստում»¹։

Յ. Նանսենը խիստ վրդովված էր Ազգերի լիգայի հակամարդկային վարմունքից, սակայն փաստորեն նրան լսող չկար։ Հայ գաղթականութեան տեղավորման համար միջոցների հայթայթման հարցը տեղափոխվեց 5-րդ հանձնաժողով և որոշվեց «հնարավոր համարել կազմել մի փոքրիկ կոմիտե՝ անհրաժեշտ միջոցներ ժողովելու հնարավորութեան խնդիրն ուսումնասիրելու համար», ինչպես նաև «բաց թողնել վարկ դոկտոր Նանսենին կամ նրա ներկայացուցչին, որը նրան հնարավորութեան տար ներկայացնելու առաջարկներ Եվրոպայում ու Ամերիկայում հնարավոր ժողովարարութեան մասին»²։ Այնքան է, որ այդ կառուցկային բանաձևն ընդունվել էր ավելի շուտ ձևի համար և ինքնըստինքյան ոչինչ չէր խոստանում։

□□□

Տեսնելով, որ Ազգերի լիգան լքում ու փաստորեն վիժեցնում

¹ Հայկ. ՍՍՀ 22ՍՇ ՊԿԱ, Ֆ. 113, ց. 3, գ. 456, թ. 48։

² «Նոր ուղի» (ամսագիր, Երևան), 1929, № 1, էջ 342։

¹ «Ապագա», 25. 9. 26։

է հայ գաղթականութեան տեղավորման գործը, մինչդեռ Հայաստանի կառավարութիւնը պատրաստակամութիւն է հայտնում իր միջոցներով յուրացնելու նախատեսված հողերը, Ֆ. Նանսենը շատ քանքեր գործադրեց զանազան աղբյուրներից հավաքելու գոնէ 3 միլիոն ուրլի, որպէսզի որնէ չափով նպաստած լինի իր նպատակի իրականացմանը: Մասնավորապէս նրա գլխավորութեամբ 1926 թվականին ստեղծվում է միացյալ հայկական կոմիտե, որի մեջ մտան հայ ժողովրդի բարեկամներ տարբեր երկրներից (Ամերիկա, Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա, Բելգիա և այլն), ինչպէս նաև կարմիր խաչից ու այլ կազմակերպութիւններից: Այդ ճանապարհով, այսինքն՝ բացառապէս հասարակական մարդասիրական օգնութեամբ, հաջողվում է հայթայթել որոշ միջոցներ՝ հայ գաղթականներին օգնելու համար: Դրա մասին Նանսենը իրազեկ է պահում սովետական շրջաններին: Մասնավորապէս նա 1926 թվականի հոկտեմբերի 29-ին հատուկ նամակ է գրում «Թանկագին Չիլերինին» և նշում. «Ես շարունակում եմ անել ինչ հնարավոր է, որպէսզի Հայաստանում ոռոգման մեր պլանի կատարման համար անհրաժեշտ գումար ձեռք բերելու ձև գտնենք... դա, իսկապէս, ծանր աշխատանք է և, ինչպէս երևում է, շատ դժվարութիւնների կհանդիպենք»:

Միաժամանակ Նանսենը 1927 թվականին Ազգերի լիգայից պահանջում է վերջ տալ ստեղծված քաշքշուկին, հայ գաղթականութեան հարցի շուրջը սարքած նենգամիտ խաղին. քանի որ արևմտյան տերութիւնները չեն ուղում կատարել իրենց խոստումները և ոչ մի աջակցութիւն ցույց չեն տալիս հայ գաղթականներին, Ազգերի լիգան բարոյական իրավունք չունի զբաղվելու այդ հարցով, իսկ ինքն էլ հրաժարվում է գլխավոր կոմիտարի պաշտոնից, գտնելով, որ այլ ձևով կօգնի հայ ժողովրդին, Նանսենի այդ համարձակ քայլը շփոթութիւն է առաջ բերում Ազգերի լիգայի ղեկավար շրջաններում և, մերկացումից խուսափելու համար, նրանք գերադասում են «նահանջել» ու նորից խոստանալ, որ մի բան կանեն, միայն թէ նա չհրաժարվի իր պարտականութիւններից: Պրոֆեսոր Յա. Ս. Վորմ-Մյուլլերը (Նորվեգիայի ներկայացուցիչը Ազգերի լիգայում), այդ ժամանակ հանդիպելով Նանսենին, իր օրագրում նշել է. «Տանջված, ալեհեր, կնճռտոված դեմքով, այնպէս անվերջ հոգնած, վշտահար հայացքով, բայց և այնպէս ուղիղ ու բարեկազմ, առաջվա նման վճռական ու նուանդուն, քանզի նա գիտի, որ կանգնած է ճիշտ ճանապարհի վրա և

կհաղթի դաժանութեանը»¹: Այո, Նանսենը խիստ վրդովված էր Ազգերի լիգայի տնօրինողների խարդավանքներից. նա ունեցավ հոգեկան ծանր ապրումներ և նույնիսկ կարծես մի պահ փորձեց թողնել իր սկսած հարազատ գործը, բայց չկարողացավ և չէր կարող: Չէ որ այն բխում էր նրա հոգուց, նրա բուն էութիւնից, որից հրաժարվել չէր կարող, առանց դադարելու Նանսեն լինելուց: Հայոց գործը դարձել էր նրա սեփական գործը և «նա չկարողացավ հրաժարվել իր աշխատանքից»²:

1927 թվականի հունիսի 16-ին տեղի ունեցավ Ազգերի լիգայի խորհրդի նիստը, ուր նորից քննարկվեց Նանսենյան ծրագիրը: Հարցի պատմութեան մասին հազորդուժով հանդես եկավ Չիլիի պատվիրակ Պ. Վիլեկասը և ասաց, որ քաղաքական նկատառումներով հնարավոր չէ փոխառութիւն տալ Հայաստանին, քանզի նա սովետական է և կազմում է ՍՍՀՄ-ի մի մասը: Դրանից հետո Նանսենը զայրացած շեշտում է, թէ ինչպէս «քաղաքական պատճառներով» ձախողվեց Հայաստանին տրամադրվելիք փոխառութեան գործը, նա ուղղակի գրում է. «Բացահայտ է, որ միակ իսկական արգելքը ծրագրի իրագործման համար քաղաքական բնույթ ունի, որովհետև այսօր Հայաստան սովետական կառավարութիւն ունի և միացած է Սովետական Ռուսաստանին»³: Մյուս կողմից, Նանսենը նշեց, որ իրեն հայտնի է, թէ ինչպէս Սովետական Հայաստանի կառավարութիւնը, առանց դրսի օգնութեան, ձեռնամուխ է եղել նախատեսված հողերի յուրացմանը և պատրաստ է նոր գաղթականներ ընդունելու: Վերջիններիս տեղավորելու համար պահանջվում է 300000 անգլիական ոսկի դրամ: Ֆ. Նանսենը հավաստիացնում է, որ այդ գումարի մեկ երրորդը կհոգան գաղութահայերը, անհրաժեշտ է, որ գոնէ մնացածը (երկու երրորդը) տան մեծ պետութիւնները կամ Ազգերի լիգան: Դեպքերի ականատես Լ. Բաշալյանն այդ առթիվ գրել է. «Տր. Նանսեն այդ կոչը ուղղեց շատ հուզիչ կերպով: Հիշեցուց հայկական ողբերգութիւնը, գաշնակիցներուն տված հանդիսավոր խոստումները և եզրակացուց՝ ասելով, որ Ազգերու ընկերութեան արժանապատիւթիւնը կպահանջե, որ գոնէ այս եղանակով օգնութիւն

¹ Лив Нансен-Хейер, Книга об отце, стр. 412.

² Sten Frodtjof Nansen, Explorer-Scientist-Humanitarian, Oslo, 1961, p. 84.

³ Ա. Յափուեյան, Եր. աշխ., էջ 150:

ընձեռնն հայ գաղթականներուն: Շատ ազգու վերջարանով մը տր- նանսն ըսավ, թե այս հուսահատական կոչը ուղղելուն նպատակն այն է, որ կուզե փարատել Ազգերու ընկերության ցույց տված անգործության գեշ տպավորությունը»¹:

Ֆ. Նանսենի ցնցող ելույթի ազդեցության տակ դահլիճում տիրում էր ծանր լուսվյուն, որն առաջինը խզեց Գերմանիայի պատվիրակ Շտրեզմանը: Նա հիացմունքով խոսեց Նանսենի ջանքերի ու հաստատակամության մասին և խոստացավ խնդրել իր կառավարությանը՝ նպաստելու քննարկվող հարցի լուծմանը. «Ինքն անկեղծորեն կհուսա, որ տր. Նանսենի ուղղած նոր կոչը հաշտությանը կպսակվի»: Կարծես «մեղրածոր էր» նաև Անգլիա- լի պատգամավոր Օստին Չեմբերլենի ելույթը Նանսենի գործի և տարաբխտ հայ ժողովրդի հասցեին. «Հայկական ողբերգու- թյունը բոլոր ժողովուրդներուն հոգին և խիղճը հուզած է», Բայց նա տեղնուտեղը ավելացրեց, որ «ինքը սակայն չի կրնար իր կա- ռավարության կողմն որոշ և անմիջական պատասխան մը տալ տր. Նանսենի կոչին, որը իրեն համար անակնկալ էր»²:

Հունիսի 17-ին շարունակվեց խորհրդի նիստը և որոշվեց Նան- սենի նոր պլանի մասին իրազեկ պահել Ազգերի լիգայի բոլոր անդամ-պետություններին ու այն բարյացակամորեն քննարկել խորհրդի սեպտեմբերյան խորհրդակցությունում: Միաժամանակ նորից հանձնարարվեց Ֆ. Նանսենին անհրաժեշտ տեղեկություն- ներ ձեռք բերել յուրացվող հողերի մասին:

Լ. Բաշալյանը հանդիպում է Ֆ. Նանսենի հետ և տեսնում, թե ինչ մեծ ապրումներ ունի նա. «Տր. Նանսեն, որու հետ նորեն ալ տեսակցեցա, ինձմե չժածկեց իր դառն հուսախաբությունը Ազ- գերու ընկերության բռնած դիրքեն: Ինձ ըսավ, թե մեծապես շահագրգռված էր հայերուն կատարելիք հանգանակությանը ի նպաստ գաղթականներու փոխադրության և տեղավորման գործին, և թե շատ կփափարեր այդ մասին տեսակցություն մը ունենալու նուպար փաշայի հետ»: 1927 թվականի հունիսի 20-ին Փարիզում գրած այդ հաղորդագրության մեջ Լ. Բաշալյանը նշում է. «Տր. Նանսեն այս միջոցիս գիրք մը կպատրաստե հայոց և հայկական հարցի մասին, որ մեկ քանի լեզուներով պիտի հրատարակվի»³:

1927 թվականի հուլիսի 5-ին Ֆ. Նանսենը Լյուսակերից մտերմաբար հեռագրում է Երևան՝ Հայաստանի կառավարության «Թանկադին պ-րն նախագահին» և հայտնում, որ որոշ ժամանակ առաջ իր քարտուղարը Մոսկվայում հանդիպում է ունեցել իրենց ներկայացուցիչների (հավանաբար Ս. Տեր-Գաբրիելյանի և ուրիշն.) հետ և իմացել, որ Հայաստանում յուրջ աշխատանք է սկսվել սե- փական միջոցներով յուրացնելու Ղոնրի, Սևզրի ու Զանգիբասարի հողերը: Նա գոհունակություն է հայտնում այդ առթիվ և մատնա- նշում, որ ինքը դրա մասին արդեն խոսել է Ազգերի լիգայի խորհրդ- դում՝ լանդոնիով գոնե նվազագույն օգնություն ցույց տալ հայ գաղթականների տեղափոխմանը: Սակայն մեծ պետությունների ներկայացուցիչները նորից դժվարացրել են գործը՝ «պատճառա- բանելով», թե պաշտոնապես իրենց ոչինչ հայտնի չէ Սովետա- կան Հայաստանի կառավարության մտադրությունների ու պլան- ների մասին. «Այդ պատճառով,—նշում է Ֆ. Նանսենը,—խնդիրը հետաձգվեց մինչև կիգայի ու նրա խորհրդի սեպտեմբերյան գումարումը, որ ես հույս ունեմ մտցնելու մի կոնկրետ առաջարկ»: Ուստի նա խնդրում է իրեն հաղորդել մանրամասն տեղեկություն- ներ և հողերի յուրացման կոնկրետ պլանը: Վերջում Ֆ. Նանսենը ջերմորեն հավաստիացնում է. «Ես կարծում եմ, որ հազիվ թե կարիք կա հայտնելու Ձեզ, որ իմ սրտանց ցանկությունն է անել այն ամենը, ինչ կարող եմ հայ գաղթականների և Ձեր հիանալի ժողովրդի համար, որին ես ճանաչեցի Հայաստանում կատարած իմ անմոռանալի ճանապարհորդության ընթացքում: Մի գրբում, որ ես արդեն ավարտում եմ, հույս ունեմ ծանոթացնել Ձեզ ու համայն աշխարհին այն մասին, թե ինչ եմ մտածում Ձեր ժողո- վրդի ու նրա ապագա հնարավորությունների մասին»⁴:

Հայաստանի կառավարությունը նորից լիովին ընդառաջում է Ֆ. Նանսենի խնդրանքին, որի մասին ինքը 1927 թվականի օգոստոսի 17-ին հեռագրում է Երևան՝ Ս. Համբարձումյանին: Այնտեղ ասված է. «Ձեր հեռագիրը ստացա: Քարտուղարս հեռա- գրում է Մոսկվայից, որ Լուկաշինը և Ձեր ներկայացուցիչ Տեր- Գաբրիելյանը առաջադրում են հետևյալ առաջարկները:

Հայ գաղթականների մի մասը կարող է ընդունվել Հայաստանի կառավարության կողմից ոռոգված և այս տարվա ընթացքում մասամբ պատրաստի հողամասերի վրա, եթե ես երաշխավորեմ

1 Հայկ. ՍՍՀ ՀՀՍԵ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 530, թ. 38:

2 Նույն տեղը, թ. 39:

3 Նույն տեղը:

4 Հայկ. ՍՍՀ ՀՀՍԵ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 604, թ. 15:

յութաբանչյուր ընտանիքի տեղավորման համար մեկ հազար
աուրլի: Հայաստանի կառավարութիւնը հետեւյալ տարիներում
կգործադրի ոտոզման համար երեքական միլիոն ուրլի...

Այդ միջոցով հնարավորութիւն կլինի վերագաղթեցնել մոտ
12 հազար գաղթական, որի համար անհրաժեշտ կլինի երեք
միլիոն»¹:

Նանսենը 1927 թվականի սեպտեմբերի 24-ին նորից է հուզիչ
ձառ ասում Ազգերի լիգայի սասմըլեայում, հանգամանորեն
պարզարանում հայոց հարցի պատմութիւնը, ցույց տալիս, որ
առաջին աշխարհամարտի ժամանակ հայերը «ղաշնակիցների»
զոհանդանին են դրել 200 հազար մարտիկ, թափել «արշան
գետեր», որոնց դիմաց արևմտյան տերութիւնները տվել են սոսկ
խոստումներ, բայց ոչինչ չեն արել, բացարձակապէս ոչինչ
զրանց իրականացման համար: Նանսենը նշում է, որ ոչ միայն
չիրականացավ նրանց խոստումը՝ ստեղծելու հայկական պետու-
թիւն իր արդարացի սահմաններով, այլև պատերազմից հետո
էլ նրանց թողալով հայերը թուրքերից նոր ջարդեր կրեցին,
արդոք «ղաշնակիցները» հիշո՞ւմ են, որ անմեղ հայերը համե-
մատաբար բոլորից շատ են զոհ տվել, դաժանորեն կոտորվել,
իսկ նրանց «ողջ գույքը բռնագրավվել է» և եթէ գոնե «զա վերա-
դարձված լինէր, ապա գաղթականների ապահովման խնդիր չէր
լինի»: Ազգերի լիգան փորձեց «օգտակար լինել» հայ գաղթական-
ներին և իր (Նանսենի) կողմից ներկայացվեց նրանց մի մասին
Հայաստանում տեղավորելու հիմնավորված պլան, բայց արե-
մտյան տերութիւնները փոխառութիւն չեն տալիս, և Ազգերի
լիգան էլ համակերպվում է դրա հետ: Իսկ և իսկ խայտառակու-
թիւն... չէ որ նրա անդամները նույնպէս հանդիսավոր խոստում-
ներ են տվել և դրա հիման վրա կազմվել է համապատասխան
նախագիծ: Նանսենը շեշտում է, որ Հայաստանին փոխառութիւն
տրամագրելը կլինի ոչ միայն «պարտքի կատարում», այլև «Արե-
մուտքի ու Արևելքի հաշտեցման կապ, որը կնպաստի խաղա-
ղութիւն հաստատման աշխարհում»: Նման հարցադրումը վերըս-
տին վկայում է մեծ հումանիտար ու խաղաղարարի հետադի-
մութիւն ու լավատեսական մտադրութիւնների մասին:

Սերափակելով իր ելույթը, Նանսենը նշում է, որ հանձին
Սովետական Հայաստանի ստեղծվել է «այն միակ ազգային օջա-

խը, որին ապավինում է հայ ժողովուրդը և դեպի որն ուղղված
են աշխարհացրիվ հայերի աչքերը»: Նա, դիմելով Ազգերի լիգայի
54 անդամ-պետութիւններին խնդր է դնում գոնե նվազագույն
օգնութիւն ցույց տալ հայ գաղթականներին, թեկուզ փոքր շահով
կատարել խոստումները. «Այս ամբիոնից, — ասաց Նանսենը, —
ես կոչ եմ անում Ազգերի լիգայի բոլոր անդամներին, Եվրոպայի
և ամբողջ աշխարհի ժողովուրդներին ոտքի ելնել՝ փրկելու Եվրո-
պայի պատիվը, որն այնքան ժամանակ կմնա արատավորված,
քանի դեռ անկատար կմնան խոստումները»¹:

Նանսենի այդ ելույթը կատաղեցնում է Ազգերի լիգայի տն-
օրեններին, որոնց կատարածու նախագահը նույնիսկ հայտարա-
րում է. «Ասամբլեան դատական գործ կհարուցի այս արտառոց
կոչի համար, որը պակաս շահով ուղղված չէ նաև կա-
ռավարութիւնների դեմ»: Այդուհանդերձ, նրանք չլիմեցին այդ
քայլին՝ երկյուղելով, որ այն ըստ էութիւն կդառնա «գաւ դատի
դեմ», որ Նանսենը հրապարակայնորեն իրենց կզամի անար-
զանքի սյունին:

Մեծ տերութիւնները զերագասում են պարզապէս վերստին
մերժել Նանսենի օգնութիւն առաջարկը: Այդ առթիւվ կիվ Նանսեն-
Հոյերը գրել է. «Գերմանական կառավարութիւնը, իր վրա
չվերցնելով ոչ մի պարտավորութիւն, առաջարկեց 50 հազար
ֆունտ գումար, Հունաստանի, Լյուքսեմբուրգի ու Նորվեգիայի
կառավարութիւնները նույնպէս խոստացան ոչ մեծ օգնութիւն:
Բայց մեծ տերութիւնները առաջվա նման դեմ էին այդ առա-
ջարկին և, այդպիսով, ամբողջ մտահոգացումը փրվեց: Այդ դեպ-
քում ինչի՞ համար էին բոլոր հանձնաժողովները, — վրդովված
ասում էր Նանսենը: — Ի՞նչ հարկ կար ստեղծել դրանք, եթէ կատա-
վարութիւնները բոլորովին էլ մտադիր չէին որևէ բան անելու և
եթէ նույնիսկ ամենափոքր պահանջները շատ մեծ էին թվում
դրանց համար»²:

1927 թ. նոյեմբերի 24-ին Ֆ. Նանսենը՝ Նորվեգիայի վարչա-
պետին դրած նամակում, գրում է. «Արևմտյան մեծ տերութիւն-
ները պատերազմի ընթացքին և անկե հոք իրենց կատարած
խոստումներուն պատճառու, ամենամեծ պարտավորութիւններն

1 „Société des Nations“, Journal officiel, supplément special,
№ 64, p. 181—182.
2 Лив Нансен-Хейер, Книга об отце, стр. 410.

1 Հայկ. ՍՍՀ ՀՍՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, դ. 604, ք. 27:

ունին անոնց հանդեպ. բայց պետք է ընդունել, թե հայկական ողբերգությունն ընդհանուր առմամբ ամոթալի արատ մըն է Եվրոպայի պատմության մեջ, 1878 թվականի Բեռլինի վեհաժողովին սկսեալ հարատևորեն վատթարացումն վատթարագույնի ենթարկվելով»¹:

Ինչպիսին արևմտյան իմպերիալիստական տերություններն էին, այնպիսին էլ նրանց կամակատար Ազգերի լիգան էր: Վերջինիս նկատմամբ Ֆ. Նանսենը, ելնելով իր մարդասիրական ու խաղաղասիրական նպատակներից, սկզբում տածում էր համակրանք ու բարի հույսեր, բայց այժմ, հատկապես հայ գաղթականության հարցի դառն պատմությունից հետո, նա համոզվեց, որ փաստորեն դրանք պատրանքներ են. ըստ էության խորտակվեց նրա հավատը Ազգերի լիգայի նկատմամբ: Պատահական չէ, որ Ֆ. Նանսենը հայ ժողովրդին նվիրված իր դիրքն ավարտում է հետևյալ խոսքերով.

«Իսկ Ազգերի լիգան. արդյոք նա ունի՞ պատասխանատվության զգացում: Այն ժամանակ, երբ գաղթականների տեղավորման գլխավոր կոմիսարը կրկին մերժեց իր վրա վերցնելու հայ գաղթականների գործը, Ազգերի լիգան անտարակույս խանգարեց ուրիշներին գործուն օգնություն ցույց տալու հայերին: Անհնար էր պատկերացնել, որ նա կարող էր ձեռնամուխ լինել մի գործի՝ այն շահացնելով մինչև վերջ, մանապէս հաշվի առնելով մեծ տերությունների պարտավորությունները: Հավատում է արդյոք Ազգերի լիգան, որ այժմ կատարել է իր պարտականությունը, և որ կարելի է լքել այդ գործը, առանց վարկաբեկելու իրեն հատկապես Արևելքում:

Եվրոպայի ժողովուրդները և պետական մարդիկ հոգնել են հավիտենական հայկական հարցից: Հասկանալի է. այդ հարցում նրանք միշտ անհաջողության են մատնվել: Արդեն Հայաստան անունը նրանց նիհարող խզճի մեջ հիշեցնում է այն խորտակված կամ անկատար խոստումների շարագույժ շարանը, որոնց իրականացման համար նրանք երբեք մատը մատին չխփեցին: Խոսքը վերաբերում է միայն մի փոքր, արնաքամ, բայց տաղանդավոր ժողովրդի, որը սակայն զուրկ է նավթաբեր հողերից ու ոսկու հանքերից:

Վա՛յ հայ ժողովրդին, որ նրան ներքաշեցին եվրոպական

քաղաքականության մեջ: Նրա համար ավելի լավ կլիներ, եթե նրա անունը երբեք ոչ մի եվրոպական դիվանագետի շորթերին չլիներ: Սակայն հայ ժողովուրդը երբեք չհուսահատվեց: Նա իր համառ մշտական աշխատանքով սպասում էր, սպասում երկար: Նա սպասում է մինչև օրս»¹:

Ամոթի զգացումը խոր մարդկային է, ուստի և միանգամայն խորթ շահամոլ իմպերիալիստներին: Նանսենը նշել է, որ Եվրոպան նման է այն աղջկան, որին, ըստ հունական առասպելի, փախցրեց ցուլը. «Երբեմն մարդ ամաշում է, որ ինքը եվրոպացի է»: Նանսենյան այս արտահայտությունը մի նոր շառաշուն ավտակ էր արևմտյան կառավարողներին:

Ազգերի լիգայի խորհուրդը 1928 թվականի սեպտեմբերի 17-ին նորից անդրադարձավ հայ գաղթականներին օգնելու հարցին, և պարզվեց, որ Գերմանիան կարող է փոխատվություն տալ 50000 անգլիական ոսկի (\$ ստ.), նորվեգիան՝ 2000, Ռումինիան՝ 1000, Հունաստանը կհոգա գաղթականների տեղափոխման ծախսի մեկ քառորդը, Հոլանդիան և Լյուքսեմբուրգը «հոմար են դրամապես նպաստելու, սակայն չեն որոշած իրենց բաժինը: Անգլիա և Զվիցերիա կմերժեն ծրագրին գործադրության օժանդակել, առաջինը հայտնելով, թե պատերազմեն ի վեր 1280000 անգ. ոսկի ծախսած է գաղթականներուն համար, առանց հաշվելու քրիտանական բարենպատակ ընկերությանց նպաստները, իսկ վերջինը, թե 1000 անգ. ոսկի փոխ տված է Զվիցերիայի հայկական վարժարաններուն»²: Նանսենը վրդովված էր և իր ելույթում նշեց, որ «ձեռք բերված արդյունքը շատ համեստ է, բայց քանի որ հայերն իրենք ալ մեծ հանգանակություն մը կկատարեն ծրագրին գործադրության համար, որոշած է ձեռնարկին զուլս կանգնիլ և ան հաջող վախճանի մը հասցնել, եթե Ազգերու ընկերությունը իր հովանավորության ներքև առնն անիլա և անոր վարչական ծախսերը ստանձնե»:

Այնուհետև, տվյալ հարցը նորից քննարկվում է հատուկ հանձնաժողովում և սեպտեմբերի 25-ին ներկայացվում Ազգերի լիգայի ընդհանուր ժողովին (ասամբլեային), որն ընդունում է հետևյալ որոշումը. «Ծողովը կորոշե, որ Երևանի հանրապետու-

¹ Fr. Nansen, Betrogenes Volk, S. 334.

² «Միություն», № 120, 1928, էջ 91:

¹ Ավ. Ցափուճյան, Եջ. աշխ., էջ 121:

թյան մեջ հայ գաղթականներու տեղավորման գործը առաջ տարվի Ազգերու ընկերության հովանավորության տակ:

Կորոշե՛ք, որ խորհուրդը շարունակե՛ բանակցութուններ այն կառավարութեանց հետ, որ իրենց աջակցութունը խոստացած են, որպէսզի գրված պայմանները լրացվեն»:

Նանսենը «ընդհանուր ժողովին առջև արտասանած սրտատուշ ճառին մեջ հայտնած է, որ ինքն այս ամենը իբր սկզբնավորութուն մը կնկատե՛ և հույս ունի, որ առաջին հաջողութունը պիտի մղե՛ ուրիշ կազմակերպութուններ, անհատական խմբակցութուններ և նույնիսկ կառավարութուններ այս գործին մասնակցելու»¹:

Հետագա բանակցութուններից պարզվում է, որ Հոլանդիան էլ հրաժարվում է իր խոստումից՝ «նկատելով, որ մեծ պետութունները չեն մասնակցի»²: Անգլիական կառավարութունը մերժեց նանսենի նույնիսկ այն նվազագույն պահանջը, որպէսզի հատուկ հանձնաժողովի ծախսերի համար տրվի 2000 անգլիական ոսկի վարկ՝ Հունաստանում գտնվող հայ գաղթականների մի մասին Հայաստան տեղափոխելու հարցն ուսումնասիրելու համար. «Անգլիացի ներկայացուցիչը... ապանց վարանելու դեմ արտահայտվեցավ թե՛ նանսենի ծրագրին և թե՛ անոր առաջարկած վարկին», ընդ որում նա հասարակական կարծիքի առաջ արդարանալու համար նշեց, թե իբր իր կառավարութունը բոլորից շատ է օգնել հայ գաղթականներին. «Տասնյակ տարիներ շարդել տալ հայ ժողովուրդը Միջագետքի, Փոքր Ասիայի և Գովկասի մեջ, և այնուհետև աստանդակա՛ն որբերուն ու սովալլուկ մանուկներուն քանի մը հազար ոսկի շարտել և ատով հպարտանալ ամբողջ Եվրոպայի հասարակական կարծիքի առջև... ինչ հեզմանք արտասահմանյան հայ գաղթականութեան հանդեպ... Չենք կասկածիր, որ Ազգերու ընկերակցութեան որոշումը հայ գաղթականներու մասին քող մըն է ծածկելու համար տոբթ. նանսենի ծրագրին թաղման արարողութունը, սակայն, այդ բողին տակնն անգլիական ներկայացուցիչը մերկացրեց իր ճիվաղային դեմքը»³: Միանգամայն ճիշտ բնութագրում, ըստ որում պետք է նաև շեշտել, որ անգլիական կառավարութեան ներկայացուցիչները բացահայտ արհամարհանքով էին վերաբերվում դեպի գաղթականներն ընդ-

հանրապես և նույնիսկ նրանց անվանում էին «միջազգային դատարկապորտներ»⁴:

Անգլիական կառավարութեան դիրքը զայրացրեց շատերին, այդ թվում ինժեներ Ուիլյամ Մակինտոշին, որը 1925—26 թվականներին եղել էր Հայաստանում և հավաստել նանսենյան պլանի իրականացման տեխնիկական հնարավորութունը: Նա 1928 թվականի սեպտեմբերի 26-ին Ֆ. Նանսենին գրած նամակում հիացմունքով է խոսում ինչպես մեծ հումանիտար եռանդի, այնպես էլ հայ մասնագետների պատրաստակա՛նութեան մասին: Բայց նա վրդովված է, որ անգլիական կառավարութունը քաղաքական հանգամանքների պատճառով մերժում է ֆինանսապես աջակցել նանսենյան պլանի կատարմանը, Մակինտոշը, մասնավորապես անդրադառնալով այդ օրը (26. 9. 28) լոնդոնյան «Թայմսում» տպագրված հոդվածին, գրում է. «Ես զարմացա լրագրին այդ համարում տեսնելով, թե ինչպես բրիտանական կառավարութունը մերժել է ստորագրել պլանի արժեքի դիմաց այն պատճառով, ինչպես նշված է «Թայմսում», որ հայերը Երևանում գտնււմ են բոլշևիկների ազդեցութեան տակ»: Դատապարտելով այդ վարքագիծը, նա նշում է, որ, եթե «հայերը կարվեն Մոսկվայից, կընչվեն իրենց հին թշնամու՛ թուրքերի, կողմից: Ես աղնվորեն հույս ունեմ, որ նրանք երբեք այդպես չեն անի: Ինձ համար «Թայմսում» բերված պատճառը շատ վատ ու դատարկ փաստարկ է, և ես զարմացած եմ, որ մեր կառավարութունը պատժում է դժբախտ հայ ժողովրդին...»: Իհարկե, դրանում զարմանալի ոչինչ չկա, քանզի այն բխում էր բրիտանական կառավարութեան բուն էությունից, բայց և այնպես հատկանշական է, որ այդ նենգամիտ քաղաքականութունը դուր չի գալիս նաև անգլիացի ինժեներին և նա դրան հակադրում է նանսենի մարդասիրական պլանն ու հույս հայտնում, որ նրա «ազնվաբար ջանքերը կպսակվեն հաջողութեամբ»: Ու. Մակինտոշը հայտնում է, որ ինքը մշտապես պայքարել է այդ պլանի խոչընդոտների դեմ և այժմ էլ պատրաստ է աջակցել դրա կենսագործմանը:

Այդպես, նանսենյան ծրագիրը, որը լայն աջակցութուն էր ստանում սովետական կառավարութեան կողմից, ձախողվեց արևմտյան տերութունների հանցանքով: Այդ փաստն արձանագրեց նաև ՀՕԿ-ի կենտրոնական վարչութունը Փարիզում (1928

1 «Միութուն», № 126, 1928, էջ 92.

2 «Միութուն» № 130, 1929, էջ 149.

3 «Նրևան», 7. 10. 28:

4 «Հառաջ», 18. 6. 27:

թվականի հոկտեմբերին), նշելով, որ «նանսենի կողմն հղացված այս ծրագիրը, ամբողջ երեք տարի Ազգերու լիզի ժողովներուն մեջ ձեռքից հետո, արդեն սնանկացել է... Այլևս աններելի պիտի ըլլա գաղութահայ աշխատավորության համար՝ ներգաղթի հարցին լուծման մասին հույս դնել արտաքին օժանդակության վրա: Անիկա այլևս վերջնականապես պետք է կանգնի 204-ի տեսակետի վրա, — որ բազմիցս կրկնած ենք արդեն, — այսինքն աջակցելով մեր վերաշինության, ներգաղթի ավելի լայն հնարավորություններ ստեղծել»¹: Նկատենք, որ երբ 1929 թվականի սեպտեմբերի 4-ին ժնկում Նանսենի նախագահությանը տեղի ունեցավ Ազգերի լիգայի բարձրագույն կոմիսարիատին կից գաղթականական հիմնարկությունների խորհրդակցական ժողովը, նրա մասնակից, 204-ի ֆրանսիական մասնաճյուղի վարչության նախագահ բժ. Ն. Մինասյանցն առաջարկեց «նանսենյան ֆունդին մաս մը հատկացնել ևս. Հայաստան ներգաղթի գործին», և հակառակ սպիտակզավարդիական առարկության ընդունվեց նմանատիպ որոշում²: Պա ուներ ոչ միայն նյութական, այլև բարոյաբաղաբական կարևոր նշանակություն, քանզի տեղի ունեցավ նանսենյան օգնության միաձուլում սովետական կառավարության հայրենադարձության գործունեության հետ, մի հանգամանք, որ Նանսենի մտահղացմամբ կանխորոշված էր հենց սկզբից և փաստորեն այդպես էլ իրականացվում էր:

Նանսենի հույսերը բոլորովին շարդարացան իր գործի մեջ արևմտյան պետությունների կառավարությունների ընդգրկման տեսակետից: Իրր թե գաղթականներին օգնելու գործն արագացնելու համար Ազգերի լիգայի ասամբլեան 1928 թվականի սեպտեմբերին առաջարկեց խորհրդին՝ գաղթականների գլխավոր կոմիսարին կից ստեղծել միջկառավարական խորհրդակցական հանձնաժողով, որը կմշակի կոնկրետ միջոցառումներ և մասնավորապես բանակցությունների մեջ կմտնի տարբեր պետությունների հետ: Բայց, նախ՝ այդպիսի հանձնաժողով կազմվեց բավականին ուշ (նախագահն էր ֆրասիացի Նավայը) և երկրորդ՝ այն դարձավ անգործունյա: Նրա առաջին հավաքը տեղի ունեցավ 1929 թվականի մայիսի 16—18-ը ժնկում, որին մասնակցում էին 12 պետությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև ղոկտոր

Նանսենն ու Հայկական բարեգործական ընդհանուր միության պատվիրակ, հայ գաղթականների կենտրոնական հանձնաժողովի ընդհանուր քարտուղար Լ. Բաշայանը: Հանձնաժողովը քննարկեց գաղթականներին լավագույն ձևով սպասարկելու հարցը, բայց ոչ մի դրական որոշում չընդունեց: Ավելին, «բոլոր պատվիրակները, պարզելով իրենց կառավարությունների տեսակետները, հայտարարած են, թե հպատակության խմբական ընդունելությունը ո՛չ կարելի է և ո՛չ ալ պարտադրելի: Ներգաղթն ալ գաղթականներու հարցը լուծելու գործնական միջոց չէ»¹: Ահա թե ինչու բոլորովին անհետևանք մնաց Լ. Բաշայանի հայտարարությունն այն մասին, թե իրենք (արևմտահայության ներկայացուցիչները) Ազգերի լիգայի գաղթականների գլխավոր կոմիսարության առաջ հարց են բարձրացրել հայ գաղթականներին Հայաստանում տեղավորելու համար: Միջկառավարական տիրահաշակ խորհրդակցական հանձնաժողովի վերջին արարքն այն եղավ, որ նրա առաջարկով Նանսենի մասինց հետո գաղթականների գլխավոր կոմիսարությունը վերացվեց և այնուհետև այդ գործով պիտի ըզբաղվեր Ազգերի լիգայի ընդհանուր քարտուղարությունը ժնկում ստեղծելով «Գաղթականների միջազգային պաշտոնատուն» (շվեյցարացի իրավագետ Մաքս Հուբերի գլխավորությամբ)²:

Ֆ. Նանսենը 1928 թվականի սեպտեմբերին Ազգերի լիգայի խորհրդում խոր կսկիծով ու զայրությամբ հանդես եկավ հատուկ հայտարարությամբ և նշեց, որ արևմտյան տերությունների հանցանքով ձախողվեց հայ գաղթականներին տրամադրվելիք փոխառությունը: Նրանց բազմիցս տված հայանպաստ խոստումները ի դերև ելան, վերջնականապես մերկացնելով բուրժուական կառավարողների շահադիտական բաղաբականությունը:

Նանսենի այդ հայտարարության առթիվ ՀՍՍՀ ժողովխորհրդի նախագահ Ս. Համբարձումյանը մամուլի ներկայացուցիչներին ասաց, որ մեծ հուամանիտի այդ եղբակացությունն «անպայմանորեն արդարացի է, քանի որ այժմ իմպերիալիստական պետությունները՝ Անգլիայի գլխավորությամբ ոչինչ չեն անում, որպեսզի հայ գաղթականների տեղավորման հարցը շարժեն տեղից... Ես չեմ կասկածում, որ գաղթականների հարցի հանձնումը Ազգերի լիգայի պլենումի քննարկմանը ոչ այլ ինչ է, եթե ոչ այդ հարցի

¹ «Երևան», 7. 9. 28:

² Տե՛ս «Երևան», 6. 10. 29:

¹ «Միություն» № 132, 1929 թ., էջ 187:

² Տե՛ս «Միություն» № 145, 1930 թ., էջ 413:

հանդիսավոր թաղում, իմպերիալիստական երկրների կողմից նրա լուծման անհուսալիություն»¹:

Հայ գաղթականների հարցի միակ լուծողը սովետական պետությունն էր, որը հենց սկզբից հայրենագարծությունը բարձրացրեց կառավարական քաղաքականության աստիճանի, նյութապես աջակցեց ներգաղթողներին և ամեն ինչ արեց նրանց դարձնելու լիիրավ քաղաքացիներ:

Այդպես էր մտածում և դրանում լիովին համոզվեց նաև Ֆ. Նանսենը: Մինչդեռ Արևմուտքի բուրժուական շրջաններն ու նրանց ծորչի գաշնակները կեղծում են պատմությունը և զրպարտում սովետական կարգերը:

1928 թվականի նոյեմբերին Հայկ. ՍՍՀ Ժողովուրդի նախագահ Արսեն Եսայանը Փարիզում «Երևան» թերթի աշխատակցի այն հարցին, թե ինչպիսին է Սովետական Հայաստանի կառավարության վերաբերմունքը դեպի հայ գաղթականների հայրենագարծությունը, պատասխանեց, որ այդ հարցում լիակատար հրատակություն է մտցրել Գ. Զիլերինը դեռ կողանի կոնֆերանսում և հայրենիքում կատարվում է ամեն ինչ՝ նրանց համար բարեկեցիկ կյանք ստեղծելու համար: Մինչդեռ «այն, ինչ որ խոստացվել է մեզ և գաղթականներին եվրոպական իմպերիալիստական պետությունների կողմից, որոնք իսկական հանցավորներն էին հայ գյուղացու դժբախտության, լկտիաբար դրժվեց, հակառակ նրան, որ այդ խոստումները կատարվել էին շատ հեղինակավոր անձնավորությունների կողմից»: Ահա ում են ծառայում գաշնակցական թափթիվուկները, որոնք ամեն կերպ խոչընդոտում էին հայրենագարծությանը և միաժամանակ վայրահաշում սովետական իշխանության վրա. «Այդ բոլորով հանդերձ, — ասել է Ա. Եսայանը, — մենք դրսից գաղթականություն ենք ընդունում և պետք է ընդունենք, աշխատելով այնպես անել, որ ներգաղթը կատարվի ծրագրված ձևով»²:

Հայկ. ՍՍՀ Ժողովուրդի նախագահ Ս. Տեր-Գաբրիելյանը 1929 թվականի ապրիլին Հայաստանի խորհուրդների 6-րդ համագումարում տված զեկուցման մեջ նշեց, որ Ա. Եսայանի հարցադրումը միանգամայն ճիշտ է, որ իսկապես «1922 թ. ընկ. Զիլերինը կողանի կոնֆերանսում ասել է հետևյալը. «Մենք պատ-

րաստ ենք ընդունելու մինչև 50 հազար հայ գաղթականներ, բայց որովհետև տնտեսական ներկա պայմանները մեզ հնարավորություն չեն տա այդ 50 հազարը միանգամից ընդունել, ուստի եվրոպական պետությունները նույնպես պետք է միջոցներ տրամադրեն ներգաղթը կազմակերպելու համար» (այդ պայմանը հասկանալի է ու բնական, որովհետև այդ գաղթականները եվրոպական մեծ պետությունների իմպերիալիստական պատերազմի զոհերն են): Անտանտի կառավարություններն իրենց համաձայնությունը տվեցին»: Սակայն նրանք շուտով դրժեցին տված խոստումները և ծանր վիճակի մեջ դրին մի այնպիսի «հարգելի մարդու», ինչպիսին էր Ֆրիտյոֆ Նանսենը, «որին մենք չենք կարող չհավատալ»: Բայց նրա «բոլոր առաջարկներն ու քայլերն Ազգերի լիգայի մոտ անհաջողության մատնվեցին: Նորերս Նանսենը հայտնել էր մեզ, որ արտասահմանյան բանկերի միջոցով ինքը հավաքել է մեկ միլիոն 600 հազար ուրալի իբր վարկ և առաջարկում էր Խ. իշխանությանը այդ վարկով ընդունել որոշ քանակությամբ գաղթականություն: Մեզ համար կարևորն այն է, որ Ազգերի լիգան իր խոսքը չկատարեց: Այդ հայտնի է նաև արտասահմանյան այն աշխատավորներին, որոնք այդ նույն լիգայի մեջ մտնող իմպերիալիստական պետությունների քաղաքականության զոհերն են: Սակայն մենք չենք հրաժարվում գաղթականներ ընդունելուց — մենք պատրաստ ենք արտասահմանից գաղթականներ ընդունելու»¹:

Հայ գաղթականներն իրենց իղձերը կապեցին մայր հայրենիքի հետ, որը սովետական իշխանության շնորհիվ բարձրացավ մոխրից և զրկաբաց ընդունեց իր բազմաշարժար պանդուխտ զավակներին: Այդ առթիվ սովետական ականավոր գրող Մ. Կոլցովը, այցելելով Հայաստան, գրել է. «Նույնիսկ ոխերիմ սպիտակգլարդիական շարակամները չեն կարող հերքել այն հրաշքը, որը տեղի է ունենում Արարատի ստորոտում. մոխրացած, արյունաշաղխ, մեռնողների հառաչանքներով համակված երկիրն այժմ փթթում է խաղաղ կյանքի ու ստեղծագործ աշխատանքի բերկրությամբ»²:

Ֆ. Նանսենի համար հայ գաղթականության հարցը դարձավ մի նոր և նույնիսկ վճռական փորձաքար ստուգելու Ազգերի լի-

¹ Правда, 28. 9. 28.

² «Երևան», 21. 11. 28:

¹ «Նորհրդային Հայաստան», 11. 4. 29:

² Правда, 2.12.28.

գաղի ու արևմտյան տերությունների «մարդասիրությունը»: Նա համոզվեց, որ այդպիսին նրանք չունեն և առկա է կատարյալ խղում նրանց խոսքի ու գործի միջև, տված խոստումների անամոթ դրժում: Կոտրվեց նրա հավատը Ազգերի լիգայի նկատմամբ, մեծացավ նրա ատելությունը իմպերիալիստական տերությունների նենգամիտ պլանների դեմ: Բայց Նանսենը չկարեց իր հույսը՝ օգնություն կազմակերպելու հայ գաղթականներին: Նա զգում էր, որ եթե իր միսիային չեն աջակցում իմպերիալիստական կառավարությունները, ապա իրեն կհասկանան ու կօգնեն ժողովուրդները: Այդպես էր նաև Պոլովոիի քաղցածներին օգնելու ժամանակ, երբ Նանսենը իմպերիալիստական կառավարությունների գլխի վրայով դիմեց արևմտյան երկրների ժողովուրդներին և հասավ որոշակի դրական արդյունքների: Ահա թե կյանքը ինչպես էր ոչ կոմունիստ Նանսենին փաստորեն մղում դեպի հեղափոխական աշխարհի մեթոդները, ժողովրդական մասսաների շարժման ծավալումը: Դրանով իսկ Նանսենը օբյեկտիվորեն, և հատկապես իր հետամտած հարցերում, յուրահատուկ մարտահրավեր էր նետում իմպերիալիստական կառավարողներին: Պատահական չէ, որ նույնիսկ արևմտյան թղթակիցները Նանսենի երեսյն Ազգերի լիգայում համեմատում էին մրրկաբեր հողմի հետ: Այդ առթիվ կուզվից նույնը գրել է. «Եթե մի ժուռնալիստ առաջին անգամ էր գլխիս ժնև և հարցնում իր կուլեգաներին, թե արդյոք Նանսենն այստե՞ղ է, նա հավանաբար ստանում էր հետևյալ պատասխանը. Դուք՝ ինքներդ շատ արագ կնկատեք այդ, քանի որ անմիջապես կզգաք մի թարմ հյուսիսային քամի՝ նիստերի դահլիճի հեղձուցիչ մթնոլորտում»¹, ժամանակի մամուլը նշել է, որ երբ Նանսենը գնում էր ժնևի փողոցներով, նույնիսկ «եկեղեցիների աշտարակներն էին խոնարհվում նրա ճանապարհին»: Նրան համարում էին և «նի ամենամեծ հետաքրքրությունը՝ Մոսկուլանից հետո:

Նանսենի մարդասիրական գործունեությունը լայն արձագանք էր գտնում տարրեր երկրների առաջադիմական ուժերի, ժողովրդական մասսաների մեջ: Դրա վառ ապացույցն էր նաև Բեռլինում Միջազգային բանվորական օգնության կենտրոնական կոմիտեի 1928 թվականի սեպտեմբերի 19-ի դիմումը «մեծարգո

Նանսենին», որ բարձր են գնահատվում նրա հերոսական ջանքերը տառապյալներին օգնելու գործում: Մասնավորապես շեշտվում էր Նանսենի կենտրոն արշակցությունը Պոլովոիի քաղցածներին, երբ Միջազգային բանվորական օգնության կազմակերպությունն էլ իր հերթին հավաքեց 5 միլիոն դոլար: Այդ մարմինն այժմ, հակառակ արևմտյան տերությունների ու Ազգերի լիգայի հարուցած զժվարություններին ու արգելքներին, պատրաստակամություն է հայտնում աջակցելու Նանսենի գործունեությանը՝ օգնելու հայ փախստականների ներգաղթին Սովետական Հայաստան. «Մենք հավատացած ենք, որ եթե Դուք Ձեզ վրա վերցնեք Հայկական հանրապետության օգնելու համար միջազգային գումար ժողովելու նախաձեռնությունը, մենք մեր կազմակերպության օգնությամբ կարող ենք նույնիսկ հիմա ճարել մի քանի միլիոն մարկ: Մենք հնարավոր գտանք ժնև՝ Ձեզ մոտ ուղարկել մեր կենտրոնական կոմիտեի ներկայացուցչին, որպեսզի Ձեզ հետ բանակցություններ վարի այդ հարցի շուրջը: Մենք պատկերացնում ենք, որ Դուք կկազմակերպեք միջազգային կոմիտե, որի նախագահը կլինեք Դուք, իսկ մենք կմտրիլիցանենք մեր բոլոր կազմակերպություններն աշխարհում՝ անցկացնելու համերաշխության գործողություններ, ցույցեր, զեկուցումներ նկարներով, հանդանակություններ»: Նկատենք, որ 1921 թվականից գործող Միջազգային բանվորական օգնությունը (Межрабпом) վիթխարի կազմակերպություն էր և իր մասնաճյուղերն ուներ բազմաթիվ երկրներում: Այդ կազմակերպությունը միշտ էլ համերաշխ է գործել Նանսենի մարդասիրական միսիայի հետ, հրատարակել է մեծ հումանիտար կոչերը՝ և իր աշխատանքներին մասնակից դարձրել նրա ներկայացուցիչներին: Նանսենն իր հերթին փոխադարձ վստահությամբ է վերաբերվել նրան և մասնավորապես ողջունել Մեծրաբպոմի 1924 թվականի կոնգրեսը²:

Եթե բանվորական, դեմոկրատական կազմակերպությունները չերմոթյամբ էին վերաբերվում Նանսենի մարդասիրական դիմումներին, ապա բոլորովին «անզգա» էին մնում բուրժուական կառավարողները, Ազգերի լիգայի անօրենները, և միաժամանակ

¹ Տե՛ս Willi Münzenberg, Solidarität, Zehn Jahre Internationale Arbeiterhilfe 1921—1931, Berlin, 1931, S. 523.

² Տե՛ս Д. Мичев, Межрабпом — организация пролетарской солидарности 1921—1935, М., 1971, էջ 124:

¹ Ludwig Noekher, Fridtjof Nansen. Polarforscher und Helfer der Menschheit, Stuttgart, 1955, S. 204.

փորձում էին իրենց մեղքը գցել ուրիշների, հատկապես սովետական պետության վրա: Հենց այդպիսի նպատակ էր հետապնդում Ազգերի լիգայի կողմից 1927 թվականին անգլերեն ու ֆրանսերեն լեզուներով հրատարակված նյութերի ժողովածուն՝ հայ գաղթականների վերաբնակեցման հարցի վերաբերյալ («Scheme for the Settlement of Armenian Refugees. General Survey and Principal Documents», Geneva, 1927, «Plan d'établissement des réfugiés arméniens»): Ամենից առաջ նշենք, որ այդ ժողովածուն կազմված է միտումնավոր ձևով, քանի որ նրանում չեն դետեկտված սովետական կողմի փաստաթղթերը: Այդ դեռ բավական չէ, ժողովածուին կցված է ընթերցողին ապակողմնորոշող «Ներածություն»: Ընդհանուր է, այնտեղ նշվում է, որ նանսենյան պլանը (Հայաստանի որոշ հողերի յուրացման մասին) իրագործելի է ոչ միայն տեխնիկապես, այլև առևտրական նկատառումներով (ոռոգվող հողերի եկամուտը կբավի պարտքի մարմանը), բայց, միաժամանակ շեշտվում է, որ դրա համար պահանջվող մոտավորապես մեկուկես միլիոն ֆունտ ստեռլինգ արտասահմանյան փոխառությունը գլոբալ չի գալիս, որովհետև «սովետական կառավարությունը տալիս է միայն պետքանկի երաշխիք՝ առանց ներքին այլ երաշխիքների»¹: Այդպիսով, արևմտյան պետությունները նորից փորձում են խառնվել սովետական երկրի ներքին գործերին և նույնիսկ իրենց վերահսկողությունը հաստատել նրա որոշ եկամուտների վրա: Ակներև է նման հարցադրման կատարյալ սնանկությունը և անընդունելիությունը սովետական կողմի համար: Սովետական Միությունը միասնական պետություն է և նրա պետքանկի երաշխիքը բավական է ցանկացած գործառնության համար: Եթե բուրժուական կառավարողներին դա դուր չի գալիս, ապա հասկանալի է նրանց քաղաքական ու տնտեսական հաշվենկառությունը, որը լիովին մերժում է սովետական կողմը:

□□□

Հուսախար լինելով Ազգերի լիգայից ու մեծ պետություններից, Ֆ. Նանսենը 1927—29 թվականներին տարբեր երկրներում անց է կացնում մասնավոր հանգանակություններ՝ հայ գաղթական-

ների օգտին, ինքը հանդես է գալիս բազմաթիվ դասախոսություններով (նվերոպայի ու Ամերիկայի քաղաքներում) և հավաքած գումարով կազմակերպում 7 հազար հոգու հայրենադարձություն. «Վաթսունվեց տարեկան մարդը երկար ճանապարհորդություն է կատարում ամերիկյան քաղաքներով, որպեսզի իր դասախոսություններով միջոցներ հայթայթի օթևանից և սննդից զուրկ գաղթականների համար»¹:

Մինչև Ամերիկա մեկնելը նանսենը կատարում է որոշակի նախապարտատական աշխատանք, այդ թվում հայ գործիչների հետ: Գրանց մեջ էր Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ Նուբար փաշան, որը մեծապես աջակցեց նանսենին, թե իր անձնական օգնությամբ (միջոցներ տրամադրելով հայ գաղթականներին Հայաստանում տեղավորելու համար) և թե՛ հասարակական գործունեությամբ. նանսենը 1927 թ. օգոստոսի 19-ին՝ Նոել-Բեյքերին գրած նամակում, նշում է. «Նուբար փաշան շատ կփութացնե, որ շարունակենք երևանյան մեր ծրագրերը, եվ կխորհի, թե մեծ հույս կա, որ այդ ծրագրերը իրագործվի»²: Նանսենը սերտ կապերի մեջ էր նաև Լ. Բաշալյանի հետ, որին 1928 թ. հունվարի 6-ին մասնավորապես գրում է, որ մալխիսի պետք է մեկնի ԱՄՆ և իր «նպատակն է անել, ինչ հնարավոր է հայ գաղթականների վերաբերյալ, Գրա համար ես շահագրգռված եմ հանդիպել զանազան կազմակերպությունների հետ և հատկապես այդքան ընկնող հայերի հետ, որոնք կարող են հատուկ օգնություն ցույց տալ մեր հարցում: Մայիսի 7—12-ը ես պետք է ներկա լինեմ Կլիվլենդի և Օհայոյի միտինգներին: Այդ պատճառով մինչ այդ կամ դրանից հետո ինձ շատ հարմար կլինեի հանդիպել հայերին ու Հայաստանի բարեկամներին: Ես այդ մասին Ձեզ գրում եմ այժմ, որպեսզի խնդրեմ նախօրոք մտածեք, թե ինչպես կարելի է լավագույն ձևով օգտագործել իմ այցելությունը Միացյալ Նահանգներ»:

Նանսենին մեծապես աջակցում է Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, և Լ. Բաշալյանը նրան գրած նամակներում իրազեկ է պահում իրենց միջոցառումների մասին: Միությունն ներկայացուցիչները ուղեկցում են նանսենին «Ակվիտանիա» շոգենավի վրա և ամեն կերպ նպաստում նրա մարդասիրական

¹ Scheme for the settlement of Armenian Refugees. General Survey and Principal Documents, Geneva, 1927, p. 9.

¹ А. Толанов, Хансен, М., 1960, стр. 28⁸

² Ազ. Ֆախուրյան, եջ. աշխ., էջ 200:

գործունեության ծավալմանը ԱՄՆ-ում, 1928 թվականի հոկտեմբերի 25-ին ՀԲԸՄ կենտրոնական վարչությունը նանսենին հաղորդում է, որ Ամերիկայում հաջողությամբ է ընթանում հայանըպաստ հանգանակությունը և գրանում իր ավանդն ունի մեծ հուամանիստը. «Զեր տաղանդն ու հզոր եռանդը, որոնց միջոցով Դուք հաղթահարում եք շատ խուլընդոտներ, հայերը երբեք չեն մոռանա»:

ԱՄՆ-ում նանսենը մղում է ոչ միայն բանավոր, այլև գրավոր պրոպագանդա ու հրատարակում հոգիվածներ: Այդպիսիք, օրինակ, Լույս տեսան «Քարնթ հիսթորի» ամսագրում (1929 թ. հուլիս), «Նյու Յորք թայմս» լրագրում և այլն: Նա ամերիկյան ընթերցողին պատկերում է հայկական եղեռնը, մերկացնում դրա հանցավորներին և կոչ անում օգնության ձեռք մեկնել տարաբախտ հայ փախստականներին:

Ամերիկայում նանսենը մոտիկից շփվում է հայկական գաղթօջախների հետ և շրջապատվում առաջադեմ հայերի շերմ ուշադրությամբ: ՀԲԸՄ շրջանային հանձնախումբը Նյու Յորքում կազմակերպում է ճոխ հանդիպում և ըստ արժանվույն դրվատում նրա գործունեությունը, երեստ զգացված էր նանսենը, որը ոչ միայն շնորհակալություն հայտնեց, այլև 1929 թվականի ապրիլի 5-ին հատուկ պատգամով դիմեց ամերիկահայերին: Այնտեղ նա ընդգծում է, որ իր գործունեությունը լայն աջակցություն է գտել սփյուռքահայության մեջ և մասնավորապես ՀԲԸՄ Միության ու նրա նախագահ Պողոս Նուբարի կողմից, Դրա պերճախոս վկայությունն է Նուբարաշենի կառուցումը Սովետական Հայաստանում, որը հայրենասիրական լայն շարժում է առաջ բերել նաև ամերիկահայության մեջ. «Հարկ չկա բսելու,— գրել է Ֆ. Նանսենը,— թե ամենաջերմ կերպով կհամակրիմ այս ձեռնարկին: Չորս տարի է ի վեր ես կաշխատիմ Ազգերու ընկերությանը շահագրգռելու Հայաստանի հողերուն բարելավման խնդրով, ինչ որ լավագույն լուծումը պիտի ըլլա գաղթականներու հարցին: Իմ ջանքերուս արդյունքը ինչ որ ալ ըլլա, վստահ եմ, թե հայերուն անձնվիրությունը իրենց պատմական հայրենիքին, ինչպես նաև տառապալալ ազգականներու վիճակին բարոյաբան ու Երևանի կորովի փոքրիկ հանրապետության վերաշինության համար անոնց ցույց տված քաջասիրությունը, հաստատակամությունը և զոհողությունը հիացում պիտի պատճառեն քաղաքակիրթ աշխարհին... Հայերը կշնորհավորեն իրենց այս վերաշինական

ծրագրին համար և անոր կմաղթեմ լիակատար հաջողություն»¹: Սփյուռքահայությունն ավելի է աշխուժացնում իր հայրենանվեր աշխատանքը և մասնավորապես գումարների ժողովումը ներգաղթի համար: Հատկապես ակտիվ է գործում Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, որի նախագահ Պողոս Նուբարը Ֆ. Նանսենին գրած իր նամակներից մեկում նշում է. «Մեծ հանգանակությունը, որ ընդհանուր միության ամերիկյան բաժանմունքը բացել է — մինիմում 350000 դոլար, և հավանաբար՝ 500000 դոլար՝ հաշված նաև Եվրոպայի հանգանակությունները, որոշակի նպատակի համար է և առաջին հերթին նպատակը Ձեր նախագծի իրականացմանը Հայաստանում, այնտեղ ստեղծել մի մեծ գյուղ՝ գաղթականների հնարավորին չափ մեծ խումբ տեղավորելու համար»: Խոսքը Նուբարաշենի (Սովետաշենի) մասին է, որի կառուցման համար ինքը՝ Պողոս Նուբարը նվիրաբերեց 100000 դոլար, իսկ մինչ այդ նրա ծախսերով (14250 դոլար) Երևանում կառուցվեց ակնաբուժարան: Վերջինիս շահագործման առթիվ նա հեռագրեց Հայկ. ՍՍՀ Ժողկոմխորհի նախագահ Ս. Տեր-Գաբրիելյանին՝ Սովետական Հայաստանին ցանկանալով հետագա բարգավաճում: Պատասխան հեռագրում Ս. Տեր-Գաբրիելյանը «խորին շնորհակալություն է» հայտնում «հարգելի» Պողոս Նուբարին և նշում. «Մեր կառավարությունը գնահատում է ոչ միայն այն աջակցությունը, որ Դուք տալիս եք ես. Հայաստանի վերաշինության գործին ակնաբուժական կլինիկայի կառուցումով, այլև այն, որ Դուք մոտիկ հետաքրքրություն եք ցույց տալիս նրա ապագա ճակատագրի վերաբերմամբ, վստահեցնելով Ձեզ, որ մեր կառավարությունը այսուհետև ես հնարավոր աջակցություն պիտի տա շինարարական այն բոլոր հանրօգուտ աշխատանքներին, որոնք կձեռնարկվեն ես. Հայաստանի արտասահմանյան քաղաքացիների կողմից»²: Նկատենք նաև, որ երբ 1930 թվականի հունիսի 25-ին Փարիզում մահացավ Պողոս Նուբարը, որն ընդհանուր առմամբ հայ գաղթականներին օգնելու և բարեգործության նպատակներով տրամադրել էր մեկ միլիոն դոլար, Հայկ. ՍՍՀ Ժողկոմխորհը ուղարկում է ցավակցական հեռագիր. «Կառավարությունը իր խորին ցավակցությունը կհայտնի այն կորուստին

¹ «Միություն», 1930 թ., № 140, էջ 311:

² «Միություն», 1930 թ., № 142, էջ 363:

համար, զոր Բարեգործական միությունը ունեցած է իր հիմնադրելի և նախագահին՝ Պողոս Նուբար փառալուսի մահվամբ»¹։

Նանսենն իր սկսած գործն առաջ մղելու համար մշտական կապ էր պահպանում Սովետական Հայաստանի կառավարության հետ և ձգտում ամեն կերպ աջակցել նրա մարդասիրական ու հայրենասիրական գործունեությանը։ Դրա մասին է վկայում նաև այն պայմանագրի նախագիծը, որը կնքվել է 1929 թվականի մարտի 5-ին՝ Սովետական Հայաստանի կառավարության և գաղթականների տեղավորման գլխավոր կոմիսար Ֆ. Նանսենի միջև։ Դրանով նախատեսվում էր, որ Հայաստանի օգնության միջազգային կազմակերպությունը (The International Armenian Settlement Organization) դ-ր Նանսենի գլխավորությամբ Սովետական Հայաստանին բաց կթողնի փոխառություն ու վարկեր անձնվազն 15000 ֆունտ ստեռլինգ գումարով՝ Մերձավոր արևելքից հայ գաղթականների տեղափոխման ու տեղավորման համար։ Դա կլինի երկարաժամկետ (15 տարով) և համեմատաբար քիչ (8) տոկոսով, բայց ՍՍՀՄ պետրանկը պետք է տա համապատասխան երաշխիքներ (փոխառությունը և տոկոսները լրիվ մարելու համար)։ Ստացված գումարով Հայաստանի կառավարությունը պետք է կազմակերպի 5000 հայ գաղթականների հայրենադարձություն, ինչպես նաև տա համապատասխան արտոնություններ (ձրի հող, 2 տարի ազատում զինծառայությունից և այլն)։ Վերջին՝ 13-րդ կետը ձևակերպված է այսպես. «Մինչև սույն պայմանագրի և լրացուցիչ պայմանագրի ստորագրումը Հայկ. ՍՍՀ կառավարությունը պետք է նրա համար ստանա ՍՍՀՄ-ի և ԱՍՖՍՀ-ի համաձայնությունը»²։

Ակնհերև է Ֆ. Նանսենի հետևողականությունը ամեն կերպ նըպաստելու իր մարդասիրական գործի կատարմանը։

Լիովին դառնացած Ազգերի լիգայից, Ֆ. Նանսենը 1929 թվականի աշնանը նրա ընդհանուր ժողովին (ասամբլեային) առաջարկեց վերջ տալ հայկական դատի և մասնավորապես հայ գաղթականներին Սովետական Հայաստանում տեղավորելու հարցի ապարդյուն քննարկմանը։ Դա տեղի ունեցավ սեպտեմբերի 21-ին՝ ժնեում։ Ասամբլեայի օրակարգում նորից դրված էր հայ գաղթականների հարցը, որի մասին վերջին անգամ զեկուցում է

Ֆ. Նանսենը։ Նա հուզված էր ու վրդովված. «Տիկնայք և պարոնայք, ևս պետք է խոստովանեմ, որ այս զեկուցագիրը ձեզ եմ ներկայացնում արյունաթոր սրտով»,— այդպես է սկսում իր ելույթը մեծ հումանիտան ու մարտիկը։ Այդուհանդերձ, Նանսենը վերստին բնութագրում է հայ ժողովրդի պատմական ուղին և տալիս հայ դատի ծանր պատկերը։ Նա ընդգծում է որ «հայ ազգն ունի նշանավոր պատմություն» և «կատարել է կարևոր ներդրումներ քաղաքակրթության մեջ», բայց նրան բաժին է ընկել նաև ահավոր տառապանք ու կոտորած։ Դա հատկապես զգացվեց վերջին մեծ պատերազմի ժամանակ, երբ թուրքերը զազանաբար հոշոտեցին հայերին։ Մեծ պետությունների հորդորանքներով բազմաքանակ հայեր կոլեցիան նրանց բանակներում, բայց «դաշնակիցները» չկատարեցին իրենց հայանպաստ խոստումները. «Ես համոզված եմ,— ասաց Նանսենը,— որ համաշխարհային պատմության մեջ ոչ մի ժողովուրդ չի ենթարկվել այդպիսի վատ վերաբերմունքի ինչպես հայ ժողովուրդը։ Եվ ոչ մի ժողովուրդ չի տառապել այդպես դաժանորեն»։ Ազգերի լիգան շարունակեց նույն քաղաքականությունը և «տակավին շարդարացրեց սպասելիքները... Ես ցավում եմ, որ չնայած մեր բոլոր ջանքերին, հնարավոր չէր զգնել այդ տանջված ժողովրդին»։ Ուստի, Նանսենն առաջարկեց, որ Ազգերի լիգան «խզի կապը երևանյան նախագծի հետ» (հայ գաղթականներին Հայաստան տեղափոխելու առթիվ), մի նախագիծ, որն իրականացվում է սովետական իշխանության կողմից. «Հայկական կառավարությունն ինքն է ջանում ոռոգման աշխատանքներ կատարել և գործում է ակտիվորեն՝ գաղթականներին տեղավորելու համար»։

Նանսենի պնդմամբ Ազգերի լիգայի ասամբլեան հարկադրված էր նման որոշում ընդունել՝ մի ավելորդ անգամ բացահայտելով իր չկամությունն ու հակաժողովրդական էությունը։ Որոշվեց նաև «Գերմանիան, Նորվեգիան, Ռումինիան և Հունաստանը զերծ կացուցանել նախապես իրենց ստանձնած հանձնառություններին և կոթբանբուրդի կառավարության, ինչպես նաև երկու անհատներու վերադարձնել իրենց հանձնած գումարները»¹։ Այս կետը ևս ընդունվեց Նանսենի պահանջով, բանի որ նա անթույլատրելի էր համարում «մուրացկանության» ձևով ու շնչին գումարներով

¹ «Միություն», 1930 թ., № 141, էջ 325։

² Հայկ. ՍՍՀ ՀՀՍՀ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, դ. 663, թ. 18։

¹ «Միություն», 1929, № 135, էջ 237։

հաղորդակցվել սովետական կառավարության հետ, մի կառավարություն, որը սեփական ուժերով կարգավորում էր հայ գաղթականների հարցը:

Մեծ նորվեգացու կենսագիրներից Լյուդվիգ Նոկերը գրել է. «Նանսենը արյունաշաղախ սրտով Ազգերի լիգայի ամբիոնից հայտարարեց, որ իր կողմից հայկական հարցի հետամտումը ներկա իրադրության մեջ թվում է անհուսալի և նա առաջարկում է հայկական հարցը հանել Ազգերի լիգայի օրակարգից»¹: Չէ որ այդ հարցի վերաբերյալ Ազգերի լիգայի գործունեությունը հանգեց սոսկ դատարկ խոսակցության ու նենգամիտ խաղերի:

Վերոհիշյալ ակտով Նանսենը ֆորմալ կերպով ու փաստորեն խղեց իր կապը Ազգերի լիգայի հետ՝ հայկական հարցում: Սակայն դրա լուծամար նա համակված էր մինչև իր կյանքի վերջը, և նույնիսկ Ազգերի լիգայի որոշման մեջ ասված էր, որ «դոկտոր Նանսենը... տրամադիր է հետևել հայ գաղթականներուն Հայաստան վերադառնալու շարժումին»²: Ծիշտ է նկատել Լ. Նոկերը, որ Նանսենը իր վերջին գրքի («Կովկասով դեպի Վոլգա») շարադրման ժամանակ էլ «խստորեն գտնվում էր այն շրտված զրգավարությունների տպավորության տակ, որոնք հակադրվում էին իր վրա վերցրած խնդրին՝ տարագիր հայերին հայրենիք տալուն»³: Հիրավի, դա այն գիրքն է, որտեղ դարձյալ մտորումներ կան հայոց մասին: Ամբողջությամբ վերցրած այն համակված է խոր մարդասիրությամբ դեպի սովետական ժողովուրդները, այդ թվում հայերը: Նորվեգիայում սովետական դեսպան Ա. Կոլոնտայը, ստանալով դրա հեղինակային օրինակը (չերմ մակագրությամբ), 1930 թվականի հունվարի 7-ին գրել է.

«Թանկագին պրոֆեսոր նանսեն»

Արտառուչ շնորհակալություն Ձեզ՝ Ձեր «Կովկասով դեպի Վոլգա» հիանալի գրքի համար: Դա իսկական շեղեր է, գիտական տեղեկությունների միացում գրական հմուտ վարպետության հետ: Այդ գիրքը արտահայտում է Ձեր մեծ ու հարուստ ձիրքով օժտված անձնավորության գծերը: Այն իմաստալից է, խոր,

¹ Ludwig Nockher, Fridtjof Nansen, Polarforscher und Helfer der Menschheit, S. 196—197.

² «Միություն», 1929 թ., № 135, էջ 237:

³ Ludwig Nockher, Fridtjof Nansen..., S. 200.

գիտական և շատ ու շատ մարդասիրական: Ես երջանիկ եմ այն ստանալով և շնորհակալ եմ Ձեզ դրա համար»:

Նանսենը մարդկային բարության մարմնացումն էր և տանել էր կարող աշխարհում կատարվող անարդարությունները: Նրա կյանքի համար «ամենածանր ժամը» դարձավ այն, որ ընայած գործադրված վիթխարի շանքերին, շրականացան նրա իդեալը ոչ միայն հայկական հարցի լուծման, այլև նույնիսկ հայ գաղթականների տեղափոխման այն ժամանակվա իր պլանների կատարման վերաբերյալ:

Անգլիացի հասարակական-քաղաքական գործիչ Ֆրիդպ Նոել Բեյքերը «Նանսենի դերը պատմության մեջ» գրքում, բացահայտելով մեծ գիտնականի ու հումանիստի վիթխարի ծառայությունները, բարձր է գնահատում նաև նրա հայնպաստ գործունեությունը, նա միաժամանակ նշում է, որ ընայած Նանսենը ներկայացրեց հայ գաղթականների տեղավորման միանգամայն հիմնավորված պլան, արևմտյան տերությունները քաղաքական նկատառումներով մերժեցին այն ֆինանսավորել: «Լիովին քաղաքական պատճառներով խոստացված փոխառությունը մերժվեց: Դա Նանսենի մեջ առաջացրեց դառն հիասթափություն մինչև նրա մահը... Նա խոր հարգանք էր տածում դեպի հայերը և հիանում էր նրանցով: Նա դառն ամոթ էր զգում, որ չկատարվեցին արևմտյան երկրների տված շատ խոստումներ»¹: Ապա հեղինակը շեշտում է, որ այն, ինչ շարեցին արևմտյան տերությունները, իրականացրեց սովետական իշխանությունը, և բազմաճազար սփյուռքահայեր հանգրվանեցին մայր հայրենիքում:

Նկատենք, որ Նոել Բեյքերը մաքառել է հայ դատի ու հայ գաղթականներին օգնելու համար: Այս հարցում նա համազործակցել է Նանսենի հետ, խրախուսել նրա մարդասիրական գործունեությունը և դատապարտել արևմտյան տերությունների, այդ թվում սեփական երկրի, կառավարությունների նենգամտությունը: Այդպես, Նոել Բեյքերը 1927 թ. հունիսի 13-ին Նանսենին գրում է. «Չափազանց մտահոգ եմ հայկական հարցին առնչությամբ... Կխորհիմ, թե անգլիական, ֆրանսիական և գերմանական կառավարությունները խղճալի կացություն մեջ պիտի գտնվին, եթե մերժեն օգնել... Պահպանողական կուսակցությունը հոս կատարելապես խենթացած է Ռուսիո առնչությամբ»²: Մի

¹ Philip Noel-Baker, Nansen place in history, Oslo, 1962, p. 15.

² Ավ. Յափուեյան, Եջ. աշխ., էջ 155—156:

ալլ տեղ նա պահպանողական կառավարութեան վերաբերմունքն անվանում է «գարշելի ապիկարութուն»¹։

Նանսենն անցել է մաքառումների հերոսական ուղի։ Նա տեսել է անհամար զոհվարություններ, սակայն միշտ էլ կարողացել է հաղթահարել դրանք։ Բացառություն կազմեց հայկական խնդիրը, որը դարձավ նրա կյանքի ավարտի ամենամեծ գործը, բայց մնաց անկատար։ Այդ առթիվ Ֆրանսիացի գործիչ Ռ. Ռիստելուեբերը գրել է. «Նանսենը, հայկական հարցին նվիրաբերելով իր հոգին ու մարմինը, իրեն կրկնակի պարտավորված էր զգում։ Առաջինը, անկասկած, այն պատճառով, որ նա՝ ելնելով մարդասիրական խոր զգացումներից, ակամայից նետվում էր զժբխտների պաշտպանությանը։ Երկրորդը՝ գուցե այն պատճառով, որ այդ զժբխտները հենց հայերն էին», այսինքն՝ «տաղանդավոր ու աշխատասեր մի ժողովուրդ, որը հրաշքներ է գործել պատմության մեջ», բայց և սպրել «ահավոր ողբերգություն»։ Ինչպես կարող է մարդկությունն անտարբեր մնալ նրա ցավերի նկատմամբ... Դա բոլորովին անընդունելի էր մեծ հումանիստի համար, որը տարիներ շարունակ հոգացել է հայոց գործը, մարտնչել նրա արդարացի լուծման համար, բայց ծարավի մնացել իր փափագի կատարմանը. «Այս աշխարհից հեռանալիս,— շարունակում է Ռիստելուեբերը,— նանսենի ամենամեծ վիշտն այն էր, որ առաջին անգամ նրան շահողվեց հասնել իր առջև դրված նպատակին»²։ Դրա հանցավորները օտարերկրյա զավթիչներն էին, իմպերիալիստական տերությունները, արևմտյան կառավարողները, որոնք ինչպես ամենուրեք, այնպես էլ Ազգերի լիգայում բոլոր խնդիրների լուծման շահանիշ էին դարձնում միայն իրենց մերկ շահերը։ Էմիլ Լյուդվիգը, մասնավորապես անդրադառնալով հայկական հարցի ու հայ գաղթականների տեղավորման խնդրի քննարկման ելնելներին, նշել է, որ Ֆ. Նանսենը Ազգերի լիգայում «այսպես կոչված պետական մարդկանց մեջ հանդես էր գալիս որպես օտար թուղն», «կուրյոզ», «աարօրինակ մարգարե», «կիսաֆանտաստ» և դա այն պատճառով, որ նա, որպես «ժողովուրդների բարեկամ, շատ խորթ էր Ազգերի լիգայի ոգուն»³։

¹ Ավ. Յափուեյան, *Ելվ. աշխ.*, էջ 206։

² René Ristelhueber, *La Double aventure de Fridtjof Nansen* (Explorateur et philanthrope), Montréal, 1944, p. 250.

³ Emil Ludwig, *Fühur Europas*, S. 41—42.

Նույն հարցի առթիվ Վ. Զոնթագը, արտահայտվելով ավելի պարզ, ուղղակի գրում է, որ բուրժուական պետությունները չուզեցին «ուշ մի փոխառություն տրամադրել Հայաստանին, որովհետև դա սովետական հանրապետություն է»։ Մերկացնելով դրանց դիվանագիտական կեղծ պրիտմները, նա ընդգծում է. «Միթե նույնքան զայրացուցիչ չէ «կուլտուրական տերությունների» սպանիչ պասսիվությունը, որքան թուրքերի կատարած արյունախում նողկալիությունը։ Հայաստան... Իմպերիալիզմն ինչպիսի հազվագյուտ ուժով է մերկացրել իր ողջ դաժանությունը, իր ցինիկ երկդիմի բարոյականությունը»¹։

Հայ ժողովրդի անկեղծ բարեկամ, լատվիացի հոշակավոր գրող Յան Ռայնիսը դեռ 1926 թվականին գրել է. «Ամենավերջին ժամանակներս, հենց այս տարի, հայ գաղթականներով սկսեց հետաքրքրվել Ֆրիտյոֆ Նանսենը՝ նանսենիստների հայրը, պատերազմի բոլոր փախտականների պաշտպանը։ Բայց մեկ մարդը կարող է ձեռք բերել ավելի, քան ամբողջ միացած ու անմիաբան քաղաքակրթ շախարհը, առնվազն եվրոպայի դիվանագետները։ Հուսանք, որովհետև այդ մեկ մարդը սիրտ ունի, իսկ այն բազմամարդ դիվանագիտությունը՝ միայն միտք»²։ Ակներև է, որ «միայն միտք» խոսքի տակ հեղինակը նկատի ունի արևմտյան կառավարողների սոսկ «շահավետ հաշվենկատությունը», որին հակադրվում էր Ֆ. Նանսենի ոչ միայն «սիրտը», այլև նրա ազնիվ ու մարդասիրական, հուզումնալից ու բանական հոգին։

Հասկանալի է նաև Յան Ռայնիսի մտահոգությունն ու տարակուսանքը. ի՞նչ կարող էր անել մի մարդ, թեկուզ համաշխարհային համբավի տեր մեծ հումանիստ, եթե նա հանդիպում է քար լուռության ու ահեղ դիմադրության։ Այնուամենայնիվ, Ռայնիսը հավատում էր Նանսենին, որն, իրոք, խիղախեց ու մարտնչեց և կատարեց առավելագույնը, այն, ինչ ի վիճակի էր հայ գաղթականներին օգնելու համար։ Նա պարզապես այրվեց այդ գործում թե՛ հոգեպես և թե՛ ֆիզիկապես։ Մարդկանց ծառայությունները պետք է գնահատել նրանց թափած ջանքերով, եթե անգամ դրանք տվյալ պահին չեն տալիս ցանկացած արդյունք-

¹ Wolfgang Sonntag, *Fridtjof Nansen*, S. 471.

² Յան Ռայնիս, *Քնտիր երկեր*, Երևան, 1957, էջ 623։

ներս Այլ կերպ ինչպես գնահատել այն անձնվեր հերոսներին, որոնք զոհվում են շհասած իրենց նպատակին... Նրանք եղել ու մնում են որպես ժողովրդանվեր գործիչներ, որոնց փառքը երբեք չի խամբի: Հենց այդպիսին էր Զրիտյոֆ Նանսենը, որն իր գիտական ու հումանիտական ողջ գործունեությամբ անմահացավ մարդկության համար...

ԳՆՈՒՄ ՀԻՆԳԵՐՈՐԳ

ՆԱՆՍԵՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Ֆ. Նանսենը թողել է գրական-գիտական վիթխարի ժառանգություն, որի մի մասը լույս է տեսել առանձին գրքերով և ապա՝ նրա երկերի ժողովածուով (վերջին նորվեգերեն հրատարակությունը՝ 8 հատորով, նամականիով (4 հատորով): Սակայն նա թողել է նաև մեծահարուստ արխիվ, որը հետմահու հանձնվել է Օսլոյի համալսարանի գրադարանի պահպանությանը: Այդ արխիվում կան բազմաքանակ նյութեր հայերի ու Հայաստանի մասին, որոնց մեծ մասը, դժբախտաբար, մինչև այժմ մնում է անհայտ մասսայական ընթերցողի համար:

Ֆ. Նանսենի կտակի համաձայն, նրա արխիվը (ձեռագրերը) պիտի բացվեր և կարող էր հրատարակվել իր մահից 20 տարի հետո: Նանսենի կինը (Զիգրուն Մունթեն) խնդրեց և հանձնարարեց զոկտոր Լիգե Լինդբեկին*, որ նա կարգի բերի արխիվը, դասավորի նրա նյութերը: Այդ գործը կատարվում է և, ինչպես հաղորդել են ֆրանսահայ թերթերը, Լ. Լինդբեկը «մոտեն հետաքրքրված է հայերով» ու տեղեկացնում է, որ Նանսենի ար-

* Լ. Լինդբեկը Նորվեգիայի մշակութային գործիչների պատմիրակության կազմում 1950 թվականին այցելել է Սովետական Միություն (այդ թվում Անդրկովկաս), հիացել նրա բազմապիսի նվաճումներով և 1951 թվականին հրատարակել «Մենք եղել ենք Սովետական Միությունում» գիրքը (Lise Lindbaek, Vi wartin Soviet, Oslo, 1951):

խիվում կան շատ կարևոր նյութեր հայերի մասին: Այդ կապակցությամբ հայտնի գրող ու հասարակական գործիչ Ստեփան Շահպաղը (Ալեքսանդրիայից) հատուկ հոդված է գրում «Բաղմավեպի» 1953 թվականի № 8—10-ում («Տոբթ. Նանսենի հայոց վերաբերյալ թուղթերը») և ամենից առաջ ընդգրծում Նանսենի մեծությունը որպես գիտնականի, մարդասերի ու հայասերի: Այնուհետև նա նշում է, որ Նանսենի «հայասիրական աշխատանքը եղավ օգտակար ու հոյակապ, քաջության, արիության ու արդարասիրության մեծ օրինակ»: Ուստի, պետք է նրա արխիվից հանել (պատճեննավորել) հայերին վերաբերող նյութերը և հրատարակել առանձին ժողովածուով (բնագրով ու հայերեն թարգմանությամբ), որը նոր լույս կսփռի հայ ժողովրդի պատմության կարևոր էջերի վրա. «Այս գործը ազգային հարց է այլևս: Միաժամանակ՝ ազգային պատիվ ալ: Ով պիտի անցնի այս հույժ օգտակար գործին գլուխը»: Ս. Շահպաղը գտնում է, որ այդ գործով կարող են զբաղվել նյութապես բավականին ապահով ու լայնատարած Հայկական բարեգործականը, Հայ ազգային հիմնադրամը («Կկարծեմ թե այս գործը կմտնե, անկեղծորեն կխորհիմ, իր ծրագրին մեջ»), բայց ավելի լավ կլինի, եթե «Մեր Հայ-Վենետիկը ստանձնեի այս պատիվն ալ»:

Նրա նա ունի լավ տպարան ու թանգարան և գիտահրատարակչական գործի շնորհալի փորձ: Նկատենք, որ «Բաղմավեպի» խմբագրությունը այդ առթիվ տալիս է հետևյալ ծանոթագրությունը. «Ընդունելի է առաջարկը մեր պատվական հոդվածագրին հետևյալ պայմաններով. Մխիթարյան տպարանը կրնա տպագրել տոբթ. Նանսենի հայոց վերաբերյալ գործերը, եթե ՀԲԸ Միությունը հանձն առնե տպագրության ծախսը: Ս. Ղազարու Մխիթարյան թանգարանը սիրով կպահհ նաև ձեռագրերը տոբթ. Նանսենին, երբ հավաքող հանձնախումբը հաճի զրկել զանոնք մեզի»¹:

Որոշակի ակտիվություն է ցուցաբերում Հայ ազգային հիմնադրամի կենտրոնական վարչությունը Կահիրեում: Ս. Լորելին (Ս. Երզնկյանը) 1955 թվականի ապրիլի 5-ին Ուպսալայից (բաղար Շվեդիայում) լոնդոն՝ Ա. Սաֆրաստյանին գրած նամակում նշում է. «Շտապում եմ Ձեզ հայտնել ուրախ լուր, թե ազգային հիմնադրամի կենտրոնական վարիչ մարմնից ստացա մի երկու

օր առաջ գրություն, թե որոշած է տպագրել մի հատոր Նանսենի հայերիս վերաբերյալ գրություններից (բնագրի լեզվով և ռուսահերև հայերեն թարգմանությամբ) և խնդրում էին ինձնից զբրել Օսլո միկրոֆիլմ անելու մասին: Նանսենի թղթերը-արխիվը գտնվում են Օսլոյի համալսարանի գրադարանում և ես հարաբերության մեջ դրի Օսլոն ու Կահիրեն մոտ 1200 էջ միկրոֆիլմ անելու համար: Գիտեմ, որ այս լուրը Ձեզ ուրախալի կլինի լսելով: Լորելին ինքը գործում է շատ ակտիվ, կապվում Ֆ. Նանսենի դստեր՝ Լիվ Նանսեն-Հոլերի հետ, որը ջերմորեն է արձագանքում այդ գործին: Լորելին ծանոթանում է Նանսենի արխիվին, տեսնում բազմաքանակ նյութեր հայերի մասին և հաղորդում հայ ազգային հիմնադրամի ղեկավարությանը, որ կարելի է հրատարակել մոտ 320 էջից բաղկացած փաստաթղթերի ժողովածու, որին կկցվի ներածական խոսք Նանսենի՝ այդ «հոյակապ, վեհ ու բացառիկ դեմքի մասին»: Նյութերի հավաքման պարտականությունը իր վրա վերցնելով, Լորելին հայտնում է, որ ժողովածուի կազմումը և խմբագրումը պետք է կատարի մեկ ուրիշը (նրա կարծիքով այդպիսին կարող է լինել Ստ. Շահպաղը)²: Նա նամակներ է գրում նաև Ստ. Շահպաղին և մասնավորապես հաղորդում, որ Նանսենի դուստրը՝ Լիվը, հայտնել է. «Հայրս մեռավ հայ բառը շրթունքին, այնքան նա սիրում էր և սքանչանում հայ ժողովրդով»³: Ուրեմն, առավել ևս պետք է զբի նրա մասին և դա կարող է լավագույնս անել Ստ. Շահպաղը, որն ըստ արժանվույն սիրում և բարձր է գնահատում Նանսենին:

Լորելին ամեն կերպ նպաստում է այդ գործին և միաժամանակ «Պայքար» թերթում Նանսենի արխիվից հրատարակում որոշ նյութեր (Պողոս Նուբարի երկու և Լ. Բաշալյանի մեկ նամակները Նանսենին) ու հաղորդում նախապատրաստվող ժողովածուի մասին⁴:

Կարծես թե ամեն ինչ կարգին է գնում և կարելի էր հուսալ, որ շուտով այդ ժողովածուն կհրատարակվի: Բայց, դժբախտաբար, մինչև այժմ այն չկա: Իրոք, Նանսենի արխիվից հանվել են հայերին վերաբերող բազմաթիվ նյութերի (մեծ մասամբ նամակների) պատճենները և ուղարկվել Կահիրե՝ ազգային հիմնադրա-

1 Հայկ. ՍՄՆ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 412, ց. 1, գ. 1205, թ. 3:
2 Նույն տեղը, թ. 6—7:
3 Ավ. Յաֆուեյան, նշ. աշխ., էջ 10:
4 Տե՛ս «Պայքար», 1. 5. 55, 3. 5. 55:

¹ «Բաղմավեպ», 1953 թ., № 8—10, էջ 199:

մին: Այդ նյութերի վրա բավականաչափ աշխատել է Ստ. Շահ-
ալազը: Սակայն գործն ընդհանուր առմամբ մնացել է անկատար:
Բնականաբար, շատ ցանկալի էր գոնե ստանալ այդ նյութերը կամ
դրանց պատճենները: 1973 թվականին մեկնեցիք Եգիպտոս,
սլարդեցիք նյութերի ստացման իրողությունը, բայց բուն նյութե-
րը չգտանք: 1974 թվականին Երևանում էր գտնվում «Արև» թերթի
խմբագիր Ավետիս Ցափուճյանը, որը պետական համալսարա-
նում հաջողությամբ պաշտպանեց թեկնածուական (պատմական
գիտությունների) դիսերտացիա: Նրան խնդրեցիք վերադարձին
դրադվել այդ հարցով և հնարավոր օգնություն ցույց տալ: Նա
սիրահոժար համաձայնվեց և շուտով, 1974 թվականի հունիսի
25-ին Կահիրեից գրեց. «Ուրախ լուր Ձեզի. Նանսենի նամակնե-
րը ես գտա հիմնադրամի արխիվում՝ փոշիների մեջ հանգստա-
նալիս...»: Տարեվերջին այդ նյութերն ստացվեցին Երևանում,
որի համար խորին շնորհակալություն ենք հայտնում մեծապա-
տիվ Ավ. Ցափուճյանին և Ստ. Շահալազին: Բացի դրանից Երե-
վանից հաղորդակցվել էինք Օսլոյի համալսարանի գրադարանի
հետ, և մասնավորապես Ալ. Մյանսիկյանի անվան հանրային գրա-
դարանի միջոցով նույնպես նյութեր ստացել (այդ ուղղությամբ
շնորհակալ ու եռանդուն աշխատանք կատարեց գրադարանի ար-
տասահմանյան գրքափոխանակման բաժնի վարիչ Սպարտակ
Ղազարյանը):

Մանոթությունը ստացված բոլոր նյութերի հետ պարզեց, որ
դրանք բազմապիսի են ու օգտակար, բայց էլի չէինք հանգստա-
նում, մանավանդ որ մի շարք տեղեր զգացվում էր խիստ ան-
բավարարություն: Ուրեմն, հարկավոր էր անպայմանորեն լինել
Նանսենի բուն արխիվում: Գյոթեի խոսքերը՝ «բանաստեղծին ի-
մանալու համար պետք է լինել նրա երկրում», կիրառելի են նաև
այս դեպքում: Եվ ահա մենք մեկնեցիք Նորվեգիա ու աշխատե-
ցիք հիմնականում Օսլոյի համալսարանի գրադարանում, որ
գտնվում է Նանսենի արխիվը: Այն շատ մեծ է և ընդգրկում է
Նանսենի գործունեության բոլոր կողմերը՝ կապված աշխարհի
բազմաթիվ երկրների հետ: Միայն նամակների թիվը հասնում է
չուրջ 10 հազարի: Բազմաքանակ արժեքավոր նյութեր կան Ռու-
սաստանի ու Սովետական Միության վերաբերյալ և, ինչպես ար-
դեն նշել ենք, մոտ 3 հազար գործ էլ վերաբերում է Հայաստա-
նին ու հայերին: Գրանք գրված են անգլերեն, ֆրանսերեն, նոր-

վեգերեն, ռուսերեն (մասամբ) և գտնվում են հիմնականում մե-
քենագիր ու տպագիր, ինչպես նաև ձեռագիր վիճակում:

Ֆ. Նանսենի գրական ժառանգությունը Հայաստանի ու հայերի
մասին կազմավորվել է զանազան ուղիներով ու ձևերով և այն
հատկապես ինտենսիվ բնույթ է ստացել մեր դարի 20-ական թվա-
կաններին, երբ նա մոտիկից դբադվել է հայ դատով ու գաղթա-
կանների հարցով: Այդ առթիվ Նանսենի ծով արխիվում կարելի
է գտնել նրա ղեկուցագրերն ու նամակները, հեռագրերն ու գրա-
գրությունները սովետական ու արտասահմանյան պետական ու
հասարակական գործիչների, գիտնականների, արվեստագետների,
շարքային քաղաքացիների հետ, նրա դասախոսություններն ու
ճառերը, հոդվածներն ու հարցազրույցները, տպագրված տար-
բեր երկրների մամուլում, նրա բազմաթիվ ղեկուցագրերն ու և-
լույթները Ազգերի լիգայում և այլն: Մենք հնարավոր ջանքեր
գործադրեցինք կատարելու անհրաժեշտ նյութերի ընտրություն,
և այդ գործում մեզ բարյացակամորեն աջակցեցին Օսլոյի հա-
մալսարանի գրադարանի աշխատակիցները: Հատկապես շնոր-
հակալություն եմ հայտնում գրադարանի ձեռագրերի բաժնի վա-
րիչ Սվեեր Ֆլուգստուդին, նույն բաժնի աշխատակից Պոլար Վաստ-
վիյոտին, ինչպես նաև գրադարանի փոխանակման բաժնի վարիչ
Աննա Գրետա Հոլմ-Օլսենին: Շնորհակալություն նաև մեզ աջակ-
ցած պատմաբաններ Ստեյնեը Չերհեյմին, որի ղեկավարու-
թյամբ հրատարակվում է Նանսենի նամակներն, և Թիմ Գրե-
վին, որը Նանսենի մասին գրել է 2 հատորանոց աշխատություն.
վերջինս Ֆ. Նանսենի տղայի՝ Օդդի (մահացել է 1973 թվականին)
փեսան է և մեզ ուղեկցեց դեպի Լյուսակեր՝ Պուլճոգոլա, ուր տե-
սանք բազմաթիվ նանսենյան մասունքներ, այդ թվում Երևանի
հիդրոկայանի կառուցումը պատկերող ալբոմը, որը 1925 թվակա-
նին Հայկ. ՍՍՀ Ժողկոմխորհի նախագահի տեղակալ և լուսժող-
կոմ Ա. Մոսովյանը նվիրել էր «մեծարգո դ-ր Նանսենին»: Ի հի-
շատակ այդ այցի Նանսենի աշխատասենյակում թողեցիք Երե-
վանին նվիրված պատկերազարդ գիրքը՝ ընծայագրով: Նանսեն-
ների ընտանեկան օջախը շրջադայելուց հետո դուրս եկանք տան
ծովահայաց բակը և հուզումնալից խոնարհվեցիք մեծ նորվեգա-
ցու շիրիմի առաջ. այստեղ էլ նրան զարգարում են պարզու-
թյունն ու համեստությունը: Այդպես են մեծերը սերունդներ դաս-
տիարակում թե՛ իրենց կյանքով և թե՛ մահով ու շիրիմով...

Նանսենի արխիվի նյութերը միացնելով Մոսկվայի ու Երևա-

նի արխիվներում պահպանվող նյութերին, կարելի է կազմել ու հրատարակել փաստաթղթերի մի ժողովածու, որը կլինի արժանի նվեր Ֆ. Նանսենի հիշատակին և կդառնա հուսալի աղբյուր պետական հետազոտություններին համար:

□□□

Ֆ. Նանսենի գրական ու գիտական ժառանգությունն մեզ կարեւոր անդ է գրավում Հայաստանին նվիրված աշխատությունը, որը սինթեզում է հեղինակի ճանապարհորդական նոթերը հայ ժողովրդի պատմության գլխավոր գրվածքների նրա քննական տեսությունների հետ: Այստեղ, մի կողմից, դրսևորվել է Նանսենի ավանդական սովորությունը՝ գրի առնել տեսածն ու հետազոտածը, իսկ մյուս կողմից, որը և ամենակարևորն է նրա համար, հասարակական խղճի դատին ներկայացնել իրեն հուզող հարցերը, այն անարդարությունները, որոնք տեղի են ունենում քաղաքակիրթ աշխարհում: Նա այդպես վարվեց, օրինակ, 1891 թվականին՝ գրելով «էսկիմոսների կյանքը» գիրքը և այժմ՝ 1927 թվականին՝ «Հայաստանում» աշխատությունը*, որի հակիրճ առաջաբանում մասնավորապես նշված է. «Այս գրքում փորձ է կատարվում նրկարագրել մեր ուղևորությունը, մեր աշխատանքը, մեր տպավորությունները երկրի ու ժողովրդի մասին և տալու մեր առաջարկները: Ես համոզված եմ, որ եթե այդ առաջարկությունները կատարվեն, այդ երկրում նոր հնարավորությունների զարգացման սկիզբ կդրվի և դրանք կհասցնեն այդ ժողովրդի ու նրա շատ գաղթականների ավելի լուսավոր ապագային»: Գրքի վերջին երկու գլուխներում տրվում է հայ ժողովրդի պատմության համառոտ ուրվագիծը: «Ինձ դժվար է հավատալ, որ որևէ մեկը կարող է ծանոթանալ այդ ժողովրդի պատմությանը, առանց խորապես ցնցվելու նրա մեծ ողբերգությունից: Եթե ես նույնիսկ անբավարար եմ շարագրել, այնուամենայնիվ, հուսով եմ, որ այս էջերում տրված փաստերը կշարժեն Եվրոպայի ու Ամերիկայի խիղճը»¹: Պատահական չէ, որ Նանսենը շտապում

էր թե՛ իր գրքի նորվեգերեն հրատարակությանը և թե՛ նրա թարգմանությունների հատկապես եվրոպական լեզուներով: Այդպես, նա 1927 թվականի մարտի 25-ին Ֆ. Նոնե Բեյքերին գրում է, որ հայ գաղթականների հարցի վերաբերյալ փաստաթղթերի ու նյութերի հրատարակությունը կունենա բարերար ազդեցություն. «Այդ կապակցությամբ ես ուզում եմ... նշել Հայաստանի մասին իմ գիրքը, որն արդեն վերջացրել եմ և այժմ տպագրվում է նորվեգիայում: Պ-ն Ջեյնը մյուս շաբաթ կսկսի անգլերեն թարգմանությունը: Ես կարծում եմ, որ մեր նախագծի համար մեծ կարևորություն ունի արտասահմանյան հրատարակությունը կամ հրատարակությունները, որքան հնարավոր է շուտ: Ես արդեն այդ մասին ասել եմ իմ գերմանական հրատարակչին՝ պ-ն Բրոկհաուզին, որը շահագրգռված է տպագրել գերմանական հրատարակությունը, բայց ես դեռևս ոչինչ չեմ արել անգլերեն հրատարակության համար, և ես կուզենայի Չեզանից խորհուրդ ստանալ թե ո՞ւմ դիմեմ: Ի՞նչ կասեք պ-ն Լեոնարդ Վուֆի «Հեղաբո» հրատարակչության մասին:

Այդ գրքում ես աշխատել եմ նկարագրել մեր պլանը ավելի մատչելի ձևով, քան դա անում են բոլոր մինչև հիմա տպագրված փաստաթղթերը, և պատմել եմ երկրի, ժողովրդի ու նրա կարողությունների մասին: Երկու գլուխ նվիրված է Հայաստանի պատմությանը և նրանց (հայերի) տառապանքներին, այն ամենի մասին, ինչին ենթարկվել են նրանք: Ես հուսով եմ, որ դա որոշ ազդեցություն կունենա և կարթնացնի աշխարհի խիղճը: Իսկապես այդ պատմությունը սարսափելի է...»:

Գործն առաջ է գնում և արդեն 1928 թվականի հունվարի 6-ին Ֆ. Նանսենը գրում է Լ. Բաշալյանին. «Իմ գիրքը Հայաստանի մասին այժմ տպագրվում է անգլերեն ու գերմաներեն, և ես հուսով եմ, որ այդ հրատարակությունները շուտով լույս կտեսնեն: Ես դեռևս չեմ գտել ֆրանսիացի հրատարակիչ, որը կցանկանար լույս ընծայել ֆրանսերեն: Բայց ես կարծում եմ, որ դա անհրաժեշտ է: Կարո՞ղ եք դուք ինձ այդ գործում որևէ խորհուրդ տալ: Ոչ միայն խորհուրդ է տրվում, այլև ՀԲԸՄ կողմից կազմակերպվում է ակտիվ աջակցություն և Պոդոս Նուբարի ծախսերով Նանսենի գիրքը շուտով լույս է տեսնում նաև ֆրանսերեն: Դեռ 1928 թ. ապրիլի 18-ին Ֆ. Նանսենը Լ. Բաշալյանին գրած նամակում նշում է. «Ես շատ ուրախ եմ, որ այդքան լավ է կազմակերպված իմ գրքի ֆրանսերեն հրատարակությունը: Սրտագին շնորհակա-

* Նորվեգերեն աշխատությունը կոչվում է «Gjennom Armenia», որը բառացի նշանակում է «Հայաստանի միջով» կամ «Հայաստանում», բայց, կարծում եմ, հայերեն ավելի ճիշտ կլինի թարգմանել «Հայաստանում», որը և համապատասխանում է գրքի բովանդակությանը:

¹ Fridtjof Nansen, Betrogenes Volk, F. A. Brockhaus/Leipzig, 1928, S. 7.

լուծվում»։ Մի այլ առիթով նանսենը գրում է. «Գալով Հայաստանի մասին գրքիս, անշուշտ մեծագույն հաճույքով «Հայաստանի օգնության կոմիտեին» բացառիկ իրավունք կուտամ գիրքը հայերենի թարգմանելու, հնարավոր դարձնելու, որ անոր հայերենն ալ հրատարակ ելնե միաժամանակ անգլերենին հետ, և ես հպարտ պիտի ըլլամ, որ Կոմիտեին քիչ մը շահ պիտի կարենամ տալ, որպէսզի զայն գործածել իր նպատակներուն համար»¹։

Նանսենի աշխատութիւնը նպատակ ունեւ Եւրոպայում շարունակելու հայոց մասին և շարժել «աշխարհի խիղճը»։ Ակներև է, որ արևմտյան տերութիւնների կառավարողների «խիղճը» շահադիտական էր և խոսք էլ չէր կարող լինել նրանց «մարդասիրութեան արթնացման» մասին։ Փաստորեն դրանում արդեն համոզվել էր նաև Ֆ. Նանսենը, և նրա գիրքը օբյեկտիվորեն ուղղված էր աշխարհի ժողովուրդներին՝ դատապարտելու իմպերիալիստների դավերն ու աշակցելու տարաբխտ հայ գաղթականներին։ Պատահական չէ, որ Նանսենի գրքի գերմաներեն հրատարակութեան վրա կարմիր տառերով գրված էր. «Մեղադրանք Անտանտի և Ազգերի լիգայի դեմ»։ Բացի դրանից, «Թայմս» անգլիական թերթը գրել է. «Այս գիրքը կարիճի պես իր պոչի մեջ խայթոց ունի, որը վիրավորում է հաճոյակատարութիւնը բոլոր ներքին, ուրբի խոստացան ավելին, քան ի վիճակի էին կատարելու»²։

Կարելի է ասել, որ եթե Նանսենի աշխատութեան գրելու առիթը հեղինակի ուղեւորութիւնն էր Հայաստան, ապա պատճառը նրա հոգեհարազատութիւնն էր հայ ժողովրդի հետ, նրա արդարամիտ զայրույթը այդ ժողովրդի նկատմամբ կատարված ոճիրների ու շարագործութիւնների առթիւ և անհուն ցանկութիւնն ամեն կերպ օգնելու նրան։ Դա ողջախոհ ինտերնացիոնալիստի ու մեծ բարեկամի հոգու ճիշն էր, որ պետք է անպայմանորեն արձակվեր ի լուր ամբողջ աշխարհի։

Նանսենն այդ աշխատութիւնը գրելու համար կատարել է նախապատրաստական մեծ աշխատանք։ Ծիշտ է, նա վաղուց արդեն ծանոթ էր հայ ժողովրդի պատմութեանը, բայց ավելի հետաքրքրվեց, երբ զբաղվեց հայ գաղթականների հարցով ու այցելեց Հայաստան։ Այստեղ նա կատարեց բազմաթիւ գիտարկումներ,

գրառումներ ու լուսանկարներ, որոնք օգտագործեց իր գրքում։ Վերագտնաւորվ արտասահման, նանսենը շարունակեց սերտ կապեր պահպանել Սովետական Հայաստանի պետական գործիչների ու գիտնականների հետ, որոնց դիմում էր թե՛ գաղթականական գործերով և թե՛ իր ապագա աշխատութեան նախապատրաստման համար։ Այդպես, նա պրոֆեսոր Զ. Բեդելյանին, կամ ինչպես ինքն է ասում՝ «իր բարեկամին», 1927 թվականի փետրվարին հատուկ նամակ է գրում և խնդրում հայ մասնագետների օգնութեամբ իրեն տեղեկութիւններ հաղորդել հայերի մարդարանական ծագման մասին։ Զ. Բեդելյանը Երևանից մարտի 8-ին հեռագրում է Լյուսակերձ. Ֆ. Նանսենին. «Կկատարեմ այն ամենը, ինչ անհրաժեշտ է»։ Նա համապատասխան տվյալներ հաղորդելու համար դիմում է հնէաբանութեան պրոֆ. Ա. Քալանթարին, Երևանի պետական թանգարանի ղեկավար, ազգագրագետ Ե. Կալանթարին, էջմիածնում գիտական ինստիտուտի ղեկավարների վարիչ Ս. Տեր-Հակոբյանին, պատմաբան Զ. Մանուկյանին։ Հարկ ենք համարում բերել Զ. Բեդելյանի 1927 թվականի մարտի 24-ի նամակը Ս. Տեր-Հակոբյանին, ուր մի մեծ հատված կա Ֆ. Նանսենի նամակից.

«Մեծապատիւ Ս. Տեր-Հակոբյան,

Թույլ տվեք դիմել Ձեզ մի խնդրով. շատ հուսով եմ, որ գուր կկատարեք այդ խնդիրը, քանի որ դա այնպիսի մի մարդու խնդիրն է, ինչպես Նանսենը։ Սրանից մի քիչ ժամանակ առաջ ես պատիւ ունեցա ստանալ Ֆ. Նանսենից նամակ, որից ես մեջ եմ բերում մի քանի տողեր, որից դուք կտեսնեք, ինչու՞մ եմ կայանում հարցը և խնդիրը։

«...Հայաստան կատարած իմ ճանապարհորդութեան մասին ես մի գիրք եմ գրել, որը հիմա տպագրվում է։ Ես այդ գրքի մեջ մի քանի գիտողութիւններ եմ արել նաև հայ ազգի ծագման մասին։ Հիշում եմ, որ ես Երևանի թանգարանում բրոնզե կամ քարե դարին պատկանող զանգեր եմ տեսել, որոնք դոլիխոցեֆալ էին»։ Յավոք սրտի, այդ մասին նշումներ ես շեմ կատարել, թե դրանք որտեղից են հայտնաբերվել և կամ թե ի՞նչ բովանդակութիւն

¹ Ավ. Յափուեյան, էջ. աշխ., էջ 110։

² «Նոր ուղի», № 4—5, 1930 թ., էջ 48։

³ Դոլիխոցեֆալա—հունարեն բառ է, որը նշանակում է երկարպոսի, բրախիցեֆալա—կարճապոսի և մեզոցեֆալա—միջնապոսի։

են անցել այդ հայտնագործությունները, նաև ինչե՞ր են գտնվել այդ գանգերի հետ միասին: Ես այնպես եմ հասկացել, որ այն բոլոր գանգերը, որոնք հայտնաբերվել են Հայաստանի հնագույն դամբարաններում և կուլտուրական շերտերում, հանդիսանում են գոլիտոցեֆալներ: Ես չկարողացա այդ մասին գրականություն գտնել, ոչ էլ որևէ նկարագրություն այդ գանգերի և նրանց հայտնությունների մասին, թե դրանք ո՞ր դարին են պատկանում՝ արդյոք բարե, բրոնզե, թե՞ երկաթե դարին են պատկանում: Ես չկարողացա նմանապես այս կապակցությամբ գտնել որևէ բան Վանի (Ուրարտուի) խալդերի մասին, արդյոք նրանց մեջ չկայի՞ն երկարագանգեր:

Վրաստանում երևում է, որ արդեն երկաթե դարում ապրել է գոլիտոցեֆալների մի ցեղ (օրինակ, Մցխեթում և Սամթավրոյում), բայց այդ մասին չկարողացա գրականություն գտնել:

Հիմա ես չգիտեմ Հայաստանում ո՞վ է այդ ուսումնասիրել և դրա համար ես թույլ եմ տալիս գրել Ձեզ ու հարցնել, թե հնարավոր չէ՞ որևէ մեկի միջոցով Երևանում այդ մասին մի փոքր տեղեկություն իմանալ, և թե արդյոք այդ մասին արևմտաեվրոպական լեզուներով գրվածք կա՞: Հիշյալ գանգերի նկարները ունե՞ք: Ես խնդրում եմ Ձեզ, որ հայտնեք մեր կուլեզաններից մեկին այդ մասին: Ես կուզեի, որ իմ տված կարճ հարցերին դուք լրիվ և ճիշտ պատասխանեիք»:

Երբ ես ստացա այս նամակը, դիմեցի ընկ. Ա. Քալանթարին և ասացի դրա մասին ընկ. Մուսվյանին: Նա ինձ ասաց, որ ես դիմեմ ընկ. Ծ. Լալայանին: Երկու ընկերներն էլ տվեցին պատասխաններ և երբ հայտնեցի դրա մասին Մուսվյանին, նա գրեց ինստիտուտին, որ ինստիտուտը այդ երկու գրությունից որոշի ընդհանուրը, եթե հնարավոր է հանել և ես ուղարկեմ այդ պ. Նանսենին: Հիմա թույլ տվեք Ձեզ դիմել այդ առթիվ: Խնդրում եմ Ձեզ, բարի եղեք նայել ներփակյալ՝ Ա. Քալանթարի և Լալայանի գրությունները, ավելացրեք Ձեր կողմից ի՞նչ ունեք ասելիք, մանավանդ գրական աղբյուրների վերաբերյալ և հետո բարի եղեք ուղարկել ինձ, եթե կարելի է, մոտ օրերս, որովհետև պետք է շտապ ուղարկել նորվեգիա: Ինստիտուտից Ձեզանից զատ նույն խնդրով ես դիմել եմ ընկ. Մանանդյանին: Լալայանի գրությանը կից կա մի գանգի լուսանկար, որը արված է երեք կողմից՝ առաջից, հետևից և կողքից: Նկարները Ձեզ, ներեցեք, շուղարկեցի Գրություն

պատասխանը և երկու ընկերների գրությունը կարող եք ուղարկել դիտություն ինստիտուտ:

Խորին հարգանքով Ձերդ՝ Հ. Բեդելյան»¹

Վերոհիշյալ գիտնականներն ամենայն բարեխղճությամբ կրպչում են գործի և ներկայացնում անհրաժեշտ տվյալներ (հողվածներ, գրականության ցուցակ, գանգերի լուսանկարներ և այլն): Հ. Բեդելյանը հողվածները թարգմանում է գերմաներեն և մնացած նյութերի հետ միասին 1927 թվականի մայիսի սկզբին ուղարկում Ֆ. Նանսենին: Այդ մասին նա և՛ հեռագրում է, և՛ նամակ գրում: Ահա մայիսի 11-ի նամակը, որն աչքի է ընկնում մտերմական շարադրանքով և բազմազան հազորդումներով.

«Մեծաբզո պարոն դակտոր,

Ես մեծ պատիվ ունեցա ստանալու Ձեր նամակը՝ հայ ժողովրդի մարդաբանական մի քանի հարցերի վերաբերյալ:

Այդ առթիվ ես անմիջապես դիմեցի երեք մասնագետների և վերջապես այժմ, մայիսի 11-ին Ձեզ եմ ուղարկում նրանց երեք հողվածները.

1) դ-ր Ս. Տեր-Նակոբյանի,

2) դ-ր Եր. Լալայանի,

3) դ-ր Ա. Քալանթարի:

Միաժամանակ կցում եմ գրականության ցուցակը, որը տվել են պարոններ Տեր-Նակոբյանն ու Քալանթարը, ինչպես նաև երեք գանգերի նկարներ, որ տվել է ինձ պարոն դ-ր Լալայանը Ձեզ ուղարկելու համար:

Ինձ համար շատ հաճելի է, որ Գուք միշտ հիշում եք Երևանում Ձեր գտնվելու մասին: Մեզ համար կլինեն շափազանց հաճելի, եթե Գուք նորից գալիք Երևան, ինչպես Գուք գրում եք այդ մասին Ձեր նամակում: Այստեղ Երևանում ամեն ինչ սովորականի նման է: Գարունը շատ անձրևոտ էր և հուսով եմք, որ հողը լավ

¹ ՀՍՍՀ Միևտարների խորհրդին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ՝ Մասենադարան, Ս. Տեր-Նակոբյանի արխիվ, թղթ. 76, վավ. 115: Վերոհիշյալ նամակն առաջին անգամ հրատարակել է Մասենադարանի գիտաշխատող Ա. Աղամյանը (տե՛ս Հայկ. ՍՍՀ ՆԳՄ արխիվային վարչության տեղեկագրի տեղեկություններ, 1961 թ., № 2), բայց Ֆ. Նանսենի Հ. Բեդելյանին գրած նամակը պետք է թվագրել ոչ թե 1925 թվականի վերջը կամ 1926 թվականի սկիզբը, ինչպես ենթադրում է ընկ. Աղամյանը, այլ 1927 թվականի սկիզբը (ավելի ճիշտ՝ փետրվար):

կլինի: Համալսարանում մի շարափից կվերջացնենք դասախոսություններն ու գործնական պարապմունքները և հունիսի 1-ից մինչև 20-ը կանցկացնենք քննությունները:

Բժշկական ֆակուլտետում այս տարի կլինեն առաջին շրջանավարտները՝ 32 երիտասարդներ: Նրանք՝ 2 պրոֆեսորների հետ միասին 3 օր առաջ մեկնեցին Մոսկվա ու կենիսգրադ՝ այնտեղի բժշկական հիմնարկներն այցելելու համար:

Այս տարի մենք ունեինք մոտավորապես 1200 ուսանող և ուսանողուհի:

Ինձ համար ցավալի է, որ ես չկարողացա հոգւածները մի քիչ ավելի շուտ ուղարկել Ձեզ: Գաղթականների հարցը շատ ծանր է: Խնդրեմ ընդունեք իմ սրտագին ողջույնները:

Ձեզ անկեղծորեն նվիրված
Պրոֆ.-գր. Հ. Բեդեյլան»

Ֆ. Նանսենը շնորհակալությամբ է ընդունում այդ ամենը և մասնավորապես իր գրքում (Հայաստանի մասին), երախտագիտությամբ հիշատակելով վերոհիշյալ գիտնականների անունները, ուղղակի գրում է. «Ես շնորհակալ եմ այդ պարոններին հատկապես նրանց արժեքավոր աջակցության համար»¹:

Նանսենը միաժամանակ օգտագործել է եվրոպական լեզուներով հրատարակված գրականությունը Հայաստանի մասին, ինչպիսիք են Հ. Լինչի, Փակ դը Մորգանի, Կ. Լեման-Հաուպտի (որի հետ ունեցել է մանրամասն նամակագրություն հատկապես հին Հայաստանի վերաբերյալ), Յ. Լեպսիուսի, Ա. Մանդելշտամի և այլոց աշխատությունները, հունական պատմիչների (Քսենոֆոնի, Հերոդոտի, Ստրաբոնի) և հայ պատմագիրների (Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Ագաթանգեղոսի, Ղազար Փարպեցու, Եղիշեի, Սեբեոսի և ուրիշների) երկերը: Նկատենք, որ Նանսենը նաև մոտիկից ծանոթացավ հայոց լեզվին, որպեսզի բնագրով օգտագործի համապատասխան աղբյուրները կամ գոնե կարևորագույն տեղերը (դա հաստատվում է հենց նրա գրքի շարադրանքով, որն ուղեկցվում է հայերեն բազմաբանակ տերմինների ու անունների օգտագործմամբ, հաճախ նաև դրանց վերլուծմամբ ու ստուգաբանությամբ):

Հասկանալի է, որ թե՛ Նանսենի օգտագործած աղբյուրագիտական բազան և թե՛ նրա ընդհանուր աշխարհայացքն իրենց կնիքն են դրել Հայաստանին նվիրված նրա գրքի շարագրանքի քաղաքական ու գաղափարական ոգու վրա: Այնուամենայնիվ, ճշմարտությունը պահանջում է ասել, որ Նանսենը խոր մարդկայնությամբ ու արդարամտությամբ է ընկալում հայ ժողովրդի անցած երկարատև ու ծանր ուղին, բացահայտում նրա հերոսական պայքարը օտարերկրյա զավթիչների դեմ, նրա տնտեսական ու կուլտուրական բեղմնավոր գործունեությունը, արժանի ներդրումը համաշխարհային քաղաքակրթության մեջ, 1914—20 թվականների ծանր արհավիրքները և հայ ժողովրդի վերածնունդը սովետական կարգերում, նրան հուզող հարցերը նորագույն ժամանակներում:

Նախքան այդ գրքի բուն էությունն անցնելը, անհրաժեշտ ենք համարում կանգ առնել բնագրից այլ լեզուներով թարգմանելիս նրա վերնագրի փոփոխության հարցի վրա: Ինչպես արդեն նշել ենք, Ֆ. Նանսենի տվյալ աշխատությունն առաջին անգամ լույս է տեսել 1927 թվականին նորվեգերեն՝ «Հայաստանում» վերնագրով²: Այնուհետև այդ գիրքը թարգմանվեց ու լույս տեսավ 1928 թվականին անգլերեն (Լոնդոնում ու Նյու Յորքում) ու ֆրանսերեն (Փարիզում) «Հայաստանը և Մերձավոր արևելքը» վերնագրով («Armenia and the Near East», «l'Armenie et le Proche Orient»), իսկ գերմաներեն (Լայպցիգում) «Խարված ժողովուրդ» վերնագրով («Betrogenes Volk»): Մեզ անհայտ է, թե Նանսենն ինչպես է վերաբերվել այդ փոփոխություններին, բայց գտնում ենք, որ դրանք բոլորովին էլ պետք չէին, քանի որ չեն համապատասխանում ո՛չ բնագրին և ոչ էլ իրականությանը: Գրքի առանցքը Հայաստանն է, և հարկ չկար նրա առնչությունները տարբեր կրկրների (ասենք Մերձավոր արևելքի) հետ ցցուն դարձնել վերնագրի մեջ: Եթե անգլերեն ու ֆրանսերեն հրատարակությունների վերնագրի ելակետը (իհարկե, սխալ) աշխարհագրական սկզբունքն է (ավելի շատ տարածքի ընդգրկման տեսանկյունով) և Հայաստանի հետ համակշիռ է դարձվել Մերձավոր արևելքը, ապա գերմաներենի վերնագրին աչքի է ընկնում քաղաքական կողմով, և իր սուր ծայրով ուղղված է արևմտյան տերությունների շահագիտական ու նենգամիտ քաղաքականության դեմ, որը և մերկացվում է Նանսենի գրքում: Անշուշտ, այդ տերությունների դե-

¹ Այժմ այդ գիրքը կազմում է Ֆ. Նանսենի երկերի նորվեգական վերջին հրատարակության 6-րդ հատորը (Օսլո, 1962) և ունի 250 էջ:

² 18—Նանսենը և Հայաստանը

¹ F. Nansen, Betrogenes Volk, S. 234.

կալվարների զինանոցում կարևոր տեղ է բռնում խարեությունը, որը բազմիցս հաստատվել է նաև նրանց հայանպաստ խոսքերի հակադիր (ուղղակի՝ կործանարար) գործերով: Գրանով հանդերձ չի կարելի ասել, որ խարվել է ամբողջ հայ ժողովուրդը. իրոք, խարվել են նրա այն ազգային գործիչները, որոնք հավատացել են արևմտյան տերությունների կառավարողների կեղծ խոստումներին: Առավել ևս դատապարտելի է այն, որ նրանց խարվելը դարձել է մշտական երևույթ և այդ գործելակերպը դեռ այսօր էլ շարունակվում է դաշնակցական արկածախնդիրների կողմից: Գուցե և հնարավոր է, որ, ասենք թուրքական յաթաղանից ազատվելու համար, հայ գործիչներն սկզբնական շրջանում, իրենց անփորձություն հետևանքով, կարող էին դիմել արևմտյան տերություններին: Բայց սխալը կարելի էր ուղղել զոնե առաջին մի քանի դասն դասերն ստանալուց հետո: Մինչդեռ նրանք, և հատկապես դաշնակցականները, նման գործելակերպը դարձրին մշտական ուղեցույց և իրականում վերածվեցին շահավետ գործիքի իմպերիալիստական պետությունների ձեռքին: Ինչքան էլ իր ժամանակին նրանք խաղային մասսաների հետամնացության վրա, և պատրանքներ սերմանեին, «համակրողներ» հավաքագրեին, միևնույն է, չի կարելի հավասարության նշան դնել նրանց և հայ ժողովրդի միջև: Վերջինիս գերակշռող մասը և նրա լավագույն դավակները (կոմունիստները և այլ առաջադեմ մարդիկ) ազատագրման հույսերը կապում էին սեփական ուժերի, Ռուսաստանի և հատկապես համառուսաստանյան հեղափոխական շարժման հետ: Ավելին, նրանք մերկացրել են թե՛ արևմտյան տերությունների դավերը և թե՛ «սեփական ազգային ջոշերի» ստրկամտությունը օտարերկրյա տերերին: Ուրեմն, ճիշտ չէ նաևսենի գիրքը կոչել նաև «նաբված ժողովուրդ»: Նկատենք, որ նաևսենի աշխատությունը 1929 թվականին թարգմանվում է հուլանդերեն և վերնագրին էլ պահպանվում է նաևսենյանը՝ «Door Armenie», այսինքն՝ «Հայաստանով» կամ ավելի ճիշտ «Հայաստանում» (հուլանդական հրատարակությանը ևս հանդիպեցի Օսլոյում՝ «ՊուլՆյոգդալում», նաևսենի աշխատասենյակում):

Ինչ վերաբերում է այդ գրքի հայերեն թարգմանության հարցին, ապա այդ մասին պետք է ասել հետևյալը: Սկսած 1928 թրվականից հայ մամուլում (հանդեսներում ու լրագրերում) լույս են տեսել նաևսենի աշխատության առանձին հատվածներ՝ ֆրանսերեն, գերմաներեն ու անգլերեն հրատարակություններից: «Ամ-

բողջովին» այն հրատարակվեց 1958 թվականին Բեյրութում՝ Հրաչ Քաջարենցի թարգմանությամբ ու կրում է «Հայաստան և Մերձավոր արևելք» խորագիրը (ֆրանսիական և անգլիական հրատարակությունների նման): Ընդհանրապես դրական համարելով այդ քալը և շփոտելով թարգմանչի վաստակը, միաժամանակ շեղք կարող չնշել, որ թարգմանությունը կատարվել է խիստ «ազատ» ու համառոտակի, բնագրի համեմատությամբ կան շատ շեղումներ ու թերություններ: Ուստի, մինչև այժմ Ֆ. Նաևսենի գրքի հայերեն գիտական հրատարակության խնդիրը մնում է օրակարգի մեջ և անպայման այն պետք է լուծել:

Նկատենք, որ տվյալ ուսումնասիրության համար մենք օգտագործել ենք Ֆ. Նաևսենի գրքի գերմաներեն հրատարակությունը, իհարկե, շանտեսելով նաև այն լավագույնը, ինչ ձեռք է բերվել հայերեն:



Ֆ. Նաևսենի «Հայաստանում» աշխատությունը բավականին ծավալուն է (գերմանական հրատարակությամբ 350 էջ) և կազմված 11 գլխից, ուր հեղինակը հանգամանորեն պատմում է իր կատարած ճանապարհորդության և ստացած տպավորությունների մասին, ընդ որում շարադրանքն ուղեկցվում է 45 տիպիկ նկարներով (զանազան վայրերի ու մարդկանց) և 3 քարտեզներով (Հայաստանի ֆիզիկական աշխարհագրության վերաբերյալ և այն հողերի նշանագրումով, որոնք նախատեսվում էին օգտագործել հայ գաղթականների համար): Գրքի 4-րդ գլուխը (էջ 84—110) ներկայացնում է Վրաստանի պատմության հակիրճ ակնարկը, իսկ 10-րդ և 11-րդ գլուխները (էջ 233—338) ուրվագծում են հայոց պատմությունը:

Այդ ամենի մասին այս կամ այն չափով խոսել ենք և համապատասխան քաղվածքներ բերել նախորդ գլուխներում, բայց և այնպես, դրանք բիչ են՝ նաևսենի աշխատության վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար: Նկատի ունենալով, որ ցայժմ մենք ավելի շատ օգտագործել ենք հեղինակի ճանապարհորդական նոթերը, այստեղ ուշադրության առարկա կդարձնենք նրա հայացքները հայ ժողովրդի պատմության վերաբերյալ (հատկապես նկատի ունենալով գրքի 10-րդ և 11-րդ գլուխները, որոնք կոչվում են «Ուրվագիծ հայոց պատմության», «Հայաստանը նոր ժամանակներում»):

Ամենից առաջ նանսենը նշում է, որ հայերը պատկանում են աշխարհի հնագույն կուլտուրական ժողովուրդների թվին, և անցել են պատմական դարգացման երկարատև ուղի: Նա, անդրադառնալով այն ժամանակ Հայաստանի տարածքում հայտնաբերված քարայրներին ու քարե գործիքներին, գալիս է այն եզրակացություն, որ դեռ քարի դարում նրա բնակիչներն ունեին «համեմատաբար բարձր մշակույթ», իսկ բրոնզե դարում «զարգացրին ինքնուրույն մետաղամշակությունը»¹: Այդ տեսակետը հաստատվում է հետագայում կատարված հնագիտական նոր որոնումներով ու բազմաթիվ պեղումների արդյունքներով: Այժմ գիտականորեն ապացուցված է, որ Հայկական լեռնաշխարհը հանդիսացել է մարդկության առաջին բնակավայրերից ու քաղաքակրթության օրրաններից մեկը: Այդպես, շուրջ մեկ միլիոն տարի առաջ այստեղ ևս ձևավորվեց «բանական մարդը» (homo sapiens), որը գործեց անընդմեջ և անցավ դարգացման բոլոր էտապները՝ սկսած պալեոլիթից (հին քարի դարից) մինչև մեր օրերը:

Նանսենը հատուկ ուշադրություն է դարձնում հայերի մարդաբանական կառուցվածքին ու ծագմանը: Այստեղ էլ նա հենվում է փաստերի վրա, Երևանի պատմական թանգարանում տեսած մարդկային աճյունների մնացորդների ու հատկապես գանգերի ուսումնասիրության վրա: Նա իր գրքում մասնավորապես հիշատակում է 1925 թվականին Հրազդանի կիրճում՝ Երևանի հիդրոկայանի կառուցման ժամանակ, հայտնաբերված կմախքը, ինչպես նաև Արագածի, Նոր Բայազետի, Սևանի շրջաններում պեղված դերեզմանները, որոնք վերաբերում էին էնեոլիթյան (պղնձե-քարեդարյան) ժամանակաշրջանին (IV—III հազ. մ. թ. ա.): Դրանց և ապա հետագայում հայտնաբերած մարդկային նոր աճյունների հետազոտությունները ցույց տվին, որ Հայկական լեռնաշխարհի և ընդհանրապես Առաջավոր Ասիայի այն ժամանակվա բնակիչները պատկանում էին դոլիխոցեֆալ (երկարազանգ) մարդաբանական տիպին, բայց սկսած բրոնզե դարաշրջանից (III—II հազ. մ. թ. ա.) անշուշտ, ցեղերի խառնվածան շնորհիվ, տեղի է ունենում բրախիցեֆալիզացիայի (կարճագլխայնացման) պրոցես և աստիճանաբար հանդես է գալիս ու արիապետող դառնում բրախիցեֆալ (կարճազանգ) առաջավորասիական

կամ «արմենոիդ» տիպը², որը գոյություն ունի մինչև այժմ: Զանազան աղբյուրների հիման վրա հետամուտ լինելով այդ պրոցեսին, նանսենը գրում է. «Առաջավորասիական բոլոր ժողովուրդների նման հայերը ևս հանդիսանում են զանազան ցեղերի խառնուրդ, բայց ավելի միատարր, քան Առաջավոր Ասիայի մյուս ժողովուրդները: Նրա խիստ գերակշռող մասը կրում է հեշտությամբ իմացվող գծերն այն հատկապես ցայտուն արտահայտվող կերպարի, որը համարում են առաջավորասիական, արմենոիդ կամ հայկական կերպար... Այդ կերպարը լայնորեն տարածված է Արևմտյան Ասիայում, կազմում է Փոքր Ասիայի, Կովկասի, Միջագետքի, Ասորիքի, Պաղեստինի, Հյուսիսային Արաբիայի տարբեր ժողովուրդների էական մասը և նույնիսկ տարածվում ավելի արևելք, ընդհուպ մինչև Պարսկաստան ու Հնդկաստան»¹:

Անշուշտ, նանսենը հենվել է այն ժամանակի պատմագիտության մեջ տարածված հայացքների վրա, այդ թվում հայ ժողովրդի ծագման վերաբերյալ: Դրանց մի մասը շքունեց քննություն: Այդուհանդերձ, նանսենի շարադրանքից բխում է այն ճիշտ հետևությունը, որ հայ ժողովրդի հիմնական մասսան տեղաբնիկներ էին: Դարերի ընթացքում ձևավորվեց հայ ժողովուրդը, որի անվանադիրն էր իր առասպելական նախնի Հայկը: Այստեղից էլ, «հայեր» անունը, ինչպես կոչում էին իրենք իրենց, իսկ օտարները անվանում էին «արմեններ», համապատասխանաբար երկիրն էլ կոչվեց «Հայաստան» ու «Արմենիա»:

Ինչպես ամեն մի ժողովրդի, այնպես էլ հայ ժողովրդի, կազմավորման պրոցեսը եղել է բարդ ու երկարատև: Ներկայումս էլ մի շարք հարցեր կարոտ են հեռագա խոր հետազոտության ու լուսաբանման: Ուշագրավ է նանսենի այն կարծիքը, որ արմենոիդը և դինարական (ադրիատիկ) մարդաբանական կերպարները շատ նման են և կազմում են միևնույն բնի երկու ճյուղերը: Շարունակելով, նա գրում է. «Յ. Լուշանը և նրա հետ միասին մի քանի ուրիշ գիտնականներ առաջավորասիական (հայկական)

¹ «Արմենոիդ» տերմինը գիտական շրջանառության մեջ է մտցրել մարդաբան Յ. Լուշանը: Նա «արմենական է համարում բարձր ու կտր գլուխ, տափակ ծոծրակ և արծվի ոունգ ու թխաղեմ մարդաբանական հատկանիշներ ունեցող ժողովուրդներին, որոնք մինչև սեմական ու հնդեվրոպական ժողովուրդների զաղթը վաղուց զբաղեցրել էին Առաջավոր Ասիան» (տես «Պատմաբանասիրական հանդես», 1972 թ., № 3, էջ 73):

² F. Nansen, Betrogenes Volk, S. 242—243.

¹ F. Nansen, Betrogenes Volk, S. 234.

ուսան համարում են Փոքր Ասիայի բնիկներ և գտնում են, որ նրանք այդտեղից են տարածվել բոլոր ուղղութիւններով: Հետագայում թուխ երկարագանգ ցեղը՝ հարավից և շեկ հյուսիսային տարրը՝ հյուսիսից ներխուժել են այդտեղ և նրանք մեծ թիւ փոքր շափով խառնվել են հայ ժողովրդին: Եթէ ճիշտ է այդ ենթադրութիւնը, ապա դինարական ուսան պետք է արդեն վաղուց Փոքր Ասիայից գար Բալկանյան թերակղզի և այնտեղից տարածվելը Հարավային Եվրոպայում: Դրանից հետո տեղի ունեցան հնդեվրոպական ժողովուրդների գաղթերը, հակառակ ուղղութիւնում¹:

Նման հարցադրումը սկզբունքային նշանակութիւն ունի հատկապես հնդեվրոպական լեզվաբանութիւնի նախահայրենիքի տեղի որոշման իմաստով: Եթէ զիտականորեն ապացուցված է, որ Կովկասի ներկա բնակչութիւնը մարդաբանական տեսակետից պատկանում է մեծ եվրոպեիդ կամ եվրոպական ռասայի հարավային ճյուղին, ապա դա չի նշանակում, որ հնդեվրոպական լեզվաբանութիւնի նախահայրենիքը պետք է գտնուի անպայման Եվրոպայում կամ միայն այդտեղ: Բացառված չէ, որ այդ նախահայրենիքի մեջ է մտնում նաև Փոքր Ասիան, Հայկական լեռնաշխարհը կամ նույնիսկ իր սկիզբն առնում է հենց այդտեղից, ինչպես այժմ ցույց են տալիս մի շարք զիտնականներ:

□□□

Ց. Նանսենը շեշտում է, որ Հայկական լեռնաշխարհում ստեղծված առաջին խոշոր պետութիւնը Ուրարտուն էր, որը կոչվում էր նաև Նաիրի երկիր, Խալդիա (Խալդ աստծու անունով), Բիայնիլի՝ Տուշպա (Վան) մայրաքաղաքով: Բնորոշ է, որ նա Ուրարտուն միաժամանակ համարում է Հայաստան²: Դա համահնչուն է արդի անգլիացի կովկասագետ Գ. Մ. Լենգի այն մտքին, որ Հայաստանի առաջին «ազգային պետութիւնը» Ուրարտուն էր: «Հին հայկական ազբյուրներում այն կոչվում է Արարատյան թագավորութիւն:

Նանսենը ցույց է տալիս, որ Ուրարտուն իր ժամանակի (IX—VI դարերում մ. թ. ա.) խոշոր տերութիւն էր և ընդգրկում էր

¹ F. Nansen, *Betrogenes Volk*, S. 244.

² *ՏԼ՝ ս նույն տեղը*, էջ 235:

Վանի, Սևանա, Ուրմիո լճերի միջև ու շուրջն ընկած տարածքը, էրզրումի ու Տարսուի մարզերը՝ հասնելով մինչև Մալաթիա:

Ուրարտացիները ստեղծեցին բարձր տնտեսութիւն ու մշակույթ: Հատկապես պետք է նշել անասնապահութիւն, երկրագործութիւն, քաղաքաշինութիւն, արհեստագործութիւն զարգացումը, որը հաստատում է հնագիտական բազմաթիւ պեղումների արդյունքներով: Նանսենը մասնավորապես վկայակոչում է ջրանցքաշինարարութիւնը, Վանի «Շամիրամի առուն», որն ուներ 80 կմ երկարութիւն և գոյութիւն ունի մինչև այժմ: Այն կառուցվել է Մենուա թագավորի (810—785 թ. թ. ա.) օրոք, իսկ նրա որդի Արգիշտի I 782 թվականին հիմնադրում է էրերունի բերդաքաղաքը՝ այժմյան Երևանը, սերունդներին հանձնելով այդ իրողութիւնը հաստատող սեպագիր արձանագրութիւն: Նրա անվան հետ է կապված նաև Արարատյան դաշտի կենտրոնում հիմնված Արգիշտիիսինիլի քաղաքը, որը հետագայում վերաճեց Հայաստանի հնագույն մայրաքաղաք Արմավիրի: Նանսենն ընդգծում է, որ ուրարտացիները կամ խաղերը մեծազույն վարպետութիւն մարտուցում էին նաև կամուրջներ, տաճարներ, պատրաստում մետաղյա իրեր և, ընդհանրապես, հանդես գալիս որպես «հիանալի ճարտարապետներ ու քարակոփներ»¹:

Նանսենը ցույց է տալիս, որ հայերը VI դարում (մ. թ. ա.) ստեղծում են Երվանդունիների թագավորութիւնը: Պարսկաստանի թագավոր Գարեհ Վշտասպանի 520 թվականի (մ. թ. ա.) Բեհիսթունյան արձանագրութիւն մեջ առաջին անգամ որոշակիորեն հիշատակվում է Արմենիա երկիրը: Ապա այդ մասին խոսում է «պատմահայր» Հերոդոտը (V դար մ. թ. ա.), որը մասնավորապես նշել է, թէ Հայաստանը հարևան է Կիլիկիային և այդ երկու երկրների «սահմանագիծն է Եփրատ անունով նավարկելի գետը»²:

Հենվելով հին հունական պատմիչներ Հերոդոտի, Ստրաբոնի, Քսենոֆոնի հաղորդած տվյալների վրա, Նանսենը նկատել է, որ չնայած պարսկական տիրապետութիւնը, Հայաստանը բավականին հարուստ երկիր էր, ուներ շատ անասուններ, ցորեն,

¹ F. Nansen, *Betrogenes Volk*, S. 238.

² Геродот, *История*, Ленинград, 1972, стр. 253.

գարի, ոսկի և այլն: Հայերը պատրաստում էին բազմատեսակ հացեր, մսեղեն կերակուրներ, յուղեր, գինիներ ու գարեջուր, զանազան մետաղյա առարկաներ և այլն: Նրանք աչքի են ընկնում նաև իրենց հյուրասիրութեամբ: Քսենոֆոնը իր «Անաբասիս» երկում, նկարագրելով 10-հազարանոց հունական զորքի նահանջը (40 թվականին մ. թ. ա.) Պարսկաստանից Հայաստանի վրայով, ականատեսի աչքերով (ինքը մասնակից էր) պատմում է, որ ինքը շրջագայել է հայկական գյուղերով, մոտիկից շփվել դրանց բնակիչների հետ, «ամենուրեք նրանց գտել կերուխումի և ուրախության մեջ, և ոչ մի տեղ նրան բաց չթողեցին, մինչև ճաշ չմատուցեցին»¹:

Նույն Քսենոֆոնի վկայությամբ, հայերը խաղաղասեր էին: Նանսենն իր հերթին ավելացնում է, որ «նրանց միտքը հիմնովին հակված էր դեպի բարեկեցությունն ու խաղաղ գործերը»²: Բայց Հայաստանի աշխարհագրական դիրքը, պատմության բառուղիներում գտնվելը այդ երկրի համար ստեղծել էր հակասական վիճակ, «աղբիւր շարեաց և բարեաց»: Մի կողմից՝ Արևելքի ու Արևմուտքի հատման կետն ու բանուկ խաչմերուկը, առևտրական մեծ ճանապարհները հայերին հնարավորություն են տալիս շփվելու բազմաթիվ ժողովուրդների հետ և ավելի զարգացնելու իրենց տնտեսությունն ու կուլտուրան, իսկ մյուս կողմից՝ մեծ բռնակալությունների հարևանությունն ու օտար նվաճողների մշտական արշավանքները Հայաստանը, որպես ռազմաստրատեգիական կարևոր բազա ու տնտեսական շահութաբեր վայր, վեր էին ածում կովախնձորի ու արյունահեղ ռազմարևմի: Դրանից երկիրն ավերվում էր, իսկ բնակչությունը՝ կոտորվում: Բայց հայ ժողովուրդը ոչ միայն աստիճանաբար «հարմարվեց» այդ ծանր վիճակին, այլև մղեց երկարատև ու անձնվեր գոյամարտ, պայքարեց իր ազատության ու անկախության համար: Նման իրավիճակում կատարյալ հերոսություն էր հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական գործունեությունը, նրա համընթաց քայլերը համաշխարհային քաղաքակրթության զարգացման հետ:

Նանսենի աշխատության մեջ քիչ տեղ է հատկացված Հա-

յաստանի ներքին կյանքի, նրա սոցիալ-տնտեսական հարաբերությունների լուսարանմանը: Այնուամենայնիվ, նա որոշ շահով և իր ձեռով խոսում է այդ մասին: Այդպես, 10-րդ դարի «Հասարակական կարգ» ենթագրովում նա նշում է, որ պատմական Հայաստանում իշխում էին ֆեոդալական-ավատական կարգեր (ժխտում է ստրկատիրության գոյությունը), և հասարակությունը բաժանված էր տարբեր խավերի. «Բարձր դաս—ազնվականներ, հողատերեր ու իշխողներ (սեպուհներ) և ստորին դաս—գեղջուկներ ու արհեստավորներ, հարկատուներ (շինականներ): Առանձին դաս էր կազմում հոգևորականությունը, որը տիրում էր եկեղեցու ընդարձակ կալվածքների և իր ձեռքում էր պահում բարձր պաշտոնները: Հետագայում զարգացավ քաղաքային բյուրգերների դասը»¹: Այնուհետև նանսենը նկարագրում է գյուղական համայնքը և նահապետական բազմանդամ ընտանիքը դիտում որպես այն ժամանակվա հասարակության բջիջ:

Հայաստանում կար թագավորություն, բայց այն, որպես կանոն, չի եղել ուժեղ կենտրոնացված պետություն, քանզի երկիրը բաժանված էր մանր իշխանությունների, որոնք հաճախ ընդհարվում էին միմյանց հետ: Դա բացասաբար էր անդրադառնում Հայաստանի պաշտպանունակության վրա: Այլ էր Տիգրան 2-րդի օրոք (95—55 թթ.), երբ հայկական պետությունն ամրապնդվեց ու ընդլայնվեց և դարձավ ժամանակի հզոր տերություններից մեկը: Նանսենը շեշտում է, որ Տիգրան Մեծը «հայկական թագավորությունը հասցրեց իր հզորության գագաթնակետին, այն շատ ավելի ընդարձակ էր, քան հին Ուրարտուն իր լավագույն ժամանակներում: Տիգրանը միավորեց Մեծ և Փոքր Հայքը և իր աներոջ՝ Պոնտոսի եվպատոր Միհրդատ 6-րդ արկածախնդիր թագավորի հետ միասին պայքարեց Հռոմեական կայսրության դեմ: Նա իր տիրապետությունը տարածեց դեպի արևելք՝ մինչև Կասպից ծով, դեպի արևմուտք՝ մինչև Կասպից ծովից, դեպի հարավ՝ մինչև Տավրոս, կառուցեց նոր ու շքեղ մայրաքաղաք՝ Տիգրանակերտը... Նա իրեն ենթարկեց մինչև Եդեսիա (Ուրֆա) ընկած բոլոր հողերը և մտադիր էր իր տիրապետությունը հարավ-արևելքում հասցնել մինչև Հուդայի երկի-

¹ F. Nansen, Betrogenes Volk, S. 248—249.

¹ Քսենոֆոն, Անաբասիս, Երևան, 1970, էջ 98:

² F. Nansen, Betrogenes Volk, S. 252.

րը¹։ Դա, իհարկե, կատարվում էր նվաճողական պատերազմ-ներին միջոցով, բայց դրանք իրենց սուր ծայրով ուղղված էին հումեակական աշխարհակալ տիրապետության դեմ։

Ց. Նանսենն առանձին ուշադրություն է դարձնում Հայաստանի համար մղվող պայքարին, որ տեղի էր ունենում Հռոմի ու Պարսկաստանի միջև։ Նրանց պատերազմներն ու տիրապետությունը կործանարար էին երկրի համար, և Հայաստանն ըստ էության գտնվում էր «գաղութի վիճակում»։ Բայց հայ ժողովուրդը մաքառում էր ու մարտնչում իր անկախության համար։

Ց. Նանսենն անդրադարձել է հայ ժողովրդի ինչպես նյութական, այնպես էլ հոգևոր մշակույթին։ Խոսելով հայերի նախաքրիստոնեական հավատալիքների մասին, նա ցույց է տալիս, որ դրանք արդյունք էին տեղական պայմանների և «զանազան կողմերի ազդեցության»²։ Նանսենը հին հայկական աստվածների համակարգից (այանթեոնից) հիշատակում է Անանիաի, որը պտղաբերության, արգասավորության աստվածուհին էր և կոչվում էր «ժողովրդի մայր, ոսկեմայր», Արամազդին, որն աստվածների հայրն էր (հունական Զևսի նման), վիշապաբազ վահագեին (ոադմի, կայծակի ու որոտի աստված, որին նույնացնում էին Հերակլեսի հետ), Աստղիկին (սիրո ու գեղեցկության աստվածուհի, որի ճնվիրական ծաղիկն էր վարդը» և նրան էր նվիրված Վարդավառի տոնը), Միհրին (արևի աստված), Նանեին (իմաստության և ողջախոհության աստվածուհի), Տիրին (ուսման և դպրության աստված), Վանատուրին (հյուրընկալության աստված) և այլն։ Դրանք ունեին իրենց տաճարները, մեհյաններն ու արձանները Հայաստանի տարբեր վայրերում։

Վաղ ժամանակներից հայերն ստեղծեցին բանահյուսություն, դիցաբանական առասպելներ ու վիպական զրույցներ, երգեր ու բանաստեղծություններ, որոնցից էր Վահագնի ծննդյան նշանավոր երկը։ Այդ ամենի հիման վրա Նանսենը եզրակացնում է, որ զեռ սեփանոսական ժամանակներում հայերը գիտեին բա-

նաստեղծական արվեստը, որպիսին ներկայանում էր երգերով ու ժողովրդական ստեղծագործություններով, նույնիսկ մի մեծ հերոսական պոեմով, որից մնացել են միայն փոքր կտորներ»¹։

Նանսենը հատուկ ուշադրություն է դարձնում ժողովրդի լեզվի հարցին։ Նա ցույց է տալիս, որ հեթանոսական շրջանում հայերը խոսում էին սեփական լեզվով, բայց Հայաստանում տիրապետող գրավոր լեզուն հունարենն էր, որով մեզ են հասել մի շարք հայկական արձանագրություններ։ Հայաստաո դպրության բացակայությունը բացասաբար էր անդրադառնում ժողովրդի համախմբվածության ու առաջընթացի վրա, թուլացնում էր հայկական պետականությունը։ Կյանքը պահանջում էր վերացնել այդ խիստ էական բացը։

Հայաստանն առաջին երկիրն էր, որտեղ քրիստոնեությունը ճանաչվեց (301 թվականին) որպես պետական կրոն։ Նանսենը նշում է, որ շուտով հայ եկեղեցին դարձավ խոշոր հողատեր և ձեռք բերեց բաղաբական մեծ ազդեցություն՝ երկրում միապետական կարգերի ամրապնդման ձգտումով։ Հասկանալի է, որ նա էլ իր հերթին ճնշում էր աշխատավոր գյուղացուն, բայց հայկական պետության բացակայության պայմաններում նա կատարում էր կենտրոնաձիգ ուժի դեր և նպաստում հայապահպանության գործին, հայ մշակույթի զարգացմանը։

Հատկապես մեծ էր հայ գրերի ստեղծման նշանակությունը։ Դա կատարեց հանճարեղ Մեսրոպ Մաշտոցը 405 թվականին, որով հայ ժողովուրդն ստացավ ոչ միայն իր մշակույթի զարգացման հզոր միջոց, այլև գոյատևման ամուր նեցուկ։ Ուստի, միանգամայն ճիշտ էր Նանսենը, որ ընդգծում էր, թե հայկական այբուբենի ստեղծումը «բացառիկ նշանակություն ուներ ազգային զգացումների և մշակույթի վերելքի գործում»²։

Պատահական չէ, որ դրանից հետո ուժեղանում է հայ ժողովրդի ազատագրական շարժումը օտար նվաճողների դեմ։ Դրա պերճախոս վիպությունն էր 451 թվականի Ավարայրի ճակատամարտը, երբ հայերը՝ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ, կենաց ու մահու պայքար մղեցին պարսկական զավթիչների դեմ։ Նանսենը հիացմունքով է խոսում հայերի սիրանքի

¹ F. Nansen, Betrogenes Volk, S. 254—255.

² Նույն տեղը, էջ 252։

¹ F. Nansen, Betrogenes Volk, S. 254.

² Նույն տեղը, էջ 265.

մասին, իսկ Վարդան Մամիկոնյանին՝ համարում «աղգային հերոս»¹:

□□□

Չնայած օտար նվաճողները հաջորդում էին միմյանց, հայ ժողովուրդը անընդմեջ ու անձնուրաց պայքար էր մղում նրանց դեմ: 7-րդ դարում դեպի Հայաստան արշավեցին արաբները՝ կողոպտելով ու ավերելով երկիրը, մասսայաբար ոչնչացնելով տեղաբնիկներին: Նանսենը նշում է, որ եթե արաբներին հաջողվեց կարճ ժամանակում Պարսկաստանում վերացնել մազդեականությունն ու արմատավորել իսլամը, ապա հայերը պահպանեցին իրենց հավատը և կառուցեցին Զվարթնոցի հռչակագրով տաճարը՝ «հայկական գմբեթաշինությունը հասցնելով իր գագաթնակետին»: Այնուամենայնիվ, «ծանր ու նվաստացուցիչ էր օտար մահմեդական լուծը», և հայերը «բազմիցս ապստամբեցին արաբների դեմ»²: Վերջ ի վերջո դրա արդյունքը եղավ Բագրատունիների թագավորության հիմնումը (885 թվականին), որով Հայաստանը ձեռք բերեց քաղաքական անկախություն և զարգացրեց իր տնտեսությունն ու մշակույթը: Հատկապես բարգավաճեց երկրի ոստան Անին՝ «հազար ու մեկ եկեղեցիների սրանչլի քաղաքը», և ընդհանրապես հայ ճարտարապետական արվեստը ծաղկում ապրեց»³: Նանսենն ընդգծում է, որ չնայած այժմ Անին գտնվում է ամայության մեջ, բայց «նույնիսկ նրա ավերակները սրանչլի են» և «վկայում են հայ ժողովրդի կենսունակության մասին», «խորհրդանշում մարդկային ստեղծագործ ուժը»: Նրանք միաժամանակ ցույց են տալիս, որ այդ երկրով անցել են մահաբեր մրրիկներ, «վայրի նվաճողներ, վանդալներ», որոնք ձգտել են ամեն ինչ կործանել:

Այդպիսին են եղել հատկապես սելջուկ-թուրքերը, որոնց նանսենն անվանում է «կատաղի թշնամիներ»: Նրանք շարժվում էին մորեխների նման և մահ սփռում շրջա կողմը: 11-րդ դարում նրանք հասան նաև Հայաստան, որն այդ ժամանակ գտնվում էր Բյուզանդական կայսրության ազդեցության տակ: Վեր-

ջինս փոխանակ օգնելու հայերին, միասնական ճակատ կազմելու սելջուկ-թուրքերի դեմ, ինքն էր դավեր նյութում Հայաստանի դեմ, սերմանում պառակտում, ուժասպառ անում նրան: Նշանավոր պատմաբան Նիկողայոս Աղոնցն ուղղակի նշել է, որ Բյուզանդիոնը «մատնեց Հայաստանը սելջուկյան հորդանների ձեռքը»¹: Դրանով ճանապարհ հարթվեց նաև Բյուզանդիոնի կործանման համար:

Օտար զավթիչների ճնշման տակ հայության մի մասը գաղթեց Կիլիկիա և այնտեղ հաստատեց իր իշխանությունը (1080 թվականին), որը հետագայում վերածվեց թագավորության և դուքլոսիոն ունեցավ մինչև 1375 թվականը: Կիլիկիայի հայկական պետությունն աչքի ընկավ տնտեսական ու կուլտուրական մեծ առաջընթացով, միջազգային կապերի զարգացմամբ: Նանսենը, բնութագրելով այն, նշել է. «Կիլիկիայի այս թագավորության պատմությունը հանդիսանում է ոռոմանտիկ ու արկածալի իրադարձությունների անընդմեջ շարք: Արդյոք դա ցույց չի՞ տալիս արտասովոր կենսունակությունը մի ժողովրդի, որը բախտի ծանր հարվածների տակ գաղթել է, թշնամիներով շրջապատված օտար հողի վրա հիմնել ծաղկող թագավորություն և երեք դար պահպանել նրա անկախությունը»²: Թագավորության անկումից հետո էլ այնտեղ երկար ժամանակ գոյատևեց հայկական համայնքը, որի անկախությունը հատկապես զգալի էր Զելթունում:

Հայաստանի համար աղետաբեր էր նաև մոնղոլական լուծը (13—14-րդ դարերում), որի դեմ հայ ժողովուրդը մղեց ազատագրական երկարատև պայքար:

1555 թվականին Հայաստանը բաժանվեց օսմանյան Թուրքիայի և սեֆյան Պարսկաստանի միջև: Թուրք-պարսկական տիրապետությունը դժոխային էր հայ ժողովրդի համար: Նանսենը, հատկապես անդրադառնալով Արևմտյան Հայաստանի ծանր կացությանը, գրել է. «Բազմաշարժար հայ ժողովրդի պատմության մեջ ամենատանջալիցը թուրքական տիրապետության շրջանն էր: Քրիստոնյաները անազատ գերիններ էին, մահմեդական «տերերի» ստրուկները: Ալլահը նրանց տվել էր իր հավատացյալ զավակների ձեռքը: Նրանք բոլորովին իրավազուրկ էին, ոչ հավատացյալի ու քրիստոնյայի վկայությունն ընդդեմ մահմեդականի

¹ F. Nansen, Betrogenes Volk, S. 268.

² Նույն տեղը, էջ 269:

³ Նույն տեղը, էջ 270:

¹ Նիկողայոս Աղոնց, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 369:

² F. Nansen, Betrogenes Volk, S. 274.

արժևը չունեն օրենքի առաջ: Ամեն մի դիմադրութիւն դաժան վերարերմունքի կամ կողոպուտի դեմ անհուսալի էր, քանզի բրիտանացիներն իրավունք չունեին զինք կրելու... Ազատասերները, համարձակները, պատվասերները սպանվում էին կամ արտաքսվում երկրից»¹:

Նանսենը ցույց է տալիս, որ չնայած այդ ամենին, հպատակեցված ժողովուրդներն ավելի զարգացած էին, «հասկացող, հմուտ ու խելացի» և հիմնականում նրանք էին ստեղծում երկրի նյութական ու հոգևոր բարիքները. «Հույների կամ հայերի ձևերին էին գտնվում մեծածախ առևտուրը և գրամական գործառնությունները. գրապիրները, գործեր վարողները, թարգմանիչները և պետական այլ ծառայողներ հայերն էին: Նրանք հանդես էին գալիս նաև որպես ճարտարապետներ ու ինժեներներ. մահմեդականները նրանց էին տալիս կառուցելու բոլոր լավագույն տներն ու կամուրջները, բոլոր մեծ մզկիթները»²: Շարունակելով այդ միտքը, Նանսենը գրում է. «Անատոլիայի ու Եվրոպական Թուրքիայի հիանալի մզկիթները և գեղարվեստական արհեստագործությունը կրում են հայ գեղարվեստական մտքի կնիքը: Մեծ մասը այն ամենի, ինչ ստեղծվել է այդ ծուլ հասարակարգում արվեստի ու հոգևոր մշակույթի ասպարեզում, հայերի գործերն են: Նրանք են եղել թուրքական թատրոնի դերասաններն ու կատակերգուները, նրանք են հանդես եկել որպես երգիչներ ու երաժիշտներ Թուրքիայում, նրանք են որոշակի իմաստով թուրքական երաժշտության ստեղծողները»³: Նկատենք, որ նույնիսկ թուրքերի մեջ էլ գտնվել են առանձին մարդիկ, որոնք ընդունել են հայերի առաջնակարգ դերը իրենց երկրի մշակույթի զարգացման գործում: Այդպես, մտավորական Համդուլլահ Սուրհի բնյը առաջին աշխարհամարտի նախօրյակին՝ Կ. Պոլսում բացելով կոմիտասյան երգահանդեսներից մեկը, որին մասնակցում էր նաև թուրք ընտրանին, ասել է. «Ընդարատություն է, պետք է խոստովանել, որ հայ ազգը դարերի ի վեր մեր մշակութային կյանքին մեջ իր հառաջապահի մասնավոր տեղը ունեցած է: Թուրքիոս որ կողմն ալ երթանք, Անատոլիոս որ անկյունն ալ ըլլանք, հայ միտքը, հայ ստեղծագործ ձեռքը՝ հոս

եմ» կրես: Օրինակ կուզեր: Պոլսոս սուլթանական պալատները մեյ-մեկ գլուխգործոցներ են, հայ ճարտարապետության գեղեցիկ նմուշներ են: Գնալի երկիրք բարձրացող միևարեններ, ուր ամեն օր մուկղիներ Ալլահ էքպեր կպոռա, շատերը հայ ստեղծագործ ձեռքերու մեյ-մեկ կոթողներ են: Ջեր սիրելիներու տապանաբարերը, որոնք այնքան նրբություն ունին, նորեն հայ վարպետներու գործերն են: Վանի նշանավոր գեղանաշակ արծաթեա տուփերը, որ օտարականներու անգամ հիացում կաղդեն՝ հայ ոսկերչության արտադրություններն են: Բժշկական համալսարանի հիմնադիրները և գիտական դիրքերու առաջին հեղինակները նորեն հայեր եղած են: Թուրք թատրոնը իր գոյությունը հայերուն կպարտի... Ահա ասանկ ուշիմ և ընդունակ ազգի մը հետ միասին կապրինք ու մինչև հիմա ալ ամեն ազգի մեջ տիրապետող է»⁴:

Շատ կարևոր է ընդգծել, որ հայերը նույնիսկ դժնդակ պայմաններում պահպանեցին ու զարգացրին իրենց ազգային ինքնատիպ մշակույթը: Նանսենը ցույց է տալիս, որ դրա օջախներն էին հատկապես վանքերը, որոնց «անդորր պատերի ներսում ստեղծվում էին մտավոր կենտրոններ. այնտեղ գրում և ընդօրինակում էին աշխատություններ՝ ժողովրդի կրոնական հավատալիքների, նրա մտքերի ու խոհերի մասին: Այնտեղ էին երկրի միակ զպրոցները...»⁵: Հաճախ՝ օտարերկրյա զավթիչների հարձակման ժամանակ այդ վանքերը վեր էին ածվում նաև պաշտպանության «ամրոցների»:

Չնայած բազմապիսի դժվարություններին, երբեք չընդհատվեց հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական կյանքը: Նրա ծոցից դուրս եկան ականավոր պատմիչներ, փիլիսոփաներ, գրողներ, արվեստագետներ, գիտնականներ (Մովսես Խորենացի, Նղիշև, Գավիթ Անհաղթ, Անանիա Շիրակացի, Մխիթար Հերացի, Գրիգոր Նարեկացի, Ներսես Շնորհալի, Ֆրիկ, Մխիթար Գոշ, Վարդան Այգեկցի, Նահապետ Քուչակ, Սայաթ-Նովա և շատ ուրիշներ), որոնք հազար ու մի զրկանքների գնով ստեղծեցին հոգևոր մշակույթի լավագույն երկեր: Խոսելով գրողների մասին, Նանսենը նշում է, որ նրանք արտացոլում էին հասարակական կյանքի բազմաթիվ կողմեր և հատկապես հայոց տառապանքն ու պայթարը օտար նվաճողների լծի տակ:

1 F. Nansen, Betrogenes Volk, S. 275—276.

2 Նույն տեղը, էջ 276:

3 Նույն տեղը, էջ 278:

1 «Զարթոնք», 28. 10. 69:

2 F. Nansen, Betrogenes Volk, S. 277.

Նանսենն առանձին ուշադրություն է դարձնում Մխիթարյանների գործունեությանը (Վենետիկում ու Վիեննայում) և շեշտում, որ նրանք խոշոր դեր կատարեցին հայ մշակույթի զարգացման ասպարեզում: Տպագրական գործի կազմակերպմամբ, բազմաքանակ ինքնուրույն հետազոտություններով ու թարգմանական երկերով, բանիմաց շփումներով ու հաղորդակցությամբ եվրոպական ժողովուրդների ու գործիչների հետ: Մխիթարյանները մեծապես նպաստեցին հայ ժողովրդի գրական ու գիտական մտքի առաջընթացին, նրա ազգային ինքնագիտակցության բարձրացմանը:

Ց. Նանսենի աշխատության 10-րդ գլուխն ավարտվում է 18-րդ դարով և եզրափակվում «Հայերն ու համաշխարհային մշակույթը» հատվածով, ուր նա անում է գիտաքաղաքական կարևոր նոր հետևություններ: Ամենից առաջ նշվում է, որ չնայած իրենց փայլուն ընդունակություններին և երբեմնի պետական հզորությանը, հայերը երկար ժամանակ զրկված են եղել սեփական երկիրը կառավարելու հնարավորությունից: Դա ներանց դժբախտությունն է, որն, անշուշտ, օտար զավթիչների ավերիչ արշավանքների ու կործանարար տիրապետության հետևանքն էր: Այնուամենայնիվ, հայ ժողովուրդը հերոսաբար դիմակայեց դարերի անհղ փորձություններին և պահպանեց իր գոյությունը պապենական օջախում: Բայց նրա մի մասը ենթարկվեց բռնազաղթի կամ հարկադրական տարագրման, որի արդյունքը եղավ բազմաթիվ գաղթավայրերի ստեղծումը սալթաբադի զանազան երկրներում: Այդպես ստեղծվեց սփյուռքահայությունը, որը, սակայն, երբեք չկտրվեց մայր հայրենիքից, միաժամանակ նպաստելով հայ ժողովրդի ինտերնացիոնալ կապերի ընդլայնմանն ու ամրապնդմանը:

Չնայած դաժան արհավիրքներին, հայերը սեփական երկրում թե գաղթավայրերում ծավալել են տնտեսական ու կուլտուրական արդյունավետ գործունեություն և ոչ միայն պահպանել իրենց ազգային ինքնատիպությունը, այլև հարստացրել համաշխարհային քաղաքակրթությունը:

Նանսենը շեշտում է, որ հայերը բազմաթիվ պիտական, ռազմական, կուլտուրական գործիչներ են տվել Պարսկաստանում, Բյուզանդիայում, Հնդկաստանում, Թուրքիայում, Եգիպտոսում, Լիհաստանում, Հունգարիայում և այլ երկրներում: Նա մասնավորապես նշում է, որ նրանք ակտիվորեն մասնակցել են

բյուզանդական ու արևմտաեվրոպական կուլտուրաների զարգացմանն ու տարածմանը, ընդ որում «հյուսիսի գերմանացիները կրեցին հայերի ազդեցությունը»¹: Այստեղ նանսենը, հենվելով պատմագիտական հետազոտությունների վրա, ցույց է տալիս, որ «գոթերը քրիստոնեության մասին առաջին տեղեկությունները ստացել են հայերից»: Այդպես, նորվեգացի բանասեր Սոփիուս Բուլգգին (1833—1907) հաղորդում է, որ «Աստվածաշնչի գոթական թարգմանությունն ունի շատ հայկական տարրեր»: Հավանաբար, դա բացատրվում է նրանով, որ թարգմանիչ Ուլֆիլան* եղել է Կապադովկիայում (նրա նախորդները պատերազմի ժամանակ գերի էին ընկել) և մոտիկից շփվել հայերի, գուցե նաև Գրիգոր Լուսավորչի հետ: Մյուս կողմից, երբ գոթերը հասան Սև ծովի ափերը՝ «հայ վաճառականների ու քարոզիչների միջոցով կապեր հաստատեցին Հայաստանի հետ»: Այնուհետև, նանսենը, օգտագործելով խոշոր մասնագետների հաղորդած տվյալները, նշում է, որ «Բուլգարիայում ու Արևմտյան Եվրոպայում գոթական կառուցածեի վրա զգացվում է հայկական ազդեցությունը: Աչքի է զարնում նաև այն, որ վեստգոթերի որոշ իշխաններ, Իսպանիայում իրենց տիրապետության ժամանակ, կրում էին հայկական անուններ, ինչպես, օրինակ, Արտավազդ (շուրջ 710 թ. Քր. ծննդից հետո)»²:

Շարունակելով այդ միտքը, նանսենը նկատում է, որ «հայկական ազդեցությունը թափանցել է մինչև Սկանդինավիա» և դրա մասին է վկայում, օրինակ, շվեդական ու հայկական գեղեցիկապարների ռճական նմանությունը: Այսպես բերում է գրավոր վկայություններ: Դրանցից հնագույնն է նորվեգական «պատմահայր» Արե Ֆրոդեի (1064—1148) «Իսլանդացիների մասին գիրքը», որի 8-րդ գլխում հիշատակվում են «երեք էրմբսքիր [հայեր]— Պետրոսը, Աբրահամը և Ստեփանոսը»³. դրանք, հավանաբար, միսիոներներ էին և, հալածված սելջուկ-թուրքերից, հասել են մինչև Իսլանդիա ու զբաղվել քարոզչությամբ:

¹ F. Nansen, Betrogenes Volk, S. 281—282.

* Ուլֆիլա (311—383)— վեստգոթական եպիսկոպոս, որը խոշոր դեր է կատարել քրիստոնեության տարածման գործում: Նա կազմել է գոթական այբուբենը և հունարենից թարգմանել Աստվածաշունչը:

² F. Nansen, Betrogenes Volk, S. 282.

³ Ari Torgilsson Hinn Frodi, Islendingabok, Oslo, 1951, s. 25.

հոսելով Եվրոպայի միջնադարյան ճարտարապետության մասին, նանսենը անառարկելի է համարում հայկական ազդեցությունը նա նշում է, որ ղեռ վաղ շրջանում Հայաստանի շինվածքները (հատկապես եկեղեցական) աչքի էին ընկնում զարդարանդակ ու ծանր սյուներով, զեղեցիկ խոչակներով ու կամարներով, նշանավոր քառասյուն հայկական զմբեթով, որոնք հետագայում տարածվեցին Բյուզանդիայում ու Եվրոպական երկրներում:

Այս բնագավառում իր հետևությունները հիմնավորելու համար նանսենը, բացի սեփական ղննումներից, օգտագործում է նաև մասնագիտական գրականությունը, հատկապես ավստրիացի խոշոր հետազոտող, ճարտարապետության ակադեմիկոս տեսարան Յոզեֆ Ստրիգովսկու «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» երկհատորանոց աշխատությունը, որը հրատարակվել էր գերմաներեն Վիեննայում՝ 1918 թվականին: Այդ փաստալից ու բաղմահմուտ գիտական ուսումնասիրության մեջ ցույց է տրվում, որ «գեո ժողովուրդների գաղթի ժամանակներից... հայերը Միջերկրածովյան երկրներում համարվում էին լավագույն որմնագիրներ», որ նրանք՝ քարկապության շատ ամուր կրաշաղախի ստեղծողներն են, որ հատկապես հայկական զմբեթաշինությունը (քառանկյան վրա) «տարածվել է Եվրոպայում»¹:

Պրոֆեսոր Յո. Ստրիգովսկու աշակիցն է եղել վաստակաշատ Թորոս Թորոմանյանը, որը խոսելով հայ մշակույթի և մասնավորապես շինարարական արվեստի տարածման մասին, վկայակոչում է նաև «ճարտարապետության հուշակավոր պատմարան, փրիստիա» Ա. Խոխին: Վերջինս ցույց է տվել այդ տարածման 3 ուղի. մեկը Դոնի ու Վոլգայի ափերով դեպի Ռուսաստան և ապա Սկանդինավիա, Իուլանդիա ու հյուսիսարևմտյան Եվրոպա, մյուսը՝ Սև ծովի ափերով Եվրոպա ու Իանուրի երկրքները, ապա Ֆրանսիա և «մեծ օժանդակ է հանդիսացել ոսմանական ոճի կազմավորման՝ 11-րդ դարու սկզբներին: Պակաս զեր չէ ունեցել նաև գոթական ճյուղի կազմության մեջ 13-րդ դարում: Նաև Ogive անվանված չնաշխարհիկ ոճին ամենահին օրինակներն Եվրոպացի գիտնականներ Հայաստանում

են գտնում»: Երրորդը «Վասթարների արշավանքների միջոցով» հասել է «մինչև Նիկոմեդիա (Մարմարա ծովի եզրերը)»¹:

Հանրադիտակ նանսենը իր հերթին կատարել է մանրազնին հետազոտություններ ու հանդել հետաքրքիր եզրակացությունների: Ահա, օրինակ, Կոստանդնուպոլսի Ս. Սոֆիայի փառահեղ տաճարը (Այա-Սոֆիա), որը նա համարեց ճարտարապետական արվեստի մեծագույն հուշարձան, մարդկային ոգու գերագույն հաղթանակ: Հատկապես հիասքանչ է նրա կրոր զմբեթը, որը թեթևորեն սավառնում է ներդաշնակ բազիլիկի վրա: Պրոկոպիոսի վկայությամբ, Ս. Սոֆիայի տաճարն իշխում էր ամբողջ քաղաքի վրա, ինչպես նաև՝ ծովի ափերի վրա: Այն խորհրդանշում էր Բյուզանդական կայսրության հզորությունը:

Ս. Սոֆիայի տաճարը կառուցվել է Հուստինիանոս կայսեր օրոք (532—537 թթ.), հունական ճարտարապետների (Անթեմիոս Տրալացու և Իսիդորոս Միլեթացու) կողմից, որոնք իրենց առաջընթաց բարդ խնդիրները, և հատկապես վիթխարի զմբեթի տեղադրումը շորս ուղղահայաց սյուների վրա՝ առաջաստների օգնությամբ (եռանկյունաձև կամարներ, որոնք հիշեցնում են ուռեցված առաջաստները), չլուծել են հանձարեղ համարձակությամբ ու նորարարությամբ²: Նանսենը նկատում է, որ նրանք օգտվել են հայկական ճարտարապետությունից, հատկապես ընդօրինակել են հայկական եկեղեցիների համար շատ ինքնատիպ կրոր զմբեթը, որը բարձրանում է ուղիղ քառանկյան վրա: Նա գրում է, որ «ինչպես Լեոնարդոն և Բրամանթեն գմբեթաշինության իրենց գաղափարի համար հավանաբար պարտական են հայերին, այնպես էլ Անթեմիոսը իր զլուխգործոցի հիմնական գաղափարը վերցրել է նույն աղբյուրից: Բյուզանդիան այդ ժամանակ բազմակողմանի կապերի մեջ էր Հայաստանի հետ: Եթե ճիշտ է այդ հիպոթեզը, այս գարմանալիորեն միտք է ծագում, որ երկու զլխավոր կառույցները՝ արևելյան և արևմտյան հռոմեական եկեղեցիները՝ Սոֆիայի եկեղեցին Բյուզանդիոնում և Պետրոսի եկեղեցին Հռոմում, ունեն հայկական ոգի»³: Հիշենք նաև այն անառարկելի փաստը, որ երբ 10-րդ դարի վերջին երկրաշարժից կործանվեց Ս. Սոֆիայի տաճարի

¹ Joseph Strzygowski, Die Baukunst der Armenier und Europa, B. I, Wien, 1918, S. V, 206.

¹ Փոսոս Փոսոմանյան, Հայ ճարտարապետություն, Երևան, 1948, էջ 36:

² Всеобщая история искусств. т. II, Москва, 1960, стр. 38.

³ F. Nansen, Betrogenes Volk, S. 36.

գմբեթը, բյուզանդական կայսրը վերականգնման համար Անիից հրավիրեց հայ խոշորագույն ճարտարապետ Տրդատին, որը մեծազույն հմտությամբ կատարեց հանձնարարությունը (989—992 թվականներին), և այսօր էլ կանգուն է այդ կերտվածքը: Ծիշտ է նկատում ճարտարապետ Կ. Հովհաննիսյանը, որ «ներա կատարած ռեստավրացիան արտացոլում էր 10—11-րդ դարերի հայկական կառուցողական մշակույթի վիճակը»¹: Այնուհետև նա բերում է Յո. Ստրժիգովսկու խոսքերը Տրդատի մասին. «Ըր ժամանակին նա հանդիսացել է ճարտարապետության գոթիկական մտահղացումների ստեղծարարը», «համենայն դեպս նա է գտել դեպի գոթիկական տանող ուղին»: Այդ կարծիքին են նաև այլ հեղինակներ, ինչպես, օրինակ, է. Լինչը, որը Անիի տաճարի առթիվ գրել է. «Նրանում կան շատ տիպիկ գոթիկական գծեր և նա կարող է այդ ոճի արևելյան ծագման ապացույց լինել»²:

Հենվելով այդ և բազմաթիվ այլ փաստերի վրա, նանսենը հերքում է այն տեսակետը, թե իբր Բյուզանդիան է ազդել հայ ճարտարապետության վրա: Նա գտնում է, որ հայկական ոճն ինքնուրույն է և «տարբերվում է բյուզանդականից իր հստակությամբ ու զսպվածությամբ»³: Այդ միտքը հաստատվում է նաև նորագույն հետազոտություններով: Հայտնի արվեստաբան Ա. Յակոբսոնը, անհերքելի փաստերի հիման վրա, հանգամանորեն բացահայտում է Հայաստանի ու Բյուզանդիայի միջնադարյան ճարտարապետությունների էական տարբերությունները: Նա մասնավորապես ցույց է տալիս, որ դեռ 5-րդ դարից հայկական եկեղեցիները, ի տարբերություն բյուզանդականի, աչքի էին ընկնում իրենց ներքին տարածքի կոտ միավորմամբ, արտաքին տեսքի հզկվածությամբ ու վեհությամբ, ընդհանուր կոմպոզիցիայի ու նրա առանձին տարրերի (օրինակ՝ բեմի) ինքնատիպ ձևավորմամբ: Այնպես որ «վաղ հայկական ճարտարապետությունն ունի իր որոշակի տեղը՝ անկախ բյուզանդականից»⁴: Հայկական ու բյուզանդական միջնադարյան ճարտարապետու-

թյունները հստակորեն սահմանազձում են նաև ժամանակակից մի շարք իտալացի մասնաշրջաններ (Ս. Բլաչինի, Գ. Յրասու, Ֆ. դե Մաֆեի, Պ. Գունետ, Տ. Բրելլյա Յրատուրոլի և ուրիշներ): 1973 թվականին Ռավեննայում (Իտալիա) կազմակերպված միջազգային ճարտարապետական հավաքում պրոֆեսոր Զուգեպպե Յրանկովիչը շեշտեց «այնքան հետևողական, միատարր, համողիչ ու երկվությունից զերծ հայկական արվեստի» տեղն ու դերը¹: Ուստի, իրականությունն քննադատությանը չի դիմանում արևմտանվորապական մի շարք ուսումնասիրողների (Մ. Բրոսն, Ռ. Կրաուսհայմեր և ուրիշներ) այն կարծիքը, թե իբր հայ ճարտարապետությունը հանդիսանում է սոսկ բյուզանդական ճարտարապետության մի տարբերակը կամ նույնիսկ նրա զավառական դրսևորումը:

Անշուշտ, չի կարելի ժխտել հայկական ու բյուզանդական ճարտարապետությունների առնչությունները, մասնավորապես քրիստոնեական կրոնի հիմքի վրա: Բայց իրողություն է նաև այն, որ քրիստոնեությունն առաջինը պետական կրոն է ճանաչվել Հայաստանում և այնտեղ էլ փաստորեն սկսվել է նոր հավատի պաշտոնական եկեղեցիների կառուցումը: Մյուս կողմից՝ չէ որ արդեն 6-րդ դարում հայ եկեղեցին (մոնոֆիզիտ—հակաբաղկեղոնական) բաժանվեց բյուզանդականից: Այդ հանգամանքները չէին կարող իրենց կնիքը չդնել նաև ճարտարապետության, մասնավորապես կրոնական շինությունների վրա:

Ավելի հավաստի է հայ ճարտարապետության, հատկապես կենտրոնագմբեթ եկեղեցական շինության ազդեցությունը բյուզանդականի վրա, որը, ինչպես տեսանք, հաստատվում է նաև Ս. Սոֆիայի տաճարի օրինակով: Համենայն դեպս, խոսք կարող է լինել հայկական ու բյուզանդական ճարտարապետությունների փոխազդեցության մասին:

Հայտնի է նաև, որ Կ. Պոլիսը նվաճող Մուհամմեդ II «ալլահին պատվիլու համար» և, հավանաբար, ի հեճուկս Ս. Սոֆիայի քրիստոնեական տաճարի, կառուցեց մի մեծ մզկիթ (ճարտարապետը հույն էր՝ Քրիստոդուրոսը), բայց փաստորեն այն դարձավ «Ս. Սոֆիայի ընդօրինակությունը և ավելի շատ նման էր հայկական քառանկյուն հիմնակառույցին»²: Ըստ էության

¹ К. Л. Оганесян, Зодчий Трдат, Ереван, 1951, стр. 97.

² Նույն տեղը, էջ 106:

³ F. Nansen, Betrogenes Volk, S. 235.

⁴ «Պատմաբանասիրական հանդես», 1973 թ., № 4, էջ 42

(А. Л. Якобсон, Взаимоотношения раннесредневековой архитектуры Армении и Византии).

¹ Տե՛ս «Հայրենիքի ձայն», 27. 6. 73:

² F. Nansen, Betrogenes Volk, S. 36.

թյան, այդ ազդեցությունը դարձավ ավանդական և տարածվեց տարբեր ժամանակներում կառուցված թուրքական մյուս մզկիթների վրա¹: Պրոֆեսոր Ա. Լ. Յակոբսոնն ընդհանրապես շեշտում է «Հայաստանի ճարտարապետության ազդեցությունը մուսուլմանական երկրների մոնումենտալ արվեստի վրա»²: Դա արտահայտվեց նույնիսկ համեմատաբար դարգացած Պարսկաստանի նկատմամբ, հատկապես հայկական անսյուն կոմպոզիցիայի տարածման ձևով: Ինչ վերաբերում է սելջուկ-թուրքական կոչվող արվեստին, ապա այն, ինչպես նկատել են մասնագետները (օրինակ՝ սովետական արվեստագետ Յու. Ա. Միլլերը, «Искусство Турции», М.—Л., 1965), պայմանական հասկացողություն է, քանի որ այն ստեղծողները եղել են շատ ժողովուրդներ՝ հույներ, հայեր, սլավոններ, արաբներ, պարսիկներ և, ուղղակի ասենք, ավելի շատ նրանք, որպես զարգացած, քան հետամնաց թուրքերը: Ա. Յակոբսոնը մասնավորապես գրում է, որ «Փոքր Ասիայի սելջուկյան ճարտարապետության ձևերն ու հենց ոճը իրենց ստեղծմամբ ըստ էության պարտական են հայկական զեղարվեստական մշակույթին: Սելջուկյան ճարտարապետության մի քանի ձևեր պարզապես հանդիսանում են հայկական ձևերի վերարտադրությունը: Այդպիսին են մուսուլմանական դամբարանները. նրանց կոմպոզիցիան հանդիսանում է հայկական տաճարի վերին մասը— նրա կոնաձև թմբուկը ոնց որ կտրված ու գրված հողի վրա»³: Կարելի է բերել նաև այլ փաստեր, 13-րդ դարում հայ ճարտարապետ Գալուստը մեղրեսեններ է կառուցել Իկոնիայում ու Սվասում, իսկ Ստեփանի տղա Քազավուրը՝ Մալաթիայում⁴: Հետագայում Կ. Պոլսում հռչակվեցին հատկապես Պալյանները, որոնք ստեղծեցին ճարտարապետական հուշակապ կոթողներ: Դրանց վրա ակնհայտ է հայ ճարտարապետության կնիքը:

Ընդհանրապես թուրքերն իրենց գրաված երկրներում հանդես էին գալիս որպես օկուպանտներ և տեղացիների համեմատությամբ գտնվում էին զարգացման խիստ ցածր մակարդակի վրա: Այդպես էին նրանք նաև Անատոլիայում, ուր հույները,

հայերը և ուրիշներ հանդես էին գալիս որպես քաղաքակրթության կրողներ: Ահա թե ինչու վերջիններս, թեև նվաճված ու հպատակեցված, շարունակել են ստեղծել երկրի նյութական ու հոգևոր արժեքները, պահպանել հասարակությունը և փաստորեն առաջադիմության ուսուցիչների դեր կատարել օտարերկրյա զավթիչ «տերերի» համար: Դրա մեջ պետք է տեսնել հույների ու հայերի բունի ասիմիլացման քաղաքականության ձախողման գլխավոր պատճառներից մեկը: Տվյալ զեպքում լիովին կիրառելի են Կ. Մարքսի խոսքերն այն մասին, որ «պատմության անխախտ օրենքի համաձայն, բարբարոս նվաճողները իրենք էին դառնում նվաճված նրանց կողմից հպատակեցված ժողովուրդների առավել բարձր քաղաքակրթությամբ»¹:

Հիրավի, պետք էր նաև կարողություն ունենալ զնահատելու և յուրացնելու արդեն պատրաստի մշակույթը, մի բան, որը, սակայն, չէր տրվում բարբարոս նվաճողներին: Նման զեպքերում զավթիչների «մի ավերիչ պատերազմն ընդունակ էր ամբողջ հարյուրամյակներ անմարդարնակ դարձնել երկիրը և նրան զրկել իր ողջ քաղաքակրթությունից»²: Հենց այդպես էին վարվում թուրք-օսմանները, մոնղոլները և ուրիշներ: Նրանք վայրի խաշնարած ցեղեր էին, որոնք իրենց առաջնորդների ղեկավարությամբ, մտնելով այս կամ այն երկիրը, ավերում էին ամեն ինչ, միայն թե ունենան լայնածավալ արոտավայրեր ու վարեն պարագիտային կյանք նվաճված ժողովուրդների հաշվին: Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը նշել են, որ «ոնեակցիոններնրին այնքան հիացմունք պատճառող կոպիտ ուժի արտահայտությունը միջնադարում՝ իր բնական լրացումն էր գտնում ժուլության և անշարժության մեջ»³: Հենց այդպիսին էին թուրքական զավթիչները: Ֆ. Նանսենն ուղղակի գրել է. «Սելջուկ-թուրքերի և օսմանների՝ այդ վայրի թափառական հորդանների՝ միակ նպատակն էր կողոպուտը, պատերազմական միակ պլանը՝ երկրագործական ժողովուրդների բնաջնջումը և մշակված երկրի վերածումը անասնապահական արոտավայրերի՝ վայրի ամբոխի ձևերին»⁴:

Նրանք նույնպիսի դաժանությամբ էին վերաբերվում նաև

¹ Տե՛ս Դ. Ե. Еремеев, Этногенез турак, М., 1971, էջ 155:
² А. Л. Якобсон, Очерк истории зодчества Армении V—XVII веков, М.—Л., 1947, стр. 141.
³ Նույն տեղը, էջ 113—144:
⁴ Տե՛ս Н. Я. Марр, Ани, Ереван, 1939, էջ 68.

¹ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 9, стр. 225.
² Նույն տեղը, էջ 132:
³ Կ. Մարքս, և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 1, Երևան, 1950, էջ 15:
⁴ F. Nansen, Betrogenes Volk, S. 39.

քաղաքներին՝ կողոպտելով ու ավերելով դրանք: Նանսենը 1453 թվականի մայիսի 29-ը համարում է ողբերգական. դա այն օրն է, երբ թուրքերը գրավեցին Կոստանդնուպոլիսը և կոստրենցին ժողովրդական հոծ զանգվածներ, իսկ կովում ընկած բյուզանդական վերջին կայսրի գլուխն էլ կտրեցին ու ցուցադրեցին որպես հաղթանակի խորհրդանիշ:

Հասկանալի է, որ նման արհավիրքների հետևանքով խախտվում էր տեղական քաղաքակիրթ, բայց հպատակեցված ժողովուրդների բնականոն զարգացումը, և տրամաբանական վախճանին չէր հասնում նրանց տնտեսական ու կուլտուրական առաջխաղացումը, ինչպես պատահեց, օրինակ, Հայկական վերածնության (ռենեսանսի) հետ:

Նանսենը աներկբայելի է համարում հայկական ոճի ազդեցությունը հատկապես եվրոպական եկեղեցաշինությունների վրա: Նա ուղղակի գրում է, որ հայատիպ եկեղեցիներ են կառուցվել Լուսնասուրենում (Աթենքում), Իտալիայում (Միլանում), Ֆրանսիայում (Փերմինեն դե Բրե Օպեանի մոտ) և այլուր: Եվրոպայում առանձնապես տարածվեց կենտրոնաձիգ գմբեթաշինությունը, և պատահական չէ, որ այն արտացոլվել է ժամանակի խոշոր մտածողների ու մասնագետների գործերում: Նանսենը նրանցից հիշատակում է իտալացի մեծ ճարտարապետներին, ինչպիսիք էին Բրունելեսկին, Ալբերտին, Լեոնարդո դա Վինչին, Բրամանթեն, Վինտյան: Մասնավորապես անդրադառնալով հանձարեղ Լեոնարդո դա Վինչին, նա գրել է. «Մենք Լեոնարդոյի գծագրերից ու էսքիզներից իմանում ենք այնպիսի գործեր, որոնք շատ են նման հայկական քառակուսի եկեղեցիներին՝ իրենց գմբեթներով ու խորշերով...»¹: Դա, իհարկե, ոչ մի կերպ չի նսեմացնում նրա մեծությունը և միայն ցույց է տալիս, որ Լեոնարդոն գիտեր և ըստ արժանվույն էր գնահատում հայկական ճարտարապետությունը: Հայտնի է, որ նա սիրում էր ճանապարհորդել և ինքն էլ ասել է, որ «անցած ժամանակների իմացությունն ու աշխարհի երկրների ճանաչումը կազմում են մարդկային մտքերի գեղեցկությունն ու սնունդը»²: Շատ հետազոտողներ գտնում են, որ Լեոնարդո դա Վինչին եղել է նաև Հայաստանում: Այդ մասին գրել են մի շարք հեղինակներ: Դրանց մեջ էր Լեոնարդո դա Վինչիի ձեռագրերի բազմահմուտ գիտակ պրոֆեսոր Ռ. Ա.

Օրբելին: Նա դեռ 30-ական թվականներին համերաշխվում է այն կարծիքին, որ մեծ իտալացին «շատ է ճանապարհորդել», այդ թվում Փոքր Ասիա, հատկապես եղել է Տավրոսի և Անտիտավրոսի մոտ, Տիգրիսի ու Եփրատի ափերին, «Հայաստանում, որը նկարագրել է նա»³: Մասնավորապես դրա մասին է վկայում Լեոնարդո դա Վինչիի մի նամակը՝ ուղղված Սիրիայի կառավարչին: Ապա Ռ. Օրբելին գրել է, որ «տարբեր ձեռագրերում նա անդրադարձել է» իր համար մատչելի աշխարհագրական տարածքի ծովերին ու գետերին, որոնց մեջ էլն նաև «Հայաստանի գետերը»⁴:

Հետազայում հայտնաբերվեցին նոր նյութեր և հատկապես մի քանի տարի առաջ Մազրիդի ազգային գրադարանում գտնվեցին Լեոնարդո դա Վինչիի ձեռագիր նոթատետրերը (գրառումներ, նախագծեր, նկարներ, հաշվումներ՝ շուրջ 700 էջ), որոնց մեջ կարևոր տեղեկություններ կան նաև նրա՝ Հայաստան կատարած ճանապարհորդության մասին («Հայկական նամակներ»): Դրանց հիման վրա ռուս հեղինակ Ա. Շալանը հատուկ պատմվածք գրեց («Իր հոգու շատ երկար ուխտագնացությունը» վերնագրով), որտեղ նա բերում է Լեոնարդոյի խոսքերը. «Ֆլորենցիացիներ, ես ճանապարհորդ եմ, ձեր ճանապարհորդ, որը բայում է դեպի ուրիշ քարեր: Գեղեցիկ Ֆլորենցիան չի կարող սպառել ողջ աշխարհը, ամբողջ երկրագունդը՝ Մարդու վիթխարի բնակավայրը: Ես գնացի դեպի օտար քարեր և տեսա նրանց վրա թափված արյունն ու արցունքները, այն քարերի վրա, որոնք արժանի են նոր Ֆլորենցիաների... Դա Լուսնային Հայաստանն է, որտեղ, սիրելիս, ոչինչ անհնարին չկա: Այդտեղ առաքինի շինարար-թագավոր Արտաշեսին օգնում էր քաղաքների կառուցելը Հաննիբալը՝ Աֆրիկայի վտարանդին, կործանված Կարթագենի նախկին տիրակալը: Այդտեղ ցածր, բայց ամուր են տաճարները, իսկ նրանց գրադարաններում պահվում է Հելլադայի իմաստությունը: Այդտեղ յուրաքանչյուր հորինովի միտք ճշմարիտ է, քանի որ հազեցված է տառապանքով կամ հաղթանակի տոնական բերկրանքով, իմաստուն մտքի ճառագայթմամբ կամ բանաստեղծի սրտահույզ հանգով...»⁵: Իր կող-

¹ F. Nansen, *Betrogenes Volk*, S. 284—285.

² Леонардо да Винчи, *Избранное*, М., 1952, стр. 234.

¹ Р. А. Орбели, *Исследования и изыскания*, М.—Л., 1947, стр. 161.

² *Նույն տեղը, էջ 166:*

³ «Вокруг света», 1967 г., № 7, стр. 41.

մից հեղինակն ավելացնում է. «Նա տեսել է Լուսնային Հայաստանը, որտեղ ոչինչ անհնարին չկա... Նա գրել է վեպ Հայաստանի մասին: Այն (նամակը, վեպը) ուղեկցվում է նկարներով, որոնց բազիլիկները ասես թե արտանկարված են հայկական տաճարներից: Նա հասկացավ Հայաստանի տարօրինակ, խոժոռած ու ամեն ինչին հաղորդակից քարակույտերը: Գրա համար քիչ է հանճար լինելը, պետք է հանճար լինել տեսնելու համար...»¹:

Հանճարեղ Լեոնարդոն, ճանապարհորդելով Հայաստանով, չէր կարող չհիանալ նրա մշակույթով, այդ թվում ճարտարապետությունը և շտեմնել այն նորը, որ պարունակում էր վերջինս: Այդ հարցին ավելի հանգամանորեն է անդրադառնում հայ գրող ու հետազոտող Կոստան Զարյանը՝ «Լեոնարդո դա Վինչին Հայաստանում» հոդվածում²: Նա համոզիչ փաստերով և հատկապես Լեոնարդո դա Վինչիի ձեռագրերով, գծագրերով ու շինություններով հերքում է եվրոպական այն հետազոտողների կարծիքը, որոնք միտումնավոր ձեռով փորձում են ժխտել նրա ուղեորությունը ղեպի Հայաստան կամ «էրմինիա», ինչպես ինքն է գրել: Կ. Զարյանն ուղղակի նշել է, որ դա կատարվում է «պարզապես նրա համար, որ ուրանալով Լեոնարդոյի ճանապարհորդությունը ղեպի Արևելք և մասնավորապես ղեպի Հայաստան, նրանք ուզում են ուրանալ հայ ճարտարապետության ազդեցությունը եվրոպական և մանավանդ իտալական ճարտարապետության վրա»³: Իսկ դա նշանակում է անտեսել իրականությունը. չէ որ միայն Իտալիայում հայերը շինել են 34 եկեղեցի և վանք: Ինչ վերաբերում է Լեոնարդո դա Վինչիին, ապա նա, Հայաստան այցելելուց հետո, հատկապես օգտագործեց հայկական գմբեթային շինության ձևը, Այնուհետև Կ. Զարյանը գրում է. «Լեոնարդոյի ճարտարապետական կենտրոնական դադափարը հենված էր ութանկյունի կիրառման վրա, որին նա միացնում էր մի հատակագիծ, որը համապատասխանում էր հայկական արսիդ հաստարան. քառակուսիին, ներքին հենարաններով»: Լեոնարդո դա Վինչիի միջոցով հայ ճարտարապետության ազդեցությունը կրել են նաև Բրունելլեսկին ու Բրամանթեն.

«Ձյորանսի Մայր եկեղեցին, շինված գոթական ոճով, տասնյակ տարիներով մնացել էր առանց գմբեթի և Բրունելլեսկին կարողացավ այն ծածկել միայն այն ժամանակ, երբ դիմեց հայկական ոճին ու տեխնիկային. «Երբ մարդ նայում է ղեպի արևմուտք և ներսից,— գրել է Յո. Սարմիգուվսկին,— կարող է մտածել, որ հայ ճարտարապետ է շինել այն»: Նույն ոգով է գործել «Բրամանթեն Սուրբ Պետրոսի եկեղեցին շինելու ընթացքում»¹:

Հայ ճարտարապետության ազդեցությունը եվրոպայում տարածվել է ինչպես հայ պանդուխտների ու մասնագետների, այնպես էլ գոթերի, խաչակիրների և առանձին ճարտարապետների միջոցով: Այսպես թե այնպես, ակնհեր է հայ ճարտարապետության գրական գերը եվրոպական վերածնության շրջանի վրա:

Նանսենը գրում է, որ ընդհանրապես միջնադարյան ճարտարապետության զարգացմանը նպաստել է հայկական ճարտարապետությունը՝ նա բարձր գնահատելով հատկապես գոթական ճարտարապետությունը, որը տարածվեց Արևմտյան եվրոպայում 12—15-րդ դարերում, նշում է, որ գոթական ոճի տարրերը հայերն ստեղծել են ավելի շուտ (գրա վկայությունն են Անիի Մայր եկեղեցին ու այլ շինություններ) և տարածել եվրոպայում. «Այդպիսով գոթիկան,— գրում է Ֆ. Նանսենը,— համաշխարհային մշակույթի այդ նշանակալից ստեղծագործությունը միջին դարերում, ղեռ վաղուց սկզբնավորվել է մի փոքր, բայց տաղանդավոր ժողովրդի կողմից, այն էլ մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ նա կենաց ու մահու պայքար էր մղում գերակշռող թշնամու հորդանների դեմ»²:

Նանսենի հետևությունները հենվում են փաստերի վրա ու հաստատվում նաև ժամանակակից հետազոտություններով: Մասնավորապես Ա. Յակոբսոնը, մանրամասն ուսումնասիրելով հայ ճարտարապետության ծագումն ու զարգացումը, նշում է. «Կարելի է առանց չափազանցությունների, որ Հայաստանը, սկսած 10-րդ դարից, նախաճարակներ է յուրահատուկ դպրոց էր ոչ միայն Մերձավոր արևելքի հարևան երկրների համար, այլև հեռավոր Բյուզանդիայի համար: Գրանում երևում է հայ ճարտարապետների ստեղծագործ ուժը. նրանք իրենց հայրե-

¹ «Вокруг света», № 7, 1967 г. стр. 42:

² Տե՛ս «Սովետական արվեստ», 1967 թ., № 4, 5 և «Литературная Армения», 1971 г., № 6.

³ «Սովետական արվեստ», 1967 թ., № 5. էջ 31:

¹ «Սովետական արվեստ», № 5, 1967 թ., էջ 31:

² F. Nansen, Betrogenes Volk, S. 287.

ներում ստեղծեցին այնպիսի գործեր, որոնք միջնադարյան համաշխարհային ճարտարապետության մեջ մտան որպես նրա առավել փայլուն էջերից մեկը»¹: Այնուհետև նա բերում է հայ ճարտարապետության ազդեցության նմուշներ Բուլղարիայում, Սերբիայում ու եվրոպական այլ երկրներում: Դրանում դարմանալի ուշինչ չկա, քանզի «միջին դարերում հայկական մշակույթը հասավ բարձր մակարդակի՝ զգալիորեն առաջ անցնելով Արևմտյան Եվրոպայից», իսկ մասնավորապես հայ ճարտարապետության մի քանի «գծեր կանխում են ուսմանական ու գոթական ճարտարապետությունը»²: Հայ ճարտարապետության ճանաչված մասնագետ պրոֆ. Վ. Հարությունյանը համամիտ է եվրոպական այն գիտնականներին (Ստրժիգովսկի և ուրիշներ), որոնք ցույց են տվել, որ Անիի «Մայր տաճարի ներսի ճարտարապետության մեջ կիրառում են գտել այն սկզբունքները, որոնք իրենց հետագա զարգացումն են ստացել գոթական ճարտարապետության մեջ 12—14-րդ դարերում և լայն տարածվել Արևմտյան Եվրոպայի երկրներում»³: Վերջապես, մի այնպիսի ընդհանրացնող երկում, ինչպիսին է Մոսկվայում հրատարակված «Ճարտարապետության համընդհանուր պատմությունը», ուղղակի ասված է հայ ճարտարապետության լայն տարածման մասին:

Սովետահայ ականավոր գրող ու մտածող Մարիետա Ծահինյանը իրեն հատուկ նրբանկատությամբ նշել է, որ հայերը զնում էին այլ երկրներ ոչ միայն բռնակալ զավթիչների հալածանքներից խուսափելու պատճառով, այլև այն, որ հնուց հռոչակված կառուցող-վարպետներ էին: Նրանք աշխատանք ճարտարու համար մի վայրից տեղափոխվում էին մյուսը՝ թեի տակ անենալով իրենց գործիքը. «Այդպես, Գյոթեի նախապապը՝ Երբեմնի ուրախ դերձակը, Մայնի Ֆրանկֆուրտի դարպասներից ներս մտավ մկրատը գոտու տակ: Այդ հայը՝ իր գործիքով, ըստ պրոֆեսոր Ստրժիգովսկու գրքի, նույնիսկ հասավ մինչև Քյոլն և մասնակցեց Քյոլնի տաճարի կառուցմանը»⁴:

¹ А. Л. Якобсон, Очерк истории зодчества Армении V—XVII веков, стр. 163.

² Նույն տեղը, էջ 5 և 162:

³ Վարդգան Հարությունյան, Անի քաղաքը, Երևան, 1964, էջ 59:

⁴ Мариэтта Шагинян, Человек и время (см. «Новый мир», 1971 г., № 4, стр. 110).

Ընդհանուր եզրակացությունն այն է, որ միջնադարյան հայ կառուցողական արվեստը գտնվել է բարձր մակարդակի վրա: Ուստի, արդարացիորեն շեշտվում է, որ «հայ ճարտարապետները, չուրացնելով համաշխարհային կոնստրուկտիվ ու ճարտարապետական մտքի լավագույն նվաճումները և դրանք արդյունավետ կերպով վերամշակելով ու կիրառելով իրենց ճարտարապետության մեջ, իրենք էին ազդում հարևան ու ավելի հեռավոր երկրների ճարտարապետության վրա, երկրներ, որտեղ նրանք ապաստան էին գտել, քանի որ հարկադրված են եղել փրկվել նվաճողների դաժանությունից...»

Ֆեոդալիզմի դարաշրջանի հայ ճարտարապետները ստեղծել են այնպիսի օրիգինալ ճարտարապետական գործեր, կոնստրուկցիաներ, կոմպոզիցիաներ և դեկորատիվ ձևեր, որոնք ոչ միայն հանդիսանում են նշանակալից ավանդ համաշխարհային մշակույթի գանձարանում, այլև վկայում են հայ ժողովրդի գեղարվեստական ու տեխնիկական ընդունակությունների մասին»¹:

Անոշուտ, չի կարելի ընկնել միակողմանիության մեջ, քանի որ հայ ճարտարապետությունը ևս կրել է ուրիշ երկրների բարերար ազդեցությունը: Ուստի, միանգամայն ճիշտ է ն. Տոկարսկին, երբ գրում է. «Սխալ կլինի պնդել, որ հայ ճարտարապետներն իրենց գործունեության մեջ չեն օգտագործել իրենց արտասահմանյան ընկերակից-մասնադիտների փորձը: Բայց, ընդունելով որոշ ճարտարապետական թեմաների ընդհանուր լուծումներ, որոնք գտել են հարևանները, նրանք ստեղծագործաբար մշակել են դրանք, մտցնելով որակապես նոր բովանդակություն՝ համապատասխան այն պահանջներին, որ առաջադրում էին երկրում գոյություն ունեցող պայմանները»²:



Ֆ. Նանսենի աշխատության վերջին՝ 11-րդ գլուխը կոչվում է «Հայաստանը նոր ժամանակներում» և բաժանվում է 3 մասի. 19-րդ դար, 20-րդ դար և առաջին համաշխարհային պատերազմ:

¹ Всеобщая история архитектуры, т. 3, Л. — М., 1966, стр. 298—299.

² Н. М. Токарский, Архитектура Армении VI—XIV вв., Ереван, 1961, стр. 333.

Ընդհանուր հայացք ձգելով հայոց պատմության վրա, նանսենը գրում է. «Ո՛ր դժբախտությունը և ո՛ր էլ զաժան վերաբերմունքը չընկճեցին հայ ժողովրդին»¹: Նա մարտնչում էր հերոսաբար և որոնում ազատության լույս: Այդպիսին ճառագեց հյուսիսից և հայ ժողովուրդը ապավինեց Ռուսաստանի օգնությանը: Այն ժամանակ, երբ ռուսական զորքերը շարժվում էին դեպի Անգրկովկաս, նրա ժողովուրդները պարսկա-թուրքական անտանելի լծից ազատագրվելու համար բնդառաջեցին նրանց: Մեծ ոգևորություն սկսվեց հայերի մեջ, և ներսևս Աշտարակեցին, դիմելով իր հայրենակիցներին, ասաց. «Հասավ ժամը, երբ աչքով պիտի տեսնենք Արարատյան աշխարհի ու հայոց ազգի ազատությունը... Ոտքի կանգնեք, հայոց քաջեր, թոթափեցեք պարսից լուծը, ուրախացրեք ալեգարդ Մասիսը, մի անգամ արյունով ներկեցեք հայրենի հողերը և ապա ապրեցեք ազատ»:² Բազմաբանակ հայեր դարձան ռուսական բանակին օգնող անձնավեր կամավորներ, իսկ գեներալ Մաղաթովն իր զորավարական արվեստն էր ցուցաբերում: Վերջապես ընկավ Երևանի սարգարի բերդը՝ դաժան բռնակալության ամրոցը, և 1828 թվականի Թուրքմենչայի պայմանագրով Արևելյան Հայաստանը միացվեց Ռուսաստանին:

Բնութագրելով այդ պատմական իրադարձության առաջադիմական նշանակությունը, նանսենը գրել է. «Ռուսաստանը Հայաստանն ազատագրեց մահմեդականների լծից ու ոճիրներից, թաթարական խաների ավազակային կողոպուտներից, հաստատվեց խաղաղություն և հանգիստ վիճակ, կարգ ու կանոն, ժողովուրդը գտնվում էր նպաստավոր պայմաններում և աշխատում էր բարձրացնել իր նյութական բարեկեցությունը»²: Բնորոշ է նաև, որ նանսենը միաժամանակ քննադատում է ցարական կարգերը, մերկացնում մեծապետական շովինիզմի (ռուսացման) քաղաքականությունը, դատապարտում հալածանքները հայերի կուլտուր-կրթական հաստատությունների և ազատության ձգտման նկատմամբ:

Այնուամենայնիվ, նանսենը շեշտում է, որ եթե Ռուսաստանին միացված Արևելյան Հայաստանում գրությունը տանելի էր, ապա Օսմանյան կայսրության կազմում մնացած Արևմտյան

Հայաստանում կատարյալ դժոխք էր, և այնտեղ տիրում էր «անսահման ճնշում, կողոպուտ, դաժանություն»: Թուրքական պաշտոնյաներն ու քրդական ավազակները խոսքը մեկ արած կոտորում ու թալանում էին հայերին: Այդ մասին բողոքել են ոչ միայն հայերը, այլև արտասահմանյան ուղևորներն ու գործիչները:

Այդ առթիվ անդրադառնալով Եվրոպային, նանսենը նշում է, որ եթե նրա ժողովուրդները ոչ միայն վրդովված էին թուրքական վայրագություններից, այլև օգնության ձեռք էին մեկնում դժբախտ հայերին, ապա կառավարողները, քաղաքագետները սոսկ ձուկ էին որսում պղտոր ջրում: Նրանք, իհարկե, չէին դյանում խոսելու թուրքական դաժանությունների ու հայերի տառապանքների մասին, համաշխարհային հասարակական կարծիքի մասին, բայց միայն նրա համար, որպեսզի քաղաքական ու տնտեսական օգուտներ քաղեն Օսմանյան կայսրությունից: Վերջինս նման էր «հիվանդ մարդու», և մեծ տերությունները շահագրգռված էին, որ նա մնա անկողնում, որպեսզի հարմար առիթով առյուծի բաժին վերցնեն: Այստեղից էլ սուկայի մրցակցությունը նրանց միջև, որից օգտվում էին թուրքական «գիվանագետները» և, խաղաղով մեծ տերությունների հակասությունների վրա, իսկ երբեմն էլ «բարենորոգման» խոստում տալով, շարունակում էին իրենց ժողովրդասպան դիժը: Դրանից, իհարկե, ամենից շատ տուժում էր հայ ժողովուրդը: Նանսենը մասնավորապես շեշտում է, որ «միայն Ռուսաստանն էր պատրաստ օգնելու հայերին»¹, բայց նա հանդիպում էր եվրոպական պետությունների ու հատկապես Անգլիայի դիմադրությանը: Էլ ուր մնացին Գլադստոնի ու նմանների բողոքները թուրքական ոճրագործությունների դեմ, արևմտյան տերությունների ղեկավարների «հայանպաստ» խոստումներն ու առաջարկները, թուրքական սուլթանների «պարտավորությունները»: Այդ ամենը մնաց որպես «ձայն բարբառ հանապատի», իսկ հայերի արյունահեղ կոտորածները Թուրքիայում դարձան ավելի կատաղի. «Ահա այն ամենը,— գրել է նանսենը,— ինչ արեցին Եվրոպայի պետական մարդիկ ու գիվանագետները հայ ժողովրդի համար»²: Նույնիսկ հերցոգ Արգիլը, դատապարտելով

¹ F. Nansen, Betrogenes Volk, S. 288.

² Նույն տեղը, էջ 289:

¹ F. Nansen, Betrogenes Volk, S. 290.

² Նույն տեղը, էջ 291:

Անգլիայի նենգամիտ վարքագիծը, լորդերի պալատում հայտարարեց. «Մեր քաղաքականության սկզբունքներն աշխարհի ոչ մի մասում այնպես անբարոյական ու անհեթեթ չեն, ինչպես այստեղ»։ Բերելով այդ խոսքերը, Նանսենը նշում է, որ զրանք լիովին վերաբերում են «ամբողջ Արևմտյան Եվրոպայի քաղաքականությանը հայ ժողովրդի նկատմամբ»։

Նանսենը, մանրամասն նկարագրելով ու վերլուծելով XIX դարի երկրորդ կեսի իրադարձությունները՝ կապված արևմտահայության հետ, գալիս է այն եզրակացության, որ շատ ավելի լավ կլիներ, եթե Եվրոպական կառավարությունները «չխառնըվեին հայերի գործերին», բանզի նրանց «հայանպաստ» խոսքերը երբեք չէին ամրապնդվում գործերով, իսկ թուրքերին դարձնում էին խիստ զազանաբարո, որոնք անպատիժ կերպով ու կատաղի դաժանությամբ հեղում էին իրենց անմեղ հպատակներին արյունը...

Նանսենն ընդգծում է, որ, այնուամենայնիվ, հայերը ցուցաբերում էին բացառիկ դիմացկունություն։ Նրանք հերոսաբար մարտնչում էին իրենց գոյության համար, պատսպարվում լեռներում, նորից վերագոհնում ու շենացնում ավերված գյուղերը, ստեղծում նյութական ու կուլտուրական բարիքներ։

Սակայն վերջ չկար նրանց տառապանքներին։ 20-րդ դարում սուլթան Աբդուլ Համիդի «զուլումին» փոխարինեց երիտթուրքերի կազմակերպած զենոցիզը, որին զոհ գնաց արևմտահայության մեծ մասը։ Նանսենը, մերկացնելով երիտթուրքերի «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը, ցույց է տալիս, որ այդ ցուցանակը լիովին կեղծ էր, և նրանք հանդիսանում էին իսկական առաջընթացի ու համերաշխության ոխերիմ թշնամիներ։ Երիտթուրքերը կատաղի շովինիստներ էին և դաժանորեն հալածեցին հայերին, հույներին, արաբներին, բրզներին ու այլ ժողովուրդներին։ Մասնավորապես նրանք 1909 թվականին Աղանայում կոտորեցին 30 հազար հայերի, իսկ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ մեկուկես միլիոն հայություն։ Դա կատարվեց վիլհելմյան Գերմանիայի աջակցությամբ ու հովանավորությամբ և արևմտյան մյուս տերությունների թողտվությամբ։ Նանսենը հանգամանորեն լուսաբանում է այդ զժոխային եղելությունը և անարգանքի սյունին գամում նրա հանցավորներին՝ թուրքական բռնակալներին, գերմանական միլիտարիստներին, Եվրոպական կառավարողներին։

Ինչպես ցույց է տվել Նանսենը, անհավասար ու դաժան կովում արևմտահայությունը անձնվեր գոյամարտեր մղեց Վանում ու Շատախում, Շապին-Գարահիսարում ու Մուսա լեռան վրա։ Արիաբար էին մարտնչում հայ կամավորները՝ ազգային ու ժողովրդական հերոս-զորավար Անդրանիկի ղլխավորությամբ։ Բայց, ընդհանուր առմամբ հայոց ուժերը քիչ էին, զենքեր՝ անբավարար, իսկ «զաշնակիցների» խոստումները՝ սին։ Դրանից օգտվեց դարավոր ոսոխը և զազանաբար բնաջնջեց ու արտաքսեց արևմտահայությունը, իսկ նրա հայրենիքը վերածեց ավերակների կույտի։ Իզուր չէ, որ Վիկտոր Հյուգոն ասում էր. «Թուրքերն անցան այստեղից... ամենուր մահ ու ավեր»։

Պատմության մեջ տեղի ունեցած այդ առաջին մեծ զենոցիզը մնաց անպատիժ և, Նանսենի խոսքերով ասած, մնում է հուսալ, որ արդարությունը կհաղթանակի...

Նանսենը ցույց է տալիս, որ թուրքական կառավարողները որոշել էին ոչնչացնել ամբողջ հայությունը։ Նրանք կազմակերպեցին զավթողական ու ավերիչ արշավանքներ զեպի Անդրդուկովաս, որոնք ուղեկցվեցին մասսայական կոտորածներով, այն հաշվով, որ «Ռուսահայաստանում ևս հայ ժողովուրդ չմեռա»։ Այդպիսի նպատակներ էին հետապնդում ոչ միայն երիտթուրքերը 1918 թվականին, այլև նրանց օրինավոր հաջորդներն ու ժառանգները՝ քեմալականները, 1920 թվականին։ Խորապես ճիշտ է Նանսենը, երբ գրում է, թե հայության համար «նոր ու լուրջ վտանգ ստեղծվեց, երբ զուլա բարձրացրեց ազգային թուրքական շարժումը Մուստաֆա Քեմալի ղեկավարությամբ»։ Վերջրս հայտարարաց, որ «սեր վիլյանթներին ոչ մի թիզ հող չուպտա Հայաստանին կամ որևէ այլ պետության»։ Տվյալ դեպքուս խոսքը Վանի, Բաղեշի, Էրզրումի և այլ վիլյանթների մասին է, որոնք թուրքերը զավթել էին հայերից և այժմ «իրենցն էին» համարում։ Հասկանալի է, որ Մուստաֆա Քեմալը գնում էր թուրքական սուլթանների ու իթթիհադականների հետքերով, վարում նույն ագրեսիվ ու կործանարար քաղաքականությունը ոչ թուրքական ժողովուրդները նկատմամբ։ Ավելին, նա զավթողական պատերազմ սկսեց նաև Արևելյան Հայաստանի դեմ, որի այն ժամանակվա կառավարողները՝ տիրահաշակ զաշնակցականները.

¹ F. Nansen, Betrogenes Volk, S. 321.

² Նույն տեղը, էջ 322—323:

մերժեցին Սովետական Ռուսաստանի օգնությունն ու միջնորդությունը լուծելու հայ-թուրքական կնճառտ հարցը: Նրանք փարվեցին թուրքական զավթիչներին և կնքեցին Ալեքսանդրապոլի ստրկացուցիչ պայմանագիրը: Ինչպիսի արգահատելի վարձուք, գարշելի ստորություն, կատարյալ ազդուրացություն ու հայրենագավություն...

Հայ ժողովուրդը չէր կարող հաշտվել այդ անտանելի դրություն հետ: Նա, անցնելով դարավոր փորձությունների միջով, Սարդարապատի դյուցազնամարտի և Մալխյան հերոսական ապստամբության բովով, 1920 թվականի նոյեմբերի 29-ին տապալեց դաշնակիների ու նրանց օտարերկրյա տերերի արյունոտ լուծը և Հայաստանը հռչակեց սովետական: Դա կատարվեց կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ և ռուս մեծ ժողովրդի օգնությամբ: Խորապես ճիշտ էր հանձարեղ Ա. Իսահակյանը, երբ գրում էր. «Հայաստանը և հայ ժողովուրդը կարող են ապրել միայն Ռուսաստանի հետ... Ռուսական մի կարմիր դինվորի ներկայությունը հայոց երկրի սահմանների վրա արժե հազար Վիլսոն ու Ազգերի լիգա, հազար Մակդոնալդ ու Հերիո. սա բացարձակ ճշմարտություն է»¹:

Բազմաշարժար հայ ժողովրդի պատմության մեջ տեղի ունեցավ արմատական շրջադարձ. սկսվեց նրա ազատ ու երջանիկ կյանքի կառուցման դարագլուխը, որը ճիշտ ընկալեց Ֆ. Նանսենը և սովետական շինարարության առաջին արդյունքների մասին գրեց. «Փորքիկ երկիրը քայքայված է պատերազմի հետեանքով... Դրան միանում է նաև այն, որ նրա նախնական բնակչությունն ավելացել է շնորհիվ մի քանի հարյուր հազար գաղթականների: Չկա մի այլ երկիր, որ այդչափ տառապած լինեի պատերազմում: Բայց շնորհիվ տաղանդավոր ու եռանդուն աշխատանքի, հինգ տարվա ընթացքում պայմանները բարելավվել են...»²: Կասկած չկա, որ գալիքն ավելի սպաժառ կլինի: Ալապիսի խոհերով է համակված մեծ նորվեգացու գիրքը, որը մի կողմից՝ մեղադրական ակտ է թուրքական բռնակալների ու արևմտյան կառավարողների դեմ, իսկ մյուս կողմից՝ ձոն է հայ ժողովրդի հերոսական մարտունակների, ստեղծարար գործունեության և լուսավոր ապագայի մասին:

Անշուշտ, Ֆ. Նանսենի «Հայաստանում» գիրքը դերծ չէ նաև թերություններից: Մասնավորապես հայ ժողովրդին նվիրված պատմական ակնարկներում, սոցիալական ու բազարական հարցերի քննարկման ժամանակ, չկա հստակ դասակարգային մոտեցում, առկա են որոշ փաստական անճշտություններ և այլն: Դրանք արդյունք են ոչ միայն հեղինակի ընդհանուր աշխարհայացքի, այլև ժամանակի պատմագիտության մակարդակի. բավական է նշել, որ Ֆ. Նանսենի ձեռքի տակ չի եղել հայ ժողովրդի պատմության ամբողջական գիտական շարագրանք: Մյուս կողմից՝ նա ունեցել է կատուկ նպատակ. շարժել աշխարհի գուլթն այդ խաղաղասեր ու տաղանդավոր, բայց բազմաշարժար ժողովրդի նկատմամբ: Այստեղից էլ նրա միտումը՝ առաջին պլանի վրա մղել հայ ժողովրդի թե՛ մշակութային փայլատակումներն ու ազատագրական ոգին և թե՛ այն բազմաթիվ արհավիրքները, որոնց նա ենթարկվել է մշտապես ու անարդացի կերպով: Նանսենը վճռականորեն մերկացնում ու զատապարտում է օտարերկրյա բռնագատիչներին ու դիվանագետներին, որոնք կործանարար դեր են կատարել հայ ժողովրդի կյանքում:

Ֆ. Նանսենի «Հայաստանում» աշխատությունը համակված է խոր մարդասիրությամբ զեպի ճնշվածն ու տանջվածը, արդարության համար մղվող պայքարի պաշտպանությամբ, օպտիմիստական պատմահայացքով: Որպես ֆիլիանտրոպ նրա իդեալն էր խաղաղությունը, ժողովուրդների բարեկամությունն ու համագործակցությունը, և զրանք իրենց արտացոլումն են գտել նաև տվյալ գրքում: Եթե հաշվի առնենք, որ գործ ունենք ոչ մարքսիստի, այլ բուրժուական աշխարհի լիբերալ-դեմոկրատի ու հաղվագյուտ մեծ մարդասերի հետ, որն իր հանրօգուտ հասարակական աշխատանքում օրյակտիվորեն ու սուբյեկտիվորեն հաճախ էր ընդհարվում այդ նույն աշխարհի կառավարողների հետ, ապա է՛լ ավելի կմեծանա Նանսենի գործունեության ու նրա «Հայաստանում» գրքի նշանակությունը: «Պատմական ծառայությունների մասին,— գրել է Վ. Ի. Լենինը,— գառում են ոչ թե նրանով, թե ինչ չէն տվել պատմական գործիչները ժամանակակից պահանջների համեմատությամբ, այլ նրանով, թե նրանք ինչ նոր բան են տվել իրենց նախորդների համեմատությամբ»¹: Կարծում ենք, մեր վերոհիշյալ շա-

¹ «Պատմաբանասիրական հանդես», № 4, 1962 թ., էջ 171, 174:

² F. Nansen, Betrogenes Volk, S. 132.

¹ Վ. Ի. Լենին, ԵԺԺ, հ. 2, էջ 220:

բաղրանքից հետո ընթերցողի համար պարզ է նանսենի մտքած
նորն ու արժեքավորը: Իզուր չէ, որ ժամանակին սովետա-
հայ մամուլը Ֆ. Նանսենի աշխատության մասին գրել է. «Այս
գրքում նա տալիս է հայոց պատմության մի ակնարկ, որ
ավելի մինչև օրս դրա նմանը չեն տվել անգամ մեր պատմա-
գիրները»¹: Այդ չեն արել նաև օտարերկրացիները: Հատկապես
բարձրարժեք են այն հատվածները, որոնք վերաբերում են հայ
ժողովրդի նոր ու նորագույն պատմության բաղաձայն պոր-
լեմներին, նրա կենսոտ ու կենսական հարցերին:

Ակներև է նանսենի գրքի նաև միջազգային նշանակություն-
ներ: Չէ որ այնտեղ ըստ էության քննարկվում է մի հնագույն
կուլտուրական ժողովրդի պատմական ճակատագիրը, մասնավո-
րապես հայկական հարցը, որը վաղուց դարձել էր կովախնձոր
ու շահատակությունների առարկա մեծ տերությունների ձեռքին:
Նա խոր մարդկայնությամբ է ընկալում հայ ժողովրդի ցավերը
և մերկացնում ու դատապարտում նրա ողբերգության հեղինակ-
ներին: Գրանք էին թուրքական զավթիչներն ու բռնակալները,
գերմանական իմպերիալիստները, արևմտյան տերությունների
կառավարողները: Վ. Զոնթագը Ֆ. Նանսենի «Հայաստանում»
աշխատության մասին գրել է. «Այս գիրքը, որը միաժամանակ
բովանդակում է հայ ժողովրդի ու նրա մշակույթի մանրամասն
պատմությունը, վերջին, լայնահուն կոչն էր Եվրոպայի ժողո-
վուրդներին ու կառավարողներին՝ քավելու իրենց մեղքը «խաբ-
ված ժողովրդի» նկատմամբ... Հայաստանի մասին իր գրքով նա
ձգտում էր շարժել Եվրոպայի խիղճը»²: Հարկավ, Եվրոպայի
առաջադեմ մարդիկ իրենց համերաշխությունն արտահայտեցին
նանսենի հետ, բայց բուրժուական կառավարողները մնացին
իրենց նախկին ու մշտապես շահամոլ դիրքերում: Ըստ էության
նանսենի գրքի հրատարակությունը քաղաքացիական սխրանք
էր, բողոքի հուժկու ձայն արևմտյան տերությունների խաբեբա
կառավարողների դեմ: Նանսենական գործիչ Մ. Շլեզինգերն այդ
աշխատության առթիվ դեռ 1928 թվականի հուլիսի 5-ին մեծ
հումանիտար գրել է. «Նա շատ երջանիկ է, որ Գուբ խիզախո-
րեն հարուցել էր բողոք, համոզված լինելով, որ այն կհասնի
մեղադրյալների ականջին: Պետական մարդիկ պատրաստ են
հեշտություններ ու գիտակցորեն անարդարություններ գործել, բան-

դի նրանք ավելի շատ համոզված են, որ ներկա սերունդը չի
կարող պատասխանատվության ենթարկել նրանց»³: Այնուամե-
նայնիվ, խայտառակության խարանդ դամված է նրանց ճակա-
տին և, ինչպես ընդգծել է նանսենը, «պատմությանն ուղեկցում
է նեմեզիսը. համենայն դեպս նա ժամանակ առ ժամանակ ներ-
կային ստիպում է քավել անցյալի մեղքերը»⁴:

Այո, 20-րդ դարը ոչ միայն մեծագույն ոճիրների ու հան-
ցագործությունների դար է, այլև հատուցման ու արդարության
հաղթանակի դար, աշխարհի արմատական վերափոխման դար:
Նանսենն իր գրքով հայոց խնդիրը ներկայացնում է աշխարհի
ժողովուրդների դատին և ձգտում ամեն կերպ նպաստել անցյա-
լի ծանր տառապանքների ու դրանց հետքերի վերացման, պատ-
մական արդարության վերականգնման: Նա խորապես զգում էր,
որ հանձինս տարբեր երկրներում դեղերոզ հայ գաղթականների,
ահավոր եղևոնի ուրվականն էր շրջում, և՛ մարդկությունը չէր
կարող ու չպետք է հաշտվի դրա հետ: Մեր օրերում ժողովուրդ-
ների այդ միտքն ու խիղճն է արտահայտել սովետական բանաս-
տեղծ Մարկ Ռիժկովը.

Հայ մարդու հոգում, հիշողության մեջ
Այս վերքը բերդ է զարձել անառիկ.
Ոչ մի ուրիշ թիվ, ուրիշ վերք ու վեճ
Չի կարող ջնջել թիվը՝ տասնհինգ...
Իսկ ես, ես՝ ծնված երեսունհինգին,
Ես մի ոտս մանչուկ՝ հեռվում մեծացած,
Սոսի հիմա հասան իմ ջահել ունկին
Այս բոթ-բառերը՝ «եղևոն, կոտորած...»
Գնդակը՝ պայթած տասնհինգ թվին,
Սոսի հիմա խոցեց սիրտս անառիկ,
Անեծք, բյուր անեծք դահճին այն վայրագ,
Անեծք անվանը, անեծք աճյունին...

Ֆ. Նանսենի գիրքը իր էությունով համահունչում է բոլոր ողջա-
միտ մարդկանց խոհերին ու հույզերին, և նրա մեջ արտահայտ-
ված կարևոր մտքերը պետք է դիտել նաև դեպքերի հետագա ըն-
թացքում, իրագործությունների շարժուն համայնապատկերում:
Այսպես, լիովին բնական է ու օրինաշարի, որ հայ ժողո-
վուրդն ավանդաբար նշում է ապրիլի 24-ը որպես ազգային սգի

¹ «Նոր ուղի», 1930 թ., № 4—5, էջ 48:

² Wolfgang Sonntag, Fridtjof Nansen, S. 482—503.

³ Fridtjof Nansen, Russland und der Friede, S. 50.

օր, գլուխ խոնարհում Մեծ եղեռնի նահատակների անմար հիշատակի առաջ և միաժամանակ բաց ճակատով ու հպարտությամբ նայում իր հզորացող վերածննդին, Դրանով էր համակված նաև Եղեռնի 60-ամյակը, որի առիթով ակադեմիկոս Վ. Համբարձումյանը ՍՄԿԿ Կենտկոմի կենտրոնական օրգան «Պրավդայում» հանդես եկավ հատուկ հոդվածով, ուր մասնավորապես ասված է. «Իմպերիալիզմի ժամանակաշրջանի ղեկողի դերը խոշորագույն, ոչնչով չքողարկված ակտը եղավ վեց տասնամյակ առաջ Արևմտյան Հայաստանի բնակիչների ոչնչացումը: Օգտագործելով պատերազմական իրադրությունը, թուրքական սեփական 1915—1916 թվականներին արյունալի հաշվեհարդար կազմակերպեց անդեն և անպաշտպան հայ բնակչության նկատմամբ: Ավելի քան մեկուկես միլիոն խաղաղ քաղաքացիների ֆիզիկական բնաջնջումը կատարվեց մոլեռանդ, անողոր դաժանություններով: Գերմանական իմպերիալիզմը, որ այն ժամանակ հսկայական ազդեցություն էր վայելում Թուրքիայում, ըստ էության խրախուսեց այդ ահավոր ոճրագործությունը և նույնպես նրա համար պատասխանատվություն է կրում»¹: Այդպիսին է սովետական ժողովրդի արդարացի ու հատու խոսքը:

Եղեռնի 60-ամյակը սգո հանդիսավորությունը նշվեց Սովետական Հայաստանում ու արտասահմանյան հայ դադիթօջախներում: 1975 թվականի ապրիլի 24-ին քաղաքամայր Երևանում հանրապետության ղեկավարները ՀԿԿ Կենտկոմի, Հայկ. ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության ու Մինիստրների խորհրդի անունից ծաղկեպսակ դրին եղեռնի զոհերի կոթող-հուշարձանին: Նույն օրը երեկոյան հեռուստատեսությունում ելույթ ունեցավ Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանը, որից հետո հանրապետության աշխատավորները մեկ ըուպե լուծվումը հարգեցին եղեռնի զոհերի հիշատակը: Այնուհետև այդպես է նշվում ավանդաբար:

Գննոցիդը ծանրագույն ոճիր է մարդկության ու մարդկայնության դեմ, ուստի, նրա հանցավորները, ինչպես նշված է ՄԱԿ-ի կոնվենցիայում, հրեք արգարացում չունեն, և նրանց վրա չի տարածվում վաղեմության իրավունքը: Դա լիովին վերաբերում է նաև թուրքական հանցավորներին ու նրանց հովա-

նավորներին, որոնք կազմակերպեցին արմենոցիդը և որոշակի օրինակ տվին հիտլերականներին: Զարմանալի չէ, որ դիվանարՔյուրերի համար մարգու իդեալ էին Չինգիզ խանն ու Լենկ Թեմուրը, Քալիաթն ու էնվերը, և նա, իր գորքին արյունալից պատերազմի քշելով, անասելի դաժանությունների մղելով, ասում էր. «Ո՞վ է այսօր հիշում հայերի բնաջնջումը»: Ֆաշիստական ճիվաղներն իդուր են կարծում, թե բոլորն են մոռացել հայերի կոտորածը: Առաջադեմ մարդկությունը դատապարտել է այդ ահավոր ոճիրը և երբեք չի մոռանա այն՝ որ միայն պատմական իրողությունը ճիշտ վերարտագրելու, այլև նման երևույթները կանխելու համար: Ուստի, բոլորովին անհանգուրժելի են այն մարդկանց խոսքերը, թե ինչ կարիք կա հիշել անցյալը, «Տին զարմանը քամուն տալ» և այլն: Թե ինչքան վնասակար է այդ տեսակետը, վկայում է հենց Հիտլերի օրինակը, որը պահանջում էր մոռանալ հայկական կոտորածը, որպեսզի ավելի մեծ ոճիր գործի:

Բռնակալներին են պետք Մոռացկոտ Հանեսները (Իվան Չճիշողները), բանականությունից զուրկ «պատուականները», որպեսզի գործեն այնպես, ինչպես ուզում են: Իհարկե, կյանքում ամեն ինչ չէ, որ հիշվում է, կամ պետք է հիշվի: Բայց ինչպես կարող է մարդ մոռանալ այն, ինչ ամեն օր նրա հոգում է ու սրտում, մտքում ու լիզվի վրա: Այդ դեպքում միայն գերեզմանը կարող է լռեցնել նրան, բայց միայն նրան, որովհետև նրա նրամանները շատ են, ապրում են ու գործում, անցնում սերնդից սերունդ:

Հայ ժողովուրդը չի մոռացել ու չի կարող մոռանալ ահավոր եղեռնը: Բարգավաճող Սովետական Հայաստանի բանվորները, գյուղացիներն ու մտավորականները իրենց հայրենանվեր աշխատանքով իմաստավորում ու հավերժացնում են եղեռնի զոհերի հիշատակը, նրանց անսահման նվիրվածությունը մայր հայրենիքին: Նույնիսկ բազում կորուստները չէին կարող կտրել հազարամյակների ճանապարհը անցած ու ահեղ փորձությունների դիմացած հայ ժողովրդի կենարար ոգին, նրա հավատը դեպի վառ ապագան, որպիսին պարզեց ազատարար շոկտեմբերը, լենինյան դարաշրջանը:

Սովետական իշխանության հաստատմամբ մեկընդմիջ տապահովվեց հայ ժողովրդի գոյության իրավունքը և բարենպաստ պայմաններ ստեղծվեցին նրա կոնսոլիդացիայի հա-

¹ Правда, 24. 4. 75.

մար: Պատմական կարճ ժամանակամիջոցում երբեմնի հետամնաց ու բղկտված Հայաստանը վերածվեց սոցիալիստական առաջնակարգ երկրի, ուր մշտապես հանդրվանում են նրա ըսփյուռքահայ զավակները:

Փոքրաթիվ հայ ժողովուրդը ոչ միայն ծաղկում է ու փթթում, այլև անպարտելի է դարձել սովետական ժողովուրդների եզրայրական մեծ ընտանիքում, որն իր լիակատար կենսունակությունը գրսևորեց ինչպես խաղաղ շինարարության տարիներին, այնպես էլ պատերազմական ահեղ փորձության ժամին: Եթե առաջին աշխարհամարտում չկար մի ուժ, որ փրկեր սրածվող հայ ժողովրդին, ապա երկրորդում նա ինքն էր սովետական մյուս ժողովուրդների հետ միասին հարվածում կատաղի թշնամուն: Սովետական բազմազգ պետության բոլոր զավակները մի մարդու նման ոտքի կանգնեցին և ջախջախեցին անարգ ոտխին: Ահա ինչպիսին է նոր իրավակարգի, ժողովուրդների անխախտ բարեկամություն ունեցող անսասանությունը: Եթե հաշվի առնենք, որ գերմանա-թուրքական ղինակցությունն այս անգամ էլ էր ուղում ոչնչացնել հայերին, ապա է՛լ ավելի ակնառու կդառնա տարած հաղթանակի անզուգական նշանակությունը: Սովետական հայրենասիրությունը միաձուլված է պրոլետարական, սոցիալիստական ինտերնացիոնալիզմի հետ, որն ամեն մի ժողովրդի ինքնուրույնությունն ու արժանապատվությունը ներդաշնակում է բոլոր ժողովուրդների բարեկամությանն ու համագործակցությանը: Կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականությունն ապահովում է սովետական բոլոր ժողովուրդների ծաղկումն ու մերձեցումը: Հենց դրանով է բնորոշվում մեր լայնածավալ հայրենիքի այժմյան զարգացած սոցիալիստական հասարակությունը, որի կատարելագործմամբ սովետական ժողովուրդը գնում է դեպի կոմունիզմ: Այդ մեծ գործին է ծառայում սովետական պետության նաև արտաքին խաղաղասիրական քաղաքականությունը, որի բարիքներից լիովին օգտվում է հայ ժողովուրդը:

Եղևոն ու վերածնունդ... Ինչպիսի հակադրություն՝ ոչ միայն հասկացությունների, այլև իրողությունների: Իհարկե, առաջինը ահավոր շարիք է, բայց զոհն արդեն անցյալ, և խորապես բերկրալի է, որ հայ ժողովուրդն իր մշտահողով երթն է կատարում միայն երկրորդ ուղիով: Ինչքան կուրախանար նանսենը՝ տեսնելով այդ «հրաշքը»...

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՈՒ ՍԻՐՈՎ

Տ. Նանսենը դարձել է մարդկության սիրելին: Երախտապարտ ժողովուրդները բարձր են գնահատում ու հավերժացնում նրա հիշատակը: Մեծ բեկոսխույզի անունն են կրում Արկտիկայի ու Անտարկտիկայի մի շարք վայրեր՝ Շպիցբերգենի ու Գրենլանդիայի միջև ընկած ստորջրյա սահանքը, Ֆրանց-Իոսիֆի երկրի արշիպելագի կղզիներից ու հրվանդաններից մեկը, Կանադական արկտիկական արշիպելագում Գրանտի երկրի և Սվերդրուպի կղզու միջև ընկած նեղուցը, սովետական հետազոտողների կողմից հայտնաբերված վիթխարի գոգավորությունը Հյուսիսային սառուցյալ օվկիանոսում և այլն:

Նանսենը մեծ ժողովրդակա-նություն ունի սովետական երկրում, ուր նրա անունով կոչվում են բազմաթիվ օբյեկտներ, մասսայական տպաքանակով հրատարակվում են նրա երկերը, լույս ընծայվում գիտահետազոտական աշխատություններ ու հանրամատչելի գրքեր նրա մասին:

Փոքրաթիվ ժողովուրդներն ավելի կարիք ունեն մեծ բարեկամների: Հենց այդպիսին է Ֆրիտյոֆ Նանսենը հայ ժողովրդի համար: Նա միշտ հատուկ գորովանքով է հիշում առաջավոր մարդկության առաքյալին,

որն աներևակայելի ջանքեր գործադրեց՝ օգնելու աշխարհի առավել տառապած ժողովուրդներից մեկին: Քանի կան ու կլինեն հայեր, այնքան ժամանակ նրանք խոր ակնածանքով ու անհուն սիրով կհիշեն նանսենի անունը:



Հայ հասարակական միտքը նանսենով հետաքրքրվել է դեռ այն ժամանակ, երբ նա իր առաջին խոշոր քայլերն էր անում բևեռախուզության ասպարեզում: Հայկական մամուլում մասնավորապես հաղորդագրություններ տպագրվեցին նրա գրչական-դակն սխրանքի և ապա «Ֆրամի» ճանապարհորդության մասին: Այդպես, «Մշակ» լրագիրը 1896 թվականին փետրվարի 15-ին հաղորդում է, որ նանսենի արշավախումբը շարժվում է դեպի Հյուսիսային բևեռ, իսկ ռուս գիտնականները (Սեմյոնով, Տոլլ և ուրիշներ) պատրաստվում են նրան ամեն կերպ աջակցել, մանավանդ վերադարձի ժամանակ (Նորսիբիրյան կղզիներում պարենի պաշարներ են ստեղծվել և այդ մասին հաղորդվել է նանսենին): Ավելի ուշ՝ նույն թվականի օգոստոսի 6-ին, «Մշակը» մանրամասն տվյալներ է հաղորդում արշավախմբի ուղերթի մասին և նշում, որ «նանսենը ողջ և առողջ հասել է իր հայրենիքը. նանսենի ուղևորության գիտական հետևանքները ահագին են...»¹:

Գնալով ավելի է մեծանում հայոց հետաքրքրությունը դեպի նանսենն ու նրա գործը: Բնորոշ է, որ դեռ 1906 թվականին Զմյուռնիայում հայերեն լույս է տեսնում Յ. նանսենի «Գեպի բևեռ» երկը (256 էջ): Այն ֆրանսերենից թարգմանել էր արևմտահայ մշակութային նշանավոր գործիչ Մեսրոպ Նուպարյանը, որը փոքրիկ նախարանում հայ ընթերցողին է ներկայացնում նանսենին ու նրա ստեղծագործությունը: Նա շեշտում է, որ «Նորվեգիայի գերահռչակ ուղևոր», «մեծանուն աշխարհախույզի» գիրքը ռեալիստական գործ է և կարդացվում է մեծ հետաքրքրությամբ (ավելի, քան ժյուլ Կեռնի երկերը). «Նա ուներ ամեն կարգի ձիրքեր ու հատկություններ. հանճարիմաց միտք, խիզախ՝ անօրինակ հանդգնություն մը, անխոնջ ջանք և աշխատասիրություն, անդուլ հարատևություն, բուրրանվեր անձնվիրություն և միանգամայն կատարյալ խելամտություն կատարելիք

մեծադժվարին պայքարի մը պայմաններում»¹: Այդպիսի բարձր տվյալներով է, որ նանսենը կատարել է աշխարհահռչակ սրբաբաններ (գրենլանդական արշավ, «Ֆրամով» դեպի Հյուսիսային բևեռ և այլն) և հարստացրել գիտությունը: Նանսենի գրքի հրատարակիչն էր Հրանտ Մամուրյանը (նշանավոր գրող-հրապարակախոս Մաթևոս Մամուրյանի որդին), որն իր «Երկու խոսքում» նշում է, թե մտադիր են հրատարակելու «ուղևորական-գիտական» մատենաշար և դրա առաջնիկն է Նորվեգիայի «հանճարեղ բևեռախույզի» սքանչելի երկը. «Կկարծեք», որ դրա լույս ընծայումը «օգտակար ծառայություն» «կըլլա հայ գրականության և առհասարակ ամեն կարգի ընթերցողներուն»²:

Նանսենի ժողովրդայնությունն իր արժանի բարձրության է հասնում սովետական իրավակարգում: Սովետահայ մամուլը հաղորդագրություններ է տպագրում նանսենի մարդասիրական գործունեության մասին, ընդգծում հատկապես նրա մեծ դերը Պոլոյթիի սովյալներին օգնելու գործում: Ահա, օրինակ, «Խորհրդային Հայաստան» լրագրի 1922 թվականի մարտի 23-ի համարում ղեկավարած հոդվածը՝ «Ֆրիտյոֆ նանսենը և Խորհրդային Ռուսաստանի պրոլետարիատը», ուր ցույց է տրվում, թե ինչպես մեծ մարդասերը, բուրժուական կառավարողների հակասովետական լուտանքի ծանր պայմաններում, օգնության ձեռք մեկնեց բանվորագյուղացիական պետության քաղցածներին, «նանսենը առաջիններից էր, որ իր համարձակ խոսքով ծառայած բուրժուական հասարակական կարծիքի դեմ, հանդես եկավ թե՛ մամուլում և թե՛ հասարակական հավաքույթներում ու պաշտպանեց պրոլետարական հեղափոխության արդարացի պահանջները... Ֆրիտյոֆ նանսենի բերած օգնությունը բանվորագյուղացիական մասսաների համար անպայման շատ մեծ է: Հաջողություն Ֆրիտյոֆ նանսենի այս ուղղությամբ անելիք նորանոր քայլերին ու ձեռնարկներին»:

Նանսենի վերաբերյալ բազմաթիվ նյութեր տպագրվեցին, երբ 1925 թվականին նրա գլխավորած հանձնաժողովը ժամանեց

¹ Ֆրիտյոֆ նանսեն, Գեպի բևեռ, Իգմիր, 1906, էջ 9-10:

² Նույն տեղը, էջ 9: Նկատենք, որ Յ. նանսենի «Գեպի բևեռ» գրքի հայերեն հրատարակության մասին (Զմյուռնիայում) մեզ հայտնի առաջին հաղորդումը տվել է Միքայել Հակոբյանը (տե՛ս «Գրական թերթ» № 5, 29. 01. 82), բայց չենք կասկածում, որ իր ժամանակին էլ հայ մամուլում տպագրվել են համապատասխան ազդեր, գուցե և գրախոսություններ:

¹ «Մշակ», 1896 թ., № 19, 90:

Սովետական Հայաստան և ապա հանդես եկավ Ազգերի լիգայում: Այդ մասին մանրամասն խոսել ենք սույն աշխատության 3-րդ և 4-րդ գլուխներում, ուստի, այլևս հարկ չկա նորից տարածվել: Միայն ընդգծենք, որ Նանսենի միսիայի հետ կապված դեպքերի ընթացքն արտացոլվում էր ինչպես սովետահայ մամուլում, այնպես էլ արտասահմանյան հայ լրագրերում ու ամսագրերում: Ավելին, գեպի Նանսենի գործն ունեցած վերաբերմունքը ևս դարձավ յուրահատուկ ջրբաժան գիծ սփյուռքահայ առաջադիմական ու հետադիմական ուժերի միջև:

Սովետական երկրում լայն ծավալ ընդունեց Յ. Նանսենի երկերի հրատարակությունը: Այդ ուղղությամբ բավական աշխատանք է կատարվել նաև Հայաստանում, որ մասսայական ընթերցողը մայրենի լեզվով կարդացել է մեծ գիտնականի ու բևեռախուշի աշխատությունները:

1927 թվականին հայերեն լույս տեսան Յ. Նանսենի «Գիշերվա խավարի և սառույցների մեջ» գրքի 1-ին ու 2-րդ հատորները (համառոտակի թարգմանությունը կատարվել էր ռուսերենից՝ Մկրտիչ Արմենի և Ռ. Դրամբյանի կողմից), որոնք պատկերում են «Տրամի» ճանապարհորդությունը: Հայ ընթերցողը չէր մոռցված ընդունեց դրանք: Այդ հրատարակության առթիվ տպագրվեցին դրական գրախոսականներ և շեշտվեց Յ. Նանսենի ոչ միայն գիտական խոր միտքը, այլև գեղարվեստական բարձր ընդունակությունները. «Նանսենը միաժամանակ լավ նկարագրող է. գիտե հուզել ընթերցողներին իր հոգեկան ապրումների գեղարվեստական վերարտադրությամբ... Նանսենի «Գիշերվա խավարի և սառույցների մեջը» կարդացվում է մի շնչով, ինչպես Ռոբինզոնի արկածները»¹:

1958—59 թվականներին Հայպետհրատը նորից հրատարակեց Յ. Նանսենի «Տրամը» բևեռային ծովում» գիրքը, բայց այս անգամ երկու ծավալուն հատորներով: Դրանով հայ ընթերցողը հնարավորություն ստացավ լայնահուն կերպով ծանոթանալու մեծ նորվեգացու բևեռային էպոպեային:

Յ. Նանսենի «Հայաստանում» գրքի հրատարակությունը նորվեգերեն և ապա մյուս լեզուներով լայն արձագանք գտավ ընդհանրապես և Սովետական Հայաստանում ու սփյուռքահայության մեջ մասնավորապես: Ամենից առաջ նշենք, որ հեղի-

նակն իր անձնական օրինակներն ուղարկեց մի շարք պետական ու հասարակական գործիչների, գիտնականների ու արվեստագետների, ընդ որում անպայմանորեն ջերմ մակագրությամբ: Բերենք մի քանի օրինակ: Նանսենը կուսակերից իր գրքի ֆրանսերեն հրատարակությունը առաքում է «միստեր Լուկաշինին՝ հարգանքով»: Ար. Երզնկյանին ուղարկում է գերմաներեն հրատարակությունը հետևյալ մակագրությամբ. «Ե՛ նշան խոր երախտագիտության՝ Հայաստանում գտնված ժամանակ մեր նկատմամբ ցուցաբերած ողջ սիրալիրության, և սրտառուշ շնորհակալությամբ՝ մեր աշխատանքում ցույց տված շատ արժեքավոր օգնության համար»:

Հայ գործիչներն ու գիտնականները խորին շնորհակալությամբ էին ընդունում Յ. Նանսենի գիրք-նվերը և երախտագիտական խոսք ասում: Պրոֆ. Հ. Բեղելյանը 1928 թվականի հունիսի 11-ին հեռագրել է. «Ամբողջ հոգով շնորհակալություն ակնվարար գրքի համար: Տպավորությունը խորն է: Հասարակայնությունը որոշել է անպայմանորեն այն թարգմանել հայերեն և ուսեսեն»։ Պրոֆ. Աշ. Քալանթարը հատուկ նամակ է գրում «մեծարգո ղոկտորին» և նշում. «Ինձ համար շատ հաճելի պարտականություն է իմ սրտագին շնորհակալությունը հայտնել Ձեր մեծագույն սիրալիրության առթիվ: Ձեր գիրքը մեր ժողովրդի մասին այժմ մեզ մոտ ամենուրեք կարգում են մեծ հետաքրքրությամբ»:

Անվանի գրականագետ և կուսակցական ու պետական գործիչ Պ. Մակինցյանը գերմաներեն հրատարակության առթիվ հանդես եկավ ծավալուն գրախոսականով («Նանսենի գործն ու գիրքը»), որը լույս տեսավ «Նոր ուղի» հանդեսում: Այնտեղ արժեքավորվում է Նանսենի հումանիստական գործունեությունը, որը տարածվեց նաև հայ ժողովրդի վրա: Այս անդրադառնալով նրա աշխատությանը, Մակինցյանը գրում է. «Նանսենը տալիս է իր կենդանի տպավորությունները մեր երկրից, ժողովրդից, նա ուշիուշով դիտում է մեր քաղաքական կարգերը, հետաքրքրվում է երկրում առաջ տարվող տնտեսական ու կուլտուրական շինարարությամբ, ձգտում է ըմբռնել մեր ֆեդերացիայի իմաստն ու ներթափանցել ազգամիջյան հարաբերության մեջ: Գրքի այս կողմը մեզ համար թերևս ամենահետա-

¹ «Նորհրդային Հայաստան», 11. 9. 27:

Սովետական Հայաստան և ապա հանդես եկավ Աղզերի լիզա-
յում: Այդ մասին մանրամասն խոսել ենք սույն աշխատության
3-րդ և 4-րդ գլուխներում, ուստի, այլևս հարկ չկա նորից տա-
րածվել: Միայն ընդգծենք, որ Նանսենի միսիայի հետ կապված
դեպքերի ընթացքն արտացոլվում էր ինչպես սովետահայ մա-
մուլում, այնպես էլ արտասահմանյան հայ լրագրերում ու ամ-
սագրերում: Ավելին, դեպի Նանսենի գործն ունեցած վերաբեր-
մունքը ևս դարձավ յուրահատուկ ջրբաժան գիծ սփյուռքահայ
առաջադիմական ու հետադիմական ուժերի միջև:

Սովետական երկրում լայն ծավալ ընդունեց Ֆ. Նանսենի եր-
կերի հրատարակությունը: Այդ ուղղությամբ բավական աշխա-
տանք է կատարվել նաև Հայաստանում, ուր մասսայական ըն-
թերցողը մայրենի լեզվով կարդացել է մեծ գիտնականի ու
բեկոսխույզի աշխատությունները:

1927 թվականին հայերեն լույս տեսան Ֆ. Նանսենի «Գի-
շերվա խավարի և սառույցների մեջ» գրքի 1-ին ու 2-րդ հա-
տորները (համառոտակի թարգմանությունը կատարվել էր ռու-
սերենից՝ Մկրտիչ Արմենի և Ռ. Գրամբյանի կողմից), որոնք
պատկերում են «Ֆրամի» ճանապարհորդությունը: Հայ ընթեր-
ցողը չերմությունը ընդունեց դրանք: Այդ հրատարակության
առթիվ տպագրվեցին դրական գրախոսականներ և շեշտվեց
Ֆ. Նանսենի ոչ միայն գիտական խոր միտքը, այլև գեղարվես-
տական բարձր ընդունակությունները. «Նանսենը միաժամանակ
լավ նկարագրող է. գիտե հուզել ընթերցողներին իր հոգեկան
ապրումների գեղարվեստական վերարտադրությամբ... Նանսենի
«Գիշերվա խավարի և սառույցների մեջը» կարդացվում է մի
շնչով, ինչպես Ռոբինզոնի արկածները»¹:

1958—59 թվականներին Հայպետհրատը նորից հրատարա-
կեց Ֆ. Նանսենի «Ֆրամը բեկոսյին ծովում» գիրքը, բայց
այս անգամ երկու ծավալուն հատորներով: Գրանով հայ ըն-
թերցողը հնարավորություն ստացավ լայնահուն կերպով ծանո-
թանալու մեծ նորվեգացու բեկոսյին էպոպեան:

Ֆ. Նանսենի «Հայաստանում» գրքի հրատարակությունը
նորվեգերեն և ապա մյուս լեզուներով լայն արձագանք գտավ
ընդհանրապես և Սովետական Հայաստանում ու սփյուռքահա-
յություն մեջ մասնավորապես: Ամենից առաջ նշենք, որ հեղի-

նակն իր անձնական օրինակներն ուղարկեց մի շարք պետա-
կան ու հասարակական գործիչների, գիտնականների ու արվես-
տագետների, ընդ որում անպայմանորեն ջերմ մակագրու-
թյամբ: Բերենք մի քանի օրինակ: Նանսենը կուսակերից իր
գրքի ֆրանսերեն հրատարակությունը առաքում է «միտեր Լու-
կաշինին՝ հարգանքով»: Ար. Երզնկյանին ուղարկում է գերմա-
ներեն հրատարակությունը հետևյալ մակագրությամբ. «Ի նշան
խոր երախտագիտության՝ Հայաստանում գտնված ժամանակ
մեր նկատմամբ ցուցաբերած ողջ սիրալիրության, և սրտառուչ
շնորհակալությամբ՝ մեր աշխատանքում ցույց տված շատ ար-
ժեքավոր օգնության համար»:

Հայ գործիչներն ու գիտնականները խորին շնորհակալու-
թյամբ էին ընդունում Ֆ. Նանսենի գիրք-նվերը և երախտագի-
տական խոսք ասում: Պրոֆ. Լ. Բեդեյանը 1928 թվականի հու-
նիսի 11-ին հեռագրել է. «Ամբողջ հոգով շնորհակալությամբ
ազնվաբարո գրքի համար: Տպավորությունը խորն է: Հասա-
րակայնությունը որոշել է անպայմանորեն այն թարգմանել հա-
յերեն և ռուսերեն»: Պրոֆ. Աշ. Քալանթարը հատուկ նամակ է
գրում «մեծարգո դոկտորին» և նշում. «Ինձ համար շատ հա-
ճելի պարտականություն է իմ սրտագին շնորհակալությունը
հայտնել Ձեր մեծագույն սիրալիրության առթիվ: Ձեր գիրքը
մեր ժողովրդի մասին այժմ մեզ մոտ ամենուրեք կարդում են
մեծ հետաքրքրությամբ»:

Անվանի գրականագետ և կուսակցական ու պետական գոր-
ծիչ Պ. Մակինցյանը գերմաներեն հրատարակության առթիվ
հանդես եկավ ծավալուն գրախոսականով («Նանսենի գործն ու
գիրքը»), որը լույս տեսավ «Նոր ուղի» հանդեսում: Այնտեղ
արժեքավորվում է Նանսենի հումանիստական գործունեությունը,
որը տարածվեց նաև հայ ժողովրդի վրա: Ապա անդրադառ-
նալով նրա աշխատությանը, Մակինցյանը գրում է. «Նանսենը
տալիս է իր կենդանի տպավորությունները մեր երկրից, ժողո-
վրդից, նա ուշիուշով դիտում է մեր քաղաքական կարգերը,
հետաքրքրվում է երկրում առաջ տարվող անտեսական ու կուլ-
տուրական շինարարությամբ, ձգտում է ըմբռնել մեր ֆեդերա-
ցիայի իմաստն ու ներթափանցել ազգամիջյան հարաբերու-
թյանց մեջ: Գրքի այս կողմը մեզ համար թերևս ամենահետա-

¹ «Նորհայտի Հայաստան», 11. 9. 27:

բրբրաշարժն է»¹։ Այնուհետև նանսենի աշխատությունից բերվում են այդ մտքերը հաստատող քաղվածքներ։ Գրախոսը դրականորեն է գնահատում նաև հայ ժողովրդի պատմության նանսենյան ակնարկը, որը Վրաստանի համեմատությամբ «շատ ավելի լիակատար է» և ուր «մենք գտնում ենք շատ դնահատելի տեղեկություններ... Պետք է խոստովանել, որ հայ ընթերցողը, անգամ որակյալ մտավորականը նանսենի կազմած վրաց և հայոց պատմության ակնարկներից կբաղի բազմաթիվ հետաբրբրաշարժ և թարմաշունչ տեղեկություններ»²։ Միանգամայն խրախուսելի է նաև արևմտյան տերությունների քաղաքականության մերկացումը հայկական հարցում. «Իմպերիալիստական դիվանագիտների քաղաքականության այս մերկացումն ու մեկնաբանումը նանսենի գրքի վերջում, կարծիք այն թունավոր քիստն է, որ խայթում է ոչ միայն իմպերիալիստական դիվանագետներին, այլև նրանց բազմամյա խոնարհ ծառա դաշնակցականներին»³։

Նույն հանգեսի 1930 թվականի № 4—5-ում լույս է տեսնում կարճ, բայց բարձր մակարդակով գրված խմբագրական հոդված՝ Ֆ. Նանսենի մահվան առթիվ։ Այնտեղ հուզիչ ջերմությամբ է խոսվում մեծ գիտնականի ու հասարակական գործչի մասին. «Այդ երևելի մարդը այն գիտնականներից չէր, որոնք գրքերի պարիսպների ետևում, իրենց առանձնասենյակներում նստած՝ կտրվում են կյանքից և հասարակությունից. Ընդհակառակը, նա խորապես տարբերվում էր բուրժուական գիտության բազմաթիվ անհոգի քուրմերից։ Թեև նրա հետազոտության քննադատող սառցակուլտների և սառնամանիքի վայրն է եղել, Հյուսիսային բևեռը, բայց նրա կրճրի տակ բաբախել է մի բոցավառ սիրտ»⁴։ Ահա թե ինչու նա ոչ միայն ճանաչված էր, այլև սիրված ամբողջ աշխարհում։ Նանսենը վիթխարի մարդասիրական գործ կատարեց նաև Ռուսաստանում, կազմակերպեց փրկարար օգնություն սովյալներին և դա հակառակ բուրժուական աշխարհի կառավարողների ցանկության ու կամքի. «Խորհրդային իշխանությունն ունի իրավունք պարծենալու, որ նանսենի պես բարեկամ է ունեցել», — նշվում է հանդեսում։

¹ «Նոր ուղի», 1929 թ., № 1, էջ 344։

² Նույն տեղը, էջ 347—348։

³ Նույն տեղը, էջ 349։

⁴ «Նոր ուղի», 1930 թ., № 4—5, էջ 46։

Հողվածում առանձին ուշադրություն է դարձվում նանսենի հայանպաստ գործունեությանը, նրա ուղեորությանը Հայաստանում ու մարտական ելույթներին Ազգերի լիգայում, շեշտվում «նրա խիզախ բողոքն ու առնական ցասումը մեր թշնամիների դեմ»։ Բացի դրանից, «նա գրել է մի գեղեցիկ դիրք մեր մասին, որ ցույց է տալիս, թե այդ համառ եվրոպացին կարգացել, յուրացրել է ահագին զբաղանջություն եվրոպական լեզուներով Հայաստանի մասին։ Այդ դրբում նա տալիս է հայոց պատմության մի ակնարկ, որ, ավագ, մինչև օրս դրանմանը չեն տվել անգամ մեր պատմագիրները։ Սակայն նանսենի գիրքը հայերի մասին առավելապես կարևոր է ոչ թե Հայաստանի անցյալի նկարագրությամբ, այլ արդի հրատապ խնդիրների քննարկությամբ... Նանսենը նկարագրում է խորհրդային իշխանության շինարար գործունեությունը Հայաստանում և մեղադրում Անտանտին, որը, զրթելով իր բոլոր խոստումները, չի կատարում իր պարտավորությունները հայ ժողովրդի նկատմամբ... Նանսենը, իր կենդանության ժամանակ իսկ, իր գրքով հավերժացրել է ընդմիջտ իր հիշատակը Խորհրդային Հայաստանում»¹։

Հողվածը ավարտվում է այդ ամենը «մենք երբեք չենք մոռանա» երախտագիտական խոսքով։ Եվ, իրոք, այդպես ու միայն այդպես...

Հանդեսի նույն համարում զետեղված են երկու հատված («Եիրկանալի բացումը», «Հայկական հարցը ու Անտանտը» — վերնագրերը խմբագրությանն են) նանսենի գրքից (գերմաներեն հրատարակությունից)։

Ֆ. Նանսենի գրքի Ֆրանսերեն թարգմանության առթիվ հատուկ հաղորդում արեց Լ. Բաշալյանը՝ Փարիզում հրատարակվող «Ապագա» թերթում։ Նա ամենից առաջ նշեց, որ այդ գիրքը նորվեգերենից անմիջապես թարգմանվեց անգլերեն ու գերմաներեն, իսկ այժմ նաև ֆրանսերեն, ընդ որում հեղինակը «որոշած է, որ գրքի վաճառումն զոյանալիք բոլոր հասույթը երթա որբերու և գաղթականներու համար»²։ Այնուհետև նշվում է, որ նանսենի գիրքը սեպտեմբերին ուղարկվել է Ժնև՝ Ազգերի լիգայի բոլոր պատվիրակներին (ավելի քան 210 հոգու), ինչպես նաև պետական այլ գործիչների, բոլոր մեծ գրադարաններին, կարևոր լրագրներին ու հանդեսներին։ Դրա նպատակն էր

¹ «Նոր ուղի», 1930 թ., № 4—5, էջ 48։

² «Ապագա», 20. 10. 1928։

ցույց տալ ռեալ իրականությունը և ստեղծել միջազգային բարենպաստ հասարակական կարծիք հայ դատի ու գաղթականների վերաբերյալ, ազդել Արևմուտքի պետական մարդկանց «խղճի» վրա, բայց նրանք մնացին անզորվելի:

Միտիթարյանների «Բազմավեպում» տպագրվեց խմբագրական հոդված նանսենի գրքի ֆրանսերեն թարգմանության առթիվ և ընդգծվեց դրա ճանաչողական կարևոր նշանակությունը. «Գրքին ամենահետաքրքրական մասը ուղևորության ներկայացումն է Հայ հանրապետության հողամասին մեջ: Նանսեն տնտեսական ու երկրագործական տեսակետեն դատ, ամբողջ երկիրը՝ ուր պտտած է, կրննե մարդաբանական, ազգագրական, գեղարվեստական դիտումով. տեղերու նկարագրությունը կրնն, տիպարներ կնշմարն, բարքեր ու սովորույթներ վեր կհանն, կգրադի միանգամայն արվեստի հին գործերու նկարագրությամբ, կրթական հաստատությանց տեսությամբ: Օտարի մը ներկայացված նոր Հայաստանի արդար պատկերն է, որ անհրաժեշտ է տեսնել՝ ճիշտ գաղափար կազմելու համար մեր երկրին կացության»¹:

Ֆ. Նանսենի Հայաստանին նվիրված գրքի նույն ֆրանսերեն հրատարակության առթիվ մատենախոսությունը տպագրվեց նաև «Սիոն» ամսագրում: Հեղինակը Բ. Ե.-ն (Բարկեն եպիսկոպոսը) բևեռախույզ նանսենին անվանում է նաև «Հայաստույզ» և դրվատում նրա հայանպաստ գործունեությունը: Նա նշում է, որ նանսենը հայ գաղթականների գործով մեկնեց Հայաստան, «ուր կառավարությունը ամեն դյուրություն ընծայեց իրեն առաջադրված հետազոտություններն ու ուսումնասիրություններն ընելու համար»²: Դրանց արդյունքները քննարկվեցին Ազգերի լիգայում: Նույն հեղինակի թարգմանությամբ (ֆրանսերենից) «Սիոն» ամսագրի № 5-ում լույս է տեսնում մի հատված նանսենի գրքից («Հայ ազգին մարդաբանությունը և ծագումը»):

□□□

Ֆ. Նանսենի մահվան լուրը ցնցեց ամբողջ աշխարհը: Եվ դա հասկանալի է, քանզի նա համարվում էր «աշխարհի բաղաբացի» ու «աշխարհի խիղճը»: Ռ. Ռուլանը նանսենին բնութագրեց

¹ «Բազմավեպ», 1928 թ., № 9, էջ 320:

² «Սիոն» (Երուսաղեմ), 1929 թ., № 4, էջ 122:

որպես «մեր ժամանակի միակ եվրոպական հերոս», իսկ Կ. Օստեցկին՝ նրան անվանեց «մարդկության բարի հանճար»¹, որին դիմում էին աշխարհի բոլոր ծայրերից և ամենաբազմապիսի հարցներով: Ահա դրանցից մեկը. մեծարգո պ. Նանսեն, խնդրում ենք, ասել, թե ինչպես օգնել թուշուններին, երբ արդի պայմաններում մթնոլորտն անընդհատ ապականվում է... Իսկ այժմ այլևս չկա նա՝ անսահման սիրելի մարդ-գիտնականն ու մարդգարծիչը բոլոր երկրների ու ժողովուրդների համար: Ժամանակակիցներից մեկը դիպուկ կերպով ասել է, որ «եթե նանսենին ծնեց Նորվեգիան, ապա նրան կորցրեց ամբողջ աշխարհը»: Իհարկե, կորցրեց միայն ֆիզիկապես, քանզի նրա գործն անմահ է. չէ որ մեծերը գոյություն մի տարեթիվ ունեն՝ ճնեղյալ:

Այդուհանդերձ, կորուստը վիթխարի էր, և մարդկությունը, իրոք, ապրեց համաշխարհային վիշտ ու երկրապնդի բոլոր մասերից անվերջ տեղացին խոր ցավակցություններ: Համկ(բ)Վ կենտկոմի օրգան «Պրավդան» անմիջապես հաղորդում արեց նանսենի մահվան առթիվ՝ միաժամանակ տալով նրա գործունեության բնութագրումը և ընդգծելով նրա ծառայությունները սովետական երկրի հանդեպ, մասնավորապես Պովոլժիեի սովյալներին օգնելու գործում: ՄՍՀՄ արտգործոցնախարար Վանդարեց Օսլոյում սովետական դեսպան Ա. Կոլոնտային՝ «սովետական կառավարության անունից Ֆրիտյոֆ Նանսենի մահվան առթիվ ցավակցություն հայտնել նորվեգական կառավարությանն ու հանգուցյալի ընտանիքին»²: Այդպես էլ վարվեց լենինյան դիվանագետը, որն անձամբ բարեկամական կապերի մեջ էր Ֆ. Նանսենի հետ: Նա 1930 թվականի մայիսի 14-ին Նորվեգիայի սրբմիեր մինիստր Յու. Մուլինքևին գրած հատուկ նամակում խոր կակիծով ցավակցություն հայտնեց մեծ կորուստի առթիվ, նշելով, որ Ֆրիտյոֆ Նանսենը «մարմնավորում էր այն լավագույնն ու վեհը», ինչ ունի նորվեգական ժողովուրդը: Ավելին, այդ «փառապանծ նորվեգացին համաշխարհային քաղաքացի էր», և նրա «մահը անբուժելի վիշտ է պատ-

¹ Կարլ Օսեցկի (1887—1938) — գերմանացի հայտնի գեոսոցիո-ժոգրաֆստ, որը 1936 թվականին արժանացավ խաղաղության նոբելյան մրցանակի և դարձավ ֆաշիստական հայտնաբերների զոհը: Հայերիս Մանը ևրան անվանել է «եվրոպական խղճի կենդանի մարմնացում»:

² Лив Хансен-Хейер, Книга об отце, стр. 327.

³ Правда, 14. 5. 30.

ճառում համընդհանուր մարզկուսիցիաներ: Վշտահար դեպքանք բացատրիկ ուժով է շեշտում նրա ծառայությունները սովետական երկրի քաղաքացիներին, այն, որ «նրա մարդասիրական գործն ապրում է Միության ժողովուրդների հիշողության մեջ», և «իր միլիոնավոր հայրենակիցները» իրենց սրտերում վառ են պահում «մեծ քաղաքացու ժողովրդական ու սիրելի անունը», «անհունորեն սպում նրա մահը»: Միաժամանակ նանսենի թաղմանը հատուկ պատկերով հրավեց սովետական կառավարության անունից:

Շատերի հետ միասին կորուստը սպաց նաև հայ ժողովուրդը: «Խորհրդային Հայաստանում» 1930 թ. մայիսի 16-ին տպագրվեց առանձին մահախոսական Ֆ. Նանսենի նկարով: Հուլիս հոգված գրեց պրոֆ. Հ. Բեդելցանը՝ նկարագրելով մեծ նորվեգացու խիզախությունները: Նա արդարացիորեն նշել է. «Ֆրիայոֆ Նանսենը պատկանում է այն մարդկանց թվին, որոնք գիտություն մեջ դարաշրջան են կազմում»: Բացառիկ տեղ է գրավում նաև նրա մարդասիրական գործունեությունը, որն իր ուղեծրի մեջ առավ նաև հայերին. «Հանձին նանսենի, Խորհրդային Հայաստանն ուներ իր մեծ բարեկամը: Նա իր նամակներում, որն ուղղում էր մասնավոր անձանց Երևանում, միշտ մեծ բավականությամբ հիշատակում էր Երևանում մի քանի շաբաթ ապրելը և հեռու հյուսիսից, խավար ձմեռային ամիսներին գրում էր. «Շատ եմ ցանկանում նորից գալ Երևան, տեսնել ձեր կանաչը, ձեր արևը»¹: Ավաղ, չկատարվեց նրա այդ իղձը...» Ինչպես արդեն նշել ենք, «Նոր ուղի» հանդեսում նույնպես լույս տեսավ մահախոսական: Այնտեղ զետեղված էր նաև Ֆրիտյոֆ Նանսենի գծագիր դիմանկարը, որը մեծ վարպետությամբ կատարել էր Միքայել Արուտչյանը²:

Ֆ. Նանսենի մահվան առթիվ 204-ի գլխավոր վարչությունը (Երևանում) «հեռագրով իր անկեղծ ցավակցությունն հայտնած է նանսենի ընտանիքին՝ իր անդամանելի կորուստին համար, զոր կողբա նաև հայ աշխատավորությունը»³: Նույնպիսի հեռագրեր տվին նաև 204-ի արտասահմանյան (Փարիզի և այլն) բաժանմունքները:

Հայկական մամուլը արտասահմանում խոր ցավակցություն հայտնեց Ֆ. Նանսենի մահվան առթիվ: Այդպես, Փարիզում հրատարակվող «Երևան» լրագրում տպագրվեց հատուկ մահախոսական, որի հեղինակը (Տ. Զավեն) անձամբ գիտեր նանսենին (պատահել էր Սոֆիայում ու ժնեում) և հուշապատումով պատկերում է նրա հոյակապ կերպարը. «Գնաց նանսենը... Բայց այդ շիտակ, անխարդախ, վեհանձն նկարագրի տեր մարդու անունը թանկագին է խորհրդային և մասնավորապես հայ աշխատավորության համար, որովհետև անամուր կեցավ անոնց կողքին, անշահախնդիր ու անալյալ անձնվիրությամբ մը, մինչև վերջին շունչը»⁴:

«Ապագա» լրագիրը, որը ցավակցության հետ միասին հաղորդեց կենսագրական տվյալներ, մասնավորապես նշեց. «Հանդուցյալը ոչ միայն գիտության մարդ էր, այլ մանավանդ սերտով մարդ և իրրև այդ ալ մասնավոր համակրանքի արժանի էր հայ ժողովրդի կողմ, որու դատին նվիրվեց, կերպով մը, մինչև իր կյանքի վերջին օրերը...»

Տոթթ. Նանսեն սրտով նվիրվեցավ մանավանդ հայ գաղթականները Հայաստանի մեջ տեղավորելու համար Սարդարապատի ոռոգումի ծրագրին իրագործման: Այդ նպատակով իրեն լանձնված ուսումնասիրական պաշտոնը կատարեց մեծ ձեռնհասությամբ և խղճմտությամբ, բայց Ազգերու ընկերության մեջ տիրող քաղաքական հակահոսանքները արդելը նդան նանսենի ջանքերուն արդյունավորման, որուն համար նանսենն ունեցավ դանտություն և մեղադրանքի խտրանող խոսքեր:

Տոթթ. Նանսենի հրատարակած գիրքը, իրրև արդյունք իր կատարած ճամփորդության, թանկագին գործ մըն է Խորհրդային Հայաստանի մեջ կատարվող շինարարական աշխատանքներու մասին: Նանսենը վստահություն ուներ հայ ժողովրդին ապագային վրա և իր համակրանքն ալ արդեն կուզար այդ վստահությունն»⁵:

Հայկական բարեկործական ընդհանուր միության օրգանը հատուկ մահազգ տպագրեց «հուշակավոր բեռնախուշյի և մեծանուն հայասերի» մասին: Այնտեղ մասնավորապես ասված է. «Հայ ազգը անմոռաց էրախտագիտությամբ պիտի պահե այս

¹ ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 134, по. I, ед. хр. 353, л. 1.

² «Խորհրդային Հայաստան», 18. 5. 30:

³ ՏԷՍ «Նոր ուղի», 1930 թ., № 4—5:

⁴ «Երևան», 25. 5. 30:

¹ «Երևան», 25. 5. 30:

² «Ապագա», 17. 5. 30:

բարձրագի մարդասերին հիշատակը: Տոբթ. Նանսենի բողոքարկու կոչերը Ազգերու ընկերության ատենադրության մեջ պիտի մնան որպես արատ մը բաղաբաղկաբյուրյան և արդարության անուճով գործող պետությանց վրա: Անիկա հոյակապ ընդվզում մը ունեցավ ժնկի մեջ, վերջին առգամ, երբ Հայաստանի ծրագիրը, զոր այնքան խանդաղատանքով փայտալած էր, ջուրը ձգեցին աշխարհիս մեծերը, էր անուճը սերտորեն կապված պիտի մնա մեր ազգին ժամանակակից փոթորկալից պատմության հետ¹: Միաժամանակ միության կենտրոնական վարչությունը, որի հետ սերտ առնչության մեջ էր եղել Յ. Նանսենը, ցավակցական հեռագիր հղեց Օսլո՝ այլի տիկին Նանսենին. «Ձեր մեծանուն ամուսնուն և հայոց մեծ բարեկամին մահվան լուրեն խորապես վշտակրած Հայկ. բարեգ. ընդհ. միության կեզր. ժողովը, իր հազարավոր անդամներուն միահամուռ զգացումներուն թարգմանը հանգիստանալով, հարգանքով կրթածանի Ձեր անհուն սուգը: Հայ ազգը և մեր Միությունը երախտագիտական խոր զգացումով մը պիտի պահեն, որպես հոգիի մեծության խորհրդանշան, հիշատակը տոբթոր Նանսենի, որուն մարդասիրական հրաշալի ձեռքերը անմահացուցած են խաղաղության առաքյալի իր պատկանելի անունը»²:

1930 թվականին, երբ Նանսենի մահից հետո (ոնգնում գաղմակեղավեց նրա հիշատակին նվիրված հատուկ երեկո, ելույթ ունեցավ նաև Անգլիայում փոքրաթիվ հայ դադուքի նեոկայացուցիչը, որը մասնավորապես ասաց. «Այդ մարդն անվախ կերպով, առանց իր մասին մտածելու, իր վրա վերցրեց մի գործ, որպիսին չէր կատարի մեծ տերությունների ոչ մի ներկայացուցիչ: Միայն նրանք, ովքեր նրա հետ մոտեցից են հանդիպել, կարող են լիովին դատել այդ խնդրի ամբողջ բարդության մասին, այն մասին, թե ինչպիսի վիթխարի դժվարություններով է նա պայքարել, ինչպիսի անսահման համբերություն ու տակտ է ցուցաբերել ամենարարդ սիտուացիաներում: Միայն նրանք, ովքեր իրենք են կապված եղել այդ գործի հետ, կարող են հասկանալ, թե ամբողջ հայ ժողովուրդն ինչ մեծ պարտքի տակ է նրա առաջ: Նա այնքան խորն է ցնցվել հայ ժողովուրդի ոգրերգությունից ու անարդարությունից, որպիսիք նա ապրեց, որ, հիանալի իմանալով, թե ինչպիսի արգելքներ ու անախորժու-

թյուններ պետք է հաղթահարել, այնուամենայնիվ, ամբողջ հոգով նվիրվեց հայ ժողովուրդի գործին և Ազգերի լիգայի ու մեծ տերությունների առաջ պարզ ու աներկմիտ ձևով շարադրեց ճշմարիտ փաստերը:

Մենք՝ հայերս, միշտ կսիրենք ու կմեծարենք նրան և խոր շնորհակալությամբ կխոնարհվենք նրա անվան առաջ...»³:



Նանսենի հայանպաստ գործունեության նկատմամբ մեծագույն սիրով ու ջերմությամբ են արտահայտվել սփյուռքահայ զանգվածները, բոլոր ողջամիտ հայերը: Ինչպես և պետք էր սպասել, բացառություն կազմեցին դաշնակցականները, որոնք այս հարցում էլ զրսևորեցին իրենց թշնամանքն ու ավանտյուրիզմը:

Դաշնակցությունը հենց սկզբից թշնամաբար տրամադրվեց հայ գաղթականներին օգնելու Նանսենյան ամեն մի նախաձեռնության: Նա նույնիսկ դեմ էր «Նանսենյան անձնագրերի» տարածմանը հայ փախստականների մեջ, գտնելով, որ նրանք, համաձայն Սևրի պայմանագրի, հանգիստնում են «անկախ ու միացյալ Հայաստանի» քաղաքացիներ և պետք է ստանան իրենց «պապենական հողերը»: Բայց չէ որ թուրքերը զավթել են այդ հողերը, Սևրին հաջորդել էր Լոզանը, և հայ գաղթականները ցրված էին աշխարհի տարբեր երկրներում ու առանց «ինքնության թղթերի» սովամահ էին լինում: Չէ որ հարկավոր էր նրանց շտապ օգնություն ցույց տալ, գոնե մի փոքր թեթևացնել նրանց անտանելի վիճակը: Սակայն ազգադավ դաշնակցությանը դա չի մտահոգում: Պատահական չէ, որ դեռ 1923 թվականին դաշնակցական օրգաններն ու ջոջերը (այդ թվում Ա. Խատիսյանը) կատաղի վայնասուն բարձրացրին այդ որոշման դեմ, որով Յ. Նանսենին առաջարկվեց «ուսումնասիրել թուրքահայ գաղթականներու ինքնության վկայագիր տալու խնդիրը. Խատիսյանը ևս, նույն կուսակցության խոնարհ ծառան... փութացեր է նույն առիթով բողոք-սպառնագիր մը ներկայացնել Ազգ. պատվիրակության»⁴: Իսկապես որ ազգուրացնե...

¹ «Միություն», 1930 թ., № 140, էջ 306:

² Նույն տեղը, էջ 307:

³ Лив Нансен-Хейер, Книга об оте, стр. 413.

⁴ «Ապագա», 8. 12. 23:

Գաշնակցութիւնն առավել ևս հոխորտաց հայ գաղթականներին Սովետական Հայաստան տեղափոխելու նանսենյան ծրագրի դեմ: Ընդդէմ էր գրում Փարիզում հրատարակվող «Երեւան» թերթը. «Տակավին երկու ամիս առաջ դաշնակցութեան տեղական օրգանը հեղինակելով կիտսեր այդ ծրագրի մասին և, իբրև հեղափոխական լուծում գաղթականական հարցին, կատաշարկեր... թուրքական հողերը վարձու առնել և անոնց վրա ղետեղել գաղթականները»: Իրոք, դաշնակցական «Հառաջը» 1925 թվականի սեպտեմբերի 2-ին, ակնարկելով նանսենյան պլանը, գրել է. «Ոչ-ոք լրջորեն փարած է այդ ծրագրին... Երբ այնքան ջրարբի տարածութիւններ կան սահմանին վրա, ավերակ ու ամալի, բավական հանճարեղ դիվանագիտութիւն է, բարբարոտ հողերը անմիջապէս բնակելի դարձնելու և թափառական բազմութիւններուն տեղ ճարելու այս ծրագիրը, որ առնվազն շոքս միլիոն դուրս կպահանջի: Եթէ կարելի ըլլա ճարել այդ գումարը, ավելի դուրին է հափշտակված նահանգ մը վարձել...»: Դա դաշնակցութեան հերթական ավանտյուրիստական խաբկանքն էր, բանի որ Թուրքիան «հափշտակած նահանգ» չէր տա, նույնիսկ հողի վարձակալութեան սկզբունքով: Բայց դաշնակները շարունակում էին խաղալ արևմտահայերի ազգային ղզացմունքների հետ և նրանց՝ Սովետական Հայաստան մեկնելը խափանելու համար առաջ էին բաշտում հայկական հարցի լուծման «մեծազորը» պահանջ, որպէսզի իրենց ձեռքնեն մի կողմից՝ «հայրենասերներ», հայկական հողերի միավորման ջատագովներ, իսկ մյուս կողմից՝ հայ գաղթականների պաշտպաններ: Այդպէս, նրանք գրում էին, որ արտասահմանի հարյուր հազարավոր հայ գաղթականներու «զանգվածային ներգաղթը սերտորեն կապված է Թուրքիո հայկական նահանգներուն ազատագրութեամբ հայկական հարցին վերջնական լուծման հետ»¹: Իհարկէ, շատ լավ կլինէր, որ ուղղվէր պատմական անարդարութիւնը, բայց դրանից չի հետևում, որ բանի դեռ չեն ազատագրվել արևմտահայ հողերը, այնքան ժամանակ չի կարող լինել սփյուռքահայերի ներգաղթ: Կյանքը հերքեց այդ «մարգարեութիւնը», որը դաշնակները օգտագործում էին կատկապէս կապուցեալով ճկատառումով: Իրոք, դաշնակցութեան թշնամական վերաբերմունքը դեպի նանսենյան ծրագիրը բացատրվում է

ու միայն նրա անտարբերութեամբ դեպի հայ գաղթականները, այլ և նրա թունոտ հակասովետիզմով: Պատահական չէ, որ այդ կուսակցութիւնը միշտ էլ դեմ է եղել գաղթականների վերադարձին Սովետական Հայաստան և ամեն առիթով ճգնել է վարկաբեկել նրան: Այդպէս, կեղծելով փաստերը, նրա օրգանն անամոթաբար գրել է. «Խորհրդային իշխանութիւնը չունի այն վերաբերմունքը դեպի հայ գաղթականութիւնը, ինչ-որ պետք է երևան բերեր, եթէ տարրական սրտացալութիւն ունենար հայ ժողովրդի և նրա հրատապ կարիքների հանդեպ»¹: Այդ դաշնակցականներն են, որ տարրական ողջամտութիւն չունեն ասելու ճշմարտութիւնը, այն, որ Սովետական Հայաստանն իր գոյութեան հենց սկզբից հայրենադարձութիւնը բարձրացրեց պետական քաղաքականութեան աստիճանի և կատարում է ամեն ինչ՝ բարեխաղալու հայ գաղթականների վիճակը:

Գաշնակցութիւնն էլ է անզրադարձել Յ. Նանսենի՝ Հայաստանին նվիրված գրքին, բայց միայն սովետական իրավակարգը վարկաբեկելու մտայնութեամբ: Այդպէս, ոչ անհայտ Արտաշես Արեղյանը դեռ 1928 թվականին հատուկ հողված գրեց նանսենի աշխատութեան գերմաներեն հրատարակութեան առթիվ («Նանսենի գիրքը Հայաստանի մասին» վերնագրով), որը հեռու է լուրջ գրախոսական լինելուց: Չկարողանալով ժխտել իրողութիւնը, դաշնակցական գրչակը պատեկապէս է ընկնում և ապա հակասովետիզմի թույնով նշում, թէ նանսենի գրքում շարագրված են նրա տպավորութիւնները Հայաստանի մասին. «Ու նրանք մեծ մասով ճիշտ են, առարկայական: Հակառակ որ հեղինակը շարունակ շրջապատված է եղել բոլշևիկ վարիչներով ու առաջնորդներով, այնուամենայնիվ, գիտցել է զանազանել ժողովուրդը կառավարութիւնից, երկիրը՝ սեփմից»²: Իդուր է դաշնակցական խոսափողը փորձում խեղաթուրել պատմութիւնը և իրար հակադրել Սովետական Հայաստանի ղեկավարներին ու ժողովրդին: Այդպիսին չկա ո՛ր կշանքում և ո՛ր էլ նանսենի գրքում: Ընդհակառակը, գրքի անաչառ ընթերցողը կարող է միայն արձանագրել, որ Յ. Նանսենը առանձին ջերմութեամբ է խոսում սովետական ղեկավարների և ժողովրդի հետ ունեցած նրանց միասնութեան մասին (այդ առթիվ մենք արդեն նախորդ

¹ «Հայրենիք», 4. 4. 29, 3. 4. 29:

¹ «Գրողակ», 1926 թ., № 1, էջ 34:

² «Հայրենիք», 21. 8. 28:

գլուխներում բերել ենք բազմաթիվ օրինակներ): Հասկանալի է, որ Ա. Աբեղյանը փաստերը շրջում է գլխիվայր և իր ցանկությունն իրականություն տեղ դնում:

Ազգերի լիզայում նանսենյան ծրագրի քննարկման ամբողջ մասնակալը շրջանում դաշնակցությունն առիթը բաց չէր թողնում, որպեսզի վարկարեկի թե՛ այդ մարդասիրական գործը, որն արհամարհաբար անվանում էր «մուրացկանի տոպրակ», և թե՛ սովետական իրավակարգը, վերջինիս վրա բարդելով նախատեսված պլանի շիրականացման մեղքը: Այդպես, «Հառաջը» գրում էր, թե մի՞թե Մոսկվայի համար «գոծվար է ճարել Հայաստանի ճահիճներու համար նախատեսված 8—10 միլիոն ռուբլին, մանավանդ որ իր իսկ հովանավորած հողամասներն մեկը պիտի զարգանա տնտեսապես: Ունի՞ն ավելի պրոլետար բազմություն, քան հայ գաղթականները, անտուն, անտեր ու ցիրուցան»: Գրան հետևում է երկրորդ մեղադրանքը. «Կամ ավելի կարճ և արդար միջոց մը,— ինչո՞ւ մատը մատին չի գարներ գոնե Կարսի նահանգը Հայաստանին վերադարձնելու համար, եղբայրաբար, առանց կաթիլ մը արյուն թափելու»¹:

Ինչպես տեսնում ենք, դաշնակցությունը շարունակում է «հեղափոխականություն» խաղալ և «ազգասեր» ձևանալ: Հասկանալի է, որ նա նախ՝ «մոռանում է» սովետական իշխանության փրկարար դերը հայ ժողովրդի կյանքում, հայ փախստականների ներգաղթի կազմակերպման գործում, երկրորդ՝ «մոռանում է», որ հայ գաղթականների ծանր վիճակի համար պատասխանատու են իմպերիալիստները և նրանց կամակատար դաշնակցությունը, ուստի, նրանք էլ պարտավոր են իրենց մեղքը բավել (գոնե մասամբ), մանավանդ որ անընդհատ աղմկում են աշխարհով մեկ: Չնայած դրան, սովետական իշխանությունը հետևողականորեն շարունակում է իր մարդասիրական գործը, կազմակերպում մշտական հայրենադարձություն: Ինչ մնում է Կարսի մարզը և արևմտահայ հողերը կորցնելուն, ապա դրա հանցավորներն են նաև դաշնակները, որոնք ժամանակին չընդունեցին սովետական կառավարության միջնորդությունն ու աջակցությունը և գործարքի մեջ մտան թուրքական բռնադատիչների և արևմտյան իմպերիալիստների հետ: Այնպես որ դաշնակցությունն իզուր է մեղքը հիվանդ գլխից փոխադրում առողջի վրա:

¹ «Հառաջ», 18. 6. 27:

Դաշնակցության համար բոլոր հարցերի լուծման շափանիշը հակասովետիզմն է: Պատահական չէ, որ այդ նպատակի համար օգտագործվեց նույնիսկ նանսենի մահը: Տխրահաշակ Ալ. Խատիսյանը հանդես եկավ փարիսեցիական հողվածով և անամոթաբար գրեց. «Նա [Նանսենը]՝ ձեռնարկեց փոխառություն, որ հաջողություն չունեցավ միայն նրա համար, որ խորհրդային կառավարությունը չի ներշնչում վստահություն ոչ մի տեղ»¹: Ո՛չ, այդ իմպերիալիստական տերություններն էին, որ չէին ուզում նույնիսկ տնտեսական, առևտրական կապերի մեջ մտնել սովետական երկրի հետ, առավել ևս նրան փոխառություն տալ, իսկ նրանց ծառայակամ դաշնակցականները միայն զովերզում են իրենց տերերին:

Այդպես, դաշնակներն ըստ էության վարկաբեկում են Ֆ. Նանսենի ոչ միայն գործը, այլև անձը: Իրավ, ամենասարսափելի կույրը նա է, ով չի ուզում տեսնել...



Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Սովետական Հայաստանում ավելի մեծացավ հետաքրքրությունը դեպի Նանսենն ու նրա գործը: Բացի «Փրամը» Բեռալին ծովում» գրքի հրատարակությունից, որի մասին արդեն գրել ենք, մասսայական տպարանակով լույս տեսան Լ. Բատի և Ա. Դեյլի «Ֆրիտյոֆ Նանսեն» (1947 թ.), Ա. Տալանովի «Նանսեն» (1962 թ.) աշխատությունները, որոնք թարգմանվել էին ռուսերենից: Գրանցով հայ ընթերցողը հնարավորություն ստացավ հանգամանորեն ծանոթանալու մեծ նորվեգացու կյանքին ու գործունեությանը:

Միաժամանակ կատարվում են առաջին լուրջ քալերը հետազոտելու Ֆ. Նանսենի հայանպաստ գործունեությունը՝ կապված հայ գաղթականներին օգնելու և ընդհանրապես հայրենադարձության կազմակերպման հարցի հետ: Հրատարակվում են մի շարք արժեքավոր հողվածներ և արխիվային փաստաթղթեր, որոնք լուսաբանում են Նանսենի մարդասիրական գործունեության առանձին կողմերը²:

¹ «Հառաջ», 17. 5. 30:

² ՏՃՄ Է. Ու. Մեյխեսթյան, Հայ գաղթականության հարցը Ազգերի լիզայում (Հայկ. ՍՄԷ ԳԱ հասարակագիտական բաժանմունքի «Տեղեկագիր»,

1961 թվականի հոկտեմբերին ամբողջ աշխարհում լայնորեն նշվեց Ֆ. Նանսենի ծննդյան 100-ամյակը: Նորվեգիայում սովետական դեսպան Մ. Գրիբանովը մասնակցեց Յուլյում կազմակերպված հոբելյանական նիստին և ապա պսակ դրեց հանգուցյալի գերեզմանին՝ «Ֆրիտյոֆ Նանսենին՝ խաղաղության և ժողովուրդների բարեկամության մարտիկին» գրությունը¹:

Սովետական Միությունում ըստ արժանավուն նշվեցին նանսենյան օրերը: Մամուլում լույս տեսան հոբելյանական բաղձաթիվ հոդվածներ, որոնք բարձր են գնահատում 20-րդ դարի իմաստուն ու մարդասեր վիկինգի վիթխարի ծառայությունները: Միաժամանակ տեղի ունեցան հոբելյանական հանդիսավոր ժողովներ ու երեկույթներ: Հատկապես պետք է նշել Մոսկվայի հասարակայնության բաղձամարդ հանդիսությունը, որին մասնակցեց նորվեգիայի արտաքին գործերի մինիստր Ն. Լանդեն: Նրան հանձնվեց սովետական ժողովրդի նվերը՝ Նանսենի գրանիտե կիսանդրին:

Հայ ժողովուրդը նորից իր խոր հարգանքն ու սերն արտահայտեց Ֆ. Նանսենի նկատմամբ: Հանրապետական թերթերում լույս տեսան հոբելյանական հոդվածներ, որոնց մեջ լուսաբանվում են Նանսենի փոթորկալից կյանքը ու բաղձարեղուն գործունեությունը: Ի դեպ նկատենք, որ այդ իրողությունը դառնում է քնականոն երևույթ մեր մշակույթի համար, այսինքն՝ հայ մամուլը, անկախ հոբելյանական տարեթվերից, սիստեմատիկաբար անդրադառնում է Նանսենի գործունեությանը: Այդպես են վարվում նաև արտասահմանում, Կահիրեում հրատարակվող «Արև» լրագրում 1966 թվականի հոկտեմբերի 6-ին լույս տեսավ «Նանսենը և հայերը» հոդվածը, որի հեղինակը՝ Արշակ Մադույանը, շարադրում է մեծ հումանիստի հայօգուտ գործունեության հիմնական գրվազները: Նա նշում է, որ հայ ժողովրդի համար օտարերկրյա գործիչների մեջ «առանձնապես սիրելի ու թանկ է նորվեգացի մեծ գիտնական Ֆրիտյոֆ Նանսենի անունը»:

1961 թ., № 1), Գ. Ա. Նիմազան, Ֆրիտյոֆ Նանսենը Հայաստանում («Պատմարանասիրական հանդես», 1963 թ., № 1), Գ. Ա. Խվանյան, Նանսենը և հայ զաղթականությունը («Բանբեր Հայաստանի արխիվներին», 1963 թ., № 2), Նանսենի հանձնաժողովն ու հայ զաղթականությունը («Պատմարանասիրական հանդես», 1970 թ., № 1), Эмма Малхасян, Фритъоф Нансен — друг Арменин («Բանբեր Հայաստանի արխիվներին», 1970 թ., № 2) և այլն:

¹ Տճ՝ Правда, 12.10.61.

որն անձնվիրաբար ծառայեց հայոց դատին... Նանսենի «Ծառաված ժողովուրդ» հատորը, կինյի երկհատոր «Հայաստանի», վերջինի հուշակավոր վեպի հետ, հայերին ու Հայաստանին նվիրված բաղձահատոր գրականության մեջ ամենաարժեքավոր գրքերից է: Դրանով Նանսենը շահեց չերմագին սերը հայ ժողովրդի, որին այնքան բարձր էր գնահատում ինքը՝ մեծ գիտնականն ու Մարդը¹:

Մեծ նորվեգացին այնքան ժողովրդական է դարձել հայոց մեջ, որ շատերն իրենց նորածին որդիներին կոչում են «Նանսեն»: Իրավամբ այն մեզ մոտ դարձել է ամենատարածված անուններից մեկը: Թող այդ ձևով ևս միշտ կանաչ լինի անզուգական հումանիստի հմայքի ծառը, թող հայ «Նանսենները» արժանի լինեն իրենց «կներահայրին»...

Նանսենը դարձել է ոգեշնչման աղբյուր հայ արվեստագետների համար: Նկարիչներն ու քանդակագործները կերտում են նրա կերպարը, երաժիշտները՝ հյուսում իրենց ձևերը, կինեմատոգրաֆիստները՝ ստեղծում հուզիչ կադրեր:

Նանսենի գործը գրվատվել է հայ գրողների կողմից: Նրանցից ոմանք մեծացել են որբանոցներում և դեռ վաղ ժամանակից զգացել մեծ մարդասերի չերմագին վերաբերմունքը: Գրանցից էր տաղանդավոր բանաստեղծ Խաչիկ Դաշտենցը, որը Ֆրիտյոֆ Նանսենին հանդիպել է Լենինականի որբանոցում և Շիրակի ջրանցքի բացմանը: Հետագայում գրած իր «Յայտոն Ալեքը» պոեմում նա Նանսենին համարում է «մեծագործ այր», «հույսակապ, շքեղ մեծ նորվեգացի»: Ապա գալիս են հետևյալ սրբատառուչ տողերը.

Ինձ էլ վիճակվեց թեզ տեսնել մի օր
Որբական կյանքիս դառնահուշ շեմքին,
Գու վերջին անգամ եկար մեզ այցի,
Ու մեռար՝ երկրիս արևը դեմքիդ:

Նանսենի ողջ կյանքը ողջված էր մարդկային արևով, որը չերմացնում էր բոլորին և հատկապես թշվառներին: Իր անօրինակ սխրանքներով ու հումանիստական գործերով նա դարձավ մարդկանց երիտասարդության հերոսը և հասունության իդեալը: Կանցնեն դարեր ու հազարամյակներ, բայց մեր մոլո-

¹ «Արև», 6.10.66:

րակի վրա երբեք չի խամրի մեծ նորվեգացու անմահ կերպարը: Նրա բարի հիշատակը մշտապես կապրի երախտապարտ հայ ժողովրդի սրտում ու հոգում...

□□□

Նանսենի մարդասիրական գործունեությունը նպաստեց սովետա-նորվեգական բարիգրացիական հարաբերությունների հաստատմանն ու ամրապնդմանը, հարաբերություններ, որոնք զնալով զարգացան ու դարձան ավելի արգասավոր: Նորվեգիան առաջիններից մեկն էր, որ դիվանագիտական ու գործարար հարաբերություններ հաստատեց սովետական պետության հետ, իսկ երկրորդ աշխարհամարտի ժամանակ սովետական բանակի աջակցությամբ էր, որ ազատագրվեց ֆաշիստական օկուպացումից: Նանսենի հայրենիքում զոհված սովետական մարտիկների հուշարձանների վրա գրված է. «Նորվեգիան շնորհակալ է ձեզ»: Պատերազմի ժամանակաշրջանի սովետա-նորվեգական զինակցությունը խաղաղ տարիներին վերաճեց բարեկամական հարևանության, երկու երկրների տնտեսական ու կուլտուրական կապերի ծավալման:

Հետպատերազմյան տարիներին հաճախակի դարձան սովետական ու նորվեգական զանազան պատվիրակությունների փոխադարձ այցելությունները: Դրանցից մեկը՝ նորվեգա-սովետական բարեկամության ընկերության պատվիրակությունը, 1947 թվականի մայիսին եղավ Սովետական Հայաստանում և արժանացավ ջերմ ընդունելության ու հյուրընկալության: Նա այցելեց հանրապետության տեսարժան վայրերը, տնտեսական ու կուլտուրական օբյեկտները, ծանոթացավ հայ ժողովրդի բարգավաճ կյանքին և ստացավ վառ տպավորություններ: Ահա այդ մասին ինչ է ասել պատվիրակության ղեկավար Հարալդ Հալսը (Օսլո քաղաքի ղլխավոր ճարտարապետը).

«Այն բոլորը, ինչ որ մենք տեսանք, ամեն անգամ մեզ առավել հետաքրքիր էր թվում, բայց ամեն անգամ պարզվում էր, որ մեզ սպասում են ավելի ևս հարուստ տպավորություններ:

Հայ ժողովրդի պատմության, նրա բազմադարյան կուլտուրայի մասին ես դիտեմ վաղուց, դեռևս այն ժամանակվանից, երբ սովորում էի դպրոցում... Սովետական Հայաստանում, նրա մայրաքաղաքում մեր գտնվելու ժամանակ մենք հանդիպում

ունեցանք և զրուցեցինք գիտության, լուսավորության, արվեստի շատ գործիչների հետ. համոզվեցինք, որ հայ ժողովուրդն ապրում է կուլտուրական, բերկրալի կյանքով:

Մեր ամբողջ պատվիրակության անունից կարող եմ ասել, որ Սովետական Հայաստանը սքանչելի հանրապետություն է, և ես միանգամայն հասկանում եմ արտասահմանյան հայերի ջերմ ցանկությունն ու ձգտումը՝ վերադառնալ իրենց հայրենիքը, Սովետական Հայաստան, որտեղ նրանց սպասում է ապահովված կյանք և խաղաղ աշխատանք»¹:

Նորվեգական պատվիրակության անդամները, վերադառնալով հայրենիք, հրատարակեցին «Լենինգրադից Հայաստան» գիրքը, որտեղ իրենց տպավորություններն ու խոհերն են պատմում Ռուսաստանի, Ուկրաինայի, Վրաստանի ու Հայաստանի մասին: Նրանցից հայտնի դերասան Հ. Նիլսենը գրել է. «Այն, ինչ մենք տեսանք Հայաստանում, վկայում է, որ այդ երբեմնի հին, պրիմիտիվ ագրարային երկիրը դարձել է ժամանակակից ինդուստրիալ պետություն»²: Նա իր հիացմունքն է արտահայտում հայ մշակույթի վերելքի առթիվ և մասնավորապես հիշատակում արվեստի բարձրարժեք գործեր: Պատվիրակության անդամները զոհունակությամբ տեսան բազմաթիվ հայրենադարձների նոր կյանքը, հայրենադարձներ, որոնց համար այնքան մարտնչում էր նրանց մեծ հայրենակիցը: Նանսենի անվան հիշատակումը բարի ժպիտ է առաջացնում բոլորի մոտ և «հայերն ասում են, որ երբեք չեն մոռանա նրան»³: Իրոք և միայն այդպես...

Ինչպե՞ս կուրախանար Նանսենը Սովետական Հայաստանի նոր ու վիթխարի նվաճումներով և սփյուռքահայության բազմաթիվ բարավանների հանգրվանումով մայր հայրենիքում...

Նորվեգիան իր հերթին տեսավ սովետական պատվիրակություններ, որոնք պատմում են մեր լայնածավալ հայրենիքի նվաճումների և խաղաղության ու ժողովուրդների բարեկամության ամրապնդման մասին: 1962 թվականի դարձանք «Նորվեգիա—ՍՍՀՄ» ընկերության հրավերով Նանսենի հայրենիք մեկնեց Լևոն Արամայիսի Նրզնկյանը: Ականավոր հեղափոխականի

1 «Սովետական Հայաստան», 15. 5. 47.

2 Fra Leningrad til Armenia, Oslo, 1940, s. 39.

3 Նույն տեղը, էջ 38.

որդին վաղուց էր երազում մեկնել Նորվեգիա՝ սեփական աշքերով տեղանելու հուշակալոր «Ֆրամի» լեզնեղար նավակառի երկիրը: Այդ փափագն ավելի մեծացավ, երբ 1925 թվականին Նանսենը եկավ Հայաստան և այցելեց Երզնկյանների օջախը: Եվ ահա դրանից 37 տարի հետո Սովետական Հայաստանի պետական գործիչ (մինիստր) է. Երզնկյանը հուղմունքով և գոհունակությամբ ոտք է դնում նորվեգական հողին: Նա ջերմ ընդունելության պայմաններում Օսլոյում և այլ քաղաքներում ղեկուցումներ է կարդում սովետական շինարարական արվեստի, ճարտարապետության և հայ ժողովրդի նվաճումների մասին: Բնորոշ է, որ նա Նորվեգիայում ականատես է լինում «Նանսենյան» հետաքրքրության դեպի Հայաստանն ու սիլուսոքահայության հայրենադարձությունը: Է. Երզնկյանի հաղորդումները և «Պոեմ Հայաստանի մասին» վավերագրական կինոնկարի ցուցադրումը նորվեգացիներին պատկերում է հայ ժողովրդի թոնջը թշվառությունից դեպի ազատություն ու երջանիկ բարեկեցություն: Պատահական չէ, որ նրանք իրենց հյուրի ղեկուցումները խորագրեցին «Արևավառ Հայաստանի մասին», իսկ Հայաստանին վերաբերող «Ֆիլմի դոկումենտալ կադրերը ընդունում էին դարմանալի խանդավառությամբ, հիանում Հայաստանի շքնաղ բնանկարներով, հրճում նորակառույցներով, ուշադիր հետևում աշխատանքային պրոցեսների վերաբաղեցրմանը և օվայցիաներ սարքում արվեստին նվիրված դրվագներին ծանոթանալիս», — պատմում է Է. Երզնկյանը:

Է. Երզնկյանի համար հաճելի անակնկալ էր, երբ նա Օսլոյում Ֆ. Նանսենի ծննդյան 100-ամյակին նվիրված ցուցահանդեսում տեսավ մեծ հումանիստի ու իր հոր միատեղ նկարը, որի առթիվ էքսկուրսավարն ասաց. «Մա Նանսենն է իր մի հայ բարեկամի՝ Արամայիս Երզնկյանի հետ»: Նորվեգացիների հետաքրքրությունը է. Երզնկյանի վերաբերյալ ավելի մեծացավ: Նա պատմեց իր «ըզարիկ հուշը Նանսենի մասին», եղավ «Նանսենյան վայրերում» և զգաց Նանսենյան ոգու շունջը Նորվեգիայում: Ամենուրեք նա հանդիպեց ջերմ ընդունելության, Հատուկ հրավերով է. Երզնկյանը լինում է Ֆ. Նանսենի որդու՝ տաղանդավոր ճարտարապետ Օդդի մոտ, որն «իր հոր վերատպությունն էր»: Նա, մանրամասն զրույցից հետո, ասաց, որ Ֆ. Նանսենին «մոտիկից ճանաչողները նրա մեջ հայտնաբերում էին... տարօրինակ մի ամոթխածություն: Գուցե այդ է պատճա-

ռը, որ Նանսենը մահից առաջ ցանկություն էր հայտնել իր տունը թանգարանի շվեթածել... Նորվեգիայում ես Նանսենին ավելի խոր ճանաչեցի, քանի որ այդ մարդն իր գեղեցիկ կերպարով հաճախ էր կենդանանում իմ առաջ, որովհետև ապրում էր հայրենակիցների սրտերում...»¹, — եզրափակում է իր դողալիկ տպավորությունները է. Երզնկյանը:

Այդ խոր ճշմարտությունն անմիջապես զգում է ամեն ոք, ով այցելում է Նանսենի հայրենիքը: Հավանաբար, աշխարհի ժողովուրդները առավել խտացված ու ցայտուն ձևով մարդկային քաղաքակրթությանն են ներկայացնում իրենց կյանքի ու մշակույթի ուժավորաներով: Նորվեգիայի համար այդպիսիք են հատկապես Ֆրիտյոֆ Նանսենը, Հենրիկ Իբսենը, Բյորնստեռնե Բյորնսոնը, էդվարդ Գրիգը, էդվարդ Մունկը, Գուստավ Վիգելանը, Ռուալ Ամունդսենը, Տուր Հելլերդալը, որոնք դարձել են ոչ միայն ազգային հերոսներ, այլև համաշխարհային ղեմքեր: Որքան ճիշտ էր Մ. Գորկին, երբ նշում էր, որ «ժողովրդի քանակը չի ազդում տաղանդների որակի վրա... Փոքրիկ Նորվեգիան տվել է վիթխարի մարդիկ»²:

Այդ աստղաբույլի մեջ բացառիկ ուժով է ներկայանում համապարփակ Ֆրիտյոֆ Նանսենի անմահ կերպարը: Գտնվելով Օսլոյում կամ այլուր (Նորվեգիայում), ամենուրեք հանդիպում ես Նանսենին թե՛ հուշարձաններով և թե՛ կենդանի մարդկանց շուրթերին: Այդպես է շքնաղ կյուսակերում, ուր հավերժ ննջում է մեծ նորվեգացին, զմրուխտյա Բյուզդոյում, ուր մշտապես հանգրբվանել է «Ֆրամը», Աղգային պատկերասրահում թե Հոմենկոլում, Վիգելանի քանդակներում թե Վերենշելդի նկարներում, գրախանութների ցուցափեղկերում թե փողոցների խաչմերուկներում, մարդկանց հոգում ու սրտում, նրանց գործերում ու խոսքերում...

Նորվեգիայի ոստանի ճարտարապետական պարծանքն է աստուշան (քաղաքային խորհրդարանի շենքը), որը բարձրանում է քաղաքի կենտրոնում՝ Նանսենի անվան հրապարակում: Ռատուշան զարդարված է բազմաթիվ քանդակներով ու նկարներով, որոնք պատկերում են նորվեգական ժողովրդի պատմությունը, նրա անցյալն ու ներկան: Մտնելով շքամուտքից՝

¹ «Սովետական արվեստ», 1962 թ., № 8, էջ 50:

² М. Горький, Собр. соч., т. 27, стр. 341.

հայտնվում են վիթխարի ու լուսավոր դահլիճում, որի հյուսիս-սային պատի վրա հուրհուրում է նորվեգիայի առօրյայի համայնապատկերը՝ կատարված տաղանդավոր Ալֆ Ռոլֆսենի կողմից: Այնտեղ պատկերված են գործարանն ու դաշտը, հանքագործն ու անտառահատը, ծովայինն ու ձկնորսը, տղամարդն ու կինը, մեծն ու փոքրը: Դրանք բոլորը հավաքական կերպարներ են, բայց աչից ու ձախից բարձրանում են երկու մեծադիր դիմանկարներ, որոնք պատկերում են իրական մարդկանց: Դրանք նանսենն ու Բյորնսոնն են, որոնք մարմնավորում են նորվեգական ժողովրդի իղձերն ու խիզախումները: Ինձ համար հաճելի անակնկալ էր, երբ Օսլո թուշու նախօրյակին Մոսկվայում ստացած նորվեգական կրոնների (դրամի) վրա ես տեսանրանց պատկերները, որոնք այնուհետև մի տեսակ ուղեկցեցին ինձ...

Այո, նանսենի կյանքը մարդկային սխրանքի հիմն էր, և նրա անունը մշտապես ջերմացնում է մարդկանց սրտերը, կամբրջում ժողովուրդների:



Խոսելով Ֆրիտլոֆ նանսենի առաքինությունների մասին, մենք չենք կարող չհիշատակել նաև այն, որ այդ անզուգական մարդ-գիտնականի լավագույն հատկանիշները փոխանցվեցին նրա զավակներին: Դրանցից էր, օրինակ, նրա որդի Օդդը, որը դարձավ ոչ միայն ճարտարապետ, այլև հումանիստ ու հակաֆաշիստ: Նշենք, որ երկրորդ աշխարհամարտի ժամանակ, երբ նորվեգիան ենթարկվեց հիտլերյան օկուպացիայի, նանսենի անունը դարձավ ազատագրական պայքարի դրոշ և Օդդը ակտիվորեն մասնակցեց դրան: Պատահական չէ, որ նա հալածվեց ու ձերբակալվեց: Չէ որ այդ ժամանակ նորվեգիայի «կառավարիչն էր» Քվիսլինգը, որը չէր կարող հանդուրժել ո՛չ նանսենին և ո՛չ էլ նրա որդուն: Զիշտ է, ինքը ժամանակին իբր եղել է «նանսենական», բայց իրականում քողարկվել է այդ անվան տակ և զբաղվել զանձագողությամբ, զանազան մեքենայություններով ու հակասովետական արարքներով, որոնց առթիվ կշտամբվել է նաև նանսենի կողմից (դժբախտաբար, նա լրիվ տեղյակ չէր Քվիսլինգի սև գործերին): Այն տարիներին ճիզվիտ Քվիսլինգը կաշկանդված էր նանսենի հեղինակությամբ, մանավանդ որ ինքն էլ սոսկ փոքրիկ չինովնիկ էր և հարկադրված էր սողալ,

իսկ այժմ՝ Հիտլերի օրոք, դարձել էր «իշխանավոր» և վրեժ էր լուծում նաև անցյալի համար: Նա, կատաղի պայքար մղելով դիմադրության շարժման դեմ, «տեսնատակ էր անում» նաև նանսենին, իսկ նրա որդուն՝ Օդդին ուղղակի նետեց համակենտրոնացման ճամբար (սկզբում Գրինում և ապա Սաքսենհաուզենում): Պատերազմից հետո Օդդը հրապարակեց «Օրից օր» («Von Tag zu Tag») օրագիրը, որտեղ մերկացնում է քվիսլինգյան կառավարչությունն ու ֆաշիստական սեփմը: Միաժամանակ նա շարունակում է իր արգասավոր գործունեությունը, պրոպագանդում խաղաղությունն ու ժողովուրդների համերաշխություն: Նա բազատեղյակ էր իր հոր հայանվեր գործունեությանը և ինքն էլ համակված էր նույն ոգով: Երբ 1958 թվականին ամերիկահայ դիտնական պրոֆեսոր Մ. Գ. Սեակը Օսլոյում այցելում է Օդդ նանսենին, վերջինս նրան նվիրած գրքի վրա մակագրում է. «Ի նշան հիացմունքի Ձեր խիզախ ժողովրդի հանդեպ»: 1960 թվականի փետրվարին Օդդ նանսենը Սիդնեյում (Ավստրալիայում) ջերմ հանդիպում ունեցավ հայ գաղութի հետ և զգացված ասաց, որ «հանգուցյալ հոր բարեկամները նաև իր բարեկամներն են»²: Ներկաների համար հետաքրքիր անակնկալ էր, երբ նա գրպանից հանեց մի արծաթյա ծխախոտատուփ՝ գեղեցիկ փորագրությամբ (Մասիս լեռով), որը Սովետական Հայաստանի կառավարությունը 1925 թվականին նվիրել է Ֆ. նանսենին: Օդդը այն պահում էր որպես իր աշխարհատես հոր մասունքներից մեկը:

Մեր թեմայի տեսանկյունով հատուկ նշանակություն ունի Ֆ. նանսենի ավագ դստեր՝ Լիվ նանսենի (ամուսնությունից հետո նաև Հոյերի) գործունեությունը և հատկապես նրա «Հորս մասին» աշխատությունը, որից մենք արդեն բազմաթիվ մեջբերումներ ենք կատարել: Ուստի, առանց հանգամանորեն խոսելու այդ գրքի մասին (չէ որ դա առանձին թեմա է), ընդգծենք, որ հայ ընթերցողի համար նրա արժեքն ավելի է մեծանում Ֆ. նանսենի հայանպաստ գործունեության արտացոլմամբ, ընդ որում շեշտված է նաև հեղինակի (Լիվի) ջերմ սերն ու վստահությունը դեպի մեր ժողովուրդը: Լիվ նանսեն-Հոյերի աշխատությունն առաջին անգամ լույս է տեսել Օսլոյում նորվեգերեն 1955 թվա-

¹ "The Armenian Rever", Boston, 1959, № 12, p. 18:

² Armenians in Australia and New Zealand, Sydney, 1966, p. 147.

կանին՝ «Նանսենը և աշխարհը» («Nansen og verden») վերնագրով, որից հետո այն թարգմանվել ու հրատարակվել է՝ ռուսերեն 1971 թվականին՝ «Հորս մասին» խորագրով¹։ Կարծում ենք և հավատացած ենք, որ նրա հայերեն հրատարակությունն օրվա պահանջ է։

Այս գիրքը կազմված է երկու մասից։ Առաջինը կոչվում է «ԵՎման ու Ֆրիտյոֆը» և ունի 15 գլուխ։ Լիվ Նանսեն-Հոյերը, հավասարի փաստերի հիման վրա, շարադրում է հոր կյանքը՝ անխղճվորեն կապված Եվալի հետ։ Չէ որ նրանք կազմում էին մի ներգաշնակ միասնություն, ոգեշնչում միմյանց և լրացնում իրար։

Դրքի երկրորդ մասը, որը կազմված է 18 գլխից, հանգամանորեն լուսաբանում է Ֆ. Նանսենի գիտական ու հասարակական գործունեությունը, Հատուկ տեղ է հատկացված նրա հայանպաստ ջանքերի պատկերմանը։ Դրան է նվիրված գրքի 16-րդ գլուխը, որը կոչվում է «Ժողովուրդ՝ մոռացված մեծ տերությունների կողմից»։ Այն ըստ էության հայ ժողովրդի պատմության մի փոքրիկ ակնարկ է, ընդ որում առաջին պլանի վրա են մղված նրա ողբերգական էջերը, առաջին համաշխարհային պատերազմի արհավիրքները, երիտթուրքերի ու քեմալականների կազմակերպած վայրի շարդերը։ Այդ ֆոնի վրա մերկացվում է նաև արևմտյան տերությունների շահագիտական ու նենգամիտ քաղաքականությունը հայկական հարցում և շեշտվում, որ միայն սովետական կարգերում հայ ժողովուրդը ձեռք բերեց փրկություն ու բարգավաճում։ Իրոք, դրությունն արմատապես փոխվեց, երբ 1920 թվականին «Ռուսահայաստանում ստեղծվեց սոսկ վետական հանրապետություն» և շուտով նրա «կառավարության գլուխ կանգնեց հայ Մյասնիկյանը»։ Այդ իրողությունն արձանագրելուց հետո Լիվ Նանսեն-Հոյերը գրում է. «Երկրի ընդունակ մարդիկ ընդգրկվեցին նրա վերականգնման աշխատանքի մեջ»¹։ Արդյունքները հանրահայտ են և զարմանահրաշ...

Նախքան ավարտելը, անհրաժեշտ ենք համարում շեշտել նաև այն, որ գնալով հոր հետքերով, Լիվ Նանսեն-Հոյերը ևս սերտ կապերի մեջ մտավ մի շարք հայ գործիչների հետ։ Դրանցից էր Արշակ Սաֆրաստյանը, որը Լոնդոնից ոչ միայն ջերմաշունչ նամակներ էր գրում Լիվ Նանսեն-Հոյերին, այլև

կարևոր տեղեկություններ հաղորդում նրան՝ հատկապես իր գրքի նախապատրաստման համար։ Հայկ. ՍՍՀ պետական պատմական կենտրոնական արխիվում գտնվում են Լիվ Նանսեն-Հոյերի երկու պատասխան նամակները, որոնք նույնպես աչքի են ընկնում բացառիկ սիրով ղեկավար հայ ժողովուրդը¹։ Այդպես, նա 1955 թվականի ապրիլի 19 թվակիր նամակում, խորին շնորհակալություն հայտնելով «Թանկագին միստեր Արշակ Սաֆրաստյանին» իր հոր վերաբերմամբ արտահայտած բարձր կարծիքի և «արժեքավոր ինֆորմացիայի ու հիշողությունների համար», որպիսիք նա անպայմանորեն կօգտագործի իր գրքում, հայ ժողովրդի ու Հայաստանի մասին գրում է. «Դուք՝ հայերը կղև են հորս «սրտի զավակները», ինչպես ասում են մեզ մասն Ողբերգական ճակատագիրն այդ խիզախ ժողովրդի՝ նրա հնագույն մշակույթով, արվեստով, ճարտարապետությամբ և երաժշտությամբ, այդ սքանչելի երկիրը հիացրել է նրան մինչև կյանքի վերջը, առաջ բերել սեր ու կարեկցանք։ Իհարկե, նա հիանում էր ձեզնով։ Ցանկացած մարդը, որը սիրտ ունի և ընդունակ է մտածելու, նույնը կաներ»։ Իրոք որ մեկնաբանություններն ավելորդ են... Այնուհետև Լիվ Նանսեն-Հոյերը նշում է, որ հակառակ դարերի դաժան փորձություններին, հայ ժողովուրդը դիմացել է ու դուրստեղ. «Ձեր խիզախությունը, ձեր համբերությունը, ձեր անխախտ հայրենասիրությունը ձեզ դարձրել են ամուր ու պահպանել ձեր ժողովուրդը... Մոլորակի վրա և ոչ մի այլ ժողովուրդ չունի նման հավատ»։ Անդրադառնալով հայերի ղեկավար Ֆրիտյոֆ Նանսենն ունեցած մեծագույն սիրուն, նա գրում է. «Ձեր շնորհակալությունը հորս և ուրիշներին, որոնք փորձել են օգնել ձեզ, հավերժական է։ Ձեր հարգանքը նրա հիշատակի նկատմամբ անկեղծ է և հանդիսանում է վիթխարի հուշարձան նրան, ավելի լավ, քան ցանկացած քանդակը քարից, քան բոլոր պերճախոս բաները, քանզի այն ապրում է ձեր սրտերում»։ Վերջում Լիվ Նանսեն-Հոյերը երախտագիտական գոհունակություն է հայտնում, որ հայերի սերը ղեկավար հայրը

¹ Տե՛ս Հայկ. ՍՍՀ ՊԿՊՍ, ֆ. 412, գ. 1458։ Լիվ Նանսեն-Հոյերի նամակները, ուղակված Արշակ Սաֆրաստյանին Օսլոյից՝ 1955 թվականին, գտնվում են անգլերեն։ Դրանք հայերեն թարգմանությամբ առայն անգամ հրատարակել է պետական արխիվի գիտաշխատող էմմա Մախոյանը՝ «Րաներ Հայաստանի արխիվներին», 1970 թվականի № 2-ում (ԳԵՍ-Պ)։

* Лив Нансен-Хейер, Книга об отце, Ленинград, 1971, стр. 452.

¹ Лив Нансен-Хейер, Книга об отце, стр. 407.

«տարածվում է նաև նրա երեխաների վրա», մի բան, որ «մեզ դարձնում է երջանիկ ու անսահման շնորհակալ»:

Լիվ Նանսեն-Հոյերի հայանվեր գործի լավագույն աշակից-ներից է նաև Ստեփան Շահպաղը, որն Ալեքսանդրիայից ջերմ ու գործարար գրագրություն է վարել նրա հետ: Լիվը նրան գրած նամակներում ոչ միայն խորին շնորհակալություն է հայտնում օգնության համար, այլև ընդգծում Ֆ. Նանսենի ու հայ ժողովրդի անխախտ բարեկամությունը, որը ջերմացնում ու ոգեշնչում է սերունդներին. «Որքան հիանալի է ինձ համար,— նշել է Լիվ Նանսենը,— իմանալու իմ հոր հիշատակին հավատարիմ լինելը, որ ցուցաբերում եք Դուք և ձեր ժողովուրդը, արտահայտում անհուն երախտագիտություն ու սեր նրա նկատմամբ: Այդ ամենն այնքան գեղեցիկ է, այնքան վեհ: Դուք գիտեք այն մեծ սիրո մասին, որ նա տածել է ղեպի հայերը, նրա հիացմունքն ու գուժը այդ խիզախ ու հին մշակույթի, արվեստի, ճարտարապետության ու երաժշտության տեղ ժողովրդի նկատմամբ: Ձեր հիանալի երկիրը և նրա ողբերգական ճակատագիրը որքան է լցրել նրա էությունը՝ մինչև վերջին շունչը»: Ստ. Շահպաղին ուղղած երկրորդ նամակում (1955 թ. հուլիսի 19-ին), անդրադառնալով հայ ժողովրդի անցած ուղուն, նրա դառն անցյալին ու պայծառ ներկային, նա գրում է. «Կարո՞ղ է արդյոք մարդկային երևակայությունն ընկալել այդքան ողբերգություն ու տառապանք, այդքան անարդարություն, ինչպես նաև այդքան խիզախություն ու տոկունություն: Առնվազն ես կարող եմ ասել, որ ձեր ժողովրդի մասին գրել եմ սիրով ու արցունքով: Ձեր մտքերը այսօրվա Հայաստանի մասին հիանալի են: Դա ապացուցում է, որ հորս կանխատեսումը հայերի սպառազանքի մասին՝ նրանց ունակություններով ու աշխատասիրությամբ, ճիշտ է»: Լիվ Նանսենը, անկեղծ գոհունակությամբ արձանագրելով հայ ժողովրդի վերածնունդը, ջերմ հուզմունքով եղբայրակում է. «Ինչպիսի՞ հիացմունքի առարկա, ինչպե՞ս կուզենայի մի օր Հայաստան այցելել...»^{*} Ավա՞ղ, նրա իղձը չկատարվեց, անժամանակ մահը խափանեց այն:

1955 թվականի հունիսի 17-ին Ա. Սաֆրաստյանին գրած նամակում Լիվ Նանսեն-Հոյերը շնորհակալություն է հայտնում

^{*} Այս նամակների պատճենները Ստ. Շահպաղը 1974 թվականի ապրիլին Ալեքսանդրիայից ուղարկել է Երևան՝ այդ ժամանակ այստեղ գտնվող «Արև» թերթի խմբագիր Ավ. Յափուճյանին, որը և տրամադրել է մեզ:

նաև այն առիթով, որ հայերը սրտատուշ ջերմությամբ են նշել: Ֆ. Նանսենի մահվան 25-ամյակը և նույնիսկ ուզում են նրան արձան կանգնեցնել Սոլոյում. «Ոչ, դա շատ-շատ է»,— համեստաբար գրում է դուստրու Անյա նա նշում է, որ իր գիրքը հոր մասին շուտով լույս կտեսնի. «Ես գիտեմ, թե այն ինչպես կընդունեն...»: Իրոք որ Լիվ Նանսեն-Հոյերի աշխատությունը գիտական հասարակաշնության ու մասսայական ընթերցողի կողմից ընդունվեց մեծ սիրով ու բարձր գնահատականով: Այն թարգմանվեց բազմաթիվ լեզուներով, նրան անհամբեր սպասում է նաև հայերին ընթերցողը... Միաժամանակ դա կլինի մեր ժողովրդի կողմից ղեպի առինքնող Նանսեններն ունեցած խոր հարգանքի մի նոր դրսևորում:

Արդ, մենք երախտագիտական խոսք ենք ասում ոչ միայն հավերժության ուղեկից Ֆրիտյոֆ Նանսենին, այլև նրա արժանավոր զավակին՝ Լիվ Նանսեն-Հոյերին, որը շարունակեց հոր բարի ավանդույթը և բյուրեղորեն արտացոլեց նրա ու հայ ժողովրդի փոխադարձ սերը: Նրա գիրքը խոշոր ավանդ է նանսենագիտության մեջ և փայլուն էջ հայ ժողովրդի պատմության ամենածանր շրջանի լուսաբանման ասպարեզում: Մեզ համար խոր արժանապատվության բարձր հնչեղություն ունեն այդ գրքի հայանվեր բաժնի հզորակիչ խոսքերը. «Լավագույն հուշարձանը հորս՝ հայերի հավերժական շնորհակալությունն ու սերն է նրա նկատմամբ...»¹:

Այդ սերը խորունկ է ու մշտական, բայց, կարծում ենք, պետք է արտահայտվի նաև այլ կերպ... Օսլոյի քաղաքային խորհրդարանի (ուսուշա) շենքի մոտ գրված է Նանսենի մարմարյա կիսանդրին, որը դանիացի քանդակագործ Կայ Նիլսենի նվերն է նորվեգական ժողովրդին: Դա կատարվել է այն առումով, որ աշխարհում ապրել ու գործել է այդպիսի մարդ՝ Մեծ նորվեգացին և իրենով կամրջել ժողովուրդներու Հավատացած ենք, որ երախտապարտ հայ ժողովուրդը քաղաքամայր Երևանում կկանգնեցնի հուշարձան անմահ Նանսենին, որպես հավերժ սիրո խորհրդանիշ...

Սևեռուն հայացք ձգելով Ֆրիտյոֆ Նանսենի կյանքի հերոսական ուղուն և ամփոփելով նրա բազմաբեղուն գործունեության արդյունքները, գիտական խիզախումներն ու մարդասիր-

¹ Лив Нансен-Хейер, Книга об отце, стр. 414.

բական սխրանքները, չի կարելի շտեմել մի բարի ու իմաստուն դյուցազնի, որը մարդկության և՛ ծառան էր, և՛ տիրակալը։ Նա մշտապես բռնված էր հանրագուտ հոգսերով, որոնք այսօր էլ մտահոգում են մարդկանց։ Նանսենը, մեր մեծ բանաստեղծ Պարույր Սևակի թեմայի արտահայտությունները, «ասես աշխարհն էր շալկած տանում»։

Ելել ես, որ ողջ աշխարհը տեսնես,
 Որ անօրինակ բո զարք տեսնես,
 Բայր կհրպիրով դու նրան զգաս,
 Շահածով խնդաս, կորուսար սգաս...
 Ելել ես իբրև նրա մունեակի,
 Որ նրա հետուն զգաս բեզ մոտիկ,
 Որ ճշմարտության արհերք տեսնես,
 Ծպտրված ստի խարելը տեսնես,
 Որ չվախենաս, որ չվարանես՝
 Անարբարության դեմքը խարանես...
 Ահա թե ինչու դու այսբան տարի,
 Գու, որ հարազատ ծնունդն ես զարի,
 Քայլում ես անգրու, առաջ ընթանում,
 Քայլում ես աչնպես ծանր ու վիթխարի,
 Աես աշխարհն ես շալկած տանում...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաստվանություն	3
Գլուխ առաջին	
Ավանավոր գիտնականը, հասարակական գործիչն ու հումանիստը, Թուսաստանի և Սովետական երկրի բարեկամը	5
Գլուխ երկրորդ	
Առաջին հայկական տնտեսությունները	82
Գլուխ երրորդ	
Նանսենի միսիան Հայաստանում	134
Գլուխ չորրորդ	
Պայքար Ազգերի լիգայում	144
Գլուխ հինգերորդ	
Նանսենի գրական ժառանգությունը Հայաստանի ու հայերի մասին	261
Գլուխ վեցերորդ	
Երախտագիտությունը ու սիրով	313

Արզումանյան Մակիչ Վահանի
ՆԱՆՍԵՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Арзуманян Макич Ваганович

НАНСЕН И АРМЕНИЯ

(На армянском языке)
Издательство «Айастан»
Ереван, 1986

խմբագիր՝ Ռ. Հ. Մուրադյան
կրտս. խմբագիր՝ Ն. Հ. Գրիգորյան
նկարիչ՝ Ֆ. Գ. Աֆրիկյան
Գեղ. խմբագիր՝ Ս. Ս. Մկրտչյան
Տեխն. խմբագիր՝ Գ. Ք. Նահապետյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ռ. Ք. Մարգարյան

ИБ 5299

Հանձնված է շարվածքի 28. 10. 85 թ.:

Ստորագրված է տպագրության 31. 01. 86 թ.: ՎՖ 03012:

Ֆորմատ՝ 84×108¹/₃₂: Թուղթ տպագրական № 1: Տառատեսակ՝ «Գրքի սովորական»: Տպագրություն՝ բարձր: 18,9 պայմ. տպագր.: Հրատ. 17,06 մամուլ. + 8 ներդիր: Պատվեր՝ 2946: Տպարանակը՝ 20 000: Գինը՝ 1 ա. 50 կոպ.: «Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

Издательство «Айастан», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան 65:

Типография № 1 Госкомитета Арм. ССР, по делам издательства, полиграфии и книжной торговли, Ереван, ул. Алавердяна, 65.